Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՏՈՐ IV

II

Ա-50

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. АЧАРЯН

ПОЛНАЯ ГРАММАТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

В СРАВНЕНИИ
С 562
ЯЗЫКАМИ

ТОМ IV

КНИГА I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН — 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ
562
ԼԵԶՈՒՆԵՐԻ

ՀԱՏՈՐ IV

Ա ԳԻՐՔ

1319

ՀՍՍՌ ԳԱ Հայկական Отделение Общественных наук
Գրադարան
Библиотека
Наук Арм. ССР
Գիտությունների Академии

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1959

ՀՍՍՌ ԳԱ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Института искусствознания АН Арм. ССР

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Գրքագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Տպագրության պատրաստեց և խմբագրեց պրոֆ. Էդ. Բ. ԱՂԱՅԱՆ
Подготовил к печати и редактировал проф. Э. Б. АГАЯН

Հ. Աճառյանի «Լիակատար քերականության հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների աշխատության չորրորդ հատորը, որ քննդրվում է բայը, բաղկացած է երկու մասից: Առաջին մասում քննության են առնվում բայի քերականական կարգերը աշխարհի լեզուներում, ապա նկարագրվում է բայի խոնարհման համակարգը հնդեվրոպական նախալեզվում և ցեղակից լեզուներում: Այնուհետև հանգամանորեն քննության է առնվում հին հայերենի խոնարհման համակարգը, նրա առաջացումն ու հետագա զարգացումը, մինչև մերին հայերենն ու բարբառները: Երկրորդ մասում ուսումնասիրվում են հայերեն բարբառների խոնարհման համակարգի նկարագրերն ու պատմությունը, աշխարհաբարի խոնարհումը և դերբայների առաջացումն ու նրանց դերը արդի հայերենի խոնարհման սիստեմում:

11265

«ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ Ա ԳԻՐՔԸ

«Լիակատար քերականության» չորրորդ հատորը, որ ամբողջությամբ նվիրված է բային, ծավալի չափազանց մեծության պատճառով բաժանված է երկու գրքի: Այդ բաժանումը պայմանավորված չէ հատորի բովանդակությամբ, ոչ էլ նյութերի դասավորության անհրաժեշտությամբ. երկու գրքերը մեկ ամբողջություն են կազմում, և բաժանումը միայն ծավալի մոտավոր համամասնության նպատակ է ունեցել: Վերջապես, այդ բաժանումը կատարել է ոչ թե հեղինակը, այլ միայն մենք:

Այս՝ Ա գիրքը բաղկացած է վեց գլխից, որոնցից երեքը (Ա, Բ, Դ) վերաբերում են բայի և խոնարհման զանազան կողմերի քննությանն ընդհանրապես և նրանց զրսևորումներին հնդեվրոպական նախալեզվում և ցեղակից հնդեվրոպական լեզուներում: Այստեղ քննարկված տեսական խնդիրներից է բայի և գոյականի տարբերակման հարցը, որին նվիրված է առաջին գլուխը: Հիշելով լեզվաբանության մեջ արտահայտված այն երկու հակադիր կարծիքները, որոնցից մեկի համաձայն նախապես գոյականն է առաջացել, ապա՝ բայը, իսկ մյուսի համաձայն նախ՝ բայը, հետո գոյականը, հեղինակը բազմաթիվ լեզուների տվյալներին է դիմում խնդրի ճիշտ լուծման համար: Այստեղ հեղինակն օգտագործում է և՛ ավելի քան հինգհազարամյա հնություն ունեցող արձանագրություններ՝ մեռած լեզուների, և՛ ժամանակակից ամենաբազաբակիրթ ժողովուրդների լեզուների, և՛, վերջապես, անցյալ դարի՝ զարգացման շատ ցածր մակարդակի վրա գտնվող, «կիսավայրենական» ցեղերի լեզուների իրողությունները և այն եզրակացությանն է հանգում, որ լեզուների մեջ նախապես գոյականն ու բայը տարբերակված չեն եղել: Հիմնավորելով այդ ճիշտ դրույթը, հեղինակն, այնուամենայնիվ, իր շարադրանքով իսկ այն համոզմունքն է արտահայտում, թե գոյականն է, որ հետզհետե նաև բայի է վերածվել, որով և առա-

ճանաբար տարբերակվել է բայն իբրև խոսքի մաս։ Այս նույն համոզմունքն արտահայտված է նաև վերնագրի մեջ («Բայի տարբերացումը գոյականից»)։ Հենվելով հենց իր իսկ, հեղինակի քննության նյութ դարձրած բազմաթիվ ու բազմազան լեզվական տվյալների վրա՝ անհրաժեշտ ենք համարում ասել հետևյալը։ Լեզվաբանության պատմության մեջ զանազան տեսություններ են արտահայտվել խոսքի մասերի, հատկապես գոյականի, բայի ու դերանվան առաջացման հաջորդականության մասին։ Այդ տեսություններից յուրաքանչյուրն ունի իր առավել կամ պակաս համոզիչ ու տրամաբանական թվացող հիմնավորումը։ Սակայն այդ տեսություններից ոչ մեկն էլ ընդունելի չէ։ Ավելին. հիշյալ խոսքի մասերի առաջացման հաջորդականության մասին հարցադրումն անգամ ճիշտ չէ։ Ընդունել, օրինակ, թե նախ առաջացել է գոյականը որպես խոսքի մաս և հետո՝ բայը, կամ՝ ընդհակառակն, նշանակում է թղել այն օրգանական կապը, որ գոյություն է ունեցել խոսքի մասերի միջև՝ նրանց առաջացման պրոցեսում։ Իրականում, ինչպես ցույց է տալիս լեզվի պատմությունը, չի կարող պատահել, որ գոյականը ձևավորվի, առանձնանա իբրև խոսքի մաս, առանց բայի առանձնացման, և հակառակը։ Մեկի առանձնացումը ինքնին ենթադրում է նաև մյուսի առանձնացումը. գոյականի ու բայի տարբերակումն ու խոսքի մասային առանձնացումը առարկայի ու հատկանիշի (մատերիայի ու շարժման) անջատումը, տարբերացումն է միմյանցից, նրանց արտահայտված ինքնուրույնացումը մարդու գիտակցության մեջ։ Եթե մարդը գիտակցում է առարկան իբրև այդպիսին անկախ իր հատկանիշից, ապա հենց այդ նշանակում է, թե նա վերացման (արտահայտման) շնորհիվ անջատում է միմյանցից առարկան ու հատկանիշը իր գիտակցության մեջ, և դրանով իսկ առանձնացնում և՛ գոյականը, և՛ բայը։ Առանց մեկի մյուսը չկա։ Հակադրությունները միասնական են։ Ինչպես չի կարելի գիտակցել լույսը և չգիտակցել խավարը, որ լույսի հակադրությունն է, ինչպես չի կարելի ճանաչել ցերեկը և չճանաչել գիշերը, ինչպես չի կարելի գիտենալ մեծը և դրա հետ միաժամանակ չգիտենալ փոքրը, ճիշտ այդպես էլ չի կարելի գիտակցել գոյականը և չգիտակցել բայը, կամ՝ ընդհակառակը։ Գիտենալ, ըմբռնել, որ օրվա մի մասը լույս է, ցերեկ է, նշանակում է նաև ըմբռնել ու գիտենալ, որ օրվա մի մասն էլ լույս չէ, ցերեկ չէ. ճիշտ այդպես էլ՝ գիտակցության մեջ ունենալ ինքնին գոյություն ունեցող իրերի (առարկաների, երևույթների և այլն) հասկացությունը՝ անկախ նրանց հատկանիշներից, ունենալ այդ հատկանիշ-

ներից անջատված, աբստրահված առարկաների գիտակցությունը, նշանակում է ունենալ նաև անկախ, առարկաների հետ չկապված հատկանիշների աբստրահված հասկացությունը։ Գիտակցության մեջ ունենալ ծառ հասկացությունը նրա կանաչ լինելու հատկանիշից զերծ, նշանակում է ունենալ նաև ծառի հետ չկապված, մեր գիտակցության մեջ ինքնին գոյություն ունեցող կանաչ հատկանիշի հասկացությունը։ Իրականում ծառը այլ կերպ գոյություն չունի, քան իր բոլոր (այդ թվում և՝ կանաչ լինելու կամ չլինելու) հատկանիշներով հանդերձ, բայց մարդը, իր աբստրահող մտածողության երկարատև աշխատանքի շնորհիվ, իր գիտակցության մեջ առեղծում է հատկանիշներից զերծ, ինքնին գոյություն ունեցող առարկայի հասկացությունը, իսկ դրա հետ միաժամանակ էլ՝ առարկաներից անկախ ու անջատ, ինքնին գոյություն ունեցող հատկանիշի հասկացությունը։ Այսպիսով՝ բայը և գոյականը հանդես են գալիս միասնաբար, և չի կարելի կարծել, թե նրանցից մեկն ու մեկը, որպես խոսքի մաս, իր առաջացմամբ նախորդել է մյուսին, կամ մեկը առաջացել է մյուսից։ Նախապես եղել են անուններ, ավելի ճիշտ՝ անվանումներ ընդհանրապես, առանց խոսքի մասերի տարբերակման։ Հետագայում, ընդհանրապես անվանումները տարբերակվել են՝ առաջ բերելով գոյականն ու բայը միաժամանակ։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում բայական կարգերին ու խոնարհմանը նվիրված գլուխները, որոնց մեջ հեղինակը թվում ու նկարագրում է բայի արտահայտած զանազան քերականական իմաստները, բայի ձևավորման բազմազան միջոցներն ու եղանակները, պարզից մինչև ամենաբարդը, բայի տեսակները, խոնարհման այլազան համակարգը աշխարհի լեզուներում։

Հայ լեզվաբանական գրականության մեջ առանձնապես կարևոր ներդրում է այս գրքի երրորդ և հինգերորդ գլուխների ընդգրկած նյութը։ Այստեղ հեղինակը մատչելի ձևով (որչափով հնարավոր է մատչելի դարձնել այդ շատ բարդ նյութը) տալիս է հնդեվրոպական նախալեզվի բայական ձևերի կազմության, խոնարհման առանձնահատկությունների ու միջոցների համառոտ շարադրանքը։ Եթե նկատի ունենանք, որ հայերեն լեզվով մինչև այժմ էլ հընդեվրոպական լեզուների համեմատական քերականության ընդհանուր, թեև մակերեսային նկարագրությունը չունենք, ապա միանգամայն պարզ կլինի, թե որքան մեծ է այդ գլուխների նշանակությունը մեր ուսանողության ու երիտասարդ մասնագետների համար։

Վերջապես, վերջին և ամենամեծ գլխի նյութն է կազմում բայը հայերենում: Այստեղ հեղինակը նախ նկարագրում է հին հայերենի խոնարհման համակարգը, ապա՝ համեմատական քերականության տվյալների համաձայն բացատրում հայերենի խոնարհման համակարգի առաջացումը, բայական վերջավորությունների ծագումն ու խոնարհման զանազան տիպերի ձևավորումը հայերենում: Այնուհետև հեղինակն անցնում է հայերենի խոնարհման զարգացման հետագա ընթացքին և մանրամասն ու խորազետ քննությամբ լուսաբանում պատմական այն պրոցեսը, որով զարգացել է հայերենի խոնարհումը, հասնելով այսօրվա վիճակին: Պատմական տեսակետից առանձնապես կարևոր են այս գլխի երկու հատվածները. «Միջին հայերենի խոնարհման քննությունն ու ծագումը» (էջ 365—407) և «Բարբառների խոնարհման քննությունը» (էջ 557—577): Այս երկու հատվածներում, նյութերի պատմական ու լեզվաբանական խորհրդատու վերլուծությամբ հեղինակը ցույց է տալիս, թե ի՛նչպես, ի՛նչպիսի փոփոխություններով ու ի՛նչ պատճառներով հին հայերենի խոնարհման համակարգը աստիճանաբար փոփոխությունների է ենթարկվում և առաջ բերում միջին հայերենի ու ժամանակակից հայերեն բարբառների խոնարհման համակարգը: Դեռևս 1952 թ. տպագրված մի հոդվածում մենք այն միտքն ենք արտահայտել, թե «Գրաբարում սահմանական եղանակը, հատկապես ներկայի և անցյալ անկատարի ձևերով, գործածվում էր նաև ըղձականի և պայմանականի իմաստով, որոնց համար առանձին ձևեր դոյություն չունեին: Ժամանակի ընթացքում ըղձական, պայմանական, ինչպես և հարկադրական եղանակների՝ որպես քերականական ուրույն իմաստների՝ զարգացումը և խոսողների կողմից նրանց գիտակցման ուժեղացումն այդ իմաստներն արտահայտելու քերականական ուրույն ձևերի առաջացման անհրաժեշտություն են ստեղծում: Հին հայերենի սահմանականի ձևը, որը համապարապես գործածվում էր թե՛ սահմանական, թե՛ ըղձական, և թե՛ պայմանական եղանակների քերականական իմաստ արտահայտելու համար և հենց դրանով էլ տեղիք էր տալիս մտքի շփոթության, այդ անհրաժեշտության առկայության պայմաններում սառանում է որոշ կոնկրետացնող մասնիկներ: Իրրև ավելի ընդհանուր և անորոշ ձև, սահմանականի անփոփոխ ձևն աստիճանաբար հատկացվում է ըղձականին, իսկ սահմանականի, պայմանականի ու հարկադրականի համար ստեղծվում են առանձին մասնիկներ (—ոմ, կու—) կամ գործածվում են օժանդակ բառեր (պիտի, կամիմ): Այսպիսով՝

միջին հայերենում արդեն աստիճանաբար առաջանում են այն ձևերը, որոնք հետագայում մեր ազգային լեզվի մեջ բայի խոնարհման հիմքն են կազմում»[1]: Մեր այս ընդհանուր դրույթը, որ բացառապես տեսական բնույթ է կրում, իր հիանալի ապացույցն է գտնում մեծանուն հայագետի սույն աշխատության. հիշյալ հատվածներում՝ երկար տարիների տքնաջան աշխատանքով կուտակած լինելով բոլոր այն տվյալները, որոնք վերաբերում են հին հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացմանը, հեղինակը հանգել է,— բնականաբար մեզանից շատ ու շատ տարիներ առաջ,— գրեթե նույնպիսի եզրակացության. «Գրաբարի խոնարհման ձևափոխության առաջին պատճառը ստորադասականը եղավ,— ասում է հեղինակը: Գրաբարը թեև ստորադասականի ներկա ժամանակը ուներ, բայց ստորադասականի անց. անկատարի համար առանձին ձև չուներ, և այդ պակասը լրացնում էր՝ նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը: Սահմանականի անկատարը իրրև ստորադասական գործածելու այս ձևը աղդեց նաև ներկայի վրա և շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իրրև ստորադասական ներկա, և սրա հետ նաև իրրև ապառնի, որ հաճախ նույնանում էր ստորադասականի ներկայի հետ: Ուրիշ խոսքով, քանի որ ասում էին՝ բող իմ՛ն երթայ և առնոյր, սրա նման սկսեցին ասել՝ բող իմ՛ն երթայ և առնու, փոխանակ ասելու՝ բող իմ՛ն երթիցէ և առցէ: Սահմանական ներկան իրրև ստորադասական և ապառնի գործածելու այս սովորությունը սկսել էր արդեն 6 դարում:

Նույնիսկ 6 դարի առաջին շրջանի ընտիր գրվածքների մեջ կան այսպիսի դարձվածքներ.

> 6կ առաքեմ զքեզ.
> Գնամք աստ, գնամք:
> 6կ երթամ շրջիմ.
> Թող անիծանէ.
> Ասեմ զի իշցէ (ասենք, որ իջնի)...

Ուշադրության արժանի է այն կետը, որ այսպիսի ապառնին ու ստորադասականը հին նախնիք գործածում էին դեմ առ դեմ խոսակցության մեջ, որից հետևում է, որ այս ձևը սկսեց նախապես բուն ժողովրդական լեզվի մեջ:

---

[1] Է. Ադայան. Որակական անցումները լեզվի մեջ, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, Հասարակական գիտություններ, 1952, էջ 33:

6 դարի վերջում, հատկապես Փարպեցու մոտ այս կարգի օրինակները շատացան և է՛լ ավելի զարգացան է դարից հետո...

Է դարում և մանավանդ ավելի հետո՝ ապառնիի և աորիստական հին ձևը միայն եկեղեցական լեզվին մնաց, իսկ միջին հայերենում տիրապետող հանդիսացավ սահմանական ներկայի ձևը՝ փոխանակ ց-ով աորիստականի և ապառնիի... Այսպիսով սահմանականի ներկան դարձավ միաժամանակ թե՛ սահմանական ներկա, թե՛ ապառնի, և թե՛ աորիստական: Երեք տարբեր պաշտոններով գործածությունը բնականաբար տեղիք պիտի տար շփոթության և իմաստի երկիմաստության... Այս խառնակության առաջն առնելու և լեզվի դոնե երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարվեց կու մասնիկը...» (էջք 385—387): Հայ հին մատենագրությունից քաղած բազմաթիվ տվյալներով հեղինակը ցուցադրում է պատմական զարգացման այս պրոցեսը և անառարկելի կերպով հաստատում բայական եղանակների փոխանցման ու շփոթության հետևանքով առաջացած անհրաժեշտ փոփոխությունը: Այնուհետև նա քննության նյութ է դարձնում կու մասնիկի ծագումը, և ցույց տալիս, որ այդ մասնիկի գործածությունն արդեն խոնարհման նոր համակարգի առաջացման սկիզբն էր: Նույնպիսի մանրամասնությամբ նա քննության է առնում բարբառների խոնարհման համակարգի առաջացումը, և ցույց տալիս, որ լեզվի ներքին զարգացման օրինաչափությամբ, զանազան ձևաբանական ու հնչյունաբանական օրենքներով հին հայերենի խոնարհումը բազմապիսի փոփոխություններ է կրել՝ առաջ բերելով ժամանակակից բարբառների խոնարհման համակարգը: Այս դրքում հեղինակը կանգ է առնում միայն բայական պարզ ձևերի վրա և չի անդրադառնում բաղադրյալ ձևերին: Բայց հենց պարզ ձևերի կրած փոփոխությունները և դրանց հետևանքով կատարված խոնարհման համակարգի որակական անցումը, որ այնքան հմտությամբ ներկայացնում է մեծավաստակ հայագետը, բացառիկ կարևոր նշանակություն ունեն պատմական բարբառագիտության համար: Հայտնի է, որ ամենք, անտեղյակ պատմահամեմատական լեզվաբանության ամենատարրական սկզբունքներին և դուրկ համեմատական քերականության անհրաժեշտ դիտելիքներից, դեռ այժմ էլ պաշտպանում են վաղուց արդեն հերքված այն հակապատմական վարկածը, թե իբր ժամանակակից հայերեն բարբառների խոնարհման համակարգը ավելի նախնական է ու հնամենի, քան հին հայերենի խոնարհման համակարգը: Իր այս աշխատության մեջ, հատկապես բարբառների

խոնարհման համակարգի քննության մեջ հմուտ լեզվաբանական վերլուծություններով Հր. Աճառյանը անառարկելի կերպով ցույց է տալիս, որ ժամանակակից բարբառների խոնարհման համակարգն առաջացել է հին հայերենի խոնարհման համակարգից՝ նրա պատմականորեն կրած փոփոխությունների հետևանքով: Ըստ որում, հարազատ մնալով պատմական լեզվաբանության սկզբունքներին, լեզվաբանության, որի կարկառուն ներկայացուցիչներից մեկն էր ինքը, նա հիանալի կերպով ներկայացնում է այդ փոփոխությունների ընթացքն ու արդյունքը: Պատմական լեզվաբանությունը ելնում է այն հիմնական դրույթից, որ լեզվի զարգացումը տեղի է ունենում ոչ միօրինակ, ոչ հավասար տեմպով ու ոչ համապարփակ օրենքներով: Այդ դրույթի համաձայն, լեզվի բաղադրիչներից մեկը կարող է ավելի շատ փոփոխությունների ենթարկվել, քան մի ուրիշը. օրինակ, բարբառներից մեկում ավելի շատ կարող է փոփոխված լինել հնչյունական համակարգը, մյուսում՝ ձևաբանությունը, կամ մեկում հնչյունական համակարգի մի կարգը կարող է շատ փոփոխությունների ենթարկվել, իսկ մյուսում՝ մի ուրիշ կարգը: Օրինակ՝ Պոլսի բարբառում հին հայերենի բաղաձայնական համակարգը զգալի փոփոխության է ենթարկվել, որի հետևանքը այն է եղել, որ վերացել են պարզ խուլերը, իսկ Մեղրու և Ագուլիսի բարբառներում, ընդհակառակն՝ հին հայերենի բաղաձայնական համակարգը աննշան փոփոխություններ է կրել (մեծ մասամբ փոխադրդեցիական հնչյունափոխություններ), մինչդեռ ձայնավորները այնպիսի փոփոխությունների են ենթարկվել, որոնց հետևանքով բառերն անճանաչելի են դարձել (հմմտ. սիրել>Ագլ. սայրիլ, շամիշ>Մղր. չօմկնչ, ճաճաշ>Մղր. ճկճաճչ և այլն): Այդ դրույթը, այնուհետև, հիմնվում է այն փաստի վրա, որ միևնույն լեզվի պատմության տարբեր ժամանակաշրջաններում փոփոխությունների միևնույն տեմպն ու ընթացքը պարտադիր չէ: Լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ մի ժամանակաշրջանում ավելի շատ փոփոխություններ ու ավելի արագ ընթացքով կարող են կատարվել, քան մի ուրիշ ժամանակաշրջանում: Իր զանազան ուսումնասիրություններում մեծավաստակ Հր. Աճառյանը անսպառ փաստերի ուսումնասիրությամբ ցույց է տվել, օրինակ, որ հայերենի մեջ առավել շատ փոփոխություններ տեղի են ունեցել 7—11-րդ դարերի ընթացքում: Այդ դրույթը, վերջապես, հիմնվում է այն իրողության վրա, որ միևնույն լեզուն իրենով խոսող տարբեր հատվածների մոտ պատմականորեն տարբեր փոփոխություններ կարող է կրել, այսինքն՝ այն փոփոխությունը,

որ կատարվում է ավյալ վայրում, պարտադիր չէ մի ուրիշ վայրի համար, քեև, եթե տարբեր վայրերի միասնությունը լիովին չի խախտված, այլ խոսքով՝ եթե ավյալ լեզվով խոսող հասարակությունը, պատմական ավյալ շրջանին հատուկ մասնատվածությամբ հանդերձ պահպանել է իր միասնությունն ու ամբողջությունը, այդ տեղային, մասնավոր բնույթ կրող փոփոխությունների հետ միասին տեղի են ունենում նաև ընդհանուր բնույթ կրող փոփոխություններ, որոնք և դրսևորում են տվյալ համաժողովրդական լեզվի զարգացման ընդհանուր օրինաչափություններ։ Հարազատ մնալով պատմական լեզվաբանության այս անառարկելի դրույթին, սույն գրքի հեղինակն իր այս ուսումնասիրության մեջ փաստերի հմտագույն ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ երևան է հանում խոնարհման համակարգի զարգացման տարբեր ընթացքը, ուղղությունն ու հետևանքը տարբեր բարբառներում։ Նա ցույց է տալիս, որ բարբառներից մի քանիսում գրաբարյան սահմանականի ձևը գրեթե անփոփոխ է մնացել, իսկ մի քանիսում, ընդհակառակն, այնպիսի փոփոխությունների ենթարկվել, որ առաջին հայացքից դժվար է նկատել հին հայերենի բայական այդ ձևի և բարբառային ձևի անմիջական կապը. այսպես, օրինակ, գրաբարյան սահմանականի ներկան, աննշան փոփոխություններով, պահպանվել է Նոր-Ջուղայի, Վանի, Կարնո, Պոլսի և մի քանի այլ բարբառներում, մինչդեռ Զարեհավանի, Ագուլիսի, Մեղրու, Նոր-Նախիջևանի բարբառները շատ ավելի են փոփոխում։ Ըստ որում, այդ բոլոր բարբառների համար էլ ընդհանուր է այն, որ ներկայի ձևը վերածել են ըղձականի։ Այսպիսի քննությամբ հեղինակը ցույց է տալիս նաև մյուս ձևերի պատմական փոփոխությունները բարբառներում։ Այդ ամբողջ վերլուծություններից ու քննական տեսությունից ինքնին արդեն առացվում է հետևյալ եզրակացությունը. բարբառների խոնարհման համակարգը հին հայերենի խոնարհման համակարգից է ծագել։ Լեզվական առատ փաստերի ցուցադրումով ու այդ փաստերի լեզվաբանական խորաթափանց վերլուծությամբ հիմնավորելով այդ դրույթը, գրքիս հեղինակը մի կողմից լույս է սփռում բարբառների առաջացման պատմության վրա, իսկ մյուս կողմից մի ավելորդ անգամ ևս ցույց տալիս վերը հիշված վարկածի անանկությունը։

Այսպիսով, չորրորդ հատորի այս առաջին գիրքը իր ընդհանուր լեզվաբանական, հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության ու հայերենի խոնարհման համակարգի համեմատական-

պատմական ուսումնասիրությանը նվիրված իր հարուստ բովանդակությամբ ու խոր դիտականությամբ մի մեծարժեք ավանդ է հայ լեզվաբանական գրականության գանձարանում։

* * *

Չորրորդ հատորը հրատարակության պատրաստել ենք հեղինակի մահվանից հետո։ Հեղինակի կողմից ավարտված է եղել ընդհանուր լեզվաբանական ու համեմատական բաժինը ամբողջությամբ, ինչպես և միջին հայերենի բաժինը և բարբառների խոնարհման համեմատական ընդհանուր տեսությունն ու քննությունը։ Մեր կողմից ավելացված է բարբառների խոնարհմանը վերաբերող նյութի մեծագույն մասը (2 գլխի 12-րդ ենթագլուխը)։ Գրքի շարադրանքը հիմնականում անփոփոխ թողնելով և բոլորովին ձեռք չտալով հեղինակի արտահայտած կարծիքներին ու տեսակետներին, հիմնովին փոխել ենք հատորի կառուցվածքը, նյութի դասավորությունն ու գլուխների հաջորդականությունը, ելնելով հատորների կառուցվածքի այն սխեմայից, որով տպագրության ենք պատրաստել «Վիճակաւոր քերականության» առաջին և երկրորդ հատորները հեղինակի կենդանության օրոք, և որին հավանություն է տվել հեղինակը։

Իր հանձնարարությունից ելնելով ու մեզ վրա դրված պատասխանատվությունն ու դերագույն պատիվը խորապես գիտակցելով, մենք ձեռնամուխ ենք եղել «Վիճակաւոր քերականության» հրատարակության պատրաստելու գործին դեռևս հեղինակի կենդանության օրոք։ Հենց այդ տարիներին էլ հեղինակի հետ խորհրդակցելով, նրա ուղենիշ ցուցումները հիմք ունենալով ու իր հավանությանն անսալով, մենք պատկերացրել ենք սույն մեծածավալ աշխատության ամբողջական կառուցվածքն ու բովանդակությունը և այդ պատկերացումով էլ հեղինակի մահվանից հետո շարունակել ենք աշխատանքը՝ ձգտելով հասնել այն բանին, ինչ որ հեղինակի ցանկությունն էր։

Սույն հատորի պատրաստմանը մասնակցել է ՀՍՍՌ ԳԱ Լեզվի ինստիտուտի աշխատակից Գրիգոր Գաբեգինյանը, որի ժրաջան աշխատանքը շնորհակալությամբ ենք նշում։

Պրոֆ. Է. Դ. ԱՂԱՅԱՆ

ԲՈՒՅՐ

ԳԼՈՒԽ Ա

ԲԱՅԻ ՏԱՐԲԵՐԱՑՈՒՄԸ ԳՈՑԱԿԱՆԻՑ

Արդեն դիտենք, որ լեզուների նախնական վիճակում արմատները կամ բառերը գոյական, ածական և բայ են միանգամայն. մասունք բանիների խտրութիւնը դեռ չկայ: Ակռախի մի դրութիւն մեզ համար թերևս դժվար է ըմբռնել, բայց կարելի է նորը տեսնել նաև այժմ էլ. մանուկն ասում է մամա և հասկանում է թե՛ կերակուր և թե՛ ուտել, ֆրանսիացի մանկիկն ասում է dodo և հասկանում է թե՛ անկողին և թե՛ քնել (Marouzeau, La ling. 24). մեծերի լեզվի մեջ էլ, օրինակ, երբ մեկը հանկարծ բացականչում է անձրև՜ կամ ձյո՜ւն և կամ կարկո՜ւտ, բնականաբար խոսքն հասկանում ենք, թե «անձրևում է», «ձյուն է գալիս» և կամ «կարկուտ է սկսել գալ»: Պարզ է, որ գոյականները սրանց մեջ կատարում են բայի դեր կամ որ նույն է՝ բայ ու գոյական միևնույնն են:

Լեզվաբանների մեջ վեճի նյութ է դարձած այն հարցը, թե գոյական և բայ տարբե՞ր ծագում ունեն արդյոք և եթե այո, նրանցից որն է առաջ ծագել:

Վեճը իր վճռական արդյունքին չէ հասած:

Ինդիրն այն է, թե կարող էր գոյականը նաև բայ լինել. ալինդն ասելով նաև «տեսնել» հասկանալինք, բերան ասելով նաև «ուտել» հասկանալինք, ձեռք ասելով նաև «բռնել» և ոտք ասելով նաև «քայլել»: Սրանք շատ բնական բաներ են: Բայց նաև ծառ կամ փայտ ասելու ժամանակ, խոսքն կարող ենք մտածել «աճելու, մեծանալու» մասին, և ջուր ասելու ժամանակ, «խմելու կամ խոսելու» մասին: Չինարենը ai բառով հասկանում է թե՛ «սեր», և թե՛ «սիրել». և արաբերեն արմատները միանգամայն գոյական և բայ են:

Կան լեզվախմբեր, որ բայի և գոյականի նախնական միության հետքերը դեռ պահում են նրանով, որ թե՛ գոյականների հո-

լուման, և թե բայերի խոնարհման վերջավորութիւնները նոյնն են։ Այսպես՝ արաբերէնում üna վերջավորութիւնը կազմում է թե գոյականների արական ձևի հոգնակին, և թե բայերի անկատարի հոգնակիի p և q դեմքերը, äni վերջավորութիւնը կազմում է թե գոյականների, և թե բայերի անկատարի երկակին։ Անհատարակ անհնար է որոշել արաբերէնի մէջ գոյականն ու բայը. օրինակ. qatl «սպանութիւն» և «սպանել» գոյական է և բայ է միանգամայն։

Ուգրո-ֆիննական լեզուների մէջ թե գոյականները, և թե բայերը շատ հաճախ նոյն մասնիկներն են առնում, ինչ որ տեղի է ամէն շատ լեզվաբաններէ ասելու, թե ուգրո-ֆիննական բայն ու գոյականը միևնոյնն են։ Ֆիննականում antaa «տալիս է» նշանակում է միևնոյն ժամանակ «տվող»։ Այսպես նաև թուրքերէնի մէջ gider «գնում է» և «գնացող», giderim «գնում եմ», այն է «գնացուն եմ»։ Ֆիններէն, հունգարերէն, թուրքերէն լեզուների մէջ գոյականների հոգնակիի վերջավորութիւնը ծառայում է նաև կազմելու բայերի հոգնակիի վերջավորութիւնը. օրինակ՝

Ֆիննն.	kala	ձուկ	kalat	ձկներ
	puu	ծառ	puut	ծառեր
	meni	գնաց	menit	գնացին
	menisi	պիտի գնար	menisit	պիտի գնային
Հունգ.	hárs	թմբի	harsak	թմբիներ
	név	անուն	nevek	անուններ
	vârt	սպասեց	vártak	սպասեցին
	kért	հարցրեց	kértak	հարցրին
Թրք.	ev	տուն	evler	տներ
	gitdi	գնաց	gitdiler	գնացին
	at	ձի	atlar	ձիեր
	alər	կառնել	alərlar	կառնեն

Ֆիննական դիրքներէն լեզվի մէջ բայական արմատը, որ հրամայական է միանգամայն, կարող է նաև իրրև գոյական ծառայել. այնպես որ, երբ առանց հոլովական մասնիկի, դառնում է գոյական, իսկ երբ բայական վերջավորութիւն առանց, կդառնայ բայ. ինչպես՝ töd «ծանոթութիւն, հիշողութիւն» töd vylys' vošny «հիշողութիւնից գնալ, մոռացվել», töda «գիտեմ», tyr «լիութիւն, լիքը», tyr nil «չափահաս աղջիկ», vom-tyr «բերանը լիքը», tyris «լցնում էր» (Wiedemann, 111)։

Աֆրիկյան մանդինգ լեզվում գոյական և բայ չեն զանազանվում իրարից. ուստի նախադասութեան մէջ բայի դերը ճանաչելու համար իրրև միջոց են ծառայում բայի ժամանակը որոշող մասնիկները, որոնք գրվում են ենթակայի և բայի միջև։ Սրանք կոչվում են բայի որոշիչ։ Այսպես՝ ներկայի համար գրվում է be, անկատարի համար՝ tu-mbe, կատարյալի համար՝ bara, ապառնիի համար՝ nā և այլն. օրինակ՝

a bara yeğe miţa
նա (կտր.) ձուկ բռնել
«նա ձուկ բռնեց»։

Բայը բնավ չի առանում հոգնակիի նշան. ենթական հոգնակի դնելը արդեն բավական է (Delafosse, pp. 176, 205, 214)։

Եթովպական բարբ լեզվի մէջ գոյականը նաև բայ է. օրինակ՝

de «մահ» և «մեռնել»
moki «կախով» և «կախել»
keren «արշալոյս» և «լուսանալ»։

Բայական խոնարհման վերջավորութիւններն են.

	Եզ.	Հոգ.
Ա.	-ւ	-ki
Բ	-a	-ka
Գ	-u	-ku

(Reinisch, 51)։

Եթովպական կաֆա լեզվում բայ և գոյական միայն մի վերջածանոով են տարբերվում. օրինակ՝

kam-e	գնալ	ham-ō	գնալու ձևը
gĭ'r-e	խեղճանալ	gĭ'r-ō	խեղճութիւն
imĭ't-e	տալ	imĭ't-ō	տրված բան
mā't-e	առնել	māt-ō	կերակուր

(Reinisch, 117)։

Աֆրիկյան դինկա լեզվում բայը նոյն է գոյականի, ածականի և նախադրութեան հետ. միևնոյն բառը կարող է գործածվիլ իրրև այդ չորս մասունք բանիների (Mitterrutzner, 29)։

Վոտյակներէնում բայի հրամայականը նոյն է գոյականի հետ. օրինակ՝

töl «փչիր» և «քամի»
monə «ծծիր» և «ծիծ»

(Емельянов, Грам. вот. яз. 63)։

Բուշմէննների լեզվով միևնույն բառը թէ գոյական է, և թէ բայ. ինչպես՝

ā «ուտել» և «ուտելիք» (Bleek, 61)։

Չինարէնում արդէն բայ և գոյական միևնույն են, և տեղից միայն կարելի է իմանալ, թէ արն է բայ և արն է գոյական. այսպես՝ հին չինարէնից կա մի դասական. օրինակ՝

lao lao, yeo yeo.

նշանակում է «ծերերի հետ պիտի վարվել իբրև ծեր, մանուկների հետ պիտի վարվել իբրև մանուկ»։ Այստեղ lao *իբրև գոյական նշանակում է «ծեր», իբրև բայ նշանակում է «վարվել իբրև ծեր», նոյնպես* yeo *իբր գոյական նշանակում է «մանուկ», իբրև բայ նշանակում է «վարվել իբրև մանուկ»։ Նոր չինարէնում գոյականը բայ դառնալու համար փոխում է տոնը և նախածայն բաղաձայնը դարձնում է շնչեղ. օրինակ՝*

haò *բարի, լավ,* hàó *սիրել*
çáng *գանձ,* câng *թաքցնել։*

Բացի սրանից, առհասարակ ամեն բայ կարող է գործածվել իբրև գերբայ կամ գոյական. օրինակ՝ ai[4] «սիրել» *և կամ «սեր», բայ է համարվում, եթե ունի ենթակա կամ լրացուցիչ, գոյական է համարվում, եթե ունի սեռական հատկացուցիչ կամ նախադրութիւն. օրինակ՝* ai[4] žən[2] «սեր մարդ» *բացատրութիւն մէջ, ուր իրապես* ai[4] *գոյական է (քանի որ «սեր առ մարդ, մարդասիրութիւն»), ըստ չինական քերականութիւն ըմբռնման բայ է, որովհետև հետագայ* žən *գոյականը համարվում է բնութիւն խնդիր (տրական հոլով)* (Seidel, Chin. gr., 98)։ *Հայերէն էլ «ջարդել» բայ է, բայց «ջարդում»՝ գոյական. կարելի է ասել «զապակիները ջարդել» (սեռի խնդիր), բայց «զապակիների ջարդումը» հատկացուցիչ առացած՝ գոյական, իսկ բայ պիտի լիներ, եթե ասէինք «զապակիս ջարդում»։*

Չինարէնի նման է և աննամերէնը։

Աննամերէնում խոնարհման չկա. ժամանակը որոշել ավելորդ է, որովհետև խոսակցութեան մէջ խոսքի ընթացքից արդէն

երևում է. երբ հարկավոր է լինում ավելի ճշտել, գործ են ածում՝

Ko *(անենալ),* da *(արդեն) անցյալի համար. օրինակ՝*

toi da lam viek nay } *այս աշխատանքը արի*
ես արդեն անել գործ այս

toi ko mua kai ao } *գնեցի շապիկը։*
ես անենալ գնել (հոդ) շապիկ

Երբ գործողութիւնը վերջացել է, խոսքի վերջը դնում են roi *(վերջացնել) ինչպես՝*

toi da lam roi } *արի*
ես արդեն անել վերջացնել

con gai da may kai ao roi } *աղջիկը շապիկը կարեց*
la *աղջիկ արդեն կարել (հոդ) շապիկ վերջացնել*

այս նուէրը կարելի է հասկանալ և «կարել էր»։

Ապառնիի համար դնում են se *կամ* fai *«պարտավոր լինել». օրինակ՝*

toi se di } *գնալու եմ*
ես պիտի գնալ

toi fai noi } *խոսելու եմ։*
ես պիտի խոսել

Երբ որևէ ժամանակական մակբայ կա, որով ժամանակը կարելի լինի իմանալ, այս ձևերը ավելորդ են. օրինակ՝

Վաղն առավոտ ես երթալ որսի
(պիտի ավելորդ է)։

(Dirr. Gr. Annam. 21)։

Ամերիկյան տուպի լեզվով գոյականը դառնում է բայ, եթե առանց դերանուն։ Այսպես՝ maendua *նշանակում է «մխիթ, հիշողութիւն» (երբ գոյական է) և «հիշել» (եթե բայ է)։ Դերանուններն են այս լեզվում.*

xe *ես,* nde *դու,* i *նա,*
nande *մենք* (incl.), ore (excl.), pê *դուք,* i *նրանք։*

Խոնարհումը հետևյալ ձևով է.

xe	maendua	*ես*	*հիշում եմ*	
nde	»	*դու*	»	*ես*
i	»	*նա*	»	*է*
nande	»	*մենք*	»	*ենք* (incl.)
orê	»	*մենք*	»	» (excl.)
pê	»	*դուք*	»	*եք*
i	»	*նրանք*	»	*են:*

Բայց, որովհետև այս դերանունները նաև առարկան են, ասած xe maendua *նշանակում է նաև «իմ հիշողությունը» (առնելով իբր գոյական). այսպես նաև մյուս դեմքերը: Այս շփոթմունքն առաջը առնելու համար մի քանի բարբառներ դերանունը կրճատ ձևով կրկնում են, եթե բառը բայ է (մեկը համարելով դերանուն ենթական, մյուսը իբր բայական մասնիկ). բայց կրկնությունը անդի չի անիննա, եթե բառը առնված է իբր գոյական և ոչ իբրև բայ: Օրինակ՝*

xe	re- maendua		*ես հիշում եմ*
nde	ne-	»	*դու հիշում ես*
haê	i-	»	*նա հիշում է և այլն:*

(L. Adam, 38—39):

Առնարհումը ավելի հայտնի է գառնում, երբ դերանունները ներմուծվում են իրրև սեռի ինդիր, որ բռնում է երկրորդ տեղը. օրինակ՝

xe	oro-	mboe	*ես քեզ*	*ատացանում եմ*
xe	opo	»	*ես ձեզ*	» »
ore	oro	»	*մենք քեզ*	» *ենք*
ore	opo	»	*մենք ձեզ*	« «

(անդ, էջ 43)

Մելանեզյան մուտա լեզվում ամեն բառ, նամնիկ մակբայ և ձայնարկություն, կարող է գառնալ բայ, եթե առանց բայական մասնիկ (Codrington, XIV):

Ամերիկյան հնդա լեզվի մեջ բայի գ դեմքը (եզակի կամ հոգնակի, ներգործական կամ կրավորական) հաճախ ծառայում է նաև իրրև գոյական:

Օրինակ. nānya *«իջնում է» և «անձրև»*
nillīn *«հոսում է» և «առու»*

nūndil *«իջնում ենք» և «ձյուն»:*

(Boas, Handbook, I, 109):

Էսկիմոսերենի մեջ բառը գոյական և բայ է միանգամայն, և բայերի դեմքերը որոշող վերջավորությունները միևնույն ստացական հոդերն են. օրինակ՝ «հասնել» բայի խոնարհումը.

tikippoya	*հասնում եմ*
tikipputit	*հասնում ես*
tikippoq	*հասնում է*

իսկապես նշանակում են՝

«ժամանումս, ժամանումդ, ժամանումը»:

Եբրայերենին բայը ներկա չունի. ներկան այս լեզվի մեջ կազմված է ուշ ժամանակ և ձևանում է գերբայը կցելով դերանուններին: Այսպես՝

ես խոսող = «խոսում եմ»
դու խոսող = «խոսում ես»

(Templer, Hebr. 46):

Բայի և գոյականի միությունը շատ լավ պահում է սամերերենը: Այս լեզվում բայական արմատը ունի գոյականի նշանակությունը. նրա գերբը և նրա առացած մասնիկները են միայն, որ տալիս են բայի կերպարանք. արմատը ինքնին անցյալ գործողության նշանակությունն ունի, երբ ուզում ենք վերածել ներկայի, ավելացնում ենք -na *ցուցականը, օրինակ՝*

dun *«գնացք, երթ» — «գնաց»*
dun-na *«այս երթը» — «գնում է կամ պիտի երթա»:*

Սրանք միաժամանակ հոգնակի են. թիվը երևում է ենթակայից, իսկ եթե ուզենք հատկապես ցույց տալ հոգնակին, ավելացնում ենք eše *կամ* eš *«շատ» (որ և 3 նշանակող բառն է). օրինակ՝*

gar *«անելը, արարք» — «արեց»*
gar-ri-eš *«արարին»:*

Ներկայի համար դրվում է e-ne-ne *«նրանք» բառը. ինչպես՝*

gar-ra *«անում է»*
gar-ri-e-ne-ne *«անում են» (բուն՝ «անել» — նրանք):*

(Bertin, 12):

Հնդկական առնտալի լեզվի մեջ բայի և գոյականի միջև տարբերացումը իր վախճանին չի հասած: Իրապես այս լեզվի մեջ բայ չկա, ամեն մի անկախ բառ կարող է բայի պաշտոն կատարել և ամեն մի բայական ձև կարող է գործածվել իբր գոյական կամ ածական, օրինակ՝

hâr *«մարդ»*, marañ *«մեծ»*
hâr-ä marañ-a *«մարդը մեծ է»*
hā *«այդ»*, ket' *(մասնիկ է անցյալի)*
hā-kat'a *«սատց այն» (իբր թե այդ-ից)*:

Սրանց հակառակ՝

dal *«զարնել»* բայ է, որից կար. dal-ket' *«զարկից»*, որից էլ կարելի է շինել գոյական և ածական. *ինչպես՝* dal-ket'-ko «those who struck», dal-ket' hâr «the struck having man, the man who struck».

Ամբողջը կախված է մի a *ձայնավորից, որ անթևքական բառը վերածում է բայի. այս* a-*ն կոչվում է* categorial a — *կարգեր արտահայտող* a *(քերականական կարգերի ցուցիչ)*:

(Grierson, *Դ. 45)*:

Սոլոմոն կղզիների վատսբանգա լեզվում ամեն մի բայ առանձին na *հոդը՝ դառնում է գոյական. ինչպես՝* hoko *«խոսել»*, na hoko *«բառ». այսպես են նաև մերձակա լեզուները:*

(Iwens, 354)*:*

Մինչև անգամ արդի հնդեվրոպական զարգացած լեզուներում հաճախ կարելի է պատահել այն երևույթին, որ բայ և գոյական նույն լինեն: Այսպես՝ անգլերենում կան բազմաթիվ գոյականներ, որոնք գոյական են՝ եթե հոդ ունեն և բայ են՝ եթե դերանուն ունեն, օրինակ՝

the fire	*կրակը*	I fire	*վառում եմ*
the book	*գիրքը*	I book	*ծանոթագրում եմ*
the bomb	*ռումբը*	I bomb	*ռմբակոծում եմ*

Ռուսերենի մեջ երբեմն գոյականը բայի տեղ է գործածվում և կարելի է կազմել նախադասությունը առանց բայի, ինչպես՝

мнѣ жаль *ինձ ցաւ (ցավում եմ)*

моему брату лѣнь идти *(եղբորս ծուլությունն երթալ)—եղբայրս ծուլանում է երթալ.*

что тебѣ за охóта *(ինչ քեզ ցանկություն)— ինչո՞ւ այդպես ես ցանկանում.*

стыдъ и срамъ глядѣть на это—*ամոթ և անպատվություն նայել սրան:*

(Fuchs, Gramm. russe, 356)*:*

Հնդեվրոպական լեզվախմբի մեջ, հակառակ մյուսներին, գոյականի և բայի տարբերացումը շատ շատ է կատարված, անխնայական բան և բայական բան բոլորովին տարբեր են իրարից և չկա մի վերջավորություն կամ մասնիկ, որ միևնույն ժամանակ թե՛ գոյականի, և թե՛ բայի առնչություններ, այսինքն՝ թե՛ հոլովումը, և թե՛ խոնարհումը նշանակի. եղածները չափազանց փոքր թիվ են կազմում. այսպես հն. λέγω «խոսում եմ» և ὁ λόγος μου «խոսքս» բոլորովին տարբեր նշանակություններ ունեն: Հայերենի մեջ գրաբարում ենք արդարև «խօսիմ» և «խօսք իմ» և «ուտեմ՝ք», «ուտե՛ք» և «բանք», բայց այս բոլորը հետևաբար առաջացած ձևեր են և կապ չունեն բուն հնդեվրոպական շրջանի հետ: Հնդեվրոպական նախալեզվում մասնաշնորհում է միայն ā մասնիկը, որ կազմում է թե՛ գործող անձ, թե՛ գործողության անուն, այսինքն՝ բայ և գոյական միանգամայն:

ԳԼՈՒԽ Բ

ԲԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

1. ԲԱՅԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ինչպես որ բառը կամ արմատը ըմբռնվելով իբր առարկա կամ գոյական՝ անհրաժեշտաբար ունի զանազան առնչություններ ուրիշ գոյականների հետ, նմանապես և ըմբռնվելով իբրև գործողություն, պարտավոր է ունենալ զանազան պարագաներ կամ հանգամանքներ, օրինակ՝ թե ով է կատարել այդ գործողությունը, քանի՞ հոգի են եղել դրանք, ինչպես են կատարել, վերջացրե՞լ են գործողությունը, թե ոչ և այլն և այլն: Թե առարկայի առնչությունները և թե գործողության պարագաները բնականաբար արտահայտվում էին սկզբում առանձին բառերով, որոնք հետո չափազանց մաշվելով՝ վերածվեցին փոքրիկ մասնիկների և միանալով իրենց հարակից բառերին, կազմեցին գոյականների հոլովումը և բայերի խոնարհումը:

Կան նախնական լեզուներ, որոնց մեջ բայը դեռ գտնվում է այս նախնական շրջանում. օրինակ՝ Աֆրիկայի կաֆա լեզվի մեջ բայական միևնույն ձևը գործ է ածվում միաժամանակ իբրև ներկա, անկատար, կատարյալ, ապառնի, անորոշ, եղակի և հոգնակի բոլոր դեմքերի համար: Դեմքերը ցույց տալու համար կարելի է անկախաբար գործածել անձնական դերանուններ: Իսկ եթե կարիք է զգացվում ժամանակը որոշելու, գործ են ածում զանազան ժամանակական մակբայներ և ավելի հաճախ շարժուձևեր. օրինակ՝ mat *«տանել» արմատից ունենք՝*

ne mate *«տանում եմ, կերար, պիտի տանեա»*
noši mate *«տանում ենք, տանում էինք, պիտի տանենք»*

անցյալը ցույց է տրվում ուսի վրայով շարժում անելով:

(M. Cohen, BSL, 83, 177):

Տրամաբանորեն մտածելով՝ գործողության պարագաները անհուն են. կարելի է միևնույն գործողությունը երևակայել հարյուրավոր պարագաների տակ. օրինակ՝ թե գործողությունը կատարվել է ներկայի կողմից դիտակցաբար թե պատահմամբ, հատատ դիտավորությամբ թե կամովին կամ երկյուղով, ինքնաբերաբար թե մի ուրիշի դրդմամբ, կամովի՞ն թե ակամա և այլն և այլն: Բայց այս բոլորը մենք չենք ներկայացնում բայի մեջ և նրա հետ միախառն, այլ կամ նրանց համար ունենք առանձին մակրայներ, նախադրությամբ կամ բնության խնդիրներ, վերջապես հարակից դրված ուրիշ բայեր, կամ առանձին միջանկյալ կամ երկրորդական նախադասություններ: Իսկ այն պարագաները, որոնք կյանքի համար ամենից ավելի սովորական, պիտանի և անհրաժեշտ են, ստացել են առանձին ձև կամ մասնիկի կերպարանք և սրանք են կազմում բայական կարգերը, որոնց գտնարն է խոնարհումը:

Ինքնին հասկանալի է, որ ամեն մի լեզու պարտավոր չէ ունենալ միշտ այն կարգերը, որ ունի մի ուրիշ լեզու: Եթե աֆրիկյան կաֆա լեզուն այնքան աղքատ է, որ մեր ամենասովորական կարգերը չունի (այն է՝ ժամանակ, թիվ և դեմք), ընդհակառակը կան շատ հետամնաց ցեղերի լեզուներ էլ, որոնք ունեն այնպիսի կարգեր (թվի, դեմքի և ժամանակի կամ եղանակի վերաբերմամբ), որ մենք մինչև անգամ ըմբռնել գժվարանում ենք, և կամ առնվազն մեր զարմանքն են շարժում, մեր, որ վարժված ենք այսինչ կամ այնինչ ըմբռնողությամբ կազմելու մեր բայական կարգերը: Ավելի բարդանում է խնդիրը, երբ լեզուները բայի այդ զանազան հանգամանքները խրում են բայի մեջ՝ մասնիկների և կամ եղանակավորիչ ձայների ձևի տակ: Այսպիսով առանում ենք խճողված և բազմիմաստ բայաձևեր:

Սրանից հետևում է այն, որ բայական կարգերը զանազան լեզուների մեջ քանակով և որակով տարբեր են իրարից:

Ամենասովորական կարգերը, որոնց հաճախ պատահում ենք բազմատեսակ լեզուների մեջ, և որոնք ընդհանրապես անհրաժեշտ են բայի հասկացողության համար՝ են բայի դեմքը, դեմքի սեռը, թիվը, ժամանակը, եղանակը, բայի սեռը, տեսակը, նաև երեսյթը: Այս բոլորը արտահայտվում են՝ համաձայն լեզուների զարգացման ու աճման տարբերին, զանազան միջոցներով, ամանց մեջ օժանդակ բառերով, ուրիշների մեջ այլևայլ մասնիկներով կամ վերջավորություններով, ինչպես նաև արմատի ներքին փոփոխությամբ

(ձայնդարձ) ու տանով։ Վերջին երեքը նաև հնդեվրոպական նախալեզվի մեջ ընդունված դրութիւնն է։

2. Բ Ա յ Ի Դ ե Մ Ք Ը

Բայի դեմքը գործողութիւնը կատարող անձն է, որ երեք անկախաբար առնինք, անձնական դերանունն է։ Այսպիսով բայի դեմքը դառնում է անձնական դերանուն։ Երբեմն անձնական դերանուն ունի լեզուն, այնքան էլ բայի դեմք ունի նա։ «Պերացուն» հատորում մենք տեսանք բոլոր տեսակի անձնական դերանունները՝ սկսած ամենապարզ ձևից, որ ճանաչում է միայն երեք դեմքի դերանուն (ընդամենը վեց), մինչև ամենաբարդ ձևը, որ ճանաչում է մինչև 20 (ամերիկյան կարրիեր լեզուն) կամ 24 (հոտենդոտան նամա լեզուն) տեսակ դերանուն (տես II հ., էջք 10, 11, 33)։

Այստեղ պետք է քննութիւն առնենք բայի կապը իր դեմքի, կամ որ նոյնն է, անձնական դերանվան հետ։

Այս կողմից լեզուները բաժանվում են երեք խմբի. առաջին խմբի մեջ մտնում են այն լեզուները, որոնք ոչ մի կապ չեն ընդունում բայական ձևի և նրա դերանվան միջև. այս կարգի լեզուները խոնարհում չունեն, բայը պահում է միշտ միևնույն բունը և իր դեմքը ճանաչվում է հարակից դերանունից, որ այս դեպքում անհրաժեշտ կերպով պետք է ընկերանա բային, ապա թե ոչ, բայի դեմքը կլինա անորոշ և անհասկանալի։ Այս կարգին են պատկանում բոլոր նախնական լեզուները, ինչպես չինարենը, աննամերենը, ջալալերենը և այլն, որոնց օրինակները տեսանք «Ներածութեան» մեջ (էջ 204—208) և ավելի հետո կտեսնենք խոնարհման մեջ։

Այսպես է սկսվել բայի խոնարհումը լեզվի ծագման առաջին շրջանում։

Բայց նույնիսկ շատ զարգացած լեզուներ, անցնելով խոնարհման ամենաբարդ ձևերից, վերջ ի վերջո եկել-հասել են նորից այն նախնական ձևին, ու բայը ունի բոլոր դեմքերի համար անփոփոխ մի ձև և դերանունը հարակցել անհրաժեշտ է։ Այսպես են, օրինակ, ֆրանսերենը, անգլերենը և այլն։ Նույնիսկ ռուսերենը, որ ընդհանրապես բայական ձևերը անկախ է պահում, կատարյալի մեջ հասել է այդ նախնական վիճակին, ուստի կարիք է զգում դերանունը դնելու. ինչպես՝ я кушал, ты кушал, он кушáл «ես կերա, դու կերար, նա կերավ»։

Այս բոլորի մասին ավելի ընդարձակ կխոսենք հետո։

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն լեզուները, որոնց մեջ

բայը յուրաքանչյուր դեմքի համար ունի որոշ ձև, որ տարբերվում է մյուսներից, և հետևաբար կարիք չկա դերանունն էլ դնելու։

Դեմք ցույց տվող նշանները բայի վրա՝ ընդհանրապես նրա առացած վերջավորութիւններն են. ինչպես՝ հբ. սիրեմ, սիրես, սիրէ, թրք. al-dəm, al-dən, al-də, ռուս. хочу, хочешь, хочет և այլն։ Կան լեզուներ էլ, որոնց մեջ դեմք որոշող նշանները նախամատնիկներն են. ինչպես՝ արաբ. a-ktubu «գրում եմ», t-a-ktubu «գրում ես», ya-ktubu «գրում է», na-ktubu «գրում ենք» և այլն։ Վերջապես կան լեզուներ էլ, որոնց մեջ երկու տեսակի մատնիչներն էլ (նախամատնիկ և վերջավորութիւն) գործակցում են իրար հետ։ Աֆրիկյան լեզուների մեջ ասոնը ծառայում է իբրև միջոց՝ բայի դեմքը որոշելու համար. այսպես ա դեմքը ստանում է բարձր տոն, բ դեմքը՝ ցածր տոն (Les langues du monde, 550)։

Առաջին և երկրորդ խմբի միջև գտնվում են այն լեզուները, որոնք խոնարհման մեջ բայը անփոփոխ են թողնում, իսկ անձնական դերանունները կրճատ ձևով իրր մատնիչ կցում են բային։

Այսպես՝ Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) վեսախի լեզուն, ունենալով երկակի և եռակի թվերը դերանվան մեջ, բայն էլ մինչև 16 դեմքի նախամատնիկ ունի հետևյալ ձևով.

Ա. դեմք		եզ.	— yak
Բ	»	»	— nuk
Գ	»	»	— t
Անդեմ			— k
Ա. դեմք	incl.	հոգ.	— kot
Ա.	» ex.	»	— yakot
Բ	»	»	— nukot
Գ	»	»	— kot
Ա.	» incl.	երկ.	— kw, ku, ki
Ա.	» ex.	»	— yakwa
Բ	»	երկ.	— nukwa
Գ	»	»	— kw
Ա.	» incl.	եռ.	— kil
Ա.	» ex.	»	— yukil
Բ	»	»	— nukil
Գ	»	»	— kil.

(Macdonald, 140)։

Երրորդ խմբի մեջ մտնում են այն լեզուները, որոնց մեջ թեև բայական վերջավորութիւնը բայական է բայի դիմքը որոշելու, բայց դրսում է նաև դերանունը: Այսպես՝ օրինակ ֆրանս. nous parlons *«մենք խոսում ենք» ձևի մեջ թեև* -ons *վերջավորութիւնը հոգ. ա դիմքի նշանն է, բայց դրսից է նաև* nous *հոգ. ա դիմքի դերանունը: Նմանպես գերմ.* du hast *«դու ունես» ձևի մեջ թեև* hast *բայական էր միայնակ եզ. բ դիմքը նշանակելու համար, բայց կցել են նրան նաև* du *եզ. բ դիմքի դերանունը:*

Ավելի դժուարանալի են այն լեզուները, որոնք ոչ միայն դնում են անկախ դերանունները, ոչ միայն բայի մեջ դնում են դիմք արտահայտող մասնիկներ, այլև ներմուծում են բայի մեջ զանազան դերանվանական խնդիրներ: Այսպիսի բարդ լեզուների կարգին են պատկանում Ամերիկայի կամչատկաբնների լեզուները, կովկասյան լեզուները, որոնց դիմավոր տիպը ներկայացնում է վրացերենը, և բասկերենը: Սրանց մասին արդեն խոսել ենք երկրորդ հատորում (էջք 97—104):

Բերբերական լեզուների խոնարհման մեջ ոչ միայն բայի մեջ է առնվում դիմք արտահայտող դերանունը, այլև նրան ընկերակցող ուրիշ դիմքի մի դերանուն և նույնիսկ նրա տեղը: Օրինակ՝

rwaḥ-aḏ *երթանք (դա և ես)*
rwaḥm-aḏ *երթանք (դուք՝ արական և ես)*
rwaḥənt-aḏ *երթանք (դուք՝ իգական և ես):*

(BSL հա. 36, № 106, էջ 52):

Հնդեվրոպական նախալեզուն պատկանում է վերոհիշյալներից երկրորդ խմբին. այստեղ բայի ձևը ինքնին բայական է դիմք ցույց տալու և դրա համար կարիք չկա որևէ դերանուն կցելու: Ուր որ կարիք կա շեշտելու, այդ դեպքում միայն դրվում է դերանունը:

Այս վիճակը պահում են բոլոր հին լեզուները. ինչպես՝ սանսկրիտը, հունարենը, լատիներենը և հայերենը: Օրինակ՝ ասիրեմ գքեզ. *բայց՝* «ես սիրեմ գքեզ»: *Լա.* amas at esurio *«սիրես, այլ քաղցնում եմ». դերանունները հասկանալի են ինքնին, իսկ երբ կարիք լինի շեշտելու՝* tu amas at ego esurio *«դու սիրես, իսկ ես քաղցնում եմ»:*

Երբ դործող անձը անհայտ է, նախալեզուն գործ էր ածում ɤ վերջավորութիւնը, որ կցում էր բայի ծայրին (անդեմ բայ): Իսկ այն բայերը, որոնք զուրկ են այս վերջավորութիւնից և ըստ նշանակութեան անդեմ են մեզ համար (ինչպես՝ «ձիւնէ, անձրևէ» և

այլն), հների համակարծութեամբ անդեմ չեն, այլ իբրև գործող անձ ունեն մի աստված կամ մի ոգի: Այսպես՝

Հն. ὗει *«անձրևում է», Հոմերոսի մեջ հայտնի կերպով դառնում է* ὗε δ'ἄρα *Ζεύς.*

Լա. Jove tonante
Վեդ. vāto vāti, *որ է հյ. «հողմ շնչէ»:*

Անորոշ դիմք

Երրորդ դիմքը կարող է լինել անորոշ և այդ դեպքում գործածվում է անդեմ բայ:

Հն. և լա. շատ օրինակներ կան գ դիմքով անդեմ բայի. օրինակ՝ Հոմերոս X 199.

ὡς δ'ἐν ὀνείρῳ οὐ δύναται φεύγοντα διώκειν
«երազում չի կարելի փախչողին բռնել»

կամ Հերոդոտոս Գ 82.

ἐκ δὲ τοῦ φόνου ἀπέβη ἐς μουναρχίαν
«մարդասպանութիւնից հանում են միապետութիւն»

«Անել» բայի հետ անորոշը դրսում է հաճախ հոգ. գ դիմք. ինչպես՝ φασι, λέγουσι, dicunt, ajunt *«ասում են». ուրիշ բայերի հետ հոգ. գ դիմք հազվագյուտ է, և եթե կա Նոր Կտակարանում (օր. Ղուկ. Զ. 44), թերևս սեմական ազդեցութիւն է:*

Երբ մի նեղադրութիւն կա, հաճախ դրսում է եզ. բ դիմք. ինչպես՝

δὶς εἰς τὸν αὐτὸν ποταμὸν οὐκ ἂ ἐμβαίης
երկից ի միևնույն գետ չեն մտնում

նույնպես լա. diceres, crederes, *հյ. դուգես, կարծես:*

Գ դիմքով լինում է հատկապես անդեմ բայը. ինչպես՝

δεῖ *պետք է,* κινδυνεύει *կարելի է,* δοκεῖ *թվում է,*
լա. oportet, paenitet *և այլն:*

(Meillet, Traité, 288):

3. ԲԱՅԻ ԴԵՄՔԻ ՍԵՌԸ

Դերանունների ուսումնասիրութիւնից տեսանք, որ դերանունը շատ լեզուների մեջ գիտե զանազանել արական, իգական և չե-

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիա
Գրադարան
Библиотека
Арм. ССР
ГРАДАРАН
БИБЛИОТЕКА

դոք սեռը։ Կան լեզուներ, որ գերանուններուն դեմքի սեռի խտրութիւնը կարևոր են համարում մացնել նաև բայի խոնարհման մէջ՝ տալով նրան առանձին վերջավորութիւն (կամ նախամասնիկ)։ Այս կողմից առաջին հերթին հիշատակելի է արաբերենը, որ խոնարհման ժամանակ՝ բայի երկրորդ և երրորդ դեմքերում, թէ՛ եզակի, թէ երկակի և թէ հոգնակի դանագանում է արական և իգական սեռները, հետևյալ ձևով.

Կատարյալ

Բ	եզ.	ար.	katab-ta	իգ.	katab-ti
	հգ.	ար.	katab-tum	իգ.	katab-tunna
Գ	եզ.	ար.	katab-a	իգ.	katab-at
	երկ.	ար.	katab-ā	իգ.	katab-atā
	հգ.	ար.	katab-ū	իգ.	katab-na

Ներկա

Բ	եզ.	ար.	taktubu	իգ.	taktubīna
	հգ.	ար.	taktubūna	իգ.	taktubna
Գ	եզ.	ար.	yaktubu	իգ.	taktubu
	երկ.	ար.	yaktubāni	իգ.	taktubāni
	հգ.	ար.	yaktubūna	իգ	yaktubna

Արաբերենի նման երբայերենն ու ասորերենն էլ խոնարհման մէջ մացնում են սեռը. ա դեմքը սեռ չունի, իսկ բ և գ դեմքերը թէ եզակի, և թէ հոգնակի ունեն արական և իգական սեռերը։

Հինդուստանի լեզվի մէջ, թեև ոչ ամբողջ բայը, բայց բայի որոշ ժամանակներ խոնարհման ժամանակ դնում են արականի և իգականի տարբերութիւնը. օրինակ՝

ար.	maiṇ	thā	ես էի	իգ.	maiṇ thī
	tū	thā	դու էիր		tū thī
	ham	the	մենք էինք		ham thīn
	tum	the	դուք էիք		tum thīn

Այսպես նաև ար. maiṇ bolūṇgā պիտի ասեմ, իգ. maiṇ bolūṇgū.

(Bonnerjea, 17)։

Այս բոլորի մէջ ինչպես տեսնում ենք, գերանունը չէ, որ ընդունում է սեռի նշանը, այլ բայական վերջավորութիւնը։

Բասկերենը թեև գոյականների մէջ սեռի խտրութիւն չի ճանաչում, բայց բայերի եզակի երկրորդ դեմքի համար տարբերում է արականն ու իգականը (մինչդեռ ամենից ավելի երկրորդ դեմքն էր, որ իրեն ակնհայտ բան, բնավ կարիք չուներ սեռ որոշելու)։ Այսպես՝ duk «ունես» (տղամարդու ասված ձև), dun «ունես» (կնոջ ասված ձև)։

Դրավիդյան լեզուների մէջ բայի առաջին և երկրորդ դեմքը սեռ չունի, բայց երրորդ դեմքը դանագանում է սեռը՝ թէ եզակի, և թէ հոգնակի։ Օրինակ՝

Թամիլ.	varugiṙān	գալիս է (ար.)
	varugiṙāḷ	» » (իգ.)
	varugiṙadu	» » (չեզ.)
	varugiṙārgal	» են (ար. և իգ.)
	varugindrana	» » (չեզ.)։

(Caldwell, 486)։

Հյուսիսային կովկասյան լեզուների մէջ էլ բայը համաձայնում է սեռով, թեև դեմքով համաձայնութիւն չկա։ Օրինակ՝ ավարերէն լեզվով՝

չի վիխիզավիցն «գալը ցանկալ»
չուժա լիխիզալիցն «գիկին ցանկալ»,

որոնց մէջ վի արականի նշան է, յի՝ իգականի։ Կովկասյան գարդվա լեզվով ասում է.

v-ä-q'-ä-ra մի մարդ ծեծեցի
d-ä-q'-ä-ra մի կին ծեծեցի
b-ä-q'-ä-ra մի անշունչ իր կամ անասուն ծեծեցի։

Սրանց մէջ v արականի նշան է, d իգականի և b չեզոքի (BSL հտ. 29, № 88, էջ 153)։

Հնդկական ջաունսարի լեզվով ապառնիի խոնարհումը ար. և իգ. տարբեր է. այսպես՝

		եզ. ար.	հգ. ար.	եզ. և հգ. ար.
Ա.		mārmā	mārdē	mārdī
Բ		mārdā	»	»
Գ		»	»	»

Այս բոլորը նրա համար է, որ վերոհիշյալ ձևերը դերբալ են։

(Grierson, հտ. Թ, մ. դ, էջ 397)։

Հնդկական դիլղիսի շինա լեզվում բայի խոնարհման մեջ եղակիում դրվում է ար. և իգ. սեռերի տարբերությունը, բայց հոգնակիում տարբերություն չկա, երկու սեռերը միևնույն են (Grierson, I, 1, էջ 350)։

Հնչեններեն լեզվով՝ «նա դնացի».

so vaxar (ասում է տղամարդը)
so yaxar (» » կինը)
so daxar (» » չեզոքը, երեխան)
txo daxar (հոգնակին է)։

Սրանց մեջ axar մաքուր արմատն է, so «նա», txo «մենք», իսկ v, y, d ցույց են տալիս սեռերը։

Ամերիկյան խոնամա լեզվի մեջ էլ, ինչպես գոյականները, նույնպես և բայը դնում է սեռի դասակարգությունը, որ արտահայտվում է խոնարհման մեջ արականի համար a, իգականի համար ka նախամասնիկներով (MSL 19, 306)։

Խոնարհման այս ձևերի մեջ, որոնք դերբայներից են կազմված, ավելի սպասելի են դեմքի սեռը որոշող նշանները։ Այսպես՝ ուսանելու թեև բայը ընդհանրապես խոնարհման ժամանակ սեռ չի որոշում, բայց կատարյալում, որ իսկապես դերբայ է, արականն ու իգականը որոշում է, ինչպես՝ кушать «ուտել» բայից։

կար. ար. кушал, իգ. кушала.

Հնդեվրոպական նախալեզուն բայի դեմքի սեռը չէր զանազանում. այսպես և հայերենը։

4. ԲԱՅԻ ԹԻՎԸ

Ինչպես գոյականների հոլովման, նույնպես և բայերի խոնարհման մեջ նախնական լեզուները թիվ չգիտեին։ Այս վիճակը շարունակում են դեռ անջատական լեզուները, ինչպես չինարենն ու աննամերենը։ Խոնարհման մեջ թիվ չգիտեն նաև ջավաներենը. միևնույն ձևը թե՛ եղակի է, և թե՛ հոգնակի։ Չինարենն ու աննամերենը, որոնք խոնարհման մեջ թիվ չգիտեն, բայի թիվը որոշում են գոնե դերանունների միջոցով, բայց որովհետև ջավաներենում դերանունն էլ թիվ չունի, ուստի անհնար է որոշել, թե բայը եղակի՞ է, թե հոգնակի (Bohatta, Gr. jav. 64)։

Զարմանալի ձև է առացած բայի թիվը ամերիկյան սիուսլավան լեզվի մեջ։ Այստեղ գոյականների հոգնակին կազմելու համար

կա երկու տեսակ վերջավորություն, բայց նրանք ընդհանրապես չեն գործածվում և հոգնակի կազմելու համար գոյականի հետ գործածվում են մի քանի հավաքական բառեր. այսպես՝ yāāxai «շատ, բազմաթիվ», haímūt «բոլոր», L!áai «առեղ, աշխարհ». սրանց կողքին դրված գոյականն էլ հնում է եղակի, ուստի և բայն էլ լինում է եղակի (Boas, II, 609), ինչպես մենք էլ հայերեն ասում ենք «հինգ հոգի եկավ, երկու տուն քանդվեց, շատ մարդ դնաց» և այլն։

Հնդեվրոպական նախալեզուն ինչպես հոլովման, նույնպես և խոնարհման մեջ ճանաչում էր երեք թիվ. եղակի, երկակի և հոգնակի։ Այսպես են նաև սեմական լեզուները։ Հնդեվրոպականի մեջ բայի թիվը արտահայտվում էր նույնիսկ բայի վերջավորությամբ, որ յուրաքանչյուր թվի համար տարբեր էր և հետևաբար կարիք չկար, որ համապատասխան դերանունն էլ դրվեր։ Այսպես է նաև սեմականում։ Այդ վիճակը պահում են առնակրիտը, գենդերենը, գոթացերենը, ռունական նորբերենը, հին սլավերենը, լիթվաներենը և հին հունական մի քանի բարբառներ (հատկապես հին աատիկյանը)։

Մյուս լեզուները ջնջել էին երկակին և ունեին միայն եղակի և հոգնակի։ Հին իսլանդերենը թեև հոլովման մեջ ուներ երկակի թիվը, բայց խոնարհման մեջ չուներ։

Երբորդ հատորում, գոյականների թվի մասին խոսելիս, բացատրեցինք, թե ինչպես լեզուների մեջ հետզհետե վերացավ երկակին թե՛ հոլովման, և թե՛ մանավանդ խոնարհման մեջ։ Այսօր հնդեվրոպական բոլոր լեզուների մեջ ջնջված է երկակին խոնարհման ժամանակ. հաղիվ ոմանց մեջ մնում են հետքեր։ Ամենից ավելի կենդանի է սլովեն լեզվի մեջ. օրինակ՝

bereva կարդում ենք (երկուսս)
govoriva խոսում ենք (»)
midva sva govorila խոսել ենք (երկուսս)։

Հայերենի մեջ սկսած ենք դարից երկակին ջնջված է, և այսօր ոչ մի հետք չունենք նրանից բայի խոնարհման մեջ։

5. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բայի եղանակ ասելով հասկանում ենք խոսող անձի հոգեկան վիճակի արտահայտության ձևը։ Կարելի է խոսել պարզապես պատմելով, նկարագրելով կամ բացատրելով իրողությունը, կամ

թե հրամայելով, պատվիրելով, հորդորելով, առաջարկելով կամ խնդրելով և աղաչելով, կարելի է վճռապես խոսել կամ պայմաններ դնել, ցանկանալ, հավատալ կամ կասկածել իրողության կատարման, ենթադրել կամ վախենալ, որ այդպես է լինելու և այլն։ Այս բոլորը արտահայտող բայական ձևերը կոչվում են եղանակ։

Մարդկային ապրումները բազմաթիվ են, ուստի բազմաթիվ են նաև հոգևկան արտահայտությունները լեզվի մեջ։ Բայց, եթե ամեն մի հոգևկան արտահայտության համար առանձին բայական ձև առեղծվեր, լեզուն չափազանց բարդ վիճակ պիտի ունենար։ Ուստի, մարդիկ չափավորել են այդ բոլորը և առեղծել են միայն մի քանի եղանակներ, միայն բավականանալով գործածել հարակից մակբայներ, օժանդակ բայեր և այլն։

Եղանակների թվի կողմից ամենից աղքատը գնչուերենն է, որ գիտե միայն երկու եղանակ (սահմանական և հրամայական)։ Մի քայլ ավելի առաջ է գնում սրբայեցերենը, որ այս երկուսի վրա ավելացրել է անորոշ կոչված եղանակը։ Ուրիշներ հասել են չորս եղանակի։ Այսպես է հնդեվրոպական նախալեզուն, որ գիտե սահմանական, հրամայական, ըղձական և առորդայական եղանակները։ Թրանսերենը չունի ըղձական, բայց նրա փոխարեն ավելացրել է թեական կամ պայմանական (conditionnel) եղանակը։ Արաբերենը գիտե հինգ եղանակ, այսինքն՝ բացի սահմանականից, հրամայականից և առորդայականից, ևս ուրիշ երկուսը, որոնք են ասպակական (energicus) և կրճատական (modus apocopatus)։

Հարուստ է սորբերենը, որ ունի ութ եղանակ, հետևյալ ձևով.

Սահմանական, պատմողական սովորական ձև է։

Հրամայական.

Ենթակայական (subiectivus). ավելի հանդիսավոր ձև է, քան սահմանականը և կարելի է կոչել հռետորական եղանակ։

Թեական եղանակ։

Առարկայական (obiectivus). գործածվում է երկրորդական նախադասությունների մեջ՝ իբրև դիմավոր նախադասության հետևանք, հաճախ շփոթվում է թեականի հետ։

Տևողական (permensivus). ցույց է տալիս շարունակություն, այսինքն թե այն միջոցին, երբ խոսողը պատմում է, գործողությունը դեռ վերջացած չէ. սրա համար էլ չունի անցյալ, ներկա և ապառնի ժամանակ։

Ասպակականը զորացնում է բայի իմաստը։

Ածանցական (paragogicus). նույն է նախորդի հետ, միայն իր հետևից պահանջում է առարկայական եղանակ։

(Bertin, 62)։

Զուլու լեզվի մեջ եղանակը յոթ է. անեղեալ, հրամայական, սահմանական, dependent, situative, potential և intentional. սրանցից dependent նույն է առորդայականի հետ. situative նույն է դերբայի հետ. potential ցույց է տալիս, որ գործողությունը կարելի է անել. intentional նույնն է բայերի տեսակների մեջ հիշված մադրրական ձևի հետ, բայց այն տարբերությամբ, որ ենթական ուզեցել է անել, բայց չի կարողացել լրացնել (Doke, 115 և 144)։

Բուլղարերենում կան հետևյալ եղանակները.

Eventualis. ցույց է տալիս գործող անձի պատրաստականությունը. անի ներկա, սահմանական կար. ժամանակները (Щепкинъ, 55)։

Ingressivus. ցույց է տալիս գործող անձի պատրաստակամությունը. նույն է ֆրանս. je vais manger և այլն ձևի հետ. կազմվում է ща «ուզել» բայով. օրինակ՝ ще отúда «պատրաստ եմ երթալու». щѣхъ да отúда «պատրաստ էի երթալու» և այլն։

(Щепкинь, էջ 56)։

Praesumptivus. ցույց է տալիս ոչ մի անկասկածելի իրողություն, այլ իբր ենթադրություն կամ կարծիք (էջ 56)։

Պայմանական։

Conjunctivus, ցանկություն, պայման, ենթադրություն։

Բուլղարերենը ունի երեք տեսակ ապառնի.

1. կազմվում է ще օժանդակով, ներկայի հետ, որ նշանակում է «ուզում եմ» և հայ. хощж ձևից է կրճատված (Щепкинъ, էջ 53), (= պիտի գամ).

2. նույն բայով՝ անորոշի հետ (անորոշ ապառնի, որ անհատատ է (— կգամ).

3. նույն բայով և «լինել» օժանդակով՝ կատարյալի հետ միացած, նշանակում է տեսած կլինի, բերած կլինի, որին հավասար է potentialis ձևին (Щепкинъ, 54). օրինակ՝

ще бждечелъ արգեն կարդացած կլինի.

Անցյալի համար բուլղարերենն ունի անկատար, սորիստ, կատարյալ, հարակատար և գերակատար։

1. Ֆրանսերենի թեական (conditionnel) եղանակը ցույց է

տալիս. 1. գործողության կարելիության ներկայում կամ ապագայում, կամ մի ենթադրության, որ կարող է կատարվել կամ ոչ. օրինակ՝

N'agacez pas le chien, il vous *mordrait.*

Ակառեղ mordrait *թեական է, որովհետև կծելը անպայման չէ. կարող է և չկծել: Հայերեն նույն պարագային ասում ենք սովորաբար՝ «շունը մի գրգռեք, կկծի». բայց ֆրանսերենի ճիշտ համապատասխանը տալու համար պիտի ասել «կարող է կծել» (մինչդեռ բառացի կլիներ «կկծեր»):*

2. Նույնպես ֆրանսերեն ասում են on dirait, on croirait... *որ հայերեն ասում ենք «կարծես, ասես...»: Ֆրանսերենում գործողության իմացվում է* si... *եթե արտաքին երևույթին նայինք, կկարծեինք, կասեինք թե...*

3. Միտմացուցիչ երևույթ ունի. ինչպես՝ je voudrais, je désirerais, il faudrait, vous devriez... *ավելի մեղմ են քան* je veux, je désire, il faud, vous devrez...

4. Կասկածական, ենթադրական ձևերի մեջ. ինչպես՝ ce serait vrai! serait-il vrai? il arriverait demain! on prétend que l'ennemi serait en vue.

Մանջուրերենը ունի նաև կոնցեսիվ եղանակը, որ ցույց է տալիս թե՝ ա) գործողությունը կարելի է անել, բ) ենթական ցանկության ունի անելու (L. Adam, 54)*:*

Այս լեզվում կա նաև մի ուրիշ ձև, որ կոչվում է կոպուլատիվ (copulatif)*. սա ոչ եղանակ է և ոչ ժամանակ. միայն ցույց է տալիս, որ բայի այդ ձևը հաջորդի ժամանակն ու եղանակը ունի, ինչպես է օրինակ թրք.* alәb gitdi *«առնելով գնաց»: Մանջուրերենի այս ձևը կազմվում է բայարմատի վրա դնելով* fi *մասնիկը. օրինակ՝*

obofi gene *գնա լվա*
obofi genehe bi *գնաց լվաց*

այս ձևը ծառայում է իբրև «և» շաղկապ, որովհետև մանջուրերենում «և» շաղկապ չկա (L. Adam, 52)*:*

Ֆիննական վեպս կամ չուդ լեզվի մեջ կա երկու նոր եղանակ՝ անորոշ և էվենտուալ (eventuel)*: Առաջինն այն կասկածական ձևն է, որ կարող ենք թարգմանել «կարելի էր...». ինչպես՝ «կարելի էր ասել, կարելի էր բերել»: Իսկ երկրորդը սրա նման է, այն տարբերությամբ միայն, որ անորոշի մեջ գործողությունը բոլորովին*

անկախ է խոսողի կամքից, իսկ eventuel*-ի մեջ գործողությունը կախված է խոսողի կամքից. օրինակ՝ «ես այս ձիս համար կարող էի վճարել 100 ռուբլի»* (Ujfalvy, 32)*:*

Ալթաներենը ունի վեց եղանակ, որոնք են՝ սահմանական, ստորադասական, թեական, ըղձական, հրամայական և այս սովորական եղանակներից զատ նաև զարմացական եղանակ: Այս վերջինը կազմվում է «ունեմ» բայի ներկան (kam, ke, ka *«ունեմ, ունես, ունի» և այլն) միացնելով տրված բայի արմատին. օրինակ* punu *«աշխատել» բայից՝*

unē punakam *«աշխատում եմ ուրիշ!»*
tī punuake *» ես »*
ay punaka *» է »*
և այլն: (Feizi, 116).

Աֆրիկյան բանտու լեզվի մեջ եղանակ են համարվում՝

1. կասկածականը (dubitativus)*. օրինակ՝ «կարող է լինել որ անձրևեմ»:*

2. անիրականը (irrealis)*. օրինակ «լավ կլիներ որ ես այստեղ լինեի»:*

(Hanke, 45)*:*

Նեենեցերեն լեզվով կա բայական մի եղանակ, որ կոչվում է տուգիտիվ «լսողական». սա ցույց է տալիս, թե ենթական իրապես կամ իսկապես չգիտեր այդ բանը, բայց իմացավ կամ ձայնից, կամ հոտից, կամ ուրիշից լսելով, կամ թե զգաց, օրինակ՝ շան հաջողից հեռակրից, մի բան ընկնելու իրմիտոցից հասկացավ և պատմում է վերապահությամբ. գոլսի նվեր ձևն է. ինչպես՝

tyukoxona' tovondo'
«լսել ենք, թե նրանք այստեղ են եկել»:

(Терещенко, 224)*:*

Նույն եղանակը կա նաև նենեցների ցեղակից սելկուպ լեզվում և կազմվում է kun *մասնիկով* (Прокофьев, 70)*:*

Ամերիկյան ալեուտ լեզվի մեջ թեական և պայմանական եղանակները տարբերվում են իրարից. առաջինը գործողությունն է պայմանավորում (եթե բերես), իսկ երկրորդը ժամանակն է որոշում (երբ որ բերես):

(Вениаминов, 32)*:*

Ուրիշ լեզուներ ավելի հարուստ են նորանոր եղանակներով. օրինակ՝ ալնու լեզվի մեջ բացի սովորական ձևերից, բացի ըղձականից և թեականից, կան նաև կարողական (potentiel), ենթադրական (hypothétique) և զիջողական (concessionnel) եղանակները: Բանակերենն ունի բազմաթիվ եղանակներ: Կորեական լեզուն էլ շատ հարուստ է եղանակներով. այստեղ կան առանձին ձևեր, որ ստիպում են բալին նորանոր նշանակություններ, ինչպես «թեև, երբոր, եթե, որովհետև, բայց» և այլ բազմաթիվ ձևեր:

Երբ մի լեզու չունի այս կամ այն եղանակը, չի նշանակում, թե անկարող է արտահայտել այդ միտքը, այլ արտահայտում է ուրիշ ձևով կամ եղանակով: Օրինակ՝ ջավայերենի մեջ հրամայական չկա. նրա փոխարեն դնում են սահմանականը: Սանսկրիտ լեզուն ունի խնդրական կամ աղաչական եղանակ (précatif). կազմվում է ըղձականից՝ ավելացնելով s՝ ըղձական նշանի և վերջավորության միջև (Whitney, Ind. gr. § 567). ուրիշ լեզուներ կարող են արտահայտել «խնդրեմ» բառն ավելացնելով: Երբալերենում թեական եղանակ չկա. բայց սահմանականի վրա ավելացնելով որևէ թեական բառ (եթե, թեև և այլն), ստացվում է նույն նշանակությունը: Վերևում հիշած կորեական եղանակները նույնպես արտահայտվում են հարակից դանազան բառերով: Վրացերենում բալի կատարյալ ժամանակը ինչ-որ ենթադրականություն է ցույց տալիս, բայց այդ ավելի լավ բացատրելու համար դնում են բուրմե «իբր թե». օրինակ՝

Իցիս թուրմե «կարծես թե՝ իբր թե գիտե»
Պարիզի դուիլա թուրմե «Փարիզում եղել է իբր թե»:
(Vogt, 243):

Հյուսիսային Ամատրալիայի դիերի լեզվում կա երկնչական (metutiv) եղանակը, որ կազմվում է որոշ մասնիկով. օրինակ՝

ɒato ɒanka — iati
ես անել —

որ նշանակում է «թեև չէ կամեմ, որպեսզի չանեմ, միայն թե չանեմ»
(Kieckers, 140):

Կարելի է ուրիշ ձևերով արտահայտել այս բոլորը:

Էսկիմոսերենի մեջ ընդունում են 12 եղանակ (Boas, Handbook, I, 1036—1045), բայց դրանցից չորսը եղանակ չէ, այլ դերբայ: Մնացյալ ութից երկուսը սահմանական է, և իբր նոր եղանակ կա միայն ժամանակցականը (contemporative):

Մանջուերենը ունի ներհակական (adversatif) եղանակ, որի ներկան կազմվում է առորդասականի վրա դնելով be մասնիկը. օրինակ՝ bi obo-či-be «ես լվանում եմ թեև». իմաստն է ուրեմն
ես լվալ
«թեև» (L. Adam, 52):

Հնդիկական մարաթի լեզվի մեջ բալն ունի 6 եղանակ. այն է սահմանական, թեական, կարողական, առորդասական, հրամայական և անեղևալի:

Սահմանական եղանակը ունի չորս ներկա, լոթ անցյալ, երեք ապառնի:

Ներկաներն են.

Ա. ներկա,— որ ցույց է տալիս 1) գործողությունը վերջերս է սկսել և դեռ շարունակվում է (շարունակական ներկա). օրինակ՝ կատեմ կոր, 2) մի գործողություն, որ ներկա էր այն ժամանակ, երբ գեպքը պատմվում է, բայց որ այժմ վաղուց անցել է (պատմական ներկա). օրինակ՝ Իաջան հարցնում է, 3) գործողությունը սովորություն է այն անձի, որ խոսում է (սովորության ներկա). ես աղքատներին տալիս եմ (սովորություն ունեմ տալու) ռուպիներ. 4) գործողությունը այժմ նոր է սկսվում. օրինակ՝ արի, ես քեզ մի բան եմ ցույց տալիս. կամ թեև մի քիչ հետո պիտի լինի այդ գործը, բայց խոսողը այնքան է վստահ, որ իբր ներկա է ասում. և կամ մի այնպիսի ճշմարտություն է, որ թե անցյալում, թե ներկայում, և թե ապառնիում ճիշտ է և իրական:

Բ ներկա,— որ ցույց է տալիս, թե գործողությունը առաջ էր սկսվել, այժմ շարունակվում է և միտք չունի վերջանալու, ապագային էլ պիտի շարունակվի, օրինակ՝ Ո՞ւր եք բնակվում:

Գ ներկա.— նման է նախորդին, տարբերությունն այն է, որ առանց ընդհատման շարունակվում է դեռ:

Դ ներկա.— ցույց է տալիս մշտական սովորություն. օրինակ՝ Զինարանները ձուկ են որսում:

Անցյալը ունի լոթ ձև. 1) անկատար, 2) կատարյալ, 3) գերբակատար, 4) հարկատար, 5) անցյալ է, բայց շեշտում է հետևանքս, թե սկսել է անցյալում, իսկ վերջացնելու մասին խոսք չի անում, 6) անցյալում սովորություն ուներ անելու, 7) նույնպես սովորություն ուներ անելու անցյալում, բայց այժմ չի շարունակում:

Ապառնիի երեք ձևերը համապատասխանում են մեր «պիտի գնամ, կգնամ, պիտի գնայի» ձևերին:

Թեական կամ պարմանական եղանակը ունի երկու ենթակ ներկա, մի անկատար, մի կատարյալ, գերակատար, ապառնի, կասկածականի ներկա, անցյալ և ապառնի:— Կասկածական ներկայի օրինակ. Ձեր հայրը թեևս (կամ հավանաբար) այժմ ձեր վերադարձին է սպասում,— անցյալ՝ նա նկած պիտի լիներ:

Կարողական եղանակն ունի ներկա, անորոշ, անցյալ սովորական, ապառնի, պարմանական ներկա: (Stevenson, 88, 96):

Այս բաժնի վերջում հարկավոր եմ համարում ավելացնել, թե լեզվագետներից ոմանք այս կամ այն լեզվի մեջ բայի եղանակները շփոթում են բայի տեսակների հետ: Օրինակ՝ Ջինցիուսը առնգտանական էվեն (լամուտ) լեզվի քերականության մեջ (էջ 189) այս լեզվի համար գնում է 9 եղանակ, որոնք են սահմանական, հրամայական, պարմանական, թեական, առորդատական, կասկածական, հավանական, միաժամանակյա (contemporalis), նախադպրշական, որ է երկնչական:

Եղանակ կարելի է համարել բայի այն ձևերը, որոնք իրենց բոլոր ժամանակներով հատուկ են ամեն մի բայի, իսկ բայի տեսակները պարտադիր կերպով հատուկ չեն ամեն մի բայի, այլ այս կամ այն բային միայն: Բացի սրանից բայի տեսակներն ունեն իրենց եղանակներն ու ժամանակները: Այսպես՝ կոտրատել, նատել հաճախականները կազմում են բայի տեսակներ, որոնք ծագում են կոտրել, նստել պարզականներից և ունեն իրենց եղանակներն ու ժամանակները. ինչպես՝ սահմ. ներկա նստում են, կոտ. նստեցին, ապառնի պիտի կոտրատեն, հրամայական եղանակ՝ կոտրատեցեք, նստոտեցեք: Բայց չի կարելի ամեն մի բայից կազմել նման ձևեր. ինչպես՝ սիրել, խոսել բայերից՝ սիրոտել, խոսոտել և այլն: Միևնույն ժամանակ, եթե կոտրատել, նստոտել եղանակ են, որովհետև նստոտում ենք, կոտրատեցեք և այլն եղանակներն ու ժամանակներն են, ինչ որ անմիտ է:

ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆՈՒՄ

Հնդեվրոպական նախալեզվում, ինչպես ասացինք, չորս եղանակ կա. սահմանական, առորդատական, ըղձական և հրամայական: Այս չորսը պահված են հնդեվրոպական հնագույն լեզուներում, այն է հին հնդկերեն, հին իրանական և վեդայական հնդկերեն:

Սահմանականը պարզապես պատմում է դեպքը, անկախ գործողության, որ տեղի է ունեցել կամ ոչ: Կազմվում է հնդեվրոպական նախալեզվի մեջ վերոհիշյալ բայական թեներից՝ առանց որևէ հավելման:

Առորդատականը ցույց է տալիս մի գործողություն, որ կատարվում կամ պատահում են, որ կատարվի: Ըստ Բրուգմանի (Abrégé, 613) առորդատականը երեք գործածություն ունի.

ա) Կամեցողական (volitif). օրինակ՝

վեդ. Agním stavāni «ուզում եմ գովաբանել կրակը».
viçvāḥ pr'tanā ǰayāsi «յամենայն պատերազմունս յաղթեսցես».
«Ուզում եմ փառաբանել քո արիական գործերը»:

Դառնում է նաև հրամայական. ինչպես՝

«Հեծեր կառքը».
«Լսեր իմ ձայնը».
«Ասեր, որ իմանանք»:

բ) Խորհրդակցական (délibératif). օրինակ՝

«Զոհեմ թե չզոհեմ»: «Ո՞ւր գնամ, ո՞ւմ տունը գնամ»:

գ) Կանխատեսական (prospectif), որ հատնում է ապառնիի. ինչպես՝

«Աբշալուսը ծագելու է»:
«Ի՞նչ պիտի պատահի արդյոք»:
«Ով գուցե գա կռվելու մեր դեմ, վաներ»:
«Օր պիտի գա որ Իլիոնը կործանվի»:

Առորդատականը նախալեզվում կազմվում է բայական բնի վրա ավելացնելով e կամ o, որ անբուն ձևերի մեջ հայտնի ու անկախ երևում է, իսկ բնավոր ձևերի մեջ՝ խառնվելով բնավերջի ձայնավորի հետ, տալիս է ē, ō. ինչպես՝

սհմ. ներկ. սանս. ásti, լտ. es-t, առոր. վեդ. ás-a-ti, ás-a-t, գնդ. aṁhaiti, aṁhaṭ «իջէ, թող լինի», հյտ. es-et, լտ. er-i-t «լինելիցի» (լատիներենում առորդատականը գործ է ածվում իբրև ապառնի):

s-ով ապրիստ, սապր. վեդ. néṣ-a-ti, néṣ-a-t «առաջնորդեցէք», Հոմեր. τείσο-μεν, τείδ-ε-τε.

Կատարյալ սապր. վեդ. tatán-a-ti. tatán-at «տարածեցէք», Հոմեր. πεποί-θ-ο-μεν, սանս. véd-a-t «գիտեցէք», Հոմեր. Fείδ-ο-μεν, Fείδ-ε-τε.

բնաւոր ձևերից. հն. φέρω-μεν, φέρη-τε, վեդ. bhárā-ti, bharā-t «բերեցէք», լտ. ferēs «բերեցնես» և այլն:

Ըղձականը ցույց է տալիս կարելի, ցանկալի և կամ պատճառական մի բան: Ըստ Բրուգմանի (Abrégé, 617) նուիրական երեք գործածութիւն ունի.

ա) մաղթում (souhait). ինչպես՝

սանս. prátheya paçúbhis «կուզենայի հարուստ լինել արջառով»:

Հոմեր. αὐτίκα τεθναίην «թող ես մեռնեի (երանի թե):

բ) կարելիութիւն. ինչպես՝

«Առուած կարող էր փրկել մարդկանց՝ նուիրեակ հաւատից»:

գ) Պատուէր (prescriptif). ինչպես՝

«Թող յարքանչելին պատրաստուի»:

Ըղձականը կազմւում է անբան ձևերի մէջ yē, i մասնիկի հաւելմամբ, իսկ բնաւոր ձևերի մէջ i մասնիկով, որ բնի o վերջաձայնի հետ միանալով կազմում է երկբարբառ. ինչպես՝

es- «լինել». խոնարհւում է հնխ. syḗm, syḗs, syḗt, sīmén, sīté, sīté, sīént. համս. սանս. s-yā-t, s-iyā-t «իցէ», s-y-ús, s-iyus «իցենք», լտ. s-iē-s» իցես», s-ī-mus «իցեմք», հն. εἶην:

dedō, didō «տալ», սանս. dad-yā́-t «տայցէ», հալ. dad-i-mu «տանք», հն. δίδο-ἵη-ν, δίδο -ῑ-μεν.

Կատարյալ. wewort, wewṛt «դարձնել.— սանս. vavṛt-yā́-t «դարձի», հպ. wurt-i-mes «դառնանք, լինենք»

bhéro «բերել». խոնարհւում է հնխ. bhéroīm, bhéroīs, bhéroīt, bhéroīmen, bhéroīte, bhéroīṇt. սանս. bháre-t «բերիցէ». հն. φέροι, գոթ. bairai, հալ. beri. widó «գառնալ». սանս. vidé-t «գառնիցէ» հն. Fίδοι:

Համեմատականի, սուպրատատականի և ըղձականի նշանակութիւնների տարբերութիւնն այն է, որ առաջինը ցույց է տալիս դրական հատատուած գործողութիւն, երկրորդը՝ ապատուած կամ պատահական, երրորդը՝ միայն կարելի:

Հրամայականը առանձին բան չունի և կազմւում է համեմատականից, ուստի և ըստ ձևի նրան է պատկանում: Նա կարող է լինել մինչև անգամ մի բացականչութիւն. ինչպես՝ սա՜ս, «լռեցեք», ո՛ւռ, ո՛ւռ (հզնները քշելու ձայն):

Ժառանգ լեզուների մէջ հետագայում այս դրութիւնը խախտւեց: Որովհետև սուպրատատական և ըղձական եղանակները իմաստի կողմից շատ մոտիկ էին իրար, ուստի ժամանակի ընթացքում խառնվեցին, իրար միացան: Միայն հին հունարէնն ու արիականն են, որ երկու եղանակներն էլ միասին ունեն. մյուս լեզուները այդ երկուսից միայն մէկն են պահում: Թեև վեդական հնդկերէնը գիտէ սուպրատատական եղանակը (V. Henry, Manuel sans. véd. էջ 26), բայց սանսկրիտը հէնց պատմական ընթացքում կորցրեց այդ եղանակը (սուպրատատականը) և պահեց միայն ըղձականը, որ և շարունակւում է պրակրիտում. իսկ ավելի հետո, նոր հնդկականի հնագոյն շրջանում արդէն ըղձականն էլ չնչվեց (Bloch, MSL 23, 107):

Նոր հնդկական լեզուներից սինհալի լեզուն այժմ ըղձականը կազմելու համար նախկի վրա գնում է vā մասնիկը, որ առաջացել է venavā «ցցիվ թե լինեի» ձևից՝ կրճատմամբ: Այսպես՝

balam-vā	տեսնեմ
balahi-vā	տեսնես
balayi-vā	տեսնի և այլն:

(Geiger, 151):

Հունարէնն ու իրանականը կորցրին ըղձականը. հունարէնում ըղձականն սկսած է վերանալ մ. թ. ա. չորրորդ դարից և մ. թ. առաջին դարում արդէն չնչված է: Երկու ձևերից ավելի շատ վերապրողը եղավ ըղձականը, որ գերմանականում իր վրա առնելով հնդեվրոպական սուպրատատականի գրեթե բոլոր դերերը, ավեց գերմանականի սուպրատատականը, ինչպես և սլավականի հրամայականը, մասամբ էլ լատիներէնի սուպրատատականը, որ հնդեվրոպական ըղձականի և սուպրատատականի խառնուրդն է (Meillet, Traité, 187, 239, 276, Brugmann, Abrégé, 616):

Սուպրատատականի քայքայման երեսլթը տեսնում ենք նաև նոր լեզուների մէջ: Լատիներէնը ուներ սուպրատատական, որ ժառանգեցին նաև նորլատին լեզուները: Այսպես՝ իտալերէնն ունի սուպրատատականի ներկա, անկատար և ապառնի ժամանակները. ինչպես՝

ներկ. venda «որ ծախեմ»
անկա. vendiera «որ ծախեի»
ապ. vendiere «որ պիտի ծախեմ»:

Իտալիներենն ունի ստորադասական ներկա (որ և ունի անկատարի նշանակութիւն), կատարյալ և գերակատար (այս վերջինը չնչվում է լեզվից). բացի սրանցից՝ թեական ներկա և կատարյալ:

Ֆրանսերենն ունի ստորադասական ներկա և անկատար: Բայց արդի լեզուն անկատարը բոլորովին չնչել է, իսկ ներկան չնչելու վրա է:

Անգլերենը ստորադասական չունի, և հարկավոր դեպքում կազմում է սահմանականից՝ if «եթե» կամ նման բառերով. ինչպես՝ if I love *և այլն: Բայց անգլերենն ունի թեական եղանակ, որ կազմվում է երկու ձևով.* I woulde love *կամավոր թեական, և* I should love *պարտավորական թեական:*

Հնդկերենը նույնպես չունի ստորադասական. նրա փոխարեն դործ է ածվում սահմանականը, ավելացնելով միայն պարմանական բառեր. ինչպես՝ «եթե, թե որ, քանի որ, որպեսզի» և այլն:

Ոմանք ենթադրում են հնդեվրոպական նախալեզվում Injonctif *անունով մի եղանակ էլ. ահա թե ինչ է ասում* Meillet BSL № 66, էջ 103 *սրա մասին. „injonctif բառը այն բառերից է, որոնց միջոցով մարդիկ քողարկում են իրենց տպավորությունը, որ ավելի լավ կլիներ համաձայն հայտարարել»:*

Ուրիշ ընտանիքների լեզուներում տարբեր եղանակներ էլ կան. օրինակ՝ հինգերորդյան լուսավոր լեզվում Յոխելսոնը (էջ 120—129) դնում է հետևյալ եղանակները. հրամայական, ըղձական, conjuctive, conditional, supine, perfective, potential, evidential, inchoative. *երկու տեսակ ըղձական կա այս լեզվում. առաջինը ցույց է տալիս միայն ցանկություն, բայց ոչ կարողություն (մասնիկն է -úol-). երկրորդը թե ցանկություն, փափագ, և թե կարողություն միանգամայն (մասնիկն է* miebi-): *Վեց տեսակ* conditional *կա, որոնք ենթակայի կամ ենթակաների դանազան պայմաններն են ցույց տալիս:* Perfective-ը *ցույց է տալիս բացարձակ վստահություն, թե գործողությունը պիտի կատարվի:* Potential-ը *ընդհակառակը՝ գործողության կատարման համար հույս կամ վախ* (hope or fear) *ունի:* Evidential *եղանակը (կազմվում է* le *մասնիկով, որ նշանակում է «ելել է»), ցույց է տալիս, թե պատմողը փորձով կամ ստույգ չգիտե, այլ ուրիշից է լսել, կամ ենթադրում է, կամ եղած դեպքերից է հետևցնում, երազ է* (dream),

իր մանկության ժամանակ է պատահել և ինքը հետո լսել է կամ իմացել (պլ. եղեր, թրք. imiš): *Իսկ վերջապես* inchoative-ը *ցույց է տալիս գործողության սկիզբը:*

6. ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ժամանակը ցույց է տալիս, թե գործողությունը երբ է կատարվում: Հատարակ դատողությամբ ժամանակը երեք է. այժմ, առաջ և հետո, որոնք քերականական լեզվով կոչվում են ներկա, անցյալ, ապառնի: Բայց ժամանակը կարող է ունենալ բազմաթիվ բաժանումներ. միևնույն անցյալը կարող է լինել մի ժամ առաջ կամ երեկ կամ խոր հնության մեջ: Նույնպես ապագան կարող է լինել քիչ հետո կամ վաղը կամ հազարավոր տարիներ հետո: Ընդհանրապես բոլորի մեկնակետը խոսելու րոպեն է: Ներկան ցույց է տալիս, որ գործողությունը տեղի է ունենում խոսված միջոցին և դեռ լրացած չէ, անցյալը նրանից առաջ, իսկ ապառնին դեռ կատարված չէ:

Բայց որևէ գործողության կարող է կապակցվել ոչ միայն խոսված րոպեի հետ, այլև մի ուրիշ գործողության կատարված կամ կատարվելիք ժամանակի հետ: Օրինակ՝ «երբ ես եկա, նա արդեն մեկնել էր»: Այս խոսքի մեջ եկա կապված է խոսողի ժամանակի հետ. իսկ մեկնել էր՝ կապված է եկա բայի ժամանակի հետ: Այսպիսի ժամանակներն էլ բնականաբար լինում են գլխավորապես վեց, երեքը անցյալի վերաբերմամբ ներկա, անցյալ, ապառնի, և երեքը ապառնիի վերաբերմամբ:

Առաջին երեք ժամանակները, որոնք կապված են խոսված րոպեի հետ, կոչվում են գլխավոր ժամանակներ, իսկ վերջին վեցը, որ կապված են մի ուրիշ գործողության ժամանակի հետ, կոչվում են երկրորդական ժամանակներ:

Անցյալի վերաբերմամբ ներկա ժամանակը սրտահատելու համար գործ է ածվում անկատար: Ասա որում անկատարը ոչ միայն անցյալ է, այլև անցյալի վերաբերմամբ ներկա է. օրինակ՝ «երբ ես ներս մտա, նա դասս էր դալիս»: Այդ գործողությունը սակայն կարող է լինել վերջացած և կամ դեռ շարունակվող (չվերջացած): Առաջին դեպքում դնում ենք կատարյալ (երբ ես ներս մտա, նա դասս եկավ), երկրորդ դեպքում՝ անկատար (երբ ես ներս մտա, նա դասս էր դալիս):

Անցյալի վերաբերմամբ անցյալը չի կարող նախորդի նման ունենալ երկու ձև՝ դեռ չվերջացած և արդեն վերջացած, որովհե-

ան դեռ չվերջացածը դառնում է ներկա, և միայն արդեն վերջացածն է լինում անցյալ: Բայց այս անցյալը կարող է լինել նոր միայն վերջացած և կամ վաղուց վերջացած. առաջին դեպքում դրվում է ճարակատար, երկրորդ դեպքում՝ վերակատար. օրինակ՝ «Երբ ես ներս մտա, տեսա որ նա դուրս է եկել». «Երբ ես ներս մտա, նա դուրս էր եկել»:

Անցյալի վերաբերմամբ ապառնին էլ չի կարող ունենալ երկու ձև՝ դեռ չվերջացած և արդեն վերջացած, որովհետև արդեն վերջացածը այլևս ապառնի չէ, այլ միայն դեռ չվերջացածը: Բայց այս ապառնին էլ կարող է լինել երկու տեսակ, հասարակ և երկբայական: Առաջին դեպքում դնում ենք զուտ ապառնի (ներկա ապառնի), երկրորդ դեպքում՝ անցյալ ապառնի: Օրինակ՝ «Երբ ես ներս մտա, տեսա որ նա պիտի գնար». «Ես երբ ներս մտա, նա պիտի գնար (չգիտեմ, հետո գնա՞ց, թե չէ. և կամ պիտեմ, որ հետո մի արգելիչ հանգամանք պատահից, և նա չգնաց):

Ապառնիի վերաբերմամբ ներկա ժամանակի առանձին ձև գոյություն չունի. այս դեպքում գործ ենք ածում սովորական ապառնին. օրինակ՝ «Ես կասեմ, նա կգրի»: Բայց այս գրելու գործողությունը կարող է տեղի ունենալ անմիջապես, ասելու հետ զուգընթաց կամ ասելուց մի ամիս հետո: Երկու դեպքումն էլ գործ ենք ածում միևնույն ձևը (ես կասեմ, մի ամիս հետո նա կգրի), որից երևում է, որ ապառնիի վերաբերմամբ ապառնի ժամանակի առանձին ձև նույնպես գոյություն չունի և պարզ ապառնի է գործածվում:

Ապառնիի վերաբերմամբ անցյալը արտահայտվում է դերբայական ձևով. օրինակ՝ «Ես վաղը կհասնեմ, նա մի շաբաթ առաջ արդեն եկած կլինի»: Բայց ապառնիի վերաբերմամբ անցյալը կարող է վերջացած կամ չվերջացած լինել: Եթե արդեն վերջացած է, ուրեմն ներկայի համար էլ անցյալ է. իսկ եթե դեռ վերջացած չէ, ներկայի համար ապառնի է: Այսպես՝ երբ առում ենք՝ «Ես վաղը կհասնեմ, նա մի շաբաթ առաջ արդեն եկած կլինի», հասկանալի է, որ նա արդեն ներկայումս հասած է (անցյալ). իսկ երբ ասենք՝ «Մի ժամ հետո նրանք ճաշը վերջացրած կլինեն, որից հետո կգնան», հասկանալի է, որ նրանք այժմ ճաշում են և հետո պիտի վերջացնեն (ապառնի): Երկու դեպքումն էլ հայերենը արտահայտվում է նույն ձևով:

Երկրորդական ժամանակներն էլ կարող են ունենալ իրենց երկրորդական ներկա, անցյալ և ապառնի ժամանակները, որոնք

պիտի կոչվեին երրորդական ժամանակներ: Այսպիսով կազմվում է մի ավելի մեծ խառնաբդ նորանոր և զանազան ժամանակների: Ահա մի օրինակ այսպիսի բարդ դրությունների՝ զանազան ժամանակներով.

«Երբ ես մեկնեցա, հավատացած էի, թե նա մի շաբաթ առաջ մեկնած կլինի. հետևաբար ինձնից մի քանի օր առաջ արդեն հասած պիտի լիներ»:

«Ժամը 4-ին հասա և տեսա որ դուռը փակ էր. բայց ես չգիտեի, թե երբ պիտի փակվեր և չէի էլ կարծում, թե ժամը 4-ին փակված պիտի լիներ: Եթե իմացած լինեի, մի ժամ առաջ մեկնած կլինեի»:

«Այս տարի գնացինք Օգեաս, ֆունիկուլյոր կար, նստեցինք: Անցյալ տարի էլ գնացել էինք Օգեաս, ֆունիկուլյոր չկար: Եթե նախորդ տարին էլ գնացած լինեինք Օգեաս և ֆունիկուլյոր եղած լիներ, անշուշտ կնստեինք, պիտի նստեինք, նստած կլինեինք, նստած պիտի լինեինք» (արևմտահայը կարող է ավելացնել նաև՝ «նստած եղած կըլլայինք»):

Տեսնում ենք, թե որչափ նրբություններ կան մի անցյալի մեջ:

Ժամանակների երկրորդական և երրորդական գործածությունը հասնում է այնպիսի բարդության, որ այլևս մարդկային միտքը դադար է տալիս, թեև անսահմանորեն կարելի է միշտ ավելին ըմբռնել:

Կան լեզուներ, որ բավականանում են ժամանակ արտահայտող բայական ասպեկտներով. օրինակ՝ երբայեցերենում ժամանակի մեծ խտրություն չկա. բայը ցույց է տալիս միայն այն, թե գործողությունը վերջացած է (անցյալ կատարյալ), թե չի վերջացել (անկատար կամ ապառնի): Ասորերենում mutatif է կոչվում այն ժամանակը, որ գործածվում է թե ներկայի, և թե ապառնիի համար (Bertin, 62): Կամիտերենում բայի ժամանակը երկու է. ներկա (որ նաև ապառնի է) և անցյալ: Մի քանի բայեր զանազանում են երկու տեսակ անցյալ. անկատար և կատարյալ: Աֆրիկյան ալգոնկինեերեն լեզվի մեջ ժամանակը նույնպես շատ թույլ է արտահայտվում. ներկայի և անցյալի համար առանձին բայական ձևեր չկան. բայց կան առանձին ձևեր՝ ցույց տալու համար 1) հաճախականությունը, 2) գործողության շարունակությունը, 3) սկսվելը, 4) դադարելը. իսկ ներկայի, անցյալի և ապառնիի համար գործածվում են ժամանակ ցույց տվող մակբայներ (Boas, Handbook,

I, 816)։ Ամերիկյան չիբչա լեզվի մեջ ներկա և անկատար նույն են, նմանապես կատարյալ և վերակատար միևնույն են։ Ուսմունքը շփոթում է անկատարը, կատարյալը, հարակատարը և վերակատարը. այս չորս ձևերի համար գործ է ածում մեկ կամ առաջավելն երկու ձև, այն էլ ոչ թե ժամանակը, այլ գործողության վերջացած, թե դեռ շարունակելի լինելը ցույց տալու համար։

Կան լեզուներ, որ հարուստ են ժամանակի զանազան նրբություններով։ Օրինակի համար ամերիկյան չինուկ լեզուն զանազանում է երեք տեսակ անցյալ 1) ni- անցյալ (բայց մեկ տարուց պակաս և երկու օրից ավելի անցյալ). 2) na- այսօրվանից այն կողմ, հատկապես երեկ և 3) ga- շատ անցյալ (հատկապես հնքիաթներում գործածելու) (Boas, Handbook, I, 578—579)։ Ժամանակի կողմից հարուստ լեզուներ են տաճկերենը, ֆրանսերենը, իտալերենը, պորտուգալերենը և այլն։

Այս ընդհանուր խոսքերից հետո տալիս ենք մի քանի լեզուների բայական ժամանակների պատկերը։

Ամֆրիկյան (բանտու) լեզվորս լեզվի մեջ ներկան 4 ձև է. ա) սովորական ներկա. օրինակ՝ «տալրում եմ Սևանում, ուտում եմ ամեն օր ձուկ և հավ». բ) շարունակական ներկա. այն, որ միայն հիմա է կատարվում և դեռ վերջացած չէ, այլ շարունակվում է. օրինակ՝ պլ. «մածուն կուտեմ կոր», գ) virtual present, որ հատուկ է միայն այս լեզվին (ինչպես ասում է հեղինակը) և ցույց է տալիս, որ նոր այս բոլորիս եղավ կամ սկսեց այդ գործը և հենց լինում է. ինչպես՝ «Ծառը հենց ընկնում է վրադ». դ) ներկա-կատարյալ, որ խոսած միջոցին վերջացել է։

Անցյալն էլ ունի 4 ձև. ա) մոտիկ անցյալ. օրինակ՝ «այս առավոտ եկավ». բ) հետու անցյալ, օրինակ՝ «երեկ կեսօրից հետո». գ) մոտիկ շարունակական անցյալ. օրինակ՝ «հիվանդին խնամում էր» (պլ. «կխնամեր կոր»). դ) not-yet tense, որ դեռ չի վերջացել և շարունակվում է։

Ապառնին ունի երկու ձև. ա) մոտ ապառնի, որ 24 ժամից չի անցնում. բ) հետու ապառնի, որ մոտիկ ապառնիից ավելի ուշ է։

(Maddox, 24—26)։

Ամֆրիկյան ցվա (բանտու) լեզվում զանազանվում է երեք տեսակ ներկա. բացի սովորական ներկայից և շարունակական ներկայից՝ կա նաև progressif ներկա։ Քննիչը (Persson, 57) progressif կոչում է այս ներկան և զանազանում է շարունակական (continuous) ներկայից։ Անգլերենում progressif և continuous միևնույն բաներն են և անունով միայն տարբեր են։ Ըստ Persson-ի ցվա լեզվի մեջ այդ երկուսի տարբերությունն այն է, որ continuous ներկան նոր է սկսվել և դեռ շարունակվում է; իսկ progressif ներկան առաջ է սկսվել և դեռ շարունակվում է։ Այս վերջինը ցվա լեզվում կազմվում է ha մասնիկով, որ դրվում է դերանվան և բայի միջև. օրինակ՝

nza ha ranza «դեռ սիրում եմ»։

Եթե ուզենայինք հայերենով բացատրել նույնը, պիտի ասեինք՝ Գոլսի բարբառով՝

շար. «կսիրեմ կոր»
prog. «դեռ կսիրեմ կոր»

իսկ գրական լեզվով.

շար. «սիրելիս եմ»
prog. «դեռ սիրելիս եմ»։

Բանտու ընտանիքի մաշոնա կամ չիավինա լեզվում բայի բոլոր 4 ժամանակները (անկատար, կատարյալ, վերակատար և առաջապատական անցյալ) տևեն երկ-երկու ձև, որոնք անանուն հեղինակը որոշում է to-day «այսօր» և before to-day «այսօրվանից առաջ»։

(X, A dict. XXI—XXII)։

Նույն ընտանիքից բենգա լեզվում անցյալը նույնպես 4 է, որ հեղինակը կոչում է immediate past (*քիչ առաջ խոսեցի*), perfect (*արդեն խոսել եմ*), historical (*վաղուց եմ խոսել*), plus perfect (*խոսել էի*) (Mackey, 34—35)։

Բանտու ընտանիքից յաունդե լեզվում կա երեք անցյալ՝ այսօր եղած, երեկ եղած, ավելի հին կամ անորոշ ժամանակ առաջ եղած։ (Nekes, 16)։

Ամատալխալի կամիլարոյ լեզուն էլ ունի չորս անցյալ. օրինակ՝

goāldəne goe «խոսեցի» (սովորական)
goālɔain » (այսօր)
goālmiē » (երեկ)
goāllēn » (վաղուց)։

Առաջին երեք անցյալներից առաջ կարելի է դնել նաև gīr, *որ բուն նշանակում է «իրոք, ճշմարիտ», որով առացվում է ևս երեք անցյալ ձև (հաստատական նշանակությամբ)։*

Ապառնին էլ ունի երկու ձև.

goälle *«պիտի խոսեմ» (սովորական).*
goälɒari » » *(ալսօր)։*

Առաջին ձևից առաջ հաճախ դնում են yīla *«շուտով» կամ* yerälä *«իսկույն», որով առացվում է անմիջական ապառնի։*

(Ridley, 7—8)։

Աֆրիկյան յուր լեզվով (բանաոր ընտանիք) կա 10 տեսակ ապառնի. օրինակ՝ tawe *«կապվել» արմատից կա՝*

1. Անմիջական ապառնի. ti-n-dawe *«իսկույն պիտի կապեմ»։*

2. Քիչ հետո անելու. ti-n-ga-we *«պիտի գնամ կապեմ»։*

3—4. Սահմանական ապառնի. ունի երկու ձև, որոնք կազմվում են նախորդ երկուսից՝ ti *մասնիկը դարձնելով* si.

5—6. Շարունակական ապառնի. նույնպես ունի երկու ձև, որոնք կազմվում են նախորդ երկուսի վրա ավելացնելով je *մասնիկը. ինչպես՝*

tindawe|je } *«կապվելիս պիտի լինեմ»*
tingawe|je } „I shall be binding“.

7—8. Երկու տեսակ ապառնի, որոնք ցույց են տալիս, թե գործողությունը ավելի ուշ պիտի կատարվի և կամ կատարման մասին քիչ կասկած կա. կազմվում են ti-ǰ *և* si-ǰ *մասնիկներով. ինչպես՝*

ti-n-ǰi-tawa *և* si-n-ǰi-tawa.

9—10. Նախորդ երկուսի շարունակականը, որ կազմվում է նրանց վրա ավելացնելով ga *մասնիկը. այն է՝*

tinǰitawaga. sinǰitawaga *«ես պիտի կապվելիս լինեմ»,*
„I shall be binding“.

(Hetherwick, K, 60)։

Նախորդներին հակառակ շատ աղքատիկ է աֆրիկյան բարբ լեզուն, որ ունի անցյալ (aoriste), *որ ցույց է տալիս վերջացած գործողությունն և մի տեսական* (duratif), *որ ցույց է տալիս չվերջացած և դեռ շարունակվող գործողություն։ Առաջինը կազմվում է*

բայի պարզ արմատից, երկրորդը՝ նրա կրկնված ձևից։ Որպեսզի անցյալը բոլորովին վերջացած գործողություն ցույց տա, պետք է իրանից առաջ առանց a *էական բայը։*

Այսպես ngeǰu *«առել» բայից՝ կրկնությամբ՝* nan ngengeǰu *«կնառել եմ, առած եմ և շարունակում եմ դեռ առել»։ Այս հաշվով* duratif-*ը թե՛ նեղկա է, և թե՛ ապառնի։ Իսկ երբ ուզենան ավելի ճշտել ապառնիի իմաստը, ավելացնում են* de *«հետո, ավելի ուշ» կամ* molu *«հետո, վերջը». օրինակ՝*

nan de kikita *կամ* nan kikita molu *«ես հետո պիտի աշխատեմ»։*

(Mitterrutzner, 36)։

Նաբիերենում, ինչպես ապառնին, նույնպես և կատարյալը կազմում է ժամանակների մի շարք, որոնք կազմվում են vbg *օժանդակ բայերով* (al, kal, angal, hol, da, holda). *այս օժանդակները մտնում են բայի արմատի և վերջավորությանց միջև և կազմում են նոր ժամանակներ. այսպես՝*

1. ես ապառնել եմ.
2. ապառնե՞լ եմ (հարցական).
3. երբ ես նրան ապառնել էի.
4. ես նրան ապառնած պիտի լինեմ.
5. նույնի հարցականը.
6. ես նրան ապառնել էի (կատրողական).
7. նույնը հարցական.
8. ես նրան ապառնել եմ.
9. նույնը հարցական.
10. որը որ ապառնել եմ (հարաբերական).
11. հենց որ ես նրան ապառնել էի.
12. երբ ես նրան ապառնած լինեմ.
13. ապառնել էի (դերբակատար).
14. ես նրան ապառնած պիտի լինեմ.
15. նույնը հարցական.
16. ես նրան ապառնած պիտի լինեի.
17. նույնը հարցական.
18. երբ ես նրան ապառնած լինեի.
19. ես նրան ապառնել եմ.
20. նույնը հարցական.
21. որովհետև ես նրան ապառնել եմ (ստորադասական)

22. երբ ես նրան սպանել եմ.
23. ես նրան սպանած պիտի լինեմ.
24. նույնը հարցական.
25. ես նրան սպանած էի.
26. նույնը հարցական։

(Kauczor, 197—209)։

Նաբիերենի մեջ սպառնին ոչ թե կազմում է սահմանական եղանակի մի ժամանակը, այլ ամբողջական մի եղանակ, որ ունի իր տարբեր ժամանակները. այսպես՝

1. ես պիտի սպանեմ.
2. պիտի սպանե՞մ (հարցական).
3. որին որ ես պիտի սպանեմ (հարաբերական).
4. ես նրան պիտի սպանեի, բայց...
5. երբ ես նրան պիտի սպանեմ կամ թե արդյոք ես նրան պիտի սպանե՞մ.
6. ես նրան պիտի սպանեի.
7. ես նրան պիտի սպանեի՞ (հարցական).
8. երբ ես նրան սպանեցի կամ սպանում էի։

Այս բոլորը կազմվում է օժանդակով, որ մտնում է բայի արմատի և վերջավորութիւնց միջև։

(Kauczor, 189—197)։

Հնդկական մանդարի լեզուն ունի հինգ տեսակ անկատար, որոնք են՝

ա) Անորոշակի ներկայի անկատարը—հավիտենական ճշմարտութիւններ և սովորութիւններ, որոնք մի ժամանակ կային և դեռ չեն վերացվել։ Օրինակ՝ անգլիացիների գալուց առաջ Հնդկաստանում մանդաները սովորութիւն ունեին այրելու կախարդներին և հմայողներին կենդանի։

բ) Որոշյալ ներկայի անկատարը— ես հերկելիս էի (կհերկեի կոր) ալտեղ, ճիշտ այն միջոցին, երբ նրանք կռվելիս էին (կկռվեին կոր)։

գ) Անորոշ ներկայի անկատարը—ճիշտ նրան կանչելու բոպեի վրա էի։

դ) Շարունակական ներկայի անկատարը — ես չէի կարող բռնել նրան, որովհետև նույն բոպեին ես ձին բռնելիս էի (կբռնեի կոր)։

ե) Գարդ անցյալ անկատարը—ես գնալիս էի։

զ) Ձլրացած անցյալի անկատարը—կարելիս էր (կկարեր կոր. he had been busy cutting), բայց դեռ չէր վերջացրել։

է) Հառաջագույն անցյալի անկատարը — Ջուկ որսալիս էինք (կորսալինք կոր) նախքան իրենց գալը։

ը) Սառուիկ անցյալի անկատարը —նա հենց դուրս էր գալիս, երբ հալբը տուն մտավ։

թ) Կատարյալին համապատասխանող անկատար — Նա գնաց պարելու և դեռ հետ չի դարձել։

(Hoffmann, 149—152)։

Ավստրալիայի ավաբակալ լեզվի բայական ժամանակներն են.

Ներկա — անում եմ այժմ.
անկատար որոշյալ — այս առավոտ անում էի (կընեի կոր).
aoriste I — *անում էի* recently *(վերջերս).*
aoriste II— » » *մի քիչ ավելի առաջ.*
որոշյալ կատարյալ — այս առավոտ արի.
դերակատար — արել էի քիչ առաջ.
inceptif fut. — *հիմա պիտի անեմ.*
որոշյալ ապառնի — վաղն առավոտ պիտի անեմ.
ապառնի aoriste — *քիչ ժամանակ հետո պիտի անեմ։*

(Threlkeld, 20)։

Ա֊ֆրիկյան սեստուս (բանտու) լեզվով կա հինգ տեսակ ապառնի և վեց տեսակ անկատար, որոնք են.

1. *պարզ ապառնի (ներկայի ապառնի) — պիտի ճանաչեմ.*
2. *կատարյալի ապառնի — ճանաչած պիտի լինեմ.*
3. *անցյալի ապառնի — ճանաչած եղած պիտի լինեմ.*
4. *կարողական ապառնի — կարող պիտի լինեմ ճանաչել.*
5. *սովորականի ապառնի — ճանաչելու սովորած կամ վարժված պիտի լինեմ։*

1. *Ներկայի անկատար — ճանաչում էի.*
2. *կատարյալի անկատար — ճանաչել էի.*
3. *անցյալի անկատար — ճանաչած եղած էի.*
4. *ապառնիի անկատար — ճանաչած պիտի լինեի.*
5. *կարողականի անկատար — կարող էի ճանաչած լինել.*

6. սովորականի անկատար — սովորում կամ վարժվում էի ճանապհել։

Դրավիդյան բրահուի լեզվով կա երեք ապառնի ներկա.

1. Արդիական ներկա (present of actuality), որ մեր սովորական սահմանական ներկան է. գնում եմ։

2. Անորոշ ներկա (present indefinite), որ է կարողական. ինչպես. kunēv «կարող եմ ուտել», kāv «կարող եմ գնալ»։

3. Ներկա ապառնի (present-future), որ մեր սովորական ապառնին է. ինչպես՝ կգնամ (Bray, 124, 136). բայց ապառնին էլ 2 ձև ունի. մեկն այս վերջինն է և երկրորդը՝ հավանական ապառնի (probable future, Անդ, 187)։

Աֆրիկյան մեկուկ լեզուն սահմանականի երեք ժամանակներից յուրաքանչյուրի համար ունի երեք ձև՝ հետևյալ կերպով.

1.	ներկա	անցյալ	ապառնի
2.	» շարունակական	» շարունակական	» շարունակ.
3.	» կատարյալ	» կատարյալ	» կատարյալ

Մի օրինակ յուրաքանչյուրից.

1. գալիս եմ	գալիս էի	պիտի գամ
2. կուգամ կոր	կուգայի կոր	գալիս պիտի լինեմ
3. եկա, եկել եմ	եկել էի	եկած պիտի լինեմ։

Այս բոլորը կազմվում են արմատին կպցրած զանազան մասնիկներով։ Անցյալ շարունակականը կազմվում է ma մասնիկով, որի հետ դրվում են հետևյալ երեք մակբայներից մեկը.

ha այսօրվանից առաջ
ge մոտիկ անցյալում
wo հեռու անցյալում

Անցյալ կատարյալը կազմվում է yga մասնիկով, որի հետ դրվում է նույն երեք մակբայներից մեկը կամ wela «վերջացավ» և կամ kpoyo «վերջ»։

Ներկայի առաջին երկու ձևերի խոնարհումը հետևյալն է.

yga	wa	գալիս եմ	nya	wa	ma կուգամ կոր
ba	»	» ես	bia	»	» կուգաս »
a	»	» է	ta	»	» կուգա »
ma	»	» ենք	mua	»	» կուգանք »
wa	»	» եք	wua	»	» կուգաք »
ta	»	» են	tia	»	» կուգան »

(Aginsky. 31)։

Հնդկական քաշմիրի լեզուն ունի հինգ տեսակ անցյալ.

1. Մոտիկ անցյալ (proximate past), օրինակ՝ նոր տեսա։
2. Անորոշ անցյալ (indefinite past) մի ժամանակ տեսա։
3. Հեռավոր անցյալ (remote past) վաղուց տեսա։

Սրանցից դուրս կան նաև հարակատար և գերակատար անցյալ ձևերը։

(Grierson, հտ. 8, մասն 2, էջ 287)։

Աֆրիկյան շոնա (բանտու) լեզուն ունի երկու տեսակ ապառնի.

1. Շարունակական ապառնի (future progressive). օրինակ՝ I shall be coming. «գալիս պիտի լինեմ»։

2. Անցյալ ապառնի (future perfect), օրինակ՝ I shall have come «եկած պիտի լինեմ»։

(O'Neil, 38)։

Եվրոպացիները մյուս սեմական լեզուների նման պետք միայն երկու բայաձև. այն է՝ լրացած, հետևաբար իրական գործողությունն և դեռ չլրացած գործողությունն։ Առաջինը կոչվում է կատարյալ, երկրորդը՝ անկատար։ Բայց անկատարին միանում են ոչ միայն այժմ գործածվող կամ ապագային գործածվելիք բաները (այն է՝ ուրիշ լեզուների ներկան և ապառնին), այլև այն՝ ինչ որ մտածված կամ ցանկացված է և որ կարող է կամ պետք է, որ գործադրվելու դրվի։ Ըստ այսմ եվրոպացիները աղքատ է բայի կողմից և իր երկու կամ երեք ձևերով լրացնում է հնդեվրոպական ճոխ խոնարհումը։ Օրինակ՝ կատարյալ են նաև հարակատարը և գերակատարը, և նրանց տարբերությունը խոսքի ընդհանուր իմաստից է հասկացվում։ Նույնիսկ ներկան, եթե սկսվել է անցյալում և դեռ շարունակվում է այժմ, կարող է դրվել կատարյալ։ Նաև երբ խոսողը ներկա մի բան է ասում, եվրոպացին արդեն լրացած է համարում և դնում է կատարյալ. օրինակ՝ «այժմ ուղարկում եմ քեզ» ասելու տեղ ասում են «ուղարկեցի»։ Ապառնին էլ երբեմն, երբ վստահ է, որ անպատճառ պիտի կատարվի, կարող է դրվել կատարյալ բայաձևով։ Անկատար են դրվում այն բոլորը, որոնք կասկածելի, անստույգ են, նաև չնախ ապառնին. օրինակ՝ «քո կար-

ծիքով պետք է ասեմ. նա նրան պիտի ուղարկեր» (բայց չուղարկեց)։

(Dilmann, 135)։

Բայերի ժամանակի որոշումը շատ թերակատար է աֆրիկյան համբաւա լեզուի մեջ. օրինակ՝ անցյալը ցույց տալու համար բայի վրա դնում են za նախդիրը. nizaleta «բերի, բերել եմ», բայց նաև «բերում եմ». ապառնին կազմվում է ni նախդիրով. nenihite «պիտի երթամ». նույնը նաև ta նախդիրով. nitahita «պիտի երթամ», բայց նաև անցյալ է կամ ներկա. կա առանձին ձև, որ կազմվում է ika մասնիկով և ցույց է տալիս «արած կամ եղած լինել». օրինակ՝ γošola «անել», γošoleka «արած վերջացրած լինել», γenda «երթալ», γendeka «գնացած լինել»։

(Rösler, 6, 17, 19, 24)։

Աֆրիկյան սուհումա (բանտու) լեզվում երկու տեսակ կատարյալ կա. ա) այն դործողությունը, որ նույն րոպեին կամ քիչ առաջ վերջացավ. բ) այն, որ շատ ժամանակ առաջ է վերջացել։ Կա նաև երկու տեսակ դերակատար, որոնք կարելի է համարել մեր հարակատարն ու գերակատարը։

Consecutif է կոչվում բայական այն ձևը, որ պատմելու ժամանակ է գործածվում. կազմվում է k'a նախամասնիկով, որ նշանակում է «և». ինչպես՝ nūt'ula «զարկի», nak'at'ula «և զարկի», nak'idza «և եկա». սա պղտահայ բարբառի դեն ձևն է. կերա դե եկա «կերա ու եկա»։

Ապառնին էլ ունի երկու ձև. ա) որ քիչ հետո կամ մոտիկ ապագայում պիտի կատարվի, բ) որ մի քանի օրից կամ ավելի ուշ պիտի կատարվի։ (Augustiny, 52—55)։

Ֆիննական ուդմուրտ լեզվով երկու տեսակ կատարյալ կա. ա) ականատես, այն, որ խոսողը անձամբ տեսել է և եղած դեպքը պատմում է. բ) ոչ-ականատես, որ խոսողը այդ դեպքը իր աչքով չի տեսել, այլ ուրիշից լսելով է պատմում. (հմ. գնաց, գնացել է)։ Այս երկրորդ ձևի մեջ եզակի և հոգնակի առաջին դեմք չկա բնականաբար։

(Горохов, 55, 117)

Շատ դժբախտ է աֆրիկյան կռելլե լեզուն, որի մեջ ներկան և կատարյալը բոլորովին նույն են և անկատարից էլ միայն շեշտով են տարբերվում. օրինակ՝

nà pá *ես գալիս եմ կամ եկա*
ná pà *ես գալիս էի*
kà pá *դուք գալիս եք, եկաք*
ká pà *դուք գալիս էիք*։

Ապառնին կազմվում է pái «*երթալ*» *բայով.*

ba pai ḍi
դու պիտի տաս

նույնիսկ

nà pái pai
ես պիտի երթամ

(Westermann, 18)։

Նույնպես է նաև աֆրիկյան բո կամ բանկոն լեզուն, ուր ներկան և անկատարը միայն տոնով են տարբերվում իրարից. օրինակ՝

mé bòm mè bom
ծեծում եմ ծեծեցի

(Spellenberg, 48)։

Շատ աղքատիկ է նույնպես հիպերբորյան յուկագիր լեզուն, որ ունի միայն երկու ժամանակ՝ ներկա-կատարյալ և ապառնի-անկատար. ահա մի օրինակ «ապանել» բայի խոնարհման.

Ներկա կատարյալ

Ա. kudéde *ապանում եմ, ապանեցի*
Բ kudéde-mik
Գ kudéde-m

ապառնի անկատար

Ա. kudédet' *ապանում էի, պիտի ապանեմ*
Բ kudédet-mik'
Գ kudédet-em

(Jochelson, 119)։

Հիպերբորյան նեմիլան (կորյակ) լեզվի մեջ ներկան միևնույն ժամանակ անկատար է. օրինակ՝ «բերում եմ = նաև բերում էի»։

(Корсаков, 45)։

Աֆրիկյան բասա լեզվում (Kamerun) բայի ներկան և ապառնին նույն է, իսկ կատարյալը միայն շեշտով է տարբերվում. օրինակ՝

mi ṓke *գնում եմ, պիտի գնամ*
mi ṓké *գնացի (այսօր)*
mi bí ke *գնացի (նախորդ օրը)*

(Schürle, 5)։

Անորոշակի ժամանակ

Հնդկական մոնդարի լեզուն ունի այս ժամանակը։ Բոլոր ընդհանուր ճշմարտութիւն նշանակող սկզբունքները, կյանքի սովորական երեւոյթները և նմանները, որոնք անկախ են ժամանակի գաղափարից, մտնում են այս ձևի տակ։ Այս բայական ձևը կազմվում է առանց ժամանակ նշանակող մասնիկի, միայն բայական մասնիկը կցելով անմիջապես սեռ և եղանակ ցույց տվող մասնիկներին, առանց նույնպես դերանվանական խնդրի։ Օրինակ՝

hormo goĭo-a, atma kae goĭo-a
մարմինը մեռնում է, հոգին չի մեռնում։

(Hoffmann, 134)

Ննենգերեն լեզուն խոնարհման մեջ ունի երկու ժամանակ. այն է՝ անորոշ և անցյալ։ Անորոշը թե՛ ներկա է, թե՛ մոտիկ անցյալ, և թե՛ մոտիկ ապառնի. իսկ անցյալը ցույց է տալիս հետևանցյալ, որ է դերակատար։ Օրինակ՝

xayadm *գնում եմ, գնացի, կգնամ*
xayadamz^{y} *գնացել եմ*

(Терещенко, 184, 195)։

Սրանց կից պետք է նշել լեզվում ժամանակը երեք է. aoriste, որ թե՛ ներկա է, և թե՛ մոտիկ անցյալ կամ ապառնի, բայց կան նաև առանձին ապառնի ժամանակներ։

(Прокофьев, 65)։

Հնդեվրոպական նախալեզուն էլ ժամանակի գործածության մեջ հարուստ չէր. նա ավելի արժեք էր տալիս բայի երևույթին (aspect)։ Մյուս կողմից նրա դանազան ժամանակները թեև իրենց համար վերցնում էին դանազան բներ, բայց իրապես բայական բանը բավական չէր ժամանակը որոշելու։ Ժամանակը որոշվում էր խոնարհման ձևից և երբեմն էլ հավելումից։ Օրինակ՝ հայերենի մեջ բերեմ ներկայի և եբեր կատարյալի մեջ բանը (բեր) միևնույնն է. առաջինի մեջ ներկան որոշող մասը -եմ վերջավորությունն է,

երկրորդի մեջ կատարյալը որոշող մասը՝ ե հավելվածն է։ Նույնպես և հն. λείπω և ἔλειπον ձևերի մեջ բանը (λειπ) միևնույնն է և առաջինի մեջ ω վերջավորությունն է որոշում, թե բայը ներկա է, իսկ երկրորդի մեջ -ον վերջավորությունը և ε հավելվածն են որոշում, թե բայը անցյալ է։

Ժամանակը կարելի է ցույց տալ թե՛ նախամասնիկներով, թե՛ հետամասնիկներով, և թե՛ խոնարհման ձևով (վերջավորություններով)։ Օրինակ՝ այսօրվա աշխատանքում կսիրեմ, պիտի սիրեմ տարբերվում են իրարից նախամասնիկով. սիրեի և սիրեցի տարբերվում են վերջավորություններով։

Ժամանակ որոշելու կողմից հետաքրքիր է, օրինակ, կովկասյան կաբարդին լեզուն, ուր ժամանակը ցույց տալու համար բայի վերջին գրվում է մի մասնիկ. այսպես՝ tlaġu «առնելը» բայից առնենք՝

sse	s- tlaġu-s		*արիսա (այժմ չկա)*
»	s »	t	*անկատար*
»	s »	ā-ş	*կատարյալ (արիսաի փոխարեն)*
»	s »	ā-t	*գերակատար*
»	s »	ġa-ş	*վաղուցվա գերակատար*
»	s »	r-t	*հարակատար*
»	s »	n-ş	*ապառնի*
»	s »	n-t	*թեական*
»	s »	āşeret	*ըղձական*

Այսպես է նաև ադուլերենը, որ գործ ունի կովկասյան լեզվախմբին է պատկանում։ Այս լեզվի մեջ խոնարհման ժամանակ ոչ թիվ է դրժածվում և ոչ դեմք. այդ երկուսը երևում են հարակից դերանունից։ Խոնարհման մեջ երևան են գալիս միայն ժամանակը և եղանակը։ Սրանք արտահայտվում են զանազան մասնիկներով, որոնք ուղղակի կցվում են բայարմատի վերջին։ Օրինակ՝ ապառնիի վերջավորությունն է -e, պարմանականի վերջավորությունն է -i, ըղձականի վերջավորությունն է -uray, սահմանականի վերջավորությունն է -aya և այլն։ Անցյալը չորս տեսակ վերջավորություն ունի, նույնպես և՝ դերբայը։ Բոլոր տեսակի վերջավորությանց դիմաբն է 19։ Բայի զանազան պարագաները ցույց տալու համար էլ կա 22 տեսակ նախամասնիկ։ Թիվ ու դեմք արտահայտելու համար ոչ մի վերջավորություն չկա։ Այսպիսով, բայի խոնարհումը հասնում է մի չափազանց պարզ վիճակի. և մի միակ ձևը բավական է մի ամ-

բոլոր բայական եղրի համար: Օրինակ՝ մի կատարյալի եղակի և հոգնակի վեց ձևերի համար կա ընդամենը մի միակ ձև:

(Шаумян, Грам. агуль. яз. 75—78):

Ժամանակ ընդունող լեզուների մեջ էլ հաճախ այդ ժամանակները իրար տեղ են գործածվում. հայերեն, ֆրանսերեն, գերմաներեն ներկան կարող է գործածվել ապառնի իմաստով, ինչպես՝ ֆրանս. j'y vais, *գերմ.* ich komme *(փխ.* ich werde kommen), *որ գրքերի սովորեցրած և օտարների գործածած ձևն է* (Vendryès, Le langage, 119), *արևմտ. հյ. կերթամ և այլն: Ռուսերենի, կելտական լեզուների և արևմտյան հայերենի մեջ գործածական հին ներկայի ձևը հիմա ապառնի է. այսպես՝ գրբ. երթամ ասեմ «գնում եմ և ասում եմ», աշխ. երթամ ասեմ «այսուհետև կերթամ կասեմ»:*

Ընդհակառակը ապառնին հաճախ գործածվում է ներկայի փոխարեն, ինչպես ֆրանս. il sera à Paris à l'heure qu'il est, *հյ. «հիմի Փարիզում կլինի (իմն է): Ներկան կարող է ցույց տալ և՛ անցյալը և այս՝ պատմելու սովորական ձևն է բազմաթիվ լեզուների մեջ: Օրինակ՝ Լինում է չի լինում, մի թագավոր է լինում:*

Հունարենի մեջ կա մի տեսակ կատարյալ (որ կոչվում է aoriste gnomique), *որ ժամանակից անկախ մի ձև է. նույնը կա նաև հայերենի մեջ. օրինակ՝ «Սուտ ասողի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց». իրապես սա ներկա է, իսկ ֆրանսերենը նույն իմաստը պիտի տար ապառնի ձևով:*

Այսպիսով, ներկան կարող է լինել իսկական ներկա (տես, կառքը անցնում է), կամ մշտական մի գործողություն է ցույց տալիս («եղբայրս ամեն օր այստեղով անցնում է») և կամ ժամանակից անկախ է (կառքը այս փողոցով անցնում է):

Այս բոլորը ցույց են տալիս, թե ժամանակի գաղափարը խախուտ է, և նրանք կարող են հաճախ իրար տեղ գործածվել:

Բայի ժամանակները իտալերենում հետևյալներն են.

Ներկա io amo *սիրում եմ*
անց. անկ. io omáva *սիրում էի*
1. անց. անորոշ կատ. io amai *սիրեցի*
2. » որոշյալ » io ho amato *սիրել եմ*
3. » հառաջադույն կատ. io ebbi amato *սիրած (եղա) ունեցա:*

Այս երեքը կատարյալ են. բայց № 1 ցույց է տալիս շատ հին ժամանակ կատարված մի բան, առանց ժամանակը որոշելու. օր.

gli antichi Romani ebbero gran virtù et gran vizi
հին (նախնի) Հռոմեացիք ունեցան մեծ առաք. և մեծ մոլութ.

№ 2 շատ կամ քիչ (բայց որոշ) ժամանակ առաջ եղած մի բան, ինչ.
Hai avuto tempo di farlo oggi *կամ* questa settimande *կամ* questo mese *կամ* questo anno *ժամանակ ունեցար անելու այսօր կամ այս շաբթու կամ այս ամիս կամ այս տարի:*

№ 3 մի ուրիշ կատարյալից առաջ եղած կատարյալ.

Appena ebbi avuto la tua lettera, che tuo fratello arrivo
քու նամակդ առել էի, երբ եղբայրդ հասավ:

դերակատար	io aveva amato	*սիրել էի*
ապ.	ro amero	*պիտի սիրեմ*
հրամ.	ama tu	*սիրիր*
ստոր. ներկ.	io ami	*որ սիրեմ*
1 » անց. անկ.*	io amassi	*եթե սիրեի*
2. » » »	io amerei	*կսիրեի*
անց. կատ.	io abbia amato	*որ սիրած ըլլամ*
1. դերկ.*	io avessi »	*թե սիրած ըլլայի*
2 »	io avrei »	*սիրած կըլլայի*
ապ.	io avrò »	*ես կսիրեմ*

Կովկասյան լեզուներից ավարեերենը ներկայացնում է հետևյալ իսկական եղրերը.—

Ներկայի տեսակներից՝

1. Ընդհանուր ներկա
2. Անորոշ ներկա
3. Inchoatif *» (անելու կետի վրա է).*
4. Հարկադրական » (հարկ է լինում անելու)
5. Մատղրական » (մատղրութիւն ունի անելու).
6. » կրկն. »

Կատարյալի տեսակներից՝

7. Ընդհանուր կատարյալ.
8. » » լրացրած.

* *Սրանցից առաջինը ցույց է տալիս կարելի մի բան, երկրորդը այնպիսի մի թեական, որ նրանից է կախված. օր. եթե նրանք տեսած լինեին, դադափար կունենային:*

9. Inchoatif կատարյալ
10. Հարկադրական »
11. Մատղրական »
12. Պատմական »
13. » » ենթադրական (ուրիշից լսված).
14. » » (կրկնական). շատ անգամ նա եղավ մեզ մոտ.
15 » » inchoatif (անելու կետի վրա եղավ).
16. » » » ենթադրական (անելու կետի վրա եղած է եղեր).
17. Պատմական կատարյալ հարկադրական (պետք էր որ հորդ ասածը անեիր).
18. Նույն ձևի ենթադրականը (պետք էր որ հորդ ասածը անեիր եղեր).
19. Պատմական կատարյալ մատղրական.
20. Նույնի ենթադրականը.
21. Պատմական կատարյալ կրկնողականի ենթադրականը:

Այսպես նաև նույն ձևերի սաորադասականը, ըղձական և հրամայական եղանակները:

Ամերիկյան կրի լեզուն ունի սաորադասականի համար երեք ձև.

ա) Ենթադրական (suppositif) (եթե գա, եթե տա, միշտ ապառնի).

բ) Դրական (positif). Նշ. սովորաբար եղած բան.

գ) Պատահական (eventuel), երբ որ, ամեն անգամ որ...

(Lacombe, էջ 58):

Վերը տեսանք, որ բայն ունի զանազան ժամանակներ: Չկա եղանակ առանց ժամանակի և չկա ժամանակ առանց եղանակի: Մի եղանակ մի լեզվում կարող է ունենալ քիչ ժամանակ, մի ուրիշ լեզվում ավելի շատ. օրինակ՝ ինդոշիներնում թեական եղանակն ունի ներկա, անցյալ, ապառնի և գերակատար. օրինակ՝ եթե առնում եմ, եթե առնեի, եթե առնեմ, եթե առած լինեմ (Dumézil, BSL, 34, 108): Մինչդեռ ֆրանսերենի թեական եղանակը ունի երեք ժամանակ՝ ներկա, անկատար և կատարյալ: Մի ժամանակը կարող է ունենալ և ունենում է մի քանի բաժանմունքներ. բայի սրանից բայն ունի երևույթի գաղափարը, որ որոշ լեզուների մեջ բռնում է ժամանակի տեղը:

Այս բոլոր ձևերից լատաքանչյուրը կազմում է բայական մի եզր, որոնց դասերն է խոնարհումը, որ և արտահայտում է եղանակներին ու ժամանակներին, երևույթներին, թվին ու դեմքերին (նաև դեմքի տեսերին) հատուկ մասնիկներով ու վերջավորություններով: Ուրեմն և ինչպես եղանակի, նույնպես և ժամանակի մասին եղած մանրամասնությունները տեսնելու համար պիտի դիմենք բայերի եզրերի հատվածին:

7. ԳՈՅԱԿԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Գիտենք, որ գոյականը չունի ժամանակի գաղափար. երբ ասում ենք հաց, քար, հող, նավթենակ՝ օր, ամիս, տարի, այս բոլորը ըմբռնում են ժամանակից անկախ: Այսպես են մինչև անգամ այն գոյականները, որոնք ցույց են տալիս որևէ գործողություն: Օրինակ՝ երբ ասում ենք «երկրի շարժումը», կարող ենք հասկանալ այժմ, անցյալում և կամ ապագայում: Մասամբ այսպես է նաև անեղևույթը կամ դերբայը: Առաջին անգամ բայն է, որ երևան է գալիս ժամանակի պահանջով և ունենում է ժամանակի բոլոր առանձնահատկությունները, որոնցից զուրկ է գոյականը:

Երբ գոյականը, ածականը կամ մակբայը կապված են լինում ժամանակի գաղափարի հետ, այնպես որ կարիք է լինում որոշել նրանց ժամանակը, դիմում ենք երկու միջոցի.

1. Առնչում ենք լատաքանչյուր դիրքի համար առանձին բառ, ինչպես՝

երեկ — այսօր — վաղը
անցյալը — ներկան — ապառնի
առաջ — այժմ — հետո
վաղեմի — արդի — գալիք
հետու, այս տարի և այլն:

2. Դնում ենք նրա վրա զանազան ածականներ, մակբայներ կամ դերբայներ, որոնք կարող են տալ անցյալի, ներկայի և ապագայի գաղափարը. օրինակ՝ «նա մի մարդասպան էր. նրա ապառնի գործունեությունները բազմաթիվ էին. և նրա անելիք ապառնի գործերն առաջքն առնելու համար՝ ձերբակալեցին և բանտարկեցին»:

«Ձեր տված պատասխանը կարդացի. գրում եմ այժմ իմ պատասխանը և հետաքրքրությամբ սպասում եմ ձեր տալիք երկրորդ պատասխանին»:

«Ալապես է եղել նրա անցյալ գրութիւնը, ալապես է արդեն, և ալապես էլ կլինի ապագան» (= ալապես է եղել նրա գրութիւնը անցյալում, ալապես է այժմ, ալապես կլինի ապագալին)։

«Էքա-սալթանը, էքա-վարզապետ X, արդի սալթանը»։
«Նախորդ պատրիարքը, նախկին պաշտօնեան»։
«Հանգուցեալ պատրիարքը, նորընտիր կաթողիկը»։
«Ապագա քաղաքացիները, իմ ապագա ամուսինը»։

Կա նաև ածականի մի ձև, որ հատկացված է ապագալի. ինչպես՝ հարսնացու «նա որ հարս պիտի լինի», փեսացու «նա որ փեսա պիտի լինի», շապկացու «այն կտորը, որից շապիկ պիտի կարուի» և այլն։ Այսպես էր նաև ախբացու «որ հետո տերտեր պիտի լիներ», բայց հետո այս իմաստը կորցրեց։

Դերբայներն էլ հաճախ ժամանակի կողմից որոշ չեն. հմմտ. հետևյալ օրինակները.

«Տեսա մի մարդ, որ քարի վրա նստած էր» (անցյալ)։
«Տեսնում ես այդ մարդը, որ քարի վրա նստած է» (ներկա)։
«Կտեսնես մի մարդ, (որ) քարի վրա նստած պիտի լինի» (ապառնի)։

«Ուզում էի տեսնել, ուզում եմ տեսնել, կուզեմ տեսնել»։
«Գրող» (ներկա, անցյալ և ապագա ժամանակներում)։

Ալապների դեպքերի համար ունենք բարբառներում երեք տեսակ անորոշ դերբայ.

տեսնել (ներկա)
տեսած ըլլալ (անցյալ)
տեսնելու ըլլալ (ապառնի)։

Այս ձևով են նաև ֆրանս. écrire, avoir écrit. գերմ. schreiben, geschrieben haben, լտ. scribere, scripsisse.

Թե բարբառներում և թե գրականում ընդունված ձև է—լիք, ինչպես՝ տալիք, առնելիք, խոսելիք, վախենալիք, բերելիք, տանելիք և այլն։ Այս բոլորը ապառնի նշանակութիւն ունեն։

Կան լեզուներ, որ գոյականի և ածականի ժամանակը ավելի լավ են որոշում և դրա համար գործ են ածում առանձին մասնիկներ։ Այսպես՝

1. Ամերիկյան հուպա լեզվում գոյականը առնում է -neen մասնիկը՝ ցույց տալու համար անցյալը և -te մասնիկը՝ ապառնի համար. օրինակ՝

xôût'neen «իր կինը» (անցյալում, այժմ մեռած)
mitl°ôwete «իրենց դեղը» (որ պիտի առնուն)։

(Boas, Handbook I, 110)։

2. Ամերիկյան արիշ լեզուներում ածականը կարող է առնալ զանազան մասնիկներ՝ որոշելու համար ներկան, անցյալը և ապառնին։ Օրինակ՝ Ալյասկայի էսկիմոսների լեզվով՝

ningla ցուրտ (այժմ)
ninglithluk ցուրտ (անցյալում)
ninglikak ցուրտ (ապագալում)։

(Jesperson, The phil. gram. 283).

3. Ամերիկյան նավահո լեզվում, որովհետև ածականը հաճախ բայից է կազմվում, ասում բայի նման ժամանակ ունի։ Չի կարելի ասել պարզապես «ցուրտ», այլ կապելով ժամանակի զանազան բայհնների հետ, պիտի ասենք՝

xodineskaz ցուրտ, այն որ սկսել է և պիտի ավելի սառակտնա և սառչի (ապառնի).

xonikaz ցուրտ, որ արդեն սառչելիս է (ներկա).
xoneskaz ցուրտ, որ արդեն ցրտել է (անցյալ).
deskaz ցուրտ, որ այդ վիճակումն էլ մնում է (շարունակական ներկա)։

(Haile, 50)։

Կովկասյան լակ լեզվում կա մի առանձ ածական, որ ցույց է տալիս անցյալը. օրինակ՝

duk'ussa անցյալ տարվա (որ անցյալ տարի կար, այժմ չկա).
duk'ubassa անցյալ տարվա (որ անցյալ տարվանից կա և այժմ էլ մնաս է)։

Այս ձևը միայն ժամանակ ցույց տվող բառերի համար է և կազմվում է -ba-, -va-, -ra- միջամասնիկներով։

(Усларъ, Лак. яз. 52)։

8. ԲԱՅԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԸ

(Aspect = գերմ. { Aktionsart (գործել[ա]կերպ)

Երևույթի (ասպեկտ) ասելով հասկացվում է գործողության ավարտվողությունը կամ կատարման կերպը. հայերենի կամ ֆրանսերենի

մեջ ժամանակ ասելով հասկանում ենք գործողության րոպեն (երբ է գործողությունը). բայց այդ ժամանակները չեն ցույց տալիս բնավ, թե այդ գործողությունը ինչքան տևողություն ունի և ինչ կերպով է եղել: Հնդեվրոպական նախալեզուն ավելի կարևոր էր համարում դանազանել այս կետերը, քան թե ժամանակը: Հնդեվրոպականի բայը ցույց էր տալիս, թե գործողությունը տևական էր, թե որոշ վայրկյանի համար, գործողությունը սկսվում էր, թե վերջանում, մեկ անգամ էր տեղի ունենում, թե կրկնվում էր քանիցս անգամ, վերջացած ու իր արդյունքին հասած էր: Ահա այս նպատակներով առաջ էին եկել հնդեվրոպական նախալեզվի մեջ բայերի դանազան երևույթները:

Բրուգմանը (Abrégé, էջ 521—523) հնդեվրոպականի համար հետևյալ հինգ երևույթներն է դնում.

1. Վայրկենական (momentané, նաև instantané, ponctuel, perfectif, aoristique). *ցույց է տալիս, թե գործողությունը կատարվել է հենց սկսած րոպեին և կամ կատարվել է մի շարժումով: Շատ բայեր՝ հենց իրենց նշանակությամբ ինքնին վայրկենական են, ինչպես՝ «գտնել», որիշներ որիշ բառերի օգնությամբ, կամ հատկապես նախադասությունների միջոցով են առնում վայրկենական երևույթի նշանակություն: Բալտական ժամանակների մեջ* aoriste-ն *էր, որ ուներ վայրկենական նշանակություն:*

2. Տևական (duratif, cursif, impàrfait). *ցույց է տալիս գործողությունը իր ընթացքի մեջ, առանց նշելու նրա սկիզբը կամ վախճանը: Օրինակ՝ ապրել, փնտրել կամ որոնել (հակադրությամբ «գտնել» բայի, որ վայրկենական է): Շատ բայեր բնապես տևական են ըստ իրենց նշանակության, որիշներ կազմվում են ներկայի բնից:*

3. Կատարելական (perfectif). *ցույց է տալիս մի վիճակ, որ նախորդ մի գործողության արդյունքն է. օրինակ՝ հնխ.* woide> *անս.* véda *«գիտեմ» (ալֆինքն որոնել է և այժմ գիտեմ), հն.* μέμονε *«սկսել է բառաչել և այժմ բառաչում է»:*

4. Կրկնական (iteratif). *ցույց է տալիս, որ գործողությունը կրկնվում է մի քանի անգամ: Այս կարգին են պատկանում այն բայերը, որոնք կազմված են արմատի կրկնությամբ: Կրկնականը երբեմն էլ առանձնական նշանակություն ունի:*

5. Վերջավորական (terminatif). *ցույց է տալիս գործողությունը իր կատարման ընթացքում, բայց այնպես, որ վերջավորությունն էլ ի հայտ գա: Օրինակ՝ նա բարձրացավ սարի գագաթը: Այս ձևը տևական և կատարելական է միանգամայն* (duratif-perfectif):

Սրանցից դուրս կան նաև ուրիշ երևույթներ, ինչպես անկատարական (imperfectif), *սկսնական* (inchoatif) *և այլն, որոնց մասին կխոսենք քիչ հետո:*

Այս բոլոր երևույթներն էլ բոլոր բայական բներին հատուկ չէին, այլ ամենք այս և ամենք էլ այն բնույթն ունեին: Սորուն, բայական բների մասին խոսելիս, ըստ կարևորին նշանակել ենք նրանց երևույթները:

Երևույթները կազմում են հնդեվրոպական նախալեզվի ամենադժվար և բարդ կողմը: Այդ երևույթները ժառանգաբար անցել են առանձին, հին հնդաարեմեն և ալսօր էլ կենդանի են դեռ սլավոնական լեզուների մեջ: Մենք էլ անցնում ենք քննելու այս լեզուները, որպեսզի դրանով գործնական օրինակ առնք բայական երևույթի բացատրության:

Չեխերենում և սլովակերենում երևույթը երկու է՝ կատարելական (perfectif) *և անկատարական* (imperfectif). *կատարելականը ցույց է տալիս վերջացած մի գործողություն և ունի երկու առորոշումներ. 1. վայրկենական* (momentané), *որ ցույց է տալիս րոպեական տևող ու վերջացող մի գործ. ինչպես՝ առնդուղքից ցած ընկա. սլովակ.* padol-som *(առնդուղքից ցած) ընկա. կամ նաև նետել, կտրել, արձակել. 2) վերջավորական* (finitif), *որ ցույց է տալիս իր կատարած գործողության վերջանալը. օրինակ՝ չեխ.* přečísti *«ծայրից ծայր կարդալ»:— Անկատարականը ցույց է տալիս գործողության շարունակությունը, ինչպես՝ սլովակ.* chodím do kancelárie *«գնում ենք պաշտոնատուն (ամեն առավոտ)». ունի չորս առորոշումներ. 1) սկսնական* (inchoatif), *որ ցույց է տալիս գործողության սկիզբը. ինչպես՝ սկարտանալ, ծերանալ. 2) տևական* (duratif). *ցույց է տալիս անվերջ շարունակություն. ինչպես՝ ապրել, տևողել, լսել. 3) կրկնական* (itératif). *ցույց է տալիս մի գործի կանոնավոր կրկնությունը. ինչպես՝ սլովակ.* nosím v zime čierne šaty *«ձմեռները սև շոր եմ հագնում». հագնել, հագնալ. 4) հաճախական* (fréquentatif). *ցույց է տալիս գործողության անկանոն կրկնությունը. ինչպես՝ չեխ.* čítávati *«երբեմն-երբեմն կարդալ»,* mislivati *«մերթ ընդ մերթ մտածել»: Բայը կարող է պատկանել մի ասպեկտի և անցնել մի ուրիշ ասպեկտի, օրինակ՝ չեխ՝* čítati *«կարդալ»,* čítávati *«երբեմն-երբեմն կարդալ»: Մեկ ասպեկտից մի*

սրիշ ասպեկտի անցնելը կոչվում է խաերացիա և դրա միջոցներն են կամ դանազան նախամասնիկներ և կամ վերջավորութիւններու փոփոխութիւն. օրինակ չեխ. fouk-nou-ti «մեկ անգամ փչել», fouk-a-ti «հաճախ փչել»: *Բայց այս բոլորը սովորելու համար ոչ մի կանոն չկա և պիտք է գործնական միջոցով վարժվել* (Hantich, Gram. tchèque, 86—88, 92 և Macht II, 39—41):

Այս միևնույն պատկերը ներկայացնում են լհհերենը (Jocl. 316) *և ռուսերենը: Ռուսերենում էլ ունենք* կատարելական (совершенный), անկատարական (несовершенный), վայրկենական (momentané, однократный), տևողական (duratif), հաճախական (itératif, многократный) *և սկսողական* (гл. начинательного вида) *եղանակներ: Օրինակ՝* я пишу «գրում եմ» *(այժմ էլ շարունակում է և չի վերջացել).* я написал «գրեցի» *(վերջացրի),* я напишу «կգրեմ» *(մեկ անգամ և կվերջացնեմ),* я писал «գրում էի» *(չէ վերջացած),* я буду писать «պիտի գրեմ» *(շատ անգամ և չէ վերջացած),* я говаривал «ասում էի» *(անցյալում կրկնված և չվերջացած),* я сказал «ասացի» *(միայն մի անգամ),* я хаживал «հաճախում էի» *(շատ անգամ կրկնում էր և այժմ չկա),* я приду «կգամ» *(մեկ անգամ և կվերջանա),* я крикнул «ճչացի» *(մի անգամ և վերջացավ),* я запел «սկսեցի երգել» *(սկսել է միայն): Սրանցից դուրս կա նաև արատրակտ* (отвлеченный) *եղանակը, որ ցույց է տալիս գործողութիւնը առանց ժամանակի որոշման. օրինակ՝* птица летает «թռչունը թռչում է» *(այսինքն թռչելու հատկութիւն ունի),* рыба плавает «ձուկը լողում է». *իսկ եթե ասվի* птица летит *միայն այժմ է թռչում, կամ* рыба плывет *միայն այժմ է լողում:*

Ըստ նշանակութեան, բայը կարող է ունենալ այս կամ այն եղանակը և նրա հետ միասին այս կամ այն ժամանակը կամ ժամանակները: Այս տեսակետով բայերը լինում են. ա) լրիվ, *որոնք ունեն ներկա, անկատար անցյալ, հաճախական և վայրկենական անցյալ, անկատարական ապառնի* (буду) *և վայրկենական ապառնի* (-ну), *բ)* կրկնակ, *որոնք ունեն կատարելական և հաճախական ձևեր, այն է երկու տեսակ ներկա, երկու տեսակ անցյալ և երկու ապառնի: Բայց այս բոլոր ձևերը կազմելու համար ոչ միօրինակութիւն կա, և ոչ էլ տառնձին կանոններ: Կան բայեր, որ այդ ձևերը կազմում են վերջավորութեան փոփոխութեամբ, սրբիշներ՝ դանազան նախամասնիկներով և այլն: Ամեն բայ բնականաբար պարտավոր չէ ունենալ բոլոր եղանակները և ժամանակները. և*

չկա բայ, որ բոլոր կարելի ձևերը միանգամայն ունենա: Տալիս ենք օրինակ՝ «խփել, զարնել» բայը, որ ձևերի կազմից ամենահարուստներից մեկն է.

անկատարական	стучать
կատարելական	постучать
վայրկենական	стукнуть
հաճախական	постукивать

ներկա — стучу́

անցյալ	*անկատարական*	стучал	*խփում էի*
	կատարելական	постучал	*խփել եմ*
	վայրկենական	стукнул	*խփեցի*
	հաճախական	постукивал	*հաճախ խփում էի*
ապառնի	*անկատարական*	я буду стучать	
	կատարելական	постучу	
	վայրկենական	стукну	

Այսպես նաև հրամայականի ձևերը, որ չենք դնում:

Ասացինք, որ այս ձևերը կազմելու համար ընդհանուր կանոններ չկան. օրինակ՝ անկատարական և կատարելական անորոշները նույն վերջավորութիւնն ունեն (-ать), *ուստի միայն տարբերվում են, նույնիսկ դնում են բոլորովին այլ բառ. օրինակ՝* одевать *և* одеть «հագնել», брать *և* взять «առնել». *սրբիշներն առանում են ինչ որ նախդիր, ինչպես՝* любить «սիրել» *և* полюбить *կամ* возлюбить: *Հաճախականի ձևն է* ивать, *որով սակայն շատ քիչ բայեր կան* (Fuchs, Gramm. russe, 127, 154):

Կատարելական եղանակի ապառնին ներկայի հետ նույն վերջավորութիւնն ունի, միայն առանում է սովորաբար մի նախամասնիկ. ինչպես՝ я хвалю «գովում եմ», я похвалю «պիտի գովեմ»: *Բայց այս ժամանակը կազմելու կանոնները այնքան դանազան և այնքան դժվար են, որ միայն գործածութեամբ կարելի է սովորել»* (Fuchs, Gramm. russe, 161):

Ռուսերենի նման ալբանիերենն էլ որոշում է բայի մեջ այն, թե գործողութիւնը վերջացած է, թե վերջացած չէ ու դեռ շարունակվում է: Այս նպատակով ամեն մի բայ ունի երկու ձև. անկատարական և կատարելական: Օրինակ՝

купува́ти *անկ.* купи́ти *կար.* «գնել»
верта́ти » верну́ти » «վերադառնալ»
малюва́ти » намалюва́ти» «նկարել».

Ահա մի օրինակ այս երկու ձևերի կիրառության համար.

Сей о́браз намалюва́в Василь, як малював нашу
«Այս նկարը նկարեց Վասիլը, երբ նկարում էր մեր
церкву:
եկեղեցին»:

Անկատարականն էլ ունի երկու տեսակ՝ տեւական և կրկնական: Այս երեք ձևերի համար ահա օրինակներ.

ве́зти (dur.), вози́ти (iter.), звезти (perf.).
Де тепе́р Іва́н *Ո՞ւր է այժմ Իվանը:*
Везе́ сі́но *Տանում է խոտ (դեռ չէ վերջացած, շարունակում է տանել):*
Що ро́бить ни́нї Іва́н? *«Ի՞նչ է աշխատում այսօր Իվանը:*
Во́зить сі́но *«Խոտ է տանում» (մի քանի անգամ պիտի երթա գա):*
Як звезе́ сі́но, пі́де ора́ти *«Երբ տանի (պրծնի) խոտը, արար վարելու կերթա»:*

Այս է բայերի ընդհանուր սկզբունքը. բայց շատ բայեր կորել են. կան, որ կազմվում են նախամասնիկներով, կան, որ շեշտի փոփոխությամբ, կան էլ, որ բոլորովին այլ բառերով հասնում են նույն նպատակին: Այս բոլորի համար կանոն չկա. ամեն ինչ վարժությամբ են սովորում:

(Smal. Stockyj, 56—57):

Սերբերենում տրիատը ոչ միայն գործածվում է իբրև կատարելական, այլև անկատարական. օրինակ՝

devèdoh ga ùčenīcima tvòjīm u ne mògoše ga iscéliti.
«երբի աշակերտացդ քոց և չ կրցան բժշկել»:

devèdoh aoriste-ը perfectif է. «երբի» (վերջացած), իսկ mògoše aoriste-ը imperfectif է, «չկարողացան և դեռ շարունակում են չկարողանալ»:

(Meillet, Gr. serbe, 177):

Կենդանի պատմվածքների մեջ կարող է գործածվել իբր ապառնի, որ ենթադրվում է, թե բոլորովին տուլդ է. օրինակ՝

běž'mo, brāćo, māče nas tûrci ùbiše.
«Գնացինք, եղբարք, եթե ոչ մեզ թուրքք սպանեցին = (= կսպանեն): (Անդ, էջ 178):

Արդի լեզվի մեջ տրիատը ջնջվում է, տեղը գալիս է հարակատարը (արել եմ, ասել եմ): (Անդ, էջ 178):

Սլավականից ավելի բարդ է հունարենը: Հին հունարենում կա երեք եղանակ, որոնք անհարմար անունով կոչվում են ներկա, տրիատ և հարակատար (parfait):

Ներկան տեւական (duratif) եղանակն է, որ մասամբորապես համապատասխանում է սլավական անկատարական (imperfectif) եղանակին և որից առաջանում է երկու ձև. բուն ներկա (ինչ. thnēskei մեռնելիս է) և մի prétérit, որ կոչվում է անկատար (ինչպես՝ ethnēske մեռնելիս էր):

Աորիստը վայրկենական եղանակն է, որ մասամբ համապատասխանում է սլավական կատարելական եղանակին (օրինակ՝ ethane «մեռավ»), չունի ներկա, որովհետև ներկայացնում է մի դեպք, որ որոշ ժամանակ տեղի է ունեցել:

Հարակատարը վերջացած եղանակն է, որ ցույց է տալիս, թե գործողությունը կատարված վերջացած է և արդյունքը առացված. մասամբ համապատասխանում է սլավական կատարելական եղանակին (օրինակ՝ tethnēke, մեռավ, ոչ թե այնինչ կամ այնինչ բոպեին, այլ «այժմ մեռած վիճակի մեջ է»): Այս ձևը սովորաբար գործածվում է իբր ներկա, ցույց տալու համար, թե գործողությունը կատարված է ենթակայի խոսած ժամանակ (մեռավ). բայց կա նաև մի կատարյալ (prétérit), որ կոչվում է գերակատար, որ ցույց է տալիս, թե գործողությունը անցյալումն է արդեն կատարվել վերջացել (ինչպես՝ etethnēkei «մեռած էր»):

Ժամանակի ընթացքում հնդեվրոպական լեզուների մեջ երեք եղանակը կորցնում է իր կարեւորությունը և նրա տեղ ժամանակի կարեւորությունն է բարձրանում:

Այս մասին շատ լավ օրինակ տալիս է մեզ լատիներենը: Մինչդեռ հունարենը հնդեվրոպական նախալեզվից պահում է երեք եղանակի ճշտությամբ (տեւական, վայրկենական և հարակատար), լատինը պահում է երկու եղանակ, մին տեւական (որ կոչվում է infectum) և մյուսը perfectif, որ կոչվում է perfectum. բայց ամեն մեկին տալով երեք ժամանակ՝ ապառնիականի մեջ, այն է ներկա, կատարյալ և ապառնի: Այսպիսով կազմվում է հետևյալ համաչափ պատկերը.

	Infectum (շարունակական)		perfectum
ներկ.	dicit «ասելիս է»	dixit	«ասել է» (պրծել)
կար.	dicebat «ասելիս էր»	dixerat	«ասել էր» (պրծել)
ապ.	dicet «ասելիս կլինի»	dixerit	«պիտի ասի» (պրծնի):

Perfectum-ի ներկան (dixit) *ցույց է տալիս, որ խոսած միջոցին արդեն գործողությունը վերջացել է. դա միևնույն ժամանակ հարմար է պատմելու անցյալ մի դեպք, այսպես* dixi «ասել եմ, ասացի» (անցյալում՝ որևիցե ժամանակ) *և հատկապես ցույց տալու, թե արդեն գործողությունը վերջացել է. այսպես* dixi «ասացի (և այլևս ասելու չեմ)». *այսպիսի մի քանի բայեր գործածվում են իրրև ներկա. ինչպես՝* memini «հիշում եմ»: Perfectum-ի պատանին տարբերվում է infectum-ի պատանիից նրանով, որ dixerit *ավելի ուժեղ պատանի է քան* dicet:

Ավելի հետո նորալատին լեզուների մեջ այս դրությունը քայքայվում է. ինչ որ երևույթ է ցույց տալիս, ջնջվում է, և մնում է, ինչ որ ժամանակ է ցույց տալիս:

Այսպիսով ունենում ենք երեք շրջան. 1) հնդեվրոպական նախալեզվի շրջանը, երբ բայն ունի երեք արմատական ձև, որոնք արտահայտում են երևույթ (ներկա, aoriste *և* perfect) *և որոնց մեջ ժամանակը երկրորդական տեղ ունի (ներկան և անցյալը անորոշ կերպով են երևում, իսկ ապառնին չկա), 2) լատինական շրջան, ուր սևական և վերջացած գործողությունների հակադրությունը պահպանվում է և որոնց վրա ավելի որոշ կերպով ավելացել է ժամանակի գաղափարը (ներկա, անցյալ, ապառնի), 3) նորալատին շրջան, երբ երևույթը այլևս վերացել է և ժամանակը իր բոլոր նրբերանգներով երևան է գալիս:*

Հայերենում ներկայի և անկատարի մեջ չկա գործողության վերջացման գաղափարը և պատկերացվում է նա իր ամբողջ ընթացքի մեջ. aoriste-*ը որոշ և վերջացրած մի գործողություն է ցույց տալիս. օրինակ՝ Յո. Ք. 7 «Ձոգաւ, լուացաւ, եկն և տեսաւ». առաջին երեքը վերջացած գործողություններ են, ուստի և դրված են* aoriste, *իսկ վերջինը, որ սևական է, դրված է անկատար:*

Գաժմոդական լեզուն հայերենում լինում է անկատար կամ aoriste.

Ստորադասականի մեջ էլ կա վերջացած և չվերջացող գործողություն. օրինակ՝ Եղն. էջ 98՝ «Ցուրժամ քաղաքք և գեղք աւերեսցին (aor.) *և անդ գեւք բնակիցեն» (ներկ.):*

Ամերամբ միայն մի անգամ եղավ. վերջացավ, իսկ գեների բնակությունը անորոշ ժամանակով է:

Բայց աշխարհաբար կատարյալն էլ կարող է չվերջացած համարել. օրինակ՝ «Ես այդ տղային հավանեցի, սիրեցի» (չի ուզում ասել, թե էլ չի սիրում):

Ի՞նչ միջոցի են դիմում նոր լեզուները (որոնք ջնջել են հին երևույթը և նրա տեղ ժամանակն են դարպացրել), եթե կարիք ունենան բայի գործողության տևականությունը երևան հանելու համար:

Ինչպես արիշ պարապանեում, նույնպես և այստեղ նոր լեզուները դիմում են օժանդակ միջոցների: Օրինակ՝ ֆրանսերենն առանց ժամանակների կարգը խախտելու, ավելացնում է en train de *«ընթացքում» բառը, ինչպես՝*

je chante *«երգում եմ» ընդհանրապես.*

je suis en train de chanter *«երգելու գործողության ընթացքի մեջ եմ»:*

je chantais *«երգում էի» (ընդհանրապես):*

j'étais en train de chanter *«երգելու գործողության ընթացքի մեջ էի»:*

Անգլերենը դիմում է զերբայական ձևի.

I sing *«երգում եմ» (ընդհանրապես):*

I am singing *«ես երգում եմ այժմ և դեռ շարունակում եմ երգելս»:*

I sang *«երգում էի» (ընդհանրապես):*

I was sanging *«ես երգում էի այն ժամանակ և դեռ շարունակում էի երգելս»:*

He is polite *«նա քաղաքավար է» (կազմված է էական բայով և ցույց է տալիս, թե ընթական միշտ նույն վիճակումն է).*

He is being polite *«քաղաքավար է» (կազմված է* be *օժանդակով և ցույց է տալիս, որ այժմ միայն այդպես է դարձել և դեռ շարունակում է մնալ այդպես):*

Իսպաներենում երկու օժանդակ բայ կա՝ ser *և* estar, *որոնք երկուսն էլ նշանակում են «լինել», բայց առաջինը ցույց է տալիս ընդհանրապես կամ միշտ, իսկ երկրորդը այժմ միայն կամ ժամանակավորապես. ինչպես՝*

mi hermano es muy activo *«եղբայրս շատ ժիր է» (միշտ)։*
mi hermano está enfermo *«եղբայրս հիվանդ է» (այժմ միայն)։*

Երկու երևույթները միասին գտնվում են հետևյալ հատվածում.

tu hija soy sin honra estoy.
«քո ապջիկն եմ (միշտ), բայց անպատված եմ» (այժմ)։

Բացի սրանից իտալականները դիմում է դերբայական միջոցի. ինչպես՝ hablo *«խոսում եմ»* — estoy hablando, *անկ.* vendia *«ծախում էի»* — estaba vendiendo, *ապ.* comeré *«պիտի ուտեմ»* — estaré comiendo *(առաջիններդ ընդհանրապես, երկրորդները այժմ միայն գործելու ընթացքում)։*

Ռուսերենում անգամ, որ երևույթը այնպես զարգացած և կնդանի է, կարելի է ի հարկին կազմել այսպիսի ձևեր. օրինակ՝

он был купец *«վաճառական էր» (միշտ).*
он был купцом *«վաճառական է եղել» (մի ժամանակ էր և այժմ չէ)։*

(Jesperson, The phil. gramm. 280)։

Ուզբեկերենում գործողությունը մշտապես կամ շարունակ կատարված լինելը ցույց տալու համար գործ են ածվում yatmak *«պառկել»,* turmak *«կանգնել»,* oturmak *«նստել» և* yürmmak *«շարժվել-գնալ» օժանդակ բայերը. ինչպես՝*

balək suda suzub yürubdur
«ձուկը ջրում լողում (մշտապես) է»։
taxtanə randalab turub dur.
«տախտակը քերում (մշտապես) է»։
daraxmka čika yatəb dur
«ծառը բարձրանում (մշտապես) է»։

(Налибкинъ, Руководство сарт. яз, 117—118)։

Արդի հայերենում երևույթի երկու տեսակները ցույց են տալիս ուզեմ և ուզենում եմ, կարող եմ և կարողանում եմ, եմ և լինում եմ. առաջիններդ միայն ներկա բոպեի համար, երկրորդները մշտապես. օրինակ՝

Մատաճառն է խոսում.— Այս բոպիս մխ չունեմ, բայց ուրիշ օրեր միշտ ունենում եմ։

Ձեր գրածը կարող եմ կարդալ (այժմ)։

Ձեր գրածները կարողանում եմ կարդալ (միշտ)։
Այս առավոտ ալատեղ եմ (միայն այն օրը)։
Առավոտները ալատեղ եմ լինում (ամեն օր)։

Ըստ այսմ սխալ է, երբ ասենք.

Նա այսօր չէր կարող սկսած գործին ընթացք տալ (Սիրաս, Գրված օրենք, 303)։

Պետք է լինի «չէր կարողանում», քանի որ գործը դեռ վերջացած չէ։

Վերի ձևերից վերջինը եմ և լինում եմ, ինչպես նաև սրանց անկատարը՝ էի և լինում էի, իրրև օժանդակ կարող են գործածվել ամեն տեսակ ածականի հետ և կազմել վարկենական և տևողական երևույթներ. օրինակ՝

Հիվանդ եմ (միայն այժմ)։

Ամեն օր հիվանդ եմ լինում (կամ հիվանդանում եմ) (մըշտապես)։

Արևելահայ գրական լեզուն գտնագանում է նաև բայերի մեջ -ում եմ և -ելիս եմ, -ում էի և -ելիս էի, որոնցից առաջինը վարկենական է, իսկ երկրորդը շարունակական։ Օրինակ՝

ուտում եմ — ուտելիս եմ
խոսում եմ — խոսելիս եմ
ուտում էի — ուտելիս էի
խոսում էի — խոսելիս էի։

Շարունակական երևույթի բաղմաթիվ ձևեր հնարված են Փոքր Ասիայի հայերեն բարբառներում, որոնց գլխավոր տիպն է պոլսահայ բարբառով՝

կուտամ և կուտամ կոր
կուտանի և կուտանի կոր։

Այս բոլոր ձևերի մանրամասն թվումը տես բարբառների հատվածում։

Բայական երևույթի գտնագանությունը կարելի է տեսնել նույնիսկ մակբայի մեջ։ Օրինակ՝ եթե ասենք՝

Ֆրանս. il est *encore* malade, չի կարելի իմանալ, թե հիվանդը նոր է հիվանդացել, թե շարունակում է իր նախկին հիվանդությունը։

Բայց եթե ասենք՝

հյ. էլի է հիմանդ, կամ՝ դեռ հիմանդ է,

առաջին դեպքում հասկանում ենք, որ հիմանդը նոր է հիմանդացել, իսկ երկրորդ դեպքում նախկին հիմանդությունը դեռ շարունակվում է։

Այսպես են նաև՝

թրք.	gine	hasta	dər
	daha	hasta	dər

կամ նոր հունարեն՝

εἶναι	πάλε	ἄρρωστος	
«էլի հիմանդ է».			
εἶνα	ἀκόμα	ἄρρωστος	
«դեռ հիմանդ է»։			

(Mirambel, BSL 34, № 102, էջ 140)։

Արևելահայ գրականում էլի զանազանվում է նաև շեշտով. էլի (շեշտը առաջին վանկում) նշանակում է «նորից, դարձյալ», իսկ էլի՛ (շեշտը երկրորդ վանկում) նշանակում է «դեռ, տակավին» և շարունակական է։

ԵՐԵՎՈՒՅԹԸ ՈՒՐԻՇ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

Հնդեվրոպականից դուրս բայական դանազան երևույթներ դեռևս ենք նաև ուրիշ լեզվաընտանիում։

Առնենք նախ սեմական լեզվաբունը։

Այստեղ էլ ժամանակը երկրորդական դեր ունի. իրապես երկուսն է՝ անկատար և կատարյալ. բայց սրանք էլ չեն համապատասխանում մեր անկատարին և կատարյալին. այլ թե գործողությունը վերջացել է, թե չի վերջացել, ուրիշ խոսքով ապառեղ էլ խոսքը տեղեկության մասին է և ոչ թե ժամանակի։ Սրան հակառակ սեմական լեզուները լիքն են բայի դանազան տեսակներով ու երևույթներով։

Այսպես՝ երբայեցերենի բայը, որ ժամանակ չգիտե, առանում է յոթ ձև, որոնք ըստ իրենց կազմության ձևի՝ կոչվում են՝

1. qal ցույց է տալիս մի անգամ կատարված պարզ գործողության.

2. niph'al, նույնի կրավորականն է, որ և անդրադարձ ու փոխադարձ է.

3. pi'ēl, որ մի քանի անգամ կրկնված գործողություն է ցույց տալիս (հաճախականն).

4. pu'al նույնի կրավորականն է.
5. hiph'il ցույց է տալիս անցողականը.
6. hoph'al նույնի կրավորականն է.
7. hithpa'ēl կազմում է փոխադարձ բայ։

(Templer, Hebr. 42, Gesenius, hebr. gr. 61)։

Նույն վիճակը ներկայացնում է սամարերենը, ուր սակայն պակասում են չորրորդ և վեցերորդ ձևերը (Rosenberg, 33)։

Ասորերենում բայը առանում է չորս ձև, որոնց յուրաքանչյուրը ունի ևս երկրորդական ձև, ընդամենը 12 ձև։ Այսպես, օրինակ՝ škn «բնակվել» արմատից առացվում է (պահելով երրայական անուններըը)՝

	1	2	3
qal	šakānu	šitakunu	šitankunu
niphal	naškunu	itaškunu	itanaškunu
shaphel	šuškunu	šutaškunu	šutanaškunu
pael	šukkunu	šitakkunu	šitanakkunu

Սրանցից qal ձևը պարզագույնն է՝ առանց հավելվածի. niphal ձևը կազմվում է արմատի վրա ավելացնելով na- և ունի կրավորականի իմաստ. shaphel ձևը կազմվում է արմատի վրա ավելացնելով ša և առացվում է անցողական բայ. pael ձևը կազմվում է արմատի մեջին ձայնը կրկնելով, որով առացվում է առատական բայ։ Երկրորդ և երրորդ ձևերը կազմվում են ta, tana ավելացնելով պարզ ձևի առաջին վանկից հետո։

(Bertin, 38—42)։

Շատ ավելի հարուստ է արաբերենը, որ ունի 15 տեսակ ածանցական բայ, որոնց նկարագրությունը ավել ենք արդեն Ներածության մեջ (էջ 235—238)։

Արաբերենն ունի երկու ժամանակ՝ māzi և muzārī'. առաջինը (կատարյալ անցյալ) ցույց է տալիս լրացած մի գործողություն, երկրորդը մի գործողություն, որ դեռ տևում է և չի վերջացած, առանց ժամանակի գաղափարի։ Կատարյալը մենք հաճախ ներկա կամ ապառնի ենք թարգմանում. օրինակ՝ «երբ նստավ, քնեց. և երբ քնեց, հանգստացավ». «երբ խոսքդ չկատարեցի, պատժիր».

սրանք բոլորը արաբերեն կատարյալ են, բայց հասկանում ենք իբր ներկա կամ ապառնի։ Aoriste-ը *չվերջացած մի գործողություն է. օրինակ՝ «Ամսված ահնում և կառավարում է աշխարհը». նաև ցույց է տալիս մի գործ, որ թեև արժմ է սկսած, բայց չի վերջացած. օրինակ՝ «ես քիզ սիրում եմ»։ Նա կհամարվի ապառնի, երբ նախադասության միտքը այդպես է պահանջում. օրինակ՝ «Ամսված վարձատրում է դատաստանի օրը» (իմա ապառնի)։*

*Սեմական լեզուների մեծ մասը մի դեպք պատմելիս գործածում է կատարյալ ձևը (*Brock. Précis, 150)։

Արաբերեն aoriste-ը *չունենալով ժամանակի հետ կապված նշանակություն, ժողովուրդը այժմ ստիպվել է ստեղծել նոր ձև. ներկան որոշելու համար* aoriste-*ից առաջ դնում են* عمّال ‘ammal *«գործող» բառը ար. եզ.,* ‘ammālīn *հոգ. ար.,* ‘ammālat *իգ. եզ.,* ‘ammālāt *հոգ. իգ. կամ ավելի հաճախ* عمّ ‘amm *բոլոր դեպքերում. օրինակ՝*

‘amm *կամ* ‘ammāl yaktub *«գրում է»*
» » ‘ammālat taktub *«նա գրում է»։*

(Belot, 159)։

Նույն ոճով կազմվում է անկատարը։

(Անդ, 160)

Արաբերենի մեջ գործածության քանի անգամ կատարված լինելը այնքան կարևոր է, որ հնարել են առանձին ձև. բայարմատի վրա դնում են -tun, *ինչպես՝* ḍarbatun *«մեկ անգամ զարնել»,* ikrāmatun *«մեկ անգամ պատիվ տալ»,* taqallubatun *«մեկ անգամ փոխվիլ». եթե բառը արդեն* t *ունի, դնում են* vāhidatun *«մեկ» բառը. ինչպես՝* iǰābatun vāhidatun *«մեկ հատիկ պատասխան». և կամ* la ɣayru *«ոչ ուրիշ»,* faqaṭ *«և միայն մի» բառերը. ինչպես՝*

aǰāba iǰābatan faqaṭ *կամ* la ɣayru
«պատասխանեց պատասխան մի կամ ոչ ուրիշ» (պատասխանեց).

(Belot, 78)։

Գործելու եղանակը ցույց տալու համար Բարեով. *ինչպես՝*

katbatun *մեկ անգամ գրել.*
kitbatun *եղանակ գրելոյ։*

(Belot, 79)։

Ուգրո-ֆիննական լեզուների մեջ էլ բայն ունի հաճախական և վայրկենական ձև. սրանցից առաջինը ցույց է տալիս «երկարող անգամ կրկնված գործողություն, կամաց-կամաց առաջացող, երկար տևող, կամաց սկսող կամ նպատակով առաջ ելող գործողություն»։ Իսկ վայրկենական բայը մի անգամ սկսած կամ վերջացած գործողություն է։ Այս բոլորի համար կան զանազան ձևեր, որ կազմվում են արմատի վրա կցելով զանազան մասնիկներ. ինչպես՝ հունգ. döf *«զարնել»,* döföl *«շարունակ զարնել» և այլն։ Վոգուլ.* min *«երթալ»—*miñγl *«կամաց-կամաց երթալ» և այլն։*

Ֆիննական ուդմուրտ լեզվում հաճախական ձևը կազմելու համար արմատի վրա դնում են lə *մասնիկը. ինչպես՝*

dur-ənə *«երկաթը ծեծել, կռել».*
durə-lə-nə „поковывать“.

(Горохов, 126)։

Կովկասյան ինդուջ լեզվում բայն ունի երեք կերպ (ըստ Мальсагов, 64). *օրինակ՝*

lallä *«վանել, քշել»*
laxkä *«շատերին վանել»*
lexkä *«շատ անգամ վանել»։*

Մոնարխման մեջ էլ բայն առանձին ձև (անդ, էջ 66). ինչպես՝

so vä *«ես եմ»* so vac *«ես չեմ»*
so viy *«ես եմ»* so veci *«ես չեմ»։*

Ջամալիրենում բայն ունի երեք երևույթ.

1. Գործողությունը տևական է արժմ կամ եղել է անցյալում և դեռ չի վերջացել (առաջին դեպքում մեր ներկան է, երկրորդում՝ անկատարը)։

2. Գործողությունն արդեն վերջացած է. կազմվում է sampun *բառի հարադրությամբ, որ նշանակում է «արդեն». համապատասխանում է մեր կատարյալին կամ հարակատարին։*

3. Գործողությունը մտադրված է կատարել ապագային, բայց միևնույն է թե տևական է լինելու, թե վերջանալու. կազմվում է baḍé *բառով և համապատասխանում է մեր ապառնիին։*

(Bohatta, Gramm. jav. 69—70)։

Ճապոներենում գործողության տևական թե վերջացած լինելը նույնպես շատ աշագրությամբ բացատրվում է. iru, oru, iraššaru

ժամանակներով (որոնք նշանակում են «կալ, գտնվել») կազմված բազմաթիվ ձևեր կան նեղկալի, prétérit-*ի, ապառնիի երկու առաջինների այս նրբութիւններըը դուրս բերելու համար. օրինակ՝ «թռչունները բույն են շինում»՝ այն մարդով, որ նրանց բնութեան մեջ կա բույն շինել (սովորական և չվերջացած) ուրիշ նեղկա է և ուրիշ է, եթե ուզենանք ասել, թե թռչունները բույն շինելիս են: «Ըստ սովորութեան այս առավոտ ժամը 6-ին եկավ», եթե եկավ և դեռ այնտեղ նստած է, ուրիշ կառարլալ է, իսկ եթե գնացել է, ուրիշ կառարլալ է: Նույն է նաև եթե ասենք՝ «երեկ պիտի գնար» (սովորական) և «երեկ գնացած պիտի լիներ (վերջացած) և այլն:* (Plaut, 98—102):

Հնդկական նեվարի լեզվի մեջ շատ երեսլիներ կան, իսկ ժամանակի մեջ շատ զանազանութիւն չկա (Jorgensen, 5):

Հիպերբորյան յուկագիր լեզվում երեսլիը հինգ սեռակ է.

ա) Մի անգամ միայն կատարված գործողութիւն և այն էլ կարճ ժամանակի համար. մասնիկն է i. *օրինակ՝* pandei *«մի անգամ եղնել»:*

բ) Գործողութիւնը մի քիչ ժամանակ երկարել. մասնիկն է či. *օրինակ՝* pandeči *«մի քիչ եղնել»:*

գ) Գործողութիւնը մի քանի անգամ կատարել (itératif). *մասնիկն է* nu. *օրինակ՝* pandānu *«եղել բազմիցս»:*

դ) Գործողութիւնը շատ անգամ կատարել. մասնիկն է nu-nu, *որ նախորդի կրկնականն է. օրինակ՝* pandā-nunu *«շարունակ եղել ընդհատումներով»:*

ե) Երկարատև գործողութիւն՝ շարունակութեամբ կամ կրկնողութեամբ. մասնիկն է yi. *օրինակ՝* pandá-yi *«երկար եղել»:*

Կարելի է նաև կազմել այս ձևերի խառնուրդները, ինչպես՝

inu,	inunu.	*մի գործի կրկնութիւնը*
činu,	činunu.	*նվազական — itératif*
yinu,	yinunu	*սովորական — »*

Իսկ me *նախամասնիկը ցույց է տալիս մի գործողութիւն, որ դեռ վերջացած չէ, բայց վերջանալու վրա է և կամ հենց նոր է վերջացել:*

(Jochelson, 131—132):

Տունգուսական էվեն (= լամուտ) լեզուն ունի 19 սեռակ երեսլի (Цинцинус, 172):

Ամերիկյան վապո լեզուն ունի շատ բայական երեսլիներ, որոնք են՝ վայրկենական, կրկնական, բաշխական, հաճախական, շարունակական, ընդմիջական, կասածական, ինտենսիվ, նվազական, սովորական, հանդարձ, գործադրական, հորդորական (momentané, itératif, distributif, répétitif, continuatif, discontinuatif, dubitatif, intensif, diminutif, duratif, responsive, usitative, hortatif) *այս զանազան ձևերը կազմվում են հինգ սեռակ ձևափոխութեամբ.*

1. *բայարմատի նախաձայն բաղաձայնը վերածելով սարբեր սառիճանի.*
2. *բայարմատի միջին ձայնավորը վերածելով երկարբարբառի.*
3. *վերջին ձայնավորի երանգը փոխելով.*
4. *վերջին ձայնավորը հապավելով.*
5. *ավելացնելով մի բաղաձայն:*

(Radin, 24, 108—109):

Բայերի երեսլիի համար զանազան լեզվախմբեր սարբեր մասածողութիւն ունեն:

Աֆրիկյան լեզուները երեք բնույթ (aspect) *են տալիս բային.*

1. Երբ գործողութիւնը ձեռք բերված կամ կատարված է. կարող է լինել թե նեղկա և թե ապառնի. օրինակ՝ պիտի երթա:

2. Երբ գործողութիւնը ձեռք բերված կամ վերջացած է. մեր նեղկան ու անցյալ կատարյալն է. ինչպես՝ գիտեմ, հասկանում եմ, մեծ է, հաճելի է, կերա:

3. Երբ գործողութիւնը նեղկայում կամ ապառնիում պիտի կատարվի մի ուրիշ գործողութիւն կատարումից հետո միայն:

Ըստ Համբուրգերի (MSL, 19, 225) *«աֆրիկյան լեզուները չեն որոշում եղանակները, այլ ավելի բայի երեսլիները, այն է գործողութեան վերջանալը կամ սևողութիւնը, կատարելականը կամ անկատարականը, որոշ կամ անորոշ մի գործողութիւն, անկախ, թե մի ուրիշ գործողութիւնից հետևող մի գործողութիւն: Ընդհակառակը ժամանակը արժեք չունի. գործողութիւնը տեղի է ունենում, տեղի է ունեցել, թե պիտի ունենա, չի նշանակվում. դա ենթադրվում է, թե ծանոթ է և կամ հասկացվում է նախորդ մի ուրիշ նախադասութեան միջոցով»:*

Կովկասյան լեզուներն էլ ճանաչում են բայական երեսլիը, որի համար սսեղծել են զանազան նրբութիւններ:

Կասպյան լեզուները ընդհանրապես երեք երեսլի ունեն. վայրկենական, սևական և կրկնական (նաև կա inchoatif). *այսպես*

են օրինակ խյուրկանների, յակերեն, չեչնեներեն և այլն, յուրաքանչյուրը մի առանձին ձևով և կազմությամբ։ (Dirr, 346)։

Լակերենում (Կումկա) բայը ունի երեք երևույթ.

1. Սկսած կամ սովորական դործողություն։
2. Կանոնավորապես կրկնված կամ սեական։
3. Շատ անգամ կրկնված (itératif).

Օրինակ՝ ḫač «խմել» արմատից՝

ḫač-an «խմել», ḫač-lan «նորից խմել».
ḫač-aban «հաճախ խմել, շատ անգամ խմել»։
(Dirr. Einî. 246 և 346)։

Սրանից անցաժան է pluralitäts verben, որ ցույց է տալիս ենթակայի մի քանի անձինք լինելը. օրինակ՝ բացերենում, չեչնեներենում, տաբասարանում և այլն. օրինակ. տաբաս. kur «մեռնել» (մեկ հոգու մասին), ixuz (շատերի մեռնելը), աուս. iq «մեռնել» (մեկի), qərq «մեռնել» (շատերի), ծախուր. ḳk «մեռնել» (մեկի), ht (շատերի), արչի ḳ (մեկի), x (շատերի)։ (Dirr. 347)։

(համմ. մեռնիլ — մեռոտիլ! ձևը)։

Երևույթը կարևոր դեր ունի նաև վրացերենում. ներկա ապրիստը և կատարյալը դանազանվում են իրարից երևույթով և ավարտված կամ անավարտ լինելով. այսպես՝

անկ. վտիրդի «լալիս էր» (ներկ. վտիրի) անցյալ է, բայց ցույց է տալիս սեական գործողություն, իսկ ապրիստը վտիրե «լացի» միայն անցյալ է և սեռողության դաղափար չունի, չի նշանակում սակայն, որ ապրիստը բոլորական է, այլ կարող է լինել թե բոլորական և թե սեական. օրինակ՝ սկսեց լաց լինել (բոլորական է), կամ ապրճանակ արձակեց (բոլորական է). իսկ նա թադավորեց 20 տարի (սեական է)։ Բայեր կան, որ ըստ իրենց իմաստի սեական են կամ բոլորական. օրինակ՝ ցատկել բոլորական է, լալ մի քիչ ավելի սեական, որոճել շատ ավելի սեական. եթե բոլորական մի բայի անկատարը վերցնենք, որովհետև չի կարող լինել սեական, սատ կդառնա մի քանի անգամ կրկնված. այսպես՝ վլատղի «ցատկում էր» (անցյալում մի քանի անգամ)։ Մի քանի բայեր, որոնք բացարձակապես սեական են, ունեն միայն մի անցյալ, որ թե ապրիստ և թե անկատար է. օրինակ՝ վիծեքի «քնած էի և քնեցի»։ Կան բայեր, որոնց ներկան ուրիշ արմատ է, ապրիստը ուրիշ արմատ. օրինակ՝ վեւրնների «տառում եմ նրան», վոթիտարի «տատցի նրան»։

Այս բոլորը խոչընդոտում են մի ուրիշ հակադրության, որ է ավարտված և անավարտ, առաջինը այն է, որ դիտում է իր նպատակին կամ վախճանին, իսկ երկրորդը՝ որ չունի այդպիսի նպատակ. օրինակ՝ դերմ. ich esse «ուտում եմ», ich esse aus «ուտում վերջացնում եմ». այսպես և վրաց. վիտիրե «լացի» (անցյալ, առանց սեռողության և առանց նպատակի), իսկ դամովիտիրե «լացի» (արցունք թափեցի) = դերմ. ausweinen, աուս. выплакал (անցյալ, առանց սեռողության, հասած իր վախճանին)։ (Vogt. 223—235)։

Այժմ օրինակ առնենք ամերիկյան հնդահոս լեզուն։ Եվ որպեսզի բայի թվի ու դեմքի նրբությունները չխանգարեն մեզ, առնենք «ձյունել, ձյուն գալ» բայը, որ անդեմ լինելով, չունի հոգնակի կամ երկակի թիվ և գիտե միայն եզ. երրորդ դեմք։

Արմատն է yas, zas, որ իբրև գոյական նշանակում է «ձյուն», և իբրև բայ՝ «ձյունել»։

Այս բայի ժամանակի՝ ըստ երևույթների եղանակավորման համար կա 13 ձև, որոնք հետևյալներն են.

dočił	պիտի սկսի ձյունել
dičił	սկսում է »
dežčil	սկսեց ձյունել
nčil	ձյունում է (կը ձյունե կոր)
adočił	պիտի դադարի ձյունել
ičił	սկսում է դադարել ձյունել
ičil	դադարեց ձյունել

այլ ձև՝

idinodzas	պիտի սկսի ձյունել
inidzas	սկսում է »
inidzaz	սկսեց »
dodzas	այժմ պիտի ձյունե
yidzas	ձյունում է (շարունակական)
yidzaz	ձյունեց (բայց դեռ շարունակում է)։

Բայը կարող է առանալ դանազան (թվով մի քանի տասնյակ) մակբայական մասնիկներ, ինչպես նաև դառնալ առարկայական (այսինքն իր մեջ առնել առարկան նշանակող դերանուն խընդիրը)։ Բայց առարկաներն էլ կարող են տարբեր լինել ձևով, դիրքով ու օրակով. և այս բոլորի համար կան դանազան ձևեր և մասնիկներ։

Հաջորդ բոլոր օրինակները նշանակում են «վերցված է» (կրավորականի անցյալ ժամանակը՝ անցեմ բայի ձևի տակ), բայց նրանք տարբերվում են իրարից ըստ այն առարկայի, որ վերցված է.

ätą	հատատատան կամ ոչ հեղուկ մի բան
äǰa	կոճակ, շաքար, հատեղեն և այլն
älya	կաթ չվան կամ թել
älǰol	բարդ, չոր խոտ
ältsos	չվան, այծի կաշի, բրդե վերմակ
ätxą	հրացան, ձող, թի
ältxǰ	ոչխար, այծ, երեխա
äką	հեղուկ բան
at'ež	կառք
ädlos	անասուն
älžod	dragged because of its bulk
ädzǰz	» by the leg or arm
älmąz	rolled along
älbąz	» on wheels
älǰid	packed away
ägł	loaded away

Յուրց տալու համար, թե այսպիսի եղանակավորումները ինչպիսի խճողում կարող են առաջացնել լեզվի մեջ. հիշենք օրինակ այս նավահո լեզվի եղանակավորման ձախնական մի հանդամանքը։ Արմատը մասնիկների հետ միանալու ժամանակ, արմատի նախաձայնը խառնվելով մասնիկի վերջաձայնի հետ՝ առանում է նոր կերպարանք։ Այս խառնուրդից առաջացած ձայնափոխությունները այնքան շատ և այնքան բազմազան են, որ նավահո լեզվի քերականության հեղինակը դրանց ուսումնասիրության համար նվիրել է ամբողջ 120 էջ (B. Haile, A manuel of Navaho grammar, Arizona, 1926, 167—287)։

9. ԲԱՅԱԿԱՆ ՍԵՌԸ

Բայի սեռ ասելով հասկացվում է այն առնչությունը, որ կա կատարված գործողության և ենթակայի միջև։ Այսօր մենք այս առնչությունը ըմբռնում ենք շատ ձևով.

1. Ենթական *գործում* կամ *ազդում* է մի առիթի վրա և այդ առիթը ենթարկվում է նրան. ինչպես՝ ծեծել, կտրել, սպանել։ Սրանք կոչվում են ներգործական բայ։

2. Ենթական *ազդվում* է մի առիթից կամ ենթարկվում է նրան. ինչպես՝ ծեծվել, սպանվել։ Սրանք կոչվում են կրավորական։

3. Ենթական *դանվում* է մի որևէ վիճակի մեջ՝ առանց առիթի ներգործության. մեռնել, քնել, զարթնել. կամ կատարում է մի գործողություն՝ որին չի ենթարկվում առիթը. ինչպես՝ քայլել, լողալ և այլն։ Սրանք կոչվում են չեզոք։

4. Վերջապես կա մի այնպիսի վիճակ, որ ենթադրվում է, թե ենթական գործող և ազդվող է միանգամայն, այսինքն գործողությունը կատարում է ինքն իր վրա. ինչպես՝ լվացվել, սանրվել, հագնվել։ Սրանք կոչվում են կրավորաձերպ չեզոք կամ պարզապես կրավորաձերպ։

Հարցը ներկայացնելով այսպես, սեռի գաղափարը չափազանց պարզ է ու հասկանալի, բայց քննելով մի քիչ ավելի մանրակրկիտ կերպով, տեսնում ենք, որ նա դառնում է բավական խառնակ ու շփոթ։

Օրինակ՝ սպանվել կրավորական բայ է և ընկնել ու մեռնել չեզոք, բայց իսկապես ինչ տարբերություն կա, երբ ասենք, թե «նա մարդասպանի դանակով սպանվեց, նա մարդասպանի դանակով ընկավ (իմա գցվեց), նա բժշկի դեղից մեռավ (իմա մեռավ)»։ Այդ բոլորը միևնույն գաղափարներն են և քերականական ձևերն են, որ գանազան են. մեկը կոչում են կրավորական և մյուսը՝ չեզոք։

Այս պատճառով ահա շատ անգամ բայի սեռը որոշել չափազանց դժվար է լինում, որովհետև գանազան ազգեր տարբեր հայացքով են նայում խնդրին. օրինակ՝ հավանել բայը արևմտյան հայոց մեջ չեզոք է, իսկ արևելյան հայոց մեջ ներգործական (կարագին կհավնի՞ք — կարագը հավանո՞ւմ եք), որովհետև արևմտյանները հավանել *ըմբռնում* են իբր թե «համաձայնել, հաճել», իսկ արևելյանները «լավ գտնել, լավ համարել, ընտրել»։ Նույնպես տիրել թե գրաբարի և թե արևմտահայ բարբառի մեջ չեզոք է, իսկ արևելահայ բարբառի մեջ ներգործական (տիրեցաւ քաղաքին — քաղաքին տիրեց — քաղաքը տիրեց). առաջինները *մտածում* են իբր «տիրանալ, տեր դառնալ», մյուսները «գրավել, նվաճել»։ Նմանապես նայել գաղափարը հայերենում չե-

գոք է, իսկ ֆրանսերենում ներգործական (regardez les gens qui passent.— սա ուցցնողներուն նայեցեք)։ Միևնույն ἔχω «ունեմ» բայը հուն. ներգործական է այս իմաստով, բայց կարող է դառնալ չեզոք. ինչպես՝ κάκως ἔχω «առողջ չեմ»։ Ֆրանս. monter «բարձրանալ» չեզոք է, երբ ասում ենք la mer monte «ծովը բարձրանում է», բայց ներգործական է, երբ ասում ենք monter un cheval «ձի հեծնել» և դրա համար էլ առանում է առաջին դեպքում être օժանդակը, երկրորդ դեպքում avoir.

Բնական ձևով դասելով՝ բայը պետք է ներկայացնեն ենթակայի համար գործ կամ վիճակ. այսպիսով կրավորականը դեղչվում է. կրավորականբայը արդեն չեզոք է. սրեմն մնում են միայն ներգործական և չեզոք։ Այսպես՝ Գրիգորը ծեծում է ներգործական դադափար է. Գրիգորը քնում է չեզոք դադափար է, բայց նաև Գրիգորը ծեծ է ուտում թեև կրավորական, բայց դարձյալ ձևով ներգործական է և կամ չեզոք։ Այսպես և լտ. vapulo «ծեծ ուտել», որ գադափարով պիտի լիներ կրավորական, ըստ ձևի ներգործական է, իսկ բառարանում համարվում է չեզոք, ըստ որում ներկայացնում է վիճակ։ Երբեմն նույնիսկ ներգործականն էլ չի ցույց տալիս ուղղակի գործողություն, այլ վիճակ. օրինակ՝ երբ ասում ենք Գրիգորը սիրում է Պետրոսին, ներկայացնում է մի վիճակ, որ ունի Գրիգորը հանդեպ Պետրոսը կարող է մինչև իսկ անտեղյակ լինել կամ ինալ Գրիգորի սիրուց։

Այսպես դասելով՝ պիտի ըմբռնենք միայն երկու սեռի բայ. մեկը այն՝ որ իրապես ներգործական է (ծեծել, ապանել). մյուսն այն, որ կարելի է կոչել կրակաև (effectif) և որ պարունակում է մյուս բոլոր տեսակի բայերը, ուր ենթական կատարում է ոչ թե գործ, այլ ունենում կամ առանում է որևէ վիճակ, կացություն դրսի աշխարհից։

Այսպիսի մի վիճակ է ներկայացնում բայը բոլոր կովկասյան լեզուներում։ Սրանց մեջ բայը ըմբռնվում է երկու ձևով. ենթական դեպի գործում, թե՞ դեպի ներս է առանում. սրիշ խոսքով՝ առհասարակ կատարված գործողությունը կամավո՞ր է թե ակամա. օրինակ՝ նայել, դիտել, ճոտռտել, ականջ դնել մեր ներսից դեպի գուրս են գնում և կամավոր են, իսկ սրանց հիշտ դեմ առ դեմ համապատասխան բայերը՝ տեսնել, երևալ աչքին, ճոռ առնել, լսել դրսից մեր մեջ են գալիս և ակամա են։ Նմանապես խոսել, երթալ և այլն կամավոր են, իսկ քնել, անքուն մնալ, նսկել ակամա են։

Ըստ այսմ բայերն ունեն երկու լծորդություն և խոնարհում։ Առաջինը (կամավոր) ներգործական խոնարհումն է, երկրորդը (ակամա) կրական խոնարհումն է։ Օրինակ՝ վրացերենում միևնույն բայը լինում է՝

ներգործական		կրական	
visurveb	«ցանկանում եմ»	misurs	«ինձ ցանկություն կա (իմ մեջ)»
viqvareb	«սիրում եմ»	miqvars	«ինձ սեր կա (իմ մեջ)»

Կան բայեր, որոնք կարող են ըմբռնվել երկու ձևով և գործնականում միաժամանակ ունեն երկու խոնարհում. այսպես են վերի օրինակները։ Ուրիշները ըստ իրենց նշանակության պատկանում են մեկին կամ մյուսին։

Այսպես ներգործական են՝

vxedav	«անում եմ»
vcer	«գրում եմ»

կրական են՝

mesmin	«լսում եմ»
mdzera	«հավատում եմ»
mgonia	«մտածում եմ»։

Համեմատությունից երևում է, որ ներգործականի կազմիչ նշանն է v, կրականի m, սրանք դերանունների միացորդներն են, առաջինը իրր ուղղ. «ես», երկրորդը իրր սրկ. «ինձ», կամ այսպես են ըմբռնված։ Մյուս դեմքերի համար համմտ.

		ներգործական		կրական	
եզ.	1.	v-a-k'-eb	դրում եմ	m-i-qvar-s	սիրում եմ
	2.	a-k'-eb	» ես	g-i-qvar-s	» ես
	3.	a-k'-eb-s	» է	u-qvar-s	» է
հոգ.	1.	v-a-k'-eb-t'	« ենք	gv-i-qvar-s	» ենք
	2.	a-k'-eb-t'	» եք	g-i-qvar-s-t'	» եք
	3.	a-k'-eb-en	» են	u-qvar-s-t'	» են

Ուր որ շփոթություն պիտի լիներ թվի կողմից՝ ավելացված է հոգնակիի t' մասնիկը։

Բայական սեռի ըմբռնման այս եղանակը գտնվում է նաև հին իրանականի, նոր հնդկական լեզուների և աֆղաններենի մեջ

(Karst, Einführ. 76)։ *Բայց ընդհանրապես հնդեվրոպական լեզուները այնպիսի զանազանության չունեն, թեև կարող են նույն մտածմունքը ուրիշ կերպով արտահայտել. ինչպես՝*

ներգործական	կրական
կարծում եմ	*ինձ թվում է*
տեսնում եմ	*ինձ երևում է*
սիրում եմ	*ինձ սիրելի է*
մտածում եմ	*միտքս է գալիս*
զարմանում եմ	*ինձ զարմանալի է թվում*
ատում եմ	*ինձ ատելի է*

Նույնն է, որ այժմ էլ Կովկասում ասում են ոմանք — ինձ ունեմ, քեզ ունե՞ս և այլն։ Արևելահայ գրականը ասում է ինձ հաջողվեց տեսնել (կրական), մինչդեռ արևմտահայը ասում է նույնի փոխարեն՝ ես հաջողեցա տեսնել (ներգործական)։

Ֆրանսերենով էլ կարող ենք ասել՝

je crois	m'est avis
je vois	il m'apparaît.

Գերմաներենի մեջ կան մի խումբ բայեր, որ այս ձևով են գործածվում. այսպես՝

es freut mich	*ինձ ուրախացնում է՝ ուրախանում եմ*
es schmerzt mich	*ինձ ցավացնում է, ցավում եմ*
es friert mich	*մրսում եմ*
es jammert mich	*խղճում եմ*
es ekelt mich	*զզվում եմ*
es dünkt mich	*ինձ թվում է*
es wundert mich	*զարմանում եմ*
es reut mich	*ցավում եմ*
es verdriesst mich	*ձանձրացնում է ինձ*
es verlangt mich	*շատ եմ փափագում*
es schaudert mich	*դողում եմ, սոսկում եմ*
es befremdet mich	*ինձ անսովոր է թվում*
es hungert mich	*քաղցած եմ*
es dürstet mich	*ծարավ եմ։*

Սրանցից ոմանք ունեն նաև սովորական ձևը. ինչպես՝ ich freue mich, ich friere, ich wundere mich, ich schaudere, ich hungere *կամ* ich bin hungrig, ich habe Hunger, ich bin durstig, ich habe Durst *և այլն։*

Վերոհիշյալները հայկական խնդրառությամբ էին, բայց ունենք նաև տրական խնդրով բայեր, ինչպես՝

es ist mir leid	*ցավ է ինձ*
es gefällt mir	*ինձ հաճելի է*
es mirsfällt mir	*ինձ անդուր է*
es ekelt mir	*ինձ զզվելի է*
es dünkt mir	*ինձ թվում է, և այլն, և այլն։*

Առնարման ժամանակ լինում է՝

es freut mich
es freut dich
es freut ihn, sie *և այլն։*

Զարմանալի դասդրությունն ունի այս հարցում ամերիկյան կիլիվի լեզուն։ Այս լեզուն բայերի մեջ ճանաչում է միայն երկու սեռ, կրավորական և չեզոք։ Կրավորական են համարվում այն բոլոր բայերը, որոնք կրավորական իմաստ ունեն, թեև ներգործական չեն առաջանում, ինչպես լինում են ուրիշ լեզուներում։ Օրինակ՝ di «gegeben sein, տրվել, տրված լինել», my «gebracht sein բերվել, բերված լինել» չեզոք են։ Չեզոք են այն բայերը, որոնք նշանակությամբ ներգործական կամ չեզոք են և չեն կարող կրավորական կազմել։ Կան բայեր, որոնք ներգործական իմաստ ունեն, ինչպես uca «սիրել», բայց չեն համարվում ներգործական, որովհետև ոչ կրավորական են կազմում և ոչ էլ հյց. հոլով սեռի խնդիր են վերցնում՝ առանց նախադրության, բուն որում այս լեզվում ամեն բայ նախադրությամբ է կազմված։ Ամեն երկիմաստությունից խուսափելու համար կարելի է ասել, թե այս լեզվում բայը կլինի կրավորական կամ ոչ-կրավորական։* (Gabelentz, 16)։

Բայի սեռը ցույց տալու ամենատարած ձևը ներկայացնում է խալդեերենը։ Այս լեզվի մեջ ներգործական և ոչ-ներգործական (intransitif) *զանազանվում են բայի բնի վերջավորությամբ։ Առաջինը վերջանում է* u. *երկրորդը* a. *այսպես* aru «տալ», paru «բռնել», šidištu «հառուցիլ» *ներգործական են և ունեն* u *վերջավորությունը, իսկ* ula «երթալ», ušta «դուրս գալ», ḫašia «ընդ առաջ գալ» *չեզոք են՝* a *վերջավորությամբ։ Շատ լավ օրինակ է* šiu «փոխադրել» *և* šia «այս կողմ անցնել»։ *Առաջինը իրրև ներգոր-*

ծական ունի u հանգը, երկրորդը իրրև չեզոք՝ a հանգը։ Սրանից հետո, խոնարհման մեջ ներգործական և չեզոք առանում են տարբեր վերջավորութիւններ. օրինակ՝ կատարյալում եզ. Ա և Գ դեմքերը վերջանում են ներգ. bi, ni, կրավ. di, bi. հոդնակիում Գ դեմքը վերջանում ներգ. tu, կրավ. li (Friedrich, Einführung ins Urartäische, Leipzig, 1933, էջ 5, և այլն)։

Աֆրիկյան շիգդի (բանաւոր) լեզուն էլ այսպես պարզ է. ներգործականը վերջանում է a, կրավորականը o, ինչպես՝ wona «առնել», wono «առնվիլ» (Raum, 97)։

Ամերիկյան արտակ լեզվում ներգործականի վերջավորութիւնն է in, un, չեզոքի և կրավորականի՝ -unnua. օրինակ՝

assukurs-un	լվալ, լվանալ (ներգ.)
assukuss-unnua	ինքզինքը լվալ, լվացվիլ (կր. չեզ.)
assukussu-kuttunnua	ուրիշի ձեռքով լվացվիլ (կրավ.)
assukussukuttun	«wasche lassen»
ardin	«կծել, խածանել»
ardunnua	«ինքը իրեն կծել, sich selbst beissen»
ardikittin	«beissen lassen»
ardikittunnua	«խածնվիլ, gebissen werden».

(Crevaux-Sagot-Adam, 195)։

Միկրոնեզյան տրուկ լեզվում չեզոքը ներգործական շինելու համար բայարմատի սկիզբը դնում են մի ձայնավոր կամ դանդաղ մասնիկներ. ինչպես՝

gi բարձրանալ,	égi բարձրացնել
su փախչիլ	ásu քշել, վանել։

(Bollig, 277)։

Ամերիկյան դապոտեկ լեզուն բայի սեռը դանդաղնում է շատ հասարակ ձեով. բայի սկզբում դրված a նշանակում է չեզոք, e ղերանվանականը, i կրավորականը և o ներգործականը (Radin, 68)։

Ավստրալիայի նարրինյերի լեզուն մի խումբ չեզոք բայեր ներգործականի վերածելու համար բայարմատի միջի g ձայնը դարձնում է k (Threlkeld, IV, 38)։

Զուլու լեզվի մեջ բայի սեռը երկք է։

1. Կրավորական, որ կազմվում է ներգործականից՝ wa մասնիկով, ինչպես՝ t'anda սիրել, t'andwa սիրվիլ։

2. Չեզոք կամ միջակ և կամ quasi-passive են կոչվում այն բայերը, որոնք ցույց են տալիս մի վիճակ կամ դրութիւն, առանց գործող անձի. մասնիկն է -eka կամ -akala. ինչպես՝

bona «առնանել», bonwa «առնանվիլ» (կրավ.)
bonokala «երեւալ», «առնանելի լինել»
t'anda «սիրել», t'andwa «սիրվիլ»
t'andeka «սիրելի դառնալ»
zonda «առնել», zondwa «առնվիլ»
zondeka «առնելի լինել կամ դառնալ»

(Doke, 127, 130)։

Կան լեզուներ, որ չգիտեն դանդաղանել բայի սեռը, օրինակ՝ սամոերերենում բոլոր բայերն անեն թե՛ ներգործական և թե՛ կրավորական նշանակութիւն. ինչպես՝ gin «հատատաւել» (ներգործական) և «հատատավիլ, կանգնել» (կրավ. չեզ.)։ Բայի այս վիճակը բխում է նրանից, որ բայը նախապես նոյն էր գոյականի հետ (Bertin, 12)։

Հնդեվրոպական նախալեզուն էլ չգիտեր դանդաղանել բայի սեռը. արմատը ինքնին չի կարող ցույց տալ թե բայը ինչ սեռ է. միևնոյն արմատը և միևնոյն բառը թե՛ ներգործական, թե՛ չեզոք և թե՛ կրավորականով է միանդամայն։ Բայց սրանից ներգործական և չեզոք խոնարհվում են միատեսակ։ Օրինակ՝ հյ. ծնայ նշանակում է թե՛ «ծնանց» և թե՛ «ծնվեց». լտ. vorte id «դարձրա» և vorte hac «այս կողմ դարձիր», լիտ. lëku «թողնում եմ» և iš-lëkù «մնում եմ», գոթ. wasjan «հագնվել» և «հագցնել», հն. φέρω «բերում եմ» և διαφέρω «տարբերվում եմ, տատանվում եմ, տարբերվում եմ» և այլն։ Ավելի լավ օրինակ պիտի լիներ, եթե բայական ձև լիներ, յայտնութիւն բառը, որ նշանակում է թե՛ «հայտնել» (ներգ.) և թե՛ «հայտնվիլ» (կրավ.)։

Հնդեվրոպական նախալեզուն ճանաչում է երկու սեռի բայ՝ ներգործական և հասարակ։ Հասարակ է կոչվում այն բայը, որ ցույց է տալիս, թե գործող անձը գործողութիւնը կատարում է իրեն համար, մինչդեռ ներգործականը այս նրբութիւնը չունի*։ Խոնարհման մեջ սրանք զանազանվում են իրարից՝ տարբեր վերջավորութիւններ։

* Մանակիա քերականութեան մեջ ներգործականը կոչվում է parasmāi padam «ուրիշի համար բառ», իսկ հասարակը՝ ātmane padam «իրեն համար բառ»։ (Whitney, Ind. Gramm. 194)։

Ահա մի քանի օրինակ.

Հն. θύω նշանակում է «զոհ եմ անում», բայց սրա հասարակը θύομαι «զոհաբերում եմ մի որևէ բան ձեռք բերելու համար»: Վե դասերում քահանան, որ զոհ է կատարում ժողովրդի համար՝ ասում է yáĭami «զոհում եմ», իսկ այն անձը, որի համար կատարվում է զոհաբերությունը և որ քահանայի հետ մասնակցում է արարողությանը, ասում է yáje «զոհ եմ անում ինձ համար» (հասարակ):

Հն. ἄγει, սանս. áĭati նշանակում են «առնում է, առաջնորդում է», իսկ սրանց հասարակը հն. ἄγεται, սանս. áĭate «առնում է իր համար կամ իրեն հետ»:

Հն. λούω «լվանում եմ», իսկ հասարակը λούομαι «լվացվում եմ», λούομαι τὰς χεῖρας «ձեռքերս լվանում եմ» (հասարակ և ոչ ներգործական):

Սանս. gácchati «գնում է» (ներգործական!), իսկ հասարակը sáṃ gaccĥate «հանդիպում է մեկին»:

Այս կարգի բայերը իրենց նշանակությամբ կրավորակերպ են մեզ համար, բայց հնդեվրոպական նախալեզվի համար այդպես չէր. և շատ անգամ հասարակ բայի իմաստի այս նրբությունը աննկատելի է լինում, ինչպես, օրինակ՝ վերի «հանդիպել» ձևի մեջ: Հունարենում ապառնի ժամանակը խոնարհվում է հասարակ բայի ձևով:

Գալով կրավորականին, նոր քննությունները ցույց են տալիս, որ հնդեվրոպական նախալեզուն թեև ուներ նախապես բայի այդ սեռը, որ կազմվում էր r-ով (ինչպես ցույց են տալիս կամիս., թոխար. և լտ.), բայց հետո շատ լեզուներ ջնջեցին. սրանց մեջ տիրապետեց ներգործականի գաղափարը. նրանք սկսեցին պատկերացնել գործողությունը միայն իբրև գործ՝ այսինքն արդյունք որևէ ենթակայի: Ավելի հետո հասարակ ձևը սկսեց գործածվել իբրև կրավորական, քան որում նա շատ ավելի մոտ էր նշանակությամբ և հաճախ նույնանում էր նրա հետ. այսպես՝ արիականում, հունարենում և գոթականում:

Շատ բայեր ընդունակ են թե՛ իբրև ներգործական, և թե՛ իբրև հասարակ գործածվելու. կան որ իրենց նշանակությամբ միայն հասարակ են (ինչպես՝ «հետևել», սանս. sácate, գնդ. hačaite, հն. ἕπεται, լտ. sequitur, հիբ. sechethar, բոլորն էլ հասարակ կամ կրավորական). ուրիշներ՝ ներկայում և ապրիստում հասարակ են, իսկ կատարյալում ներգործական (ինչպես հն. γίγνομαι, ἐγενόμεν, բայց γέγονα):

Հետագայում լեզուների մեջից ջնջվում է հասարակ բայը. այսպես եղավ նաև հնում և արիականում՝ պատմական շրջանում:

Նոր լեզուների մեջ զանազանվում են չորս սեռի բայ. ներգործական, չեզոք, կրավորական և կրավորակերպ, այն էլ լեզվից լեզու այնպես տարբեր է, որ բայի սեռը որոշելու լավագույն միջոցը լինում է խնդրառությունը. բայը ներգործական է, երբ ունի հյց. սեռի խնդիր, ապա թե ոչ՝ չեզոք է: Ամենամեծ նրբությունը արժանի է առանց որևէ սեռ ցույց տվող նշանի: Վերը (III հ., էջ 118—173) բարդությանց մեջ տեսանք հայերենի մեջ այս կարգի օրինակներ. ինչպես՝

ջրածին — ջրից ծնված, ջուր ծնող
մարդասար — մարդ սանող, բայց՝
ջրասար — ջրից տարված և այլն:

Այսօր հայերենի այս հատկությունը նեղության է պատճառում ամենց և ստեղծում են օրինակ՝ ձգվածություն, լարվածություն և նման բաներ: Մեր Ակադեմիայի հրատարակած մի աշխատության մեջ (Խաչատյանց, Синтетические душистые вещества, Երևան, 1947, էջ 63) կարդում եմ. «Հոտավետ նյութերից հատուկ հիմնական հատկություններից մեկն էլ նրանց ցնդողականությունն է»: Հայերենում այսպիսի բան չկա. ասում ենք միայն ցնդակայություն և հասկանում ենք «ցնդվելու հատկություն»:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Հետաքրքրական է դիտել այն բոլոր ձևերը, որ զանազան լեզուներ հնարել են կրավորական բայ կազմելու համար:

Ձևաբանության համար կրավորական ձև չկա, այլ զանազան գործածություններով դրա է բերվում այն: Այսպես՝

1. Ներգործական բայի միջոցով. օրինակ՝

čē-ko žen tsei pa t'a ta-sə la
այս մարդը գողերը զ նա սպանե- ցին:

2. čiāo «առիթ տալ, տեղի տալ, պատճառել» բայը ավելացնելով. օրինակ՝

čē-ko žen čiāo tsei pa t'a ta-sə la
այս մարդը առիթել գողերը զ նա սպանե- ցին:

3. կամ նաև pei «կրկել, ենթակա լինել» բայով, օրինակ՝

pei žən xung

ենթակա լ. մարդիկ խաբել = «խաբվել»։

(Seidel, Chin. Gramm. 184)։

Ճապոներենում կրավորական կազմելու համար ներգործական բային կցում են areru բառը, որ կազմված է aru «լինել» և eru «առանալ» բայերից։ Այսպիսով, օրինակ ուսվել կրավորականը բացատրվում է «առել լինել առանալ» ձևով։

(Plaut, 217)։

Ամերիկյան անհաս լեզվի մեջ կրավորական կազմելու համար ներգործական ձևի վրա ավելացնում են i. ինչպես՝

i-üvlo-r-ho	սիրում եմ	i-üvlo-r-i-ho	սիրում եմ
a- „ b-ho	սիրում էի	a-üvlo-b-i-ho	սիրվում էի
e- „ n-ho	պիտի սիրեմ	e-üvlo-n-i-ho	պիտի սիրվեմ ևայլն։

(Haumonté, 23)։

Ամերիկյան կահիտա լեզվով կրավորականը կազմվում է u մասնիկով, ինչպես՝ eria սիրել — eriaua սիրվել (Buelna, 7)։ Բայց այստեղ կա այն զարմանալի հրեությը, որ մինչդեռ ներգործական խոնարհման մեջ դերանունները դրվում են բայից առաջ, կրավորականի մեջ դրվում են հետո և բայի հետ մի բառ են կազմում։ Օրինակ՝

eria	սիրել			eriaua	սիրվել
ane eria	սիրում եմ			eriauane	սիրվում եմ
aque	»	ես		eriauae	»	ես
a	»	է		eriaua	»	է
ate	»	ենք		eriauate	»	ենք
aquem	»	եք		eriauaem	»	եք
aquim	»	են		eriauaim	»	են
անկ.	ane eriat	սիրում էի		eriauatne	սիրվում էի
կոր.	ane eriac	սիրել եմ		eriauacne	սիրվել եմ
դեր.	ane eriacat	սիրել էի		eriauacatne	սիրվել էի։

(Buelna, 61—63)։

4. Տանգուսերենում կրավորականը առանում են ներգործականի վրա ավելացնելով -vu մասնիկը, իսկ մանջուրերենում համապատասխան -bu մասնիկը. ինչպես՝

sulâ-m	թողնել	su-lâ-vu-m	թողնվել
aya-m	սիրել	aya-vo-m	սիրվել
suru-m	առնել	suru-vu-m	առվել։

(Adam, Gramm. tong. 59)։

Կրավորականի համար w մասնիկը գործածելու սովորությունը կա շատ լեզուներում. օրինակ՝

Բանտու ընտանիքում անհաս լեզվում կրավորական կազմելու համար բայի վերջին ձայնավորից առաջ դրվում է w կամ iw ինչպես՝

kwata	առնել, վերցնել — կրավ.	kwatwa
dya	ուտել	»	diwa	ուտվել
ba	գողանալ	»	biwa	գողացվել
bala	ծնել	»	boiwa	ծնվել։

(Anderson, 29)։

Նույն ընտանիքից կագաբա լեզվում դրվում է նմանապես w, օրինակ՝

kwenda սիրել, kwendwa սիրվել։

(Last, 84)։

Նույնը լունդաբա, (Mąddox, 34), մաշոնա (բանտու), բենգա (բանտու) լեզուներով (Maskey, 44)։ Այդպես և աֆրիկյան բանտու ընտանիքից յաո լեզվով. օրինակ՝ kukumula «բռնել»,— kukumulwa բռնվել (Hetherwick, 45)։

Մալայո-պոլինեզյան բռնատիպ-իդորոա լեզվում կրավորական կազմելու համար բայի յուրաքանչյուր ժամանակի համար կա առանձին նախամասնիկ, որ դրվում է ներգործականի համապատասխան ժամանակի վրա, այսպես՝ ներկայի համար ma-, անցյալի համար na-, ապառնիի համար adma-. և որովհետև ներգործականի ապառնին կազմվում է ad- նախամասնիկով, ուրեմն հետևում է, որ ընդհանրապես կրավորականի նախամասնիկն է ma- կամ na-։ (Seidenadel, 93)։

Ամերիկյան կարաիբյան լեզվի մեջ կրավորականը կազմվում է okoatina էական բայով, որ անի իր բոլոր ժամանակները, թվերն ու դեմքերը, որոնք կցվում են ներգործական բային. ինչպես՝

arameta «թաքցնել» անորոշից՝

arameta-okoatina «թաքնվում եմ»։

(R. Breton, Gramm. Caraibe, 51)։

Մոն-քմեր խասի լեզվի մեջ կրավորական կազմելու համար նախ դնում են ժամանակ կազմող մասնիկը, ապա՝ բայը առանց դեմքի, ապա՝ ենթական հայցականի. հոլովով (ia). *օրինակ՝*

dang	ïeit	ia	ngā
(ներկ.)	*սիրել*	*զ*	*ես = սիրում եմ.*
la	ïeit	ia	ngā
(անկ.)	*սիրել*	*զ*	*ես = սիրվում էի:*

(Grierson, II, 10):

Հնդկական քաշմիրի լեզվով կրավորական կազմելու համար առնում են բայի անեղևալիի բացառական հոլովը և խոնարհում yunu *«գալ» բայի հետ. օրինակ՝*

wučhun *տեսնել, բցո.* wučhana *տեսնելուց,* wučhana yunu *տեսնվել, որ է բառացի «տեսնելուց գալ» (խոնարհվում է միայն «գալ» բայը):*

(Grierson, *հա. 8, մասն 2, էջ 309*):

Աֆրիկյան վիտա (բանտու) լեզվում կրավորականը կազմվում է -wa *մասնիկով, որ թվում է թե* wa *«լինել» բայից է ծագում. օրինակ՝*

chena *վիրավորել,* chen-wa *վիրավորվել:*

(Madan, *34, 48, 53*):

Աֆրիկյան կիկույու (բանտու) լեզվի մեջ կրավորական կազմելու համար բայարմատի վերջին ձայնավորը զարձնում են wo *կամ* ilwo. *ինչպես՝*

koona *տեսնել,* koonwo *տեսնվել:*

(Hemery, 11):

Աֆրիկյան սեչվանա (բանտու) լեզվով կրավորական կազմելու համար ներգործական բայի վերջին ձայնավորից առաջ դնում են w *կամ* iw. *ինչպես՝*

go rèka *ծախել,* go rèkwa *ծախվել:*

(Wookey, 89):

Աֆրիկյան իրո լեզվում ներգործական բայի հոգ. Գ. դեմքը (առանց ենթակայի) համարվում է կրավորական, բայց կարելի է համարել նաև անդեմ բայ. օրինակ՝

esie nri *կերակուրը եփված է*
etee ofe *ապուր եփված է:*

(Ward, 103):

Եգիպտացերենում բայի կրավորականը կազմելու համար արմատի վրա դնում են tw, *որ «մեկը, որևէ մեկը» իմաստով միջակ անուն է. խոնարհումը ներգործականի պես է:*

(Gardiner, 41):

Բելուջերենում կրավորականը կազմվում է բայարմատի վրա դնելով iǰ. *օրինակ՝*

k'uš-aγ *ապանել,* k'uš-iǰ-aγ *ապանվել. խոնարհվում է սովորական ձևով:*

(Gilbertson, 122—128):

Ամատրալիայի նոր-պոմերանյան լեզվով կրավորական կազմելու համար բայի սկիզբը դնում են di *մասնիկը. ինչպես՝*

ներկ.	di	mari	iau *սիրվում եմ ես*
անց.	di ga	mari	iau *սիրվել եմ ես*
ապ.	da	mari	iau *սիրվելու եմ ես:*

(Costantini, 32):

Մոնղոլերեն լեզվով կրավորական կազմելու համար բայի արմատի վրա դնում են -ta, -te -kda,-kde *մասնիկները և խոնարհում են ճիշտ ներգործականի նման:*

(Schmidt, 75):

Հնդկական գուջարաթի լեզվում կրավորական կազմելու համար բայի արմատի վրա ավելացնում են ā. *օրինակ՝*

lakhwū *գրել,* lakhāwū *գրվել:*

Մի երկրորդ ձևի կրավորական կարելի է կազմել անցյալ դերբայը խոնարհելով jawū *«երթալ» բայի հետ (ինչ որ դնում ենք նաև հինդի լեզվում): Վերջապես մի երրորդ ձևի կրավորականն էլ կազմվում է բայի անեղևալիի ներգոլականը կցելով* awewū *«գալ» բայի հետ. օրինակ՝*

այդ բանը պիտի գա տեսնելում (= պիտի տեսնվի):

(Grierson, *հա. 9. մաս 2, էջ 343*):

Հնդկական, սինհի լեզվով կրավորականը կազմվում է ներգործական բայի արմատի վրա ավելացնելով ij մասնիկը. օրինակ՝

mār *զարնել*, mārij *զարնվել*։

(Grierson, հա. 8, մաս 1, էջ 75)։

Հնդկական լահնդա լեզվով կրավորական կազմելու համար բայի արմատի վրա ավելացնում են i ձայնավորը։

(Grierson, հա. 8, մաս 1, էջ 267)։

Հնդկական սինհալի լեզուն թեև ունի կրավորականի հին ձև, բայց այժմ սովորական է դարձրել մի նոր ձև, որ կազմվում է labanu «սառնալ» բայը իբր օժանդակ հարակցելով. yasanu labam «զարնվեցի», yasanu läbennem «սիրտ զարնվեմ»։

(Geiger, 157)։

Մարոկկոյի բերբեր լեզվում կրավորական կազմելու համար ներգործականի վրա դնում են tu նախամասնիկը. օրինակ՝

weð *զարնել, ծեծել* tuweð *զարնվել, խփվել*։

(Laoust, 138)։

Մալայան էնդգանս լեզվով կրավորական կազմելու համար ներգործականի սկիզբը դնում են kidi մասնիկը։

(Kähler, 198)։

Մանդա խմբից կոլ լեզվում կրավորական կազմելու համար ներգործական բայի մեջ՝ արմատից հետո դնում են o մասնիկը. ինչպես՝

aing abung-tan-aing	*լվանում եմ*
„ „ -o-tan-aing	*լվանվում եմ (սրիշի ձեռքով)*
„ abung-aing	*պիտի լվանամ*
„ „ o- „	*պիտ լվանվիմ*։

(Nottrott, 45)։

Հոտենդոտյան կորանա բարբառով կրավորական կազմելու համար բայարմատի վրա դնում են -he. ինչպես՝

sī *ուղարկել*, sī-ba-he *ուղարկվել*։

(Meinhof 49)։

Ամերիկյան վապո լեզվում կրավորականը կազմվում է դանագան մասնիկներով. ինչպես՝ u, uki, ki, mele, sele, šele, որոնք կցվում են բայարմատին՝ իբրև հետամասնիկ։

(Radin, 21)։

Հետաքրքրական է կրավորականը մալգաշերենում։ Այս լեզվի մեջ բայի սեռը երեք է. ներգործական, կրավորական և հարաբերական (relatif). ներգործականը ձևանում է ենթական բաժանելով բայից. կրավորականը ընդհակառակը ձևանում է ենթական կցելով բային. հարաբերական է կոչվում այն բայը, որ թե՛ ներգործական է և թե՛ կրավորական. եթե սեռի խնդիր կա, ապա ներգործական է. եթե չկա, ապա կրավորական է։ Սիրված ձև է խոսել ընդհանրապես կրավորական բայով. օրինակ՝

hita		*տեսնալ (= տեսնված)*
hitako	ny mpangalatro	
տեսնալ ենք ը	*գող*	*(ես տեսա գողին)*
hitanareo	ny omby	
տեսնալ ի ձէնջ ը	*եզ*	*(դուք տեսաք եզը)*
hitany	ny totozy	
տեսնալ նորքօք ը	*մուկ*	*(նրանք տեսան մուկը)*։

(Montagné, 33, 36)։

Բիրմաներեն լեզուն էլ ունի կրավորական բայ կազմելու երկու ձև.

ա) Ավելացնելով k'an «կրել, ենթակա լինել» օժանդակը. ինչպես՝

tse	*հրամայել*,	tsek'an	*հնազանդվել հպատակվել*.
tsīt	*բռնել*,	tsītk'an	*բռնվել*։

բ) Ավելացնելով t'ī «լինել» օժանդակը. սրա միջոցով կարելի է պատճառական բայն էլ կրավորականի վերածել. ինչպես՝

krouk *չեզ. վախենալ*
k'rouk *նեղ. վախեցնել*
k'rouk p'yīt t'ī
վախեցնել լինել լինել=վախեցվել։

գ) կրկնելով նաև t'ī «լինել» բայը. ինչպես՝

tse «ուղարկել»
tse t'ī p'yīt tī «ուղարկվել»:

Թեև ալյանս բերմանների մոտ կրավորական, բայց այս ձևը սիրված չէ և շատ չի գործածվում:

(Latter, 128—129):

Մալայերեն լեզվով կրավորական կազմելու համար բայի սկիզբը կցում են di- *մասնիկը և խոնարհում են սովորական ձևով* (Seidel, 52):

Օրինակ՝

pukul *ծեծել* — dipukul *ծեծվել:*

Ռևառոռոան լեզվով կրավորականը կազմվում է vengir, vegrir «գալ» *օժանդակ բայով. ինչպես՝*

Ներկ. iou véng ludaus *(իզ.* ludada) *գովվում եմ*
ապառ. iou ` véng a vegnir ludaus *պիտի գովվեմ:*

(Conradi, 52):

Եթովպական գալլա լեզվով կրավորական կազմվում է ma *մասնիկով. ինչպես՝*

ārgei *գտավ,* ārgamoi *գտնվեց*
hinbani *չթացնց,* hinbanamni *չթացվեց:*

(Hodson, 56):

Աֆրիկյան լուգանդա (բանտու) լեզվով կրավորական կազմելու համար ներգործականի բայի վրա ավելացնում են ներկա ժամանակի մեջ ibwa, *կատարյալի մեջ* idwa *մասնիկը:*

(Crabtree, 118):

Դրավիդյան բրահուի լեզվով կրավորական կազմելու համար ներգործականի վերջավորաթիյանը պետք է կրկնել. օրինակ՝ tixing *դնել. կրավ.* tixing-ing, xaning *տեսնել.* xaning-ing *տեսնվել. և կամ դնել* manning «լինել» *բայը:*

(Bray, 172, 197):

Եթովպական սաՀո լեզվով կրավորական կազմելու համար ներգործականի սկիզբը դնում են m *կամ վերջը* im. *ինչպես՝* m-bal *տեսնվել,* ab-im *սրվել:*

(Reinisch, 446):

Սուդանական շիլլուկ լեզվի մեջ ընդհակառակը կրավորականը շատ ընդունված ձև է. նա կարևոր է հատկապես սրտական հոլով կազմելու համար: Կրավորականը կազմվում է բայի և գործող անձի միջև դնելով yi «միջոցով» *բառը. ինչպես՝*

byel a čam yi ǰal eni
dura *կերվեց -ից մարդ այս*
«այս մարդը կերավ dura„
yā goč yi ǰal an
«ես ծեծվեցի այս մարդուց»:

(Westermann, 77):

Կովկասյան չեչեն լեզվում ներգործական բայ չկա. «չեչենները նաև բայի միակ կարելի ձևը կրավորական ձևն է» (Мациев, 117). *վերը տեսանք արդեն, թե ինչպես չեչենները ներգործականի փոխարեն դործիականով կրավորական է գործածում:*

Հնդկական սինդհի լեզվով կրավորական կազմելու համար բայի արմատի վրա ավելացնում են ǰaṇu.

(Trumpp, 258):

Աֆրիկյան սակամա (բանտու) լեզվով կրավորական կազմելու համար դնում են w *մասնիկը:*

(Augustiny, 55):

Աֆրիկյան կինգա (բանտու) լեզվով կրավորական կազմելու համար դնում են wa *մասնիկը. ինչպես՝* tova *ծեծել,* tovwa *ծեծվել:*

(Wolff, 84):

Չիլիի բնիկների լեզվով կրավորականը կազմվում է gen *էական բայով, որ դրվում է բայարմատի վրա, իսկ բայարմատը խոնարհվում է ներգործականի պես. օրինակ՝*

elun *տալ,* elugen *տրվել:*

Անգեմ բայը կազմվում է -am *մասնիկով. ինչպես՝*

dugun *խոսել,* duguam *խոսվում է:*

(Febres, 7):

Իտալական լեզուներից ռետոռոման լեզվով շատ բարբառներ կրավորական բայի հին ձևը քանդելով՝ կազմում են այժմ venire «գալ» *օժանդակով:*

(Gartner, 106):

Հնդկական գաբվալի լեզվում կրավորականը կազմվում է ǰāṇō «գնալ» բայը իբրև օժանդակ գործածելով (Grierson, Թ. մասն Դ, էջ 296)։ Նույնը հնդկական կիսմալի լեզվում zāṇū «գնալ» օժանդակ բայով (անդ, 573)։

Եվրոպական բարեա լեզվում կրավորականը կազմվում է ներգործականի վրա դնելով ei «լինել», բայը. ինչպես՝ bel խորտակել, bel-ei խորտակվել։

(Reinisch, 55)։

Հնդկական մարաթի լեզվով կրավորական կազմելու համար գնում են «ներվել» բայը. օրինակ՝ պիտի խորտակվի = պիտի գա խորտակել։

(Seddon, 24)։

Հնդկական ութիա լեզվով կրավորական կազմելու համար ներգործականը խոնարհում են he baro «լինել, դառնալ» օժանդակով և կամ ǰibaro «ներվել» բայով։

(Maltby, 25)։

Հնդկական քաշմիրի լեզվով կրավորական կազմելու համար բայի անեղևալթի բացառական հոլովի հետ խոնարհում են yinu «գալ» բայը։

(Grierson, հա. 8, մաս 2-րդ, էջ 61)։

Զուլուհերենում կրավորական չկա. այսպիսի ձևեր, որ կրավորականով պիտի տավինն, տալում են ներգործականով. օրինակ՝ «Հոմհաննէսից գրուած Աւետարանը, Մովսէսից տրուած օրէնքը և այլն» դառնում են «Հոմհաննէսի գրած Աւետարանը, Մովսէսի տուած օրէնքը» (Ашмаринъ, Матер, 293)։ Բայց թուրքերենում կրավորականի համար ունենք -əl կամ -il մասնիկը. ինչպես՝ ačmak «բանալ», ač-əl-mak «բացվել», sev-mek «սիրել», sev-il-mek «սիրվել» և այլն։

Ամերիկյան բնտոլա կամ տուկանո լեզվի մեջ էլ կրավորականի խոնարհում չկա։

(MSL, 19, 94)։

Զուլուհերենում չորս տեսակ կրավորական կա.

1. Պարզ կրավորական, որ ցույց է տալիս, թե գործողությունը դեռ տևում է և կամ տևական է համարվում. ինչպես՝ «լքվել, երևի վրա թողնվել»։

2. Կատարյալ կրավորական, որ ցույց է տալիս, թե գործողությունը վերջացած է. օրինակ՝ «առնվել»։

3. Պատճառական կրավորական, որ ցույց է տալիս, թե գործողությունը միայն այն ժամանակ և պատահարար է տեղի ունեցել կամ կատարվել. ինչպես՝ «հանդիպիլ, պատահիլ պատահարար լսվիլ, հանկարծ միտքը ընկնել, հիշվիլ». օրինակ՝ kə-nanggih «պատահարար գտնվիլ», kə-taton «պատահարար վիրավորվիլ»։

(Bohatta, Gramm. Jav. 62)։

4. Անձնական կրավորական, ուր գերանունը բայի մեջ է ագացված և գործողությունը կատարվում է նրա միջոցով՝ մի ուրիշի համար. օրինակ՝ rəmbag «խորհուրդ» բառից kula-rəmbag «իմ միջոցով խորհուրդ տրվիլ իրեն = խրատվիլ»։

tuwah «ճաշիլ» — sampéyan-tuwah-hakən «քեզանով ճաշիլ = շատացվիլ»։

Պետք է նկատել, որ սրանց մեջ kula «ես» և sampéyan «դուս» անձնական գերանուն են, որոնք ծագմամբ բուն նշանակում են առաջինը՝ «ծառա», երկրորդը՝ «տուք»։

Bohatta, Gramm. jav. 63)։

Դրավիդյան լեզուների մեջ կրավորական չկա. բայական այս ձևը բացատրվում է հետևյալ հինգ ձևերով.

1. Գործող անձը դնում են գործիական, իսկ բայը ներգործականն. օրինակ՝

ennāl uḍeindadu
ինձանով կատրած։

2. Ներգործական կամ չեզոք բայի հետ դնում են «լինել, երթալ, վերջանալ» բայերը. օրինակ՝

muḍind' āyittru «վերջացած եղավ» = վերջացվեց.
kōvil kaṭṭi āyittru «տաճարը շինած եղավ» = տաճարը շինվեց։

3. Երբեմն էլ առանց որևէ օժանդակ բառի ներգործական կամ չեզոք բայը գործածվում է իբրև կրավորական. օրինակ՝

eṛudina śuvaḍi uṇḍu
գրած գիրք մնում = գրված գիրք մնում։

Այսպես էլ արևելահայ բարբառով ասում են՝

Տպած գիրք (փխ. տպված գիրք)։
Պատը ներկած է (փխ. ներկված է)։

4. Գոյականի հետ գնում են «առնել» բայը. օրինակ՝

aḍi uṇḍān *«կերավ ծեծ» = ծեծվեց,*
paḍeipp' uṇḍén *«կերա տանջում» = տանջվեցի։*

5. Կամ ավելացնում են paḍ-u *«կրել, փորձել,* to suffer, to experience» *բայը. օրինակ՝*

kolla-ppaṭṭān *«սպանում կրեց» = սպանվեց։*

(Caldwell, 463—467)։

Շատ լեզուների նման ամերիկյան նահանդ. լեզուն էլ չունի կրավորական. նրա փոխարեն գործածում են միշտ ներգործական ձևը։ Բայց այս լեզվի մեջ առեղծվել է նաև մի ուրիշ ձև, որ բռնում է երկուսի միջին տեղը։ Կրավորականի փոխարեն դրվում է միշտ անդեմ բայ. չի ասվում «ես ծեծվում եմ, դու ծեծվում ես» և այլն, այլ միայն անդ. it ձևի նման. ինչպես՝ yit'ī *«առնում է, առնանելի է,* it is seen» *(ներկա ժամանակ)։ Սրանով բայը նման է լինում մեր բայանունին, դերբային կամ անեղականին։ Բայց նահանդում կրավորական բայը ունի ժամանակ, ինչպես՝* yiltsa *«առնված է,* it has been seen» *(անցյալ),* yidoliseł *«պիտի առնվի,* it will be seen» *(ապառնի)։ Այս ձևի առկ նա կարող է գործածվել թե իբր բայ և թե իբր գոյական, առանց նկատի առնվելու, թե նա անցողական բայ է, թե անանցողական։*

(Haile 93)։

Աֆրիկյան լեզուների մեջ ներգործականը գանազանվում է կրավորականից՝ միայն առնի տարբերությամբ (Les langues du monde, 485)։ *Օրինակ՝ աֆրիկյան փոյլ լեզվում ներգործականը միջին առնով է, կրավորականը ցածր առնով։ Այսպես՝* mi piya *խփում եմ,* mi piyà *խփվում եմ։*

(Hamburger, MSL, 23, 154)։

Սեմական լեզուներում կրավորականը կազմվում է բայի նախավանկում գնելով u *ձայնավորը. օրինակ՝ արաբ* kataba *«գրեց»—* kutiba *«գրվեց», lubisa «հագվեց», zukima «հարբուխ առացավ»։*

Սակայն արաբերենում կրավորականը շատ չի գործածվում. երբ հարկ է լինում, շուռ են տալիս ներգործականի։ Այսպես՝ փո-

խանակ առնում «Զայդը ծեծվեց Օմարից», ասում են «Օմարը ծեծեց Զայդին»։ Կրավորականը գործ են ածում, երբ գործողը անհայտ է (Զայդը ծեծ է կերել հայտնի չէ ումից) կամ ֆրանս. on, *գերմ.* man *անորոշ դերանվան դեմ, ինչպես հ. գրվում է, ասվում է* (Harder, 109)։ *Ժողովրդական լեզվի մեջ ավելի է կրճատվել կրավորականի գործածությունը, և նրա փոխարեն դրվում է կամ էական բայ և կամ* tafa''ul, *մանավանդ* infi'āl *և* ifti'āl *ձևերը (տես Ներածություն, էջ 238)։* (Belot, 34)։ *Եվ, որովհետև այս երեք ձևերը թե կրավորական են և թե կրավորակերպ իզոք, ասի՝ իմաստի շփոթությունից խուսափելու համար այս երեք ձևերը հատկացրել են կրավորականի միայն, իսկ իր վրա կատարված գործողությունը նշանակելու համար՝ ներգործական բային կցում են ժողովրդյունը նշանակելու համար՝ ներգործական բային կցում են* نفس nafs *«անձ»,* ذات ẓāt *«ինքը» և* حال ḥāl *«վիճակ» բառերը. ինչպես՝*

madaḥa nafsahu } *ինքն իրան գովեց*
madaḥa ẓātahu }
xaraba ḥālahu *անանկացավ։* (Belot, 72)։

Աբարբերենին նման է իր հարևան քամյան ամբար լեզուն։ Այս լեզվում կրավորական կազմելու համար բայարմատից առաջ դրվում է n *մասնիկը, որ արար.* انفعال in-fi'āl *ձևի հետ նույն է. օրինակ՝* kataba *գրել—*n-kataba *գրվել։ Անգրադարձ բայն էլ* ta-kataba *«իր համար գրել» այս ձևով կարող է կրավորական դառնալ և տալիս է* n-takataba *«իր համար գրվել», և նույնիսկ սրա պատճառականը՝* s-takataba *«իր համար գրել տալ» կարող է դառնալ կրավորական՝ ավելացնելով արմատի վերջում* -im. *ինչպես՝* s-ta-kaṭab-im *«իրեն համար գրել տրվել»։*

(Colizza, 41—42)։

Հնդկական դարդիկ խմբից դիլդիտի լեզուն բայի արմատի վրա դնելով ar *մասնիկը՝ կազմում է մի բայ, որ հավասարապես պատճառական է և կրավորական. օրինակ՝ šidoiki «զարնել» բայից կա šidaroiki, որ նշանակում է «զարնել տալ կամ զարնվել»։ Եվ, որովհետև լեզուների մեջ այսպիսի երկիմաստություն ծայրահեղ չէ, ուստի Գրիերսոնը (հտ. 8, մասն 2, էջ 166) կարծում է, թե երբ բայը խոնարհվի ներգործական ձևով՝ ուրեմն պատճառական է, իսկ երբ խոնարհվի իզոքի ձևով, ուրեմն կրավորական է։*

Աֆրիկյան գանգ լեզվումն էլ չկա կրավորական. այնպիսի ձևվեր, ինչպես՝ ես ծեծված եմ կամ ես տեսնվում եմ, շատ են տալիս, ինձ ծեծել են, ես երևում եմ։

(Kitching, 25)։

Ուգրո-ֆիննական լեզուների մեջ էլ կրավորակերպ չեզոքն է, որ հետո դարձել է կրավորական։

(Szinnyei, Finn. ugr, Spr. 131)։

Ամերիկյան կարիբեր լեզվի մեջ կրավորական կազմելու ձևերից ամենասովորականն է ներգործականի es- նախամասնիկը դարձնել ez. օրինակ՝ esčut *առնում եմ,* ezčut *առնում եմ։*

(Morice, Carr, lang. 283)։

Աֆրիկյան յաո լեզվի մեջ (բանաու ընտանիքից) թեև կա կրավորական, բայց հաճելի չէ նրա գործածությունը։ Երբ հարկ լինի կրավորական գործածել, շատ են տալիս ներգործականի։

(Hetherwick, 45)։

Աֆրիկյան աշանտի լեզվում չկա կրավորական, և երբ հարկ լինի, շատ կատն ներգործականի։

(Christaller, 56)։

Նույնը նաև աֆրիկյան նիամ-նիամ (կամ ազանդե) լեզվում։

(Langae, 110)։

Բերբերական կաբիլերեն լեզվում թեև կրավորական կազմելու համար կարելի է բայից առաջ դնել (i)ts- *մասնիկը, բայց ավելի սովորական է կրավորականի տեղ դնել ներգործականը։*

(Hanoteau, 114)։

Նույն ընտանիքից բերբերական տամաշեկ լեզվումն էլ թեև կա կրավորական առանձին ձև (որ կազմվում է բայի սկիզբը դնելով tu- *մասնիկը), բայց ավելի սովորական է ներգործականի գործածությունը։ Օրինակ, փոխանակ ասելու՝*

«Նրանք թողեցին նրան ճամբի վրա կապված», ասում են՝ «Նրանք թողեցին նրան ճամբի վրա կապում էր»։

Նաև փոխանակ ասելու՝ «Նա սպանվեց» (il a été tué), *ասում են՝ «Սպանեցին նրան»* (on l'a tué). *կամ՝ «Այս սենյակը առավոտն ավլված էր», ասում են՝ «Առավոտն այս սենյակը ավլեցին զայն»։*

(Hanoteau, 81)։

Օվկիանյան տահիթի լեզվում կրավորական կազմելու համար ներգործականից հետո դնում են hia *մասնիկը. օրինակ՝* hinaaro *«սիրել»,* hianaaro hia *«սիրվել»։*

(Sénac, 50, X ? 19)։

Աֆրիկյան յորուբա լեզվում կրավորական կազմելու համար ներգործական բայի սկիզբը դնում են a, *որ կրճատումն է* awon *անորոշ դերանվան (ֆրանս.* on, *գերմ.* man). *այնուհետև դնում են անձնական դերանվան կրճատ ձևերը. ինչպես՝* fe *սիրել —* afe *սիրվել բայից՝*

Ներկ.	afe	mi	*սիրվում եմ*	*(իբր* on m'aime)
	afe	o	»	*ես*
	afe	e	»	*է*
	afe	wa	»	*ենք*
	afe	nyin	»	*եք*
	afe	won	»	*են*

ապառ. a ofe mi *պիտի սիրվեմ (ու* o *ապառնիի նշանն է. իսկ կրավորականի* a *նշանը առաջ է անցել)։*

(Crowther, 17, 27,)։

Աֆրիկյան մինխանկա լեզվում կրավորական չկա. ներգործականն բայը նաև առանում է կրավորական իմաստ. ինչպես՝

me	na	kuon
ես	*պիտի*	*կարեմ, որ և*
ես	*պիտի*	*կարվեմ։*

(Chéron, 11)։

Այսպես է նաև թալ = Սիամ խմբի քամոի լեզվով։

(Grierson, հտ. 2, էջ 148)։

Կարծվածից ավելի շատ է այն լեզուների թիվը, որոնք կրավորական ձևով բայ չունեն և երբ հարկ լինի՝ սրիշ լեզուների կրավորականը բացատրել, վերածում են ներգործականի։ Օրինակ՝ «Բազաքը թալանվեց թշնամիներից» ասելու փոխարեն ասում են՝

«Թշնամիները թալանեցին քաղաքը»։ Այս կարգին են պատկանում լատներենը (Hospitalier, 187), և շատ ուրիշ լեզուներ, որ թվելու ենք։

Ամերիկյան հնդկ լեզուն ունի կրավորական, բայց նրա գործածությունը սովորական չէ. ընդհանրապես ուզում են, որ գործող անձը երևա խոսքի մեջ, և դա ենթական է։ Կրավորական դնում են միայն այն ժամանակ, երբ ենթական անհայտ է կամ որոշ մի պատճառով, ընդհանրապես կրոնական, արգելվում է նրա գործածությունը։ (Goddard, 35)։

Կոնգոյի չիլուբա լեզվով կրավորականը կազմելու համար ներգործականի վերջում դնում են ibwa մասնիկը, ինչպես՝ kutuba «ծեծել», kututšibwa «ծեծվել»։ Բայց այս ձևը արգին գործածությունից ընկնում է և նրա փոխարեն սարածվում է ներգործականի հոգ. գ դնելը գործածությունը. ինչպես՝ «Լորու հասիկները արնկվում են» ասելու փոխարեն «Ծնկում են լորու հասիկները» (հյց.)։

(Gabriel, 148, 229)։

Աֆրիկյան gվա (բանասու) լեզվով կրավորական կա և շատ սովորական ձև է, բայց իրենք չեն սիրում գործածել այդ ձևը և դնում են ներգործական։ Չեն ասում՝ «դանակս գողացվեց», այլ «դանակս գողացել ենն»։ Ավելի հետաքրքրական է այն ձևը, որ գործածում է gվան։ Նա իր կորուսսը չի մասածում. իր միտքն է պահում այն հանգամանքը, որ առաջ գործածում էր դանակը, իսկ այժմ ոչ. ասած ասում է „I have been made a loser by my knife դանակս կորցնող եղած եղա»։

(Persson, 133)։

Սրան հակառակ աֆրիկյան շոնա (բանասու) լեզուն սիրում է խոսել կրավորական, մինչդեռ ներգործական պետք էր ասել, օրինակ՝ «Թոմը ծեծեց Ջոնին» ասելու փոխարեն ասում են «Ջոնը ծեծվեց Թոմից»։ Փոխ. «Հայրս աշխատում էր ինձ համար»=«Ես աշխատվեցի իմ հորով», փոխ. he came into my hut = I was entered for by him in my hut (նա մտցվեցի նրանով իմ խրճիթում)։

Կրավորականը այս լեզվում կազմվում է wa, iwa մասնիկով։

(O' Noil, 146, 166)։

Ճիշտ նույն ոճով է աֆրիկյան կարանգա (բանասու) լեզուն, որ սիրում է կրավորական փոխանակ ներգործականի (այս լեզվումն

էլ կրավորականը կազմվում է wa, iwa մասնիկով, որ va «լինել» բայից է). օրինակ՝

«Հայրիկն ասաց կարող եք գնալ» դառնում է՝
ku nz na . baba: huya.
ասված է հորից.—եկեք։
«Ինչ որ մեկը պիտի գրի ինձ» դառնում է՝
ndi no nyorerwha no mumwe
ես գրված պիտի լինեմ ինչ որ մեկով։

(Marconnès, 184—185)։

Դրավիդյան բրահուի լեզվով էլ կրավորականը կազմվում է iv մասնիկով։

(Grierson, Դ 627)։

Աֆրիկյան կիկամի լեզվով կրավորականը կազմվում է բայի վերջավորությունից առաջ դնելով u. օրինակ՝ no-kemūa «ich werde gerufen»։

(Velten, 18)։

Աֆրիկյան շամբալա լեզվում կրավորական կազմելու համար բայի վերջավորությունից առաջ դնում են w. ինչպես՝ kunda սիրել, kundwa սիրվել։

(Rösler, 9)։

Նույնն է նաև աֆրիկյան շասու լեզվում. ինչպես՝ kubiga «ծեծել, զարնել», kubigwa «ծեծվել»։

(Kotz, 26)։

Ուրիշ լեզուներ էլ կան, որ չունեն կրավորական բայ և երբ հարկ լինի գործածել կրավորական, շուռ են տալիս ներգործականը։ Այսպես են՝ ամերիկյան մակուշի լեզուն (Williams, 85), Օվկիանոսի կարոլինյան լեզուն (Fritz, 25), օվկիանյան տոնգա լեզուն (Martin J.), աֆրիկյան բոնգու լեզուն (Hanke, 43), Մելանեզյան լեզուներից էրոմանգա լեզուն (Ray, 184), տասիկո լեզուն (Ray, 240), բակի լեզուն (Ray, 251), կուլիվիու լեզուն (Ray, 270), առա լեզուն (Ray, 278), ուրիպով լեզուն (Ray, 288), սինեսիպ լեզուն (Ray, 307), պաամա լեզուն (Ray, 322), ամբրիմ լեզուն (Ray, 339), տասիրիկի լեզուն (Ray, 377), նոգուգու լեզուն (Ray, 392), աֆրիկյան էվե լեզուն (Westermann, 65)։

Աֆրիկյան սարա լեզվի մեջ կրավորականը կազմվում է ներգործականի ծայրին ավելացնելով nga մասնիկը. օրինակ՝

usa *ուտել* — usanga *ուտվել*
musa *ուտում եմ* musanga *ուտվում եմ*
yusa » *ես* yusanga » *ես*
nusa » *է* nusanga » *է*
շար. *ներկ.* makusa, *կրավ.* makusanga,
կար. musandega *կրավ.* musandeganga

(Delafosse, 26)։

Աֆրիկյան ազնի լեզվով կրավորական կազմելու համար արմատից առաջ դնում են a. *ինչպես՝* di *ուտել*, adi *ուտվել*։

(Delafosse, 87)։

Եթովպական կունամա լեզվով կրավորական կազմելու համար բայի սկիզբը դնում են ko *մասնիկը. օրինակ՝* di *փորել*, ko-di *փորվել.* digin *ամուսնացնել (կայր)*, ko-digin *ամուսնացվել*։

(Reinisch, 25)։

Դրավիդյան կուրուխ լեզվով կրավորական կազմելու համար բայարմատի վրա ավելացնում են r. *Ստացյալը խոնարհվում է իբրև ներգործական. օրինակ՝* esnā *կտրել*, esrnā *կտրվել*։

(Hahn, 48)։

Դրավիդյան տելուգու լեզվով կրավորական կազմելու համար ներգործականի վրա դնում են baḍu *կամ* paḍu «*ընկնել, կրել,* to fall, to suffer» *բայը. ինչպես՝* koṭṭa «*զարնել*», koṭṭa ḅadu «*ծեծ ուտել*»։

(Lakshminarasayya, 19)։

Բիրմանական լեպխա կամ ռոնգ լեզվով թեև կրավորական չկա և միշտ ներգործական ձևով են խոսում, բայց կարելի է երբեմն գործածել thóm *դնել և* nóng *բայերը. օրինակ՝* pi-thóm-bo «*գրված*», mók-nón «*ծծախված*»։

(Grierson, *հա. 3, մասն 1, էջ 240*)։

Զարմանալի է ֆիլիպինյան տագալոգ լեզուն, որ կրավորական կազմելու համար ներգործական բայերի m *նախաձայնը դարձնում է* p։

Հիպերբորյան յուկագիր լեզվով կրավորական կազմելու համար բայի բնի վերջում դնում են ō *ձայնավորը*։

(Jochelson, 130)։

Մոնղոլական բուրյաթ լեզվում կրավորական կազմելու համար բայարմատի վրա դնում են gde *մասնիկը. ինչպես՝* alanam *սպանեցի*, alagdanam *սպանվեցի*։

(Castrén, 35)։

Մինչդեռ մելանեզյան լեզուներից շատերը չունեն կրավորական և երբ հարկ լինի կրավորական բայ գործածել, շուռ են տալիս կան և երբ հարկ լինի կրավորական բայ գործածել, շուռ են տալիս ներգ. հոգ. գ դեմքի (ձեծվեցի = ինձ ծեծեցին), ընդհակառակը մելանեզյան ռովիանա լեզուն ունի թե պարզ կրավորական, թե անցողական բայի կրավորական և թե փոխադարձ բայի կրավորական։ Պարզ կրավորականը կազմվում է ta *նախդիրով, իսկ անցողականի կրավորականը կազմվում է անցողականի* va *մասնիկի վրա ավելացնելով նույն* ta *նախդիրը*։

(Ray, 553)։

Աֆրիկյան մամբիլա լեզվով կրավորական և ներգործական նույն են. օրինակ՝ yi *նշանակում է թե «առալ» և թե «տրվել, պարգև առանալ». երբ ենթական դրված է բայից առաջ, ուրեմն բայը ներգործական պետք է համարել, իսկ երբ հակառակ շարքն ունի, բայը պետք է կրավորական համարել. օրինակ՝*

tel-ɒwo	yi	me	bal
հայրս	*տվեց*	*ինձ*	*մի գրպան*
me yi	tel-nwo		bal
ես առացա	*հորիցս*		*մի գրպան*։

(Meyer, 50)։

Աֆրիկյան գինկա լեզվով կրավորականը նույն է ներգործականի հետ՝ միայն ժամանակ ցույց տվող մասնիկի վերջին ձայնավորը երկարում է. օրինակ՝ gam *հավատալ բայից՝*

ներգործական	կրավորական
ներկ. ա. ghên agam	ghên ačî gam
կար. ա. ghên ačigam	ghên ăcî gam
ապ. ա. ghen abigam	ghên abî gam

(իսկ ներկան նույնանում է կատարյալի հետ)։

(Mitterrutzner, 32)։

Աֆրիկյան կենդան (բանաւոր) լեզուով կրավորական չկա. կրավորականի միտքը արտահայտելու համար շուռ են տալիս մի ուրիշ ձևի և հատկապես հոգ. գ դեմքի. օրինակ՝ փոխանակ ասելու «ծծընվեց մի երեխա», ասում են «նրանք ծնեցին մի երեխա»:

(Ittmann, 175):

Աֆրիկյան իրո լեզուում կրավորական չկա և նրա տեղ դնում են ներգործականը. օրինակ՝ կոչվում՝ եմ = ինձ կոչում են, ծնվել եմ=ինձ ծնել են և այլն:

(Spencer, 34):

Նոր-Հիբրիդյան տանդոա լեզուում կրավորական բայ չկա:

(Macdonald, 7):

Միկրոնեզյան մարշալ լեզուում չկա կրավորական բայ և նրա տեղ դնում են ներգործականը. օրինակ՝

Ես սիրվում եմ=re eódue iō
Նրանք սիրում են ինձ:

(Erdland, 215):

Սուդանի կուասաի լեզվով էլ կրավորական չկա և վերածվում է միշտ ներգործականի. ինչպես՝

ba- bode taba } = պիտի սիրվեմ:
Նրանք սիրում են ինձ }

(Lässig, 50):

Աֆրիկյան վապոգորո լեզվով կրավորական չկա. խոսքը վերածում են միշտ ներգործականի. օրինակ՝

Ես սիրվում եմ = wa-m-fira-nene (նրանք սիրում են ինձ).
Նրանք սիրվում են = wa-wa-fira-awa (նրանք նրանց սիրում են նրանց):

Բայց կա նաև հատուկ մի ձև կրավորականի համար, որ կազմվում է ka մասնիկով. ինչպես՝

bena	կոտրել	beneka	ջարդվել
goma	չորացնել	gomoka	չորացվել
tuma	ուղարկել	tumika	ուղարկվել

(Hendle, 43):

Տիբեթերենում կրավորականի համար առանձին ձև չկա. ներգործականի հետ նույն է. երկուսը տարբերվում են իրարից ենթակայի հոլովի միջոցով. ալապես.

ngas k'yod rdung bar byed do
ինձ (ինձնով) դու ծեծեալ
(այսինքն «ես քեզ ծեծում եմ»):
nga rdung bar byed
ես ծեծ— եալ
(այսինքն «ես ծեծվում եմ»):

Ուրեմն ուղղականից հետո կրավորական, կրավորականից հետո ներգործական:

(Foucaux, 79):

Սիամերեն լեզվով կրավորական չկա. վերածում են ներգործականի:

(Wershoven, 83):

Աֆրիկյան բասա (Կամերուն) լեզվով կրավորական չկա. վերածում են ներգործականի հոգ. Գ դեմքի:

(Schürle, 79):

Հնդկական մարաթի լեզվում թեև բայերի վիճերորդ դասը հատկացված է կրավորական բայերին, բայց իրենք չեն սիրում գործածել կրավորական բայ և նրա փոխարեն դնում են անանցողական բայ կամ մի ուրիշ դասվածով դարձ են բերում: Շատ անգամ օտար լեզուներից թարգմանության ժամանակ գործածում են կրավորական բայը: Կրավորականի ավելի տարածված ձև է բայի անցյալ դերբայը՝ միացած օժանդակ «երթալ» բայի ներկան ձևերի հետ: Օրինակ՝

I am being struck>I go struck
I have been released>I have gone released.

(Stevenson, 87):

Ղափերեն լեզուում կրավորական բայ չկա. պետք եղած դեպքում ներգործականով են արտահայտում. օրինակ՝

Նա պիտի պատժվի = նրան պիտի պատժեն
» » սպանվի = » » սպանեն
դու » ծնվես = քեզ պիտի ծնեն!:

Այս դեպքում գործածում են hitan «միջոցով» նախադրությունը. ինչպես՝ նա պիտի խաբվի մոգերից = նրան պիտի խաբեն մոգերի միջոցով:

Կա նաև կրավորական կազմելու առանձին ձև՝ ži «առնել, ստանալ» բայը կպցնում են բային՝ իբրև մասնիկ. ինչպես՝ smu «օրհնալ» բայը կպցնում են բային՝ իբրև մասնիկ. ինչպես՝ smu «օրհ-

Աֆրիկյան կենդան (բանաւոր) լեզուով կրավորական չկա. կրավորականի միտքը արտահայտելու համար շուռ են տալիս մի ուրիշ ձևի և հատկապես հոգ. գ դեմքի. օրինակ՝ փոխանակ ասելու «ծեծվեց մի երեխա», ասում են «նրանք ծնեցին մի երեխա»:

(Ittmann, 175):

Աֆրիկյան իրո լեզուում կրավորական չկա և նրա տեղ դնում են ներգործականը. օրինակ՝ կոչվում՝ եմ = ինձ կոչում են, ծնվել եմ=ինձ ծնել են և այլն:

(Spencer, 34):

Նոր-Հիբրիդյան տանգոա լեզուում կրավորական բայ չկա:

(Macdonald, 7):

Միկրոնեզյան մարշալ լեզուում չկա կրավորական բայ և նրա տեղ դնում են ներգործականը. օրինակ՝

ես սիրվում եմ=re eódue iō
Նրանք սիրում են ինձ:

(Erdland, 215):

Սուդանի կուասի լեզվով էլ կրավորական չկա և վերածվում է միշտ ներգործականի. ինչպես՝

ba- bode taba } = պիտի սիրվեմ:
Նրանք սիրում են ինձ

(Lässig, 50):

Աֆրիկյան վապոգոբո լեզվով կրավորական չկա. խոսքը վերածում են միշտ ներգործականի. օրինակ՝

Ես սիրվում եմ = wa-m-fira-nene (նրանք սիրում են ինձ).
Նրանք սիրվում են = wa-wa-fira-awa (նրանք նրանց սիրում են նրանց):

Բայց կա նաև հատուկ մի ձև կրավորականի համար, որ կազմվում է ka մասնիկով. ինչպես՝

bena	կոտրել	beneka	ջարդվել
goma	չորացնել	gomoka	չորացվել
tuma	ուղարկել	tumika	ուղարկվել

(Hendle, 43):

Տիբեթերենում կրավորականի համար առանձին ձև չկա. ներգործականի հետ նույն է. երկուսը տարբերվում են իրարից ենթակայի հոլովի միջոցով. այսպես.

ngas k'yod rdung bar byed do
ինձ (ինձնով) դու ծեծել
(այսինքն «ես քեզ ծեծում եմ»):
nga rdung bar byed
ես ծեծ— ել
(այսինքն «ես ծեծվում եմ»):

Ուրեմն ուղղականից հետո կրավորական, կրավորականից հետո ներգործական:

(Foucaux, 79):

Սիամերեն լեզվով կրավորական չկա. վերածում են ներգործականի:

(Wershoven, 83):

Աֆրիկյան բասա (Կամերուն) լեզվով կրավորական չկա. վերածում են ներգործականի հոգ. Դ դեմքի:

(Schürle, 79):

Հնդկական մարաթի լեզուում թեև բայերի վեցերորդ դասը հատկացված է կրավորական բայերին, բայց իրենք չեն սիրում գործածել կրավորական բայ և նրա փոխարեն գնում են անանցողական բայ կամ մի ուրիշ դաշվածով դուրս են բերում: Շատ անգամ օտար լեզուներից թարգմանության ժամանակ գործածում են կրավորական բայը: Կրավորականի ավելի տարածված ձև է բայի անցյալ դերբայը՝ միացած ժամանակ «երթալ» բայի ներկան ձևերի հետ: Օրինակ՝

I am being struck>I go struck
I have been released>I have gone released.

(Stevenson, 87):

Ղափեբեն լեզուում կրավորական բայ չկա. պետք եղած դեպքում ներգործականով են արտահայտում. օրինակ՝

Նա պիտի պատժվի = նրան պիտի պատժեն
» » սպանվի = » » սպանեն
դու » ծնվես = քեզ պիտի ծնեն!:

Այս դեպքում գործածում են hitan «միջոցով» նախադրությունը. ինչպես՝ նա պիտի խաբվի մոգերից = նրան պիտի խաբեն մոգերի միջոցով:

Կա նաև կրավորական կազմելու առանձին ձև՝ ži «առնել, ստանալ» բայը կպցնում են բային՝ իբրև մասնիկ. ինչպես՝ smu «օրհնել» բայը կպցնում են բային՝ իբրև մասնիկ. ինչպես՝ smu «օրհ-

նել, օրհնութիւն»>ži-smu «օրհնվել». uoein «լուա»>žiuoein «լսաավորվել»։

(Steiñdorf, 170)։

Կովկասյան ուրիշ լեզվով ներգործականի փոխարեն կրավորականի գործածութիւնը ավելի ընդունված ձև է. ինչպես՝

a-t'xəl ə-s-bie-n.
ը գիրք նա ինձ տեսանի
«ես տեսնում եմ գիրքը»։

a-məze-n a-t'xəl ə-bie-n
երեխայի ը գիրք նմա տեսանի
«երեխան տեսնում է գիրքը»։

Այս n հանգով կազմված հոլովը կոչվում է էրգատիվ, որ համապատասխանում է մեր սրականին։

(Dumézil, 21)։

Հետաքրքիր է կրավորականը վրացերենի մեջ։
Վրացերենում կա երկու տեսակ կրավորական.
1. Վիճակ արտահայտող կրավորական (passif d'état)։
2. Գործողութիւն արտահայտող կրավորական (passif de procès)։ Օրինակ՝

uծերիա «գրեալ է, scriptum est, գերմ. ist geschrieben» (առաջին ձևի կրավորական, որ ունի միայն ներկա և լեզվից հետզհետե վերանում է).

իծերեբա «գրվում է, կգրվի, scribitur, wird geschrieben» (երկրորդ ձևի կրավորական)։

(Vogt, 147)։

Գործողութիւն ցույց տվող կրավորականն էլ երեք տեսակ է, որոնք իմաստով և կազմութիւնով տարբերվում են իրարից։ Այսպես՝ 1. նախնական կրավորական, 2. d-ով կրավորական, 3. i-e նախամանրիկով կրավորական։ Նախնականը ցույց է տալիս ենթակայի վրա կատարված մի գործողութիւն՝ առանց արտաքին պատճառի. ինչպես՝ «չորանում է, հանգում է»։ Երկրորդ ձևի կրավորականը կարելի է կազմել ամեն մի գոյականից. ինչպես՝ վկոմխարդերի «ես կոմխար դարձա» (սա կրավորական է համարվում)։ Երբորդը հաճախ կրավորականի իմաստ էլ չունի. ինչպես՝ «նամակը տրվեց ինձ. ինձ մի երեխա ծնվեց»։

(Vogt, 168—170)։

Կարաբուին լեզվի մեջ ներգործական և կրավորական միևնույն ձևն ունեն և տարբերվում են միայն ինդրատութիւնով. ինչպես՝

so-šx^{y} ուտում եմ — sa-šx^{y} ուտում եմ
so-tlağu տեսնում եմ — sa-tlağu տեսնում եմ
(իբր թե ներգործական «ես» և կրավորական «ինձ»)։

Նախադասութեան մեջ նույնը կազմվում է տարբեր հոլովառութիւնով. ինչպես՝

si-detlxu-m ğuneğu-m kame yire-t
եղբայրը դրացին (տր.) դաշույն (հյց.) տա
detlxu-mk'e kame-r ğuneğu-m yire-t
եղբայրը (գրծ.) դաշույն (ուղ.) դրացին (տր.) տա = տրվում է։

Գործիական հոլովով և կրավորական բայով նախադասութիւն կազմելու այս ձևը սիրելի և հաճախադեպ էր խալդերենում. օրինակ՝ փոխանակ ասելու «Մենուասը կառուցեց սրանք», ասում են՝

Menuaše unili šidištuali
Մենուասով սրանք կառուցվեցին

(Friedrich, Einführung ins Urartäische, 19)։

Նույն ձևը գտնում ենք նաև արդի լեզուներից աֆղաններենում, բելուջերենում և այլն։ Նույնիսկ գերմաներենում կարելի է կազմել նման նախադասութիւններ. ինչպես՝

Dieses Haus wird von jedermann bewundert
այս տունը ամեն մեկից զարմացվում է
(= այս տան վրա ամեն մարդ կզարմանա)։

Es ist viel gegessen, aber noch mehr getrunken werden
շատ կերան, բայց ավելի շատ խմեցին։

Հինդուստանի լեզվի մեջ բայի խոնարհման ժամանակ, որոշ դեպքերում, այսինքն երբ ժամանակը կազմված է դերբայից, ներգործական բայի դերանուն ենթական դրվում է դարձյալ գործիական հոլով. օրինակ՝

maiṉ-ne mārā ես ծեծում էի
tū-ne mārā ծեծում էիր,

որոնք բառացի նշանակում են «ինձանով ծեծյալ, քեզանով ծեծյալ»։

Այս ձևափոխությունը անշուշտ նրանից է, որ եթե ասվեր «ես ծեծյալ, դու ծեծյալ», պիտի հասկացվեր «ես ծեծվում էի, դու ծեծվում էիր»։

(Bennerjea, 20—21, Thimm, 30)։

Սակայն ինչ որ ամենից ավելի հետաքրքրական է, այդ այն է, որ ամերիկյան կարիբի ընտանիքին պատկանող երկու լեզու (կիպևա և ձաբուկուա) առեղծել են ըստ ինքյան կրավորական ձևվեր։ Բավական մեծ թվով բայեր այս լեզվի մեջ ոչ մի եղանակից են կազմված. այլ ինքնին (արմատով) կրավորական են. ինչպես՝

di	տրվել	(ոչ մի տալ)
do	ասվել	(ոչ մի ասել)
nino	արվել	(ոչ մի անել) և այլն։

(L. Adam, 48)։

Շատ անկանոն է կրավորականը աֆրիկյան բարի լեզվում. Միսեոներները, որ ուսումնասիրել է այս լեզուն, հավաքել է բոլոր բայերը ըստ իրենց վերջավորությյան, վերածել նրանք ինը խմբի և աշխատել դուրս բերել դանազան կանոններ (51—58)։

Այս բոլորը, ինչ որ նկարագրեցինք վերևում, պատկանում են ոչ-հնդեվրոպական լեզուներին։ Այժմ ամփոփենք հնդեվրոպական լեզուների շրջանում։

Հնդեվրոպական նոր լեզուները նախկին կրավորականը ջնջելուց հետո հնարեցին նորանոր ձևեր։ Պարսկերենը՝ սկսած պահլավերենից՝ գործ է ածում օժանդակ բայը միացած դերբային (Spiegel, Gramm. huzw. 118)։ Օրինակ, šikasta am «կոտրված եմ»։ Բայց, որովհետև այս ձևը նաև եղեղոծականն է («կոտրած եմ, կոտրել եմ»), ուստի դիմել են «լինել» նշանակությամբ դանազան օժանդակ բայերի օգնության, ինչպես՝ šudan, gaštan, gardīdan, բոլորն էլ «լինել» բայից, բայց նաև yāftan «գտնել», giriftan «բռնել», dīdan «տեսնել», ինչպես և āmadan «գալ». օրինակ՝ dīde mi ayad «կտեսնվի», gufte āyad «կասվի»։ Այս վերջին գործածությունն նման է դալիս իտալ. il libro viene da me studiato «գիրքը ինձնից գալիս է ուսումնասիրված» (այն է՝ գիրքը ինձնից կուսումնասիրվի)։

(Jensen, Neupers. gramm. 162)։

Քրդերենի մեջ էլ կրավորական կազմելու համար նեղգործականից առաջ դրվում է hatənə «գալ» բայը, որ և իբրև օժանդակ խոնարհվում է, իսկ բուն բայը չի խոնարհվում։

(Beidar, 41)։

Հինդուստանի լեզվի մեջ կրավորականը կազմվում է jānā «երթալ» բայով, որ խոնարհվում է իբր օժանդակ՝ ավյալ բայի հետ. ինչպես՝

māra	jānā	ծեծվել		
maiṉ	mārā	jātā	kūn	ծեծվում եմ
»	»	»	thā	ծեծվում էի
»	»	jāūṉ		ծեծվեցի
»	»	jāūṉgā		պիտի ծեծվեմ և այլն։

(Bonnerjea, 22—23 և Thimm, 31)։

Լեթթերենում թեև կրավորական կա, բայց գործածական չէ. ավելի են սիրում եղեղոծական ձևով արտահայտվել. օրինակ՝ փոխանակ ասելու «Սեղանը ծածկված», ասում են «Սեղանը ծածկում են»։

(Brentano, 105)։

Դանիերենում եղեղոծականը որոշվում է e վերջավորությամբ, մինչդեռ կրավորականը ունի s վերջավորությունը. օրինակ՝ elske «սիրել», elskes «սիրվել»։ Այսպես էլ շվեդերենը ունի եղեղոծականում r վերջավորությունը, իսկ կրավորականում s. ինչպես՝ jag älskar «սիրում եմ», jag älskas «սիրվում եմ»։

Ամենից հետաքրքրականն է լատիներենը, որ հնդեվրոպական կրավորականի հնագույն ձևը (r վերջավորությամբ) պահեց երկար ժամանակ։ Բայց այս ձևը չուներ միօրինակ խոնարհում, քանի որ երկրորդ դեմքում (legeris, legimini) չկար կրավորականի նշանը՝ r։ Ուստի այս ձևը գործածությունից սկսեց ընկնել և նրա տեղ կազմվեց էական բայով անցյալ դերբայի ձևը (amātus est «սիրեալ է»)։ Այս ձևը հետզհետե կլանք տարավ և ժառանգաբար անցավ նորլատին լեզուներին։ Այս բոլորի մեջ եղեղոծական և կրավորական դանազանվում են իրարից օժանդակ բայի միջոցով. «ունեմ» բայը ծառայում է կազմելու եղեղոծականի ձևերը, իսկ «լինել, եմ» բայը՝ կրավորականի ձևերը. ինչպես՝

ֆրանս. j'ai aimé } սիրել եմ je suis aimé }
իտալ. io ho amato } io sono amato } սիրվում եմ։

Ոչ լատինական լեզուներն էլ ունեն նույն ձևը. այսպես՝

գերմ. ich habe geliebt, ich bin geliebt.
անգլ. I have loved; I am loved.

Մինչև անգամ չեխերենում, որ սլավական լեզու է, արդեն կրավորականը կազմվում է էական բայով՝ ճիշտ ֆրանսերենի պես։ Դանիերենն էլ, որ ունի կրավորականի առանձին ձև (ինս վերը), արդեն անցել է այս ձևին, և մի խումբ բայերի կրավորականը այս եղանակով է կազմում։

Հոլանդերենում կրավորականը կազմվում է worden «լինել, դառնալ» բայով։

Ռումիներենում կրավորականը կազմվում է երկու ձևով. կամ դերանվանական բայով և կամ «լինել» (a fi) օժանդակով. ինչպես՝

graul sa macina կամ՝
graul este macinat «հատիկը աղացվում է»։

Բրետոներենն էլ թեև լատինական լեզու չէ, բայց կրավորականը կազմում է bout «լինել» էական բայով. ինչպես՝

me zou câret սիրվում եմ
me oé câret սիրվում էի
me zou bet câret սիրվեցի
(Guillaume, 75)։

Նույնիսկ հնդեվրոպական ընտանիքից շատ հեռու մի լեզու, ինչպես է լազերենը, ներգործականի և կրավորականի դանազանության համար դիմում է նույն միջոցին. ինչպես՝

čareri miʒun գրել եմ (գրած ունեմ), čareri vore գրված եմ։

Կրավորակերպ չեզոք

Եվրոպական լեզուները դերանվանական (pronominal) են կոչում բայի այն տեսակը, ուր ենթական գործողությունը կատարում է իր վրա։ Այսպես. օրինակ՝ լվացվում եմ, այն է «ես ինձ լվանում եմ». նույնպես հագնվում եմ, սանրվում եմ և այլն։ Դերանվանական կոչելու պատճառն այն է, որ այդ կարգի բայերն ունենում են երկու դերանուն, մեկը գործող անձը, որ ուղղական հոլով ենթական է, մյուսը՝ գործյալը, որ նույն անձն է դարձյալ և հայցական հոլով սեռի խնդիր է։ Ըստ այսմ դերանվանական բայերը միաժամանակ ներգործական են և կրավորական՝ ըստ ձևի, իսկ ըստ իմաստի՝ չեզոք են։

Այս բայերը եվրոպական լեզուներով կոչվում են նաև անդրադարձ (réfléchi կամ reflexiv)։

Հայերենում այս կարգի բայերը կոչվում են կրավորակերպ չեզոք, որովհետև ըստ ձևի կրավորական են (քանի որ վերջանում են -վել), իսկ ըստ իմաստի չեզոք են (քանի որ գործողությունը կատարվում է իր վրա)։

Ահա դերանվանական բայի խոնարհումը մի քանի եվրոպական լեզուներով.

ֆրանս.	իտալ.
je me lave	io mi lavo
tu te laves	tu ti lavi
il se lave	egli si lava
nous nous lavons	noi ci laviamo
vous vous lavez	voi vi lavate
ils se lavent	eglino si lavano

գերմ.	անգլ.
ich wasche mich	I wash myself
du wäschst dich	you wash yourself
er wäscht sich	he wash himself / se wash herself
wir waschen uns	we wash ourselves
ihr wascht eur	you wash yourselves
sie waschen sie	they wash themselves

Հոլանդերենում դերանվանական բայը կազմվում է հետևյալ ձևով.

ik verheug mij		ուրախանում եմ	
hij verheugt zich	նա	»	է
wij verheugen ons	մենք	»	ենք

gij verheugt u	*դուք*	»	*եք*
zij verheugen zich	*նրանք*	»	*են*

(Walette, 96)։

Ռումիներեն՝

mă	mir	*կամ*	miru-mă	*զարմանում եմ*
te	miri	»	miri-te	*զարմանում ես և այլն։*

Շվեդերեն՝

jag	beklagar	mig	*գանգատվում եմ*
du	»	dig	» *ես*
han	»	sig	» *է։*

Ինչպես տեսնում ենք, ենթակա դերանունը դրվում է սկիզբը, իսկ սեռի խնդիր դերանունը կամ ենթակայի և բայի միջև (ֆրանս., իտալ.) և կամ բայից հետո (գերմ., անգ., շվեդ.)։

Ռուսերենում դերանվանական բայը կազմվում է բայի վերջում ավելացնելով անդրադարձ դերանունը (ся). *ինչպես՝*

я моюсь	*լվացվում եմ*
ты моешся	» *ես*
он моется	» *է*
мы моемся	» *ենք*
вы моетесь	» *եք*
они моются	» *են։*

Ազգերի մտածողության եղանակը հաճախ իրարից տարբեր է լինում։ Այսպես՝ կան բայեր, որոնք մեզ համար բոլորովին չեզոք են և անդրադարձ վիճակ չեն ներկայացնում, սակայն ուրիշ լեզուներով դերանվանական են։ Օրինակ՝ ֆրանս. s'écrier «բացականչել», s'évanouir «ուշագնաց լինել, նվագել», s'en aller «հեռանալ գնալ», s'enfuir «փախչել» և այլն։ *Այս երևույթը աչքի է զարնում հատկապես այն ժամանակ, երբ մի լեզվի հին վիճակը համեմատենք նորի հետ։ Այսպես՝ հին ֆրանսերենում* se dormir «քնել», se demeurer «քնակվել», se descendre «իջնել», se diner «ճաշել», se tarder «ուշանալ», se partir «մեկնել» և այլն *դերանվանական էին, իսկ այժմ՝ ոչ։*

Ֆրանսերեն ասում ենք se coucher «պառկել», se promener «մարդ գալ, զբոսնել», se lever «վեր կենալ» և այլն, *որոնք բոլորը դերանվանական են, որովհետև ունեն* se *դերանունը, իսկ նրանց*

հայերեն համապատասխան ձևերը չեզոք են և ոչ թե կրավորակերպ չեզոք։ Այսպես և սրանց ռուսերեն համազոր բայերը, այն է лежать, гулять, вставать։ *Եթե այս կարգի ֆրանսերեն բայերի վրայից* se *դերանունը հանենք, կստանանք պատճառական կամ անցողական բայ. այսպես՝* coucher «պառկեցնել», promener «մարդ ածել», lever «վեր կացնել»։

Ռուսերենում դերանվանական բայաձև գործածվում է նաև այն դեպքում, երբ գործողությունը կատարվում է ինքնաբերաբար կամ հակառակ իր կամքին (կրական բայ). ինչպես мне хочется «ուզում եմ» *(ինձ ցանկալի է),* тебе хочется «դու ուզում ես», мне думается «մտածում եմ» *և այլն։ Այսպիսի դեպքերում դերանունը դրվում է սրական հոլովով։*

Այլ լեզուներից օրինակներ.

Մոնղոլական բուրյաթ լեզվում անդրադարձ բայը կազմվում է բայարմատի վրա դնելով ɤ *մասնիկը, որը ըստ իս* ör «ինքը» *դերանունից է ծագում. օրինակ՝*

ugānam *լվանալ,* ugârnam *լվացվել։*

(Castrén, 35)։

Մանդա խմբից ռոհլ լեզվով բայի անդրադարձ ձևը կազմելու համար բայարմատի և վերջավորության միջև դնում են en *մասնիկը. օրինակ՝*

aing	abung-tan-aing	*լվանում եմ*
»	» -en-tan-aing	*լվացվում եմ*
»	» -aing	*պիտի լվանամ*
»	» -en-aing	*պիտի լվացվեմ։*

(Nottrott. 48)։

Սիամերեն լեզվով անդրադարձ բայը կազմում են «մարմին» բառով. ինչպես. ես լվանում եմ իմ մարմինը = լվացվում եմ։

(Wershoven, 83)։

Գործողությունը իրեն համար կատարելու նշանակության համար տարօրինակ ձև ունեն դրավիդյան լեզուները։ Սրանք գործածում են koṇu, konu, koḷ *«առնել» բայը. օրինակ՝* paṇṇi-kkoṇdēn *«շինեցի ինձ համար», որ բուն նշանակում է «շինեցի և ստի,* I made and tookit»։

(Caldwell, 467)։

Անդրադարձ բայի մեկ ուրիշ ձևն է սեփական (appropriatif) *բայը, որ ցույց է տալիս կատարել մի բան իրեն կամ իր սեփական գործածութեան համար: Այսպիսի բայաձև ունի ամերիկյան կարիբիեր լեզուն. օրինակ՝ իր համար տուն շինել, վերցնել իր համար և այլն:*

(Morice, 333):

Այսպես է նաև ամերիկյան անհայտ լեզուն, որ գիտե թե՛ կրավորակերպ չեզոք (réfléchi) *և թե՛ սեփական բայ: Առաջինի համար դնում է* myo, *երկրորդի համար* kyo- *նախամասնիկը. օրինակ՝*

ūvlo *«սիրել»,* myo-üvlo *«ինքզինքը սիրել»,* rewa *«սիրել»,* kyo-rewa *«իր համար սիրել»:*

(Haumonté, 24):

Դիրանվանական բայն ունի նաև փոխադարձ (réciproque *կամ* mutualitif) *բայի նշանակութիւն, այսինքն երկու հնթակա իրար դեմ կատարում են նույն գործողութիւնը. օրինակ՝ ֆրանս.* Jean et Louis s'égratignent *«Ժանը և Լուին իրար են ճանկրտում», le chien et le loup se battent «շունն ու գայլը իրար հետ կռվում են»: Դրավիդյան լեզուների մեջ էլ դիրանվանական այն ձևը, որ ունենք վերը, ունի միևնույն ժամանակ փոխադարձ բայի նշանակութիւն. ինչպես՝*

pēśi-kkoṇḍārgaḷ *«իրար հետ խոսում էինք»:*

(Caldwell, 467):

Ռուսերենում էլ գտնում ենք նույն դրութիւնը. ինչպես՝ дерутся *«իրար հետ կռվում են»: Արաբերենի մեջ բայական* ifti'āl *ձևը թե՛ դիրանվանական, և թե՛ փոխադարձ է: Հայերենում էլ ասում ենք ծեծկվում ենք, որ կրավորակերպ է, բայց ունի փոխադարձ բայի նշանակութիւն:*

Կան լեզուներ, որոնք փոխադարձ և անդրադարձ բայերի համար ունեն առանձին և տարբեր ձևեր: Այսպես՝ աբխազերենում անդրադարձ բայը կազմվում է -č- *միջամասնիկով, իսկ փոխադարձը* eɣ-ba *մասնիկով. ինչպես՝*

s-čə-s-guap'x-u-eit
«ես ինձ սիրում եմ»

i-s-ś-u-eit *«սպանում եմ»*
s-eɣ-ba-ś-u-eit *«կռվում եմ մեկի հետ»:*

(Dirr, Einf, 48—53):

*Կրավորակերպ չեզոքը մեծ կապ ունի նաև բուն կրավորականի հետ: Այսպես՝ ուգրո-ֆիննական լեզուների մեջ անդրադարձ (կրավորակերպ) բայերը հետո դարձել են կրավորական (*Szinnyci, Finn, ugr, spr. 131): *Արաբերենում* tafa''ul, infi'āl, ifti'āl *ձևի բայերը թե՛ կրավորակերպ չեզոք են և թե՛ կրավորական: Սերբերենում կրավորականը երկու տեսակ է ընդհանրապես. 1) Արտահայտում է մի գործողութիւն, օրինակ՝ «Այս տունը շինվում է մեր մեծ հոր բանվորների ձեռքով»: 2) Մի վիճակ, որ արդեն ձեռք է բերված. ինչպես՝ «Տունը շինված է քարից կամ փայտից»: Սերբերենը առաջին դեպքում դնում է կրավորակերպ չեզոք կամ վերածում է ուղղակի ներգործականի, իսկ երկրորդ դեպքում դնում է կրավորական անցյալ դերբայ* (Meillet, Gramm. serbe, 194—195): *Ֆրանսերենում* se *դերանունով կազմված ձևերը (անդրադարձ) հաճախ դրվում են կրավորականի փոխարեն. ինչպես՝*

cela se dit — *ասվում է*
cette robe se porte — *այս շորը դեռ կհագնվի:*

Երբեմն էլ այս ձևը գործ է ածվում իբրև անդեմ բայ և այն ժամանակ դերանունը կարող է դառնալ նաև անորոշ (ինչպես՝ ֆրանս. on, *գերմ.* man): *Օրինակ՝*

Ֆրանս. On joue *կամ* il se joue un grand jeu *«մեծ խաղ է խաղացվում».*

գերմ. man sagt *«ասվում է»,* man behauptet *«ընդունվում է»:*

Կրավորական բայի իբրև անդեմ գործածութիւնը ունի նաև լատիներենը, ուր այս պարագային կրավորականը կոչվում է «անդեմ կրավորական»: Օրինակ՝

ītur	*կերթացվի*
curritur	*վազում են*
luditur	*խաղացվում է*
itum est	*երթացվում է*

Այսպես է նաև շվեդերենում: (Poestion, Schwed., 137):

Լատիներենում անդրադարձ գոդափարը արտահայտվում է կամ se *դերանունով և կամ կրավորական բայով. օրինակ՝*

superbus *se* laudat *հպարտը իրեն կգովի (կգովվի).*
minis non *movetur* tuis *քո սպառնալիքներից չի շարժվում:*

Աշխարհաբարի կրավորակերպին նման է նոր հունարենը, ուր թե կրավորական, թե կրավորակերպ չեզոք միևնույն ձևն ունեն և միայն իմաստով կարելի է երկուսը զանազանել. այսպես՝

λούω *լվալ, խոկ*
λούομαι *լվացվել (= ֆր.* je me baigne *և* je suis baigné).
κρύπτω *թաքցնել*
κρύπτομαι *թաքնվել, թաքնված լինել:*

Տարբերելու համար կարելի է դնել ներգ. բայ՝ réfléchi դերանունով. օրինակ՝

λούομαι = λούω ἐμαυτόν *լվանում եմ ես ինձ.*
στολίζομαι *զարդարել* = στολίζω ἐμαυτόν je me pare *զարդարվում եմ:*

Հոգնակիում գալիս է նաև փոխադարձ իմաստ. օրինակ՝
στολίζονται *զարդարվում են (նշանակում է՝ իրենք իրենց զարդարում են կամ իրար զարդարում են):*

ԳԼՈՒԽ Գ

ԲԱՅԱԿԱՆ ԲՈՒՆ

1. ԲԱՅԱԿԱՆ ԲՆԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Հնդեվրոպական նախալեզվի խոնարհման մեջ ամենակարևոր կետը բայական բների կազմութիւնն է:

Ինչպես որ գոյականների մեջ արմատը մերկ ու մենակ անընդունակ է հոլովվելու և պետք է, որ նախապես վերածվի անվանական բնի, որպեսզի նրա վրա ավելանան հոլովական վերջավորութիւնները, նմանապես և բայերի մեջ պարզ արմատը անընդունակ է առանալու բայական վերջավորութիւնները և այդ վերջավորութիւնները առանալու համար նախապես պարտավոր է վերածվել բայական բնի, որ ձևանում է արմատը հնթարկելով ձայնդարձի զանազան աստիճաններին և կցելով զանազան մասնիկներ: Այս մասնիկները լինում են կամ մի պարզ ձայնավոր և կամ n,s և կամ պալթական բաղաձայններից կազմված մի վանկ:

Այսպես օրինակ՝ հնխ.
*leik^{w}- «թողուլ, լքանել, ձեալ» արմատի բայական բներն են՝
1. léik^{w}e-(*որից հուն.* λείπω, *լիթ.* lẽkù, *գոթ.* leihwa).
2. lik^{w}é-(*որից հուն.* λιπεῖν, ἔλιπε = *հյ. ելիք, սանս.* aričat, *հբգ.* liwi).
3. link^{w}-, linek^{w}-(*որից լտ.* linquõ, *հպրուս.* -linka, *հյ. լքանիմ, սանս.* riṇákti).
4. leloik^{w}- (*որից հուն.* λέλοιπα, *սանս.* riréča).
5. loik^{w}- éye-loik^{w}i- (*որից սանս.* rečáyati, *հյ.* leigia, *լիթ.* laikýti).
6. *Կային անշուշտ նաև արիշ շատ բներ, որոնք այժմ կորած են և կամ պահված են միայն մի լեզվի մեջ, ինչպես՝ սանս.* ričyáte, rekṣyate, *հուն.* λίψω, *կամ թե «bher» «բերել» արմատը*

խոնարհվում էր ըստ կամս bhér-mi, bhibhér-mi, bhṛ-nā'-mi, bhṛ-néw-mi, bhér-ō, bhr-ō և այլն:

Այս բներից յուրաքանչյուրը մյուսներից անկախ է. ոչ մի արմատ պարտավոր չէ միանգամայն բոլոր ձևերով էլ բայական բներ կազմելու, բայց ունենում է անշուշտ մի քանի ձև. բայի այս կամ այն ժամանակի, մանավանդ այս կամ այն երևույթի (aspect-ի) համար որոշված է այսինչ կամ այնինչ բունը: Եվ եթե մտածենք, որ կան մի քանի տասնյակ բներ, պետք է խմանալ, թե ուրեմն որքան բարդ և կինճատա էր խոնարհումը հնդեվրոպական նախալեզվի մեջ: Նա ոչնչով նման չէր արդի կանոնավոր լեզուներին, որոնց մեջ բայական բունը ամբողջ խոնարհման ժամանակ մեկ կամ երկու ձև ունի: Հյ. սիրել ներկայից մինչև ստորադասական և դերբայները պահում է նույն սիր-ձևը. այսպիսի երևույթ չկա հնդեվրոպական նախալեզվի մեջ: Բայական ձևերի անկախությունը իրարից՝ այնքան է զարգացած, որ մինչև անգամ միևնույն գաղափարը տարբեր բայական ձևերի մեջ կարող է ներկայանալ բոլորովին տարբեր արմատներով. այս երևույթի շարունակությունը պահպանում է-օրինակ հյ. երթամ. կոր. չոգա, աշխ. գնացի. ըմպեմ, կոր. արբի և այլն. հունարենի մեջ. ἴρἐχω «վազում եմ», ἔδραμον «վազեցի», ὁράω «տեսնում եմ», ὄψομαι «կտեսնեմ», ἐσθίω «ուտում եմ», ἔφαγον «կերա», ἔρχομαι «գալիս եմ», εἶμι «կգնամ», ἦλθον «գնացի» և այլն:

(Meillet, Traité, 163):

2. ԲԱՅԱԿԱՆ ԲՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Առաջին տեղը բռնում են այն բները, որոնք կազմվում են պարզ արմատից՝ առանց մասնիկի (կամ գերո մասնիկով) և ըստ այսմ իմաստի կողմից նոր երանգ չեն ներկայացնում: Այս կարգի բները բաժանվում են երկու խմբի. աճրուն և բնավոր: Անրուններն կազմում են հնդեվրոպական նախալեզվի հնագույն խավը, հետևաբար շատ սակավաթիվ են և գտնվում են միմիայն այն լեզուների մեջ, որոնք հնամանդ կերպարանք ունեն, ինչպես կամխերեն, վեդայական հնդկերեն, հին հունարեն և լիտվաներեն: Հետագայում դրանք հետզհետե վերածվեցին բնավորի, որոնց թիվը արդեն բավական առատ էր հնդեվրոպական նախալեզվի մեջ:

Այս կարգի բներից առացվում են ներկա և աորիստ ժամանակները, ինչպես՝

Ներկա ժամանակ

Հնխ. ei,i «երթալ», հնխ. éi-mi «գնում եմ», éi-ti «գնում է», i-més, i-énti «գնում ենք, եք».>սանս. émi, imás, yánti «երթամ, երթանք, երթան», հուն. εἶμι ἴμεν «երթամ, երթանք», լիթ. eimì «երթամ», լտ. īs, it, īmus, ītis և այլն:

Հնխ. es, s «լինել», որից հնխ. ésmi, ési կամ éssi, ésti, smés, sthé, sṇti կամ sénti «եմ, ես, է, ենք, էք, են»> սանս. ásmi, ási, ásti, smás, sthá, sánti, կամխ. eszi է ašanzi են, հուն. εἰμί, εἶ, ἐστί, ἐσμέν, ἐστέ, εἰσί, լտ. est, sunt, լիթ. esti, հալ. jesmĭ, jestŭ jesté, sǫtu, գոթ. im, ist, sind և այլն:

Հնխ. ed, od, «ուտել»> սանս. ádmi, «ուտեմ», լտ. ēst «ուտե», կամխ. adanzi «ուտեն», լիթ. ė́dmi, ė́sti, հալ. jamĭ, jastŭ, հուն. ἔδομαι «ուտել», ἔδ-ο-μαι «կուտեմ», հյ. ուտեմ <ōd-mi:

Հնխ. bher «բերել», որից հետքեր են վեդ. bhárti լտ. fert, Հոմեր. φέρτε, հետո վերածված է բնավորի, հնխ. bhérō, bhéresi, bhéreti «բերեմ, բերես, բերե» և այլն:

Աորիստ

Հնխ. dhē, dhə «դնել», dhé-t, é-dhē-t «դրաւ»> սանս. ádhāt, հուն. ἔθεμεν, ἔθετο հյ. եդ:

Հնխ. dō, də «տալ», é-dō-t «տվեց»> սանս. ádāt, հուն. ἔδομεν, ἔδοτο, հյ. ետս:

Հնխ. gʷem, gʷm «գալ»> սանս. ágan, հանգլ. cyme, հյ. եկն»:

Հնխ. plē, pl «լցնել»> վեդ. a-prā-t «լցրեց», հրմ. pūrdhi, Հոմեր. πλῆ-το «լիր»:

Բնավոր ձևերից

Հնխ. sneigʷhe/o- «ձյունել»> գոթ. snaēžaiti, լիթ. snẽga, հն. νείφει, հլտ. nīnit, հրգ. sniunit ձյունէ»:

Հնխ. weg'h «կառքով երթալ»> սանս. váhati, պամփ. հն. ϝεχω, լտ. vehō, հրգ. wigu, լիթ. vežù, հալ. vezǫ:

Հաճախ միևնույն արմատը թե՛ ներկա և թե՛ աորիստ միանգամայն չի տալիս. շատ անգամ պատահում է, որ միևնույն իմաստով երկու տարբեր արմատներից մեկը տալիս է միայն ներկա, մյուսը միայն աորիստ, այն է՝ մեկը ունական գործողություն ցույց տալու համար, մյուսը պարզ գործողություն. այսպես՝ վերև հիշված ed, od «ուտել» տալիս է միայն ներկա (տևական գործողություն), իսկ աորիստի համար ունենք տարբեր արմատներով՝ սանս. á-ghas, հն. ἔ-φαγε, հյ. ե-կեր: Նույնպես es, s «լինել»

գոյանալ» արմատը տալիս է միայն ներկա, իսկ սորիստի համար ունենք bhewə- *արմատից՝ սանս.* ábhūt, *հալ.* by, bystŭ, *լտ.* fuit, *իսկ հյ.* եղէ:

2. Կրկնավոր բներ.—*Ձևանում են արմատի կրկնությամբ և առանց մասնիկի (գերս մասնիկով). Նշանակությամբ տարբերվում են մյուսներից նրանով, որ այստեղ նկատի է առնվում գործողության վերջանալը կամ մինչև ծայրը հասնելը. տալիս են ներկա և սորիստ ձևեր: Օրինակ՝*

Հնխ. dō, də «տալ»>*սանս.* dádāmi, *հն.* δί-δω-μι

Հնխ. dhē, dhə «դնել»>*սանս.* dádhāmi. *հն.* τί-θή-μι, τί-θε-μεν.

Հնխ. g'en «ծնել»>*հն.* γί-γνομαι, *լտ.* gi-gn-ō:

Հնխ. bhi-bher-mi, bhi-bhṛ-més, bhi-bhṛ-nti *բերեմ...*>*սանս.* bibharmi, bibhṛmás, bibhráti:

Երբեմն արմատն այնպես է ձևափոխվում, որ կրկնությունը անճանաչելի է դառնում. ինչպես՝ wekʷ «ասել, խոսել» *արմատից հնխ.* we-ukʷe/o-, *համմ. հն.* ἔƒειπε (=*é-we-ukʷ-e-t), *սանս.* ávocāt «ասաց»:

Կրկնավոր բները պահված են մեծ մասամբ արխայիկ լեզուներում և հունարենում. մյուսները ցույց են տալիս միայն հետքեր. օրինակ՝ թոխար. tetriwu «խորտակեալ», *հայերենի մեջ կա միայն արարի ձևը:*

3. Կատարյալի բունը. — *Ամեն արմատից (բացի մի քանիսից, ինչպես՝* ei «երթալ») *կազմվում է այս բունը, որ ձևանում է անբան արմատի վրա ավելացնելով յուրահատուկ վերջավորություններ, արմատի ձայնավորը դարձնելով* o *և երբեմն էլ կրկնությամբ. օրինակ՝*

Հնխ. voida>*սանս.* véd-a, *հն.* foīd-a, *գոթ.* wait, *գնդ.* vaēdā, *հալ.* vēdē, *հպրս.* vaissei:

Հնխ. gén-«ծնել», gé-gʲón-a «ծնալ»>*սանս.* jajā́-na, *հն.* γέ-γονα.

Կրկնավոր կատարյալի ձևը լավ պահված է արխայիկի և մասնավանդ հունարենի մեջ. օրինակներ կան նաև գոթականի և իսլանդերենի մեջ. ինչպես՝ իսլ. (ro)gegon «գարկի», *գոթ.* laílōt «թողեցի», saísō «ցանեցի»:

Կրկնավոր կատարյալի ձևը կար հին գերմանական լեզուներում. հնլս. լեզվում կրճատմամբ և ուրիշ պատճառներով մեծ մասը դուրս եկավ և անճանաչելի դարձավ. օրինակ՝ հնլս. halda=*գերմ.* halten

բայից կար. helt *(որի գոթ. ձևն է* haihald).—auka «vermehren» *բայից հնլս. կար.* jók, *որի գոթ. ձևն է* aiauk):

(Noreen, 158):

Առանց կրկնության կատարյալի օրինակներ կան բալթիկ-սլավական, գերմանական, լատինական և կելտական լեզուների մեջ, որից երևում է, թե նախալեզվյան շրջանին այս ձևը ընդարձակ գործածություն ուներ, թեև սանսկրիտի մեջ հազիվ է երևում: Հետագայում կատարյալի և սորիստի իսոնությունով ժառանգ լեզուները կազմեցին իրենց իսոնարհման զանազան ժամանակները. այսպես ձևացան լատիներենի մեջ perfectum *և գերմանականի մեջ* preterit, *հնխ. կատարյալի պարզ ձևը ամեն տեղ դարձավ ներկա (ինչպես՝ սանս.* véda, *հն.* ƒοῖδα *և այլն), շատ տեղ կատարյալի կրկնավոր ձևը բաժանվեց ներկայի և կատարյալի վրա (օր. լտ.* meminī *ներկա է,* tutulī *անցյալ է), և այս բոլորը պատճառ դարձան, որ կրկնավոր կատարյալը ամեն տեղ էլ չնջվի:*

4. Սաստկական ներկա. — *Կազմվում է արմատի սաստկական կրկնությամբ, առանց մասնիկի (գերս մասնիկով) և ցույց է տալիս, որ գործողությունը մի քանի անգամ կրկնվում է (հաճախական) և կամ ուժգնությամբ է կատարվում (սաստկական). օրինակ՝ սանս.* dediṣ-ṭe «ցուցանէ», *գնդ.* daēdōiš-t «ցույց տվից», *սանս.* nenik-te «լվացվում է»: *Պահված է արխայիկ խմբի մեջ, իսկ մյուսների մեջ հետքեր միայն կան. ինչպես՝ հալ.* glagoljǫ «խոսում եմ», *հն.* πορ-φῡ́ρω «հառում գետում է», παμ-φαίνω «սաստիկ փայլփլում է», *նախկ սանսկրիտում այս ձևը ավելի հազվագյուտ է դառնում, մինչդեռ վեդայականի մեջ հաճախ կա: Երբ սաստկականի պարզ ձևը կորած է, սաստկականը սառնում է պարզ ձևի իմաստը. ինչպես՝ սանս.* carkar-mi «կոչում՝ փառաբանում եմ» *ոչինչ չունի նշանակությամբ սաստկական, որովհետև պարզ ձևը կորած է:*

5. Երկար ձայնավորով ներգոյ բներ. — *Կազմվում է արմատի վրա ավելացնելով* ā *կամ* ē, *որի ձայնդարձն է* o. *այսպես՝ սանս.* men. «միտքը պահել» *արմատից կազմվում է հնխ.* mºnē- «խորհել» *և* mnā «հիշեցնել» *բները. (առաջինից ունենք հալ.* mīnēti, *լիթ.* miné'-ti, *գոթ.* munaiþ «խորհել» *և հն.* μανῦναι, *իսկ երկրորդից՝ սանս.* mnāyāt «յիշեցուսցէ», *հն.* μν'-ομαι, μέμναμαι). *Թերևս նաև* mºnā-, *որից հյ. միամանամ»? Նույնպես հնխ.* men «միտք» *արմատից կազմվում է* mºnē- *(որից լտ.* manēre) *և* mnā *(որից հյ. մնամ) բները:*

Այս կարգի բները ցույց էին տալիս վիճակ կամ դրութիւն, հատկապես տևական դրութիւն, որից առաջանում են հետո կրավորակերպ էնզոքի իմաստով բայեր։

Սրանցից ā բունը պահված է հին սլավերենի, լատիներենի, լիթվերենի, լիտվաներենի, իլանդերենի, նաև հայերենի մեջ։ Հին սլավերենի մեջ սրանից են առաջացած տևականի սորիստը, անկերևույթը (ինչպես՝ pīsa-ti «գրել») և հաճախականը (ինչպես՝ gnětati «ճնշել», mětati՛ «նետել»).— լատիներենի մեջ -āre ձևով չծորդութիւնը (ինչպես՝ papāre «պատրաստել, հարդարել», lavāre «լվացվել», մինչդեռ lavere «լվանալ», occupāre «դրավել», մինչդեռ capere «բռնել»), լիթվ. mētāt «նետել», հբգ. helan «թաքցնել», հիւս. scaraim բաժանվել (մինչդեռ լիթվ. skirtù բաժանել), հայերենի մեջ -ամ չծորդութիւմբ՝ «կեամ» (հնխ. gʷiy-ā-) «իմանամ» ? (հնխ. mᵉnā-, հմմտ. լիտ. jmany՛ti «իմանալ»)։ Նույն ā- բնից են դարձյալ լատիներենի preterit- ները ā և bā ձևով (eram, eras, erat, manēbām, manēbās և այլն), և իտալո-կելտական սորատատևականի մի ձև (ինչպես լա. advenat, tūlat, հիւս. bia «հարցէ»)։

ē բունը շատ լավ պահված է բալթիկ-սլավականի, գերմանականի, լատիներենի և հունարենի մեջ, բայց բացակայում է արիականում։ Հունարենում տալիս է η ձայնով սորիստներ, հին սլավերենում ě ձայնով սորիստներ և անկերևույթներ (ինչպես՝ mĭn-ě-ti «մտածել», mĭn-ě-xu «մտածեցի», bīd-ě-ti «զարթնել»), լիտվաներենում ė՛ ձևով անկերևույթներ (ինչպես՝ smird-ė՛-ti «հոտել», tek-ė՛-ti վազել), գերմանականում և լատիներենում ē ձևով ներկա և անկերևույթ (ինչպես՝ tacēre «լռել», habēre «ունենալ», հբգ. habēm «ունեմ», dagēn «լռել»)։

Անշուշտ այս ē մասնիկը կարող է դառնալ նաև ձայնդարձով ō, ինչպես ցույց է տալիս հն. ‘βαλῶναι «բռնվել», ‘αλίσκομαι ձևի դեմ։

Այս կարգի բների ā, ē, ō մասնիկները պետք չէ շփոթել երկվանկ արմատների ā, ē, ō վերջաձայնների հետ, որոնք պատկանում են արմատին։

6. *ye/o* կամ *i*, ī մասնիկով բներ.— Առաջինը գտնում ենք սանսկրիտի մեջ. ինչպես՝ budh-ya՛-te «il est éveillé»! pū-ya-ti «հոտում է».— երկրորդը ունեն բալթիկ-սլավական խումբն ու հայերենը. ինչպես՝

լիթ. mĭn-i- =հայ. mĭn-i-tŭ «մտածում է»
smird-i- = smrŭd-i-tŭ «հոտում է»
bĭd-ī-tŭ «արթուն է»։

Հայերենի մեջ այս կարգին են պատկանում -իմ վերջավորութեամբ կրավորականները, որոնց ի ձայնը կարող է գալ թե կարճ, և թե երկար i-ից, որով բոլորովին համապատասխանում է բալթիկ-սլավականին, ուր լիտվաներենն ունի կարճ i, իսկ սլավականը երկար ī։

Լատիներենի մեջ i բնի հետքեր երևում են -ske- մասնիկի հետ, ինչպես՝ re-minī-scor «վերհիշում եմ», comminī-scor «երևակայում եմ» և այլն։

Կազմում է ներկա. ունի ընդհանուր նշանակութիւն. սանսկրիտի և իրանական լեզուների մեջ մի մասը հատկացված է կրավորականին, ճիշտ ինչպես հայերենում, իսկ բալթիկ-սլավականում չեզոք է։

7. *éye/o* կամ i, ī մասնիկով բներ.— Սրանք սովորաբար անցողական, երբեմն էլ հաճախական են։ Առաջինը գտնում ենք արիական լեզուների մեջ -a՛ya- ձևով (ինչպես՝ սանս. varta՛yati դարձնում է, sād-a՛ya-ti «նստեցնում է», prath-a՛ya-ti «տարածում է»), հունարենի և լատիներենի մեջ e ձևով (ինչպես՝ հն. φορέω «հաճախ տանում եմ», φοβέω «վախեցնում եմ», լա. moneō «հիշեցնում եմ», noceō «վնասում եմ», spondeō «երաշխավորում եմ»). երկրորդը գտնում ենք սլավականի մեջ i (երկար ī) ձևով (ինչպես՝ vrati-tŭ «դարձնում է», budi-tŭ «արթնացնում է»), կամ նաև երբեմն լատիներենի մեջ i, ī ձևով (ինչպես՝ sopiō «քնացնում եմ», sopīs «քնացնում ես», sopit «քնացնում է»)։ Նույն մասնիկը կա նաև իլանդերենի մեջ (ինչպես՝ guidim «խնդրեմ», guirim (ջնռացանեմ»), բայց սրանց i ձայնը կարող է ներկայացնել թե eye և թե ī։

Այս բունը տալիս է միայն ներկա. չունի սորիստ։

8. s-ով սորիստ.— Սորիստի այս ձևը կազմվում է արմատի վրա ավելացնելով s առանց ձայնավորի. պահված է սանսկրիտի, հունարենի և հին սլավերենի մեջ, իսկ մասամբ էլ թոխարերենի, լիտվաներենի, գերմաներենի և լատիներենի մեջ. ինչպես՝ սանս. a՛vākṣam «կաքով տարի», հսլ. vĕsŭ, լա. vēxī, վեդ. maṃsi «մտածեցի», թոխար. yopsa «մտավ» (ներկա yapi), սանս. adikṣi

«ցույց տվեցի», հն. ἔδειξα «ցույց», ἔτερψα «հաճեցա», լա. dīxit «ասաց»:

Ձայնավորով միացած is մասնիկը գոնում ենք սանսկրիտի և լատիներենի մեջ (ինչպես՝ սանս. a′bhārişam «բերի», լա. ēg-is-ti, ēg-is-tis, ēg-ēr-unt. տյսպես նաև թոխար. wēnaşt «ասացիր» և կամիս. naišt «տարիր», naišten «տարաք»: Այս is մասնիկն է, որի վրա ավելանալով ā, ալիլ է հյ. կար.—նա (-յա-) մասնիկը:

9. $s^e/_0$, $sy^e/_0$ մասնիկով բներ.— Պահված են արդի լեզուների մեջ ապառնիի համար. տյսպես՝ արիականում sya ձևով (ինչպես՝ սանս. vakşyā′-mi, գնդ. vax-šyā «պիտի խոսեմ»), լիտվականներենում si) ինչպես՝ liksiu «պիտի թողնեմ», liksime կամ lkşme «պիտի թողնենք», likşęs «թողնելիք»), հն. և լա. $se/_0$ (ինչպես՝ λείψω «պիտի թողնեմ», dīxō «պիտի ասեմ»), խալդերեներում s, որ կրկնականով տալիս է ապառնի, առանց կրկնութեան՝ առօրեական, ինչպես կա և լատիներենի մեջ (ինչպես՝ իռլ. guidim «խնդրում եմ»,—gess «խնդրիցեմ», -gi-gius «խնդրեցիր», լա. faxit «առնիցէ»:

Ապառնիի ձևերը շատ հազվագյուտ են հին արիականում և սլավականում. Ռիգ- վեդան ունի միայն 15 օրինակ, հին սլավերենը ունի միայն մի օրինակ (byšešteje «լինելիք»). և որովհետև գանազան լեզուների մեջ այս մասնիկը տալիս է ըղձական (désidératif) բայեր (համմա. սանս. ririkşati «ցանկանում է թողնել», čikīrşati «ցանկանում է շինել», լիթ. kla′usia «հարցափորձում է, այսինքն ուզում է իմանալ»), ուստի պարզ է, որ նախալեզվի մեջ նյս բունը կազմում էր ըղձական բայեր և հետո արիականի, հունականի և բալթիկ-սլավական լեզուների մեջ զարձալ ապառնի:

10. Ռնգային միջամասնիկով բներ. — Ամենից լավ պահված են արիական լեզուների մեջ. արմատի վերջածայնից առաջ դրվում է ne կամ n. ինչպես՝

yeug- «կցել»>սանս. yu-na′-k-ti, հպ. yu-n-ǐ-a′nti.

bheid- «ճեղքել»>սանս. bhi-nа′-t-ti, հպ. bhi-n-d-a′nti.

leik^w- «թողնել»>հնխ. link^w կամ li-ne-k^w>սանս. ri-ṇa′-k-ti, գնդ. iri-na-x-ti.

Այս բոլորը անբուն են, բայց շատ կանուխ սկսեցին վերածվել բնավորի, նույնիսկ վիպական շրջանից սկսած. ինչպես՝ վեդ. vinda′ti «գտնում է»: Տյսպես նաև լատին և բալթյան խմբերում. ինչպես՝ լա. jungō, findō, linquō և հպրուս. po-līnka «մնում է»: Անբուն ձևի մնացորդ է նաև կամիս. har-ni-k-zi «ավերում է», har-ni-k-anzi ավերում են (արմատը hark «կորչել, ավերվել»): Այս -nu- լայնորեն օգտագործվում է նաև կամիսերենում. օրինակ՝ կամիս. arnumi «բերում եմ»=հյ. «առնում»:

Հունարենի մեջ արմատի u վերջածայնի հետ միանալով ձևացած է -vu-, որով և կազմվում են գանազան ձևեր. ինչպես՝ ὄρνυμι, στορνυμι, ξεὐγνυμι և այլն:

Այս ձևը տալիս է միայն ներկա և չունի ապրիստ:

11. $y^e/_0$ մասնիկով բներ.— Այս մասնիկը կազմում է դոյականներից անվանական բայեր (dénominatif) և բայերից բայածանցներ (déverbatif). ամեն լեզվի մեջ էլ ունի առատ ներկայացուցիչներ. ինչպես՝ սանս. pṛtanā-ya′-ti «պատերազմում է», հն. τῑμάω «հարգում եմ», τελείω «վերջացնում եմ», լա. seneō «ծերանում եմ»=լիթ. senė′ju, գոթ. namnja «անվանում եմ», հպ. kotora-ją «վախում եմ», ռուս. igrá-ju «խաղում եմ» և այլն: Այս բոլորը անվանական են: Բայց կան նաև բայերից ածանցված բայեր. ինչպես՝ սանս. dadiç-ya′-te «ցույց է տալիս», հպ. glagol-jǫ «խոսում եմ», լիտ. jùrg-iu «կցում եմ», հն. μνᾶ-ομαι «ձգտել մի բանի» և այլն:

Նախնաբար այս բոլոր ձևերը գործածական էին միայն ներկա ժամանակով. հետո լեզուները անկախաբար ձեր տարածեցին և կազմեցին անվանական բայերի ամբողջ խոնարհումը:

Պետք չէ շփոթել այս ye մասնիկը, որ անվանական բայեր է կազմում, այն մյուս ye (№ 6) մասնիկի հետ, որ պարզ բայեր է կազմում:

12. $ske/_0$ մասնիկով բներ.— Ժառանգ լեզուների մեջ երևում է հետևյալ ձևերով. հն. σκω, լա. scō, հպգ. sku, կամիս. ški-, թոխար. işşa-, əska-, սանս. ccha, գնդ. sa, հյ. ց. համմա.

is-sk^{1}é>սանս. iccha′ti, գնդ. isaiti «փափագում է», հպգ. eiscōn «խնդրել», ումբր. eiscurent, հյ. «հայցել», հպ. jiskǫ «փնտռում եմ», prk^{1}sk^{1}e>սանս. pṛčča′ti, գնդ. pərəsaiti, լա. *poriscō> posko, հպգ. forscōn, հյ. «հարցն»:

Ավելի հաճախ գտնում ենք հունարենի և լատիներենի մեջ. ինչպես՝ γηράσκω «ծերանում եմ», μεδύσκω «հարբում եմ», εὑρίσκω «գտնում եմ», լա. hiāsco «ճեղքվել», rubescere, sco «փայլփլել», obdormiscere, co «քունը տանել», tepescere, sco «տաքանալ», noscere, sco «ճանաչել»:

Հաճախակի է նաև թոխարերենում իբր անցողական բայ. օրինակ՝ yamaskau «գործեմ»:

Այս կարգի բները ցույց են տալիս գործողության սկզբնավորության և կազմում են միայն ներկա. չկա աորիստ. կամ ներհնում դարձել է հաճախական բայ կամ բնի կատարված մի գործողություն է ցույց տալիս:

13. $n_e/_0$ մասնիկով բներ.— Գտնվում է հատկապես հայերենի, սլավերենի և գերմաներենի մեջ, մասնակի կերպով նաև ուրիշ լեզուներում. կազմում է ներկա և առացվում է բայի արմատից և հատկապես աորիստի բնից. ինչպես հյ. դնեմ (իմա *դինեմ, կազմված աորիստի դի = սանս. dhā- բնից, հալ. stanǫ «կկանգնեմ», գոթ. fraihna «հարցափորձում եմ», հն. πῑ́νω «խմում եմ», լիթ. aunù «հագնվում եմ»: Կա նաև $n^e/_0$ ձևով բայթյան, հալ և հայն լեզուների մեջ. ինչպես՝ bùdinu «արթնացնում եմ», հյ. «լքանեմ» (կատարյալի լիք բնից), ուր մասնիկը փոխանակում է ենգային միջամասնիկավոր բանը՝ լտ. linquō, սանս. riṇákti), հն. αλφάνω «շահել, ձեռք բերել». πυνθάνομαι «տեղեկանալ»:

14. Այս բոլորից դուրս կան բազմաթիվ ուրիշ բներ, կազմված զանազան մասնիկներով, որոնք սահմանափակված լինելով այս ու այն լեզվի մեջ, դժվար է նրանց հնդեվրոպական նախավիճակը և սահմանները վերականգնել. իրրև տեսակ հիշենք միայն $dh^e/_0$ մասնիկը, որ գտնում ենք գործական, Հոմեր. ἔσθω, πλήθω, σχε-θω, πελάθω «մոտենում եմ» և այլն ձևերի մեջ և որով թևերս կազմված են գոթ. walda «տիրում եմ», հալ. vladǫ «նույն նշ.», լիտ. véldu, հիւլ. flaith «գերիշխանություն» և այլն:—Նույնպես k մասնիկը, որ գտնում ենք աորիստ. ἐθηκα (հոգ. ἔθεμεν), լտ. fē-c-ī, փռյուգ. αδδα-κ-ετ «արարե», հն. ἦ-κ-α, լտ. iē-c-i և այլն ձևերի մեջ: Դարձյալ-wo-,-do-,to- և այլն և այլն:

Այսպիսի օրինակներ բազմաթիվ են:

Վերև հիշատակված բներից շատերը ունեն միայն ներկա և չունեն աորիստ. իսկ մյուսները ունեն աորիստ: Այս բառերը պետք չէ առնել սովորական քերականական իմաստով.—«ներկայի բուն» ասելով հասկացվում է ինդոեվրոպական եղանակում ընդունում է թե առաջին, և թե երկրորդ կարգի վերջավորությունները, որոնց մասին պիտի խոսենք ավելի հետո: Իսկ «աորիստի բուն» ասելով հասկացվում է ինդոեվրոպական մի բայական բուն, որ սահմանական եղանակում ընդունում է միայն երկրորդ կարգի վերջավորություններ: Կատարյալը ունենալով առանձնահատուկ վերջավորություններ, ինչպես պիտի տեսնենք, ներկայի բուն չէ. ընդհակառակը ենգային և անցողական բները ներկայի բուն են համարվում, որովհետև ընդունում են երկրորդական վերջավորություններ:

Ներկա բների մեծագույն մասը չունի աորիստ, իսկ ընդհակառակը աորիստի բները բոլորը (բացառությամբ մեկի) ունեն նաև ներկա:

Բայական բների ծագման պատմությունը մեզ հայտնի չէ, բայց իրրև օրինակ կարող է ծառայել մեզ հնդեվրոպական բայական բների ծագումը: Այս լեզվի մեջ պարզ արմատից կազմված բայերը (աճրուն ձև) շատ քիչ են. մեծ մասամբ կազմված են գոյական կամ ածական հին արմատի վրա կցելով eni, teni, dni, tni, ani, eni, edni, atni, ni մասնիկները, որոնք գոյացած են lēnni «լինել», ledni «դառնալ», adni «ուտել», tēnni «անել» բայերից՝ սղմամբ. օրինակ՝ szár «չոր» բայից száradni «չորացնել» (որ է «չոր անել»):

ԳԼՈՒԽ Դ

ԽՈՆԱՐՀՈՒՄ

1. ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԹՎՈՒՄԸ

Բայական մի ձևի բոլոր եղանակների, երևույթների, սեռերի, դիմավոր և երկրորդական ժամանակների ամբողջական թվումը՝ իրենց բոլոր դիմքերով ու թվերով՝ կոչվում է խոնարհում: Իսկ յուրաքանչյուր եղանակի, մի երևույթի, մի սեռի, մի դիմավոր կամ մի երկրորդական ժամանակի ամբողջական թվումը՝ իր բոլոր դիմքերով ու թվերով՝ կազմում է բայական մի եզր: Որքան քիչ է եզրերի թիվը մի լեզվի խոնարհման մեջ, այնքան աղքատ է այդ լեզվի խոնարհումը, և ընդհակառակը՝ որքան շատ է եզրերի թիվը, այնքան հարուստ է այդ լեզվի խոնարհումը:

Գաղափար կազմելու համար այս մասին՝ տալիս ենք այստեղ մի քանի լեզուների խոնարհման նկարագիրը, սկսելով ամենապարզներից և գնալով մինչև ամենաբարդը:

Խոնարհման ամենապարզ ձևը ներկայացնում է չինարենը, ուր չկա ոչ եղանակ, ոչ երևույթ, ոչ սեռ, ոչ թիվ և ոչ դիմք. միևնույն բայական ձևը թե սահմանական է, թե հրամայական, և թե ստորադասական. դիմքերը որոշվում են միայն դերանունների միջոցով. օրինակ՝ lai² *նշանակում է միաժամանակ «գալ, արի, գալիս եմ, գալիս ես, գալիս է, գալիս ենք» և այլն. ավելի պարզելու համար միտքը՝*

wo³ la′i² *գալիս եմ*
wo³-mən la′i *գալիս ենք*
ni³ la′i² *գալիս ես*
ni³-mən la′i² *գալիս եք և այլն:*

Անցյալ կատարյալը տալու համար բայից հետո դնում են liāo³ *«լրացնել», որ սղյալ դառնում է* la.

wo³ la′i² la *եկա*
wo³-mən la′i²la *եկանք և այլն:*

Ապառնիի համար դրվում է ciu *«այնուհետև» կամ* pi *«անշուշտ». ինչպես՝*

wo³ čiu la′i² } *պիտի գամ:*
wo³ pi la′i }

Այսպիսի մի քանի ձևեր էլ կան, որոնց մասին ավելի ներածության մեջ:

Հրո երկրի օնո-շիլինամ լեզուն էլ խոնարհման մեջ ոչ մի ժամանակ չի ճանաչում: Բայի ժամանակը հասկացվում է տեղից և հանգամանքներից: Հաճախ ժամանակը որոշելու համար գործածում են ոչ թե բայական առանձին ձևեր, այլ ժամանակական մակբայներ: Այսպես՝ ներկայի համար գնում են naik, kanai, ma, *որոնք նշանակում են «այժմ, շուտով, հիմա»: Անցյալի համար գործածում են* !au, lâito *«արդեն առաջ»,* akneye-kams *«երեկ»: Ապառնիի համար գնում են* or, nore, norre *«հետո, հաքը»,* norauk *«վաղը» և այլն: Միայն մի բայական ձև կա ապառնիի համար, որ կազմվում է* -aš *մասնիկով. ինչպես՝* karten *«ուտել» բայից՝* ia-t-karté-i-aš *«ես այն պիտի ուտեմ»: Սակայն ի նկատի ունենալով բոլոր նախորդները, կարելի է ասել, որ այս* -aš *ձևն էլ կրճատված մի մակբայ է (*Tonelli, *52):*

Ամերիկյան խիվարո լեզվի մեջ ներկան կազմում են բայարմատի սկիզբը դնելով epa *մակբայը, որ նշանակում է «այժմ», իսկ անցյալի սկիզբը* naca, հոգ. naupa, *որի իմաստը ասկայն հայտնի չէ:*

*(*Brinton, *26):*

Ճապոներենում բայը ներկայացնում է միայն ժամանակ և եղանակ, իսկ թիվ ու դեմք չունի: Այսպես նաև կոբեական լեզվի մեջ, որ դեռևս զանազանել բայը ըստ այնմ, թե խոսքը ուղղված է ավելի բարձրաստիճան, թե ավելի ցածրաստիճան մարդու:

Ախոե լեզվում բայը չի խոնարհվում. բայից առաջ դրվում են դերանունները, որոնք ցույց են տալիս դեմքն ու թիվը (երրորդ դեմքը թիվ էլ չունի), իսկ բայից հետո, եթե հարկ լինի, դրվում են զանազան օժանդակ բայեր, որոնք նույնպես չխոնարհվելով ցույց են տալիս նույն բայի ժամանակն ու եղանակը. Սրանք են՝

ruwe ne *գործը կատարված վերջացած է.*

širi ne	*գործը ներկայումս դեռ շարունակվում է (կոր).*
kor' an	*նույնն է և ցույց է տալիս իրական գործ.*
tap an	*նշ.* it is so *այդպես է. զորացնում է բայի իմաստը.*
nisa	*անցյալ կատարյալի նշանն է.*
okere	*«վերջացնել». նույնպես կատարյալի նշանն է.*
awa	*նշ. «հղհալ». ցույց է տալիս, թե մի գործ եղել վերջացել է և մի ուրիշն է սկսվել:*
hemaka	*նշ. «վերջացնել». նշանն է կատարյալի.*
kusu ne	*նշ. «պիտի լինի». ցույց է տալիս ապառնին.*
nangoro	*նշ. «հավանաբար պիտի լինի». ցույց է տալիս հավանական ապառնին.*

օրինակ՝ kik *«ծեծել» արմատից պարզ խոնարհումն է՝*

ku	kik	*ծեծում*	*եմ*
e	«	»	*ես*
	«	»	*է*
či	«	»	*ենք*
eči	«	»	*եք*
	«	»	*են*

բարդ ձևերից են՝

ku	kik širi ne	*կծեծեմ կոր (ծեծելիս եմ)*	
e	« « »	*կծեծես կոր (ծեծելիս ես) և այլն*	
ku	« kusu»	*պիտի ծեծեմ*	
e	« « »	» *ծեծես*	
ku	« nisa	*ծեծեցի*	
e	« «	*ծեծեցիր:*	

Սկզբում դնելով šomo, *ամեն ինչ վերածվում է բացասականի. ինչպես՝*

šomo ku kik kusu ne *չպիտի ծեծեմ ես:*

(Batchelor, 71—73):

Շատ պարզ է խոնարհումը ամերիկյան յուկատեկան լեզվով. օրինակ՝ yacunt *«սիրել» արմատից՝*

ten	yacuntic	*ես սիրում եմ*	
tech	«	*դու* »	*ես*
tetile	«	*նա* »	*է*
c toon	«	*մենք* »	*ենք*

teex	«	-eex	*դուք սիրում եք*
letileoob	«	-oob	*նրանք* » *են:*

Ըստ այսմ խոնարհման ժամանակ արմատից առաջ դրվում է դերանունը. իսկ բայը՝ անփոփոխ ևզ. Ա, Բ, Գ և հոգ. Ա. դեմքում. հոգ. Բ և Գ դեմքերը վերջից առանում են հոգնակիի նշանը: Արմատի ծայրին դրված ic *հանգը երևի ներկա ժամանակի համար է:*

(Kingdom, 26):

Ամերիկյան չհապանեկա լեզվով բայը մեծագույն մասամբ չունի խոնարհում. ամբողջ խոնարհումը կայանում է նրանում, որ հոգնակին տարբերվում է եզակիից -me *վերջավորությամբ. ինչպես՝*

loho	*նշ. ես եմ, դու ես, նա է.*
lohome	*նշ. մենք ենք, դուք եք, նրանք են:*

Ուրիշ բայեր նույնիսկ եզակի և հոգնակի միևնույն են:

Ժամանակները որոշվում են դանազան մասնիկներով. օրինակ՝ անկատարի մասնիկն է qhe. *ինչպես՝*

çime	acahomo	icopoñohi
ես	*սիրում եմ*	*քեզ*
çime	acahomo qhe	icopoñohi
ես	*սիրում էի*	*քեզ:*

Մնացյալը դերանունով է որոշվում:

Կան բայեր, որ ինչ որ խոնարհում են ցույց տալիս. բայց դրանք այնքան անկանոն են, որ չի կարելի որոշ կանոնի տակ դնել:

(Alborroz, 26—27):

Շատ պարզ է խոնարհումը ամերիկյան գուխիրա լեզվի մեջ. նախ դրվում է բայարմատը, ապա ժամանակ ցույց տվող մասնիկը, հետո՝ էլ դերանունը:

Դերանուններն են՝ taya *ես,* pia *դու,* nia *նա,* guaya *մենք,* xia *դուք,* naya *նրանք:*

Ժամանակ ցույց տվող մասնիկներն են՝

Ներկ. aši, *անկ.* aiaši, *կոր.* ičipa

Գերակ. ataičipa, *ապ.* eiče.

Ահա atunk *«քնել» բայի խոնարհման պատկերը.*

		ներկա		ապառնի	
Ա.	atunk	aši	taya	eiče	taya

Բ	«	«	pia	«	«	pia
Գ	«	«	nia	«	«	nia
Ա	«	«	guaya	«	«	guaya
Բ	«	«	xia	«	«	xia
Գ	«	«	naya	«	«	naya

(R. Caledon, *30*):

Այս շարքով է նաև Նոր-Զելանդիայի լեզվի խոնարհումը. նախ բայարմատ, վերջում դերանուն, միջակղզի ժամանակը. օրինակ՝ kai *«ուտել» բայից՝*

Ներկ.	e	*kai*	ana	ra	oki	au
Անց.	koa	*kai*	ke	«	«	«
Ապ.	պիտի ուտեմ		«	«	«	e kai ai
Սահր.	e	*kai*	ana	pe	«	«

ուտում եմ
կերել եմ
e kai ai
թերևս ուտեմ:

(X. *30*)

Հնդկական նագա լեզուն շատ պարզ խոնարհում ունի. դնում են դերանունը և բայարմատը և ստացվում է ներկան. ինչպես՝

ana tso
ես ուտում եմ
ana otsi tso
ես բրինձ եմ ուտում:

Մյուս ժամանակները նշանակվում են զանազան մասնիկներով. այսպես՝ —ka *ապառնի,*—čo *կատարյալ,*— ala *շարունակական ներկա.*

ana tsoka *ես պիտի ուտեմ*
ana tsoča *ես կերա (կերել եմ)*
ana tsoala *ես ուտելիս եմ (կուտեմ կոր):*

Կան շատ սրիշ մասնիկներ էլ, որոնք բայի ժամանակի նրբութիւններն են ցույց տալիս. դիմական վերջավորութիւններ չկան:

(Mills, *214*):

Շատ խեղճ ու աղքատ է միկրոնեզյան սրուկ լեզուն, որ ունի միայն երկու ժամանակ. ա) ներկա, որ միևնույն ժամանակ կատարյալ է և բ) ապառնի. ահա օրինակները.

ka apap *դու աշխատում ես*

ra apap . *նրանք աշխատում են*
ke bue apap *դու պիտի աշխատես*
re » » *նրանք » աշխատեն:*

Իակ երեք բայն ունի անձնական դերանունով մի խնդիր, մասնիկի ձևով ավելացնում են վերջից:

(Bollig, *276, 278*):

Աֆրիկյան էվե լեզվի մեջ բայը խոնարհման ժամանակ անփոփոխ է մնում. նախ դրվում է դերանունը, ապա ժամանակ կամ եղանակ ցույց տվող մասնիկը և ապա բայարմատը. այս բոլորը կազմում է մի բառ:

Աորիստը անորոշ մի ժամանակ է, որ ցույց է տալիս թե ներկա, թե անցյալ և թե ապառնի. հաճախ նա իրրև անցյալ է գործածվում. ինչպես՝ meye *«գնում եմ, գնացի»:*

Ապառնին կազմվում է va *«գալ» բայով, որ իրր մասնիկ կրճատվելով՝ դարձել է* a. *օրինակ՝* ma'yi *«պիտի գնամ»:*

Շարունակական ներկան (progressif) *ցույց է տալիս, որ գործողությունը հենց նոր է կատարվում. կազմվում է* le *«լինել» և* me *«մեջը, ներսը» բառերից. ինչպես՝*

mele yiyim
ես լինել գնալ մեջ=գնում եմ,

որ համապատասխանում է անգլ. I am going *ձևին:*

Այս ձևն ունի նաև իր անցյալն ու ապառնին, որոնք նշանակում են «ես շարունակում էի գնալ (կերթայի կոր)» և «պիտի շարունակեմ գնալ» (վերջինս չկա հայերենում. իրր թե պիտի երթամ կոր!):

Մյուս եղանակներից կան jussif, *որ է հրամայական, և* cohortatif *հորդորական, որ նույնպես մի տեսակ հրամայական է:*

(Westermann, 65—69):

Ֆիննական չերեմիս լեզվի մեջ բայն ունի միայն ներկա ժամանակ և կատարյալ, որոնք խոնարհվում են հետևյալ ձևով.

užàm	*տեսնում եմ*		užənam	*տեսա*
užàt	»	*ես*	užənat	*տեսար*
užeš	»	*է*	užən	*տեսավ*
uzəna	»	*ենք*	užənulna	*տեսանք*
užəda	»	*եք*	užənulda	*տեսաք*
užut	»	*են*	užənulut	*տեսան:*

Վերջավորութիւնները անձնական դերանունների կրճատ ձևերն են։

Ապառնի չկա. ներկան նաև ապառնի է, իսկ եթե հարկ են համարում հատկապես ճշտել ապառնին, դնում են tüngalam «ակել» բայը. ինչպես՝

məy ludam «ես կարդում եմ, նաև պիտի կարդամ», իսկ
məy ludaš tüngalam
ես պիտի կարդամ։

(Васильев, 25, 27)։

Շատ հեշտ է խոնարհումը Մեքսիկալի օթոմի լեզվով. առ մի օրինակ nee «ուզենալ» բայով.

ներկա

di	nee	ուզում եմ
gi	»	» ես
y	»	» է
di	neehe՝	» ենք
gi	nee gi	» եք
»	» qu	
y	» yu	» են

անկատար

di	nee	hma		ուզում էի
gi	»	»		» էիր
di	»	»	hi	» էինք
gi	»	»	gi	էիք և այլն
«	»	»	hu	

կատարյալ

da	nee		ուզեցի
»	»	hè	ուզեցինք

ապառնի

ga	nee		պիտի ուզեմ
gi	»		» ուզես
ga	»	he	» ուզենք

(? Elements, 16)։

Շատ պարզ է խոնարհումը օվկիանյան շատ նախնական կարգի լեզվում։ Նախ ասենք, որ դոյական, ածական և բայ ընդհանրապես նույն են. այսպես՝

angang	«աշխատանք և աշխատել»
mungo	«ուտել, ուտելիք, կերակուր»
āto	«համբերող, համբերութիւն»
semai	«հիվանդ, հիվանդութիւն», i semai «ես հիվանդ եմ»
tou	«ժամ, ժամանակ, կշիռ»։

Բայի խոնարհումը կատարվում է դերանունի վրա դնելով բայարմատը։ Դերանունները մի քիչ զարմանալի ձև ունեն. այսպես՝

ես	ngang	i-
դու	en	o-
նա	i	ē-
մենք (excl.)	äm	ei-
« (incl.)	kiš	si-
դուք	āmi	au-
նրանք	īr	re-

Տեսնում ենք, որ դերանունը բաղկացած է երկու մասից. առաջին մասը բուն դերանունն է, երկրորդ մասը կապն է հաջորդ բայի հետ. այսպես՝

ngang	ī	ueri	տեսնում եմ
en	o	«	» ես
i	ē	«	» է
äm	ai	«	» ենք
kiš	si	«	» ենք
ämi	au	«	» եք
īr	re	«	» են։

Անկատարը կազմելու համար դերանունի և բայի միջև պետք է դնել fa'sul մակբայը, իսկ ապառնիի համար bue մակբայը. օրինակ՝

անկ.	ngang	ī-fasül ueri	տեսնում էի
ապ.	«	ī-bue «	պիտի տեսնեմ

(Fritz, 11, 25)։

Սիամերենում բայը անփոփոխ է. մինչև անգամ «ես, դու,

նա» դերանուններըը կարող են չդրվել. օրինակ՝ «չգիտենալ» նշանակում է «չգիտեմ, չգիտես, չգիտե...»: Ներկան նշանակելու կարիք չկա. բայը ինքը ներկա է. անցյալը ցույց տալու համար գնում են dai ունենալ կամ lao «արդեն» բառերը, իսկ ապառնիի համար dya «ուզել». բայց եթե կա մի այնպիսի բառ, որով արդեն իմացվում է ժամանակը, այս բառերն էլ չեն դրվում. օրինակ. երեկ դիշեր անձրև գալ. մի քանի օր հետո գալ:

(Wershoven, 80):

Ամերիկյան մամբիլա լեզուն չունի խոնարհում. դրվում է բայի արմատը և նրան կցվում է դերանունը անկախ ձևով. բայը ոչ մի վերջավորություն չունի. ժամանակը հասկացվում է բայարմատի մոտ դրված մակրայից. օրինակ՝

ŋgwa kwe lali
իշխանը մեռնել ալաօր = իշխանը մեռնում է ալաօր.
ŋgwa kwə liri
իշխանը մեռնել երեկ = իշխանը մեռավ երեկ
he menâ ŋgwa kwe
վաղը իշխանը մեռնել = իշխանը վաղը կմեռնի:

(Meyer, 41):

Բայական այս պարզ ձևը կարող ենք կոչել աորիստ և նկատել, անցյալ և ապառնի:

Կատարյալը կազմելու համար բայի վրա գնում են sei, որ է վերջացրած գործողություն. օրինակ՝

me fali nəmə sei
ես խմե- ջուրը -ացի = ես ջուրը խմեցի.
me fal nəmə
ես խմում եմ ջուր:

Երկրորդ ձևը ներկա է, բայց որպեսզի ներկան ավելի հաստատուն լինի, բայարմատից հետո գնում են le. այդ ձևը կոչվում է սովորական (habitualis) կամ շարունակական (continualis), որ իրական ներկան է:

Իսկ ապառնին կազմում են «երթալ nda» կամ «ուզել gəni» բայի օժանդակությամբ:

(Meyer, 41—46):

Շատ պարզ է խոնարհումը նաև մալայան դասակ լեզվի մեջ.

նախ դրվում է դերանունը՝ ամբողջական ձևով, ապա բայը, որ միշտ անփոփոխ է. երեսի միջև դրվում է ժամանակի նշանը. ներկայի համար նշան չկա. անցյալի (կամ վերակատարի) համար դնում են djari բառը, որ նշանակում է «եղած», ապառնիի համար դնում են karä «լինել, werden» կամ djarè, նաև akan, akan indu «պարտավոր լինել, կարենալ»:

Դերանուններն են՝

ես	aku, yaku	երկ.	koä *մենք երկուս*
դու	ikau		ikei, ita *մենք* (excl, incl.)
նա, նև	iä (*շնչավոր*)		keton *դուք*
»	» ta (*անշունչ*)		iä, äwen *նրանք*

Ահա ներկայի խոնարհումը.

aku	katawan	*ես գիտեմ*
ikau	»	*դու գիտես*
iä	»	*նա գիտե, նրանք գիտեն:*
	»	(Gabelentz, 26—27):

Զարմանալի է ամերիկյան վատ լեզվի բայը, որ այժմ մեծագույն մասամբ հոգնակի չունի. այս լեզվի մեջ բայը հոգնակի գիտեն գործածել միայն հրամայական եղանակում: Գոյականները ունեն հոգնակի, որ կազմվում է te մասնիկով, իսկ ազգականական բառերը tete մասնիկով: Դերանուններն էլ ունեն հոգնակի, որ կազմվում են գոյականից տարբեր մասնիկով. ցույցականներն էլ ունեն թե՛ հոգնակի և թե՛ երկակի: Բայց կատարած չկա, որ վաղուում բայն էլ ունեցել է նախապես հոգնակի. այժմ կան բայեր, որ իրենց հոգնակին կազմում են te կամ l մասնիկով, կամ անկանոն ձևով. մի խումբ բայեր էլ հոգնակի են դառնում փոխելով բայի արմատը, ինչ որ մես բազմավորական բաժնի տակ:

(Radin, 21):

Ֆիննական կամ-պերմերեն լեզվով բայի խոնարհումը շատ աղքատ է. ունի մի ներկա և երկու կատարյալ. դերանունը դրվում է անջատ և վերջում էլ կցում են վերջավորություններըը. ինչպես՝

«դնալ» բայի ներկան՝

	եզակի		ճոգնակի	
Ա.	me	mun-a	miyo	mun-am
Բ	te	mun-an	tiyö	mun-at
Գ	siya	mun-ö	niya	mun-önə.

Ապառնի Ա և Բ դեմքը նույն են ներկայի հետ, իսկ Գ դեմքն է՝ siya mun-as, niya mun-asö:

Կատարյալ Ա

	եզակի		հոգնակի
Ա	me	mun-i	miyö mun-im
Բ	te	mun-in	tiyö mun-it
Գ	siya	mun-is	niya mun-isö

Կատարյալ Բ

	եզակի		հոգնակի	
	առաջին դեմք չունի			
Բ	te	munöm-ət	tiyö	mynöm-nət
Գ	siya	» -a	niya	» asy

(նշանակում է «թվում է թե դու գնացիր...»)

(Майшев, 62):

Շատ պարզ է խոնարհումը օվիհանյան սամոա լեզվում. բայն անփոփոխ է մնում, նրանից առաջ կամ հետո դրվում է ենթակա դերանունը, իսկ ժամանակները որոշվում են առանձին մասնիկներով. ua *ցույց է տալիս կատարյալը,* na *կամ* sa *անկատար,* e *ապառնին: Օրինակ՝*

sau «գալ» բայից՝ ներկա. ou te sau
ես գալիս եմ
e sau
(նա) պիտի գա:

Հոգնակիում երբեմն բայի այս կամ այն վանկը կրկնում են, ինչպես՝

alofa «սիրել», ou te alofa
ես սիրում եմ
matou te alolofa
մենք սիրում ենք

taumafa «ուսուցանել», ou te taumafa
ես ուսուցանում եմ
matou te taumamafa
մենք ուսուցանում ենք:

(Funk, 7—10):

Պարզ է խոնարհումը նորվեգերենում. բայի բոլոր ժամանակները եզակի և հոգնակի սկզբից մինչև վերջ մնում են անփոփոխ. ներկան կազմվում է անորոշի վրա դնելով r, *իսկ կատարյալը կազմվում է նույն անորոշի վրա դնելով* t. *օրինակ՝* kaste «գնահատել, գցել» *բայից՝*

jeg kaster *գցում եմ...*
jeg kastet *գցեցի և այլն...*

Ապառնին կազմվում է skal *(=անգլ.* shall*) օժանդակով և կամ* vil «ուզում եմ» *օժանդակով. հաճախ ապառնիի տեղ դրվում է ներկան:*

Թեական եղանակը կազմվում է skulde *(=անգլ.* should*) օժանդակով. հարակատար և գերակատար ձևերն էլ կազմվում են օժանդակով:*

Պոլինեզյան հավաի լեզուն շատ պարզ խոնարհում ունի, բայց շատ ժամանակներ ունի: Նախ նկատենք, որ մինչև շատ ուրիշ լեզուներում խոնարհման պարզագույն ձևը ներկան է, այստեղ արաբերենի նման կատարյալն է.— պարզ արմատի վրա դնելով (վերջում) դերանունը՝ առացվում է կատարյալի ձևը. օրինակ՝ holo «վազել» *բայարմատից՝*

holo au *վազեցի,* holo oe *վազեցիր*

*Զարմանալի է, որ քննիչը (*Andrews, 103*) անցյալի դանադան տեսակները կոչում է կատարյալ. այսպես՝*

կատարյալ	I holo	au		*վազեցի*
»	II a »	»		*և երբ վազեցի*
»	III i »	»		*վազեցի*
»	IV ua »	»		*վազել եմ*
»	V ua »	e au		*վազել էի*
ներկա	I	ke holo nei au		*վազում եմ*
	II *(շար.)*	e »	ana au	*վազելիս եմ (կար)*
ապառնի	I	e »	au	*պիտի վազեմ*
	II	e »	e au	*պիտի վազած լինեմ:*

Այս ճով առորագասականն էլ ունի վեց ձև (եթե վազեմ, եթե վազած լինեմ, եթե վազած լինեի, եթե պիտի վազեմ, մի գուցե վազեմ):

Ավստրալիայի բնիկների լեզվով բայի խոնարհումը մի տեսակ է. թիվ և դեմք չեն փոխվում. միայն ժամանակի համար վերջում դրվում են դանադան մասնիկներ. այսպես՝

ներկա. -ndi, aor. -tii,
կար. -a, -i -o.

ապ. -ta
օրինակ. ngai murreota
ես պիտի գնամ
ngadli tikkandi
մենք նստում ենք:

(Teichelmann, 16):

Աղքատ է խոնարհումը օտալակերեն լեզվում. ունի միայն երեք եղանակ (սահմանական, հրամայական և սորտատասական). սահմանականը ունի միայն երկու ժամանակ՝ կատարյալ և ապառնի. կատարյալը ցույց է տալիս անցյալի բոլոր տեսակները. ապառնին նույն է ներկայի հետ. բայց կա նաև բարդ ապառնի, որ կազմվում է անեբևուլթով և էական բայով: Օրինակ՝

	կատարյալ		ապառնի
Ա	panem	*դրի*	pandem
Բ	panen	*դրիր*	panden
Գ	panet	*դրից*	pandet.

Սորտատասականը կազմվում է կատարյալի և ապառնիի վրա ավելացնելով adap. *ինչպես՝* panem adap, pandem adap.

(Castrén, 54—55):

Աֆրիկյան մինխանկա լեզվում էլ խոնարհումը շատ պարզ է. նախ դնում են դերանունը ամբողջական ձևով, վերջում բայարմատը, իսկ երկուսի մեջտեղում դրվում են ժամանակ ցույց տվող մասնիկները. օրինակ՝

me kuon	*ես կարել եմ*
me mpye kuon	*ես կարել էի*
me rimpye kuon	*ես կտրում էի*
me ma kuon	*ես կտրում եմ*
me na kuon	*ես պիտի կարեմ*
me me ua na kuon	*ես հենց այժմ պիտի կարեմ:*

(Chéron, 8):

Կովկասյան լեզգի լեզվում բայի խոնարհումը շատ պարզ է (ըստ Жирков, 60). թիվ ու դեմք նշանակելու համար հատուկ վերջավորություններ չկան (հարևան ավարերեն լեզուն էլ թիվ ունի թիվ, բայց չունի դեմք): Շատ բայեր ասույական ձևով են ասվում, ինչպես լող անել (լողալ), ես գալ, թե տալ (թողնել) (անդ, էջ 61).

շատ բայեր էլ օժանդակ բայի հարադրությամբ են կազմվում (անդ, էջ 85), ժամանակների մեջ նկատելի է անցյալի մի առեակը, որ ցույց է տալիս լսողի համար անակնկալ գործողություն (անդ, էջ 74):

Շատ պարզ է խոնարհումը ամերիկյան կադաբա լեզվում, ուր դրվում են իրար կողքի դերանունները և բայի անորոշ ժամանակը. այսպես, օրինակ՝

akpei-ši	*«բանալ» բայի ներկան լինում է՝*	
nas	akpei-ši	*ես բաց եմ անում*
ma	»	*դու » ես »
allein	»	*նա » է »
nasan	»	*մենք » ենք »
main	»	*դուք » եք »
kaunžein	»	*նրանք » են »

(Celedon, 15):

Ավստրալիայի նոր-պոմերանյան լեզվով խոնարհումը շատ պարզ է. բայը ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի:

Ներկան կազմվում է պարզապես կցելով դերանունը բային. օրինակ՝

iau	wana	*ես գնում եմ*
u	»	*դու » ես*
i	»	*նա » է*
dor	»	*մենք (երկուսս) գնում ենք:*

Եվ այսպես բոլոր դերանուններով, որոնց թիվը 15 է:

Անցյալի համար դնում են ter *կամ* ga *մասնիկը, իսկ ապառնիի համար՝* na *եզակիում, à երկակիում, եռակիում և հոգնակիում. օրինակ՝*

iau	ter wana	*ես գնացի*
da	» »	*մենք գնացինք*
i-na	»	*ես պիտի գնամ*
dor a	»	*մենք » գնանք:*

Հետաքրքրական է հրամայականը, որի համար գործածում են ապառնիի ձևը, ինչպես՝

u na wana
դու պիտի գնաս = գնա:

(Costantini, 28—30):

Հետաքրքրական և շատ պարզ է խոնարհման դրությունը

դրավիդյան թամիլ լեզվում. բայերի ժամանակների նշաններն են kk *ներկայի համար,* tt *անցյալի համար,* pp *ապառնիի համար. օրինակ՝* aṭi *«ծեծել» արմատից՝ ներկա.* aṭikku, *անցյալ* aṭittu, *ապառնի* aṭippu, *որոնց մեում է ավելացնել դեմքի նշանները, որոնք նույն են բոլոր ժամանակների համար։*

(Мерварт, Грамм. 74)։

Ամերիկյան նահուատլ լեզվի մեջ ժամանակի նշանը երբեմն առաջ է դրվում, երբեմն հետո. կատարյալի նշանը նախադաս է, ապառնիի նշանը հետադաս է և այլն։ Օրինակ՝ notza *«կանչել» բայի խոնարհումը.*

ներկա եզ.	ni notza	*հոգ.* ti-notza
	ti notza	an-notza
	notza	notza
անկ. եզ.	ni-notza-ya	*հոգ.* ti notza-ya
	ti-notza-ya	an-notza-ya
	notza-ya	notza-ya
կար. եզ.	o-ni-notz	*հոգ.* o-ti-notz-que
	o-ti-notz	o-an-notz-que
	o- notz	o- notz-que
գերակ. եզ.	o-ni-notz-ca	*հոգ.* o-ti-notz-ca
	o-ti-notz-ca	o-an-notz-ca
	o- notz-ca	o notz-ca
ապառ. եզ.	ni-notza-z	*հոգ.* ti-notza-z-que
	ti-notza-z	an-notza-z-que
	notza-z	notza-z-que

(Grasserie, 41—42)։

Շատ պարզ է խոնարհումը նաև աֆրիկյան հաուսա լեզվում. նախ դրվում է դերանունը, հետո ժամանակ հայտնող մասնիկը, հետո բայարմատը, որ ըստ այսմ այլևս ոչ մի փոփոխության կրելու պետք չունի. Այսպես՝

na *ես,* ka *դու (արս.)* ki *դու (իգ.)* ya *նա,* ta *նա,* mu *մենք,* ku *դուք,* su *նոքա դերանուններից +* ba *տալ՝*

ներկա	անկատար	կատարյալ
ina- ba	na- ba	ni-na ba
kana ba	ka ba	ka ka ba
kina ba	kin ba	ki ka ba

shina ba	ya ba	shi ka ba
tana ba	ta ba	ta ka ba
muna ba	mu-n ba	mu ka ba
kuna ba	ku-n ba	ku ka ba
suna ba	ju-n ba	su ka ba

(Marré, 50—51)։

Միևնույնն է նաև մալայան պլե-տեմեր շատ նախնական լեզվի մեջ, ուր սակայն նախ դրվում է ժամանակը, ապա դերանունը, ապա բայարմատը, որ մեում է անփոփոխ. օրինակ՝ cib *«գնալ» բայից՝*

iē cib	ha cib	na cib
ես գնում եմ	*դու գնում ես*	*նա գնում է*
ä cib	uagn	cib
մենք գնում ենք	*նրանք գնում են*	

(ներկայի համար ժամանակի նշան չկա և ներկան նաև ապառնի է)։

Անցյալի նշանն է hoǰ. *օրինակ՝* gēi *«տանել» արմատից խոնարհվում է՝*

hoǰ	iē	gēi
	ես կերել եմ	
hoǰ	ha	gēi
	դու կերել ես	
hoǰ	na	gēi
	նա կերել է և այլն։	

(Schebesta, JRAS, 1931, 649)։

Զափազանց պարզ է խոնարհումը դարձյալ կենտրոնական Ամերիկայի սուբտիաբա լեզվի մեջ. նախ դրվում է դերանունը, հետո ժամանակ ցույց տվող մասնիկը, հետո բայարմատը, որ միշտ անփոփոխ է. բոլորը մի բառի պես.

Ikū-na-nu	*=աղում եմ*
ես ներկա. աղալ	
ika-na-nu	
դու	
inga-na-nu	
նա	
aetšelu-na-nu	
մենք	

aetšela—na-nu
դուք
aeñū-na-nu
նոքա

ikū-nī-nu = *ադամ էի*
ես անկ. ադալ
ikū-šī-nī-nu *ադացի* (šī «արդեն»)
ես կար.
ikū-na-ẋka-nu *պիտի ադամ* (na-ẋta «երթալ» բայով)
ikū-dō-na-nu *մենք ունիմ ադալու* (do *միտք ունենալ*)
ikū-gisto-na-nu *կադամ կոր* (gisto «ապրիլ, գոյութիյան ունենալ» բայից)։
հրմ. da-nu *ադա* (da «առնել» բայից)։

(Kieckers, 186—187)։

Թեև ժամանակներով հարուստ, բայց էլի շատ պարզ կազմութիյուն ունի ափրիկյան սենա (բանտու) լեզվի խոնարհումը. նախ դրվում է դերանվան կրճատ ձևը, ապա ժամանակի մասնիկը և ապա բայը, որ ոչ մի վերջավորութիյուն չունի։
Ժամանակ ցույց տվող մասնիկներն են՝

na	*պարզ ներկա*
na so	*անմիջական ներկա*
na dza	*պարզ ապառնի*
a	*կատարյալ կամ մոտիկ անցյալ*
da	*հեռու անցյալ*
ka	*անկատարի շարունակութիյունը*
nga	*կարելիութիյուն կամ պայման*
nga da	*նույնը անցյալում*
nga dza	*նույնը ապառնիում։*

Մի քանի օրինակ (ndi «ես» դերանունով)։

ndi-na-funa *ես ուզում եմ*
madzi a-na-so wila
ջուրը խմելն կեռա
ndi-na-dza-enda *ես պիտի երթամ։*

(Anderson, 24—25)։

Ամերիկյան սենսա լեզվի մեջ բայի խոնարհումը հետևյալ ձևով է. նախ դրվում է ժամանակ ցույց տվող ձայնավորը (ի ներկա, e անցյալ, a ապառնի), ապա բայի անորոշը, հետո դարձյալ ժամանակ արտահայտող բան նշանը (r ներկա, b անցյալ, n ապառնի), որից հետո կցվում են դեմքերը։ Այսպես՝ üvlo «սիրել» *բայից՝*

i-üvlo-r-ho	*սիրում եմ*	
i » » wi	»	*ես (ար.)*
i » » wia	»	» *(իգ.) և այլն*
i » » hog	»	*ենք և այլն*
i » » sug	»	*են (ար.)*
i » » suag	»	*են (իգ.)*

անց. a-üvlo-b-ho *սիրում էի, սիրեցի...*
ապ. e-üvlo-n ho *պիտի սիրեմ...*

(Haumonté, 23)։

Ամերիկյան տարատակ լեզվի մեջ բայի պարզ խոնարհման ժամանակ դրվում է նախ արմատը, հետո ժամանակի նշանը, ապա դեմքերը, հոգնակիում՝ ché, htsi, x *մասնիկները։ Այսպես՝* pa «առնել» *արմատից՝*

ներկ. եզ.	*Ա.* pa-ha-ca	*հոգ.*	*Ա.* pa-ha-ca-cuché
	Բ pa-ha-ca-re		*Բ* pa-ha-ca-htsi
	Գ. pa-ha-ti		*Գ.* pa-ha-ti-x.

(Ներկայի նշանն է ha-ca, *Բ դեմքի նշանն է* re, *Գ դեմքի նշանն է* ti։ *Մյուս ժամանակներն էլ ունեն իրենց նշանը և խոնարհվում են նույն ձևով.*

անկ.	pa-ha-mbih-ca
կար.	pa-ca
դերակ.	pa-phi-ca
ապ.	pa-va-ca *և այլն։*

(Grasserie. 51—52)։

Ամերիկյան բնաույա կամ աուկանո լեզվի մեջ շարքը փոխվում է. նախ արվում է դերանունը, երկրորդ տեղը բանում է բայարմատը, որ կցվում է դերանվան՝ pi *կամ* bi *մասնիկով, երրորդ տեղում դրվում է ժամանակ հայտնող մասնիկը։ Այսպես՝* bika «խոսել» *բայից՝*

ներկա

եզ.	Ա.	yé-pi-bika-ye
	Բ	mue-pi-bika-ye
	Գ	kacke-bi-bika-xi
հոգ.	Ա.	yekina-bi-bika-ye
	Բ	mosa-koa-bi-bika-ye
	Գ	kacke-koa-bi-bika-xi

անկ. կար. և գերակ.

եզ.	Ա.	ye-pi-bika-bue
	Բ	mue-pi-bika-bue
	Գ	kacke-pi-bika-bue
հոգ.	Ա.	yekina-bi-bika-gue
	Բ	mosa-koa-bi-bika-bue
	Գ	kacke-koa-bi-bika-bue

ապառնի

եզ.	Ա.	ye-pí-bika-zá
	Բ	mue-pi-biká-e
	Գ	kacke-bi-bika-xake
հոգ.	Ա.	yekina-bika-naá
	Բ	muesa-koa-bi-biká-e
	Գ	kacke-koa-bi-bika-xapue

հրամ.

եզ.	Բ	mue-pi-bika-me
	Գ	kacke-bi-bika-xake
հոգ.	Ա.	yekina-bi-bika-nú
	Բ	mosa-koa-bi-bika-me
	Գ	kacke-koa-bi-bika-xapue

ստոր. անկ.

եզ.	Ա.	ye-pi-bika-rexaba
	Բ	mue-pi-bika-rexaba
	Գ	kacke-bi-bika-rexaba
հոգ.	Ա.	yekina-bika-rexaba
	Բ	mosa-koa-bi-bika-rexaba
	Գ	kacke-koa-bi-bika-rexaba

գերակ.

եզ.	Ա.	ye-pi-bika-rexahue
	Բ	mue-pi-bika-rexahue
	Գ	kacke-bi-bika-rexahue
հոգ.	Ա.	yekina-bika-rexahue
	Բ	. . . . .
	Գ	kacke-koa-bi-bika-rexahue

(որոնց կազմութիւնը լաւ ըմբռնելու համար տալիս ենք նաև անձնական դերանունների շարքը.—

yeé	*ես*	yekina	*մենք*
múe	*դու*	mosá-koa	*դուք*
kacke	*նա*	kacke-koa	*նրանք):*

(MSL, 19, 93):

Շատ հեշտ է դարձլալ խոնարհումը աֆրիկյան լեզուների մեջ. նախ դրվում է դերանունը, ապա բայարմատը. ժամանակը շատ թուլ է. օրինակ՝ mo *(ես)* lo *(գնում եմ կամ գնացի),* awa *(մենք)* de *«մենք վերադառնում ենք կամ վերադարձանք». ուրեմն ներկան և կատարյալը միևնույն են: Դերանուններից մի քանիսը սառնում են զանազան ձևեր. օրինակ՝ «ես» լինում է* emi, mo, ng: *Առաջինը գործածվում է բաղաձայնով սկսվող բայի մոտ. ինչպես՝* emi ri *«տեսա»,* emi ko *«մերժեցի».—* ng *ձևը գործածվում է ապառնիի հետ.* ng ose *«պիտի անեմ». կամ նաև շաբունակականի հետ. ինչպես՝* ng nse *«անելիս եմ», պլ. «կընեմ կոր»: Այս բոլորը ներդաշնակութեան օրենքի պատճառով է, որ այնպես տարածված է աֆրիկյան լեզուների մեջ»* (Crowther, 12): *Ներկան ավելի լավ որոշելու համար կարելի է բայից առաջ դնել* n, *ինչպես՝* awa nko takarda *«մենք այժմ գրում ենք [մի] գիրք».— անցյալը հասկացվում է բայի կողքին դրված ժամանակական մակբայից (երեկ, անցյալ օր, կեսօրին և այլն).— հաճախ* tan *«արած, կատարած» դերբայը ավելացնում են բայի մոտ՝ ցույց տալու համար կատարյալը. ինչպես՝* o şişe tan *նա գործից [արած].— ապառնին արտահայտելու համար դնում են* yio. *ինչպես՝* on yio lo *նա պիտի գնա.* orum yio ran *արևը պիտի ծագի:*

Ահա ni *«ունեմ» բայի խոնարհումը.*

emi	ni	*մնամ*	awa	ni	*մնանք*
iwo	ni	*մնաս*	enyin	ni	*մնաք*
on	ni	*մնի*	awon	ni	*մնան*

անց. emi ti ni *մնամի, մնացա կամ մնացել եմ*
ապ. emi oti ni *պիտի մնանամ* (o ձայնը կրճատումն է yio *մասնիկի*)
սահր. bi emi ni *եթե մնանամ* (bi *եթե*)։

Բոլորն էլ գնում են նույն ոճով՝ առանց բայարմատի փոփոխության։

(Crowther, 20, 24)։

Մի քիչ ավելի բարդանում է խոնարհումը մալայա-պոլինեզյան բանաոկ-իզորաս լեզվի մեջ, ուր բային կցված վերջածար դերանունը տարբեր է սովորական դերանունից։ Սովորական դերանուններն են՝

sake	*ես,*	sika	*դու,*	siya	*նա*
čaika	*երկուս*				
čatako	*մենք* (incl.).	čakami	*մենք* (excl.)		
čakayau	*դուք,*	čai'ča	*նրանք։*		

Բայի խոնարհման ժամանակ դրվում է սրանց հապավյալ (արմատական) ձևը. այսպես՝ masuyep «*քնել*» *բայից կազմվում է ներկան (առանց ժամանակ ցույց տվող նշանի).*

եզ.	*Ա.*	masuyep-ak	*հոգ.*	*Ա.*	masuyep-táku (incl.)
	Բ	» -ka		*Ա.*	» -kami (excl-)
	Գ	» —		*Բ*	» kayau
երկ. (մենք երկուս)		» -ta		*Գ*	ča

Անցյալ ժամանակը կազմելու համար բայի սկիզբը դրվում է in- *նախամասնիկը, ապառնիի համար* ad- *նախամասնիկը, իսկ հրամայականը նույն է ներկայի հետ։*

(Seidenadel, 55, 60—62)։

Ամերիկյան յուրակարև լեզվում ներկան ու անցյալը միևնույն են. դերանունները կցվում են բայարմատին կրճատ ձևով։ Օրինակ՝ upse *կամ* uspe «*լողանալ*» *բայի ներկա-անցյալ ձևը հետևյալն է.*

upse-i	*լողանում եմ*		upse-to	*(կամ* tua*)*	*լողանում ենք*
upse-m	»	*ես*	upse-p	»	*եք*
upse	»	*է*	upse-n	»	*են*

(Դերանուններն են se *ես,* me *դու,* na *նա,* tua *մենք,* pa *դուք,* n-ou *նրանք)։*

Ապառնին կազմվում է արմատին ավելացնելով ni. *այսպես՝*

եզ.	*Ա.*	uspenii	*հոգ.*	*Ա.*	uspento
	Բ	uspenim		*Բ*	uspenip
	Գ	uspeni		*Գ*	uspenui

(La Cueva, 38)։

Ամերիկյան անսի (կամ կամպա) լեզվով բայի խոնարհման ժամանակ նախ դրվում է դերանվան կրճատ ձևը, ապա բայարմատը, ապա ժամանակ ցույց տվող մասնիկը։ Հոգնակին և եզակին նույն են ձևով, միայն հոգնակիի ժամանակ եզակիի ծայրին գնում են gei-te։ *(Գոյականների հոգնակին կազմվում է* gei *մասնիկով և չկա* te)

Դերանուններն են՝

naro	*ես*	naro-gei	*մենք*
abiro	*դու*	abiro-gei	*դուք*
iriro	*նա*	iriro-gei	*նրանք (ար.)*
iroro	*նա*	iroro-gei	» *(իգ.)*

*Ժամանակի մասնիկներն են՝ ներկան—, անկատարը,-*bete, *ապառնին՝-*mba *և այլն։*

ներկ.	nu-n-gajate		*թրջում եմ*	
	pi-n- »		»	*ես*
	i-n- »		»	*է*
	nu-n-gajata-gei-te		»	*ենք*
	pi-n- »	»	»	*եք*
	i-n- »	»	»	*են*
անկ.	nu-n-gajata-bete		*թրջում էի*	
	pi-n »	»	»	*էիր*
	i-n- »	»	»	*էր*
	nu-n »	-geita-bete	»	*էինք*
	pi-n »	»	»	*էիք*
	i-n »	»	»	*էին*

կոր.	հզ. Ա.	nu-gajata-qui	թրջեցի
	հոգ. Ա. »	» geita-qui	թրջեցինք
	վերակ. հզ. Ա.	» » beta-qui	թրջել էի
	հոգ. Ա.	» » geita-beta-qui	թրջել էինք
	ապառ. հզ. Ա.	nu-n-gajate-mba	պիտի թրջեմ
	հոգ. Ա.	nu-n gajata-geite-mba	պիտի թրջենք

(L. Adam, Indios Antis, 27—28)։

Նույն ոճով է նաև ամերիկյան մի քա լեզվի խոնարհումը. նախ դրվում է անձնական դերանվան կրճատ ձևը, ապա բայարմատը, ապա ժամանակ ցույց տվող մասնիկը, ինչպես՝ ix «տեսնել» *արմատից՝*

n-ix-p	տեսնում եմ	n-ix-oim-p	տեսնում ենք
m-ix-p	» ես	m-ix-ta-p	» եք
y-ix-p	» է	y-ix-ta-p	» են

n, m, y *անձնական դերանուններն են.* p *ներկայի մասնիկն է.* oim, ta *հոգնակիի նշաններն են. (այս լեզվում գոյականը հոգնակի չունի, բայց դերանունն ու բայը ունեն)։*

Նույն ձևով կազմվում են կատարյալը (նշանն է o*) և ապառնին, որի նշանն է* ob. *ինչպես՝*

1. n-ix-o	տեսա	n-ix-ô-oin	տեսանք
2. m-ix-o	տեսար	m-ix-t-ô	տեսաք
3. y-ix-o	տեսավ	y-ix-t-ô	տեսան

1. n-yx-ob	պիտի տեսնեմ	n-yx-om-ob	պիտի տեսնենք
2. m-yx-ob	» տեսնես	m-yx-t-ob	» տեսնեք
3. y-yx-ob	» տեսնե	y-ix-t-ob	» տեսնեն

(Grasserie, Langue zoque, 323—324)։

Վերոհիշյալ բոլոր լեզուների, ինչպես և մեր շրջապատի բոլոր լեզուների մեջ բայի ենթական անձնական դերանունն է։ Բայց կան լեզուներ, որոնց մեջ անձնական դերանվան փոխարեն դրնում ենք առարկան ածական։ Ա.ապիւրները ըմբռնում են բայը իբրև բայ, երկրորդները՝ իբրև գոյական։ Մեկը մտածում է. «ես գործել», մյուսը՝ «իմ գործը»։ Այս կարգի լեզուներից իբրև առաջին օրինակ պիտի հիշենք ամերիկյան զոք լեզուն, որի անձնական դերանուններն էլ առարկաններից շատ տարբեր չեն։

Նախ տալիս ենք դերանունների երկու շարքը։

ah	ես	mi	դու	pit նա
as	իմ	mis	քո	pitis նրա
asa	մենք	mis-tha	դուք	pitis նոքա
tes	մեր	»	ձեր	pitis նոցա

Ահա yayamba «սիրել» *բայի ներկայի խոնարհումը։*

հզ.	Ա.	yayamba ah	սիրում եմ	
	Բ	» mis	» ես	
	Գ	» pitis	» է	
հոգ.	Ա.	» tes	» ենք	
	Բ	yayamdama mis	» եք	
	Գ	yayamiapa pitis	» են։	

Քննութիյունը ցույց է տալիս, որ հզ. ա դեմքը պահանջում է անձնական դերանուն, հզ. բ, գ և հոգ. ա պահանջում են առարկանից իսկ հոգ. բ և գ դեմքերը կազմվում են առարկանից, այն էլ հզակից։ Վերջին կետը լավ դատելու համար, պետք է իմանալ, որ զոք լեզվում գոյականը հոգնակի չունի ո՛չ մի ձևով, միայն ածականն է, որ ունի հոգնակի, ինչպես և դերանունն ու բայը։ Այնպես, որ երբ բայը արդեն հոգնակի է, անհրաժեշտ չէ, որ դերանունն էլ հոգնակի լինի։

Ապառնին նույն է ներկայի հետ, անցյալի համար դրվում է inac, *կատարյալը մի քիչ վերջավորութիյունը փոխում է։ Օրինակ՝*

անկ.	yayamba ah inac	սիրում էինք
	yayamdana mis inac	սիրում էիք
	yayamiapa pitis inac	սիրում էին
կոր.	yayamo ah	սիրեցի
	yayamdamo mis	սիրեցինք
	yayamiahu pitis	սիրեցին
վերակ.	yayamo ah inac	սիրել էի
	» tes »	սիրել էինք
	yayamdamo mis inac	սիրել էիք
	yayamiahu pitis »	սիրել էին։

(Grasserie, Langue zoque, 14—15)։

Ամերիկյան կարաիբյան լեզվի մեջ էլ դեռ խոնարհումը բավական պարզ կազմություն ունի: Բայի սկիզբը դնում են ո՛չ թե անձնական դերանունը, այլ առարկական դերանունը, որ այս լեզվում առարկական նախամասնիկի ձևն է առած (այսպես՝ n- իմ, b- քո, l- նրա, w- մեր, h-ձեր, nh-իրենց), ապա բայի անորոշ ձևը, և հետո ներկայի նշանը, որ է -oyem (կամ ayem)· օրինակ՝ arameta «թաքցնել» բայից՝

narametoyem	թաքցնում եմ
barametoyem	» ես
barametoyem	» է (ար.)
taratoye!	» է (իգ.)
narometoyem	» ենք
harametoyem	» եք
nharametoyem	» են

Անցյալ անկատարը կազմելու համար ներկայի վրա ավելացնում են buca, որ անցյալի գաղափարը ավող բառն է. այսպես՝

narametoyembuca	թաքցնում էի
barametoyembuca	թաքցնում էիր
larametoyembuca	թաքցնում էր և այլն:

Կատարյալը կազմելու համար խոնարհման նախորդ կարգը փոխվում է. առարկական դերանունը ավելի ամբողջական ձևով հետադաս է դառնում և դրվում է բայի անեղևույթի վրա, իսկ անեղևույթի և առարկականի միջև դրվում է hati կամ ti, որ գործողության վերջացման նշանն է. այսպես՝

arametahati-na	թաքցրի
arametahati-bu	թաքցրիր
arametaha-li	թաքցրեց
arametahati-ua	թաքցրինք
arametahati-hö	թաքցրիք
arametaha-num	թաքցրին

Վերակատարը կազմելու համար կատարյալի վրա ավելացնում են -buca, որ ինչպես տեսանք, անցյալ անկատարի նշանն է և կամ elebue, որ նույնպիսի արժեք պիտի ունենա. ինչպես՝

arametahatina-buca arametahatina-elebue	թաքցրել էի
arametahatihö-buca arametahatihö-elebue	թաքցրել էիք և այլն:

Ապառնի ժամանակը կազմվում է ներկայից, նրա -oyem վերջավորությունը դարձնելով -uba, իսկ առարկական նախամասնիկները ձևով են անփոփոխ. ինչպես՝

narametatuba	պիտի թաքցնեմ
barametuba	» թաքցնես
larametuba	» թաքցնե և այլն:

Հրամայականը կազմելու համար առնում են դարձյալ բայի անեղևույթը և նրա վրա ավելացնում են առարկական դերանունների ամբողջական ձևերը. ինչպես՝

arameta-ba	թաքցրու
arameta-la	թող թաքցնի (նա)
arameta-uaman	թաքցնենք
arameta-homan	թաքցրեք
arameta-nhaman	թող թաքցնեն

Բայց հրամայականը ունի նաև ապառնի ժամանակ, որ ցույց է տալիս թե հրամանը պիտի կատարվի հետո և ոչ թե նույն միջոցին: Այս ձևը կազմվում է, սակայն, ներկայից, առարկական նախամասնիկը հանելով. օրինակ՝

barametoyem	թաքցնում ես, որից՝
amanle arametoyem	ապ. հրամ.:

Ըղձականը ունի երկու ժամանակ, ներկա և ապառնի. երկուսն էլ կազմվում են անեղևույթից, առարկականը դնելով վերջում. ինչպես՝

arameta-na	թաքցնեմ
arameta-nahamuca-mhem	(հետո թաքցնեմ):

Սառարաստականը ունի երեք ժամանակ՝ ներկա, կատարյալ կամ վերակատար և ապառնի. այսպես՝ acan «երբ, եթե» շաղկապով՝

ներկ.	acan	arameta human	եթե թաքցնեմ
կատ. վերակ.	acan hamucabuca	arameta haman	«եթե թաքցրած լինեի»

ապառ. acan hamuca mhem arameta «ձեթ թաքցնելու լինեմ»։

(R. Breton, Gramm. caraïbe, 39—45)։

Ամերիկյան արտավակ լեզվում խոնարհման ժամանակ բայի սկզբից կամ վերջից դրվում է դերանվան կրճատ ձևը. այսպես՝

de, da	ես	u, wa	մենք
bū, ba	դու	hū, ha	դուք
i, la	նա	ye, na	նրանք
n, ta	նա		

Ներկան հետևյալ ձևն ունի.

hallikebbe-de		ուրախանում եմ	
»	-bū	»	ես
»	-i	»	է
»	-u	»	ենք
»	-hū	»	եք
»	-ye	»	են
d-ansika		սիրում եմ	
daiyahadda		ման եմ գալիս	
būyahadda		» ես	»
liyahadda		» է	» նա
tüyahadda		» է	» նա
waiyahadda		» ենք	»
hūyahadda		» եք	»
naiyahadda		» են	»
kattikebe-de		գողանում եմ	
mayauque-de		ծնում եմ	
»	-ba	»	ես
»	-la	»	է

Կանոն չկա իմանալու համար, թե դերանունը սկզբից պիտի դրվի, թե վերջից, և թե դերանվան որ ձևը պիտի դրվի։ Վարժությամբ է իմացվում։

Ժամանակ ցույց տվող մասնիկը դրվում է վերջում. ինչպես՝

d-aiyahadda	ման եմ գալիս
d-aiyahaddi-bi	ման եմ եկել (այսօր)
» -būna	ման էի եկել (երեկ)

d-aiyahaddi-kuba	ման եմ եկել (վաղուց)
» -pa	ման եմ գալու (ապառնի)

Բայի վերջում դնելով ma *կամ* ka *մասնիկը՝ առացվում է ըղձական, որ ունի ներկա, կատարյալ, հարակատար և դերակատար.*

daiyahaddama daiyahaddinnika	ըղձ. ներկա
daiyahaddinnikābima	ըղձ. կար.
daiyahaddinbūnama	ըղձ. հրկ.
daiyahaddinnikubama	ըղձ. դերակ.

(Crevaux—Sagot—Adam, 197—199)։

Շատ պարզ է խոնարհումը նաև ամերիկյան չիկիտա լեզվի մեջ. բայց այստեղ բային կցվում են ոչ թե անձնական դերանունները, այլ առարկական հոդերը (ս, դ. ն), որոնք կցվում են գոյականին։ Նախ դրվում է առարկական հոդը, ապա բայարմատը և վերջում բայակերտ մասնիկը (որ է ca)։ *Միայն ևզ. և հոգ. Գ դեմքումն է, որ առարկանը դրվում է թե սկիզբը, և թե վերջը. օրինակ՝*

tomoe	«կապել» արմատից	
ևզ.	Ա.	i-tomoe-ca
	Բ	ai » -»
(ար.)	Գ	i- » -no-tii
(իգ.)	Գ	i- » -no (չկա tii)
հոգ.	Ա.	(in.) oi-tomoe-ca
	Ա.	(ex.) zopi-tomoe-ca
	Բ	api-tomoe-ca
(ար.)	Գ	i-tomoe-no-ma
(իգ.)	Գ	yopi-tomoe-no (չկա ma)։

Բայը ժամանակ չունի. վերոհիշյալ ձևը թե ներկա է, թե անցյալ (կատարյալ և դերակատար), և թե ապառնի։ Եթե շատ հարկավոր լինի ճշտել ժամանակը, դնում են անցյալի համար chem *(առաջ, էր երբեմն), ապառնիի համար* tari *(հետո). օրինակ՝*

chem itomoeca	կապեցի
tari itomoeca	պիտի կապեմ։

Ապառնի կազմելու համար կարելի է նաև դնել ra, na, ba, ma, a *մասնիկները. օրինակ՝*

i-tomoe-na-ca *պիտի կապեմ։*

Անցյալը կազմելու համար կարելի է նաև դնել ticani, coiboi, checa *մասնիկները։ Անցյալ ապառնի կազմելու համար դնում են* tari *(նախադաս) կամ* naana «հետո» *բառերը. օրինակ՝*

tari itomoenacatii
կամ itomoenacatii naana

Այն հանգամանքը, որ բային կցվում է ոչ թե անձնական, այլ առարկան դերանունը, ցույց է տալիս, որ չիլիտոսը ըմբռնում է բայն իբրև գոյական. «կապում եմ, կապում ես...» նշանակում են «իմ կապելը, քո կապումը...»։ Ըստ այսմ ամեն մի գոյական կարելի է վերածել բայի. օրինակ՝

i-poo *տունս, իմ տունը*→i-poo-ca *մի տուն ունեմ*
ai-poo-ca *տուն ունես*, ai-poo-zo *տուն ունեցիր և այլն։*
i-paqui *մայրս*→i-paqui-ca «*ես նրան մայր եմ համարում*»։
iria-bos «*գլխավոր*»→iria-bo-ca «*գլխավոր դառնալ*»,
iria-bo-ca-ni «*ես գլխավոր եմ*» *և այլ։*

(L. Adam—V.Henry, 34—40)։

Աֆրիկյան վեհ լեզուն բայը կազմում է գոյականների վրա ավելացնելով -ke *մասնիկը. օրինակ՝*

kereke	*կռիվ անել, կռվել*
tomboke	*խաղ անել, խաղալ*
soke	*գործ անել, գործել*
kike	*քուն լինել, քնել*

Խոնարհման ժամանակ բայից առաջ դրվում են դերանուններ (եզակիում ամբողջական ձևով, հոգնակիում մի քիչ կրճատ). այսպես՝ dia «*սիրել*» *բայից.*

nā dīa	*սիրում եմ*	mōa dīa	*սիրում ենք*
yā dīa	*սիրում ես*	wōa dīa	*սիրում եք*
ā dīa	*սիրում է*	anōa dīa	*սիրում են։*

Ժամանակ ցույց տալու համար մասնիկներ չկան. այլ կան շատ կարճ ժամանակական մակբայներ, որոնք միանում են բային առանց իրենց ինքնութիւնը կորցնելու. վեհ լեզուն դեռ չի ձուլել դրանք և բայի մարմնի մեջ չի խառնել։

(Koelle, 22—33)։

Բայի կողմից շատ հարուստ է ամերիկյան կրի լեզուն. Լոկոմբը, որ ուսումնասիրել է այս լեզուն, կոչում է «բայի լեզու». ամեն բառ կարող է բայ դառնալ. բայից կազմվում են զանազան մասնիկներով՝ նորանոր բառեր և այդ բառերից էլի բայեր և այսպես շարունակ (Lacombe, էջ *19, 53*). *բոլոր ածականները բայ են և բոլորն էլ կարող են խոնարհվել (անդ, էջ 26)։*

Մեծ պարզութիւն է հատկացած խոնարհումը օվկիանյան տահիտի լեզվում, ուր խոնարհման ամբողջ դերը հանձնված է «եմ» էական բային։ Նախ դրվում է ժամանակ ցույց տվող մասնիկը, ապա բայարմատը, ապա էական բայը և ապա դերանունը։ Այսպես՝ here «*սիրել*» *և* haapii «*ուսուցանել*» *բայերից լինում է՝ներկա՝*

te her nei au «*սիրում եմ*» *և*

te haapii nei au «*ուսուցանում եմ*», *ուր* te *կազմում է ներկան,* nei *բայն է «եմ» և* au *Ա. դեմքի դերանունը (ես)։ Մյուս դեմքերն են՝*

Բ	te	here	nei	oe	*սիրում ես*
Գ	»	»	»	oia	» *է*
երկ.	»	»	»	toua	» *ենք*
	»	»	»	maua	
	»	»	»	orua	*և այլն*
	»	»	»	raua	
հոգ.	»	»	»	tatou	*սիրում ենք*
	»	»	»	matou	
	»	»	»	outou	» *եք*
	»	»	»	ratou	» *են։*

Անկատարում ներկայի te *մասնիկը միւում է, բայց նրբկա* nei «*եմ*» *էականի տեղ դրվում է* ra «*էի*».

te here ra vau «*սիրում էի*»։

Ըստ այսմ մյուս ժամանակները հետևյալ ձևով՝

կատ.	i / ua	here / »	na	vau / au	«*սիրեցի*»
երկ.	ua	»	na	au	*սիրել եմ*
գերկ.	ua	»	ra	au	*սիրել էի*

ապ.	e	»		au	*պիտի սիրեմ (e էական բայի ապառնին է)*
անց. ապ.	e	»	ra	au	*պիտի սիրեի*
հրամ.	a	»		oe	*սիրիր*
սովր. ներկ.	ia	»		au	*որ սիրեմ*
» անց.	ia	»	na	au	*որ սիրեի*
ենթակ. ներկ.	e	»	ahiri	au	*եթե սիրեմ*
» անց.	ua	»	»	au	*եթե սիրեի*

Ահա բոլորը գառնում է կրավորական, եթե ավելացնենք hia. *ինչպես՝*

te here hia nei au *«սիրվում եմ»...*

(Sénac, 44, 46, 50, X? 21)։

Պարզ է խոնարհումը օվկիանյան ամնպա լեզվի մեջ. այստեղ կա միայն ներկա, անցյալ, ապառնի, հրամայական և սովորական։ Սրանց համար սրված մասնիկներն են՝

Ներկ. gua, *անց.* na, *ապ.* te, *սովր.* ger. *Նախ գնում են ժամանակի նշանը, ապա դերանունը և ապա բայը. օրինակ՝*

gua te alu *~ում եմ ես գն~*	*գնում եմ*
na ger alu *~ացիր դու գն~*	*դու գնացիր*
te ger alu *պիտի դու գնաս*	
ger ger alu *որ դու գնաս։*	

Հոգնակին զարմանալի է նրանով, որ բայից առաջ դրված դերանունը կրկնվում է բայից հետո՝ զորացած ձևով. ինչպես՝

Ներկ.	gua	mow	alu	gimówtólu
	~ում ենք մենք (excl.)		*գն~*	*մենք ինքներս*
	gua	tow (incl.)	alu	gitówólu
	~ում ենք մենք		*գն~*	*մենք ինքներս*
	gua	mo	alu	gimótólu
	~ում եք դուք		*գն~*	*դուք ինքներդ*
	gua	now	alu	ginówtólu

	~ում են	*նրանք*	*գն~*	*նրանք ինքնները*
անկ. Ա.	na	mow	alu	gimowtólu
հոգ. Ա.	»	tow	»	gitówtólu
Բ	»	mo	»	gimótólu
Գ	»	now	»	ginówtólu
ապ. Ա.	te	mow	»	gimówtólu
հոգ. Ա.	te	tow	»	gitowtólu
Բ	»	mo	»	gimótulu
Գ	»	now	»	ginówtolu
սովր. Ա.	ger	mow	alu	gimówtólu
հոգ. Ա.	»	tow	»	gitowtólu
Բ	»	mo	»	gimótolu
Գ	»	now	»	ginowtólu.

Ինչպես դերանուններին նվիրված հատորում ասել ենք, կան լեզուներ, որոնք խոնարհման ժամանակ գործածում են դերանունների այնպիսի ձևեր, որոնք սարքեր են առանձին գործածված դերանունների։ Մենք սրանք զանազանեցինք բացարձակ և խոնարհական անուններով, բայց կոչվում են նաև անվանական և բայական։ Այսպես օրինակ՝ ամերիկյան չիրչա լեզվում բացարձակ դերանուններն են՝ hycha *ես,* mue *դու,* asy *նա,* chie *մենք,* mie *դուք,* asy *նրանք, իսկ խոնարհման ժամանակ լինում են* ze *ես,* um *դու,* a *նա,* chi *մենք,* mi *դուք,* a *նրանք։ Բայը խոնարհման ժամանակ առանում է ուրիշ այս վերջին ձևերը, ապա դրվում է բայը, որին կցվում է բայի ժամանակի ցույց տվող նշանը։*

Կատարյալի (կամ որ նույն է դերակատարի) մեջ ժամանակ ցույց տվող նշան չի դրվում. արմատը ուրիշ կատարյալի ձևն է. այսպես՝ bquy *«տանել» բայից՝*

ze	bquy	*արի*	chi bquy	*արինք*
um	quy	*արիր*	mi bquy	*արիք*
a	bquy	*արեց*	a bquy	*արին։*

Ներկալի (կամ որ նույն է անկատարի) մեջ իբրև ժամանակի մասնիկ դրվում է scua, *իսկ ապառնիի մեջ դրվում է* ~nga, *այսպես՝*

Ներկա

ze	bquyscua	*անում եմ, անում էի*
um	quyscua	» *ես* » *էիր*

a	bquyscua	»	է	» էր
chi	bquyscua	»	ենք.	» էինք
mi	bquyscua	»	եք,	» էիք
a	bquyscua	»	են	» էին

ապառնի

ze	bquynga	*պիտի անեմ*
um	quynga	» *անես*
a	bquynga	» *անի*
chi	bquynga	» *անենք*
mi	bquynga	» *անեք*
a	bquynga	» *անեն:*

(Uricochea, 12):

Ամերիկյան լեզուները երկու տեսակ խոնարհում ունեն.

Առարկայական (objectif), *որի մեջ թե ազդական հոլով ենթական, և թե տրական հոլով խնդիրը դերանվան կերպարանքով՝ մասնիկի պես կցվում են բային և նրա հետ մի բառ կազմում. օրինակ՝* ես-քեզ-տալիս եմ:

բ) փոխանցական *(իսպան. բառով՝* transicio*) խոնարհում, որի մեջ դերանուն ենթական իրրև առանձին և անկախ բառ է դրվում, չի կցվում բայի հետ, այլ բային կցվում է միայն տրական խնդիրը. օրինակ՝* ես քեզ տալիս եմ:

Ենթական դերանուն ամեն լեզվի մեջ էլ կա և տրական կամ հայցական դերանուն խնդիր ամեն լեզվի մեջ էլ կարող է լինել: Բայց նրանք միում են իրրև անկախ հարակից բառեր, ինչպես է հայերենում կամ ռուսերենում. ես քեզ տալիս եմ = я тебе даю, իսկ վերի դրութեամբ այդ դերանունները այնպես են կրճատվում կամ ձևափոխվում, որ մասնիկի ձև են առնում. դրա համար էլ կարող են առանձին քննութեան ենթարկվել:

Մենք հաջորդ էջերով կտանք մի քանի ալգոնկին ամերիկյան լեզուների խոնարհման նկարագիրը:

Ամերիկյան տեսակ լեզվի մեջ սովորական խոնարհումը հետևյալ ձևով է.

Ինը դեմքերի դերանուններն են՝

եզ.	*Ա.*	n	*Բ*	ymi	*Գ* y
երկ.		yu		ymu	ighu
հոգ.		iñ		ymu	yghn

Ժամանակների նշաններն են՝ ներկա—, անկատար bu, *ապառնի* a, *կատարյալ* uye, *գերակատար* uye bu, *հարակատար* vu-, *անցյալ ապառնի* uye-a.

Ահա elu «*տալ*» *բայի սովորական խոնարհումը.*

		Ներկա	Անկատար
եզ.	*Ա.*	elu-n	elu-bu-n
	Բ	elu-ymi	elu-bu-imi
	Գ	elu-y	elu-bu-y
երկ.	*Ա.*	elu-yu	elu-bu-yu
	Բ	elu-ymu	elu-bu-ymu
	Գ	elu-yghu	elu-bu-yghu
հոգ.	*Ա.*	elu-iñ	elu-bu-iñ
	Բ	elu-ymn	elu-bu-imn
	Գ	elu-yghn	elu-bu-yghn

կար. elu-uye-n...
հարակ. eluvun, eluvuymi. eluvuy. eluvuyu *և այլն*
գերակ. elu-uye-bu-n...
ապ. elu-a-n, eluaymi eluay, eluayu, eluaymu...
անց. ապ. elu-uye-a-n
բոլորը հետևյալ կանոնավորութեամբ:

(Grassererie, 23—24 և Febres, 10):

Առևտ լեզվի փոխանցումը կարելի է կատարել բազմաթիվ յատնութիւններով. ա դեմքից բ-ին կամ գ-ին, բ դեմքից ա-ին կամ գ-ին, գ դեմքից ա-ին, բ-ին և գ-ին. այս բոլորը եզակի, երկակի և հոգնակի տարբեր ձևերով: Ամեն մի դեմքի իր վրա կատարումը կոչվում է անդրադարձ (réfléchi), որ առանձին խոնարհում ունի:

Փոխանցական խոնարհումը կազմվում է մեծագույն մասամբ e *ձայնավորով, որ դրվում է բայի և տրական խնդրի միջև. օրինակ՝*

եզակին	*եզ.* inche	elu-e-imi	*ես տալիս եմ քեզ*
	երկ. inchiu	» » »	*մենք երկուս տալիս ենք քեզ*
	հոգ. inchiñ	» » »	*մենք տալիս ենք քեզ*

երկակիին	հզ.	inche » » ymu	*ես տալիս եմ երկուսիդ*
	երկ.	inchiu » » »	*մենք երկուս տալիս ենք երկուսիդ*
	հոգ.	inchiñ » » »	*մենք տալիս ենք երկուսիդ*
հոգնակիին	հզ.	inche » » ymn	*ես տալիս եմ ձեզ*
	երկ.	inchiu » » »	*մենք երկուս տալիս ենք ձեզ*
	հոգ.	inchiñ » » »	*մենք տալիս ենք ձեզ*

դերակ. inche elu-uye-bu-e-ymi

ես ավել էի քեզ
Գ. դեմքից Բ. դեմքին
teyeghu elu-e-ymu mèu
նրանք երկուսը տալիս են ձեզ երկուսիդ։

Անդրադարձ խոնարհումը կազմվում է -u- *ձայնավորով, որ դրվում է բայարմատի և վերջահանգ դերանվան միջև. օրինակ՝*

inche elu-u-n
ես տալիս եմ ինձ։

(Grasserie, 36—37)։

Ամերիկյան լեզուները երբեմն գոյականն էլ բայի հետ են միացնում խոնարհման ժամանակ։ Այս կարգի բայերը կոչվում են ներմարմնավորող բայեր (verbe incorporant)։

Այս կարգին է պատկանում (միայն մասամբ) նաև նույն առկա լեզուն. օրինակ՝

entun *հանել* + mille *ոսկի բառերից՝*
en-tu-milla-n *ոսկի եմ հանում*
tavaycou *գերել* + huinca *խալանացի*
tavaycohuincan *գերել խալանացիներին*
elu-cudu-bi-u *տալիս եմ իմ շորը։*

(Grasserie, 53)։

Առարկայական խոնարհում ունի նաև ամերիկյան կրի լեզուն, ըստ Լակոմբի, (էջ 96) այս կարգի բայերը երկու տեսակ են. ա) շնչավոր առարկայական բայ (verbe objectif animé) *և բ) անշունչ առարկայական բայ* (verbe objectif inanimé)։ *Առաջինն այն է, երբ գործող անձը մի կենդանի էակի վրա մի գործ է կատարում. ունի հինգ ձև կամ ուղղություն. ա դեմքից գ-ին (ես նրան), ա դեմքից բ-ին (ես քեզ), գ դեմքից ա-ին (նա ինձ), բ դեմքից ա-ին (դու ինձ) և անորոշ անձից (ֆրանս.* on m'aime)։ *Խոնարհումը լինում է ութ տեսակ, այսինքն՝ արմատի վերջում դնելով ութ տարբեր մասնիկ* (mew, hwew, new, hew. tew, swew, wew, yew). *սրանցով առացվում է ութ լծորդություն։*

Կա նաև սրանց նմազական ձևը, որ կազմվում է si *առարկայական մասնիկով. օրինակ՝ «ես նրան մի քիչ ծեծում եմ»։*

Անշունչ առարկայական բայը այն է՝ 1) երբ հնթական ազդվում է մի անշունչ առարկայից. օրինակ՝ «ես քարից մի հարված առացա» (Գ դեմքից Ա-ին), և 2) երբ հնթական գործում է մի անշունչ իրի վրա. ունի երկու լծորդություն, որոնք կազմվում են բայարմատի վրա ավելացնելով am, ttaw *մասնիկները։*

(Lacombe, 95)։

Աֆրիկյան բանտու լեզուների մեջ էլ կա հնթակայի հետ հարցական խնդիր ներմուծելու ձևը. օրինակ՝ կագուրու լեզվի մեջ խոնարհումը հետևյալ ձևն ունի. նախ դրվում է հնթակա դերանունը, ապա ժամանակ ցույց տվող մասնիկը, ապա առարկան նշանակող դերանունը և ի վերջո բայարմատը անփոփոխ. օրինակ՝

a-ku-ga-dumula
նա պիտի գնասա կարել } *նա պիտի գնասա կարել։*

Հարուստ և կանոնավոր խոնարհում ունի. լծորդությունը մի տեսակ է. ժամանակներն են՝ սահմանական ներկա, անկատար, կատարյալ, ապառնի, պատմողական ժամանակ, թեական ա և բ, հրամայական, ստորադասական ներկա և անկատար։ Սրանցից զատ ունի նաև անորոշ ժամանակ (indefinite tense) *կոչված բայաձևը, որ ոչ թիվ կա, ոչ դեմք և ոչ ժամանակ. բայց այս բոլորը ինքնին է հասկացվում. մասնիկն է* ka, *ինչպես՝*

ka-luta *գնում է, պիտի գնա, գնացին և այլն.*
ka-bena *նա կոտրեց, ոնն կոտրեց, պիտի կոտրե և այլն։*

Վերջապես կա նաև մի ուրիշ բայական ձև, որ կազմվում է -nati *մասնիկով և նշանակում է «նորից, դեռ, տակավին», ինչպես՝* va-natitonya *«դեռ անձրևում է»։*

(Last, 55—57, 66)։

Աֆրիկյան ակրա (կամ գա) լեզուն էլ բալի մեջ է գումարում հնչեակա և հայցական կամ սրական դերանունները (եզակիում մի քիչ կրճատ ձևով, իսկ հոգնակիում ամբողջութիւյամբ). օրինակ. ke «տասել, պատմել» արմատից՝

mikeo	*ես պատմեցի քեզ*
okemi	*դու պատմեցիր ինձ*
ekele	*նա (նե) պատմեց նրան*
wokenye	*մենք պատմեցինք ձեզ*
nyekewo	*դուք պատմեցինք մեզ*
amekewo	*նրանք պատմեցին մեզ*

(*դերանուններն են* mi *ես*, bo *դու*, le *նա, նե*, wo *մենք*, nye *դուք*, ame *նրանք*)։

Ահա մի երկար օրինակ այս լեզվից.

Bo kele ke nakai sane le ke-mi
Դու և նա այս պատմութիւնը պատմեցիր ինձ
ye miĕu le mli nye se afi le-
ի սեննկի իմում անցյալ տարին։

(Zimmermann, 98, 105)։

Բերբերական կաբիլ լեզվում բայն ունի միայն մի ժողովութիւն. որ հետևյալ ձևն ունի (արմատի տեղ դնում եմ —).

եզ.	*Ա.* —r	*հոգ.*	*Ա.* n—
	Բ th—dh		*Բ ար.* th—m
	Գ—		*Բ իգ.* th—mth
	Գ ար. i—		*Գ ար.* —n
	Գ իգ. th—		*Գ իգ.* —nt

Գծիկի տեղ դնելով urar «*խաղալ*» *արմատը՝ ստանում ենք*

urar-er	*խաղում եմ*	n-urar	*խաղում ենք*
th-urar-edh	*խաղում ես*	th-urar-em	*խաղում եք*
		th-urar-emth	» »
i-urar	*խաղում է (նա)*	urar-en	*խաղում են*
th-urar	» » *(նե)*	urar-ent	» »

Իրապես բայն ունի մի ժամանակ. վերոհիշյալը թե ներկա է թե անցյալ, և թե ապառնի։ Եթե ուզենան ճշտել ժամանակը, անցյալի համար դնում են ai, *ապառնիի համար* ad *կամ* ra։

Ինչպես տեսնում ենք, սեռը եզակիի մեջ միայն գ դեմքում ունի տարբերութիւն, իսկ հոգնակիում թե բ և թե գ դեմքը։

(Hanoteau, 96—97)

Դերանուն խնդիրները դրվում են բայից հետո իբրև մասնիկ և հայցականի համար տարբեր ու սրականի համար տարբեր ձև ունեն։

Հայցականներն են՝

եզ.	i	*ինձ*	*հոգ.*	ar	*մեզ*
	k	*քեզ (ար.)*		kun	*ձեզ (ար.)*
	kem	» *(իգ.)*		kunt	» *(իգ.)*
	th	*նրա*		then	*նրոսա (ար.)*
	ts	*նէ*		thent	» *(իգ.)*

Տրականներն են՝

եզ.	ii	*ինձ*	*հոգ.*	iar	*մեզ*
	iak	*քեզ*		iaun	*ձեզ*
	iam	» *(իգ.)*		iakunt	» *(իգ.)*
	ias	*նմա*		iasen	*նոցա (ար.)*
	—			iasent	» *(իգ.)*

օրինակ՝

izera-k	*տեսի քեզ*
izera-kem	» » *(ով կին)*
ifka iakunt	*նա ձեզ (իգ.)*

(Hanoteau, 56—57)

Փոքր ձայնական փոփոխութիւններով նույն ձևն է ներկայացնում նաև բերբերական տամաշեկ լեզուն, որից օրինակ ենք տալիս enr «*սպանել*» *բայը,*

enrir	*սպանեցի*	menra	*սպանեցինք*
tenrid	*սպանեցիր*	tenram	*դուք (ար.) սպանեցիք*
inra	*նա սպանեց*	tenramt	» *(իգ.)* »
tenra	*նե* »	enran	*նոքա (ար.) սպանեցին*
		enrant	» *(իգ.)* »

(Hanoteau, 61)։

Յոնարհման ձևը բարդանում է ամերիկյան մայա լեզվի մեջ. այստեղ նույնպես դերանունները երկու ձև են ստանում՝ բայական դերանուն և անվանական դերանուն. ինչպես՝

եզ.	Ա.	-en	in-
	Բ	-eč	a-
	Գ	—	u-
հոգ.	Ա.	ones	k-eš, k-oneš
	Բ	ěs	a-eš
	Գ	ob	u-ob

Բայական դերանունները դործածվում են իբրև հետամատնիկ, անվանական դերանունները իբրև նախամատնիկ (եզակիում), իսկ հոգնակիում թե՛ իբրև նախամատնիկ և թե՛ իբրև հետամատնիկ։

Նախ դրվում է բայի ժամանակը ցույց տվող մի մատնիկ, ապա դերանունը, ապա արմատը. ինչպես՝ tan *ներկայի մատնիկ,* šot *«կտրել»* +če *«փայտ».*

tin šotik če *կտրում եմ փայտ*
tun wen-el *նա քնում է*

(սրանց մեջ tin *խառնուրդն է* tan+in *ձևի և* tun=tun+u*)։*

Ապառնի ժամանակը ցույց տվող մատնիկն է he*, կատարյալը՝* çok*, որ կրճատվելով և դերանունին միանալով դառնում է* çin *և այլն. ինչպես՝*

çin wen-el *քնեցի։*

Ակապիտով բայ և գոյական միանում են և խոնարհումը լինում է իբր հոլովում. օրինակ՝

nai	*երազ*	— tin nai	*երազում եմ*
tub	*թուք*	— tin tub	*թքում եմ*
qai	*երգ*	— tin qai	*երգում եմ*
baab	*խնչեփատ*	— tin baab	*լողում եմ։*

(Tozzer, 39, 55)։

Վերջավորութիւնների կողմից զարմանալի ձև ունի ամերիկյան մոսկիտո լեզուն։ Այստեղ ներկան կազմվում է բայական արմատի վրա ավելացնելով Ա. դեմքի համար sni*, Բ դեմքի համար* sma*, Գ դեմքի համար* ssa*, որ արմատին կապում են* i *հոդակապով. օրինակ՝* kaik-aia *«առևտրել» բայից.*

kaik-i-sni *առևտրում եմ*
kaik-i-sma *առևտրում ես*
kaik-i-ssa *առևտրում է։*

Հոգնակին նույն է սրանց հետ, իսկ շատ կարևոր դեպքում՝ ենթական դերանվան կամ գոյականի վրա ավելացնում են nanni *բառը. օրինակ՝*

yang nanni kaik-i-sni
ես (հոգ.) առևտրում եմ=առևտրում ենք։

Անկատարի, կատարյալի և ապառնիի համար վերջավորութիւնները փոխվում են. այսպես՝

	աճկ.	կտր.	ապառ.
Ա.	kaik-atni	kaik-ri	kaik-amni
Բ	kaik-atma	kaik-ram	kaik-ma
Գ	kaik-atta	kaik-an	kaik-bia

Այս վերջավորութիւնները չեն բացատրված։

(L. Adam. 39—42)։

Կոնգոի չիլուբա (բանտու) լեզվում խոնարհումը կատարվում է, մեծ մասամբ, էական բայի օժանդակութեամբ։ Ներկան կազմելու համար արմատի սկիզբը դնում են դերանունները և նրանց հետ խոնարհում էական բայի ներկան, որ հետևյալն է.

եզ.	Ա.	indi, ndi	*եմ*	հոգ. Ա.	tudi	*ենք*
	Բ	udi	*ես*	Բ	nudi	*եք*
	Գ	udi	*է*	Գ	badi	*են։*

Առնենք ku-dima *«մշակել» բայը, որի արմատն է* dima*, որ միացնելով դերանունների և էական բայի ներկայի հետ, կստանանք* ku-dima *բայի ներկան.*

եզ.	Ա.	indi ndima	*մշակում եմ*	հոգ. Ա.	tudi tudima	*մշակում ենք*
	Բ	udi udima	» *ես*	Բ	nudi nudima	*մշակում եք*
	Գ	udi udima	» *է*	Գ	badi badima	*մշակում են։*

Անկատարը կազմվում է նույն ձևով՝ միացնելով էական բայի անկատարի հետ.

եզ.	Ա.	muwa ndima	հոգ. Ա.	tuvwa tudima
	Բ	uvwa udima	Բ	nuvwa nudima
	Գ	» »	Գ	bavwa badima

Նույնպես և ապառնին՝ էական բայի ապառնիի հետ միացած (բայց բայը մնում է անորոշի ձևով).

Հգ. Ա.	nvwavwa kudima		Հոգ. Ա.	tuvavwa kudima	
Բ	uvwavwa	»	Բ	nuvwavwa	»
Գ	»	»	Գ	bavawva	»

Սորագաւականի ներկան կազմվում է առանձին, առանց էական բայի օժանդակութեան.

Հգ. Ա.	ndime	Հոգ. Ա.	tudime
Բ	udime	Բ	nndime
Գ	adime	Գ	badime

Սորագաւականի անկատարը կազմվում է դարձյալ էական բայի սորագաւական անկատարի օժանդակութեամբ.

Հգ. Ա.	nakadi ndima	Հոգ. Ա.	čyakadi ndima
Բ	wakadi udima	Բ	kwakadi udima
Գ	»	Գ	kakadi »

Հարակատարը անկախ է և հետևյալ ձևն ունի.

Հգ. Ա.	nakadima	Հոգ. Ա.	twakadima
Բ	wakadima	Բ	nwakadima
Գ	»	Գ	bakadima.

Դերանունները իրրև խնդիր կարող են մանել բայի մեջ. օրինակ՝

ŋdeša	*ցույց տուր ինձ*
nkudeše	*ցույց տամ քեզ*
kukufilaku	*քեզ ալնտեղ ընկերակցել*
bakaŋtuma	*ինձ ուղարկեցին:*

(Gabriel, 37, 46, 56, 80, 87, 88, 93)

Բանտու լեզուների բայը չափազանց հարուստ է գործողության ձևի և ժամանակի նրբութեանց կողմից: Օրինակ առնենք ռոնգա լեզվից bona *«տեսնել» բայը, որ մյուսներից ավելի հարուստ է ձևերով: Մի քերականագետ հաշվել է, որ այս բայը առանում է մի քանի հազար ձև* (plusieurs milliers de formes verbales)*: Պետք չէ կարծել սակայն, թե արմատը այսպիսի մեծ թվերի է հասել չափազանց փոփոխվելու և իր կերպարանքը կորցնելու պատճառով: Ընդհակառակը, բանտու բայը վերջավորութեամբ չի փոփոխվում՝ ոչ դասերի, ոչ թվերի և ոչ էլ դեմքերի կողմից: Ահա օրինակ այս բայի անորոշ ներկայի խոնարհումը.*

ŋdi	bona	*տեսնում*	*եմ*
u	»	»	*ես*
a	»	»	*է*
hi	»	»	*ենք*
mi	»	»	*եք*
ba	»	»	*են*

Բանտու բայի ձևերի հարստութեանն ստացվում է՝

1. Օժանդակ բայերից, որոնք կամ անկախ կամ մասնիկի ձև ստացած և երբեմն էլ բայի դերանունների հետ միացած ու նրանց հետ խառնված՝ անճանաչելի են դառնում: Այդ օժանդակներն են՝

ta *գալ*, fa *գալ մի տեղից*, ya *գնալ*, ku *անել*, čhuka *ցատկել*, „tressauter", ka *նստել*, sa *երեալ*, tlhela *վերադառնալ*, ba *լինել*, nga *կարենալ*, buya *վերադառնալ* և *այլն:*

Բայը միանում է սրանցից մեկի կամ մի քանիսի հետ և տալիս է խառնուրդների մի մեծ թիվ, որ մեր լեզուների մեջ մակբայներով կամ շաղկապներով պիտի բացատրվեին:

2. Ածանցյալ ձևերից. բայարմատը վերջից առանում է մի մասնիկ, որով իր նշանակութեան վրա ավելանում է մի նոր երանգ՝ օրինակ՝ նույն բայից կազմված ձևեր են՝

boniwa	*(կրավորական) տեսնվել*
bonela (apblicatif)	*մեկի համար մի բան տեսնել*
bonisa	*(պատճառական) տեսնել տալ, տեսցնել*
boneka (qualificatif)	*տեսանելի լինել*
bonisisa	*(սաստկական) կատարելապես տեսնել*
bonana	*(փոխադարձ) իրար տեսնել*
tibona	*(անդրադարձ) ինքն իրեն տեսնել*

և ուրիշ շատ ածանցներ:

Կարելի է նաև մի քանի ածանց միասին դումարել և տեսնել, թե ինչ մեծ թիվ կստացվի:

Ավելացնենք սրանց վրա բայական ժամանակների մեծ թիվը:

(Junod, 125—126)

Մանդոլերենում և իր ցեղակից բոլոր լեզվում բայի ժամանակը վեց է. ներկա, անկատար, երկու կատարյալ, դերակատար և ապառնի: Խոնարհման ժամանակ բայի դիմային վերջավորութիւնները են բոլոր լեզվում՝

հզ.	*Ա*	bi, p, m	*հոգ.*	*Ա*	bide, mde...
	Բ	ši, či, š, č		*Բ*	ta, te, t
	Գ	—		*Գ*	—

որոնք բոլորովին նույն են բուլյաթ լեզվի անձնական դերանուններուն հետ, որոնք են՝

bi	*ես*	bide	*մենք*
ši, či	*դու*	ta	*դուք*

Մոնղոլերենում նեղական կազմվում է դերբայից, որ խոնարհվում է էական բայով. օրինակ՝ maktan amui *դովում եմ (բառացի «գովող եմ»,* amui *«եմ» բայով). կրճատմամբ դառնում է* maktamui, *որ շատ սովորական է գրական մոնղոլերենում, իսկ ժողովրդական լեզվով կրճատմամբ դարձել է* maktamu, maktam։— *Անկատարը մոնղոլերենում կազմվում է* bai, bei, ba, be *մասնիկներով, իսկ բուրյաթերենում միայն* â, ê, ô *վերջավորութիւններով։ Երկու կատարյալներից առաջինը կազմվում է դերբայից* ahan, asan *մասնիկով. ինչպես՝* alaham *սպանեցի։ Երկրորդ կատարյալը, որ ցույց է տալիս հաստատապես կատարված մի գործողութիւն, մոնղոլերենում կազմվում է* luga, luge *մասնիկով, իսկ բուրյաթերենում* lai, lei *մասնիկով. ինչպես՝* abalaip *առի,* alalaip *սպանեցի։ Ապառնին կազմվում է մոնղոլերենում* sugai *մասնիկով, որ ժողովրդական մոնղոլերենում դառնում է* su, *բուրյաթերեն* su, hu։

(Castrén 36—40)։

Էստոներենում (ուգրո-ֆիննական լեզվաբուն) բայի խոնարհման արմատական ձևը պահում է հրամայականը. դեմք որոշող վերջավորութիւնները կցվում են սրան. օրինակ՝ walla *«թափել, ձուլել,* giessen*» բայի ներկայի ձևն է՝*

հզ.	*Ա*	walla-n	*հոգ.*	*Ա*	walla-me
	Բ	-d		*Բ*	» -te
	Գ	-b		*Գ*	» -wad

Ժամանակ և եղանակ հայտնող նշանները դրվում են բայարմատի և դիմային վերջավորութեան միջև. ինչպես՝

կար.	walla-sin	*ըղձ.*	walla-ksin
	» -sid		» -ksid
	» -s		» -ks
	» -sime		» -ksime
	» -site		» -ksite
	» -siwad		» -ksiwad

(Arens, 66)։

Հետաքրքիր ձև ունի խոնարհումը ֆիլիպինյան տագալոգ լեզվում, որ նկարագրում է Բլաքը, (էջ 38, 39, 40)։ Բայերը այս լեզվում կազմված են լինում ընդհանրապես նախամասնիկներով, որոնք թվով 17 հատ են և մեծ մասամբ սկսվում են m-*ով. ինչպես՝* ma-, man-, mag-, magka-, magkan-, magkapa-, magpaka-. magpati *և այլն, այս բոլորը ներգործական են և կգտնան կրավորական, եթե* m *նախաձայնը դարձնենք* p. *ինչպես՝* pa-. pan,- pag-, pag-si-, pagkapa *և այլն։*

Խոնարհման ժամանակ վանկերը կրկնվում են. օրինակ՝ maglarô *«խաղալ» և* matáy *«մեռնել» բայերից՝*

ապ.	maglalarô	mamamatayán
կար.	naglarô	mamatayán
ներկ.	naglalarô	namamatayán

Այսպես կազմվում են երկար-երկար ձևեր, կրավորականը՝ m-*ի փոխարեն* p-*ով։*

Ավելի լավ բացատրութիւններ չունենք այս խոնարհման մասին։

Հոտենդոտան կրնանա բարբառի մեջ խոնարհումը կազմվում է հետևյալ ձևով. նախ դնում են բայարմատը, նրան կցում են անձնական դերանունները իրր մասնիկ և ապա ժամանակ ցույց տվող մասնիկը. օրինակ՝ mû *«տեսնել» արմատից՝ ներկա* na *մասնիկով.*

mûr-r	na	*ես տեսնում եմ (ար.)*	
mû-ta	na	» »	*» (իգ.)*
mû-ts	na	*դու* »	*» (ար.)*
mû-s	na	» »	*» (իգ.)*
mû-da	na	*մենք* »	*ենք (հաս.)*
mû-kham	na	» »	*» (երկ. ար.) և այլն։*

Նույն ձևով կազմվում են մյուս ժամանակները, փոխելով միայն ժամանակի նշանը. այսպես՝

preterit-*ի*	*համար դրվում է*	ko *կամ* ku-ko,		
կատարյալի	»	»	»	tje

ապառնիի » » » ta՝

(Meinhoff, 51—52)

Ամերիկյան ալեուտ լեզվի մեջ խոնարհումը շատ հարուստ է. ունի ոչ միայն երեք թիվ (եզ., երկ., հոգ.), ժամանակ և եղանակ, այլև ասպիճան! միայն ներգործական սեռն առանում է 400 ձև: Բոլոր գոյականները, ածականները և թվականները կարող են միանալ «ունեմ» և «եմ» օժանդակների հետ, կազմել մի ածանց բառ և խոնարհվել բոլոր թվերով, դեմքերով և ժամանակներով, թե դրական և թե բացասական. ինչպես՝ «կին-ունեմ, կին-ունես, հայր-եմ, հայր-ես» և այլն: Ինչպես բոլոր բայերը, նաև սրանք, կարող են ներփակել առարական հոդ. ինչպես՝ «ես-հայր-եմ, դու-հայր-ես, ես-ձեր-երկուսիդ-հայրն-եմ, ես-ձեր (հոգ.)-հայրն-եմ, ես-նրանց-հայրն-եմ» և այլն:

Բայի աստիճանները 10 են. սրանք առանձին մասնիկներ են, որոնք կցվելով բայի որևէ ձևին, ցույց են տալիս գործողության առաջադրությունը. այսպես 1) բավական ուժեղ, 2) ոչ-բոլորովին լավ, այլ ավելի վատ, 3) բոլորովին, 4) լիապես, 5) շատ լավ, 6) ուժգին կերպով, 7—9) շատ ուժեղ, 10) ամենաառաստիկ ուժեղ չափով:

(Вениаминов, 17, 19, 31, 36, 63)

Դրավիդյան տելուգու լեզվում ներկան ու ապառնին միևնույն են. կան նաև մի անցյալ և մի սորիստ (կատարյալ). բոլորն էլ կազմվում են դերանունների կրճատ ձևերը կցելով բայարմատի վերջին. օրինակ՝ koṭṭa «զարնել, ծեծել» բայից՝

(դերանուններն են՝ nēnu ես, mēmu մենք, nīvu դու, mīru դուք).

Ներկա (որ և ապառնի)	koṭṭutānu	*ես*
	koṭṭutāvu	*դու*
	koṭṭutādu	*նա*
	koṭṭutundi	*(իգ. չեզ.)*
	koṭṭutāmu	*մենք*
	koṭṭutāru	*դուք նրանք,*
	koṭṭutāvi	*նրանք (չեզ.)*
անցյալը լինում է	koṭṭitini	*և այլն*
սորիստը » »	koṭṭudunu	*և այլն:*

(Lakshminarasayya, 21):

Մալգաշերեն լեզվում բայը ունի երեք ժամանակ. ներկա, անցյալ, ապառնի: Ներկայի համար հատուկ նշան չկա, անցյալի նշանն է n, ապառնիի նշանն է h:

Ներկայից առաջ դնելով efa, *առացվում է մի ձև, որ ցույց է տալիս, թե գործողությունն սկսված է և կատարման ընթացքում է (կոր):*

Անցյալից առաջ դնելով efa, *առացվում է հարակատար:*

Անցյալից առաջ դնելով ho, *առացվում է գերակատար:*

Ապառնիից առաջ դնելով efa, *առացվում է առույգ և անմիջական գործողություն (այս բոպեիս պիտի գնամ):*

(Montagné, 35—36)

Չիբչեներենը չունի ապառնի և ներկան նաև ապառնի է. ապառնի իմաստը ներկայացնելու համար գործածում են գանազան դարձվածքներ, օժանդակ բայեր, ինչպես և ռուսերենի стану (стать *սկսել*) *բայի նմանությամբ* pondny *հոմանիշ բայով կազմված դարձվածքներ: Անկատար, կատարյալ, հարակատար և գերակատար պակասում են այս լեզվում. կրավորական էլ չկա. և այս ձևը «լինել» օժանդակի միջոցով է կազմվում: Ըստ այմ, թեև բայը առանձակ մասնիկներով աճած՝ ճոխ նրբություններ ունի, բայց ունենալով միայն երեք եղանակ (սահմանական, հրամայական և թեական) և միայն մի ժամանակ (ներկա), շատ աղքատ վիճակ է ներկայացնում՝ համեմատությամբ հունարենի և լատիներենի: Բոլոր թերիները լրացնում է բազմաթիվ բայանուններով և օժանդակ բայերի միջոցով կազմված դարձվածքներով:*

(Weidemann, 179, 180, 203):

Մելանեզյան մոտա լեզվի մեջ խոնարհման ժամանակ նախամասնիկի ձևով նշանակվում են նախ ժամանակը, ապա եղանակը: Ժամանակի նախամասնիկներն են՝ me, te, ti, we.— me *նշանակում է անցյալը, իսկ եթե սրա հետ* veta *մակրայն էլ գրվի, կլինի լրացած գործողությունը.*— te *ցույց է տալիս ապառնին, իսկ եթե սրա հետ գրվի նաև* anaisa *մակրայը, կառացվի իսկական ապառնի:*— ti *ցույց է տալիս շարունակություն, հաջողություն և գործածվում է պատմվածքների մեջ: Մնում է* we, *որի նշանակությունը անորոշ է. եթե գործողությունը* me *(անցյալ) չէ կամ թե* te *(ապառնի) չէ, ուրեմն* we *է: Եղանակ նշանակող նախամասնիկներն են* qe, *և* ta.— qe *ցույց է տալիս թեականն ու սորատատականը, իսկ* ta *կարողականն ու ըղձականը:*

(Codrington, XIX):

Աֆրիկյան սերեր լեզվի խոնարհումը, ըստ Բուտավանդի (էջ 38—40), „est très perfectionnée; par son étendue et sa régularité elle mérite l'épithète de monumentale"*. Ունի 10 եղանակ, որոնք են պատմողական (énonciatif), ենթակայական, առարկայական, պատճառական, առորդայական, ենթադրական, դերբայական, հրամայական (ուղղակի և անուղղակի) անեղումք.— վեց ժամանակ, որոնք են ապրիստ, ներկա, ապառնի, երեք տեսակ անցյալ (բացարձակ, հարաբերական, պայմանական): Սրանցից զատ ունի 25 տարբեր մասնիկներով կազմված ածանցյալ բայեր. որոնցից հիշատակելի են՝

oh անդրադարձ
el կրավորական
ik երթալ մի բան անելու
id դալ մի բան անելու
it մի բանի հակառակ անել, défaire
ir փոխադարձ (որ է իրար!):

Կարելի է հայկական հոլով դերանունը ներմուծել բայի մեջ, ինչ որ սուդանական լեզուների մեջ հազվագյուտ երևույթ է:

Կովկասյան դարգվա լեզվի խոնարհման ոսոխով խոսելով՝ Ժիրկովը (էջ 25, 78) ասում է հետևյալը. Uslar-ը շատ է խոսել դարգվա լեզվի խոնարհման մասին, շատ ցանկեր է տվել դանադան բայաձևերի մասին, բայց այդ խճողումից ոչինչ դուրս չի եկել: Հակառակ Uslar-ի այդ որոնումներին, դարգվա լեզվի բայը շատ պարզ և կանոնավոր կազմութիւն ունի:— Պետք է իմանալ նախ՝ որ գ դեմքը խոնարհում չունի, այլ կազմված է say «ինքը» դերանունից: Այսպես են նաև թուրքերեն, ֆիններեն, հունգարերեն, չուվաշերեն, լիտվաններեն և լեթերեն լեզուները, որոնց մեջ գ դեմքը խոնարհում չունի, օրինակ՝

թրք. ներկ.	geliyor-əm	geliyor-əz
	geliyor-sen	geliyor-sənəz
	geliyor	geliyor-lar
կար.	geldi-m	geldi-k
	geldi-n	geldi-niz
	geldi	geldi-ler

* Շատ կասարելության հասած է. իր տարածվածությամբ ու կանոնավորությամբ նա արժանի է մոնումենտալ անվանումին (Թրգմ. խմբ.):

(գ դեմքը եղակիում միայն է առանց դեմքի վերջավորության, իսկ հոգնակիում գոյականի նման առանում է -ler «ներ» մասնիկը):

Ֆիննա. եզ.	sanon	խոսում եմ	sanomme
	sanot		sanotte
	sanoo		sanovat
հունգ.	várok	սպասում եմ	várunk
	vársz		vártok
	vár		várnak
լիթվ.	bēgu	վազում եմ	bēgam(e)
	bēgi		bēgat(e)
	bēg(a)		bēg(a)
լատիշ.	redsu	տեսնում եմ	redsam
	redsi		redsat
	reds		reds

Դարգվա լեզվի մեջ խոնարհման ժամանակ ա և բ դեմքերը կազմվում են մակրայի վրա դնելով -ra, -ri (ես եմ, դու ես), որոնք էական բայի երկու դեմքերն են. գ դեմքում բայական տարր չկա. ութիմն և բայ չէ: Այսպիսով՝ դուրս է գալիս, որ դարգվա լեզվի խոնարհումը ունի միայն երկու դեմք (ա և բ), և որ այդ լեզուն ունի մի բայ, որ է էական բայը»:

Սրանից հետո Ժիրկովը եզրակացնում է, թե ութիմն աշխարհի բոլոր լեզուների խոնարհման մեջ կա ընդամենը չորս սիստեմ, այն է՝

ա) Երեք դեմքով (հնդեվրոպական ձև):

բ) Երկու դեմքով (ինչպես կովկասյան darkwa, lak):

գ) Առանց դեմքի (ինչպես են կովկասյան լեզուներից չեչեն, անդի, ավար, արչի լեզուները):

դ) Ցոթը դեմքով (ինչպես է վրացերենը, ուր բայի խոնարհման մեջ մացնում է «ես քեզ, ես նրան, դու ինձ, դու նրան, նա ինձ, նա քեզ, նա նրան» բարդ դերանունները):

Ժիրկովի նկարագիրը ճիշտ է միայն մի սահմանափակ շրջանի համար, պիտի տեսնենք, թե դեռ որքան բազմապիսի ձևեր կան խոնարհման:

Աֆրիկյան սենգա (բանտու) լեզվում բայի խոնարհումը հետևյալ ձևով է.

1. Նախ դրվում է դասանիշը, որ ենթական է և ցույց է տալիս միաժամանակ բայի դեմքն ու թիվը. (հզ. կամ հոգ.,). դասանիշը անհրաժեշտ կերպով պիտի տրվի միշտ:

2. Նրան հաջորդում է ժամանակ ցույց տվող մասնիկը.

3) Սեռի իմաստը հայտնող մի մասնիկ, որ ենթակա դերանվան հայցական-տրականի ձևն է:

Այս լեզուն ունի ներկայի երեք ձև (մի անորոշ և երկու որոշյալ ներկա), չորս անցյալ կատարյալ, անցյալ անկատարի երկու ձև, պատմողական երեք ձև, և մի ձև ենթական, հրամայական և առթատական:

Կատարյալի չորս ձևերն են. ա) նոր վերջացած մի գործողություն, ընդհանրապես նույն օրը. մասնիկն է a. բ) մի քիչ առաջ վերջացած մի գործողություն. մասնիկն է ča. գ) նոր կատարված և դեռ շարունակվող մի գործողություն. մասնիկն է lu. դ) դերակատարի նշանակությամբ. մասնիկն է si la կամ ta (վերջացած գործողություն են ցույց տալիս):

Ապառնիի ձևերից մեկը հրամայականի նման է. ինչպես՝ «դու չպիտի գնաս, դու արգելված ես գնալու». իսկ մյուսը քաղցր ու մեղմ արտահայտություն ունի:

Իբրև օրինակ գնում են ներկայի մի ձև ya արմատից՝ «գնում եմ»...

հզ. Ա ni-ku-ya (ku անեղականության մասնիկն է).
Բ u-ku-ya
Գ ըստ դասանիշի՝ մի որևէ մասնիկ -ku-ya
հոգ. Ա ti-ku-ya
Բ mu-ku-ya
Գ նույն դասանիշի հոգնակի ձևը kuya

(Madan, 27—34):

Աֆրիկյան ջանգա (բանտու) լեզվի մեջ բայի խոնարհումը կազմվում է հետևյալ ձևով. ա և բ դեմքերի համար (հզ. և հոգ.) բայարմատից առաջ բավական է դնել նույն դեմքերը ցույց տվող դերանուն մասնիկները. օրինակ՝ kapa «ծեծել» բայից՝

ndžī kapa	ծեծում եմ	lwīkapa	ծեծում ենք
kwīkapa	ծեծում ես	mwīkapa	ծեծում եք

Իսկ գ դեմքի համար (հզ. և հոգ.) գրվում են ութ թե դերանունները, այլ 11 տեսակի դասանիշները. ինչպես՝

ա) դաս.	aikapa	ծեծում է	wāīkapa ծեծում են
բ) »	fwīkapa		īkapa
գ) »	līkapa		haīkapa
դ) »	kīkapa		šīkapa
և այլն			և այլն:

Կատարյալը կազմվում է m մասնիկով, որ ma «վերջացնել» բայի կրճատ ձևն է, օրինակ՝

fa	մեռնել,	amfa	մեռավ
henda	գնալ,	wamhenda	նոր գնացին:

Դնելով ve-me մասնիկը, առացվում է ավելի առաջ կատարված գործողություն (դերակատար). օրինակ՝

wavemhenda որոշ ժամանակ առաջ արդեն գնացի:

Դնելով le-me մասնիկը, կառացվի էլ ավելի առաջ կատարված գործողություն.

wande elemefa հայրս վաղուց է մեռել:

Ուրիշ ժամանակի, եղանակի և այլ դիրքերի համար կան նոր բանոր մասնիկներ, որոնք նույնպես նախդիրի ձևով դրվում են բայի վրա. օրինակ՝

ndži	-la-kapa	չեմ ծեծում
»	ve »	շատ եմ ծեծում
»	ve-tši »	պետք էր ծեծել
»	la-ve »	չպետք էր ծեծել
»	lē-ke »	սովորություն չունեմ ծեծելու
»	veī »	ծեծում էի
»	la-veī »	չէի ծեծում
»	ve-vei »	շատ էի ծեծում
»	la-ve-vei »	շատ չէի ծեծում
»	la-m »	չծեծեցի
»	ve-m »	քիչ առաջ ծեծեցի
»	la-ve-m »	քիչ առաջ չծեծեցի
»	ve-vem »	շատ ծեծեցի
»	la-ve-ve-m »	շատ չծեծեցի:

Այս բոլոր ձևերով չափազանց հարստանում է բայը առանց դժվարության. դժվարություն առեղծում է միայն Գ դեմքը, որ կապված է բազմազան դասանիշների հետ:

(Raum, 97—98, 107—108, 116):

Աֆրիկյան բանդա լեզվում բայը չի փոխվում. խոնարհման ժամանակ նախ դրվում է դերանունը, ապա բայը, որին միանում են ժամանակ ու եղանակ ցույց տալու համար զանազան մակբայներ, որոնք մեր հայացքով իբր մասնիկ են ծառայում: Օրինակ՝ wa «կարել» բայից՝

ներկա

mo	wa	ես կարում եմ
bo	wa	դու » ես
se	wa	նա » է
a	wa	մենք » ենք
ye	wa	դուք » եք
enzi	wa	նրանք » են

Ներկ. շար. mo se ke wa te կարում եմ (կոր), (ուր seke «լինել» օժանդակն է, te կազմում է անկատարը).

հարակ. mo wa gay կարել եմ, (ուր gay «անդ, ալնտեղ» մակբայն է).

կոր. mo wa a ka gay կարեցի, (ուր a ka նշանակում է «վերջանալ», gay «անդ»).

ապառ. mo wa že պիտի կարեմ, ուր že նշանակում է «ապատեղից հեռու»), և ալպիսի բազմաթիվ ձևեր:

(Tisserant, 71):

Աֆրիկյան դինկա լեզվի մեջ բայը (որ գոյականի, ածականի և նախադրութեան հետ նույն է) ունի միայն երեք խոնարհման ձև. ներկա, կատարյալ և ապառնի, նախ դրվում է դերանունը, ապա ժամանակ ցույց տվող մասնիկը (ներկա a, կատարյալ ači, ապառնի abi), ապա բայարմատը, որ միշտ անփոփոխ է մնում: Ահա սրանց պատկերը:

ներկա

ghên	a	gam	ես հավատում եմ
yin	»	»	դու » ես
yen	»	»	նա » է
ghôg	»	»	մենք » ենք
uêg	»	»	դուք » եք
kêk	»	»	նրանք » են

կատարյալ

ghên	ači	gam	հավատացի
yin	»	»	հավատացիր
yen	»	»	հավատաց
ghôk	»	»	հավատացինք
uêk	»	»	հավատացիք
kêk	»	»	հավատացին

ապառնի

ghêm	abi	gam	պիտի հավատամ
yin	»	»	» հավատաս և այլն:

(Mitterrutzner, 31):

Աֆրիկյան պապուասյան խմբից կատե լեզուն ճանաչում է բայի խոնարհման մեջ չորս եղանակ, որոնք են սահմանական, ենթական, երևակայական և հորդորական: Սահմանականն ունի հինգ ժամանակ՝ մի ներկա, երկու անցյալ (մոտիկ և հեռու), և երկու ապառնի (մոտիկ և հեռու): Ենթականն ունի երկու ժամանակ (ներկա և անցյալ), երևակայականը երկու ժամանակ (անցյալ և ապառնի) և հորդորականը երկու ժամանակ (ներկա և ապառնի):

Ահա lo «առնել, բռնել, վերցնել» արմատի խոնարհումը հիշյալ ձևերով (գնում եմ միայն եզակի երեք դեմքերը, երկակին և հոգնակին թողնելով).

	ներկա	անցյալ I	անցյալ II
ա	lo-kopac	lo-pac	lo-po
բ	lo-komec	lo-mec	lo-men
գ	lo-kac	lo-yec	lo-wec

	ապառնի I	ապառնի II
ա	lo-pe-mu	lo-zo-kopac
բ	lo-c-mu	lo-zo-komec
գ	lo-oc-mu	lo-zo-kac

Տևական (duratif)

	ներկա	անցյալ
ա	lo-e-kopac	lo-yu-pac
բ	lo-e-komec	lo-yu-mec
գ	lo-e-kac	lo-yu-yec

Այս չորս ոչ-անկախ ձևերը հեղինակը կոչում է

A. Posttemporäre wechselform *(հետժամանակյա փոխանակող ձևեր). օրինակ՝ թշնամիները գալով, դու փողը փչելով, մենք լսելով՝ եկանք).*

B. Kontemporäre wechselform *(ժամանակակից). օրինակ՝ Գողանալիս՝ և ես տեսնելիս նա փախավ).*

C. Kontinuative wechselformen *(շարունակական). օրինակ՝ Վերքերը երկար ժամանակ դարմանելով՝ լավացան.*

D. Kombinierte wechselform *(հարակից). օրինակ՝ երբ երկար ժամանակ սպասել էի և դեռ սպասում էի, եկան:*

Ահա սրանց խոնարհումը՝ նույն երեք դեմքերով.

	A	B	C	D
ա	la-pe	lo-ha-pe	lo-ku-pe	lo-ku-ha-pe
բ	lo-tec	lo-ha-tec	lo-ku-tec	lo-ku-ha-tec
գ	lo-me	lo-ha-me	lo-ku-me	lo-ku-ha-me

Բայը խոնարհման ժամանակ իր մեջ է առնում նաև դերանուն խնդիրները. բոլոր տեսակի խառնուրդները կան. նախ դրվում է բայարմատը, որ միշտ մնում է անփոփոխ. ապա հայցական կամ տրական դերանունը (այս երկուսն առանձին ձևեր ունեն) և ապա ենթակա ուղղական հոլով դերանունը. օրինակ՝

ɒezic-gu-kopac
պաշտպանեմ-զքեզ-ես (հյց.)
wila-gale-kopac
ձայնեմ-քեզ -ես (տր.):

(Մի օրինակ տեսական եղանակի ներկայից. Մեր գլուղը ծովափին է գտնվում:— Մի օրինակ տեսականի անցյալից. Մեր նախնիք որսորդությամբ էին պարապում):

Երևակայական եղանակ

	անցյալ	ապառնի
ա	lo-za-po	lo-zi-po
բ	lo-nza-ɒ	lo-zic
գ	lo-zac	lo-zac z=dz

(Մի օրինակ երևակայական եղանակի անցյալից. Թշնամինեը մեզ կջարդեին:— Մի օրինակ էլ ապառնիից. Թերևս տունք կալրվի):

Հորդորական եղանակ

	ներկա	ապառնի
Ա.	lo-pe	lo-ze-pac
Բ	lo-c	lo-ze-mec
Գ	lo-oc	lo-ze-yec

(Մի օրինակ հորդորական եղանակի ներկայից. Իսկույն կգա և մի օրինակ ապառնիից. Վաղը պիտի որ գաք):

Սրանցից դուրս խոնարհումն ունի նաև ոչ-անկախ ձևեր, որոնք թվով չորս են և համապատասխանում են մեր դերբայներին: Սրանք մտնում են նախադասության ներսը, ուստի հեղինակը կոչում է satzinnenformen:

Ասացինք, թե բոլոր դերանվանական խառնուրդները լինում են. օրինակ միայն հայցականն առնելով՝ կունենանք.

Նա զիս	*Ես զքեզ*	*Նա զնա*
դու զնա	*դու մեզ երկուսիս*	*Նոքա երկուսը ձեզ երկուսիդ*
մենք նրանց երկուսին	*մենք երկուսս նրանց*	*նրանք մեզ*
դուք մեզ	*մենք ձեզ*	*Ես ձեզ երկուսիդ*
դուք երկուսդ զմեզ երկուսիս		*դու զնոսա*
նրանք երկուսը զմեզ երկուսիս		

Այսպիսի խնդրառություններ կատարվում են միայն անձանց (շնչավորների) համար (հետն առնելով նաև խոշոր կենդանիները). իսկ անշունչ առարկաները դուրս են մնում:

(Pilhofer, 26, 31. 36, 38):

Աֆրիկյան սարա լեզվի խոնարհումը հետևյալ ձևով է.

Նախ դրվում է դերանունը, ապա բայի արմատը, իսկ ժամանակ ցույց տվող մասնիկը երբեմն բայից նախադաս է լինում, երբեմն էլ հետադաս: Օրինակ՝ usa «ուտել» *արմատից.*

ɨma ես, yi դու, ne նա, ze մենք, se դուք, zi նրանք).

aoriste (ներկա. և ապհ.) չար. ներկա

Ա.	musa	mac usa
Բ	yusa	ikak »
Գ	nusa	nak »
Ա.	zusa	zak »
Բ	susa	sak »
Գ	zusa	zak »

կատարյալ			ապառնի		
m	usa	ndega	m	usa	ngena
y	»	»	y	»	»
n	»	»	n	»	»
z	»	»	z	»	»
s	»	»	s	»	»
r	»	»	z	»	»

(Delafosse, 22)

Մալալերեն լեզվում խոնարհման ժամանակ բայը չի փոփոխվում. նախ դնում են դերանունը, ապա բայը. և եթե ժամանակ կա, դնում են երկուսի միջև:

Ներկան լինում է առանց ժամանակ ցույց տվող նշանի. օրինակ՝ makan «ուտել» *բայից.*

sahaya	makan	*ես*	*ուտում*	*եմ*
tuan	»	*դու*	»	*ես*
dīa	»	*նա*	»	*է*
kita	»	*մենք*	»	*ենք*
kamu	»	*դուք*	»	*եք*
dia orang	»	*նրանք*	»	*են*

Ներկան շեշտելու համար կարելի է դնել lagi *այժմ,* sekarang *կամ* sekarangini *հենց այժմ,* d^{y}uga, ada *բառերը. օրինակ՝*

sahaya ada makan
ես այժմ ուտում եմ:

Անցյալը կազմելու համար դնում են sudah *(վերջացրած),* habis *վերջացնել,* lalu *անցյալ,* telah *արդեն բառերը. օրինակ՝*

sahaya sudah makan *կերա*

Եթե բայի մոտ կա արդեն մի բառ, որ ցույց է տալիս անցյալը (ինչպես երեկ և այլն), այս բառերը չեն դրվում:

Հաճախ կատարյալը կազմում են բայի վրա դնելով lah *մասնիկը:*

Ապառնին կազմում են nanti *«սպասել»,* mau *«ուզել»,* hendak *«ցանկանալ»,* akan, d^{y}ema, bakal *բառերը դնելով. օրինակ՝*

nanti sahaya makan
sahaya mau makan
} ես պիտի ուտեմ:

Իսկ եթե բայի հետ լինի ապառնին ցույց տվող մի բառ (վաղը, հետո և այլն), այս բառերը չեն դրվում:

Անցյալ ապառնին կազմվում է ավելացնելով բայի վրա manti sudah *կամ* nanti habis. *օրինակ՝*

nanti sahaya sudah makan
կերած պիտի լինեմ:

Հրամայական կազմելու համար պարզ բայը բավական է, բայց կարելի է նաև նրա վրա ավելացնել lah.

makan lah, *կեր, կերեք:*

(Seidel, 51—52)

Ֆիլիպինյան իրո (ոչ-բանաւոր) լեզվի մեջ խոնարհման ժամանակ նախ դրվում է դերանունը, ապա բայարմատը և ապա ժամանակ ցույց տվող մասնակիները, որոնք հետևյալներն են.

անցյալի համար -lu, *կատարյալ* -go, *գերակատար* -luli, -goli, *ապառնի* ga-. *այսպես՝* nye, enye *«տալ» բայից՝*

ներկ.	ayi	enye	*տալիս ենք*
չար.	»	nenye	» » *(կոր)*
անկ.	»	nye-lu	» *էինք*
չար.	»	nali-enye	» » *(կոր)*
կար.	»	enye-go	*տվեցինք*
հարակ.	»	nye-golu	*տվել ենք*
գերակ.	»	nye-goluli	» *էինք*
ապառ.	»	ge-nye	*պիտի տանք*
անց. ապառ.	»	ganenye	» *տայինք*
առոր.	»	nyé	*եթե տանք*
ապառ. գերկ.	»	aka enye	*տված պիտի լինեի:*

(Spencer, 29)

Աֆրիկյան վապոզորո լեզվով խոնարհումը հետևյալ ձևն ունի.— բոլոր բայերը վերջանում են a. դերանուններն են՝

na ես, gu դու, ga,yu նա
tu մենք, mu դուք, wa նրանք

Խոնարհման ժամանակ նախ դրվում է ենթակա դերանունը, երկրորդ՝ հայցական դերանունը (եթե կա), ապա բայը. ինչպես՝

na	fira	սիրում եմ
gwa	»	» ես
ga	»	» է
twa	»	» ենք
mwa	»	» եք
wa	»	» են
nu gu fira		ես քեզ սիրում եմ
na wa »		ես նրանց » »

Ստորադասական կազմելու համար բայակերջի a-ն դարձնում են e. ինչպես՝

ni-fire սիրեի, կսիրեի
gu-fire
ga-fire

Ժամանակաև կազմելու համար բայից առաջ դնում են ya. ինչպես՝

na-ya-fira	եթե սիրեմ
gu-ya-fira	եթե սիրես
ga-ya-fira	եթե սիրե

Ապառնին երեք տեսակ է. մեկը մոտիկ ապառնի, որ կազմվում է za մասնիկով, մյուս երկուսը հեռավոր ապառնի, որոնք կազմվում են naga կամ ha մասնիկով, բայի a վերջավորությունն էլ դարձնելով i. ասպես՝

մոտիկ ապառնի

za-ga-genda	նա պիտի երթա (իսկույն)
za-twa-genda	մենք » երթանք »
za-mua-genda	դուք » երթաք »
za-wa-genda	նրանք » երթան »

ուշ ապառնի

1	naga-firi	ha-firi
2	» gu-firi	ha-gu-firi
3	» ga-firi	ha-ga- »
1	» tu-	ha-tu- »
2	» mu-	ha-mu- »
3	» wa-	ha-wa- »

Կատարյալ ժամանակ չկա. պատմում են միայն ներկայով. իսկ եթե ուզում են ցույց տալ, որ անցյալ ժամանակ է, ուժեղ են շեշտում. այս պարագային gu և ga դերանուններըը դառնում են ku, ka. հեռավոր անցյալ ցույց տալու համար ներկայի վրա ավելացնում են kaala, որ նշանակում է «վաղուց». օրինակ՝

fiza-kaela	սիրել եմ
gu-fira-kaala	» ես
ga-fira-kaala	» է և այլն։

Ենթադրականը կազմում են ya մասնիկով. ինչպես՝

na-ya-fira-kaala	երբ ես սիրել էի
gu » » »	» դու » էիր
ga » » »	» նա » էր։

(Hendle, 32—40)։

Եթովպական հարաբ լեզուներն էլ բայական վերջավորութիւնները հիշեցնում են համապատասխան դերանունները. ինչպես՝ gadala «սպանել» (արաբ. qatl) բայի կատարյալ ժամանակը.

եզ.	Բ դեմք	ար. gadalḫi, իգ. gadalši
հոգ.	Ա »	gadalna
հոգ.	Բ »	gadalḫu

որոնք կազմված են ahaḫ դու (ար.). aḫaš դու (իգ.), eñāč մենք, aḫaḫač դուք դերանուններից։

(Cerulli, 90):

Սուդանական շիլլուկ լեզվի մեջ բայն ունի երկու ժամանակ. ա) գործողությունը դեռ չվերջացրած (ներկա, անցյալ և ապառնի միևնույն է), բ) գործողությունը վերջացած. օրինակ՝ čam «ուտել» բայից՝

yā čamo ուտելիս (եմ, էի, lկա կլինեմ)
yā čam կերա (վերջացրած)։

Նախ դրվում է դերանունը, ապա բայը, որ առաջին դեպքում ստանում է o վերջավորութիւնը, երկրորդ դեպքում ինում է առանց վերջավորութեան: Այսպես է ամբողջ խոնարհումը:

Ապառնիի համար բայից առաջ դնում են u. ինչպես՝ yā u čamo պիտի ուտեմ:

Այսպես ամբողջ բայը:

(Westermann, 72, 75):

Մելանեզյան լեզուների մեջ բայական ժամանակները կազմելու համար գործածվում են հետևյալ բառերը.

Լիֆու լեզվի մեջ կատարյալի համար դնում են ase «վերջացնել», ապառնիի համար tro «երթալ», հրամայականի համար loi e «լավ է, եթե»:

(Ray, 123—124):

Մելանեզյան կիամերա լեզվի մեջ բայն ստանում է 240 նախամասնիկ՝ կազմելու համար 16 տեսակ թիվ ու դեմքով (եզակի, երկակի, եռակի և հոգնակի), 15 տեսակ եղանակով ներկա, անցյալ և ապառնի ժամանակները: Այս 240 մասնիկների ցուցակը տալիս է Ray (էջ 159):

Մելանեզյան ուռուպուա լեզվում խոնարհման ժամանակ դերանունը միշտ կրկնվում է, առաջինը իբր ենթակա և երկրորդը իբր բայի դեմքը որոշող մասնիկ. օրինակ՝

na nabo *ես գնում եմ*
ni nite *դու նստում ես*
ii imeme *նա խմում է*
geto geto vevęne *մենք ուտում ենք*
metu metu dodovinio *մենք մշակում ենք (պարտեզ)*
moto motu dalu *դուք վերադառնում եք:*

Մինչև անգամ, երբ ապառնի են կազմում, որովհետև ապառնին շինվում է «գնալ, երթալ» բայով, դերանունը կրկնվում է երեք անգամ. այսպես՝

getu getu-be getuvevene
մենք մենք — գնալ մենք-ուտել
(=գնում ենք ուտել=պիտի ուտենք):

(Ray, 464—465):

Եթովպական սահո լեզվով բայն ունի երկու ժամանակ՝ անկատար և կատարյալ: Անկատար ասելով հասկանում են անկատար, ներկա և ապառնի, իսկ կատարյալ ասելով հասկանում են կատարյալ և դերակատար: Սրանց հետ միացնելով օժանդակ բայը՝ ստացվում է ես երկու ձև. անկատարից ստացվում է պարզ և տեսական, կատարյալից էլ ստացվում է պարզ և տեսական: Խոնարհումը շատ պարզ է. օրինակ՝ din «քննել» բայից՝

	ներկա	կատ.	ապ.
Ա, Գ	din-a	din-ē	din-o
Բ	din-ta	din-tē	din-to

Գ դեմքը միշտ նույն է Ա-ի հետ:

(Reinisch, 425):

Աֆրիկյան փոլլ կամ ֆուլլահ լեզվի մեջ բայը խոնարհման ժամանակ եզակիում ուրիշ նախաձայն ունի, հոգնակիում ուրիշ, ինչպես՝

mi do winda *ես անել գրել = գրում եմ*
a » » *= դու գրում ես*
o » » *= նա գրում է*
en » mbinda *մենք գրում ենք*
on » » *դուք գրում եք*
be » » *նրանք գրում են:*

Ըստ կանոնի dy, d, f, h, dy, r, s, w, y նախաձայնները հոգնակիում դառնում են ny, nd, p, k, ny, nd, č, mb, ng. օրինակ՝

mi dyangi *ես թողնում եմ*
en nyangi *մենք թողնում ենք*
mi wod: *ունեմ*
a » *ունես*
o » *ունի*
en ngodi *մենք ունենք*
on » *դուք ունեք*
be » *նրանք ունեն:*

(Steane, 7—9):

Մորվիներեն լեզվում գոյականը նախադասության մեջ կարող է դառնալ սոսրոդյալ և այդ դեպքում կատանա սովորական

բայի նման դեմք, թիվ, ժամանակ և եղանակ նշանակող մասնիկներ։ Այսպես՝ ներկայի համար առանում է.

եզ.	Ա. an, yan	հոգ.	Ա. tanok, tyanok
	Բ at, yat		Բ tado, tyado
	Գ —		Գ —

(Սրանք նաև բայական խոնարհման վերջավորութիւններն են)։
Օրինակ՝ ava «կին» բառից՝
avayan ես կին եմ

avayat	դու կին ես
avatanok	մենք կին ենք
avatado	դուք կին եք։

Անցեալի համար ներմուծվում է l[y] մասնիկը, որ ulin[y] «էի» կրճատումն է. օրինակ՝

avalyat	դու կին էիր և այլն։

Գոյականների նման ածականներն էլ, թվականներն էլ, դերանունները և մակբայները կարող են բայ դառնալ և խոնարհվել. ինչպես՝ «ես այստեղ եմ» և այլն։

Բայերն ունեն չորս եղանակ. սահմանական, ըղձական, թեական և սաորադասական։ Կա նաև առարկայական խոնարհում, երբ դերանուն խնդիրը՝ հայցական հոլովով ներմուծվում է բայի մեջ և իբրև մի բառ է գործածվում։ Կա դարձյալ հարկադրական բայ, որ միանալով նաև ըղձականի հետ կարող է կազմել հետևյալ բարդ ձևերը. ինչպես՝ «դու ուզում ես սպանել նրան, որ նա կերակրի մեզ». բոլոր տեսակի դերանուններով. մեզ, ձեզ, քեզ և այլն։

(Евсевьев, 124, 211)։

Հնդկական Սինդհի, Քաշմիրի և Լահնդա լեզուները գիտեն գործածել դերանունների կրճատ ձևերը իբրև մասնիկ։ Քաշմիրի լեզուն կցում է դրանք միայն բայերին, Լահնդա լեզուն՝ բայերին և գոյականներին, իսկ Սինդհի լեզուն՝ ո՛չ միայն բայերին և գոյականներին, այլև նախադասութիւններին։ Սրանք զանազան ձևեր են առանում. այսպես Ա. դեմքի եզ. se, me, հոգ. sī, sū, ū և այլն. օրինակ՝ nēṇume «աչքս», māryume «ես կարկի», sandume «իմ մասին, իմ» (սրանցից առաջինը գոյականի հետ՝ իբր սաացական հոդ, երկրորդը բայի հետ իբր ենթակա, երրորդը նախադրութեան հետ։

Այլ օրինակներ՝ piu հալը, piume հալես, sāṇuse ընդ նմա, նրա հետ, ḍḍīme առ՛ւր ինձ։

Բայը կարող է առանալ թե հայցական հոլովով մասնիկներ և թե սրական հոլովով, կամ միաժամանակ այդ երկուսն էլ. օրինակ՝

māṛ զարնել սրմատից՝
māṛiāī նա (նե) զարկեց նրան (կամ նրանց)
māṛiāī-me նա (նե) զարկեց նրան (կամ նրանց) ինձ համար։

Այս դերանունների խառնուրդները այնքան շատ են և այնքան բարդ, որ Գրիերսոնը (հտ. 8, մաս 1, էջ 42, 78—86 և 87—91) ամբողջ երեսներ է նվիրել բայի բովանդակ խոնարհման ժամանակ այդ մասնիկների հավելման և ձևափոխութեան օրենքները ցույց տալու համար։

Շատ զարմանալի և անսովոր է Մալանեզյան լեզվի բայը, որ ունի երկու եղանակ, որոնք կոչվում են realis (իրական) և imaginativus. (այս վերջինը թեև թարգմանվում է «երեակայական», բայց ավելի հարմար եմ համարում կոչել անիրական)։ Իրականը պարունակում է մեր ներկան, անկատարը և կատարյալը. իսկ անիրականը պարունակում է մեր ապառնին, հրամայականը և սաորադասականը։

Խոնարհման ժամանակ դրվում է նախ դերանունը մասնիկի ձևով, որ և անպակաս է բայից, ապա բայարմատը։ Բայց խոնարհման մեջ թե՛ դերանուն մասնիկները և թե՛ բայարմատը այնպիսի ուժեղ ձայնական փոփոխութիւններ են կրում, որ քերականագետները անհրաժեշտ են համարել բաժանել խոնարհումը հինգ լծորդութիւնից։ Մենք առնում ենք միայն մի օրինակ Ա. լծորդութիւնից, որովհետև ամենից պարզն է. մյուս լծորդութիւնները միայն ձայնական փոփոխութիւններով են տարբերվում, քերականական կազմութիւնը բոլորովին նույն է։ Օրինակ՝ sôm «խոսել»։

Ասացինք, թե ամեն լծորդութիւն ունի անթաժան դերանուն մասնիկ ենթակա, որ ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի և երեք դեմք, որոնցից հոգնակի Ա. դեմքը ունի երկու ձև՝ incl. (ես և դուք) և excl. (ես և նրանք)։ Եզանակները տարբերվում են հենց դերանուն մասնիկներով, բայց միայն եզակիում. հոգնակիները միշտ միատեսակ են. այսպես՝

	իրական	անիրական
եզ.	Ա. ka-	ya-

Բ kô-	ô-
Գ kê	ê-

հոգնակի

Ա. (incl.)	ta
Ա. (excl.)	a-
Բ	a-
Գ	sê-

	իրական	անիրական
եզ.	Ա. kasôm	yasôm
	Բ kôsôm	ôsôm
	Գ kêsôm	êsôm

հոգնակի

Ա. (incl.)	tasôm
Ա. (excl.)	asôm
Բ	»
Գ	sêsôm

Բազմաթյան դադափարը տալու համար բայը կրկնում են, օրինակ՝

kêsôm *Նա խոսում է*
kêsôm-kêsôm *Նա շարունակ խոսում է*

իսկ՝

nuc kêpoac *կղզին գնվում է ծովում*
nuc kêpoac-kêpoac *կղզինները գնվում են ծովում:*

Դնելով -gac *«արգելն» մասնիկը բայի իրական ձևի ծայրին, առացվում է կատարյալ ժամանակը. օրինակ՝*

kašomgac *խոսեցի, խոսել եմ*
kêsômgac *խոսեց, խոսել է:*

Դնելով -maə *մասնիկը անիրական ձևի ծայրին, առացվում է հրամայական կամ խնդրական. օրինակ՝*

ôsômmaə *խնդրեմ ասես:*

(Dempwolff, 12, 18):

Ընթերցողը անշուշտ լավ հասկացավ իրականի և անիրականի էությունը. թեկուզ առաջին դիմքով, երբ խոսում է մեկը և ասում է «խոսում եմ, խոսեցի, խոսում էի», այս բոլորը հատատատ իրողություններ են (ներկա, անկատար, կատարյալ), բայց երբ ասում է «պիտի խոսեմ, թող խոսեմ, եթե խոսեմ» (ապառնի, հրամայական, ստորադասական), սրանք իրողություններ չեն, որովհետև կարող է պատահել, որ չխոսի. երբ խոսի, այն ժամանակ միայն կդառնա իրական:

Իրականի տարբերությունը անիրականից հիմնված է միայն k ձայնի վրա, որի ծագումը հայտնի չէ:

Տիբեթերենում բայը խոնարհման ժամանակ չի փոփոխվում. իր արմատ ծառայում է ներկա դերբայը, որ միշտ վերջանում է pa *կամ* va *մասնիկով.*
օրինակ՝

čed pa *«արարյալ կամ արարք»*
hgro va *«քայլելով կամ քայլվածք»:*

Գործող անձ (ներկա դերբայ) կազմելու համար նույնի վրա ավելացնում են pa *կամ* mo *մասնիկները. ինչպես՝*

čed pa pa *անող (ար.)*
čed pa mo *անող (իգ.)*

Գործող անձ ցույց տալու համար կան նաև ուրիշ ձևեր, որոնք են՝

hgro byeb
» mkhañ
» byed mkan
} *«քայլող»*

որոնց վրա էլեն ուզենանք, կարող ենք ավելացնել արականի համար pa *և իգականի համար* mo *մասնիկները: Սրանով բայերի մեջ առացվում է արական և իգական սեռ, որ կա նաև դերանուններեի մեջ: Բայց լեզուն ընդհանրապես սեռ չունի:*

Անորոշ դերբայը կազմվում է բայարմատի վրա դնելով par *մասնիկը. ինչպես՝*

čed par *«անել»:*

Ամմանական ներկան կազմում են պարզ արմատի վրա դնելով դերանունը. ինչպես՝

nge čed *անում եմ,* khyod čed *անում է և կամ միացնելով «անել» բայի անորոշի հետ՝*

kho hgro var čed
Նա քայլել -ել անել
} *Նա քայլում է:*

Կամ նաև առանց անորոշի -ել մասնիկի՝

nga hgro čed } քայլում եմ:
ես քայլ անել }

Կամ բայարմատից հետո դնելով bžin pa կամ օժանդակ բայերից մեկը (hdug, snang), սրանց հետևից էլ մի մասնիկ (kyin, gin, gyin, hin, yin)՝ արմատի վերջին ձայնավորի համաձայն. օրինակ՝

čed bžin pa } անող է=անում է
čed kyin hdug pa }

hgra bžin pa }
hgra hin } գնացող է=գնում է:
hgra yin snang }

Անկատարը և վերակատարը կազմվում են hdug pa «էի» օժանդակով.

hong hdug pa «գալիս էր, բառացի՝ եկող էր»
hongs hdug pa «եկած էր»:

Ապառնին կազմում են անորոշի վրա դնելով hgyur «պիտի լինեմ» օժանդակը, որ կարդում են ǰur. օրինակ՝

čed par ǰur } պիտի անի:
čed ǰur }

Ապառնի դերբայը կազմում են անորոշի վրա դնելով bya կամ bya va (ča va), որ «անել» բայի ապառնի դերբայն է. օրինակ՝

hgro var bya va } երթալոց:
hgro bya }

Վերջապես թեական կամ պարմանական ձևը կազմում են բայարմատի վրա դնելով na մասնիկը (այնպես նման հայերեն նե մասնիկին). օրինակ՝

čed na եթե անեիք, անեիք նե:

(Foucaux, 53—52):

Աֆրիկյան դագոմբա (բանաու) լեզվով բայի խոնարհումը լինում է հետևյալ ձևով. Ներկան կազմելու համար բայարմատի վրա դնում են դերանուն մասնիկները. օրինակ՝ dóne «քնել» արմատից՝

ա ndóne քնում եմ tedóne քնում ենք
բ adóne » ես yedóne » եք
գ odóne » է bedóne » են
դ dedóne » է (it) dedóne » են (անորոշ):

Անցյալը լոթ տեսակ է.

1. Երեկվա անկատար. կազմվում է sa նախդիրով, որ sohalá «երեկ» բառից է կրճատված. օրինակ՝ tšaň «ճամբորդել» արմատից՝

sohalá nsatšaň երեկ գնում էի
» asatšaň » » էիր
» osatšaň » » էր
» tesátšaň » » էինք
» yesátšaň » » էիք
» besátšaň » » էին:

2. Նախորդ օրվա անկատար. կազմվում է da մասնիկով, որ կրճատված է dale «նախորդ օրը» բառից. ինչպես՝

dale ndatšaň նախորդ օրը գնում էի
» adatšaň » » » էիր և այլն:

3. Ավելի հին անցյալ անկատար. կազմվում է ndā մասնիկով, որ կրճատված է dendále «առաջ, damals» բառից. օրինակ՝

dendále nndātšaň «առաջ գնում էի» և այլն:

4. Կատարյալ. որ կազմվում է արմատի վերջում դնելով ya մասնիկը. ինչպես՝

ntšaňyá գնացի, atšanyá գնացիր և այլն:

5. Երեկվա կատարյալ. կազմվում է արմատի սկիզբը դնելով sa և վերջում yá. ինչպես՝

nsabaya երեկ գնացի (ձիով)
asabayá » գնացիր » և այլն:

6. Նախորդ օրվա կատարյալ. կազմվում է բայի սկզբում դնելով dā նախդիրը և վերջում ya մասնիկը. օրինակ՝ sabe «վախել» արմատից՝

ndasabeyá «նախորդ օրը վախեցի»:

7. Ապրելի վաղ ժամանակի կատարյալ, որ կազմվում է nda *նախդիրով և* yá *մասնիկով. ինչպես՝* nndasabeyá *«առաջ կռվել եմ»:*

Ապառնին չորս տեսակ է.

1. ni *նախդիրով կազմված (թե մոտավոր և թե հեռավոր ապագայի համար). օրինակ՝* kúle *«վերադառնալ» արմատից՝*

nnikule	*պիտի վերադառնամ*
anikule	*» վերադառնաս*
onikule	*» վերադառնա*
tenikule	*» վերադառնանք*
yenikule	*» վերադառնաք*
benikule	*» վերադառնան:*

2. Հաջորդ օրվա (վաղը) ապառնի. կազմվում է նախորդի վրա ավելացնելով sa *նախամասնիկը. օրինակ՝* dpi *«մեռնել» արմատից՝*

nsánidpi	*վաղը պիտի մեռնեմ*
asánidpi	*» » մեռնես*
osánidpi	*» » մեռնի*
tesánidpi	*» » մեռնենք*
yesánidpi	*» » մեռնեք*
basánidpi	*» » մեռնեն:*

3. Մյուս օրվա (վաղագնդ) ապառնի. կազմվում է առաջին ձևի վրա ավելացնելով da *նախդիրը. ինչպես՝*

tedántšan *մենք վաղը չէ մյուս օրը պիտի գնանք և այլն:*

4. Հեռավոր ապագայի ապառնի. կազմվում է առաջին ձևի վրա գնելով nda *մասնիկը. ինչպես՝*

tendántšaǹ *պիտի գնանք (շատ ուշ):*

(Fich, 25—29):

Մարոկկոյի բերբերական լեզվի մեջ բայն ունի երեք կարևոր ժամանակ, որոնք են՝

կատարյալ (անցյալ, որ երբեմն էլ ներկա է),
անկատար (որ նաև ապառնի է),
աորիստ (որ երբեմն անցյալ է և երբեմն ներկա):

Կատարյալի մասնիկներն են՝

Եզ.	*Ա.* —ęẓ	*Հոգ.*	*Ա.* n—
	Բ ð—eð		*Բ* ð — em, m
	Գ i—*(ար.)*		*Գ* — en, n
	Գ ð—*(իգ.)*		*Գ* — en, n

Անկատարը նույն ապառնին է, որ իհարկե կատարված չէ դեռ. կազմվում է կատարյալի սկիզբը գնելով ad- *մասնիկը:*

Աորիստը նույն է անկատարի հետ, միայն խոնարհվում է առանց մասնիկի, հաճախ նույնանում է կատարյալի հետ, բայց երբեմն էլ տարբերվում է միմիայն նախավանկի ձայներով:

Ահա sers *«գնել» բայի խոնարհման ձևը.*

կատարյալ	*անկատար*	*աորիստ*
Ա. seseẓ *դրի*	aðseseẓ	*Ա.* seseẓ
Բ ðsesed	attsesed	*Բ* ðsesed
Գ isers	aðisers	*Գ* isers
Գ ðsers	attsers	
nsers	ansers	
ðsersem	attsersem	
sersen	aðsersen	

Բղձական և ստորադասական եղանակ չկա. նրանց փոխարեն դրվում է ապառնի:

Տեսանք, որ բայը ներկա ժամանակ չունի. այս թերին լրացնելու համար բերբերները հնարել են սովորական (habituel) *կամ տևական* (duratif) *կոչված ձևը, որի կազմությունը շատ բազմազան է: Մի կողմից օգտագործվում են զանազան մասնիկներ, մյուս կողմից՝ բայի ներքին ձայնավորի փոփոխությունը: Սրանք հայտնի է, որ կանոնի տակ չեն ընկնում և յուրաքանչյուր բայ առանձին պետք է սովորել: Լեզուն գտնվում է դեռ շատ անվճռական դրության մեջ. իսկ չարչարվում է հեղինակը՝ նվիրելով սրանց համար բազմաթիվ երեսներ և կազմելով տեսակ-տեսակ ցուցակներ: Տանք մի քանի օրինակ.*

seknef	*խորովել տև.*	seknal
siul	*խոսիլ*	sawal
suẓel	*հագնեցնել*	suẓil.

Սրանք են համարվում ներկայի իսկական ձևերը:

Բայը իր մեջ է առնում դերանուն խնդիրները երկու տեսակ

հոլովով. հայկական սեռի խնդիր և տրական բնության խնդիր:

Հայկականները հետևյալ ձևով են (iuϑ—գարնել, ծեծել բայով).

iuϑ—ii	նա հարվածեց ինձ		
» -iķ	» »	դքեզ	(ար.)
» -iķem	» »	»	(իգ.)
» -iϑ	» »	զնա	(ար.)
» -it	» »		(իգ.)
» -aẖ	» »	զմեզ	(երկսեռ):
» -iķun	» »	զձեզ	
» -iϑen	» »	զնոսա	

Տրականները հետևյալ ձևով են (izenz ծախել, վաճառել բայից).

izenz-ii	նա վաճառեց ինձ	այն	
-aẖ	» »	քեզ	(ար.)
-am	» »	քեզ	(իգ.)
-as	» »	նմա	(երկսեռ)
-aẖ	» »	մեզ	»
-aun	» »	ձեզ	»
-asen	» »	նոցա	»

Կարող են երկու հոլովները միասին ներմուծվել բայի մեջ տրական և հայկական). ինչպես՝

izenz-as-ϑ վաճառեց նմա զայն (il le lui a vendu).

innaẖ-ϑ ասաց մեզ զայն (il nous l'a dit).

Երբ հոլովները երկուսը միասին են, նախ դրվում է տրականը, ապա հայկականը:

Եթե նախադասության մեջ բացասական կա, դերանուն խնդիրները մասնիկից առաջ են անցնում. ինչպես.

ur-ii-iwiϑ նա ինձ չհարվածեց (il ne m'a pas frappé).

(Laoust, 49—84, 140):

Բայի մեջ մասնիկներ ներմուծելու դրությունը լայն չափերով կիրառում է ամերիկյան քիշև լեզուն: Այս բոլորը լինում է երեք ձևով.

ա) Գոյականը չի հոլովվում այս լեզվի մեջ. և այն բոլոր պարագաները, որ պիտի ներկայանային հոլովման ձևով, մասնիկների նման մտնում են բայի մեջ: Այս մասին արդեն խոսել ենք III հատորում (հոլովման արտասովոր ձևեր):

բ) Ենթակայական ձև, բայը դերանուն ենթակաները ներփակում է իր մեջ.

գ) Առարկայական ձև. բայը իր մեջ է ներփակում դերանունների հայկական և տրական ձևերը:— Նախ դրվում է բայի ժամանակ ցույց տվող մասնիկը (k ներկայի համար, š անցյալ կատարյալի համար, č հրամայականի համար), հետո դերանունները (առաջին հերթին տրականն ու հայկականը, ապա ենթակա դերանունը), իսկ ամենավերջը բայարմատը, որ այլևս կարիք չունի փոփոխվելու: Օրինակ.

š- in -a -ya		
կար. ինձ դու տալ	=	դու տվիր ինձ
k- in- u- toro		
ներկ. դիս նա ազատել	=	նա ազատում է ինձ:

(Lewy, 936, 937, 943)

Բիրմաներենի մեջ բայը չի փոխվում. միայն հոգնակիի համար բայարմատին կցվում է kya կամ gun և կամ սրանց միացմամբ kyagun մասնիկը. օրինակ՝ t'wa «գնալ» բայից՝

ներկ.	t'wa t'ī	գնում (ես, դու, նա, նէ)
	t'wa kya t'ī	գնում (մենք, դուք, նրանք)
անկ.	t'wa bhū t'ī	
	t'wa kya bhū t'ī	
կար.	t'wa byī	
	t'wa kya byī	
գերակ.	t'wa hneng byī	
	t'wa kya hneng byī	
ապառ.	t'wa mī	
	t'wa kya mī.	

Սրանց մեջ t'ī ներկայի նշանն է, byī անցյալի, mī ապառնիի և այլն, բայց կան նաև շատ ուրիշ մասնիկներ, որոնք ուրիշ երանգներ են տալիս բային. օրինակ՝

tshai	(ցալ) ճիշտ այժմ (ներկա)
bhū-t'ī	անորոշ մի ժամանակ անցյալում
k'ai	ճիշտ այժմ (գնացի կար.)
lattan	մարգարեական ապառնի (այսպես պիտի լինի)
koung	«լավ» (գործածվում է իբրև աստղաբանական. ինչպես՝ լավ կլինի որ գնամ, լավ կլիներ որ գնայի և այլն:

(Latter, 131—140):

Մունդա խմբից կոհլ լեզվի մեջ բայն ունի չորս եղանակ. սահմանական, ստորադասական, թեական և հրամայական, ունի երեք թիվ (եզ., երկ. և հոգ.). սեռի կանոնավորություն չկա. ժամանակներն են՝ ներկա որոշյալ և անորոշ, անկատար, կատարյալ որոշյալ և անորոշ, ապառնի և գերակատար. դերանուն ենթական կարող է դրվել բայի սկիզբը, վերջը կամ երկու կողմն էլ. ինչպես՝

aing sentana *ես գնում եմ*
sentanaing *գնում եմ ես*
aing sentanaing *ես գնում եմ ես:*

Սահմանական ներկայի որոշյալ ձևը կազմելու համար բայարմատի վրա գնում են tan, *որ էական բայի ներկա դերբայն է, ապա ավելացնում են անձնական դերանունները. օրինակ* hiju *«գալ» բայից՝*

եզ.	*Ա.*	aing hiju-tan-aing	*գալիս եմ*
	Բ	am hiju-tan-am	
	Գ	ini hiju-tan-ae	*(շնչավոր)*
	Գ	ena hiju-tan-a	*(անշունչ)*
երկ.	*Ա.*	aling hiju-tan-aling	(excl.)
	Ա.	alang hiju-tan-alang	(incl.)
	Բ	aben hiju-tan-aben	
	Գ	aking hiju-tan-aking	
հոգ.	*Ա.*	ale hiju-tan-ale	*գալիս ենք*
	Ա.	abu hiju-tan-abu	
	Բ	ape hiju-tan-ape	
	Գ	ako hiju-tan-ako.	

Անորոշ ներկան կազմելու համար բայարմատի վրա ավելացնում են jad *կամ* nad *մասնիկը:*

Ստորադասական կազմելու համար արմատին կպցնում են k *մասնիկը, որից հետո դրվում են դերանունները:*

Անկատարը կազմելու համար բայի ներկա դերբայի վրա գնում են էական բայի անկատարը, որ ինքը միայն խոնարհվում է. իբր թե «գնացող էի, գնացող էիր» և այլն:

Այսպես են նաև գերակատարը, ստորադասականի անկատարը և այլն:

Ամենապարզն է ապառնին, որ կազմվում է բայարմատի վրա դնելով դերանունները. ինչպես՝

aing hiju-aing *ես պիտի գամ*
am hiju-am *դու պիտի գաս*

կամ պարզապես hiju-aing, hiju-am *և այլն:*

Կատարյալը կազմելու համար արմատի վրա ավելացնում են akan, *իսկ թեականի համար՝* re:

Բայն իր մեջ կարող է առնել դերանուն խնդիրները, որոնք դրվում են արմատի և վերջավորության միջև. օրինակ՝

aing abung-me-tan-aing
ես լվանում եմ քեզ ես
aing abung-ben-tan-aing
ես լվանում եմ ձեզ երկուսիդ
aing abung-king-tan-aing
ես լվանում եմ նրանց երկուսին
am abung-ing-tan-am
դու լվանում ես ինձ
am abung-i-tan-am
դու լվանում ես նրան
am abung-king-tan-am
դու լվանում ես նրանց երկուսին
am abung-ko-tan-am
դու լվանում ես նրանց
am abung-ling-tan-am
դու լվանում ես մեզ երկուսիս
am abung-le-tan-am
դու լվանում ես մեզ

(Mottrott, 21—37):

Ուրիշ տեսակ խոնարհում ունի բայը Մաքքիզյան կղզիների լեզվով. այստեղ բայն ունի միայն մի յոթդեմություն. բայը մնում է անփոփոխ և խոնարհվում է միայն օժանդակ բայը իր բոլոր տեսակի դերբայներով:

(Dordillon, 36):

Շատ ճոխ փոխանցական խոնարհում ունի ամերիկյան պարսյուս լեզուն, որ գիտե դերանունների անկախ ձևերը, ենթակայական և առարկայական ձևերը, ինչպես և այս երկուսի վերջածանգ ձևերը: Բայը կարող է իր մեջ առնել թե՛ անկախ և թե՛ վերջածանց դերանունները: Սակիր ուսումնասիրել է այս լե-

զուն, տալիս է (էջ 193) ընդարձակ մի ցանկ այդպիսի խառնուրդնե-րի (ես քեզ, նա ինձ և այլն)։ Ցանկը 110 ձև ունի, առանց հաշ-վելու կրկնակ ձևով խառնուրդները, որ ինքն էլ չի հիշում։

(Sapir, 189)։

Սուդանական բուգումա լեզուն ունի թե պարզ խոնարհում, և թե փոխանցական կրկնակ խոնարհում։ Ժամանակը երկու է. առ-բիտա և կատարյալ. առբիտաը թե ներկա է, թե անցյալ, և թե ապառնի. կազմվում է դերանունները սաստիկ կրճատելով. օրինակ՝ hi *«խմել» բայի ներկան է։*

եզ.	*Ա*	o-hi	*հոգ.* me-hi-no
	Բ	ge-hi	ga-hi-no
	Գ	a-hi	ye-hi.

Իսկ կատարյալի մեջ՝ նախամասնիկ դերանունների ձայնա-վորը դարձնում են a, *և բայի ձայնավորն էլ վերածում են իր ձայնդարձին։ Այսպես* i *վերածվելով* ei, *առանում ենք նույն* hi *«խմել» արմատից՝*

կար.	*Ա*	wa-hei	ma-he-no
	Բ	ga-hei	ga-he-no
	Գ	na-hei	ya-hei.

Առարկայական խոնարհման ժամանակ հայցական կամ տրա-կան խնդիրներն են՝

Ա	-ni	*հոգ.*	-nai
Բ	-gu *(տր.)*		-goi
Բ	-gem *(հգ.)*		—
Գ	-ne		-dan, den.

Կարելի է գնել երկու խնդիր միասին. ինչպես՝

ū-kehe-ne-den
Ես սովորեցնում եմ այն նրանց։

(Lukas. 35, 36, 53)։

Գպաթերեն լեզվում բայի խոնարհման ժամանակ կա երկու դեմք. ա) անորոշ դերբայ (անեղևուլթ), բ) որակական (qualitatif), *որ և կոչվում է կեղծ— դերբայական։ Այս վերջինը առաջանում է*

հին եգիպտացերենի կեղծ դերբայներից, վերջավորվում է t *կամ չու-նի վերջավորություն, այժմ քիչ է գործածվում և եղածներն էլ ընդհանրապես կրավորական կամ անանցողական նշանակություն ունեն։*

Անեղևուլթը գոյական է և իր ձևով կարող է լինել արական կամ իգական։ Արականը չունի վերջավորություն, իսկ իգականը վերջանում է e. *Անեղևուլթը բայական սեռ չունի. նա միաժա-մանակ թե ներգործական է և թե կրավորական. օրինակ՝* uyōn *«բա-նալ, բացվել»,* miše *«ծեծել, ծեծվել»։*

Իրեն գոյական՝ անեղևուլթը նախապես չէր վերցնում սեռի խնդիր (հայցական), այլ միայն սեռական. օրինակ՝

hetəb-prome *«սպանության մարդու»* (rome *մարդ), որ նշա-նակում էր թե «սպանություն, որ գործեց մարդը» և թե «սպանու-թյուն, որ եղավ մարդուն»։ Այս երկուսից պահվեց միայն վերջինը և այսօր գպաթերենն ասում է.*

afhetəb-prome *«սպանեց մարդ»։*

Այսպիսով նախապես սեռականով գոյական ձևը դարձավ հայ-ցականով բայական ձև։ Գործածվում է իբր բարդ բառ։ Այնուհե-տև անեղևուլթը ստացավ անձնական դերանուն-մասնիկներ. ինչպես՝

hotbəf	*իր սպանության. որից՝*
afhotbəf	*նա սպանեց նրան (դնա)։*

Այսպիսով անձնական-դերանուն մասնիկները դարձան բայա-կան դերանուն։

Անեղևուլթները իրենց հնչական կազմությամբ վերածվում են 18 խմբի, որոնք կոչվում են բայական կարգեր (verbal klassen) *և որոնց վրա քննիչը* (Steindorff) *խոսում է երկար (էջ 97—119)։ Այս կարգերը դանազանվում են երկուսից հինգ արմատական բա-ղաձայնների և նրանց միջև գտնված ձայնավորների համաձայն։ Միևնույն ժամանակ այս բոլորը անձնական դերանունների կցման ժամանակ կրում են դանազան ներքին ձայնական փոփոխություն-ները (ձայնավորների հավելում, վերչում կամ ջնջում, և կամ ձայ-նափոխություն), որով գպաթերեն բայի խոնարհումը վերածվում է իսկական քաոսի։*

Վերևում ասացինք, թե անեղևուլթը ըստ ձևի կարող է լինել թե արական և թե իգական. բայց ինչ էլ որ լինի, նա համարվում

է արական: Նա թէ բալ է և թէ գոլական, եթէ առացավ հոգ (որոշյալ թէև անորոշ), նա գոլական է, իսկ եթէ առացավ դերանուն, նա բալ է:

Ներկայի նշաններն են.

եզ. Ա.	ti		հոգ.	tən
Բ	k (ար.)			tetən
Բ	te (իգ.)			—
Գ	f (ար.)			se
Գ	s (իգ.)			—

օրինակ՝ sōtəm «լսել», hōtəb «սպասել, սպասելիքն» tisōtem լսում եմ, fhōtəb սպասում է:

Ապառնին կազմվում է վերի դերանունների և բալի միջև դնելով na մասնիկը. ինչպես՝

tinasōtəm պիտի լսեմ
senatōtəb պիտի սպասեն:

Այս ոճով մյուս ժամանակների համար էլ կան զանազան մասնիկներ, որոնք դրվում են դերանվան և բալի միջև:

Կատարյալը կազմվում է a «անել» օժանդակ բայով. այսպես՝

եզ. Ա.	ai		հոգ.	an
Բ	ak (ար.)			atetən
Բ	are (իգ.)			—
Գ	af (ար.)			au
Գ	as (իգ.)			—

Կա և մի երկրորդ կատարյալ, որ կազմվում է սրա սկիզբը դնելով ənt «որ» հարաբերականը. ինչպես՝

եզ. Ա. əntaï, Բ əntak և այլն ցվերջ:

Կա և մի ներկա, որ կոչվում է praesens consuetudinis (սովորութեան ներկա), որ կազմվում է նախորդի վրա դնելով s. օրինակ՝

s-af-sōtəm „er pflegt zu hören".

(Steindorff, 91—97, 157, 133—134, 142—144):

Բանաու լեզվախմբից թոնգա-շոնգա լեզուն շատ պարզ խոնարհում ունի. նախ դրվում է դերանունը, ապա բայարմատը (ներկայի մեջ առանց որևէ փոփոխութեան). օրինակ՝

nḍi vona	տեսնում եմ	hi wona	տեսնում ենք
u »	» ես	mi wona	» եք
a »	» է	va wona	» են

Մյուս ժամանակների մեջ ավելանում են հարակից բառեր՝ հետևյալ ձևով (a նշանակում է «էի»).

կար.	nḍi vonile	ես տեսա, տեսել եմ.
ապ.	nḍi ta vona	պիտի տեսնեմ
անց. շար.	a nḍi vona	տեսնելիս էի (կտեսնեի կար)
կատար.	a nḍi vonile	տեսած էի
թեական ներկ.	a nḍi ta/vona	տեսնեմ
ապ. կար.	nḍita va nḍi vonde	տեսած պիտի լինեմ
թեակ. կար.	a nḍi ta va ṇdi vonile	տեսած կուզեի լինել:

Այսպես, թեև պարզ կազմութիւն ունի խոնարհումը, բայց մյուս կողմից շատ բարդ և խճողված է նա օժանդակ բայերի հարակցութեամբ և զանազան ածանցական բայաձևերով, որոնք միացած օժանդակ բայերի հետ գործածվում են մատածողութեան անթիվ նուրբ երանգները արտահայտելու համար: Մեր լեզուները այդպիսի երանգներ արտահայտելու համար երկար դարձվածքներ են գործածում, իսկ այս լեզուն դրանց համար կարճ մասնիկներ ունի: «Թոնգա բալը այս տեսակետից անշուշտ ավելի հարուստ է քան որևէ եվրոպական լեզու» (Junod, 53): Այն բայական ժամանակները, որ տեսանք վերևում, ունեն իրենց հարաբերական (relative) խոնարհման ձևերը («եթէ լիներ որ...»)... որոնք չեմ դնում այստեղ: Բացի սրանից, նրանք բոլորն ունեն նաև՝

ա) Կարողական ձև, կազմվում է օժանդակ բայով:
բ) Բացատրական ձև (կազմվում է lo օժանդակով):
գ) Սաստկական (emphatic) ձև, անշուշտ ku օժանդակով:
դ) Շարունակական ձև (որ մինչև այժմ շարունակվում է):
ե) Անմիջական (just now) ձև:
զ) Գործողութեան երկարելը մինչև հասնի այնինչ կետը (till).
է) Այդ գործը անելու ճանապարհին լինել (to be in the way of...).
ը) Միաժամանակ կատարված մի բան (մինչդեռ նա այսինչ բանն էր անում, այդ միջոցին ես էլ այս բանն էի անում):

Ածանցական բայերը կազմվում են ela մասնիկով և ունեն հետևյալ տեսակները.

ա) Կրավորական, որ կազմվում է iwa *մասնիկով*։

բ) Applicatif, որ է մեկի համար անել մի բան (կազմվում է ela *մասնիկով*)։

գ) Պատճառական (isa *մասնիկով*)։

դ) Սաստկական (intensif) (isisa *մասնիկով*)։

ե) Փոխադարձ (ana *մասնիկով*)։

զ) Reversive (հակառակն անել, ինչպես անգլերեն un- *մասնիկով բայերը. կազմվում է* ula *մասնիկով*)։

է) Անդրադարձ (ti *մասնիկով*)։

ը) Qualificatif (որակական). *օրինակ՝ անսանելի լինել, ուտելի լինել և այլն. կազմվում է* ala *մասնիկով*։

Այս բոլորը կարող են իրար խառնվել, իրար միանալ և տեսակ, թե ինչպիսի ահագին թիվ կկազմվի ածանցական բայերի։

(Junod, 57, 62, 73)։

Ֆիլիպպինյան նաթալոյ լեզվում խոնարհումը երկու տեսակ է, որոնք կարող ենք կոչել գործողի խոնարհում և գործի խոնարհում։ Նախ տանք այս լեզվի անկախ դերանունների ցանկը.

ես	sikak	*մենք*	sikame (excl.)
		մենք	sikatayo (incl,)
դու	sikam	*դուք*	sikayo
նա	sikato	*նրանք*	sikara
		նրանք	si era

Նկատելի է, որ բոլորն էլ սկսվում են si *մասնիկով, որ նաև անձնանունների որոշիչ հոդն է, կրճատելով այդ* si *մասնիկը, ստանում ենք դերանունների հետևյալ կրճատ ձևերը.*

ես	ak	*մենք*	kame, tayo
դու	ka	*դուք*	kayo, *երկ.* kito *(ես և դու)*
նա	to	*նոքա*	era

Սրանցից էլ ստացված ստացական հոդերն են՝

-k	*իմ. ս*	-m	*քո, դ*	-to	*իր, նրա*
-me	*մեր*	-dyo	*ձեր*	-ča	*իրենց*

Այս լեզվի մեջ ամեն գոյական նաև բայ է. օրինակ՝ dag-a *թե «գործ» է և թե «գործել»։*

Գործողի խոնարհումը ստանալու համար՝ բառի սկիզբը դնում են man- *մասնիկը, իսկ վերջում դնում են կրճատ դերանունները. ինչպես՝*

man-daga-ak *գործող ես — գործել եմ։*

Այս ձևով է լինում հատկապես կրավորական բայի խոնարհումը. ինչպես՝ bunu *«սպանել».*

Ներկ.	mabunu-ak	*սպանվում եմ*	
»	-ka	»	*ես*
»	-to	»	*է*
»	-kame	»	*ենք*
»	-kayo	»	*եք*
»	-era	»	*են։*

Անցյալը լինում է abunu-ak... *«սպանվել եմ»...*

Գործի խոնարհումը կազմելու համար արմատի վրա դնում են -en *և ավելացնում են ստացական հոդերը. այսպիսով՝ եթե առաջին ձևը լինում էր «գործող ես...», երկրորդ ձևով լինում է «գործ իմ...»։ Օրինակ՝*

dagen-ko	*գործ իմ = գործել եմ*				
pian-ko	*սիրում եմ*	pian-me	*սիրում ենք*		
» mo	» *ես*	» dyo	» *եք*		
» to	» *է*	» ča	» *են։*		

Ձիշտ ժամանակը որոշվում է ժամանակական մակբայների միջոցով. ինչպես՝ «այժմ, նոր միայն, քիչ առաջ» և այլն։

(Scheerer, 113, 115—116, 126, 132)։

Եգիպտացերենում բայի ներկան խոնարհվում է հետևյալ ձևով.

sḍm-i	*լսում եմ*	sḍm-tw-i	
sḍm-k	» *ես (ար.)*	sḍm-tw-k	
sḍm-t	» *ես (իգ.)*	sḍm-tw-t	
sḍm-f	» *է (ար.)*	» »	f
sḍm-s	» *է (իգ.)*	» »	s
sḍm-n	» *ենք*	» »	n
sḍm-tn	» *եք*	» »	ţu
sḍm-sn	» *են*	» »	sn։

Վերջավորությունները անձնական դերանուններն են։

Կրավորական կազմելու համար գրված tw *մասնիկը միջակ անուն է «մեկը, մի որևէ մեկը» իմաստով։*

(Gardiner, 41)

Ամերիկյան դակոտա լեզվով դերանուննները (անկախ) հետևյալներն են. miye *ես,* niye *դու,* iye *նա,* unkiye-pi *մենք,* niye-pi *դուք,* iye-pi *նրանք։ Երբ սրանք բայի մեջ գրվեն, կրճատվելով լինում են* wa *ես,* ya *դու,* un *ես և դու,* un-pi *մենք,* ya-pi *դուք։ Սրանց մեջ, ինչպես անանում ենք,* pi *հոգնակիի նշանն է, որ խոնարհման ժամանակ բայի վրա՝ է գրվում և ոչ թե դերանվան վրա։ Այսպես՝* kaška «կապել».

Ես	wakaška	*կապում եմ*	*հոգ.*	unkaškapi,	*երկ.* unkaška *կապում ենք*
Դ	yakaška	» *ես*		yakaškapi	» *եք*
Գ	kaška	» *է*		kaškapi	» *են*

Հայցական դերանունները, որ ներգործական բայի հետ են միանում, հետևյալներն են.

ma *ինձ,* ni *քեզ,* un-pi *մեզ,* ni-pi *ձեզ։*

(Riggs, 12)

Սրանք այնքան կարևոր են, որ իրր դեմք են ծառայում որոշելու բայի լծորդությունը (թվով երեք), առաջին լծորդությունը վերցնում է wa, we ya, ye *դերանունները, երկրորդ լծորդությունը՝* yu, ya, yo, *երրորդ լծորդությունը՝* ma, ni։

(Riggs, 21)։

Ներկան աորիստի նման է. այսինքն թե ներկա է և թե անկատար. ճիշտ ժամանակը կիմացվի հանգամանքից կամ մոռը գրված մակբայից։

Ապառնիի համար գրվում է -kta *մասնիկը. ինչպես՝*

wa-kaške-kta	*պիտի կապեմ*
un-kaška-pi	*պիտի կապենք և այլն։*

(Riggs, 25—26)։

Դերանունների գործածության բայի հետ պարտադիր չէ այն ժամանակ, երբ բայածևը իր վերջավորության համար հայտնում է դեմքը և այդ դեմքը մյուսներից տարբեր է։ Ուստերեն կարելի է ասել хочу, хочешь, хочет, *բայց ֆրանսերեն անպատճառ պետք է*

ասել je mange, tu manges, il mange, *որովհետև բոլոր դեմքերում էլ բայը հնչվում է* manž *(մանժ)։ Թուրքերեն կարելի է ասել* yazaǰayəm, yazaǰaqsən, yazaǰaq «*գրելու եմ, ես, է*», *որովհետև հանգերը բավական են դեմքը ցույց տալու համար, բայց թուրքմեներենում, որ ապառնիի հանգերը կրճատված են, անհրաժեշտ է դերանունները դնելով՝ ասել.*

men	yazəlǰak	*պիտի*	*գրվեմ*
sen	»	»	*գրվես*
ol	»	»	*գրվի*
biz	»	»	*գրվենք*
siz	»	»	*գրվեք*
olar	»	»	*գրվեն*

(Байлиев, 24)։

Թե անձնական դերանունները կազմում են բայական վերջավորութիւնները՝ ակնհայտ ձևով ցույց են տալիս թուրքական լեզուները. օրինակ՝

Կիրգիզ լեզվով men *ես,* sen *դու,* bəz *մենք,* səz *դուք ձևվերը դառնում ենք սահմանական ներկայի մեջ.*

alamn	*առնում եմ*
alasn	» *ես*
beremn	*տալիս եմ*
beresn	» *ես*
sanamn	*հաշվում եմ*
sanaysn	» *ես։*

Ապառնիում

alarmn, alarsn	*կառնեմ, կառնես*
berermn, berersn	*կտամ, կտաս*

Հոգնակիում՝

alamz, alasz	*առնում ենք, առնում եք*
alarmz. alarsz	*կառնենք, կառնեք։*

(Шонанов, 19, 20, 22)։

Ուլդուր լեզվով՝

išläymän	*բանում եմ*
išläysän	» *ես*

išlāymiz	»	ենք
išlāysiz	»	եք

(Боровков, 100)։

Ամերիկյան լենապի լեզուն խոնարհման ժամանակ սկիզբը դնում է դերանուններին կրճատ ձևը (եզակի և հոգնակի ձևով), ապա բայը և վերջում ժամանակի նշանները. օրինակ՝ mikemossin «գործել, բանել, աշխատել» *բայից՝*

		եզակի	հոգնակի
ներկա	Ա.	n'mikemossi	Ա. mikemossihhena
	Բ	k'mikemossi	Բ k'mikemossihhimo
	Գ	mikemossu	Գ mikemossuwak
անկ.		n'mikemossihump	
ապ.		n'mikemossič, հոգ. Ա.	mikemossihhenač

Կան նաև բազմաթիվ փոխանցական ձևեր (ես քեզ, ես նրան)՝ բոլորն էլ խառնված բայի մեջ, որ չենք հիշում։

(Zeisberger, 59)։

Ամերիկյան կահիտա լեզվում դերանունների փոխանցումները այնպես են միացել ու ամփոփվել, որ կազմել են գրեթե անճանաչելի բառիկներ. ինչպես՝

ես	նրան	ane	ես	նրանց	amne
դու	»	aque	դու	»	ame
նա	»	a	նա	»	am
մենք	»	ate	մենք	»	amte
դուք	»	aquem	դուք	»	amem
նրանք	»	aquim	նրանք	»	amim

(Buelna, 56)։

Սրանց միջոցով էլ կազմվում է բայերի խոնարհումը, որ բավական շատ հեշտ է, քանի որ չունի թիվ ու դեմք ցույց տվող վերջավորություններ։ Օրինակ՝ eria «սիրել» *բայից՝*

ներկ.	Ա.	ane	eria	սիրում եմ	(ես նրան)
	Բ	aque	»	» ես	(դու »)
	Գ	a	»	» է	(նա »)
	Ա.	ate	»	» ենք	(մենք »)

	Բ	aquen	»	»	եք (դուք »)
	Գ	aquim	»	»	են (նրանք »)
անկ.		ane eriat	սիրում էի		
կատ.		» eriac	սիրել եմ		
գեր.		» eriacat	սիրել էի։		

(Buelna, 61—62)

Հիմալայան վայա լեզուն էլ բայի հետ է միացնում դերանունների զանազան խառնուրդներ (ես քեզ, ես և դու, ես և նա քեզ, դու և նա ինձ և այլն), բայց նա չի գումարում բոլորը մեկի մեջ. չի ձևափոխում նրանք, այլ իրար հաջից է դարսում, ասած խոնարհումը ճիում է պարզ։ Օրինակ՝ ping «ուղարկել» *բայից՝*

ping-nu-m	ես ուղարկում եմ կամ ուղարկեցի քեզ
» -no-chhe-m	» » » » » ձեզ երկուսիդ
» -no-ne-m	» » » » ձեզ
» sung-chhe-m	» » նրանց երկուսին
» sung-me-m	» » »
» ku-ng-chhe-m	» » » երկուսին
» ku-ng-me-m	» » »
» ngo-chhem	դուք երկուսդ կամ նրանք երկուսը ուղարկում են ինձ
» sung-chhe-m	» » » նրանք երկուսը ուղարկեցին ինձ
» ngo-ne-m	» ուղարկում եք ինձ
» ngo-me-m	նրանք » են »
» sung-ne-m	դուք ուղարկեցիք ինձ
» sung-me-m	նրանք ուղարկեցին ինձ և այլն։

(Grierson, հա. 3, մասն 1, էջ 387, 392)։

Նոր-Հիբրիդյան (Մելանեզիա) առնգոա լեզվում խոնարհումը շատ պարզ է. նախ դնում են դերանունը, ապա ժամանակի մասնիկը, ապա բայի արմատը. օրինակ՝

ներկա	na	thano	ես	գնում եմ
	ko	»	դու	» ես
	mo	»	նա	» է
	kana	»	մենք	» ենք
	ka	»	դուք	» եք
	la	»	նրանք	» են

(Ներկան ժամանակի մասնիկ չունի)

na pa thano
ես պիտի գնամ և այլն։

(Macdønald, 6—7)։

Կովկասյան ուրիշ լեզվի մեջ բայը հարադրական է, այսինքն՝ նա իր մեջ է դնում ամեն մասնիկ և խնդիր. կարող է նաև առանձ մի կամ երկու նախամասնիկ, նաև միջամասնիկ և հետամասնիկ և զանազան դերանուններ և խնդիրներ (թիվ, դեմք, բացատական են)։

Բային իբրև նախդիր միացող մասնիկները հետևյալներն են. wä *մեջ,* bγä *վրա,* blä *մեջ, հետևը,* beč *տակը,* gi *մեջ,* c'a, γəc'a *մեջ,* la *միջով,* ĭa *վրա,* sä *գլխին, վրա, մեջ,* č'ä *առջևը,* c'ä *տակը,* šä *մեջ, վրա,* za *վրա։*

Դեմք ցույց տվող նշաններն են՝

ես,	*դիս,*	s-. z-	*մեք, դմեզ* š-, ž-
դու,	*դքեզ*	w-, u-	*դուք, դձեզ* s^0- z^0-

Սրանց ներկայելիքյունը չի խանգարում, որ ամբողջական դերանուններն էլ դրվեն. օր.

u- z- bie-n
քեզ ես տեսնում եմ,

բայց և՝

səγwa	uγwa	u- z- bie-n
ես	*դքեզ*	*դքեզ ես տեսանեմ*
a-t'it'	a- k^y ä- qa	
ը մարդ	*նա սկավ*	

a-jiλā-n γə-jip'xa-n zā-t'xəl ə-n-π-qa
եղբայրը իր քրոջ մի գիրք նա նրան տվեց

Հետամասնիկները դրվում են ցույց տալու համար ժամանակը (ներկա, անկատար, ապառնի են)։

Բայերի մեջ դրված n *մասնիկը նշան է հոգնակիի, որ* transitif *բայերի հետ գործածվելիս վերաբերում է հայցականին, իսկ* intransitif *բայերի հետ գործածվելիս վերաբերում է ենթակային. օրինակ՝*

š-k^y ä-n-ot	*մենք պիտի գնանք*
a-s-kw-ót'	*ես նրան պիտի սպանեմ*
a-s-ku-n-ót'	*ես նրանց » »*
a-š-kw-ót'	*մենք նրան » սպանենք*
a-š-ku-n-ót'	*» նրանց » »*

(Dumézil, *էջ 44—59)*

Թուրքական դազախ լեզվում խոնարհումը կատարվում է հետևյալ ձևով.

Ներկայի համար արմատի վրա ավելացնում են Ա.— amːən, emən, *Բ.* asən. esən, *Գ.* ade, edə *հգ. Ա.*— aməz, *Բ.* asez,.

օր.	satamən	*ծախում եմ*
	alaməz	*առնում ենք*
	alasez	*առնում եք*

Ապառնին կազմում են արմատի վրա դնելով՝

Ա. armən, ermən, *Բ.* arsən, ersən, *Գ.* ar, ei, *հգ. Ա.* arməz. *Բ.* arsəz. *օր.*

satarmən	*կծախեմ*
alarməz	*կառնենք*
alarsəz	*կառնեք*

Կատարյալի նշաններն են՝ Ա.— dəm, *Բ և Գ* də, *հգ. Ա.* dək, *Բ.* dənəz, *Գ. չունի. ինչպես՝*

aldəm	*առի*
aldə	*առի, առավ*
aldək	*առինք*
aldənez	*առիք*

Ենթադրական խառնում է՝

ol keləbte *երևի նա եկել է*
ol karabtə *երևի նա տեսել է։*

(Шонанов, *էջ 30—34, 86)։*

Կովկասյան ապիգե լեզվում ամեն գոյական կարող է բայի պես գործածվել, ինչպես՝ ես-ծեր-եմ, ես-մշակ-եմ, ես-ծառա-եմ. բայց սրանք իսկական բայ չեն. նույն բառերից կարելի է կազմել նաև խոնարհվող բայ. ինչպես՝ ծառա-եմ, ծառայում-եմ են։

Intransitif բայերը վերջավորվում են O, իսկ transitif բայերը՝ U։

Դերանուն դեմքերը դրվում են սկզբից. ժամանակ ցույց տվող մասնիկներն էլ վերջից. ալսպիսով բայարմատը վերջում փոփոխություն չի կրում։

Բայը առանում է բազմաթիվ նախամասնիկներ, որոնք ցույց են տալիս՝

ա) Գործողության տեղը. բայց շատ մեծ նրբությամբ և մանրամասնությամբ, որոնց մասին մենք չենք էլ մտածում. օր. մենք ասում ենք պարզապես «մեջ», բայց նրանք հատկապես որոշում են «մի այնպիսի շինության մեջ, որ կառուրով ծածկված է (առն), կամ կառուր չունի (ամբար), կամ բաց տեղումն է գտնվում (դաշտ), կամ թե առները գտնվում է մի ատն կողքին, բայց բարձր պատերով կապած են, թե՛ կարճ ու ցածր պատերով և այլն։

Բ) Դրվում են դերանուններ, որոնք կարող են շատ զանազան խառնուրդներ կազմել, ինչպես՝ ես քեզ, դու ինձ, մենք նրան, նրանք ինձ, նրանք քեզ են։

Միաժամանակ չորս դերանուն կարող են միանալ մի բայի հետ, որ իր ժամանակներով ու եղանակներով միասին կազմում է մի մեծ բարդ բառ. օրինակ՝

sə-r-ye-ge
я с его помощью чему учусь

sə-r-ye-šv-poe
меня чем к чему вы привязывайте

sə-re-ro
я по ней иду

s-ye-ge
я ему учусь

v-ye-še-tə
я тебя ему дарю

Դերանունների այս խառնուրդները այնքան շատ են, որ նրանց միջոցով միևնույն բայից առանում ենք մի քանի հազար (несколько тысяч) ձև,— ասում է ուսումնասիրողը՝ (Яковлев, 62. 76—86)։

Ամերիկյան յուրոկ լեզվի մեջ դերանունները երբ ստացական են, դառնում են նախամասնիկ իրրև կրճատ հոդ. ինչ. no իմ, qo

ձեր, wo իր, իսկ երբ անկախ և ամբողջ են, դառնում են հետամասնիկ և գործածվում են իրր ենթական կամ սեռի խնդիր։

Առան դերանուններն են՝

-tsek	ես ձեզ
-ck	ես նրան
-co	ես նրանց
-xpa	դուք դիս կամ ինձ
-xpen	նա դիս են։

Գոյականը չունի ոչ թիվ և ոչ հոլով. այդ բաները մտնում են բայի մասնիկների մեջ, որով կազմվում է երկար մի բառ. ինչպես՝

ki-nāeli-hoxkumek	երկու տներս ես պիտի շինեմ
ki-naxkcemi-wanulayo	երեք անգամ վրայից պիտի ցատկեմ։

(Kroeber, 419—421)։

Ամերիկյան լուկի լեզվում շատ բայերի ենթական առարկայական ձևով է դրվում և հայցականն էլ վերածվում է սեռականի. օրինակ՝ «ես լսեմ դձեզ»՝ ասելու փոխարեն ասում են «դիս լսել ձեր».— ըստ Կրոլբերի (էջ 371), մտավորական (mental) բայերը բոլորն էլ այս ձևով են։

Ամերիկյան պոմո լեզվով կան մի խումբ նախամասնիկներ, որոնցով բայի նշանակությունը փոխում է իր արանդը. ինչպես՝

ki-	կարծր բանով անել մի բան
gu-	կակուղ » » »
pa-	մի բանի ծայրով անել մի բան
si-	լեզվով կամ բերնով անել մի բան
du-	ձեռքով կամ մատներով անել մի բան
ba-	գլխով անել մի բան են։

(Kroeber, 334)։

Appellative verbs. Այս ձևի բայը ընդհանուր է բոլոր դրավիդյան լեզուներին. օրինակ՝ կուի լեզվին։ Այստեղ գոյականը և ածականը կարող են առանալ դերանվանական վերջավորություններ իրրև մասնիկ և խոնարհվում են իրր բայ՝ ամեն ձևով ու դեմքով. միայն պահպանում է նրանց ժամանակի զազափարը։

Այսպես՝ առնենք nēg «լավ» ածականը. անձնական դերանուններն են՝

ānu *ես*, īnu *դու*, cvanju *նա*
eri *նէ (իգ.) կամ չեզ.* (it)

ավելացնելով այս դերանունները իբրև ենթական և բառի վերջում էլ իբր մասնիկ, կատանանք appellatif *բայը.*

ānu nēganu	*ես լավ եմ*
īnu nēgati	*դու լավ ես*
evanju nēganju	*նա լավ է*
eri nēgari	*նէ լավ է:*

(Friend—Pereira, 55):

Ամերիկյան տեսակետս լեզուն ուրիշ ամերիկյան լեզուների նման բայի մեջ է մուծում նախադասության բոլոր կարևոր բառերը. ժամանակ, եղանակ, ենթական և սեռի ինդիր: Ալգոնկինով առացվում են շատ երկար բառեր: Հիմնական մասը երեքն է լինում. սկզբի, միջին և վերջին: Սկիզբը դրվում է դերանուն ենթական և կատարյալի նշանը. վերջինը լինում է դերանուն սեռի ինդիրը, ինչպես և բայարմատը և ժամանակ ու եղանակ ցույց տվող մասնիկները: Միջին մասը կազմում են եղանակ ցույց տվող նաև հարցական և բացասական մասնիկներ, մակրայ, նախադրության, ածական և գոյական:

Դերանուն ենթականերն են՝ ani *ես,* api *դու,* a *նա,* ati *մենք,* apim *դուք,* am *նրանք.— կատարյալ ժամանակի նշանն է* ti *կամ* it. *օր.* an-ti-umagic *«ես պատմեցի ձեզ այն».— վերջում դրվում է* ta *մասնիկը և նշանակում է «մի բան շինել». սա պատճառական կազմող մասնիկն է և դրվում է գոյականից հետո. օր.*

ani-tu-mobar-ta
ես գլխարկ եմ շինում:

Ահա մի երկար օրինակ այսպիսի կազմության.

n-	a-	t-	tu-	ga-	n-	saa-	in-	katua
then	she	did	it	the	my	blanket	my	shoulder
ապա	*նա*	*(կար.) այն*			*իմ*	*վերմակը*	*իմ*	*ուս*
-dam	-va	-vwa						
on	already	placed						
վրա	*արդեն*	*դրեց*						

(Mason, *էջ 336, 338, 341*):

Բարդ խոնարհում ունի բայը ամերիկյան գապոտեկ լեզվում, բայի սկիզբը դնում են նախ բայի սեռը հայտնող մի ձայնավոր այսպես՝ a *նշան է չեզոքի,* e *դերանվանական բայի,* i *կրավորականի և* o *ներգործականի: Օրինակ՝*

bižo'onyesive *«վազեցի հետևից (նրա)» նախ* b *նախամասնիկը նշան է կատարյալի.* i *կատարյալ ձևն է,* o *բայական դասանիշի.* žo'onye *բայի արմատն է.* si *մասնիկ է և նշանակում է «հետևից». իսկ* ve *եզ. զ դեմքի դերանվանական մասնիկն է:*

gunabadiǰave *«հարցրեց», որից* gunaba *«հարցրեց»,* diǰa *բառ,* ve *եզ. զ դեմքի դերանվանական մասնիկ. ուրեմն և նշանակում է «հարցրեց բառ նրան»:*

Բայի արմատից առաջ դրվում են դանազան նախամասնիկներ, որոնք ցույց են տալիս ժամանակ, եղանակ, բայի սեռ. հիշենք կարևորներից մի քանիսը.

r^v -	*դրվում է անորոշից առաջ*
b^v-, kø-ku-	*կատարյալից առաջ*
s^v-	*ապառնիից առաջ*
g^v -	*սովորականից առաջ*
ni-	*պարմանականից առաջ*
k^v -	*շարունակականից առաջ և այլն. օրինակ՝*
ri-ǰela	*հանդիպում եմ*
bi-ǰela	*հանդիպեցի*
sa-ǰela	*պիտի հանդիպեմ*
gi-ǰela	*կարելի է հանդիպեմ*
bi-ǰela	*հանդիպիր*
ra-iǰela	*հանդիպեցնք են են:*

Երկրորդ հերթին դրվում են բայի սեռը ցույց տվող ձայնավորները, որ նշեցինք վերևում:

Երրորդ հերթին դրվում են բայի երևույթները ցույց տվող մասնիկները, որոնց մեծ մասը այժմ կորած է:

Միևնույն ժամանակ դրվում են դանազան մակրայներ. ինչպես՝

ra-bi-nia	*ես խոսում եմ շատ մարդկանց հետ*
ra-di-nia	» » » *շատ անգամ*
ra-li-nia	» » » *առանց ընդհատելու*
ra-ǰi-nia	» » » *քիչ անգամ*

ra-z-nia	»	»	» *մի ուրիշ մարդու հետ*
ra-gi-nia	»	»	» *ալժմ*
ra-ga-nia	»	»	» *շատ մարդկանց հետ*
ra-ri-nia	»	»	» *հաճախ*
ra-ša-nia	»	»	» *հաճախ*
ra-ka-nia	»	»	» նաև (also)
ra-si-nia	»	*խոսեցնում եմ նրան:*	

Այս զապոտեկ լեզվում կան ուրիշ զանազան մակբայներ էլ, որոնք կցվում են բայի վերջից. բայց նրանք այնպես են միացել, որ գարձել են հետամատնիկ:

Եվ, որովհետև այս բոլոր խառնարդների ժամանակ կատարվում են զանազան միացումներ և ներքին ձայնական փոփոխություններ, ուստի տեսնք, թե ինչքան դժվար ու բարդ է խոնարհումը այս լեզվի մեջ:

Այդ լեզվում բայը նաև սեռ ունի, բայց խախտած դրության մեջ է. կան բարբառներ, որ սեռը ամբողջ պահել են, ուրիշներ բոլորովին չնչել են. բարբառ կա, որ երկրորդ դեմքում չնչել է սեռը, բայց երրորդ դեմքում պահել է նա:

(Radin, *էջ 68, 75—76, 77, 81*)

Սեմական լեզուների խոնարհման դրության մեջ է մեզ արաբերենից, ինչպես տեսանք նեոաժության մեջ:

Նույն ոճով են Քամյան լեզուները. օրինակ Քամյան ազգաբ լեզվի մեջ բայի խոնարհման ժամանակ արմատի սկիզբը դնում են՝

հգ.	*Ա.*	á—	*հգ.* na-
	Բ	tá—	ta-′n
	Գ	*ար.* yá—	ya-′n
	Գ	*իգ.* tá—	ya-′n

Այսպես է անց. անկատարի մեջ, իսկ մյուս ժամանակներում սկզբի մասնիկը փոխում է իր ձայնավորը և դառնում է՝

ó, to, yo	*են*
u, tu, yu	*են*
i, ti, yi	*են:*

Այս բոլորի մեջ դժալի են դերանունները, որոնք են՝

anu	*ես*	nanū′	*մենք*
atū′	*դու*	issīn	*դուք*
ússuk	*նա*	ússūn	*նրանք:*
issi	*նա*		(Colizza, *էջ 20, 77*)։

Աֆրիկյան կինգա (բանտու) լեզվում խոնարհումը շատ բարդ է. նախ դրվում է դերանունը ըստ 13 դասանիշների, եզակի և հոգնակի տարբեր. ապա բայի ժամանակն ու եղանակը ցույց տվող մասնիկները և ապա բայարմատը, որ ինում է անփոփոխ: Եթե կա դերանուն հայցական սեռի խնդիր, այդ էլ դրվում է մեջտեղում (առարկայական խոնարհում). և եթե բայն էլ ունի եղանակավորիչ (իմաստի երանգները փոխող) մասնիկներ, դրանք էլ դրվում են վերջում:

Առնենք ամենահասարակ մի ձև, որ կազմված է Ա. դեմքի դերանունից (Ա. կարգի դասանիշով) + բայարմատ tova «*ծեծել*»*.*

ndi-tova	*ծեծում եմ*	
vwitowa	»	*ես*
itova	»	*է*
twitova	»	*ենք*
mwitova	»	*եք*
vitova	»	*են*

Ներմուծում ենք նեղկալի iku *մասնիկը և դերանուն խնդիրները.*

ndikuntova	*ես ծեծում եմ նրան*
vukunova	(*իմ* vukunitova) *դու ծեծում ես ինձ*
ikukutova	*նա ծեծում է քեզ*
tukuvatova	*նրանք ծեծում են ձեզ*
mukututova	*դուք ծեծում եք մեզ*
vikuvatova	*նրանք ծեծում են նրանց.*

մյուս դասանիշներով

2 հգ.	gukuntova	*հգ.*	gikuntova
3 »	d^{y}ikuntova	»	tsikuntova
4 »	kikuntova	»	sikuntova
5 »	»	»	tukuntova
6 »	likuntova	»	gikuntova
7 »	lukuntova	»	tsikuntova
8 »	vukuntova	»	*չունեն*

9 հզ. kukuntova
10 » gukuntova
11 » mukuntova
12 » pikuntova
13 » kukuntova։

Ժամանակ ցույց տվող մասնիկներ.

a *ցույց է տալիս անցյալում երկար ժամանակ տևող կամ կրկնվող մի գործողություն. օրինակ՝* ndatova *ես ծեծում էի (վերի ամբողջ դասանիշներով և դերանուններով). ինչպես՝*

ndantova *ես ծեծում էի նրան*
tvakuvatova *մենք ծեծում էինք նրանց*
mwakututova *դուք » էիք մեզ*

ka *ցույց է տալիս, որ անցյալում գործողությունը մի անգամ է պատահել.*

ndekatova *ես ծեծեցի*
ndekantova *ես նրան ծեծեցի*

la *մասնիկը կազմում է ապառնի. օր.*

ndalatova *պիտի ծեծեմ*
ndelantova » » *նրան*

ile *մասնիկը ցույց է տալիս, որ գործողությունը լրացել վերջացել է. օրինակ՝*

ndetowite *ես ծեծեցի*
ndentowile *ես » նրան*

ka *ցույց է տալիս, որ գործողությունը քիչ առաջ, նոր է վերջացել. օր.*

ndekatovile *նոր ծեծեցի*
ndekakutovile » » *քեզ*

Գործը անցյալում արդեն նոր էր վերջացել. ինչպես՝

ndatovile *ծեծել էի*
ndantovile » » *նրան*

tsi *ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է, կատարվել է կամ պիտի կատարվի մի այնպիսի տեղում, որ խոսող անձից հեռու է գտնվում. ինչպես՝*

nditsitova *պիտի ծեծեմ, երբ ես նրան տեսնեմ կամ գամ այնտեղ, ուր նա գտնվում է.*
nditsikuntova *ես պիտի ծեծեմ նրան ևն։*
ndetsitovile *ես ծեծեցի նրան, երբ այնտեղ էի*
pi *մասնիկը կազմում է շարունակական ներկա (Պլ. կոր). ինչպես՝*

ndipitova *ծեծում եմ (կոր)*
ndipikuntova » » » *նրան*

pitsi *մասնիկը դրվում է հետևյալ ձևով և իմաստով.*
ndipitsitova *ես պիտի ծեծեի, երբ գայի այնտեղ, ուր նա գտնվում է.*
ndipitsikuntova *ես նրան պիտի ծեծեի, երբ գայի այնտեղ, ուր նա գտնվում է.*
ndekapitsitova *ես կծեծեի հետո այդտեղում, երբ այնտեղ լինեի.*

Եթե գործողությունը որոշ ժամանակ տևել է, դրվում է ga *վերջամասնիկը.*

Conjonctif *եղանակը կազմելու համար* a-*ի տեղ դրվում է* e. *ինչպես՝*

ndetove *կարող եմ, կարող էի ծեծել*
ndentove *նրան » » » »*

Այս նույն իմաստը առատացնելու համար ավելացնում են ge *մասնիկը. ինչպես՝*

ndetovage, ndentovage

Երբ այդ գործողությունը ոչ անմիջապես, այլ որոշ ժամանակ հետո կարող է պատահել, դնում են ka *մասնիկը, ինչպես՝*

ndekatove, ndekantove.

(Wolff, 64—79)։

Ամերիկյան հնդիա լեզվում, ինչպես և ուրիշ աֆրիկյան լեզուներում, բայը շատ բարդ ու դժվար է, նա պարփակում է իր մեջ նախադասության բոլոր տարրերը։ Օրինակ՝

xa na is ya de
«եթե նէ դա հան վերև»

Այս բայը ունի նախ մակբայական նախամասնիկ xa, *որ ցույց է տալիս, թե շարժումը դեպի բլրի վերև կողմն է, այս դեպքում*

դեսի ափը.— na ունի կրկնողական նշանակութիւն և ցույց է տալիս, որ գործողութիւնը երկրորդ անգամ է կատարվել.

-is ցույց է տալիս, թե գործողութիւնը հողի երեսին է կատարվում և դեռ շարունակվում է: (Եթե գործողութիւնը միայն սկսված լիներ և առաջ չգնացած, կդնեին wiñ մասնիկը. եթե գործողութիւնը վերջացած լիներ, կդնեին niñ. այս երեք մասնիկները՝ is, wiñ. niñ որոշում են գործողութեան ընթացքը): Երբ s միացել է i-ի հետ և առանձին մի վանկ է կազմում, այդ նշան է, թե ենթական չափահաս մարդ է, ապա թե ոչ (այսինքն եթե ենթական փոքր լիներ, ծեր, օտար կամ անասուն), պիտի միանար նախորդ na-ի հետ:— Այստեղ դեմք չկա, ուստի q դեմքով է. եթե լիներ եզ. p դեմք, կասեին xa na *sin* dī ya de, որի մեջ *in* ցույց է տալիս թիվ և դեմք.— di (որի կարևոր մասն է d) միջամասնիկ է և միացած na-ի հետ, ցույց է տալիս «նորից հետ back, again»— ya վանկը կարելի է կոչել արմատ, թեև նա ցույց է տալիս գործողութեան կերպը, այն է «շարժում մարդկային մի էակի՝ ոտքի վրա և քայլելով»: Եթե լիներ հոգնակի, արմատը պիտի դառնար deL. եթե գործողութիւնը ավելի արագ եղած լիներ, պիտի դնեին -L:— Վերջին վանկը (di) ցույց է տալիս ապագա մի գործողութիւն, բայց պատահական (future contigence). եթե լիներ սուրյ ապառնի, պիտի դնեին -te մասնիկը:

Այս բոլորից երևում է, որ հնդա լեզվի բայը ձևափոխվում է՝

ա) Նախամասնիկներով և միջամասնիկներով, որոնք ցույց են տալիս, թե գործողութիւնը ինչ ուղղութեամբ է կատարվում միջոցի մեջ, եղանակը և շարժառիթը, կրկնվում է թե մի անգամ է կատարվում, սկսվում է, շարունակվում է թե վերջացել է:

բ) Արմատից առաջ եղած վանկի ներքին ձևափոխութեամբ որոշվում է ենթակայի թիվն ու դեմքը:

գ) Արմատի ձևափոխութեամբ որոշվում է ենթակայի թիվը (transitif բայերի մեջ) կամ առարկայի թիվը (intransitif բայերի մեջ):

դ) Արմատին հաջորդող մասնիկները ցույց են տալիս գործողութեան ժամանակը, շարունակութիւնը, հավանականութիւնը:

Այսքան ձևափոխութիւններով՝ պարզ է, որ բայերի թիվը անհամար պիտի լիներ. և իրոք էլ այդպես է. բայց տրամաբանութիւնը և գործնական կյանքը կրճատում է դրանք:

(Groddard, 37—39)

Առարկայական խոնարհում ունի ամերիկյան (Պերու) առնաձիի կամ կեչուա լեզուն, որ գերանուն խնդիրը մուծում է բայի մեջ, բայց այդ լինում է միայն այն դեպքում, երբ գործողութիւնը ուղղված է առաջին և երկրորդ դեմքերի վրա: Այդ լինում է չորս դեպքում. այն է՝ ես քեզ, նա քեզ, դու ինձ, նա ինձ: Երրորդ դեմքը մասնակցում է միայն երբ ենթակա (նա ինձ, նա քեզ), իսկ երբ երրորդ դեմքը առարկա է դառնում գործողութեան, չի նկատվում բայի մեջ, այլ առանում է սովորական կարգով առանձին հայցական հոլով: Օրինակ՝ tapuy «հարցնել» բայից

tapu	iqui	ես	հարցնում եմ	քեզ
»	su-nqui	նա	»	է քեզ
»	hua-nqui	դու	»	ես ինձ
»	hua-n	նա	»	է ինձ:

Սրանց վրա ավելանում են հոգնակի ձևերը.

tapu	iquičis	ես	հարցնում եմ	ձեզ
»	iquicu	մենք	»	ենք քեզ
»	iguičiscu	»	»	» ձեզ
»	hua-nquicu	դու	»	ես մեզ
»	» nguičis	դուք	»	եք ինձ
»	» nguičiscu	»	»	» մեզ:

Այս բոլորը իրենց բոլոր ժամանակներով և եղանակներով: Նաև կրավորական բայն էլ ունի այս բոլոր ձևերը, օրինակ՝

Ես քեզանից սիրվում եմ	munaskayqui capu-iqui
Ես ձեզանից սիրվում եմ	munaskayquičis capu-iquičis
Մենք ձեզանից սիրվում ենք	munaskayquičis capu-iquičiscu.

են են են (Middendorf, 91—100):

Մասաչուզեսի (Ամերիկա) բնիկների լեզվով ամեն բառ կարող է դառնալ բայ՝ երկու ձևով:

ա) Ամեն գոյական և ածական՝ առանալով դեմքի նշանները՝ կարող է դառնալ բայ և խոնարհվել: Այսպիսի բայերը կոչվում են էական կամ գոյական բայ (verbe substantive). օրինակ՝

wosketomp *մարդ*	wosketompoô	*նա մարդ դարձավ.*
wompi *սպիտակ*	nôwompes	*սպիտակ եմ,*
	kôwompes	*սպիտակ ես...*

Ըստ այսմ այս լեզվում առանձին էական բայ (եմ) չկա։

բ) Ածականից կազմում են բայ, նույն բայի վրա ավելացնելով -onk «-ութիւն» մասնիկը՝ կազմում են գոյական, նորից կտրում են այդ մասնիկը և կազմում են բայ, ինչպես վերի բառից՝

nôwompesuonk	իմ սպիտակութիւնը
kôwompesuonk	քո սպիտակութիւնը
waantamoonk	իմաստութիւն
nôwaantam	իմաստուն եմ
kôwaantam	իմաստուն ես
waantam	իմաստուն է ևն։

Բայը իր մեջ է առնում սեռի խնդիրը, որի շնչավոր ձևի համար ուրիշ դերանուն կա, անշունչ ձևի համար ուրիշ։ Կարող է նաև երկուսը միասին պարփակել իր մեջ. օրինակ՝

ես պահում եմ իմ տունը > ես պահում եմ այն.
ես պահում եմ իմ տունը քեզ համար > ես պահում եմ այն քեզ։

Այս բոլորը ունեն իրենց դրական և բացասական, ըղձական, պատճառական և կրավորական ձևերը. առացվում են այսպիսով շատ երկար ձևեր. օրինակ՝

ըղձ. kôwaadčanunôunanonuztoh (23 ձայն)։
I wish we did not keep thee
Ցանկանում եմ, որ մենք չպահեինք (զ)քեզ
պատճ. kôwadčanumwahešnuhhog (21 ձայն)
I cause thee to keep me
Քեզ պահել կտամ ինձ (դիս)։

(Eliot, էջ 13, 16, 21)։

Հիմալայան լիմբու լեզուն էլ բայի մեջ է ներմուծում եղանակ և սեռի խնդիր դերանունները նախդիրի կամ հետամասնիկի ձևով, և որովհետև այս լեզուն ունի անձնական դերանունների բազմաթիվ խառնուրդներ (ես և դու, ես և նա են), ուրեմն տեսակ, թե ինչպիսի խճողված ձևեր են առեղծվում այդ բոլորի համար։ (Grierson, հա. 3, էջ 289 և շար. նվիրված են այս խառնուրդ ձևերի բացատրութեան)։

Մինչև այն դրութեան մեջ է Հիմալայան քամբու լեզվի բառհինգ բարբառը, որ նախորդների բարդ ու խառնակ կազմութեան

ավելացնում է նաև բայի ժամանակը, որ մասնիկի ձևով ավելացնում է բայարմատի վերջին։ Սրանց վրա խոսում է Գրիերսոնը։

(Անդ, էջ 331—3)։

Հնդկական ահնդա լեզուն էլ ունի նման դերանվանական բազմաթիվ մասնիկներ (Grierson, հա. 8, մաս 1, էջ 270—1)։ Այսպես են նաև դարիդի, սինդհի, քաշմիրի և ուրիշ հնդկական լեզուներ (Grierson, հա. 8, մասն 2, էջ 312)։

Բոլոր տեսակի խոնարհումների մեջ ամենից հետաքրքիրը և ուսանելին Ամերիկյան կիրիրի լեզվի խոնարհումն է, որ նկարագրել է Գաբելենցը (էջ 11—21)։

Որովհետև բայի լծորդութիւնները այս լեզվի մեջ անձուկ կերպով կապված են դերանունների հետ, ուստի մենք էլ պետք է առնք նախապես կիրիրի լեզվի դերանունների պատկերը։

Հնդինակը դերանունների փոփոխութեանց այս շարքն էլ կոչում է լծորդութիւն և մենք էլ պիտի գործածենք նույն բառը։

Կիրիրի լեզվի դերանունները ունեն հինգ լծորդութիւն.

	ես	դու	նա	մենք ex.	մենք inc.	դուք	նրանք
1.	hi	e	i	hi-de	cu-a	e-a	i-a
2.	hi	ey	s	hi de	c-a	ey-a	s-a
3.	hidz	edz	se	hidz-de	k-a	edz-a	se-a
4.	hi	e	si	hi-de	cu-a	e-a	si-a
5.	dzu	a	su	dzu-de	cu-a	a-a	su-a

Այս տախտակի համեմատ առանում ենք մի կողմից գոյականների առացական հոդերը, մյուս կողմից՝ բայերի խոնարհումը։

Մի պարզ ակնարկ գցելով տախտակի վրա կտեսնենք, որ u և p դեմքի դերանունները (թե եզակի և թե հոգնակի) հաճախ իրար նման են, բայց գ դեմքը սկզբից մինչև վերջ իրարից տարբեր է. դրա համար էլ լծորդութիւն որոշելու նշանը գ դեմքն է։

Լծ. 1.— Գ դեմքի նշանն է i. սրանից էլ կառանանք օր. padzu «հայր» բառով՝ առացական ipadzu «ընդ հայրը» և coto «գողանալ» բայից՝ icoto «նա գողանում է»։

Լծ. 2.— Գ դեմքի նշանն է s. որով կառանանք մի կողմից՝ ambe «վարձատրութիւն» բառով՝ sambe «ընդ վարձատրութիւնը» և մյուս կողմից՝ arancre «ամաչել» բայով՝ sarancre «նա ամաչում է»։ Ըստ այսմ նաև՝

Լծ. 3.— Գ դեմքի նշանն է se. ուստի ebaya «մագիլ»— se-

baya «նրա մագիլը», eico «հանգստանալ»— seico «հանգստանում է»:

Լծ. 4.— Գ դեմքի նշանն է si, ուստի bate «բնակարան»— sibate «նրա բնակարանը», pa «մեռնել»— sipa «մեռնում է»:

Լծ. 5.— Գ դեմքի նշանն է su, ուստի՝ byro «փոր» subyro «նրա փորը», uca «սիրել»— suca «սիրում է»:

№ 1 լծորդության հետևում են i ձայնավորով սկսվող բառերը՝ որ մյուս №-ների տակ չեն ընկնում, նաև ընդարձակ մի ցանկ բառերի, որ դնում է հեղինակը այբբենական կարգով (թվով 161 բառ). նաև այդ 161 բառերով կազմված բոլոր բարդ բառերը, ինչպես և ինքը նախադրության:

№ 2, 3, 4 այնքան շատ բառ չունին, իսկ *№ 5* բավական հարուստ է:

Այս բոլոր հինգ լծորդություններին հետևող բառերի ցանկը տալիս է հեղինակը, բայց ոչ մի կանոն չկա իմանալու համար, թե *որ բառը որ լծորդության է պատկանում:*

Բայերի խոնարհումը չի զանազանվում ժամանակի կամ եղանակի տարբեր ձևերով, որովհետև բոլոր եղանակներն ու ժամանակները մի ձև միայն ունին: Միակ տարբերությունը այն է, որ բայի սկիզբը գրված երեք դեմքի (և հատկապես Գ դեմքի) մասնիկները զանազանվում են գոյականների ստացական հոդերի նման, ուստի սրանով էլ պիտի որոշվին բայերի հինգ լծորդությունները:

Տալիս ենք այստեղ Ա և Բ լծ. բայերից մի մի օրինակ՝ ներկայի բոլոր դեմքերով.

առաջին լծ.	coto	*«գողանալ»*			
Ա.	hicoto	*գողանում եմ*	hicotode	*գողանում ենք*	ex.
			cucutoa	»	inc.
Բ.	ecoto	» *ես*	ecotoa	» *ք*	
Գ.	icoto	» *է*	icotoa	» *են*	

երկրորդ լծ.	arancre	*ամաչել*	
Ա.	hiarancre	hiarancrede	
		carancrea	
Բ.	eyarancre	eyarancrea	
Գ.	sarancre	sarancrea	

Այս ոճով կազմվում են նաև մյուս լծորդությունները:

Ներկային կազմվում են մյուս բոլոր ժամանակները՝ դանազան մակբայներով:

Անկատարի համար դնում են docoho *կամ* doro «այն ժամանակ». *օրինակ՝*

icoto docoho	*«գողանում էր»*
doro icoto	» »
dzuca docoho	*սիրում էի:*

Կատարյալը (präteritum) *կազմելու համար ավելացնում են* cri *մասնիկը, որինակ՝*

icotocri	*գողացել է*
icotocria	*գողացել են:*

Գերակատարի համար սրա վրա ավելացնում են նույն docoho *կամ* doro *մակբայները. օրինակ՝*

icotocri docoho	*գողացել էր*

Ապառնին կազմվում է di *մասնիկով.*

icotodi	*պիտի գողանա:*

Այս լեզվում էական բայ չկա. ամեն գոյական և ածական վերի ձևով կարող է բայ դառնալ և խոնարհվել:

Ուսումնասիրողը (Gabelentz) *բացատրություններ չի տալիս* դերանունների տախտակի հորինման մասին. *բայց պարզ է, որ այս բոլորը արդյունք է հին դասակարգավոր դրության, որ ընդարձակ չափով տեսանք աֆրիկյան լեզուների մեջ:*

Ավելի կարևոր է նկատել, որ այս լեզվի մեջ սեռ ու հոլովում չկա. *միևնույն բառը թե «ես» է թե «կով». հետադրություններով* կազմված անկանոն հոլովում ունեն միայն դերանունները, որոնք ծառայում են միաժամանակ թե գոյականների ստացականը կազմելու և թե բայերի խոնարհումը: *Եթե ավելացնենք սրանց վրա նաև այն, որ այս լեզուն էական բայ չունի, որ ամեն գոյական և ածական կարող է երբեմն բայ խոնարհվել, կտեսնանք քերականական հորինվածության մի նոր պատկեր, ուր մասունք բանի չկա. բոլոր մասունք բանիները նույն են, և ուր բոլոր կարևոր դերերը խաղում են միայն դերանունները:*

Շատ ուշքառ է խոնարհումը նաև դնչուերենի մեջ, ուր կա միայն ներկա, անկատար (որ միաժամանակ կատարյալ է), անորոշ (որ թե հարակատար է և թե գերակատար) և հրամայական:

Ապառնին նույն ներկան է՝ սկիզբը դրված «ուզում եմ»։ Այսպիսով առացվում է միայն հինգ եղր։

Ընդհակառակը հարուստ խոնարհում ունի պորտուգալերենը, որ պարզ և բարդ ունի 19 բայական ձև, չհաշված դերբայները։ Այսպես նաև հունգարերենը, որտեղ գտնում ենք հետևյալ եղրերը.

Սահմանական եղանակ՝ ներկա, անկատար, կատարյալ, բարդ կատարյալ, հարակատար, գերակատար, ապառնի և անցյալ ապառնի։

Հրամայական եղանակ՝ ներկա, անկատար, կատարյալ և ապառնի։

Այսպես և սաորադատական եղանակը։

Ըղձական կամ պայմանական եղանակն ունի ներկա, կատարյալ, գերակատար, ապառնի, բարդ ապառնի, անցյալ ապառնի, անցյալ բարդ ապառնի։ Ընդամենը 23 եղր։

Հարավ-ֆրիկյան օթյիհերերո լեզվի մեջ (բանտու խմբից) բայի ժամանակներըը հետևյալներն են.

Աորիստ— ցույց է տալիս ընդհանուր մի իմաստ, առանց ժամանակի կապակցության, իբր թե ենթակայի գործը կամ դրադրությունը և կամ հատկությունը այդ է. գերմ. թարգմանում են pflengen *բայի հետ։*

Ներկա— մի գործողություն, որ դեռ շարունակվում է և դեռ վերջացած չէ։

Ապառնի։

präteritum = perfectum historicum = *կատարյալ։*

Անկատար— մոտիկ անցյալում կատարված մի գործ, որ դեռ վերջացած չէ և շարունակվում է։

Կատարյալ— գործը կատարված է և դեռ շարունակվում է. օր. mba vera «*հիվանդացա և դեռ այժմ էլ հիվանդ եմ*»։

գերակատար, ըղձական, պայմանական, պարտավորական։

(Seidel. Nspr. 75—80)։

Դասական լեզուներից լատիներենը հետևյալ պատկերն ունի խոնարհման մեջ.

Սահմ. եղանակ		*Սաոր. եղ.*
	ներկա	
amo	*սիրում եմ*	amem *սիրեմ*
amas		ames
amat		amet
amamus		amemus
amatis		ametis
amant		ament

անկատար

amabam	*սիրում էի*	amarem *սիրեի*
amabas		amares
amabat		amaret
amabamus		amaremus
amabatis		amaretis
amabant		amarent

ապառնի

amabo	*պիտի սիրեմ*	
amabis		
amabit		
amabimus		
amabitis		
amabunt		

չի՛ երևում

կատարյալ

amavi	*սիրեցի*	amaverim *սիրած լինեմ*
amavisti		amaveris
amavit		amaverit
amavimus		amaverimus
amavistis		amaveritis
amaverunt		amaverint

գերակատար

amaveram	*սիրել էի*	amavissem *սիրած լինեի*
amaveras		amavisses
amaverat		amavisset
amaveramus		amavissemus
amaveratis		amavissetis
amaverant		amavissent

amavero	*սիրած կլինեմ*	
amaveris		

չի՛ երևում

amaverit	
amaverimus	
amaveritis	
amaverint	

Սրանցից դուրս կան նաև մի հրամայական և դերբայներ, որ չենք դնում:

Մեր շրջակա լեզուներից էլ մի օրինակ տալու համար առնենք թուրքերենը, որի խոնարհումը չափազանց հարուստ է առանց սակայն շատ բարդ լինելու:

Թուրքերենի խոնարհման պատկերը ընդհանուր գծերով արդեն տվել ենք նախաժութեան մեջ (էջ 213—215), բայց որովհետև նա մեզ անհրաժեշտ է աշխարհաբարի և հատկապես բարբառների խոնարհման ուսումնասիրութեան համար, ուստի կարևոր ենք համարում տալ այստեղ նրա լիակատար պատկերը:

Դնում ենք միայն յուրաքանչյուր բայական եզրի եզակի ա դեմքը.—

Պարզ ժամանակներ

Սահմ.	*ներկա*	sever-im	*սիրում եմ*
»	*անկ.*	sever-idim	*սիրում էի*
»	*ներկ. շար.*	seviyor-əm	*սիրելիս եմ*
»	*անկ.* »	seviyor-ədəm	*սիրելիս էի*
»	*կար.* »	sevdim	*սիրեցի*
»	*կրկին կար.*	sevdi idim	*սիրեցի էի*
Ըղձ.	*ներկ.*	seveim	*սիրեմ*
»	*անց.*	seve idim	*սիրել*
Սահ.	*ապ.*	seveǰeyim	*պիտի սիրեմ*
»	*անց. ապ.*	seveǰeyidim	*պիտի սիրեի*
Պարտավորական ներկ.		sevmeli im	*սիրելու եմ*
»	*անց.*	sevmeli idim	*սիրելու էի*
Հրամ.		sev	*սիրիր:*

Անցյալ դերբայով կազմված ձևեր

sevmiš im	*սիրել եմ*
» idim	*սիրել էի*
» olurəm	*սիրած եմ լինում*
» » ədəm	*սիրած էի լինում*
» oluyorəm	*սիրած կըլլամ կոր*

sevmiš	» ədem	*սիրած կըլլալի կոր*
»	oldəm	*սիրած եղա*
»	oldə ədəm	*սիրած եղա ախր*
»	ol	*սիրած եղիր*
»	olaǰağəm	*սիրած պիտի ըլլամ*
»	olaǰağədəm	*սիրած պիտի ըլլալի*
»	olayəm	*սիրած ըլլամ*
»	olayədəm	*սիրած ըլլալի*
»	olməšəm	*սիրած եղած եմ*
»	» ədəm	» » *էի*
»	» olayəm	» » *ըլլամ*
»	» olayədəm	» » *ըլլալի*
»	olmaləyəm	» *ըլլալու եմ*
»	olmaləyədəm	» » *էի*
»	olməš olmaləyəm	» *եղած ըլլալու եմ*
»	» » yədəm	» » *էի:*

Ապառնի դերբայով կազմված ձևեր

seveǰek	olur əm
»	» ədəm
»	oluyorəm
»	oluyor ədəm
»	oldəm
»	oldə ədəm
»	ol
»	olaǰağəm
»	olaǰağədəm
»	olayəm
»	olayədəm
»	olməšəm
»	olməšədəm
»	olməš olayəm
»	» olayədəm
»	olmaləyəm
»	olmaləyedəm
»	olməš olmaləyəm
»	» olmaləyədəm
»	olur olayem
»	» olayədəm

Այս բոլորի գումարն է 55։

Սրանց վրա կարելի է ավելացնել ise, *որ կազմում է առաջադասական (բացի երեք հրամայականներից), որով կունենանք 52 առոգադասական, որ նախորդի հետ միասին լինում է 107 ձև։*

Այս 107 ձևերն էլ կարող են առանձնալ əməš *կամ* imiš «*եղեր*» *վերջավորությունը, որ կազմում է* ենթադրական *ձև։*

Թուրքերենի հնաոաքրքրական ձևերից մեկն է այս։

Ենթադրենք, թե մեկը անից դուրս է եկել՝ հավատացած լինելով թե այս ինչ բանը վերցրած չէ։ Հանկարծ գրպանն է նայել և տեսել որ կա։ Եվ ասում է՝

alməš əməš əm
«*առած եմ եղեր*»։

Այս «եղեր— əməš, imiš» ձևը ենթադրում է արեմն անցյալ ավարտյալ եղած մի բան։ Միևնույն ժամանակ նա ցույց է տալիս արիշից լսած կամ տեղեկացած մի բան, որ պատմում է վերապահությամբ։ Օրինակ՝ Վ.աղը պիտի գա եղեր (այսպես են լուր տվել)։ Երրորդ՝ նա հնդնական ձև է. օրինակ՝ Մեկ օրվաճ մեջ 10 գիրք կկարդա եղե՞ր....

Այսպիսի մի ձև կա նաև պարսկերենում, օրինակ՝

Bender- ʻAbbas šehr-i muʻteber bude est
Բենդեր-Աբբասը նշանավոր քաղաք է եղել։

Այսպիսով բոլոր ձևերի գումարը լինում է 214!

Բայց թուրքերենը ունի նաև տեսակ տեսակ ածանցական բայեր, ինչպես կրավորական, անցողական, փոխադարձ են, որոնց թվումը և օրինակները տես ներածության մեջ։ Այս ածանցական բայերի գումարն է 25, որով բազմապատկելով վերոհիշյալ 214-ը, կստանանք 5350 բայական եղր։ Յուրաքանչյուր եղր ունի վեց դեմք, որով բոլոր դեմքերի թիվը կլինի՝ 32.100։ Բայց այս բոլորը կարող են ունենալ նաև իրենց բացասականը, որ կազմվում է ներմուծելով ma *մասնիկը։ Այս ձևերն էլ եթե միասին հաշվենք, թուրքերենի բոլոր բայական ձևերի ընդհանուր գումարը կլինի 64.200,*

Այս բոլորը կարող են ունենալ հարցական ձև, որ կազմվում է mə *կամ* mi *մասնիկը հարապրելով կամ ներմուծելով բայական ձևի մեջ. օրինակ՝* aldə́m mə *առի՞ արդյոք,* alməš-mə yəm *առել եմ արդյոք։ Ուր որ բայական ձևը ըստ ինքյան չպիտի վերցներ հարցական, գարձյալ առանում է* mi, *որ այս անգամ գործական իմաստ կունենա. օրինակ՝ «առ» հրամայական* ál mə *նշանակում է «ինչպես կարելի է ասել առ»։*

Ավելի բարդ ու կնճռոտ կազմվածյան ունի բայը ամերիկյան լեզուների մեջ։ Այստեղ բայը վերցնում է բազմաթիվ նախամասնիկներ գործողության տեղը, դիրքը, անձը և զանազան պայմանները որոշելու համար. ներա է առնում նաև դերանունը ուղ. և հլց. հոլովներով (ենթական և սեռի խնդիրը). օրինակ՝

Հուպա լեզվով (Boas, Handbook I, *էջ 111*)։
xanaisdīyade' „if the comes back up" *կազմված է այսպես՝*

xa- *գործողությունը կատարված է դեպի վեր բլրի կողմից*
nā- *առասկական, որովհետև երկրորդ անգամ է կատարվել*
is- *հողի երեսի վրա կատարված է*
s- *ցույց է տալիս, որ գործողը երրորդ դեմք է. սրիշ մասնիկ չլինելը ցույց է տալիս, որ այդ երրորդ դեմքը եզակի է և ոչ հոգնակի*
dī- *նույնպես առասկական է.*
ya- *արմատն է (շարժել, գալ են)*
de- *ցույց է տալիս ապառնին։*

Այս լեզվի մեջ բայը կարող է առանձնալ յոթ նախամասնիկ, իսկ արմատից հետո էլ մի կամ մի քանի հետամասնիկ։ Հետամասնիկները ցույց են տալիս ժամանակը (ներկա. ապ. սովոր. են) սեռոգությունը և հավանական լինելը, իսկ նախամասնիկները՝ ուղղությունը տարածության մեջ, եղանակը, պատճառը, կրկնված է թե չէ, շարունակվում է, սկսում թե վերջացած է, նաև թիվն ու դեմքը։ Գործողության կատարման եղանակի համար երեք ձև կա. եթե նոր է սկսում, դնում է արմատի վրա w *նախամասնիկը. դնում են* s՝ *եթե շարունակվում է և* n՝ *եթե վերջացել է (անդ, էջ 119)*

Մի սրիշ օրինակ ամերիկյան tlingit *լեզվից.*
xačqaxâwūsîn *ես հարցաքննեցի նրան*
(xa *ես,* č *առասկական,* qa «*բերան*» *մասնիկ է,* xa *դերանուն ես, որ մտել է բայի մեջ,* wu *բայական մասնիկ.* sîn *արմատը)*
huxačqawūsîn *նա հարցաքննեց ինձ*
(hu *նա,* xač *ես հայցականի առասկականը՝ իբր սեռի խնդիր) են* (Boas, Handbook, I, 171)։

Շատ դժվար է խոնարհումը էսկիմոսներենում. նախ բայը չորս ծավդության ունի, (Boas, Handbook, I, 1031), *հետո ներմարմնում*

են դերանունները (ես քեզ, դու ինձ, նա ինձ, նա նրան, դուք մեզ)՝ հզ. և հգ. չորս! դեմք (չորրորդը հաշվելով ինքը), որոնք իրենց զանազան միավորումներով կազմում են 48 ձև (անդ, էջ 1034), և այս բոլորը ունեն 12 եղանակ (անդ, էջ 1036—45):

Խոնարհման շատ բարդ մի ձև ներկայացնում է նաև ամերիկյան առևտուր լեզուն, ինչպես գտնում ենք «ավագ սարկավագ» Մակդոնալդի A grammar of the Tukudh language աշխատության մեջ (London, 1911): Այստեղ, էջ 16—74 մեջ են բերված 80 բայի խոնարհման ձևերը՝ թե դրական և թե ժխտական: Դժբախտաբար «ավագ սարկավագ» հեղինակը ոչ մի կանոն, ո՛չ մի բացատրություն չի տալիս դրանց կազմության համար: Ես էլ, որքան աշխատեցի, չկարողացա թափանցել այդ բայերի խոնարհման ներքին կազմության մեջ:

Դնում եմ ստորև մի քանի տիպական օրինակ այդ բայերից

1) Ծիծաղել

ներկա

հզ. Ա.	ihtla	*երկ.*	ititla	*հգ.*	zyunititla
Բ	nyitla		otla		zyunotla
Գ	utla		gutla		zyungutla

անցյալ

հզ. Ա.	itla	*երկ.*	itutla	*հգ.*	zyunitutla
Բ	jtla		ohtla		zyunohtla
Գ	intla		gjntla		syungjntla

ապառնի

հզ. Ա.	tihtla	*երկ.*	tititla	*հգ.*	zyuntititla
Բ	tjntla		totla		zyuntotla
Գ	tetla		gitetla		zyungitetla

2) Քունը տանել (to be sleepy)

ներկա

հզ. Ա.	vvakhsittročilči	*երկ.*	vvakhnyiwhottroočilči		
Բ	vvakhnyittroočilči		vvakhnyiwhottroočilči		
Գ	vvakhyittroočilči		vvakhkotroočilči		
հգ. Ա.	vvakhzyunnyiwhottroočilči				
Բ	vvakhzyunnyiwhottroočilči				
Գ	vvakhzyunkottroočilči				

ապառնի

հզ. Ա.	vvakhsittrotutatshi	*երկ.*	vvakhniyiwhottrootutatshi		
Բ	vvakhnyittrootutatshi		vvakhnyiwhottrootutatshi		
Գ	vvakhyittrootutatshi		vvakhkottrootutatshi		
հգ. Ա.	vvakhzyunnyiwhottrootutatshi				
Բ	vvakhzyunnyiwhottrootutatshi				
Գ	vvakhzyunkotrootutashi				

3) Վազել

ներկա

հզ. Ա.	ullkul	*երկ.*	akul	*հգ.*	kulatah
Բ	nyąkul		okul		kulotah
Գ	akul		gakul		kulgata

անցյալ

հզ. Ա.	nelkyik	*երկ.*	nyakyik	*հգ.*	kulnyačil
Բ	nyąkyik		nokyik		kulnočil
Գ	ąkyik		gąkyik		kulginyačil

ապառնի

հզ. Ա.	tulkul	*երկ.*	takul	*հգ.*	kultatah
Բ	tąkul		tokul		kultotah
Գ	takul		gutakul		kulgutatah

Ուշադիր ընթերցողը նկատեց անշուշտ մի քանի կանոններ. ինչպես՝

1. Հոդնակին կազմվում է երկակիից՝ ավելացնելով սրա սկիզբը zyun—. *բայց ամեն տեղ այս օրենքը չի պահվում. ինչպես, օրինակ՝ երրորդ բայի մեջ:*

2. Ապառնին կազմվում է ներկայի վրա ավելացնելով t *նախամասնիկը, որ ածանցական բայերի մեջ դառնում է միջամասնիկ:*

3. Դեմք որոշող նախամասնիկներն են. ա si, բ nyi, *հգ.* գ kot, *որոնք ներկայացնում են դերանունները. համմ. էջ 12՝*

հզ. Ա. si, բ. *սաաց.* nyit
հգ. Գ սաաց. kotsun *են:*

Սակայն այս կանոնն էլ պահպանված չէ ամեն տեղ, ինչպես կայց է տալիս «վազել» բայի խոնարհումը:

Այս լեզվի երկար երկար բառերը տեսել ենք արդեն հատկապես թվականների մեջ, օրինակ «ինը» լինում է

vunčut'nukozukdhityin.

Խոնարհման մեջ էլ կան այսպիսի երկար ձևեր. համա, «բռնը տանել» բայի խոնարհումը, ուր ապ. հգ. ա դեմքը 26 հնչյունից է բաղկացած: Այսքան երկար ձևերը ցույց են տալիս սակայն, որ խոնարհումը այս լեզվում առարկայական է և ոչ միայն ենթակա դերանունը, սեռի ինդիր դերանունը, թիվ և ժամանակ ցույց տվող մասնիկները, այլև ամբողջ գոյական ինդիրներ կարող են մտած լինել բայաձևերի մեջ:

Այժմ ամփոփենք հնդեվրոպական նախալեզվի շրջանում և տանք նրա բայական եզրերի թվումը:

Գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ կար երկու տեսակ բուն. ներկայի բուն և աորիստի բուն: Ներկայի բունը տալիս էր՝

1. Սահմանական բուն ներկա
2. Անկատար
3. Հրամայական
4. Ստորադասական
5. Ըղձական:

Աորիստի բունը տալիս էր՝

1. Բուն աորիստ
2. Հրամայական
3. Ստորադասական
4. Ըղձական:

Օրինակ՝ վեդայական հնդկերենում «լսել» արմատից ունենք՝ Ներկա çṛṇóti «լսում է», անկ. áçṛṇot «լսում էր», հրամ. çṛṇudhi «լսիր», ստոր. çṛṇávat «լսիցէ», ըղձական çṛṇuyát «լսէր», աորիստ áçrot «լսեց», հրամ. çrudhi «լսիր», ստոր. çrávat «լսիցէ», ըղձ. çrūyát «լսէր»:

Եթե առնենք ավելի մեծ թիվը (հինգ եզր), և բազմապատկենք իննով (առաջին կամ երկրորդ կարգի վերջավորությամբ երեք եզակի, երեք երկակի և երեք հոգնակի դեմք), կստանանք 45: Եթե բայը ունենա թե՛ ներգործական և թե՛ կրավորական, այս թիվը կկրկնվի և կլինի 90: Չենք հաշվում դեռ բնավոր և անբուն ձևերի տարբերությունը:

Բայական բների կազմության մասին խոսելիս, մենք տեսանք դոնի 15 բուն և ասացինք, որ դրանք մեզ հայտնի եզածներն են

միայն և դեռ կան ուրիշ բներ, որոնք հետո կորել են, կամ միայն մի լեզվի մեջ պահված լինելով՝ հաշվի չենք առնում: Թողնում ենք նաև այն բայական ձևերը, որոնք նույնպես մի քանի լեզուների ընդհանուր են: Բայց եթե ընդունենք այս նախազգալն թիվը (15) և բազմապատկենք 90-ով, կունենանք մի արմատի բոլոր բայական ձևերի ընդհանուր գումարը՝ 1350:

Այս թիվը սոսկալի չէ՝ համեմատած նախորդների հետ, բայց եթե նկատի ունենանք նրանց կազմության եղանակը, կտեսնենք, թե ինչպիսի կնճռոտ գրություն ուներ բայի խոնարհումը հնդեվրոպական նախալեզվի մեջ:

2. ԲԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԶԱՆԱԶԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԵՋ

Նախորդ հատվածներում քանիցս անգամ առիթ ունեցանք հիշելու զանազան տեսակի բայեր, ինչպես՝ անվանական, անցողական, հաճախական, կրկնավոր, բացատական են: Մեր լեզուների համար սրանք շատ կարևոր ձևեր լինելով՝ սրանց մասին պիտի նվիրենք առանձին հատվածներ:

Բայց կան լեզուներ, որոնք այս բոլորից դուրս անին նաև այնպիսի ձևեր, որ մենք արտահայտում ենք կամ օժանդակ մի նախադասությամբ (ինչպես՝ քիչ մնաց որ..., եթե այս ինչ բանը պատահի, այն ժամանակ..., վախենում եմ որ չլինի թե..., մտադիր էի որ...) և կամ օժանդակ մի բառով (ինչպես՝ մինչև վերջը, կամաց կամաց, ամբողջապես, շարունակ, անտարակույս են): Բոլոր այս կարգի բացատրությունների համար այդ լեզուները ստեղծել են առանձին մասնիկներ, որոնք ավելացնելով բայարմատի վրա կազմում են բայերի նորանոր տեսակներ: Ֆիննական կոմի-պերմյերեն լեզուն ունի ութ տեսակ այդպիսի բայ, ինչպես՝ անել, մի քիչ անել, հաճախ-անել, ոչ շատ ավելի անել, շարունակ անել, ստիպված անել, իբրև վոխատարձաբար անել են (Майшев, էջ 69):

Այսպիսի բայական ձևերով հարուստ լեզուներ են ճապոներենը, ամերիկյան կարիբներ լեզուն, արխազերենը, հինդուստանին, կաբարդիներենը, ավարերենը են: Եթովպական գալլա լեզուն ունի 12 տեսակ բայ, արաբերենը 15 տեսակ բայ ունի, իսկ սրանք մինչև 20 և ավելի բայական տեսակներ ունեն: Ուալարը բայական ձևերի թիվը ավարերենում գնում է 114:

Բաղելով այս բոլորից այն, ինչ որ անհրաժեշտ է մեզ համար և հետաքրքիր, տալիս ենք հետևյալ ցուցակը:

1. Ակամայական. *ցույց է տալիս, որ ենթական կատարում է այդ գործողությունը առանց մասնավոր դիտումի, ակամա կերպով և մեկ ուրիշի համար. գտնվում է օթյիհերերո լեզվի մեջ:*

2. Ամբողջական (totalitif). *ցույց է տալիս ամբողջը անել կամ կատարել. ինչպես՝ «ամբողջը ծախել, բոլորը ուտել» են. գտնվում է ամերիկյան կաբրիեր լեզվում* (Morice, 386):

Ամերիկյան անունս լեզվում կազմվում է u *նախամասնիկով, որ* uste *«վերջացնել» բայից կրճատումով է առացվել. օր.* ūvlo *«սրբել»—*u—ūvlo *«կատարելապես սրբել»* (Haumonté, 149):

3. Այլական. *ցույց է տալիս, թե ենթական գործողությունը կատարում է ո՛չ թե իր, այլ մի ուրիշի համար. ինչպես «նա սպանեց մի թռչուն», բայց ո՛չ թե իր համար, այլ ինձ համար կամ քեզ համար են: Գտնվում է օթյիհերերո և օշինդոնդա լեզուներում և ուրիշ շատ լեզուներում: Կազմվում է բայարմատի վրա ավելացնելով զանազան նախադրություններ, այս պատճառով էլ դիտումները զանազան անուններով են կոչում: Օրինակ՝ Կրեյտրբրին (էջ 116) նույնը գտնելով Աֆրիկյան* lu—ganda *լեզվում, կոչում է* propositional, *Կոցը (էջ 28) նույնը կոչում է* appellatif *և գտնում է Աֆրիկյան խոսու լեզվում. ինչպես՝*

teta	*խոսել,*	tetia	*մեկի համար խոսել*
gwa	*ընկնել,*	gwia	*մեկի առաջ ընկնել*
eta	*բերել*	etia	*մեկի համար բերել*

Ավգուստինին (էջ 57) գտնելով սուկումա (բանսու) լեզվի մեջ, կոչում է angewandte Verbalform *(դրական խնդիրը բայի մեջ մուծած ձևն է):*

Դոկը (էջ 131) գտնում է զուլու լեզվի մեջ և կոչում է applied. *ցույց է տալիս մի բան անել մի ուրիշի համար. մասնիկն է* —ela. *օրինակ՝*

ukut'unga	ingubo	*կարել մի զգեստ*
ukumt'ungela unina	ingubo	*կարել մի զգեստ իր մոր համար:*

4. Անկարողական. *բացառականի մի տեսակն է կամ կարողականի հակառակը. ցույց է տալիս, թե ենթական անկարող է անել այդ բանը. գտնվում է սահներեն լեզվի մեջ և կազմվում է* deš *մասնիկով, ինչպես՝* deš xvide mi čažs *«չեմ կարող ձին արտաղ բերել»* (Dirr, Einführ, 124):

5. Անհետական բայ (dispersive). *ցույց է տալիս անհետացում, աներևութացում. գտնվում է զուլու լեզվի մեջ. ինչպես՝ ցրվել, հեռավորության մեջ անհետանալ, բոլորովին մեռնել են* (Doke, 142):

6. Անմիջական. *ցույց է տալիս մի գործողություն, որ անմիջապես կապված է միևնույն ժամանակ տեղի ունեցող մի ուրիշ գլխավոր գործողության հետ: Գտնվում է սահիլի լեզվում, ուր կազմվում է* ki *մասնիկով. ինչպես՝* ni ki piga *հենց որ զարնում էի կամ զարկի...* (Seidel, suaheli, *էջ 73):*

7. Անտարակուսական. *ցույց է տալիս, որ անտարակույս այնպես պիտի լիներ, եթե ասվինչ բանը պատահեր: Օրինակ՝ «եթե մի ժամ էլ ուշանայի, գնացքին չպիտի հասնեի» (ասվինքն անշուշտ չպիտի հասնեի): Այլ է հավանական ձևը՝ որ տես քիչ հետո: Գտնվում է հոտենտոտերենում* (Plaut, 109):

8. Առավելական (augmentative). *կա աֆրիկյան սեսուտո (բանտու) լեզվի մեջ. օրինակ՝* hō ahlama *«բերանը բանալ», որից* hō ahlamōlōha *«բերանը լայն բանալ»,* (Iacottet, 83) *—բայց սա մեզ համար սասակական է և անտեսում է միայն տարբեր:*

9. Աստիճանական (gradualitif). *ցույց է տալիս հետզհետե մի բան անել. ինչպես՝ թվով աճել, տարածել, ծավալել են. սրա նման է հատաջատավական ձևը (տես ատրճ). բայց այս երկուսը կազմությամբ տարբեր են. գտնվում են ամերիկյան կաբրիեր լեզվի մեջ* (Morice, *էջ 338):*

10 Արտոնական (acquisitif). *ցույց է տալիս, որ ենթական արտոնության կամ թույլտվության է ստացել անելու ասվինչ գործողությունը: Գտնվում է հինդուստանի լեզվի մեջ, ուր կազմվում է* pāna *«դանել» բայով: Օրինակ՝*—ānā *«գալ»*—ānepānā *«գալու թույլտվություն ստանալ»: Հետաքրքիր է շփոթել այս ձևը թույլատրական* (permissif) *բայի հետ, որ ընդհակառակը նշանակում է «թույլտվություն կամ արտոնություն տալ, թույլատրել»:*

11. Ավարտական (terminatif, complectif *կամ* complétif). *ցույց է տալիս գործողությունը մինչև վերջը կատարել վերջացնելը կամ դադար տալ, վերջացնել: Գտնվում է հինդուստանի, արխազ, կաբարդին և կաբրիեր լեզվով՝ լեզուների մեջ: Օրինակ՝ արխազ. ūə «գրել», որից* j *(ձ) մասնիկով՝* izūjueit *«գրում եմ մինչև վերջը», կաբրիեր լեզվով՝ «երգելը վերջացնել, տան կատարը ծածկելը վերջացնել»* (Morice, *էջ 339), հինդ. likh *«գրել», որից* čukna *«վերջացնել» բայով* likh-čukna *«գրելը վերջացնել»: Ամերի-*

կյան տենսա լեզվով նույնը կազմվում է lu-նախամասնիկով, որ lugni «վերջացնել» բայի կրճատ ձևն է. օրինակ՝ lu-nuho «վերջացնել ապրելը = մեռնել»:

Կոնգոյի չիլուբա լեզվում կա մի բայ, որ ուսումնասիրողը (Gabriel, 200) կոչում է répétitif և complétif միանգամայն. այս բայը տալիս է գործողությունը կրկնելու և մինչև վերջը հասցնելու գաղափարը: Կազմվում է ulula մասնիկով. ինչպես՝ kulumba «հիվել»—kulumbulula «հիվել և նորից հիվել, մինչև ապառվելը».

kukosa «կարել»—kukosolala «նորից կարատել և վերածել մանր մասերի»:

12. Բացառողական (exceptionalitif). ցույց է տալիս, որ այս ինչ գործողությունը կատարված չէ. գտնվում է ամերիկյան կարբիեր լեզվի մեջ. օրինակ «թողնել առանց ուտելիքի, թողնել առանց խորովելու» են (Morice, էջ 367): Այլ է դրկողականը:

13. Գալական բայ.—ցույց է տալիս, որ ներգործյան գալիս է այս ինչ գործողությունը կատարելու. գտնվում է աֆրիկյան վոլոֆ լեզվում և կազմվում է si մասնիկով. օրինակ՝ rot «ջուր քաշել». rotsi «ջուր քաշելու գալ». dyel «առնել», dyelsi «մի բան առնելու գալ» (Rombaud, էջ 40):

14. Գնացողական. ցույց է տալիս, որ մեկը գնում է այս ինչ բանը անելու համար. շատ սովորական է մոնղոլական դագուր բարբառում և կազմում է -ïçi «երթալ» բայով, որ այստեղ առնված է իբրև մասնիկ. օրինակ՝ awiçi «առնելու երթալ», k'ürïçi «երթալ որպեսզի գա» (Поппе, Дагурск. нареч. էջ 160):

15. Գործադրական (applicatif). արտահայտում է բայական մի գործողություն վերաբերմամբ մի առարկայի, որ ուրիշ կերպ չէր կարող գործադրվել. օրինակ՝ «վերցրեք փայտը, որպեսզի օձը ներսից սատկեցնենք»: Գտնվում է աֆրիկյան չիչևա լեզվում (Watkins, 75):

Applicatif անունով է կոչում Գարրիելը (էջ 117) կոնգոյի չիլուբա (բանտու) լեզվի այն բայերը, որոնք մեր մեջ կազմվում են նախադրությունների կամ ուրիշ բառերով, իսկ այս չիլուբա լեզվում բաղմագան մասնիկներով, որոնց իմաստն էլ շատ դանադան է. օրինակ՝ մենք կարող ենք ասել՝

Աշխատում եմ հորս համար:
Դուք երգում եք ի պատիվ հայրենյաց:
Խոսեցեք նրան ինձ ի նպաստ:
Մայլը անցավ այստեղով, են:

Այս բոլորը կազմվում են այս լեզվում տարբեր մասնիկներով, որոնք մտնում են բայի մեջ: Այսքան բազմագան մասնիկների գոյությունն է եղել պատճառ, որ չիլուբա լեզվում, ինչպես և ուրիշ նման լեզուներում, նախադրությունների գոյությունը ավելորդ է դարձել:

applicatif բայը կարող է ունենալ երկու խնդիր. օրինակ՝ Նա մորթեց մի հավ՝ ինձ համար:

Ըստ Շպիլիներբերգի (էջ 58) applicative (նույնը ան'ս այլական) բայ կա նաև աֆրիկյան բո կամ բոնկոն լեզվում և ցույց է տալիս, թե մի գործողությունը կատարվում է մեկի կամ մի բանի համար, օրինակ՝ «տար ինձ աթոռը նստելու համար», «ես խոսում եմ մեկի մասին»: Կա նաև սրա անցողական ձևը. ինչպես՝ «մեկի վրա ծիծաղել տալ» (անդ. 64):

16. Գործակցական (cooperatif). ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է մի ուրիշ անձի հետ միասին. (ամանք կոչում են sociative «ընկերական» կամ collective). գտնվում է արխազերեն լեզվի մեջ, ուր կազմվում է -cc-մասնիկով. ինչպես՝ i-s-f-u-eit «ես ուտում եմ այն», որից i-u-ccə-s-f-u-eit «Քեզ հետ եմ ուտում»: Մոնղոլական բուրյաթ լեզվում գործակցականը կազմվում է -lse մասնիկով. ինչպես՝ tatanam «քաշել», tatalsanam միասին քաշել (Castrén, էջ 35):

Ընկերական կամ ընկերակցական (comitatif) կոչվում է այն բայը, որ ցույց է տալիս, թե գործողությունը կատարվում է մի բանի կամ մի մարդու հետ: Գտնվում է ամերիկյան տասպի լեզվում և կազմվում է ro կամ no մասնիկով. ինչպես՝

a-ike «մտնում եմ». a-ro-ike «մտնում եմ. հետս էլ մի այլ բան».

a-â «կանգնած եմ». a-no-â «կանգնած եմ մի ուրիշ մարդու կամ մի ուրիշ բանի հետ».

aker «գնում եմ», a-ro-ker xe r-aira «ես գնում եմ իմ որդու հետ». a-ro-ker aóba «գնում եմ խալաթով» (L. Adam, էջ 48): Նույնը կա նաև մանջուրերեն լեզվում և կազմվում է ča մասնիկով. օրինակ՝ amha-ča-me «միասին քնել» (L. Adam, 47):

Նույնը կա նաև ամերիկյան cri լեզվի մեջ (կոչված է verbe d'accompagnement), կազմվում է witži մասնիկով. օրինակ՝ ni witži—miyawatamaw «ես ուրախանում եմ նրա հետ», witžimeti-wemew «խաղում է սրա հետ», ki witži-nipahimaw «դու նրան ըսպասում ես նրա հետ ընկերակցությամբ» (Lacombe, էջ 136):

Գործակցական (cooperativa) *բայ կա նաև մոնղոլերեն լեզվի մեջ և ցույց է տալիս միասին կատարված մի բան. կազմվում է* lisa, lise, lda, lde *մասնիկներով. օրինակ՝ գնալ-ուրիշ մեկի հետ միասին գնալ, գալ-միասին գալ, սիրել-իրար սիրել, խոսել-խոսակցել* (Schmidt, 78)։

17. Գործիական (instrumental). *ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է այս ինչ բանով. գոնվում է աբխազերեն լեզվի մեջ և կազմվում է* la *մասնիկով, որ արդեն գործիականի մասնիկն է. ինչպես՝ yàlazüueit «ներանով այն գրում եմ»։*

18. Գործողական (factitif). *կա օրինակ հնդկական մարաթի լեզվում. ինչպես՝ նրան խոզավոր դարձրեց. պատը սպիտակացրեց... սրանք մենք համարում ենք անցողական (պատճառական), բայց պատճառականը համարվում է ուրիշի ձևերով կատարված, իսկ սա իր ձևերով արածն է (* Seddon, 52).

19. Նեբադրական. *ցույց է տալիս չատուգված կամ չհավատալու մի գործողություն. շատ սովորական է թուրքերենի մեջ, ուր կազմվում է* imiš «եղել է. եղեր» *դերբայը ավելացնելով բան բայի վրա. օրինակ՝* gider imiš «կերթա եղեր. ասում են, թե գնում է»։ Նույնը կա և ուզբեկերենում, *բայց կազմվում է ուրիշ ձևով. ինչպես* čekəb dər «գարս է եկել (իբր թե)»։

20. Երևութական (simulatif). *ցույց է տալիս, որ գործողությունը թվում է, թե կատարվում է. գոնվում է ճապոներենում, չուվաշերենում և ուզբեկերենում են։ Օրինակ՝ ուզբեկ.* išlägändäy körinädır «կարծես թե աշխատում է, այնպես է երևում, որ աշխատում է», *չուվաշ.* kalansʸi «իբր թե խոսած», ilensʸi «իբր թե առած», kalamansʸi «իբր թե չխոսած» (Ашмаринъ, Матер. 326), *ճապոն.* kakurašii «թվում է, թե գրում է»։ Այսպես են նաև ճապոներեն հետևյալ դարձվածները. «Անձրև չի գալիս, բայց այնպես է երևում, որ կարծես անձրևել է ուզում» կամ նույնիսկ «հիմա՛ ես» (որովհետև այդ ասողը գիտե, թե նա հիմար չէ, այլ միայն այնպես է թվում)։ Plaut, 116).

21. Երկնչական (timoritif). *ցույց է տալիս վախից արված մի գործողություն. գոնվում է ամերիկյան կարիբներ լեզվի մեջ. օրինակ՝ «վախից հետ քաշվել, վախից մի բան անդը դնել»* (Morice, 366):

22. Զարմացական բայ (verba admirativa). *ցույց է տալիս անսպասելի մի բան. գոնվում է աֆրիկյան բոնգու լեզվում և կազմվում է* ma *մասնիկով. օրինակ՝*

gine «գալ»-gine-ma-ar «անսպասելի կերպով շատ գալ կամ նաև շատ ուշ գալ» (Hanke, 20)։

23. Զբաղական բայ. *գոնվում է աֆրիկյան վոլոֆ լեզվում և նշանակում է «ժամանակը անց կացնել՝ անելով այս ինչ գործը». կազմվում է* antu *մասնիկով. օրինակ՝* fo «խաղալ», foantu «ժամանակը խաղալով անցկացնել» (Rambaud, էջ 39)։

24. Զրկողական (privatif). *ցույց է տալիս մի բանի բացակայությունը կամ նրանից զրկելը. գոնվում է ամերիկյան կարիբներ լեզվի մեջ. օրինակ՝ բացակայել, չնչել, անհետանալ, կտրանալ (տեսողությունը կորցնել), գժվել (խելքը կորցնել) են* (Morice, 289) : *Սրա հետ համմտ. բացատողականը։*

25. Թույլատրական (permissif). *ցույց է տալիս, որ թույլ է տրվում այս ինչ գործողությունը կատարելու։ Գոնվում է հինդուստանի լեզվում, ուր կազմվում է* denā «տալ» *բայի հարադրությամբ, ինչպես՝* bolne denā «խոսել թույլատրել»։ Կա նաև հնդկական գարհվալի լեզվում (Grierson, էջ 297)։ Կա նաև հնդկական մարաթի լեզվում։

Գոնվում է նաև ամերիկյան tupi լեզվում և կազմվում է նախամասնիկով. *ինչպես՝* mboe «ուսուցանել» *բայից՝*

t-a-mboe *Ես ինձ թույլ տրվի սովորեցնեմ*
t-ere-» » *քեզ* » » *սովորեցնես*
t-o » » *նրան* » » *սովորեցնի։*

(L. Adam, էջ 54)։

Ավստրալիայի ավարակալ լեզուն էլ ունի բայական այս ձևը իր բոլոր ժամանակներով. օրինակ՝ թույլ եմ տալիս որ մնա, թույլ պիտի տամ, որ մնա, թույլ պիտի տայի, որ մնա են (Thelkeld, էջ 30)։

26. Ժամանակավոր. *ցույց է տալիս ժամանակավոր (և ոչ տևողական) մի վիճակ. օրինակ՝ գոնվում է արաբերենում, ուր կազմվում է* fa'ila فَعِلَ *ձևով։*

27. Ինքնաբերական. *ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է ինքնին կամ ինքնաբերաբար՝ առանց ուրիշի միջամտության։ Գոնվում է մելանեզյան լեզուների մեջ, օրինակ՝* ul «կապը բաց անել», tava-ul «կապը ինքնին բացվել»։

28. Կատարելական (perfective). *ցույց է տալիս, որ գործողությունը կատարելության է հասցրած, բոլորովին ավարտված. գոնվում է գուրա լեզվում. ինչպես՝*

հնչել մի եղանակ—երգել
տեսնել—հետը քաղցրությամբ վարվել
ճանաչել—մանրամասն ճանաչել
կապել—արդելքի տակ դնել
բռնել—բռնած պահել։

(Doke, 143);

29. Կարողական (potential). *ցույց է տալիս, որ ենթական կարող կամ ի վիճակի է այս գործողությունը կատարելու։ Գործվում է շատ լեզուների մեջ. ինչպես՝ ճապոներեն, թուրքերեն, թաթարերեն, չուվաշերեն, հինդուստաներեն, մարաթի են։ Թուրքերենի մեջ կազմվում է* bil-mek *«գիտենալ», թաթարերենում* almak *«առնել», ճապոներենում* eru *«առանալ»* (Plaut, 118. 220) *և հինդուստաներեն՝* saknā *«կարենալ» բայով. ինչպես՝ թրք.* vara-bilirm *= թթր.* bara alam *կամ միացված ձևով՝* baralam *«կարող եմ երթալ». հինդ.* bol-saknā *«կարենալ խոսել», ǰā-saknā «կարենալ երթալ»։ Ամերիկյան անտառ լեզվով կարողականը կազմվում է* vo *նախամասնիկով, որ* vove *«կարենալ» բայի կրճատումն է. օրինակ* üvlo *«սիրել»—*vo-üvlo *«սիրելու ընդունակ լինել»* (Haumonté, 24):

Բիրմաներենում բայի կարողական եղանակը կազմվում է արմատին կցելով hnoing *մասնիկը և անենում է բայի բոլոր ժամանակները. ներկ. կարող եմ գնալ, անկ. կարող էի գնալ, կար. կարողացա գնալ, ապաց. պիտի կարողանամ գնալ են* (Latter, 132)։

Թուրքական ձևը ընդհանուր է նաև ուրիշ ալթայական լեզուների. ինչպես՝ կումանք. bolaman *«գիտեմ» (որ է կարող եմ.* Дмитриев, 95). *բայց տաճկերենում կա նաև նույնի առանձին բացառական ձևը, որ կարող ենք կոչել անկարողական, ինչպես՝* yaz-ar-əm *«գրում եմ»,* yaza-bilirim *«կարող եմ գրել»,* yaza-man *«չեմ կարող գրել»,* oqur-um *«կարդում եմ»,* oquya-bilir-im *«կարող եմ կարդալ»* oquyá-man *«անկարող եմ կարդալ»։ Սխալ է կազմել բացառական ձևը՝* yaz-a-bilmem *«չեմ կարող գրել»,* oquya-bilmen *«չեմ կարող կարդալ»։*

Թրքական շատ լեզվում կա կարողականի մի ձև, որ նշում է հետագայում հավանաբար կատարվելու մի գործողությունն. մասնիկն է gedig *(իր նմաններով). օրինակ՝*

kel-gedig *«հավանաբար կգա»,* al-gadəg *«կարող է լինել, որ առնեն». սրա բացառականն էլ՝*

al-badəg *«հավանական չէ, որ վերցնեն։*

(Дыренкова, 189)

Կարողականի մի այլ ձևը կա, որ գոյանում է աֆրիկյան խառը լեզվի մեջ և որ քննիչը կոչում է չեզոք-կրավորական (neutropassive)։ Երկուսի տարբերությունը այն է, որ միևչդեռ կարողականը ենթակայի կարողությունը կամ հնարավորությունն է ցույց տալիս, չեզոք-կրավորականը, ընդհակառակը, ենթարկված առարկայի կարելիությունը կամ գործողության հնարավոր լինելն է ցույց տալիս։ Օրինակ՝ նույն խառը լեզվով՝

la	*ուտել*	lika	*ուտելի լինել*
kaa	*նստել*	kaika	*կարելի է նստել*
vona	*տեսնել*	voneka	*տեսանելի լինել*
manya	*գիտենալ*	manyika	*ծանոթ լինել։*

Այս բայերը կազմվում են ika, eka *մասնիկով* (Kotz, 32)։ *Հայերենում նույնը լինում է կրավորականով, ինչպես՝ կտավի, կըհասկացվի, կտեսնվի են։*

30. Հակադրական (inversif կամ reversif). *ցույց է տալիս եղած գործողության հակառակը կատարելը* (Marconnès 192, *այս ձևը կոչում է* destructive). *կա բանտու լեզուների մեջ. ինչպես՝* roala *«գլխի վրայի բեռը ցած առնել»,* an-ika *«տաքի մեջ չորացնել»-*an-ua-*«տաքը գրած բանը վերցնել»։ Կա նաև սուկումա (բանտու) լեզվով* (Augustiny, 58), *զուլա լեզվում* (Doke, 144), *ջիդդի (բանտու) լեզվում* (Raum, 107). *Սնաուտա (բանտու) լեզվով* huna *«կապել»,* hun-olla *«կապը քանդել»,* t'iba *«ժածկել»—*t'ib-olla *«ժածկածը բանալ»* (Beyer, 40)։ *Սրան նման է հետադարձը։ Նման բայ կա նաև անգլերենում. ինչպես՝* cover-uncover *«ժածկը բանալ»,* bind-unbind *«կապածը քանդել»,* tie *«կապել»—*untie *«կապածը բաց անել» և այլն։*

Հակադրական բայեր կան աֆրիկյան տարատա լեզվի մեջ. ինչպես՝ հագած շորը հանել, դրած գլխարկը հանել, սմբակին գամած պայտը հանել են (Westermann, *էջ 51)։

Նույնը նաև աֆրիկյան վոլոֆ լեզվում, ուր մասնիկն է i, *որ դրվում է բայի վերջը. ինչպես* sül *«թաղել»,* süli *թաղածը հանել»,* ub *«փակել»,* ubi *«փակածը բանալ»,* sum *«հագցնել»,* sumi *«մեկի հագուստները հանել»* (Rambaud, 40)։

31. Հարկադրական, *որը ցույց է տալիս մեկին հարկադրել անելու այս ինչ գործողությունը. գոյանում է կարաբդին լեզվի մեջ, ուր կազմվում է* ǧa *նախամասնիկով։ Համմա. մեր և թրք. պարտավորական եղանակը, որ ցույց է տալիս իր վրա հարկադրանք.*

ինչպես՝ երթալու եմ—թրք. gitmeli im *ևն. կամ ամերիկյան տեղական լեզվով* te *նախամասնիկով* wata *«տանել» բայից՝* ta-i-wata-r-wi *«դու պարտավոր ես տանել»* (Haumonté, *էջ 24*)։

Նույնը ստիպողական (verbe compulsif) *անունով գոնում ենք ամերիկյան* tupi *լեզվում. կազմվում է* uka *մասնիկով, որ նշանակում է «ստիպել մի բան անելու». օրինակ՝* a-j-apo *«ես անում եմ»,* a-j-apo-uka *«ես ստիպում եմ նրան անել»,* a-juka -uka *«ես ստիպում եմ ստանել»* (L. Adam, *էջ 50*).

32. Հավանական. ցույց է տալիս, որ գործողությունը հավանաբար պիտի կատարվի. գոնվում է ճապոներենում, ուր կազմվում է des, no des *«գոնվել, կա, է» օժանդակ բայով. օրինակ՝ «ձեզ մի քիչ ուշանալի, գնացքին չպիտի հասնեի (հավանաբար)»։ Սրա ուժեղ ստորճանն է անտարակուսականը, որ ցույց է տալիս, թե անշուշտ, անտարակույս այնպես պիտի լիներ* (Plaut, 109)։

Կիրգիզներեն լեզվում կա բայական մի ձև, որ թուլացնում է նշանակությունը, գործողությունը հավանական է դարձնում և առոգությունը կասկածելի. կազմվում է b *մասնիկով. ինչպես՝*

ol keldə *եկավ (հաստատ).*
ol kelbtə *երևի եկավ*
ol karabte *երևի նա նայեց։*

(Шонанов, 79)։

33. Հրաժարական բայ։—Գոնվում է աֆրիկյան վոլոֆ լեզվի մեջ և ցույց է տալիս «չլինել այն բանը երբեք չանել». կազմվում է -atil *հետամասնիկով* (Rambaud, *էջ 40*)։

34 Ձևական բայ.—ցույց է տալիս, որ ենթական ձեռնհաս կամ կեղծում է անել մի բան. գոնվում է աֆրիկյան վոլոֆ լեզվի մեջ և կազմվում է կրկնությամբ և lu *մասնիկով. օրինակ՝* dem *«գնալ»* demdemlu *«այնպես ձևացնել, թե գնալու է». dyoi «լաց լինել»,* dyoidyoi lu *«լալ ձևացնել»* (Rambaud, 40)։

35. Մասնական. ցույց է տալիս ո՛չ լրիվ վիճակ կամ գործողություն. օրինակի համար՝ կա ճապոներենում, ուր կազմվում է koto *«բան» բառով և բայի կրկնությամբ. ինչպես՝ «բառարան ունե՞ք.—ունեմ, բայց հին է»* (Plaut, 117)։ *Նույնը բացատրվում է հայերենում հետևյալ ձևով. «Ունենալը ունեմ, բայց հին է»։*

36. Մերձավորական. ցույց է տալիս մի գործողություն, որ քիչ էր ևս կատարվեր. գոնվում է օրինակ արխազերենում, ուր կազմվում է -uan *մասնիկով. ինչպես՝* i-z-bl-uan *«քիչ էր մնում սպրևի»։*

37. Մշտական (permansif) *և շարունակական* (continuatif), *որոնք քիչ տարբերությամբ նույն են. ցույց են տալիս, որ գործողությունը անդադար շարունակվում է կամ այն վիճակում մնում է ենթական մշտապես, կոչված է նաև* projective. *ուսոի են լավագույն եմ համարում տալ տևողական (ո՛չ տևական, որ ներկայի տևական է և ոչ էլ մշտական). գոնվում են զանազան լեզուների մեջ. այսպես՝ այս ձևը կա աֆրիկյան կարանգա (բանտու) լեզվի մեջ և կազմվում է* ira, irira *մասնիկով, օրինակ՝* gara *«նստել»,* garira, garirira *«նստել երկար և մեկին սպասել»։*

ma *«կանգնել»,* mira, mirira *«կանգնած մնալ և սպասել մեկին»։*

(Marconnès, *էջ 196—7*)։

Ամերիկյան կարիբեր լեզվի մեջ «անդադար աշխատել, առանց դադարի ջրի մեջ մխճրվել» կամ թե «քայլել» շարունակական են. մինչդեռ «մեկնել, ճամբա ելնել» շարունակական չէ (Morice, 337)։ *Հինդուստանի լեզվի մեջ* jānā *«երթալ» և* rahnā *«մնալ» օժանդակ բայերով կազմվում են շարունակական ձևեր. ինչպես՝* bahtā jānā *«խոսելը շարունակել,* weiter sprechen». gāte rahnā rahtā *«շարունակել երգել»։ Օթիլհերերո լեզվում բանալ բայից «բաց մնալ», տեսնել բայից՝ «տեսանելի լինել» և լվալ բայից «մաքուր մնալ» տևական բայեր են։ Ամերիկյան կարիբեր լեզվով «ակնոց դնել աչքին»* (nakę-ezye) *բուսական գործողություն է, մինչդեռ «ակնոց հագնել կամ աչքին ակնոց գործածել»* (nakę-zezya) *տևական գործողություն է։ Այս ձևը ո՛չ թե միայն ներկա ունի, այլ բոլոր ժամանակները* (Morice, 288)։ *Արաբերենում* fa'ula *ձևը (فَعُلَ) ներկայացնում է տևական մի վիճակ, մինչդեռ* fāila *(فَعِلَ) ժամանակավոր է։ Երկուսի տարբերությունը ցույց է տալիս* hasuna *«գեղեցիկ լինել» (տևական) և* ḥazina *«տխրել» (ժամանակավոր երևույթ)։ «Մի բան անդադար, շարունակ անել» ձևը կա նաև կարիբերին լեզվի մեջ։*

38. Մտադրական (intentionnel). *ցույց է տալիս, թե ենթական մտադրություն կամ նպատակ ունի անելու այս ինչ գործողությունը կամ պատրաստում է կատարելու այն։ Գոնվում է օրինակ՝ ուզբեկերենում և արխազերենում. ուզբեկերենում կազմվում է անորոշի վրա դնելով* čə *մասնիկը և խոնարհելով սովորական ձևով։ Օրինակ՝* bar-mak *«գնալ» բայից՝*

bar-mak-čə man *գնալու մտադիր եմ*
" " -čə san " " *ես*
" " -čə " " *է*
" " -čə məz " " *ենք*
" " -čə səz " " *եք*
" " -čə lar " " *են:*

Ալթպես բոլոր ժամանակները (Kissen, Özbek tili, *էջ 136*)։ *Աբխազերենում նույնը կազմվում է* z *կամ* fa *մասնիկով. ինչպես՝*

sarà i-z-ü-up-*fas*-cc-u-eit *գնում եմ գրել*
uarà i-z-ü-up-*fa*-u-cc-u-eit *գնում ես գրել:*

(Dirr, Einf., *էջ 53*)։

39. Մտադրական (ingressif *կամ* intentionalis). *բայի առանձին մի տեսակն է նաև այն, երբ նշվում է, թե մեկը մտադրված է մի բան անել, թեև գործով չի շտապում: Գտնվում է աֆրիկյան դագոմբա (բանտու) լեզվի մեջ* (Fisch, *էջ 29—30*)։ *Նույնը կա նաև աֆրիկյան էվե լեզվում* (Westermann, 66):

40. Հառաջավական (progressif). *ցույց է տալիս մի գործողության հետզհետե կատարել. գտնվում է, օրինակ, ամերիկյան կարրիեր լեզվի մեջ* (Morice, *էջ 317*)։

41. Հետադարձ (abitif). *ցույց է տալիս մի գործողություն՝ որ հետ է կատարվում. կամ հետս, մեկին: Ֆրանսերենում անենք* re- *նախամասնիկով. ինչպես՝* tourner *«դառնալ»—*retourner *«հետ դառնալ», գերմ.* gehen *«գնալ»—*zurückgehen *«հետ գնալ» են: Առանձին բայական ձև ունի ամերիկյան կարրիեր լեզվի մեջ* (Morice, 398):

42. Նվազական *բայ. գտնվում է գալու լեզվի մեջ և ցույց է տալիս մի քիչ անել այդ գործողությունը. կազմվում է բայի կրկնությամբ. ինչպես՝*

geza *«լվալ»*, gezageza *«մի քիչ լվալ»*
bona *«տեսնել»* bonabona *«ինչ-որ մի բան տեսնել»:*
(Doke, 139):

Գտնվում է նաև ամերիկյան սենսա լեզվի մեջ. կազմվում է par- *նախամասնիկով. օրինակ՝* slitla *«քնել»* par-slitla *«մի քիչ քնել, նիրհել»* (Haumonté, 24)։

43. Նվաստական (depreciatif). *ցույց է տալիս ենթակայի նվաստ դրությունը. գտնվում է ամերիկյան կարրիեր լեզվի մեջ.*

Ինչպես՝ «Ես խեղճ ծերությիս գնում եմ. ես խեղճս քալլում եմ» (Morice, 367)։

44. Շոշափական *բայ* (contactive). *ցույց է տալիս դիպչել կամ շոշափել մի բան. գտնվում է գալու լեզվի մեջ. օրինակ՝ ձեռքն առնել (բայց ոչ բռնել), խոցել (բայց ոչ մահացնել), առատին զարնելով փորձել (բայց ոչ ուտել) են:*

45. Չափազանցական (excessif, excess-denoting). *ցույց է տալիս, որ գործողությունը չափազանց շատ է կատարվել. հաճախականի ավելի բարձր աստիճանն է: Օրինակ՝ աբխազերեն լեզվով* i-z-ü-cw-u-eit *խիստ շատ գրում եմ (մասնիկն է* cw*) և ամերիկյան կարրիեր լեզվով «այնքան պատառատեակի, որ այլևս բանի պետք չէ»* (Morice, 390) *չափազանցական են: Ամերիկյան սենսա լեզվով կազմվում է* san- *նախամասնիկով. օրինակ՝* san-kaxa *«տասական կամ չափազանց առել»* (Haumonté, 24)։

46. Ձանացողական (conatif). *ցույց է տալիս, որ ենթական ջանք է գործ դնում անելու այդ գործողությունը: Գտնվում է օրինակ՝ հարավային սեմական լեզվի մեջ, ուր կազմվում է առաջին ձայնավորի երկարացմամբ. ինչպես՝* qatala *«սպանեց». բայց* qātala *«ջանաց սպանել»* (Brock. Précis, 145)։

47. Սխալական (erratif). *ցույց է տալիս սխալ կատարված կամ արդյունքը անհաջող դուրս եկած մի գործողություն: Օրինակ՝ գտնվում է ամերիկյան կարրիեր լեզվի մեջ. ինչպես՝ «ձուկ բռնելու դուրս գալ, բայց չհաջողել», «չարաչար գործածել», «ծխել լու դուրս գալ, բայց չհաջողել», «սխալ բան անել», «ջրի մեջ շատ խոր ընկղմվել մնասակաս չափ», «սխալ բան անել», «ջրի մեջ շատ խոր ընկղմվել կամ սուզվել, մինչդեռ պետք չէր այդպես անել» են* (Morice, 337)։

48. Սկսնական (initiatif)· *ցույց է տալիս առաջին անգամ կատարել ավյալ գործողությունը. գտնվում է ամերիկյան կարրիեր լեզվի մեջ. տարբեր է սկսողական բայից* (Morice, 327)։

49. Ingressif. *բայի մի տեսակ է, որ ցույց է տալիս, թե գործողությունը սկսելու վրա է. գտնվում է՝ օրինակ՝ աֆրիկյան ասլոն լեզվի մեջ. ինչպես՝*

osi na be si *«ջուրը կամ անձրևը հոսելու վրա է, հենց հիմա կանձրևէ»* (Westermann, *էջ 18*)։

50. Սկսողական (inceptif *կամ* inchoatif). *ցույց է տալիս գոր-*

ծողութիւնը կատարելու սկսելը. գտնում է գանազան լեզուների մէջ. օրինակ՝ ամերիկեան կարիբեր լեզուում (Morice, *էջ 393*). *մոնղոլական դագաւր բարբառում* (Поппе, Дагурск. нареч. *էջ 161*), *հնդկական մարաթի լեզուում, հինգուատանի լեզուի մէջ, ուր կազմւում է* lagnā *«դիպչել» բայի հարադրութեամբ. ինչպես՝* bolne lagnā *«խոսել սկսել»: Ամերիկեան սենսա լեզուում՝* ma-*նախամասնիկով. օրինակ՝* ma-i-rewar-ho *«սկսում եմ սիրել»* (Haumonté, 24). *Մելանեզեան էրոմանգա լեզուում* (Ray, 190):

51. **Վարժական.** *ցույց է տալիս մի բան միշտ անելու սովորութիւն ունենալ* (habitualis *կամ* continuatif). *գտնւում է հինգուատանի լեզուի մէջ, ուր կազմւում է* karnā *«անել» բայով. ինչպես՝* bolā karnā *«խոսելու սովորութիւն ունենալ»,* royā karnā *«ճչալու սովորութիւն ունենալ»:*

Վարժական բայ կա նաև աֆրիկեան խաոս լեզուում և կազմւում է ra *մասնիկով. ինչպես՝*

muntu uu kurabiga vanao
մարդ այս սովորութիւն ունի ծեծելու երեխաներին
vašamba kuravinao
վաշամբաները սովորութիւն ունեն պարելու
(ազգ է): (Kotz, 22):

Նոյնպիսի բայ կա մելանեզեան էրոմանգա լեզուում (Ray, *էջ 187*), *բայց նաև անգլերենում, ուր գնում են* to use, *որ նշանակում է «գործածել», գերմաներենում, ուր գնում են* pflegen *«խնամել, հոգ տանել» են:*

Սուդանական շիլլուկ լեզուում ևս կա ալդպիսի բայ, որի մասնիկն է ni. *ինչպես՝* yā ni čama *«սովորութիւն ունեմ միշտ ուտելու»* (Westermann, 75): *Նոյնպիսի բայ կա նաև աֆրիկեան ահլոն լեզուում* (Westermann, *էջ 17*): *Նոյնը աֆրիկեան վոլոֆ լեզուում, ուր գրւում է բայի վրա* -an *հետադասնիկը և նշանակում է մի բան շարունակ անելու սովորութիւն ունենալ կամ այդ բանը իրեն սրհետս գարձնել (*Rambaud, 39). *գործ. ածւում է* atu *մասնիկով. նշանակում է սովորաբար նոյն բանը անել միշտ. օրինակ՝* dyai *«ծախել»,* dyaiatu *«առևտրով գրաղվել»* (Rambaud, 40): *կա նաև աֆրիկեան գագոմբա (բանաոս)* (Fisch. 38—39), *և սուկումա (բանաոս) լեզուներում (*Augustiny, 57).

Նոյնը կա աֆրիկեան էվե լեզուով, ուր մասնիկն է na, *օրինակ՝* meyina *սովորութիւն ունեմ երթալու:*

(Westermann, 65)

52. **Վերջնական** (finalis). *ցույց է տալիս վերջնական նպատակը (որպեսզի մի բան անեմ). օրինակ՝*

abá ená-sī na-digin-i- ná- ña no ke
ես եկա որ քեզ ամուսնացնեմ քեզ

ցույց է տալիս նաև, որ մի բան անհրաժեշտաբար պիտի կատարվի, օրինակ՝ «բոլոր մարդիկ պիտի մեռնեն»: Այս բայական ձևը գտնւում է եթովպական կոնտամա լեզուում, որից են նաև վերի օրինակները (Reinisch, 39):

53. Culminative. *ցույց է տալիս մի գործողութեան վերջնական կետին հասնելը. գտնւում է աֆրիկեան կարանգա (բանաոս) լեզուի մէջ և կազմւում է* ta, tata *մասնիկով. ինչպես՝*

pepa *«փչել»*—pepeta *«ցորենը էրնել».*
para *«կկղնվել, կճպել»*—parapata *«հավի պես լոպկել, փեսրատել»:*
čenga *«շուրջը ման գալ»*—čengeta *«պահակ կանգնել, պահպանել»:*

(Marconnès, *էջ 200*)

54. Տրական բայ (Verbum dativum). *Նոբիերեն լեզուին հատուկ բայական մի ձև է: Ներկեան այս լեզուում գոյականը առանձին արտասան հոլովաձև չունի, ուստի արտասանի գաղափարը (այսինքն մեկին դիմում) նշանակելու համար առեղծել են բայական այս ձևը: Կազմւում է բայի արմատի և վերջավորութեան միջև դնելով* ndi *մասնիկը, որ իբր արտասանի նշան է ծառայում: Օրինակ՝* fe *«տալ» բայից սովորական ձևով ասւում է* fe-re *«տալիս եմ». բայց հիշյալ ձևով* fe-ndi-re *«ես նրան տալիս եմ», տպատանի* fe-ndi-še-re *«ես նրան պիտի տամ»... այսպես կազմւում է առանձին խոնարհում, բոլոր ժամանակներով, օժանդակներով և բոլոր 15 լծորդութիւններով, բոլոր նմանօրինակ բայերի համար:*

Տրականի հետ նույն է նաև հայցականը:

(Kauczor, *էջ 213—226*):

55. Տևողական բայ (persistive). *ցույց է տալիս առաջնահարաբար, սեռականապես և հետզհետե ուժեղացնելով անել մի բան. գտնւում է զուլու լեզուի մէջ* (Doke, 143):

56. Ցանկական (désidératif). *ցույց է տալիս ուզել կամ փափագել այս ինչ գործողութիւնը անելու. ճապոներինից օրինակ՝* kak *«զը-*

բել» և kakitai *«գրել ուզել». արաբերեն՝* xdm *«ծառայել» արմատից* istif'āl *ձևով՝* istixdām *«ծառայել ուզել», արխազերեն՝* š *մասնիկով՝ «ցանկութիւն կամ պատրաստակամութիւն» ցույց տալու համար. ինչպես՝* i-bl-ə-š-r *«փորձում եմ այրել այն»: Ամերիկյան ենթա լեզվով* va-*նախամասնիկով, որ* vaha *«ուզել փափագել» բայի կրճատումն է. օրինակ՝* üvlo *սիրել,* va-üvlo *«սիրել ուզել»* (Haumonté, 24). *կա նաև մարաթի (հնդկական) լեզվում:*

57. Փոխադարձ (réciproque). *շատ լեզուների մեջ կա. իրար անել նույն բանը:*

58. Փոխանցական (transitionel). *ցույց է տալիս մի վիճակից մի ուրիշ վիճակի անցնել, կամ վերածվել. դանվում է ամերիկյան կարրիեր լեզվի մեջ. ինչպես՝ «աղքատ դառնալ, խեղճանալ, տկարանալ, վատանալ»* (Morice, 399):

*59. Օգնողական. ցույց է տալիս օգնել մի բան անելու. օրինակ՝ դանվում է աունդուաներեն լեզվի մեջ, ուր կազմվում է-*ldi *մասնիկով. ինչպես՝* ana-m *«մղել, քշել»—*ana-ldi-m *«օգնել քշելու», tâna-m «քաշել»—*tâ-ldi-m *«օգնել քաշելու»* (Adam, Gr. tong. 60):

Նույնը կոչված է գերմ. Mitwirkungs *կամ* socialstamm *(գործակցական կամ ընկերական) բայ և դանվում է ևթովպական բնագաւեղվում. ցույց է տալիս, որ մեկը օգնում է մեկին այս ինչ գործողութիւնը կատարելու համար. կազմվում է* m, mē, mó *նախամասնիկով. ինչպես՝* dār *«սպասել»,* mō-dār *«օգնել սպասելու».*

luw *«այրել»,* mō-lāû *«մխաին այրել»,* šāwi *«խառնել»,* mēšwāy *«օգնել խառնելու»,* fāyd *«ծիծաղել»,* mē-fyād *«մխաին ծիծաղել»:*

(Reinisch, 130):

Նույն բայը (soziale form) *կա նաև աֆրիկյան բո կամ բանկոն լեզվի մեջ և ցույց է տալիս, որ մի գործողութիւն կատարվում է մեկի միջոցով* (Spellenberg, *էջ 57):*

Դանվում է նաև աֆրիկյան վոլոֆ լեզվում, ուր մասնիկն է le *և նշանակում է օգնել մեկին մի բան անելու. ինչպես՝* ligei *«աշխատել»—*ligeile *«օգնել մեկին աշխատելու ժամանակ»,* eb *«բանավորել»—*eble *«օգնել մեկին վրան բան վերցնելու»* (Rambaud, *էջ 40):*

Սրանցից դուրս լեզուների մեջ կան նաև նվազ սովորական ձևեր. ինչպես՝

Դրդական (cohortatif). *որ դրդում է մեկին կատարելու այս ինչ գործողութիւնը:*

Կասկածական (dubitatif). *որ կասկած է հայտնում գործողութեան մասին. թերևս լինի, թերևս չլինի:*

Կասկածական ձևը ունի ամերիկյան կրի լեզուն, որ դանագանում է երեք տեսակ կասկածական.

ա) Սովորական կասկածական (dubitatif ordinaire). *օրինակ՝ անշուշտ կգա. ենթադրենք թե տեսա նրան»:*

բ) Հավանական (dubitatif probable), *երբ չտեսած կամ արդեն մոռացած մի բանի մասին է խոսքը. օրինակ՝ «հավանաբար կորցրել եմ»:*

գ) Ենթադրական (dubitatif suppositif), *որ պարզապես ենթադրում է. օրինակ՝ «երազում տեսնում է. ասած կլիներ ինձ. երևի նրան ես տվել»:*

Պայմանական. *դանվում է հնդկական սանսկրտի լեզվում և կազմվում է բայի ժամանակի վերջում դնելով-*ge *մասնիկը. ցույց է տալիս կես գործողութիւն, այն է՝ որ կարող է լինել, որ այդպես լինի և կամ եթե այս ինչ բանը լինի, նա էլ կկատարվի:*

(Grierson, *Դ. 50):*

Վերապահական (reservative). *ցույց է տալիս մի գործողութիւն, որով մի բան բերվում է մի որոշ վիճակի մեջ, ուր թողնվում է մնալ կամ շարունակել, այնպես, որ կարելի լինի օգտագործել ուրիշ որևէ հետագա նպատակի համար. դանվում է հնդկական սանսկրտի լեզվի մեջ. մասնիկն է* ka. *ունի նաև իր անցողական ձևը և իր փոխադարձը. օրինակ՝* anjâm-kak'-mä „listen to it", *լսի'ր, որ երբ կարիք լինի, կարողանաս պատասխանել»:*

(Grierson, *Դ. 48):*

Շտապողական (properativa). *կա լակուտերեն լեզվի մեջ. կազմվում է-*baqtā *մասնիկով և նշանակում է «գործողութիւնը շտապով կատարել». ինչպես՝ «շտապով ուտել, շտապով խմել, շտապել վառել» են* (Ястремский. 116):

Դանդաղական. *նախորդի հակառակն է. ցույց է տալիս գործողութիւնը կամաց կամաց կատարել. դանվում է լակուտերեն լեզվի մեջ և կազմվում է* -āqtā *մասնիկով. ինչպես՝ փոքր փոքր ուտել, քիչ քիչ խմել, կամաց կամաց ընկնել, կամաց կամաց պառկել են: Քերականութեան մեջ կոչվել է* deminutiva *(նվազական կամ փաղաքշական), որ ես ավելի լավ համարեցի այսպես անվանել* (Ястремский, *էջ 116):*

Զգայական. *ցույց է տալիս «այնպես զգալ կամ համարել». ինչպես՝ ցուրտ զգալ, տաք զգալ, ամօթ համարել, հիվանդութիւն զգալ, մեղք համարել, գութ կամ կարեկցութիւն զգալ են:*

Գտնվում է յակուտերենում և կազմվում է -rγā,-rgē *մասնիկով* (Ястремский, 119):

Նախատակաց. *ցույց է տալիս նախատելով անել մի բան. ինչպես՝ ամերիկյան ինդեա լեզվով՝* hal *նախամասնիկով* wata *«առել» բայից՝* hal-wata *«նախատանքով առել մեկին»* (Haumonté, 26):

Մասնակաց. *ցույց է տալիս քիչ քիչ և մաս առ մաս անել մի բան. օրինակ՝ ամերիկյան ինդեա լեզվով* vitra *«խմել» բայից* nim *նախամասնիկով* nim-vitra *«մեկ-մեկ խմել»* (Haumonté, 26):

élatif *(արտաքին) բայ. ցույց է տալիս, որ ենթական թողնելով իր նստած տեղը, գնում կատարում է գործողութիւնը մի ուրիշ վայրում. գտնվում է մանջուրերեն-լեզվում, որ կազմվում է* na *մասնիկով. ինչպես՝* uji-na-me *«գնալ անուցանել»,* abala-na-me *«գնալ որսալ»,* omi-na-me *«գնալ խմել»* (L. Adam, *էջ 47)*:

illatif *(նախդրով հյց.) բայ. ցույց է տալիս, որ ենթական գալիս է կատարելու գործողութիւնը այնտեղ, ուր մենք ենք (հակառակն է* élatif *բայի). գտնվում է մանջուրերենում, որ մասնիկն է* nji: *ինչպես՝* afa-nji-mbi *«գալիս եմ կռվելու»,* omi-nji-mbi *«գալիս եմ խմելու»* (L. Adam, *էջ 47)*:

Փոխադարձ և գործակցական բայ. *մանջուրերենում կա այնպիսի բայ, որ կազմվում է* ndu, nu *մասնիկով և նշանակում է «իրար անել այդ բանը» կամ «միասին անել». օրինակ՝*

gosi-ndu-me *իրար սիրել*
usu-nu-me *միասին ցանել.*

(L. Adam, *էջ 46—47)*:

Երևակայական (imaginatif). *որ երևակայում է, թե այս ինչ գործողութիւնն է անելու:*

Եզրական (limitatif). *ցույց է տալիս մինչև այս ինչ տեղ կատարված գործողութիւն. ինչպես՝ «գնում եմ մինչև այնտեղ»:*

Սամոյեդյան սելկուպ լեզվում կա բայական մի ձև, որ ցույց է տալիս համ կամ հատ և կազմվում է ni *մասնիկով. օրինակ՝* wäči *«մխա» բառից՝* wäči-ni-qo *«մսի համ կամ հատ գալ»,* qälə *«ձուկ» բառից՝* qälə-ni-qō *«մի բանից ձկան հատ գալ, ձկան հատ տալ» են* (Прокофьев, 58):

Այսպես և՝ ուրիշ ձևեր, որ չենք ուզում մի առ մի հիշատակել:

Բալի տեսակներով հարուստ են կովկասյան կարաբուին լեզուն (13 տեսակ), արխազերենը, հինդուստաներեն, ամերիկյան կարրիեր լեզուն, որ ավելի քան 22 բայական տեսակ ունի, են:

Մալայո-պոլինեզյան բոնտոկ իգորոտ լեզուն, որ 12 օժանդակ բայ ունի բայերի զանազան տեսակները կազմելու համար, ունի նաև ութ նախամասնիկ, որոնք կցվում են բային, ցույց տալու համար գործողության եղանակավորումները: Սրանք են՝

pin-*մի բանը շուտ անել*
ka-*ցույց է տալիս քիչ առաջ վերջացրած գործողութիւն*
maka-*կարող եմ անել այդ բանը*
naka-*արդեն վերջացրած գործողութիւն*
maki-*ուրիշների ընկերակցութիւնը կատարված գործողութիւն*
inasi-*փոխադարձ գործողութիւն*
maan-*հանկարծ կատարված գործողութիւն:*
ningka-*ամբողջապես, լիովին կատարված գործողութիւն:*

(Seidenadel, *էջ 111—117)*:

Կան լեզուներ, որոնք առանձին բայական մասնիկներով որոշում են նաև գործողության ուղղությունը. օրինակ՝ թե գործողությունը հեռուն է կատարված, թե մոտիկ տեղում. դեպի վերև, թե դեպի ներքև. ուղիղ, թե կողքի են: Այսպես են պոլինեզյան լեզուները:

Կովկասյան դարգվա լեզուն որոշում է, թե գործողությունը մեկ անգամ է կատարված, թե շատ անգամ, ինչ ուղղությամբ է կատարված, բացի սրանից նկարագրում է նաև տեսի խնդիրը՝ իր տեսով (արական, իգական կամ չեզոք): Օրինակ՝

b-il-č-is *մեկ անգամ երգել (արմատն է č)*
b-u-č-is *շատ » »*
b-a-ǧ-äs *մեկ » գարնել (արմատն է ǧ)*
b-i-ǧ-äs *շատ » » (որ է ծեծել)*:

Այսպես կան նաև՝

xa-b-ä-ǧ-äs *գարնել վերևից ներքև*
a-b-ä-ǧ-äs *գարնել ներքևից վերև*
ši-b-ä-ǧ-äs *» մի բանի վրա:*

(BSL, *հա. 29. № 88, էջ 153)*:

Կարարդին և արխազ լեզուները բայի մեջ են ներմուծում դանադան տեսակի մակրայներ։ Այսպես՝ կարարդիներեն ունենք՝

1. Ժամանակ ցույց տրվող բայ. կազմվում է şə-k'e *մասնիկով. ինչպես՝*

sse şə-s-tlağu-k'e *երբ ես տեսնում եմ (տեսնելիս)*
dde şə-d- » » *երբ մենք* » *ենք։*

2. Сопостовительно-временное. *մասնիկը* xu-k'e *ինչպես՝*
sse şə-s-tlağu-xu-k'e
(քանի) մինչ ես տեսնում եմ։

3. Այս ինչ բանը անելուց հետո. մասնիկը ri,go. *ինչպես՝*
yaxunşe-ri *թալանելուց հետո։*

*4. Հենց այն ժամանակ որ. մասնիկը-*m.

*5. Ձև, կերպ ցույց տվող. մասնիկը-*ò
sse s-tlağu-o *ես տեսնելով...*

*6. Պատճառ ցույց տվող. մասնիկը-*şḥak'e.

*7. Թեև այս ինչ բանը եղավ. մասնիկը-*şḥa. *ինչպես՝*
«թեև տեսնում եմ ևն»։

*8. Երբ որ լինի, պայմանական. մասնիկը-*me
sse s-tlağu-me *երբ ես տեսնեմ*
sse s- » -te-me *երբ ես տեսնեի*
sse s- » -ā-teme *երբ ես տեսա։*

Արխազերենն էլ բայի մեջ է մուծում եղանակ և ժամանակ ցույց տվող զանազան մակրայներ. այսպես՝

1. «Երբ, երբ որ» (wann). *մասնիկն է* -nə-*օրինակ՝*
sa-nə'-qou *երբ ես եմ։*

2. «Ե՞րբ, ո՞ր ժամանակ» (wann?). *մասնիկն է* —nba—.*օրինակ՝*
sa-nbà-quo *ե՞րբ եմ ես։*

*3. «Մ՚ինչդեռ՝ ցորչափ». մասնիկը-*xənz. *օրինակ՝*
s-xənza-qou *քանի եմ։*

*4. «Ո՞ւր». մասնիկը-*ba—.*օրինակ՝* sa-bà-qou *ո՞ւր եմ ես։*

*5. «Վրան». մասնիկը-*k'u, *օրինակ՝* sə-k'u-y-u-eit *վրան եմ պառկում։*

*6. «Մեջը» մասնիկը-*l,—*օրինակ՝*

a-s^{w}q$^{ə'}$ a-k'laad i-l-a-fo-up
գիրքը թաղթի ներփակած է։

7. «Մեջը». մասնիկը -tá. *օր.* s-t'o-up *ես մեջն եմ դնում։*

8. «Առջևը», մասնիկը -mo—.

9. «Տակը». մասնիկը -c-

10. «Ինչպես, wie» *եղանակ ցույց տալու համար. մասնիկն է-*-šə—.

11. «Այսպես. so». *մասնիկն է* -us—.

(Dirr, Einführ, *էջ 48—53*)։

Ավարերենում կան զանազան եղանակավորիչ մասնիկներ, որոնք ավելանալով բայի վրա, առեղծում են բայական նոր տեսակներ. ինչպես՝ -go-, -cin-, -in *իմաստը գործացնելու համար (իրոք որ այնպես է),* -an, -yan *կախում ցույց տալու համար.*

—ni *ցույց է տալիս, որ գործողությունը կատարողը ինքն է և ոչ ուրիշը.*

—nigi *կամ... կամ... (տատանում).*
—l^{o}ila *անորոշություն և կասկած հայտնելու համար.*
—ya *թյուրիմացություններից խուսափելու համար.*
—gi— *և, նաև, նույնպես.*
—ila,—yila *լսովի մի բան է ցույց տալիս. ասում են թե (թրք.* imiš *«եղեր»).*

(Dirr, Einf. 172—7)։

Ջուլու լեզվում չափազանց շատ են բայական ձևերը, որոնցից ոմանք կազմվում են օժանդակներով, ոմանք էլ զանազան մասնիկներով։ Տալիս եմ այս բայերի արժեքը կամ նշանակությունը՝ առանց կազմության մասին խոսելու։

Գործողությունը լինում է երեք տեսակ. ա) պարզ ձև. ինչպես՝ սիրում եմ. բ) շարունակական. այն է՝ անցյալում սկսել եմ անել և այժմ էլ շարունակում եմ. գ) անցյալում չի արել և այժմ նոր է սկսել անել։

—*քիչ հետո սկսելու է անել.*

—*անելու կետի վրա էր, բայց չեղավ. (օրինակ մեռնելու կետի վրա էր, լավացավ).*

—*առաջին անգամ անել մի բան.*

—հինց նոր անել.
—երբեմն անել, երբեմն մի ժամանակ այդ բանը արած լինել (օրինակ՝ խոկի այս մարդուն տեսնել ես).
—ուժեղ և անհամառակելի հրաման անելու.
—կարիքից ստիպված անել այդ բանը.
—սովորութիւն ունենալ միշտ անելու այդ բանը.
—ուրիշ բան չանել և միայն այդ անել.
—մոռ լինել, բայց երբեք չվերջացնել այդ բանը.
—անելու կեսի վրա լինել ճիշտ.
—հինց որ, անմիջապես որ...
—պատահից որ, պատճառն այն էր որ...
—հինց նոր սեղի ունենալ.
—միտք ունենալ անելու.
—ցանկալ անելու.
—փորձել անելու.
—ստիպված լինել անելու.
—իրեն դուր գալ՝ սիրել այդ անել.
—կարիք ունենալ այդ բանը անելու.
—պարտավորւիչ լինել այդ անելը։
—հետզհետե անել մի բան.
—հինց որ, անմիջապես որ անել.
—նոյն բանը նորից անել. կրկնել.
—մի բան լինելուց հետո անել այս ինչ բանը.
—նախամեծար համարել այս ինչ բանը անելու (օրինակ՝ լաւ կլիներ տուն գնալի).
—առատանվելով անել մի բան.
—պարզորեն անել մի բան.
—անել մի բան կատարելապես. ամբողջ եռանդով.
—ամենևին չանել մի բան.
—ձգձգելով, երկար բարակ անել մի բան.
—անցյալում երբեք արած չլինել.
—միշտ անել մի բան.
—ամբողջ ժամանակը այդ անել.
—մշտապես և շարունակաբար անել այդ բանը.
—հետամուտ լինել անել այդ բանը և շարունակ անել.

(Doke, էջ 150—198)

Ածանցական մասնիկներից մի քանիսը կարող են միասին դրվել մի բայի վրա. օրինակ ամերիկյան աենսա լեզվով՝

vo-myo-lo-i-dukka-r-i-su

կազմվում է dukka «սպիտակ» բառից, որի կրավորակերպ չեզոքի պատճառականի կարողականն է. նշանակում է «նա կարող է սպիտակ դարձվել» (vo կարողական, myo կրավորակերպ չեզոք, lo պատճառական և i կրավորական մասնիկներով)։

(Haumonté, 26):

Մանջուրերեն լեզվում մինչև չորս մասնիկ կարող է ավելանալ մի բայի վրա. ինչպես՝ tuwa-ša-ta-na-bu-me «այնպես անել, որ նա գնա դիտե» (L. Adam, էջ 48)։

3. ԲԱՅԱԿԱՆ ՎԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ընդհանրապես գիտենք, որ մասնիկները նախավոր ամբողջական բառերի մաշված ձևերն են։ Այսպես պիտի լինեն նաև բայերի զանազան ժամանակները, եղանակները և դեմքերը կազմող վերջավորութիւնները։ Զանազան լեզուների բայական ձևերի քննութիւնից երևում է, որ դեմք արտահայտող վերջավորութիւնները ուրիշ բան չեն, եթե ոչ անձնական դերանունների մաշված ձևերը։

Այս մասին ամենալավ վկայութիւնը տալիս է հոտենդոտան նամա լեզուն։

Ահա նամալերեն խոնարհումը mà «տալ» *բայից՝*

tita mà *սրանց մեջ առաջին եզրերը*
satsa mà «*ես, դու, նա, մենք, դուք*
‖ èiba mà *նրանք» դերանուններ են, որոնք անհրաժեշ-*
sagye mà *տարբար դրվում են, քանի որ բայը պարզ ար-*
sago mà *մասն է և վերջավորութիւն չունի բնավ։*
‖ èigu mà

Բայց կարելի է դերանունները հրճատելով իրր մասնիկ կպցնել բային. այսպես՝

màta	*տալիս եմ*
màts	»	*ես*
mab	»	*է*
màgye	»	*ենք*

màgo » *ենք*
màgu » *են*

Նույնպես և մյուս ժամանակները, օրինակ՝

tita go mà *տալիս էի կամ* màta go
tita gye mà *ավի կամ* màta gye
tita nī mà *պիտի տամ կամ* màta nī
(Seidel, Hspr. 11)

Այսպես ահա կազմվում են բայական նշանները։

Ամեն հետաքրքիր մի երեսփթ տեսնում ենք ագբիկյան հատուստ լեզվի մեջ. ստատիկ բայի խոնարհման ժամանակ բնականաբար ա և բ դեմքերի դերանունները դրվում են, որովհետև բայը վերջավորություն չունի դեմքերն արտահայտելու համար. բայց նույնիսկ երրորդ դեմքում, երբ ենթական կա, երրորդ դեմքի դերանունը դրվում է միշտ. օրինակ՝

uba ya taffi
հայր նա գնում է

և ոչ թե uba taffi
նմանապես uwa ta kira-ni

մայր նա կոչն գիս

և ոչ թե uwa kira-ni.
սա առաջին քայլն է, որ դերանունը միանալով բային կազմում է երրորդ դեմքի մատնիկ։

(Marré, 48):

Ալթայական լեզուներն էլ շատ լավ պահել են երեսփթի պատկերը և ցույց են տալիս, թե բայերի դեմքերի վերջավորությունները անձնական դերանուններն են։ Այսպես՝ թաթարերենի անձնական դերանուններն են՝ men *ես,* sen *դու,* biz *մենք,* siz *դուք. բայն էլ խոնարհվում է սրանց հավելմամբ.*

ինչպես՝ sūyar imiš men *սիրած եմ եղել*
» » sen » *ես* »
» » biz » *ենք* »
» » siz » *եք* »

Իսկ եզակի երրորդ դեմքը չի տառնում դերանուն, այլ միայն օժանդակը. հոգնակի երրորդ դեմքն էլ տառնում է lär վերջավորությունը, որ գոյականների հոգնակերտ մասնիկն է։ Այսպես՝

sūyar imiš dür *սիրած է եղել*
„ imislär „ *են եղել։*

(Казем-бек, *էջ 320*)։

Միևնույն դրության է հետևում ուզբեկերենը, ուր բայերը խոնարհվում են դերբայի վրա դնելով անձնական դերանունները. օրինակ՝ išlamak *«բանել, աշխատել, գործել» բայից, արմատը* iš-la, *նորկ. դերբ.* išlay, *որ* man *ես,* san *դու,* bəz *մենք,* səz *դուք դերանունների հավելմամբ՝ լինում է՝*

išlayman *գործում եմ* išlayməz *գործում ենք*
išlaysan » *ես* Išlaysəz *գործում եք*
կամ ukur *սպառնի դերբայից՝*

ukur-man *պիտի կարդամ*
ukur-san *պիտի կարդաս*
ukur-məz *պիտի կարդանք*
ukur-səz *պիտի կարդաք։*

(Наливкинъ, Руководство сарт. яз. 1912, *էջ 30, 87*)։

Նույնպես բացառական սպառնի դերբայ birmas *«չտալու» ձևից՝*

birmas man *չպիտի տամ*
» san » *տաս*
» məz » *տանք*
» səz » *տաք*

(անդ, էջ 85)։

Երեսփթը մի քիչ ավելի զարգացած է թուրքերենում, ուր ունենք՝

sever-im *սիրում եմ*
sever-sin *սիրում ես*
sever-iz *սիրում ենք*
sever-sin-iz *սիրում եք*
sever-ler *սիրում են։*

Սրանց մեջ im, sin *վերջավորությունները* men=ben *«ես» և* sen *«դու» դերանունների կրճատումներն են։ Այդ ձևերը բուն նշանակում են «սիրող-ես, սիրող-դու»։ Հոգնակիները կազմված են հոգնակերտ* iz *նշանով։ Բ դեմքը շատ պարզ է, որովհետև կազմ-*

ված է եզակի p դեմքի վրա դնելով iz *հոգնակիաը, իսկ առաջին դեմքի մեջ կրճատված է* im. *այսպես՝* sever-iz *«սիրում ենք» փոխանակ* sever-im-iz *«սիրող ենք»: Երրորդ դեմքի հոգնակին կազմվում է* ler *մասնիկով, որ գոյականների սովորական հոգնակերա նշանն է. ինչպես՝* ev *տուն,* evler *տներ:*

Այսպիսով բայը կապվում է նաև գոյականի հետ:

Ռադլոֆը (Die jakut. spr. *էջ 36) հաստատում է, թե ույղուրերենի և հին թուրքերենի մեջ բայական վերջավորութիւնները նույն անձնական դերանուններն էին և խոնարհման ժամանակ դերանունների կրկնութիւամբ ասում էին՝*

män	kälär	*ես գալիս եմ*
sän	kälär	*դու » ես*
bis	kälär	*մենք » ենք*
sis	kälär	*դուք » եք:*

Ավելի հետո վերջապես դերանունները կսկսեն բային և դարձան զուտ բայական վերջավորութիւն:

Մոնղոլական դագուր բարբառումն էլ բայի խոնարհման ժամանակ գրված վերջավորութիւնները նույն անձնական դերանուններն են. այսպես bi *ես,* -si *դու,* -bā *մենք,* -t'a *դուք կազմում են բայի համապատասխան դեմքերի վերջավորութիւնները: Երրորդ դեմքը (ինչպես թուրքերենի մեջ) եզակիում չունի վերջավորութիւն, իսկ հոգնակիում առանում է գոյականների սովորական հոգնակերա վերջավորութիւնը՝* -sal, -sel, *ճիշտ ինչպես ունենք թուրքերենի մեջ՝* -lar, -ler. *օրինակ՝* alər-lar *առնում են,* gider-ler *գնում են* (Ponne, Даруг. нареч. 161—2):

Այսպես է նաև մոնղոլական բուրյաթերեն լեզվի մեջ: Բուրյաթական բոլոր բարբառներում կան սատրոգելիական ածանցներ (suffixe prédicatif), *որոնք կցվում են գոյականների վրա և տալիս են բայական նշանակութիւն: Այսպես՝ ալարներն բարբառում Ա. դեմք* -p, *Բ դեմք* š, *Ա հգ.* bd^{y}e, *Բ հգ.* ta. *ինչպես՝* eryū *«հիմար» բառից՝*

eryūp	*ես հիմար եմ*
eryūš	*դու հիմար ես*
eryūhūdebd^{y}e	*մենք հիմար ենք*
eryūhūdelta	*դուք » եք:*

Նույնիսկ սատյական հոգերով ունենք. xubūŋ *«որդի» բառից՝*

xubūn^{y}šn^{y}ep	*«ես որդի եմ»*
xubūn^{y}īn^{y}ep	*ես նրա որդին եմ*
xubūntnåp	*ես ձեր որդին եմ*
xubūmn^{y}eš	*դու իմ որդին ես*
xubūn^{y}īn^{y}š	*դու նրա որդին ես*
xubūmnåš	*դու մեր որդին ես ևն...*

Այս վերջավորութիւնները ծագում են b^{y}ī *«ես»,* šī *«դու»,* bed^{y}e *«մենք»,* tā *դուք դերանուններից: (Ponne,* Алар. говор, *էջ 93—4):*

Այս միևնույն վերջավորութիւնները գտնում ենք նաև բայի հետ. ինչպես՝

yabāšap	*միշտ ման եմ գալիս*	
yabāšas	» » *ես*	»
yabāšabd^{y}e	» » *ենք*	»
yabāšat	» » *եք*	»

Տունգուսերեն բայի ժամանակները կազմվում են դերբայների վրա դնելով սատյական հոգեր՝ գոյականի պես. այս հոգերն են՝

Եզակի	*Հոգնակի*
-f *-ս*	-vun *-նիս*
-s *-դ*	-sun *-նիդ*
-n *-ն*	-tin *-նին*

Կատարյալը կազմվում է անցյալ դերբայի վրա դնելով այդ հոգերը. ինչպես՝ sono *«լալ» բայից՝*

sono-cô-f	*լացի, բուն՝*	*լացածս*
sono-cô-s	*լացիր*	*լացածդ*
sono-cô-n	*լացավ*	*լացածը*
sono-cô-vun	*լացինք*	*լացածնիս*
sono-cô-sun	*լացիք*	*լացածնիդ*
sono-cô-tin	*լացին*	*լացածնին:*

Ապառնին կազմվում է ապ. դերբայի վրա դնելով նույն հոգերը. ինչպես՝

sono-dô-f	*պիտի լամ, բուն՝*	*լալիքս*
sono-dô-s	*պիտի լաս*	*լալիքդ*
sono-dô-n *են*	*պիտի լա*	*լալիքը են.*

(Adam, Gr. tong. 63, 64, 67):

Կոլդուելը (Comp. gram. drav. 482) ասում է, թե մոնղոլական բարբառում և Սիբիրի տունգուսական մի բարբառում բայերի դեմքը ցույց տվող այս վերջավորութիւնները վերջին ժամանակներս (recently) են կցվել բային:

Կովկասյան լեզուներից ոմանք նույնպես լավ ցույց են տալիս, թե ինչպես դերանունները դառնում են բայական վերջավորութիւն. օրինակ՝

ուս.	zu	un	yan	wan
	ես	*դու*	*մենք*	*դուք*
որից	besazu	*անում եմ*		
	besaun	»	*ես*	
	besayan	*անում ենք*		
	besaŋan	»	*եք:*	

Նույն ձևը կրճատելով օրինակ՝ բայ լեզվով՝

so	ḫo	t'xo	šu
ես	*դու*	*մենք*	*դուք՝ որից*
al^{0}os	*ասում եմ*		
al^{0}oḫ	*ես*		
al^{0}ot'x	*ենք*		
al^{0}oiš	*եք:*		

Վերջապես նույնը ձևափոխելով. օրինակ՝ տարաատրան լեզվով՝

izu	ivu	iḫu	ic^{v}u
ես	*դու*	*մենք*	*դուք որից՝*
aldàk'ŭza	*ընկնում եմ*		
aldak'ŭva	»	*ես*	
aldak'ŭḫa	»	*ենք*	
aldak'ŭc^{v}a	»	*եք:*	

(Dirr., Einf. 358):

Կաբարդին լեզվի մեջ, ուր բայի դեմք հայտնող նշանը սկզբին է դրվում, դարձյալ անձնական դերանունների կրճատ ձևն ենք գտնում, թեև միևնույն ժամանակ բուն դերանունը կարող է դրվել (կամ չդրվել), ինչպես՝ tlağu-n «տեսնել» բայից՝

sse	so-tlağu	*տեսնում եմ*	
ես			
yä	yo- „	*տեսնում ես*	
դու			
mobə	ye- „	„	*է (այլուր me-մասնիկով,*
նա			
dde	do- „	„	*ենք (կամ առանց մասնիկի)*
մենք			
ffe	fa „	„	*եք*
դուք			
moxem	ya- „	„	*են:*
նոքա			

Երբ բայը կազմված է որևէ նախամասնիկով, այս նշանները դրվում են բայի և նրա միջև. ինչպես՝ te-ke-n «թափել».

Ներկ.	*Ա.* tezoke	*(փխ.* te-so-ke)
	Բ tyoke	*(փխ.* te-yo-ke)...
		(Лопат. *էջ 19):*

Ամենից հետաքրքրական է ուգրո-ֆիննական բայի խոնարհումը: Սամոյեդ լեզվի մեջ երկու տեսակ խոնարհում կա. չեզոք և ներգործական. չեզոքի խոնարհումը կազմվում է բայերի բնի վրա դնելով անձնական դերանունների ուղղականը. այսպես՝ «գնալ» բայը խոնարհվում է գնալ-ես, գնալ-դու, գնալ-նա են: Ներգործական բայերի խոնարհումը կազմվում է անձնական դերանվան ուղղականի փոխարեն դնելով սեռականը. այսպես՝ տեսնել բայից լինում է տեսնել-իմ, տեսնել-քո, տեսնել-նրա են: Առաջինը կոչվում է ենթակայական խոնարհում, որովհետև ունի միայն ենթակա, իսկ մյուսը առարկայական, որովհետև ունի մի լրացուցիչ առարկա: Սամոյեդների այս նախնական վիճակը շարունակում են բոլոր ուգրո-ֆիննական լեզուները, բայց բոլորն էլ ձևափոխած. ոմանք երկու ձևերից մեկը ընդհանրացրած, մյուսները նրանց խառնուրդից մի նոր ձև կազմած:

Հունգար. ֆիննո. են լեզուների մեջ բայական դեմքի վերջավորութիւնները սեռական հոդերն են.

ինչպես՝ հանգ. ålso-m *քնում եմ*
mentä-m *գնացի*
ֆիննն. mene-t *գնում ես*
mene-t *գնացիր*

են. ճիշտ ինչպես ունենք

հանգ. fā-m *ծառս*
ֆիննն. rakkaut-ti *քո սերը են:*

Կա նաև առարկայական խոնարհում, հատկապես զարգացած մորդվիներենի մեջ, ուր թե՛ նենեական կա և թե՛ սեռի խնդիրը. ինչպես՝

tanaft-	«սովորեցնել, lehren»			
tonaftt'ä	*ես քեզ սովորեցնում եմ*			
tonaftt'äd'äz'	»		»	
tonaftsa	»		»	
tonaftsajn'ä	»	*գնոսա*	»	
tonaftsamak	*դու*	*գիս*	»	*ես*
tonaftsamas't'	»	*գմեզ*	»	*ես*
tonaftsak	»	*գնա*	»	»
tonaftsajt'	»	*գնոսա*	»	»

Այսպես և երկակիի համար. ինչպես՝

վոգուլ. rāḍiḷåɣ-m *ես ծեծում եմ գնոսա (երկուսին) են են միմյանց վերջ:*

Առարկայական խոնարհում գիտեն նաև սամիերի լեզուն (Seidel, Swah. 66):

Այս բոլորը ցույց են տալիս, թե խոնարհման վերջավորութիւնները դերանունների կրճատումներն են և թե նենդործականն և հատարակ բայերի վերջավորութիւնները նույն այդ դերանունների տարբեր հոլովներն են: (Les langues du monde, *էջ 168):*

Եգիպտացիներենն լեզվումն էլ բայական վերջավորութիւննները գոյականի վրա գրվող ատացական հոդերն են. համա. գոյականի և բայի հետևյալ ձևերը.

s'.y *որդին իմ*	śḍm.y *լսում եմ*
pr.k *տուն քո*	śḍm.k » *ես*
ḫ.t.f *մարմին նորա*	śḍm.f » *է*
	śḍm.śn » *են*

կար. śḍm.n.y *լսեցի*
śḍm.n.k *լսեցիր*
śḍm.n.f *լսեց:*
(Roeder, Ägypt. *էջ 11):*

Կամ մի ուրիշ օրինակ եգիպտացերենից.

per-a *տունս.* pere-k *տունդ.* pere-f *տուն նորա և*
mer-a *սիրեցի,* mere-k *սիրեցիր,* mere-f *սիրեց:*

Հետաքրքրական է դարձյալ արաբերենի խոնարհումը, որ եզակի, երկակի և հոգնակի արական և իգական ձևերով ներկայացնում է ճոխ պեսպիսութիւններ:

Նախ տանք արաբերենի կատարյալի և ներկայի խոնարհման պատկերը.

kataba *«գրել» բայից*

կար. եզ.	երկակի	*հոգ.*
Ա. katab-tu		katab-*na*
Բ ար. katab-*ta*	{katab-*tumā*	katab-*tum*
իգ. katab-ti		katab-*tunna*
Գ ար. kataba	katab-ā	katab-ū
իգ. kataba-t	kataba-tā	katab-na

ներկա

Ա. aktubu		*na*ktubu
Բ ար. taktubu	{taktub*ani*	taktubūna
իգ. taktubīna		taktubna
Գ. ար. yaktubu		yaktubūna
իգ. taktubu		yaktubna.

Սրանց մեջ 1. կա. եզ. Գ դեմքի t *վերջավորութիւնը գոյականների իգականի վերջավորութիւնն է. ինչպես՝* mu'allim *ուսուցիչ, իգ.* mu'allim-*at.*

2. Կար. երկ. բ դեմքի tumā *վերջավորութիւնը անձնական դերանունների երկակի բ դեմքի ձևն է* (antumā) *կրճատված:*

3. Կար. հոգ. ա դեմքի վերջավորութիւնը nā *և ներկայի հոգ. ա դեմքի նախամասնիկը* nà *անձնական դերանվան հոգ. ա դեմքի* (naḥnu) *կրճատ ձևն է:*

4. Կար. հոգ. բ դեմքի արական tum վերջավորութիւնը անձնական դերանվան հոգ. բ դեմքի արական ձևն է (antum).

5. Կար. հոգ. բ դեմքի իգականի tunna վերջավորութիւնը անձնական դերանվան հոգ. բ դեմքի իգական ձևն է (antunna՝.

6. Կար. հգ. բ դեմքի վերջավորութիւնն է ար. ta, իգ. ti, որի համապատասխան անձնական դերանունն է ար. an-ta, իգ. an-ti.

7. Ներկայի երկ. բ և գ դեմքի թե ար. և թե իգ. վերջավորութիւնը (āni) գոյականների երկակի ուղղականի վերջավորութիւնն է. օրինակ՝ malik թագավոր, երկ. malik-āni.

Նախորդ օրինակներից տեսանք, թե ոչ միայն անձնական դերանուններն են, որ մտնում են բայի կազմութեան մեջ՝ ձևացնելու համար նրանց վերջավորութիւնները, այլև գոյականի թիվը (երկակի կամ հոգնակի)՝ ձևացնելու համար բայի էլ թիվը: Այսպիսիներից հետաքրքիր է ամերիկյան սիուան լեզուն, ուր բայի հգ. գ դեմքի վերջավորութիւնը նույն է գոյականների հոգնակերտ մասնիկի հետ (pi). օրինակ՝

stoləya *գիտե*—stoləyapi *գիտեն*
koskalaka *երիտասարդ*—koskalakapi *երիտասարդներ*
(Boas, Handbook, I. էջ 932):

Հիպերբորյան գիլիակ լեզվի մեջ կա մի տեսակ խոնարհում, ուր հոգնակիում բայն առնում է xun վերջավորութիւնը, որ ճիշտ նույնն է, ինչ որ գրվում է գոյականների հոգնակին կազմելու համար: Նմանապես եղանակները որոշելու համար կա հատուկ վերջավորութիւն, որ անփոփոխ մնում է բոլոր դեմքերի համար:. Օրինակ՝ vi «երթալ» արմատից՝ սահմանականի (ներկա և կատարյալ) nd մասնիկով կազմվում է՝

ni vind *ես գնում եմ*, či vind *դու գնում ես* են:

Հոգնակիի համար ավելանում է միշտ նույն xun մասնիկը:

Տալիս ենք վերջապես մի քանի օրինակ էլ դրավիդյան լեզուներից, ուր ոչ միայն անձնական դերանունները, այլև գոյականները դեր ունեն բայի խոնարհման մեջ:

Դրավիդյան լեզուների մեջ թեական եղանակը կազմվում է il մասնիկով, որ գոյականների մեջ կազմում է նեղպոյականը և ուրիշ բան չէ, եթե ոչ «առն» բառ. այսպես՝ il «առն», ūr «քաղաք» բառերից՝ ūril քաղաքում, seyyil «եթե անվի» (այն է «անելու մեջ»):

Նույն խմբից թեականները՝ sey «գործարք, արարք», որից sey-v-ān «պիտի անես», sey-d-ān «արավ, արեց», որանց մեջ ān

ճիշտ այն մասնիկն է՝ ինչ որ գոյականների մեջ, ինչպես՝ vil ագեղ, villervan ագեղնավոր. նույնպես թամուլ sey-v-ār «արասցեն, պիտի անեն», ուր ār գոյականների հոգնակերտ մասնիկն է:

թամուլ sey-d-en *արարի*, vālu-nam «*ապրում ենք*»
en «*ես*» *բառից* nam «*մենք*» *բառից*
թամուլ sey-de-īr *արարիք*
nīr «*դուք*» *բառից*:

Բոլորն էլ անձնական դերանուններն են. մինչև իսկ այս վերջավորութիւնները գոյականների վրա էլ կարող են ավելանալ, ինչպես՝

kōn *արքա*, kon-ēn *ես թագավոր եմ*, sāmi-yīr *դուք տեր եք*:

Ուրեմն գոյական և բայ նույն են և միայն իմաստը ու տեղը ցույց են տալիս, թե այդ բառը բայ է, թե գոյական: Եվ երկրորդ՝ բայի ժամանակը ցույց են տալիս մեջը դրված մասնիկները. ինչպես՝ sey-d-ēn «արարի», ուր d դրված է կատարյալը ցույց տալու համար:

Մենք խոսեցինք ընդհանրապես բայական վերջավորութիւնց մասին՝ նկատի ունենալով դեմքը և թիվը: Բայց եթե դիտենք նաև եղանակը և ժամանակը կազմող մասնիկները, այստեղ էլ պիտի տեսնենք որոշ իմաստ պարունակող բառեր: Օրինակ՝ սահիլի լեզվով ներկան կազմվում է արմատի վրա դնելով na, որ ուրիշ բան չէ, եթե ոչ «ունեմ» բայը. այսպես՝

ni na
ես ունիմ
ni na piga
ես զարնում եմ:

Աֆրիկյան հատուկ լեզվում կատարյալ կազմելու համար դրվում է kare, gama, որոնք նշանակում են «վերջացնել». ինչպես՝

na kare či *կամ* na gama či
ես վերջացնել ունել = ես կերա:

Նույն լեզվով գերակատար կազմելու համար դրվում է dawuri, որ նշանակում է «մենակ, միայն». ինչպես՝

na so mutane dawuri
ես սիրել ժողովուրդ միայն=ես սիրել էի ժողովրդին:

(Marré, 52):

Գերմ. präteritum ձևը կազմում է -te վերջավորութիւնով. այս -te, ինչպես ցայց է տալիս գոթերենը, thun անել բայի կատարյալն էր. այնպես որ մրգ. ich lône-te բառացի նշանակում է „ich lohnen thun“.

Այս բոլորը տեսնելուց հետո՝ անցնենք հնդեվրոպական բայի խոնարհման:

Հնդեվրոպական նախալեզվի վերջավորութիւնները այնքան են մաշված, որ ալևս կորցրել են իրենց ծագման բոլոր հետքերը: Դերանուններուի հետ եղած նմանութիւնները շատ հետաւ և պատահական են թվում: Ալսպես եզակի ա դեմքի m,mi վերջավորութիւնները նոյն են «ես» դերանվան հայցականի հետ (սանս. mām, հն. με, հալ. mę): Եզակի գ դեմքի վերջավորութիւնը (t) ոմանք համարում են to ցուցականից, բայց սա զուտ ենթադրութիւն է (Henry, Gr. comp. gr. 195), վերջապես հգ. ա դեմքի վերջավորութիւնը (mes) ճիշտ նոյն է անձնական դերանվան ա դեմքի հոգ. mes ձևի հետ: Մյուսների մասին ոչինչ չունենք ասելու:

ԳԼՈՒԽ Ե

ԲԱՅԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՒՄ

1. ԲԱՅԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆՈՒՄ

Վերջավորութիւն ենք կոչում այն մասնիկները, որոնք ավելանալով բայի բնի ծայրին, որոշում են նրա թիվը, դեմքը և սեռը, այսինքն կազմում են ամբողջ խոնարհումը: Վերջավորութիւնները բաժանվում են նախ երկու խմբի՝ ներգործական և հասարակ. սրանցից յուրաքանչյուրը ունի նույնպես երկու կարգ՝ առաջին և երկրորդ. բացի սրանից կան հրամայականի, ինչպես և ներգործականի սահմանական կատարյալի համար հատուկ վերջավորութիւններ: Վերջավորութիւնները տարբերվում են նաև ըստ թվի և ըստ դեմքի:

Ըստ այսմ հնդեվրոպական նախալեզվի մեջ բայական որևէ վերջավորութիւն որոշված է չորս կեսերով. 1) թե նա ինչ սեռ է (ներգործական թե հասարակ), 2) թե նա ինչ կարգ է (առաջին թե երկրորդ, և կամ կատարյալ թե հրամայական), 3) թե նա ինչ թիվ է (եզակի, երկակի, թե հոգնակի) և 4) թե նա ինչ դեմք է (առաջին, երկրորդ, թե երրորդ). օրինակ՝ հնխ. -o ներգործական բայի առաջին կարգի եզակի թվի առաջին դեմքի վերջավորութիւնն է:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Առաջին կարգ

Եզակի

Ա դեմքի վերջավորութիւնն է անբաւն ձևերի մեջ mi, բնավոր ձևերի մեջ ō. հնխ. *es*-mi, կամիս. ešmi «եմ», epmi «առնում», հմմտ. սանս. ás-mi, հալ. jes-mi, հն. εἰμι, ալբան. jam, գոթ. im, լս. sum, հյ. եմ.— հնխ. bhéro> հն. φέρω, լս. ferō, գոթ. baira,

հիւլ.—biur<-*berū «բերեմ».— առնակրիտի, մասամբ իրանականի և հալերենի մէջ անբուն ձևերի mi մասնիկը անցել է նաև այսոհեդ. ըստ այմ առնս. bhárami=հլ. բերեմ, prččhā'mi=հարցնեմ, սլավականի մէջ ավելացել է անգալին ձայնը, ինչպես՝ հսլ. berǫ «առնում եմ»:

Բ դեմքի վերջավորութիւնն է անբուն ձևերի մէջ si, հմմտ. կամիս. epši, «առնուս», ešši?, առնս. ási, հն. εἶ, դոր. և հոմեր. ἐσ-σι, հլտ. ess, լտ. es, գոթ. is, հլ. ես.— *բնաւոր ձևերի վերջավորութիւնն էր* -ei. *ինչպես ցույց է տալիս լիտ.* neši «բերես», *որ մյուս լեզուների մէջ խառնվելով* անբուն si *վերջավորութիւնն հետո՝ տվեց* առնս. bhára-si, *գոթ.* bairi-s, *լտ.* feri-s, հն. φέρεις, հլ. բերես:

Գ դեմքի վերջավորութիւնն է անբուն ձևերի մէջ ti, *իսկ բնաւորների մէջ* t. *առաջինի օրինակ են՝* հնխ. es-ti> կամիս. eš-zi, առնս. ás-ti, հն. ἔσ-τι, հոռս. jes-tī, հլիթ. es-ti, հիւլ. is (<*es-ti), գոթ. is-t, լտ. es-t = հլ. է (<esti): *Բնաւորների* t *վերջավորութիւնը ցույց են տալիս* հն. φέρει, լիթ. vẽžà, հիւլ. beir (<*be-ret), *որ մյուս լեզուների մէջ* անբուն ձևի նմանութիւնով դարձել է ti. հմմտ. առնս. váha-ti, հոռս. veze-tī, գոթ. -wigi-θ, լտ. vehi-t *են:*

Երկակի

Ա դեմքի համար գտնում ենք առնս. -vas, գնդ. -vahi, գոթ. -jos, հսլ. -vě, լիթ. -va *վերջավորութիւնները. Բ դեմքի համար՝* tā(n), հմմտ. առնս. thas, հն. τον, գոթ. ts, լիթ. ta, հսլ. ta.— *Գ դեմքի համար՝* tā(n), հմմտ. առնս. tas, հն. τον, հսլ. te, ta: *Այս ձևերը կատարելապես համաձայն չեն իրար հետ և չեն կարող երևան հանել ճիշտ նախաձևը:*

Հոգնակի

Ա դեմքի վերջավորութիւնն է mes, *որից կազմված է* վեդ. masi, առնս. mas, գնդ. mahi, հն. դոր. μες (*այլուր* μεν), լտ. mus հբգ. mēs, հսլ. mŭ, mo, me, my, լիթ. ma *են:— կամիս. վերջավորութիւնն է* -ueni. *ինչպես՝* ešueni *եմք*, ebbueni *առնումք*, iyaueni *առնեմք.*

Բ դեմքի վերջավորութիւնն է the, *որից կազմված են* առնս. tha, գնդ. θā, հն. τε, հսլ. te, լտ. tis (s *հավելվածով*): *Կամիս.* te-ni, *ինչպես՝* ešteni *էք*, epteni *առնէք*. iyatteni *առնէք:*

Գ դեմքի վերջավորութիւնն է enti, onti, nti, հնխ. s-énti> կամիս. ašanzi, առնս. s-ánti, դոր. ἔντι, աւտս. εἰσι, ումբր. s-ent գոթ. s-ind, հբգ. s-int, լտ. s-unt, հսլ. s-ǫtŭ, հոռս. suti «են».—

առնս. dád-ati, bhára-nti, հն. δίδο-ντι, φέρο-ντι, աւտս. φέροῦσι, հլտ. tremonti, լտ. vehu-nt, հսլ. ĕd-ętŭ, dad-ętŭ, vézǫtŭ, հոռս. dad-jatī, vezutī, գոթ. baira-nd, *են:*

բ) Երկրորդ կարգ

Եզակի

Ա դեմքի վերջավորութիւնն է m *կամ* n. *ինչպես՝* առնս, ábhara-m «բերում էի» = հն. ἔφερο-ν, առնս. syắm «իցեմ», լտ. siēm, հն. εἴην, հսլ. padŭ (<*pōde-n) «ընկա». nēsŭ «բերի»: *Կամիս.* preterit-*ի* m *դեմքում* -un. *ինչպես՝ լինել, առնել, դնել բառերից* ešun, ebbun, iyanun.

Բ դեմքի վերջավորութիւնն է s, *ինչպես՝* առնս. ábhara-s= հն. ἔφερε-ς «բերում էիր», հսլ. pade «ընկար» (<*pōdes), առնս. syā's «իցես»= լտ. siēs = հն. εἴης. գոթ. witeis «գիտիցես»:

Գ դեմքի վերջավորութիւնն է t. *ինչպես՝* առնս. ábhara-t «բերում էր» = հն. ἔφερε (<*εφερετ), հսլ. pade «ընկավ» (<*pōdet), առնս. syā't «իցէ» = հլտ. siēd = հն. εἴη.— *կամիս,* preterit-*ի* գ. *դեմք՝* t, ta. *ինչպես՝* ešta, epta, iyat.

Երկակի

Ա դեմքի համար va, *ինչպես ցույց են տալիս՝* առնս. va, գնդ. va, հսլ. vě, լիթ. va, գոթ. u, wa.—*Բ դեմքի համար* tā, tām, tān> առնս. tam, հն. τον, աւտս. τᾶν, την, գոթ. ts. լիթ. ta, հսլ. ta,— *Գ դեմքի համար՝* tā, tām, tān, *որից* առնս. tām, հն. դոր. τᾶν, աւտս. την, հսլ. te, ta.

Հոգնակի

Ա դեմքի համար՝ men?, *որից վեդ.*mā ma, գնդ. ma, հն. դոր. μες, *մյուսները* μεν, լտ. mus, հսլ. mŭ, mo, my, լիթ. ma, *որոնք նույն են առաջին կարգի հետ.—կամիս.* -uēn. *ինչպես՝* ešuēn, ebbuēn.

Բ դեմքի համար te, *որից* առնս. tá, գնդ. tā, հն. τε, հսլ. te, լտ. tis (s *հավելվածով*): *Կամիս.* -ten. *ինչպես՝* ešten, eptēn.

Գ դեմքի համար ent, ont, nt, հմմտ. առնս. ábharan, հն. ἔφερον, հսլ. padǫ, գնդ. stắnhaț «կանգնեցան» *են:*

Կատարյալի հատուկ վերջավորութիւններն են՝

Եզակի

Ա դեմք՝ u, *որ պահված է զանազան հավելումներով՝* հթ. un, առնս. au, լտ. uī *և թոխար.* wā *ձևերով:*

Բ դեմք՝ tha, *որ ունին* առնս. -tha, գնդ. θa, հն. -θά. հմմտ. առնս. vét-tha, գոթ. waist, լտ. vīdis-t-i, հն. *ϝοῖσθα*, հ. գնդ. vois-ta, կամիս. preterit-*ի Բ դեմքում* ti *կամ* ta, *ինչպես՝* ešti, ešta,

epti, epta, *Գ դեմք՝ նույնպես* u, *որ պահված է դարձյալ գոնագան հավելումներով՝ սանս.* au, *լտ.* uit, *հլ. աւ ձևերով։*

Հոգնակիի մեջ միայն արիականն է, որ կատարյալի հետ ունի հատուկ վերջավորութիւններ, որով կարելի է ենթադրել Ա. դեմք mén, *Բ դեմք* ṭ, *Գ դեմք* r· *կամիս. Գ դեմք* ir. *ինչպես՝* ešir, ebbir, ieir.

ՀԱՄԱՐԱԿԻ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին կարգի և կատարյալի համար.

Եզակի

Ա. դեմք ai, *համմտ. սանս.* bruv-é *ասում եմ,* bhára *բերում եմ,* tutudé *խփվեցի, հայ.* vēd-ē *գիտեմ, հիւլ.* heite *կոչվում եմ, լտ.* tutud-ī. *մյուսների մեջ ներգործականի նմանութիւնով* ai *դարձել է* mai, *ինչպես են հն. φέρομαι, հպրսս.* asmai, *լիթ.* esmi։

Բ դեմք sai, *որից սանս.* se, *հն.* σαι, *լիթ.* si, *գոթ.* za, *համմտ. սանս.* dhat-sé, bhára-se, *հն.* τίθε-σαι, φερε-σαι, *գոթ.* baira-za.

Գ դեմք ai *կամ* tai. *համմտ. վեդ.* çáy-e, duh-e, *սանս.* tutu-d-é, çé-te, bhára-te, *հն.* φέρε-ται, κεῖ-ται, *գոթ.* baira-da.

Երկակին անհայտ է, որովհետև արիականն ու հունարենը տարբեր ձևեր ունին. բոլորն էլ ազգված ներգործականի երկակիից և հասարակի հոգնակիից։

Հոգնակի

Ա. դեմք medhai, *որից գոթ.* maide, *սանս.* mahe *(արիականը* *madhai), *հն.* μεθα.— *մյուսները տարբեր են. ինչպես՝ լտ.* loquimur, *հիւլ.* labrimmir, -labrammar.

Բ դեմքի համար արիականն ունի dhwai *(սանս.* dhve, *գոթ.* duyē), *հունարենը* σθε, *մյուսները ավելի տարբեր են (լտ.* loquiminī, *հիւլ.* labrithe, -labraid). *այնպես որ հնխ. ձևը հայտնի չէ։*

Գ դեմքի համար հնխ. ntai, *համմտ. սանս.* çay-ate, bhára-nte, *հոմեր.* κέ-αται, *հն.* φέρονται, *գոթ.* baira-nda.

Երկրորդ կարգ.

Եզակի

Ա. դեմքի համար արիականն ունի i, *հունարենը* μᾶν *կամ* μην, *որով հնխ. ձևը հայտնի չէ։*

Բ դեմքի համար կա երկու ձև՝ so *և* thēs. *առաջինից են հն. գոթ.* σο, *գոթ.* hā, ša, *լտ.* re *(<se), իսկ երկրորդից՝ սանս.* thās, *հիւլ.* -ther.

Գ դեմքի համար ունինք նույնպես երկու $^{e}/_{o}$ $^{te}/_{o}$, *որոնցից սանս.* a, ta, *հն.* το, *լտ.* -tur, *օսկ.* ter, *ումբր.* ter.

Հոգնակի

Ա. դեմքի համար արիականն ունի madhi *(սանս.* mahi, *գոթ.* maidi), *որ ծագում է հնխ.* medhə *ձևից. սրան համաձայն է հն.* μεθα.

Բ դեմքի համար արիականն ունի dhwan *(սանս.* dhvam, *գոթ.* dūm, ðwəm). *հն.* σθε, *մյուսները հատուկ վերջավորութիւններ չունեն։*

Գ դեմքի համար հնխ. ձևերն են ento, onto, $nt^{e}/_{o}$, *որոնք տալիս են սանս.* ata, *հոմեր.* ατο, *սանս.* nta, *հն.* ντο, *լտ.* ntu-r, *օսկ.* nte-r.

Հրամայականի համար թվում է, թե բայի պարզ բունը առանց որևէ մասնիկի գործածական էր բոլոր դեպքերում, ինչպես՝ հնխ. *bhere *«բերիմ, բեր, բերէք, թող բերէ, են»։ Ավելի հետո այս ձևը հատկացվեց եղ. Բ դեմքին (սորին ձայնդարձով), որովհետև ամենից ավելի այս դեմքն էր գործածական. համմտ. հնխ.* ei *«գնա»> հն. -ει, լտ.* ī, *լիթ.* eī-k, *կամիս.* eš *եղիր,* ep *«սուս»,* iya *«արա»։*

Հնխ. bhére *«բեր»> սանս.* bhára, *հն.* φέρε, *հլ. բեր, գոթ.* bair, *հիւլ.* ber.

Հնխ. ag'e *«տար»> սանս.* áǰa, *հն.* ἄγε, *լտ.* age, *հլ. աժ։*

Հրամայականին կարելի է կցել նաև dhi *և* tōt *մասնիկները, (վերջինը տալիս է սանս.* tōt, *հլտ.* tōt, *լտ.* tō, *հն.* τω, τῶϑι). *ինչպես՝* i-dhi *«գնա»> սանս.* i-hi, *գոթ.* i-ði, *հն.* ἴϑι։ *Այս երկուսը* -dhi *և* -tōt *երևի առանձին մասնիկներ էին և ոչ թե վերջավորութիւն, որովհետև դիմորոշ նշանակութիւն չունեն. վերջինը* tōt *թերևս* to- *ցուցականի բացառական հոլովն է։*

*Հնխ. (*es *արմատից)* z-dhi *«եղիր»> գոթ.* zdī, *հն.* ἴσ-ϑι. *կամիս.* ešdu *թող լինի,* ebtu *թող առնե,* iyddu *թող անե։*

Հնխ. bhére-tōt *«բեր, թող բերէ»> սանս.* bhára-tāt = *հն.* φερέ-τω, ἐλϑετῶσ, *լտ.* estō *«լինի»։*

Հգ. Բ դեմքի վերջավորութիւնն է te. *ինչպես՝ հնխ.* bhére-te *«բերեք»> սանս.* bhára-ta = *հն.* φέρετε = *լտ.* ferte, *կամիս.* tēn. *ինչպես՝* eštēn *եղեք,* ebtēn *առեք,* iyatten *արեք, Գ դեմք* tēn. *ինչպես՝* eštēn *եղեք,* ebtēn *առեք,* iyatten *արեք, Գ դեմք* āšandu *թող լինին,* abbandu *թող առնեն,* iyandu *թող անեն։*

Հրամայականի եղ. և հգ. Գ դեմքերը կազմվում են -tu *վերջավորութիւնով. այսպես՝ հնխ.* bhéretu *«թող բերե»,* bhérentu *«թող բերեն», սրանց ժառանգներն են սանս.* bháratu *թող բերե,*

bhárantu *թող բերեն, կամիս.* kuatu *թող գարնե,* kuantu *թող գարնեն:*

Ծանոթ.— 1. Ներգործականի և հասարակի վերջավորութիւնները հայանի և որոշ կերպով երեւում են արիականի, հին հնդարեկի և մասամբ էլ գոթականի մեջ. լատիներենը և հին իռլանդերենը պահում են հետքեր. մյուսները բոլորը խառնել են իրար:

2. Ներգործականի առաջին կարգի եզակիի վերջավորութիւնց մեջ բնաւոր և անբուն ձևերը նախնարար տարբեր էին ամբողջապես. ապագային բնաւոր ձևերը վերացան՝ հետզհետե վերածվելով անբուններ:

3. Ներգործականի երկրորդ կարգի վերջավորութիւնները մեծ մասամբ տարբերվում են առաջիններից՝ անբուններն i վերջածայնի բացակայութեամբ:

4. Հասարակի վերջավորութիւնները մեծ մասամբ կազմվում են ներգործականներից՝ վերջածայն i դարձնելով ai.

5. Հասարակի երկրորդ կարգի վերջավորութիւնների մի մասը կազմված է առաջիններից՝ ai *դարձնելով* $^{e}/_{o}$.

Վերջավորութեանց ընդհանուր ցուցակը

		Ներգործական		Հասարակ
		անբուն	բնաւոր	
Ա. կարգ				
Եզ.	I	mi	ō	ai(mai)
	II	si	ei	sai
	III	ti	t	ai, tai
Երկ.	I		wes?	
	II		tā(n)?	?
	III		tā(n)?	
Հգ.	I		mes	medhai
	II		the	?
	III		enti, onti, nti	ntai
Բ կարգ				
Եզ.	I		m(n)	?
	II		s	so, thēs
	III		t	$t^{e}/_{o}$, $^{e}/_{o}$

Երկ.	I	va	
	II	tā(m)	
	III	tā(m)	
Հգ.	I	men?	medhə
	II	te	?
	III	ent, ont, nt	ento, onto, nt $^{e}/_{o}$
Կար.			
Եզ.	I	u	
	II	tha	
	III	u	Նույնն է ներկայի հետ
Հգ.	I	mén	
	II	ŋ	
	III	r	

Մնում է խոսել առաջին և երկրորդ կարգի վերջավորութիւնների գործածութեան տեղի մասին:

Վերջավորութիւնների կարգը նպաստում է որոշելու բայի եղանակը և ժամանակը. այսպես՝ ըղձականը առանում է միայն երկրորդ կարգի վերջավորութիւններ. ինչպես՝ առնս. syā't «իցէ», *հն.* εἴη.— *սորարդասականը հնդարենում առանում է միայն առաջին կարգի վերջավորութիւններ, թեև արիականի մեջ առանում է թե՛ առաջին և թե՛ երկրորդ կարգից՝ առանց իմաստի նկատելի տարբերութեան: Կատարյալը և հրամայականը ունեն արդեն առանձին վերջավորութիւններ:*

Ամենակարեորը ներկայի և սորիստի մասին է. առաջին կարգի վերջավորութիւնները կցվելով բայական բունի վրա՝ ցույց են տալիս ներկայի երկու տեսակները (ճիշտ խոսած բոպենին կատարվող ներկա և տեւական — ընդհանուր ներկա). երկրորդ կարգի վերջավորութիւնները կցվելով նույն բունի վրա՝ ցույց են տալիս անցյալը. ինչպես՝ վեդ. bhárati, *համեր.* φέρει «բերում է», *բայց վեդ.* bhárat, *համեր.* φέρε «բերում էր»: *Մի քանի լեզուներ սրա վրա ավելացնում են նաև* e *նախահավելվածը, որի մասին կխոսենք քիչ հետո առանձին:*

Նոր քննութիւնները վերջավորութեանց մասին տալիս են նոր պատկեր. կամիսերենի և այլ լեզուների հայտնութեամբ երևան եկավ, որ հնխ. սկզբնական տարբերութեան չէր դնում ա և ը կարգի վերջավորութեանց և ներգործական ու հասարակ վերջավորու-

թլանց միջև: Այդ տարբերութիւնները բարբառային երևոյթներ էին, որ արիական և հնդեվրոպական ճյուղի մեջ զարգացան ու դերակշիռ դիրք ստացան և որոնք սակայն չկան ընդհանրապես մյուս ժառանգների մեջ:

Այս բոլորից զատ կա նաև r ձևով մի վերջավորութիւն՝ զանազան հնդեվրոպական լեզուների մեջ. այսպես՝ սանս. ներգործական ur, հասարակ re, ire, գնդ. ներգ. arə, əreš, հասարակ re, լատիներէն ur կրավորականի կազմութեան մեջ, թոխարերէնը āre հգ. երրորդ դեմքի համար (weñāre *ասացին*), բրետոներէն ir, ār, er իբրև անցեալ բայի վերջավորութիւն, հին իռլանդերէնում իբրև կրավորական (*ինչպես՝* berir «*բերվում է*», bertir «*բերվում էին*», guibthi-r «*երգվում է*), ամբրիական մեջ անցեալ ձևով (ferar «*բերվի*, ier «*երթացվի*) են: Նոյնպիսի ձև գտնվեց նաև փռյուգերէնում, կամխերէնում: Որովհետև կրավորականը հաճախ անցեալ նշանակութիւն ունի (*ինչպես՝* լտ. ītur «*երթացվի*, հլ. կատվի, կատվի, կրկրվի, թրք. verilir, alənər են), ուստի հիշյալ բոլորից հետևում է, որ նախալեզուն ուներ -r վերջավորութիւնը մի ձև, որ գործ էր ածվում կրավորականների, ինչպես նաև անցեալ բայերի համար:

Այս միևնույն վերջավորութիւնն է, որ գտնում ենք հայերէնի խոնարհման մեջ, հետևյալ տեղերը. Ա.—Բ դեմքի համար՝ 1) արդելական եզ. Բ. մի բերիր, մի լքանիր, 2) հրամ. Բ դեմք. անկիր, լքր. հգ. անկարուք, լուարու՛ք, 3) կար. եզ. Բ դեմք, բերիր, կրավ. բերար, 4) անկատ. էիր, լայիր, լնուիր. բ) Գ դեմքի համար— 1) անկ. էր, լայր, լնոյր, գոյր:*

Ներկայի *ա* դեմքի վերջավորութիւնը

Բնաւոր ձևերն ունեին ա դեմքում ō վերջավորութիւնը, անբուն ձևերը՝ mi. այս վիճակը շատ լավ պահում է հունարէնը. *ինչպես՝* λέγω «*ասում եմ*», δίδωμι «*տալիս եմ*».— սրանցից առաջինը հաստատուն ձև չէր, հատկապես այն լեզուների մեջ, ուր վերջին ձայնավորը լծուլ էր հնչվում, այս պատճառով անա սկսեցին ավելի ուժ տալ mi մասնիկին, mi հետզհետև սկսեց տարածվել և շատ լեզուների մեջ ընդհանուր դարձավ, արիական լեզուների, *ինչպես*

* *Այս մասին առանձին քննութիւն ունի* I. Charpentier, Die Verbalen r- endungen der indogermanischen sprachen (Uppsala 1917), *որի հավելվածը էջ 113—8 հայերէնի մասին է:*

և հայերէնի մեջ արդեն լեզվի պատմութեան սկզբից այդ այդպես է և կարելի չէ իմանալ երևոյթի զարգացման ընթացքը: Այսպես՝ սանս. bhárāmi, գնգ. barāmi, հլ. բերեմ. և եթե հին գնդերենի (գրքանների) մեջ պատահմամբ չգտնեինք ō ձևը (օրինակ՝ barā, որ ուշ ժամանակի գնդերենում դառնում է barāmi), այժմ չպիտի կարողանայինք ասել, թե արիականն էլ ունեցել է հնագոյն ō ձևով ներկայի ա դեմք: Իռլանդականում միայն բացառիկ դեպքերում դառնում ենք ō. այլուր միշտ mi, գերմանականում թեև գոթ. o ձև ունի, բայց հգ. -m: Ավելի հետաքրքրական է նույն երևոյթի ընթացքը սլավոնական լեզուների մեջ. հին սլավերենում դեռ չորրից հինգ անկանոն բայ միայն ատացել էին այդ mi վերջավորութիւնը. սլավական լեզուների բաժանումից հետո, սլավոնական շրջանում, ամեն մի լեզու առանձին և անկախաբար իր մեջ սկսավ ընդարձակել -m-ի գործածութիւնը, այնպես որ այսօր նա ընդհանուր է դարձած սլավական լեզուների մեծագույն մասի մեջ. հատկապես չեխերենում և սերբերենում: Սերբերենում ամեն բայի ներկայի ա դեմքը վերջավորվում է м և օրինակ՝ մինչդեռ առաջինը ատում է трясу, սերբերենը նույնի փոխարեն ատում է трéсēм (Кульбакинъ, Серб. яз., 73):

2. ՁԱՅՆԴԱՐՁԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՄԵՋ

Ինչպես հոլովման, նույնպես և խոնարհման մեջ հնդեվրոպական ձայնդարձը կատարում է իր դերը: Երբ բայը բնաւոր է, վերջին ձայնավորը մերթ դառնում է e և մերթ o. ահա մի մի օրինակ հնխ. խոնարհման, առաջին և երկրորդ կարգի ներգործակա և կրավորական վերջավորութիւններով:

հնխ.	սնս.	հն.
bhér-ō «*բերեմ*»	bhárāmi	φέρω
bhére-si	bhárasi	φέρεῖς
bhére-ti	bhárati	φέρει
bhéro-mes	bhárāmas	φέρομεν, դոր. φέρομες
bhére-the	bháratha	φέρετε
bhéro-nti	bháranti	φέρουσι, դոր. φέροντι
é-bhero-m «*բերէի*»	ábharam	ἔφερον
é-bhere-s	ábharas	ἔφερες
é-bhere-t	ábharat	ἔφερε

é-bhero-men	ábharāma	ἔφέρομεν
é-bhere-te	ábharata	ἐφέρετε
é-bhero-nt	ábharan	ἔφερον

կրավ.

bhér-?	«բերիմ»	φέρομαι
bhére-sai		φέρῃ
bhére-tai		φέρεται
bhéro-medhai		φερόμεθα
bhére-?		φέρεσθε
bhéro-ntai		φέρονται

Ինչպես մեջբերված օրինակներից երևում է, բնի ձայնավորը եզ. ա, հոգ. ա և գ դեմքերում լինում է o, իսկ եզ. բ, գ, հգ. բ, ինչպես և երկակի բ և գ դեմքերում լինում է e։

Անբուն ձևերի մեջ վերջավորությունից առաջ գտնված ձայնավորը առանում է ձայնգարձի երեք աստիճանները.— ներգործական բայերի եզակիում լինում է e կամ o, կատարյալի մեջ կանոնավորապես o, մյուս ձևերում առանում է սորին աստիճանը. օրինակ՝

ésmi	*եմ*	g^{1}e-g^{1}ón-a	*ծնայ*
éssi	*ես*	g^{1}e-g^{1}ón-tha	
ésti	*է*	g^{1}e-g^{1}ón-e	
smés	*ենք*	g^{1}e-g^{1}ṇ-mén	
sthé	*եք*	g^{1}e-g^{1}	
sṇti	*են*	g^{1}e-g^{1}ṇ-r	

Երբեմն պատահում են բնի ձայնավորի երկար ու կարճ ձևեր. օրինակ՝ «ուտել» նշանակող բայի մեջ ունենք e, ē, o, ō ձևերը, համմտ. լտ. ēst. edund, հալ. ēdętŭ, սանս. àtti «ուտում է», հն. ὀδ-όντ, հյ. «ատամ» (<ōd-)։

Հնդեվրոպական խոնարհման ձայնգարձը ժառանգ լեզուներից պահում են միայն սանսկրիտը, հունարենը, ինչպես նաև գոթականը, լատինականը և սլավերենը։ Սանսկրիտն e և o ձայնավորները հավասարապես a-ի վերածած լինելով, ձայնգարձի այս կողմը ջնջած է, բայց ուրիշ դեպքերում պահում է։ Հունարենը ամենից ավելի հավատարիմ է ձայնգարձին, որ և պատճառ է դառնում հունարենի խոնարհման չափազանց դժվարությունն և առերևույթ

անկանոնությունն։ Նույնը նաև սանսկրիտի մեջ, որ սակայն ուրիշ բան չէ, եթե ոչ հնդեվրոպական նախալեզվի որոշ կանոնավոր դրությանը շարունակությունը. համմտ. հետևյալ օրինակը.

հնխ.		*սանս.*	*հն.*
ei-mi	*գնում եմ*	émi	εἶμι
ei-si		éṣi	εἶ
ei-ti		éti	εἶσι
i-mes		imás	ἴμεν
i-the		ithá	ἴτε
yṇti		yánti	ἴᾶσι

Ձայնգարձի դրությունը ներկայացնելու համար նաև ուրիշ լեզուների մեջ, տալիս ենք հաջորդ օրինակը՝

գոթ.	*լտ.*	*հալ.*
wiga	vehō	vezǫ
wigis	vehis	vezeši
wigiþ	vehit	vezetŭ
wigam		
wigiþ		vezete
wigand	vehunt	vezǫtŭ

Այսպես նաև գոթ. nima, nam, nēmum, numans «առնել», baira, bar, bērum, baúrans «կրել», giba, gaf, gēbum, gibans «տալ» են։

Ձայնգարձի այս դրությունն է, որ շարունակվում է գերմանեբենի, անգլերենի, շվեդերենի, դանիերենի մեջ և կազմում նրանց անկանոն բայերի սովոր շարքը (գերմ. starke Verben)։

Օրինակ՝

դանիերեն	skrive	*գրել*	skrev	*գրեի*
»	drikke	*խմել*	drak	*խմեի,*

har drukket *խմած։*

Շվեդերենում ձայնգարձով խոնարհումը ամբողջապես կազմում է նրանց չորրորդ լծորդությունը։

3. ՏՈՆԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՄԵՋ

Բայը նախադասության մեջ կարող է երբեմն առանձնել տոն և երբեմն միալ առանց տոնի, ինչպես ճշտիվ ցույց է տալիս վեդայական հնդկերենը:

Երբ բայը բնավոր է, տոնը ընկնում է բնի վանկերից մեկի վրա, բայց ոչ բնավ վերջավորության վրա. ինչ վանկի վրա որ ընկավ տոնը, նույնը միում է մինչև վերջը: Այսպես՝ bhérō *բայի խոնարհման մեջ՝ որ տեսանք վերևում, տոնը միշտ é վանկի վրա է: Մի ուրիշ դեպքում տոնը կարող է ընկնել բնի վերջին ձայնավորի վրա. ինչպես՝ սանս.* sŕjá-ti, sŕjá-nti *«արձակում է, են»:*

Անուն ձևերի մեջ տոնը կարող է ընկնել թե բնի և թե վերջավորության վրա և իր տեղը խոնարհման մեջ փոփոխական է: Ներգործականի մեջ շեշտը ընկնում էր վերջավորության նախորդ վանկի վրա՝ եզակիում, իսկ մյուս թվերում վերջավորության վրա, համա.

հնխ. ei-mi *«գնում եմ»,* imés *«գնում ենք»*
հնխ. veida *«գիտեմ»,* vidmén *«գիտենք»:*

Հասարակ բայերի մեջ տոնը ընկնում էր, ինչպես վեդայական հնդկերենից երևում է, ընդհանրապես վերջավորության վրա, բայց կարող էր ընկնել նաև նախավանկի վրա: Կրկնավոր բայերի մեջ, դարձյալ ըստ վեդայականի, տոնը ընկնում է կամ կրկնական վանկի վրա և կամ վերջավորության վրա. ինչպես՝ սանս. bíbharmi *բերեմ,* bibhṛmás *բերեմք:*

Ժառանգ լեզուներից վեդայական հնդկերենն է, որ ամենից ավելի հավատարիմ կերպով պահել է հնդեվրոպական նախալեզվի տոնը, ձայնաբանական հետքեր կան նաև գերմանականում, մյուսները փոփոխել են. այսպես՝ հունարենը և լատիներենը շեշտը դնում են բառավերջից սկսած երկրորդ կամ երրորդ վանկի վրա. բայց հունարենը հնդեվրոպական նախալեզվի շեշտը անփոփոխ պահում է դերբայների և անորոշի վրա, ինչպես՝ ἰ-ών «երթալով» են:

4. ՆԱԽԱՀԱՎԵԼՎԱԾ e

Սահմանականի այն ձևերը, որոնք կազմվում են երկրորդական վերջավորություններով, կարող են առանձել սկզբից e *ձայնավորը: Այս օրենքը պահված է միայն արիական, հայ և հույն և թրակո-փռյուգական լեզուների մեջ, հետևաբար կար նաև հնդեվրոպա-*

կան նախալեզվի մեջ, բայց ընդհանուր գործածություն չուներ, այլ հատուկ էր արևելյան բարբառին: Որովհետև արևմտյան լեզուների և հատկապես լատիներենի հնագույն շրջանի և վաղնջական լուսանկարների մեջ ոչ մի հետք չկա նրանից, ուստի հետևում է, որ հնդեվրոպացոց արևմտյան բարբառներն էլ հնագույն դարձյան չուներ (Meillet, Dial. *էջ 101)*:

Նախահավելված e *առանում է տոնը իր վրա.*

վեդ. á-bharat	*հյ.*	*երեր հն.*	ἔφερε
á-dhât		*եդ*	ἔθηκε
սանս. á-ričat		*ելիք*	ἔλιπε

Ձայնորդների մոտ երկարելով դառնում է ē. *ինչպես՝ վեդ.* â′-vṛṇak *դարձրեց, հոմեր.* ἠ-ϝεῖδειᾱ *գիտեիր, առատ.* ἦα, ἦμεν, *վեդ.* āi-ma *«երթալաք»:*

Երբ բունը սկսի զուտ ձայնավորով, նախահավելվածը ամփոփվում է.

հնխ. es *«լինել»— սանս.* ās *«էր», դոր.* ἦς.
հնխ. ág¹e *«առանել»— սանս.* âǰat. *դոր.* ἄγε, *առատ.* ἦγε, *հյ.ած:*

Նախահավելվածը բայի մաս չի կազմում. միայն հարս. նա պարատակտիր է[1], զննդերենում հազվագյուտ, իսկ հայերենի, վեդայականի և հոմերական լեզվի մեջ սրա գործածությունը կանավոր է, ինչպես՝ հոմեր. ἔφαρε կամ φέρε. վեդ. ábharat *կամ* bhárat *«բերէր»* (V. Henry. Manuel sans. véd., 30), *հյ. ճառ կամ եճառ: Բոլորի մեջ էլ երկու ձևերի իմաստը միևնույն է: Հայերենի մեջ այս նախահավելվածը գրվում է միայն միավանկ բայերի վրա. ինչպես՝ երեր, եղ, եհ են և ուրիշ դեպքերով՝ եառու, եառուր են: Հոմերոսի մեջ էլ, ինչպես նաև վեդաներում և պրակրիտում նախահավելվածը կապ ունի բայի երկարության հետ. օրինակ՝ Հոմերոսի մեջ ունենք միշտ ἔσχε և ոչ երբեք *σχε. բազմավանկները ազատ են այս հավելվածից. սրանից հետևում է, թե հայերենը բնդունել է հավելվածը՝ միայն շատ կարճացած բայերին ավելի երկարության տալու համար:*

Հակառակ մյուս լեզուների, հայերենի մեջ ձայնավորով սկսող բայերը այս հավելվածը չեն առանում, այսպես ած, եղ, օծ, հետին ժամանակի կազմություններ են էած, էօծ ձևերը և Ավետարանի

[1] *Meillet*, Gram. du v. p., 127.

հին ձեռագրերը այսպիսի ձև չեն ճանաչում։ Այստեղ կարելի էր կարծել, որ հայ. ե ձայնավորը միացել է հաջորդ ձայնավորի հետ և երկուսը միասին ձուլվել են իրար մեջ (Աբրա. 1915, 407)։ Ըստ այսմ իբր թե հայ. ած ներկայացնում է հնխ. երկար ā ձայնը, քանի որ ա գալիս է թե a և թե ā ձևից, բայց այդ ճիշտ չէ, որովհետև ել ձևի մեջ գտնում ենք l<հնխ. e և ոչ թե երկար ē, որ պիտի տար հյ. ի։

Նմանապես կարելի էր կարծել, որ ի իբր թե համապատասխանում է հն. η (երկար) նախահավելվածին, համա. ἦια «գնում էի», ἠείδη «գիտեր» ևն. բայց այս բոլորի մեջ η առաջացել է կանոնավոր կերպով՝ ε միանալով հաջորդ ձայնավորին. սրանցից սակայն հետո համաբանութեամբ տարածվել է նաև անկանոն կերպով ուրիշ բայերի վրա. այսպես բյուզանդականում և նոր հունարենում, ուստի ոչ մի կապ η-ի և ե-ի միջև, որ ձայնավորի մոտ դրութեան ձև է (Henry, Gr. comp. gr., 272)։

Հնդեվրոպական նախալեզուն չուներ նախամասնիկի դրութեյունը, ուստի բայերի այս e նախահավելվածը կարելի չէ նախամասնիկ համարել, այլ անկախ բառ։ Այս բանը ապացուցվում է հետևյալ միջոցով։

Հունարենում ձայնական օրենք է, որ եթե բայը ունենա մի քանի նախամասնիկ, շիշառ չի կարող բային անմիջապես կից նախամասնիկից այն կողմ անցնել. օրինակ՝ ասում է.

παρ-έ-σχον և ոչ թե παρ-ε-σχόν

որովհետև նախահավելվածն էլ համարվում է բայական նախամասնիկ։ Եվ որովհետև հունարենի բայական նախամասնիկները նախկին անկախ բառեր են, ուստի այսպես է նաև e։

Որովհետև հնդեվրոպական բայաձևը ինքնին անցյալ ժամանակի գաղափարը չէր տալիս, ուստի e նախահավելվածը դարձավ իբր պարտադիր նշան անցյալ ժամանակի համար (Brugmann, Abrégé, 513), սրա համար է, որ հայերենն էլ պահեց նույնը կատարյալում. և եթե ապառնիում էլ է դրվում, այդ նրանից է, որ մեր ապառնին կատարյալից է ձևնվում ընդհանրապես, իսկ երբ ապառնին անկախ է, թեև միավանկ, բայց չունի ե նախահավելվածը, ինչպես՝ ասց (ոչ թե *եասց)։ Սրա համար է նաև այն, որ երբ հունարենում, սանսկրիտում և իրանականում անցյալ նշանակող որևէ բառ կար դրված բայի մոտ (երեկ, առաջ, հերու ևն), նախահավելված չէր դրվում, սրանով անենում էին երկու ձև մեկ ժամանակ. ինչպես՝ վեդ. bháram և ábharam, համեր. φέρον, ἔφερον (Brugmann, անդ. էջ 514)։ Այս եղավ պատճառը, որ 1) արևմտյան լեզուների մեջ նախահավելվածը ջնջվեց, 2) հայերենի մեջ երկար բառերը դուրկ մնացին սրանից։

Նոր լեզուների մեջ նախահավելվածի գործածութեյունը խախտվեց. սանսկրիտի հետ պալին և պրակրիտը դեռ շարունակում են նրա գործածութեյունը. հին պարսկերենում նախահավելվածը միշտ կա, բայց պահլավերենում և պարսկերենում ջնջված է, թեև արդի իրանական բարբառներից յաղնոբին մինչև այժմ շարունակում է։ Հունարենը դեռ շարունակում էր իր գոյութեյունը կանոնավոր կերպով, իսկ հայերենում ջնջվել է՝ սկսած միջին հայերենից, այն պատճառով, որ բայի միավանկ ձևերը վերածվեցին երկավանկի (Meillet, Les dial, 98)։

Նախահավելվածը նոր հունարենում խոնարհման մեջ համարյա թե ջնջված է, եղածներն էլ բացառութեյուն են համարվում, իսկ կրկնութեյունը բայի մեջ բոլորովին ջնջված է. այսպես նաև հայերենում, միայն Ն. Ջուղան է պահում (արարի)։

5. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԵՏԱԳԱ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ

Հնդեվրոպական նախալեզվի խոնարհման այս կենդանի դրութեյունը հետագայում ամբողջովին ձևափոխվեց. փոխանակ ընդունելու բայական գանազան բնների գոյութեյունը, ժառանգ լեզուները ընտրեցին դրանցից մեկը կամ երկուսը և ընդհանրացրին ամբողջ խոնարհման մեջ։ Այսպես ձևացան լծորդութեյունները գանազան լեզուների մեջ։ Միայն հոմերական հունարենը, վեդայական հնդկերենն ու Ավեստայի լեզուն են, որ պահում են դեռ բայերի հին կազմութեյունը՝ գանազան բներով։ Դրա համար էլ այս լեզուների մեջ բայի խոնարհումը քերականութեյան ամենադժվար մասն է՝ լիքը անկանոնութեյուններով, որոնք առանց համեմատական քերականութեյան անըմբռնելի և անբացատրելի են։ Ո՞ր հույնը կարող էր բացատրել, թե ինչ կապ կա օրինակ՝ ἔπαθον, πέπονθα, πείσομαι ձևերի մեջ, որոնք ներկայացնում են միևնույն «զգալ» (հնխ. penth-) բայի գանազան ժամանակները (Meillet, Traité, 189)։

Պարզաբանելու համար երևույթը, առնենք մի օրինակ հունարենից. հնխ. men «մնալ» արմատից հին հունարենն ուներ երկու առանձին ներկա՝ պարզ μένα և կրկնավոր μίμνω, ապառնի μενέω, առբիտա ἔμεινα, կատարյալ μεμένηκα, այսինքն հինգ տարբեր բներ։ Նոր հունարենը այս հնգից ընտրեց միայն առաջինը և չորրորդը

(ներկա և կատարյալ բներ) և մյուսները մոռացության ավից: Բայց որովհետև μένω և ἔμεινα իրար այլևս անհամապատասխան ձևեր են, առաջինն էլ երկրորդի օրինակով ձևափոխելով կազմից նեղկալի μείνω ձևը:

Բայական բների ջնջումը հունարենում տեղի ունեցավ պատմական շրջանում, իսկ լատիներենում ավելի հին է: Այդ հնագույն շրջանից լատինական բայը ունի երկու բուն. անկատար (infectum) և կատարյալ (perfectum): Այսպես օրինակ՝ նույն հնխ. men արմատից՝ անկատարի բունն է maneō և կար. mansī. առաջինից ծագում են ներկ. maneō, հրմ. manĕ, սապ. maneam, անկ. manēbam, սապ. անց. manērem, ապառնի manētō, անորոշ manēre, դերբայ manens, իսկ երկրորդից՝ կար. mansī, սապ. manserim, գերբակատար manseram, սապ. գերակ. mansissem, անցյալ ապ. manserō, անորոշ mansisse, նաև սուպինում mansum՝ ձևը: Պետք է ավելացնել, որ այս օրինակը գոնե անկանոններից է, իսկ սրիշ բայեր ավելի կանոնավորել են լծորդությունը և երկու բներից առաջինը գործածել է նաև երկրորդը:

Սանսկրիտից էլ պրակրիտին անցնելու շրջանին բայը շատ բան կորցրեց. երկակին բոլորովին վերացավ, շատ բայական ձևեր ջնջվեցին և էական բայով (as կամ thū) կազմված բարդաբայ ձևվերով փոխանակվեցին, մինչև անգամ ապառնին փոխվեց և նոր ձև առացավ, սանսկրիտի 10 բայական ձևերը իրար խառնվեցին (Pischel, էջ 321):

Հնդկական պալի լեզվում բայի խոնարհումը նույն է սանսկրիտի հետ, բայց շատ ավելի պարզված է. նախ չունի երկակի, որով ջնջված է մնում բայական վերջավորությունների 1/3 մասը. չկա հասարակ բայ կոչված (moyenne) ձևը. կրավորական բայը թեև կազմվում է սանսկրիտի նման -ya- մասնիկով, բայց դրանից միշտ առանում է ներգործականի վերջավորության ձևը. օրինակ՝ dīyati «տրվում է»: Պալին ատել է չափազանց շատ բայական նոր ձևեր, բայց բոլորն էլ միօրինակ կանոնավորության համար, այնպես որ ոչ մի դժվարություն չեն հարուցանում (V. Henry, 78. 83):

Նոր հնդկերեն լեզուների մեջ քերականության ամենափոխված մասը բայն է. կորցրել են սանսկրիտի ժամանակները և հատկապես անցյալը, որի կազմությունը շատ բարդ էր, նրա տեղը հնարել են զանազան ձևեր, որոնք իրարից շատ տարբեր են լեզվից լեզու:

Ահա թե ինչպես է նկարագրում Գայգերը սանսկրիտից մինչև նոր. հնդկական սինհալի լեզվի փոխանցումը:—Բայի հին սխեմեը

քանդված է. չկա ներգործական և հասարակ բայերի խոնարհման տարբերությունը. ջնջված են ապառնիի, անկատարի, սորիստի և կատարյալի ձևերը. չկան ստորադասական և կարդողական եղանակները, միասին են ներկան, անցյալը (որ կազմվում է անցյալ դերբայից), նոր ապառնին (որ կազմվում է ներկա դերբայից), հրամայականը, իսկ ըղձական և թեական եղանակները նոր ձևի կազմության են ստացել: Ունի անցողական բայ, նոր ձևի կրավորական, երկու տեսակ ապառնի դերբայ, զանազան անեղեալներ, ներկա և անցյալ դերբայներ: Լծորդությունը երեք է, որոնց մեջ բայը ունի երկու բուն (մի ներկա և մի կատարյալ): Այսպիսով բայի ամենակարևոր մասը կազմում են դերբայները: Բայի երեք լծորդությունները բայի բնի վերջում գտնված ձայնավորի համեմատ են» (Geiger, 133):

Նույն երևույթը տեղի ունեցավ նաև պարսկերենի մեջ: Հին պարսկերենը և զենդերենը մյուս հին լեզուների նման ներկայացնում են զանազան բներ: Բայց բոլորը կրճատվելով վերածվեցին ընդամենը երկու բնի ամբողջ Իրանում, բայց այդ երևույթը ոչ թե իրարից փոխ առնելով է առաջացել, այլ յուրաքանչյուրի մեջ անկախաբար և տարբեր ճանապարհներով. այսպես օրինակ՝ սոգդերենում (Benveniste, էջ 2—3). արդի պարսկերենը նրանցից պահում է միայն երկուսը, մեկը ներկայի (և նրանից ածանցված ձևերի համար), մյուսը կատարյալի (և նրանից ածանցված ձևերի համար): Ոչ մի կանոն չկա այս երկու բները որոշելու համար և արդի պարսկերենի քերականության մեջ նրանք համարվում են սովորաբար անկանոն բայեր: Օրինակ՝ avīxt-avīz «կախել», šināxt-šināš «ճանաչել», šinī-šinav «լսել», firūxt-firūš «վաճառել», šust-šūy «լվալ» են: Բայց նոր պարսկերենը ավելի առաջ է գնում և այս կրկնակ բներն էլ հետզհետե վերածում է մեկի. հենց վերի օրինակների մեջ կրկին բներից առաջինները թեև գործածական, բայց նրանց հետ միասին գործածական են նաև երկրորդները իրրև առաջին բուն. այսպես՝ անորոշը, որ ըստ օրինի կազմվելով ա բնից, տալիս է avīxtan, šinaxtan, šinīdan, firūxtan, šustan, այժմ երկրորդ բնից կազմվելով տալիս է նաև avīzīdan, šināsīdan, šinavīdan, firušīdan, šūyīdan են: Ճիշտ այս ոճով են ջնջվում նաև աֆղաներենի և բելուջերենի կրկնակ բայական բները և վերածվում մեկի (Gr. ir. phil. I, 219, 242):

Այս գործընթացն ահա ունեցավ բոլոր լեզուների մեջ, որոնք մի առ մի հիշել ավելորդ եմ գտնում, ինչպես և հայերենի մեջ:

Այսպիսով, բալերի խոնարհման դրութիւնը համեմատութեամբ հնդեվրոպական նախալեզվի, չափազանց պարզվեց, կազմվեցան դանազան լծորդութիւններ, որոնք՝ ըստ որում լուրաքանչյուր լեզվի մեջ անկախորեն են ձևացած, դանազան են և լեզվից լեզու տարբերվում են:

Այսպես, օրինակ՝ լատիներենում կա չորս լծորդութիւն, որոնք որոշվում են անորոշի վերջավորութեամբ: Բոլորն էլ վերջանում են -re, բայց այս վերջավորութեան և բալի արմատի միջև մտնում է մի ձայնավոր, որ և մատնանշում է լծորդութիւնը:

Առաջին լծորդութեան նշանն է կարճ ĭ, որ r-ի մոտ դառնում է ĕ:

Երկրորդ լծորդութեան նշանն է ā, երրորդի ē, չորրորդի ī, զուտ այսմ աներևութիի չորս ձևերն են՝ ĕre, āre, ēre, īre: Այս չորս ձայնավորները և ներկայացնում են հնդեվրոպական նախալեզվի բալական բնները:

Բալական բների ջնջման մեջ առանձնապես հետաքրքիր է անգալին բունը: Հնդեվրոպական նախալեզուն միջամատնիկ չուներ, բացի այս բներից. այսպես, օրինակ՝ հնխ. leik^{w} «թողուլ» արմատից link^{w} կամ li-ne-k^{w} ձևը: Հետագային բոլոր լեզուներն էլ աշխատում են ջնջել այս ձևը և միակ բացառութիւն կազմող միջամատնիկը վերածել հետամատնիկի: Անգալին տիպը ևս է միայն մասամբ լատիներենի և բալթյան ընտանիքի մեջ, ուր կազմում է անվանական բալեր. ինչպես՝ լիթ. bąlu՝ «սպիտակիմ»: Շարժումը դուրընթաց է դանազան լեզուների մեջ, բայց իրարից անկախաբար, այնպես որ բոլորն էլ հասնում են նույն արդյունքին: Եվ այժմ հաճախ դժվար է որոշել, թե այս ինչ բալը, որ կազմված է անգալին հետամատնիկով, իրապես հետամատնիկով է, թե նախնավոր միջամատնկավոր ձևի կերպարանափոխութիւնը: Հարցը վճռվում է միայն համեմատական ճանապարհով, երբ դանվեն ուրիշ լեզուների մեջ միջամատնիկավոր անգալին ձևեր. այսպես՝ հն. ζεύγνυμι կազմված է -νυ- հետամատնիկով, բայց անշուշտ նախապես միջամատնիկավոր էր, որովհետև ունենք սանս. yunákti, լատ. iungō, լիտ. jùngiu— հյ. լիզանեմ. ինչպես նա հն. λιχνεύω հետամատնիկավոր ձևեր են և կարելի չափազանց լիներ ենթադրել ուրիշ ձև, երբ չլիներ լատ. lingō, որ ցույց է տալիս, թե սկզբնականը միջամատնիկավոր է և հյ. և հն. հիշյալ ձևերը նոր կերպարանափոխութիւններ են:

Ավելի ճակատագրական եղավ բալի վերջավորութիւնների ջնջումը:

Մենք գիտենք, որ հնդեվրոպական նախալեզվի մեջ բալի յուրաքանչյուր կարգ (catégorie) մի առանձին մատնիկով չի արտահայտվում. այսպես թուրքերեն ասում ենք.

ներգ.	կոր.	sev-di-m	sev-di-n	sev-di
	ապ.	sev-eǰeg-im	sev-eǰek-sin	sev-eǰek
	առոր.	sev-se-m	sev-se-n	sev-se
կրավ.	կոր.	sev-il-di-m	sev-il-di-n	sev-il-di
	ապ.	sev-il-eǰeg-im	sev-il-eǰek-sin	sev-il-eǰek
	առոր.	sev-il-se-m	sev-il-se-n	sev-il-se
հարկ.	կոր.	sev-in-di-m		
	ապ.	sev-in-eǰeg-im		
	առոր.	sev-in-se-m		

որոնց մեջ բալի սեռը, դեմքը, թիվը, ժամանակը և եղանակը առանձին նշաններ ունեն և դրանք ընդհանուր են բոլորի մեջ. այսպես՝ sev-di-m, sev-il-di-m, sev-in-di-m ձևերի մեջ di կատարյալի նշան է, il կրավորականի, in հասարակի, m առաջին դեմքի են: Նույնը և մյուսների մեջ:

Այսպես նաև դրավիդյան լեզուների մեջ, երբ ասում ենք

iḷi-d-enu *իջա*, nuḍi-d-i *ասացիր* են,

d կատարյալի նշան է, enu եզ. ա դեմքի, i եզ. բ դեմքի են: (Caldwell, 497):

Սակայն հնդեվրոպական լեզուների մեջ այսպես չէ. օրինակ՝ հայերենի մեջ՝

ներգ.	հատի	հատեր	հատ
կրավ.	հատայ	հատար	հատաւ

ձևերի մեջ ի միաժամանակ ներգ. կոր. եզ. ա դեմքի նշանն է, այ միաժամանակ կրավ. կոր. եզ. ա դեմքի նշանն է են. և ոչինչ հայտնի չէ, թե ինչ ուժի է այստեղ կատարյալը կամ եղակին, կամ ներգործականը են:

Հնդեվրոպական նախալեզվի մեջ այս վիճակը ավելի ծանր էր. վերջավորութիւնները իրենց երկու կարդերով, իրենց երեք թվերով, երկու բայական սեռերով, ինչպես և ներկայի ու կատարյալի և բնավորի ու անբնի տարբեր տարբեր ձևերով 60-ի էին հասնում: Պարզումը անխուսափելի էր: Եվ ժառանգ լեզուները սկսում են այս գործը՝ շատ հին ժամանակներից: Նախ ջնջվում է երկակին, հետո հասարակ բալերը, երկու եղանակներից (ըղձականն

ու սառրադասականը) մեկը ջնջվում է, (այսպես լտ., իտալներեն, դերմաներեն և հայ), ոմանց մեջ էլ երկուսն է ջնջվում (այսպես բալթիկ-սլավականում, ուր ոչ սառրադասական կա և ոչ ըղձական), կատարյալը վերացվում է. նույնիսկ այն լեզուները, որ իրենց հնադարյան վիճակում ներկայացնում են թե ըղձականն ու թե սառրադասականը, ավելի նոր վիճակում ջնջում են նրանցից մեկը. այսպես նոր հն. համեմատաբար հին հանդարենի և դասական սանսկրիտում ու պրակրիտում՝ համեմատաբար վեդայականի: Հանդարենում ըղձականը ջնջվեց առաջին դարում, սանսկրիտում սառրադասականն է, որ ջնջվեց մեր թվ. շատ առաջ. նույնիսկ այնտեղ, ուր սառրադասականն է պահված, փոխված են եղանակի իմաստը. այսպես լտ. սառրադասականը միշտ կապված է երկրորդական նախադասության հետ և չէ բնավ անկախ. այնպես ինչպես՝ հյ. ո՞վ իցէ:

Ավելի նոր լեզուների մեջ վերջավանկերի սղման ու անկման հետևանքով վերջավորությունները խափա ջնջվում են. այսպես՝ ֆրանսերենի մեջ «ուտում եմ, ուտում ես, ուտում է, ուտում են» հավասարապես ասվում է մանճ, անգլերենի մեջ «սիրում եմ, սիրում ենք, սիրում եք, սիրում են» հավասարապես ասվում է love, դերմաներենի մեջ «ուտում ենք, ուտում եք, ուտում են» հավասարապես ասում են «essen», ռուսերենի մեջ «կերա, կերար, կերավ» հավասարապես кушаль են. քրդերենի մեջ gotə «ասացի, ասացիր, ասաց» են: Այս դեպքում դեմքերի շփոթությունը անհրաժեշտ պահանջ է դնում դերանունների սահմանական գործածությունը և օրինակ՝ ֆրանսերենը պարտական է անպատճառ ասել ժը մանճ, տիւ մանճ, իլ մանճ, անգլերենը I love, we love, they love.

Խոնարհման ժամանակ դերանունների ջնջման կամ պահպանման իրր լավագույն օրինակ կարող է ծառայել պրովանսալ լեզվի խոնարհումը՝ համեմատաբար իր հարակից ֆրանսերենի. այսպես՝

j'ai	ai
tu as	as
il a	a
nous avons	avèn
vous avez	avès
ils ont	an

je suis	siéu
tu es	sies
il est	es, èi
nous sommes	sian
vous êtes	sias
ils sont	soun

Առաջինը դերանունները դնում է, որովհետև բայաձևերը չեն հայտնում դեմքը, իսկ երկրորդը չի դնում դեմքերը, որովհետև բայաձևերը իրարից շատ տարբեր են (Savinian, 44, 46):

Բրետոներեն cârein «սիրել» բայից՝

եզակի		հոգնակի	
me	gâre	me	gârou
te	»	te	»
ean e	gâre	ean e	»
ni e	»	ni e	»
hui e	»	hui e	»
ind e	»	ind e	»

(Guillome, 63)

Քրդ. me gotə, ta gotə, aw gotə են: Առանց դերանունների ոչինչ չի հասկացվի: Այսպես նաև իտալաներենի մեջ, ուր բայը առանձին դեմքերի մեջ առանձին ձև ունենալով կարիք չի զգում դերանուններ էլ գործածելու: Բայց ուր որ բայաձևերը միատեսակ են, շփոթությունից խուսափելու համար գործ են ածում դերանունը. օրինակ՝ tenia «ունեի, ուներ», ուսի ասվում է yo tenia «ունեի», el tenia «ուներ»: Դերանունների այս մշտական ու սովորական գործածությունը սկսում է նսեմացնել նրանց արժեքը, այնպես որ մի կողմից նրանք դառնում են բայական մասնիկ (այսպես՝ je, tu, il մասնիկ են և չունեն անկախ գործածություն) և մյուս կողմից՝ դերանունների համար առաջանում են բուն անկախ ձևեր. (ֆր. moi, toi, lui, քրդ. az. tu, wi են): Ֆրանս. ասում են՝ moi, je mange, toi, tu manges, մինչև անգամ ժողովրդական լեզվով la vache, elle mange, vos amis, ils sont arrivés; ton eau, elle bout են. le tramway, il arrive (Meillet), որից երևում է, որ դերանունը այլևս դերանուն չէ, այլ բայանիշ:

Այսպիսով՝ բներով, ձայնդարձներով ու վերջավորություններով հարուստ հնդեվրոպական խոնարհման փոխարեն գալիս է ան-

փոփոխ բառերով (անջատական) կամ նախամատնիկալին խոնարհում, ճիշտ այնպես, ինչպես վերջավորութիւններով հարատև հոլովումը վերածվում է նախամատնիկալին հոլովման։

Բայերի խոնարհման ջնջման ճանապարհը ցույց է տալիս դարձյալ դանիերենը, որի մեջ թեև ներկայի երեք դեմքերի համար և հոգնակիի երեք դեմքերի համար բայն ունի առանձին ձև, բայց այդ միայն ներկայի մեջ, մյուս ժամանակների մեջ մեկ ձևն է միայն (թե՛ հոգ. և թե՛ եզակի). մինչև իսկ օժանդակ բայերը և մի խումբ ուրիշ բայերի ներկան էլ նոր կամ ժողովրդական լեզվի մեջ հասել է այդ ձևին, թեև հինը դանազան է. օրինակ՝

	ունիմ բայից ներկա	հին ձև		նոր ձև	
		jĕg	haver	jeg	har
		du	haver	du	har
		han	haver	han	har
		vi	haver	vi	har
		I	have	I	har
		de	have	de	har

Նույնպիսի միջին ճանապարհում գտնվում է հինդուստանին, ուր բայի խոնարհումը որոշ ժամանակներում դանազանակերպ է, իսկ որոշ ժամանակներում միայն եզ. և հոգ. տարբեր. ինչպես՝

bolnā *խոսել բայից*

կատարյալ		անկատար	
maiṉ	bolūṉ	maiṉ	bolā
tu	bole	tū	bolā
wah	bole	wah	bolā
ham	boleṉ	ham	bole
tum	bolo	tum	bole
wah	bolen	wah	bole

(Bonnerjea, 18—19)։

Փոփոխվող ձևերը բուն բայականներն են, իսկ անփոփոխները՝ ներբայից կազմվածներն են. այսպես՝ նաև աւս. я хочу, я хотел են։

Այսպես է նաև շվեդերենը, ուր եզակին ամբողջ մի ձև ունի. հոգնակին ա և գ մի ձև ունեն (որ հաճախ եզակիի հետ նույն է)

և բ՝ տարբեր. կանոնավորելու համար մնում էր ջնջել հոգ. բ դեմքը, այդ միջոցին դիմել է ժողովուրդը և հատուկ շվեդերենին լեզվի մեջ այլևս չկան դեմքերի վերջավորութիւններ. դերանունը բավական է. օրինակ՝ «կանչել» բայից.

				դրական շվեդ.		ժող. շվեդ.	
jag	kallar			jag			
du	»			du			
han	»			han			kallar
vi	kalla			vi			
I	kallen			I			
de	kalla			de			

Հնդիկական պալի լեզվի սահմ. ներկայի ներգործական ձևի վերջավորութիւններն են՝

եզ. -mi -si, -ti
հգ. -ma -tha, -anti

(V. Henry, 79)

Հնդեվրոպականից դուրս մի ուրիշ լեզվախմբից էլ օրինակ տալու համար առնենք դրավիդյան լեզվախումբը։ Այստեղ մալայալամ լեզվի մեջ, ինչպես երևում է հին քրիստոնեական և հրեական արձանագրութիւններից, բայը ուներ իր դիմորոշ վերջավորութիւնները. այժմ խոսակցական լեզվի մեջ բայը իր բոլոր այս վերջավորութիւններից զրկված է և դեմքի, թվի ու սեռի տարբերութիւն չկա. ուստի և խոսողները ստիպված են բայից առաջ դնել պատշաճ դերանունը, առանց որի գործող անձը անհայտ պիտի մնար. այսպես՝ ñān aḍiču «գարնում եմ». nī aḍiču «գարնում ես», avam aḍiču «գարնում է» են (Caldwell, 482—3)։

Մի օրինակ էլ աֆրիկյան սոմալի լեզվից, որի համար քննիչը (Praetorius, էջ 162) ասում է հետևյալը։ Ուրնարհման ժամանակ բայը թեև նախապես ստացել է սկզբից և վերջից մասնիկներ, բայց հետո դրանք կրճատվելով կամ խանգարվելով այժմ շատ բան կորել է. այնպես որ շատ դեմքեր նույնացել են իրար հետ. իսկ բացառականը ամբողջովին նույնացել է (մասնիկն է ma). այսպես՝

anaka	ma	yogiṉ
ես	չ	եմ

adeka	ma	yogin
դու	*չ*	*են*
rusuggu	ma	» *նա չէ*
anaka	ma	» *մենք չենք*
adinka	ma	» *դուք չեք*
aiga	ma	» *նրանք չեն:*

Այսպես ուրեմն, կրնանք մտածենք, որ բայական վերջավորութիւնները նոյն դերանուններն են, որ մաշվելով ու ձևափոխվելով բային են խառնվել, և հետո նկատենք, որ այդ վերջավորութիւնները բայերի ծայրից ընկնելով կամ չնչվելով, առաջ են քաշում դերանունների նոր հավելում, կտեսնենք այն շարունակական պատկերը՝ որ կատարում են դերանունները նախ միայով բայի մոտ անկախ տարր, հետո մասնիկ, հետո չնչված և հետո նորից իրրև անկախ տարր երևան եկած:

Այսպիսով ինչպես հոլովման, նոյնպես և խոնարհման հնադոյն բարդ ու կենճոռո ձևը համնում է վերջապես արդի նորագոյն լեզուների վերլուծական դրութիւնն: Այստեղ իրրև միջոց մնք բերում հնդեվրոպական երկու ամենապարզ լեզուների խոնարհման պատկերը: Առաջինն է պարսկերենը, երկրորդը՝ անգլերենը:

Պարսկերենի խոնարհումը անորոշ՝ xorden *ուտել արմատը՝* xōr

Սահմ. ներկա		ներկա (շարունակական)	
xōr-am	*ուտում եմ*	mī-xōr-am	*ուտելիս եմ*
xōr-ī		mī-xōr-ī	
xōr-ad		mī-xōr-ad	
xōr-īm		mī-xōr-īm	
xor-īd		mī-xōr-īd	
xōr-and		mī-xōr-and	

Սաորագասական ներկա

bi-xōr-am	*ուտեմ*
bi-xōr-ī	
bi-xōr-ad	
bi-xōr-īm	
bi-xōr-īd	
bi-xōr-and	

կատարյալ		անկատար	
xōr-d-am	*կերա*	mī-xōr-d-am	*ուտում էի*
xōr-d-ī		mī-xōr-d-ī	
xōr-d		mī-xōr-d	
xōr-d-īm		mī-xōr-d-im	
xōr-d-īd		mī-xōr-d-īd	
xōr-d-and		mī-xōr-d-and	

ապառնի

xāham	xōr-d *պիտի ուտեմ*
xāhi	xōr-d
xāhad	xōr-d
xāhīm	xōr-d
xāhīd	xōr-d
xāhand	xōr-d

հրամ.	bi-xōr	*կեր*	bi-xōr-id	*կերեք*
» *շարու.*	mi-xōr		mi-xōrīd	

հարակատար			գերակատար		
xōr-da	am	*կերել եմ*	xōr-da	būdam	*կերել էի*
xōr-da	ī		xōr-da	būdī	
xōr-da	ast		xōr-da	bud	
xōr-da	īm		xōr-da	būdīm	
xōr-da	īd		xōr-da	būdīd	
xōr-da	and		xōr-da	būdand	

Ինչպես տեսնում ենք, վերջավորութիւնները դեռ մնում են դեմք ու թիվ արտահայտելու համար: Բայց խոնարհումը մի ձևի վերածվելով, կարիք է զգացվել ժամանակ որոշելու համար նախդիրներ (partikeln oder exponenten) *հնարել, որոնք են* mī *և* bī: *Այսպես նաև մյուս իրանական լեզուներում. օրինակ՝*

աֆղ.	vu-	*կազմում է*	*հրամ., ապր., կոր.*
	ba	»	*ապ., շարունակական ներկ. սաորագասականի գերակատարը*
	di	»	jussiv.

(Gr. ir. phil. I, 220)

Անգլերենի խոնարհումը

Անգլիացի քերականագետները խոնարհումը վերածում են չորս ժամանակի՝ յուրաքանչյուրը չորս եղրով։ Այսպես՝

ներկա

պարզ	I	love	սիրում եմ
շարունակական	I	am loving	սիրելիս եմ
կատարյալ	I	have loved	սիրել եմ
» շար.	I	have been loving	սիրելիս եմ եղել

անցյալ

պարզ	I	loved	սիրեցի
շարուն.	I	was loving	սիրելիս էի
կատարյալ	I	had loved	սիրել էի
» շար.	I	had been loving	սիրելիս էի եղել

ապառնի

պարզ	I	shall love	պիտի սիրեմ
շարուն.	I	shall be loving	սիրելիս պիտի լինիմ
կատարյալ	I	» have loved	սիրած » »
» շարուն.	I	» » been loving	սիրելիս եղած պիտի լինիմ

անցյալ ապառնի

պարզ	I	should love	պիտի սիրեի
շար.	I	» be loving	սիրելիս պիտի լինեի՝
կար.	I	» have loving	սիրած պիտի »
» շար.	I	» » been loving	սիրելիս եղած պիտի լինեի

հրամայական եղանակ

պարզ	love	սիրիր
բաղադրյալ.	let me love	թող սիրեմ

Սրանից դուրս Սյուխոը տալիս է նաև հետևյալ կրկնակի բաղադրյալ ձևերը.

I have been being loved			սիրած լինելիս եմ եղել
I had	»	»	էի »
I shall be	»	»	պիտի լինիմ
I shall bave been	»	»	եղած պիտի լինեի
I should be	»	»	պիտի լինեի։

Բայց Նապերսքոը (Phil. gram. էջ 277) ասում է, թե կարելի է կարդալ ամբողջ անգլիական գրականությունը, առանց մի հատիկ օրինակ գտնելու այս ձևերից։

Մենք դրինք միայն յուրաքանչյուր եղրի առաջին դեմքը. տալիս ենք նաև առաջին եղրի բոլոր դեմքերի պատկերը, որոնք համապատասխան են նաև մյուս եղրերը։

I	love	սիրում եմ
thou	lovest	սիրում ես
he (she, it)	loves	սիրում է
we	love	սիրում ենք
you	love	սիրում եք
they	love	սիրում են։

Եթե պարակերենի խոնարհման մեջ վերջավորությունները դեռ ձեռք են դեմք ու թիվ արտահայտելու համար, անգլերենում գրեթե այդ էլ վերջացել է, որովհետև եզակի 2 դեմքը գործածությունից դուրս է ընկած և միայն եզ. 3 դեմքն է ձեռք իրրև վերջին հետք բայական վերջավորությունների։ Բարբառներում այս էլ է ընկել։

Նորագույն հնդեվրոպական լեզուների մեջ ալավականը և հատկապես ռուսերենն է, ուր բայը ունի բարդ խոնարհում, բայց այստեղ էլ շատ հասարակ ձևի է վերածվել սլովեն լեզվի մեջ. այստեղ միայն ներկան և հրամ. են, որ առանձին ձև ունեն, մյուս ժամանակները կազմվում են էական բայով ու դերբայներով. օրինակ՝

ներկ.	govorim	խոսում եմ	govôri	խոսիր
կոր.	(=հարակ.) jaz sem	govoril	խոսել եմ	
		ես եմ		ասացեալ
գերակ.	jaz sem bil	govoril	խոսել եմ	
		ես եմ լեալ	խոսած	
ապ.	jaz bôdem	»	պիտի խոսեմ	
պայմ.	jaz bi	»	կխոսեի, եթե...	
պայմ. անց.	jaz bi bil	»	խոսած կլինեի	
ըղձ. ներկ.	naj govorim		խոսեմ	
» անց.	jaz naj bi govoril		խոսէի	
» անց.	» » » bil	»	խոսած լինեի։	

(Pečnik, էջ 29—34)։

Հնդկերենի և հունարենի բարդ խոնարհման դեմ այս պարզուկ պատկերը՝ ճիշտ այն է, ինչ որ փոխորկածոփ ծովի դեմ անդորր լճակը և մրրկաշունչ թաթառի դեմ հեզասահ սլաքը:

Վերոհիշյալ ձևից զատ բայերի խոնարհումը պարզելու մի ուրիշ ճանապարհ էլ կա, որին դիմել են զանազան լեզուներ՝ զանազան ձևերով և զանազան ուղղություններով— այդ է օժանդակով խոնարհումը:

Օժանդակով խոնարհումը սովորական է լեզուների մեջ, բայց մեկին բաղադրյալ ժամանակների, բայի կրավորական ձևի կամ անցողական բայերի համար են: Մեր խոսքը սրանց մասին չէ: Մենք խոսում ենք այստեղ այն մասին, թե ինչպես լեզուները բայերի սովորական խոնարհման ձևը ջնջում են, պահելով միմիայն մի բայի խոնարհումը, հետևյալ ձևով:

Գրաբարի մեջ կան առնել «առնել» բայով կազմված բազմաթիվ ոճեր, որոնք փոխանակում են համապատասխան բայեր. ինչպես՝

աղօթս առնել = աղոթել
պատասխանի առնել = պատասխանել
չու առնել = չվել
ալպն առնել = ալպանել
ծաղր առնել = ծաղրել են:

Նոր բարբառներում ընդհանուր կանոն է, որ երբ մի օտար լեզվից փոխ է առնվում որևէ բայ, խոնարհվում է անել (ընել) օժանդակով, եթե ներգործական է, և լինել (ըլլալ) օժանդակով, եթե չեզոք կամ կրավորական է: Օրինակ՝

ուսում ընել «շարունակել»
տուվա ընել «աղոթել»
իլաճ ընել «դարմանել»
յախալամիշ ընել «ձերբակալել»
փաթլամիշ ըլլալ «ճաքել»
խայմիշ ըլլալ «սահիլ»
շախա ընել «կատակել»
փրնալակաթ անիլ «առաջարկել»
փօրթիթ անել «փչացնել»
ապրաթիթցա ըլլալ «դիմել»

Այսպես է նաև տաճկերեն և պարսկերեն գրական լեզուներում, որոնք արաբերենից ունեն այսպիսի հազարավոր փոխառություններ, ինչպես՝

պրս.	raǰā kardan =	տճկ.	reǰa etmek	աղաչել
	du'a »		dua »	աղօթել
	šukr »		šükr	շնորհակալ լինել
	nāil šudan		nail olmaq	արժանանալ
	rāzī »		rāzi »	հաճիլ են:

Այսպես օրինակ՝ շախա ընել բայի խոնարհումը.

ներկա	անցյալ
շախա կընեմ	շախա կընեի
» կընես	» կընեիր
» կընե	» կըներ
» կընենք	» կընեինք
» կընեք	» կընեիք
» կընեն	» կընեին:

Այսպես ամբողջ բայը իր բոլոր ժամանակներով. նույնը նաև պարսկերեն և տճկ.

կոր.	raǰā	kardam	տճկ. reǰa	etdim
	»	kardī	»	etdin
	»	kard	»	etdi
	»	kardīm	»	etdik
	»	kardīd	»	etdiniz
	»	kerdand	»	etdiler

Այս բոլորի մեջ, ինչպես տեսնում ենք, բուն բայը (գոյական կամ ածականի տակ թաքնված) բոլորովին չի խոնարհվում և ամբողջ խոնարհումը արվում է «անել» և «լինել» բայերին:

Խոնարհման այսպիսի դրությունը ընդունել է բրըտոներենը և այդ ոչ թե օտար և փոխառյալ բայերի համար, այլ իր բնիկ ու սեփական բայերի համար է, որոնք կարող են խոնարհվել թե սովորական ձևով և թե gober «անել» օժանդակով: Օր. cârein «սիրել» բայից՝

ներկա

me gâre կամ cârein e hran

te gâre	cârein	e	hrès
ean e gâre	»	e	hra
ni e gâre	»	e	hramb
hui e gâre	»	e	hret
ind e gâre	»	e	hrant
	ածկ.		
me gâré	cârein	e	hren
te gâré	»	e	hrès

և այլն:

Առաջին շարքը նշանակում է «սիրեմ, սիրես, սիրե... սիրեի, սիրեիր...», իսկ երկրորդ շարքը «սիրել առնեմ, սիրել առնես, սիրել առնեի» են: Ամբողջ բայը և երկու ձևերն էլ համաապրապես գործածական են լեզվի մեջ (Guillome, 62, 64):

Հոնարհման այս ձևը ընդունել է նաև անպլերենը, բայց ոչ բայերի բոլոր տեսակների համար հավասարապես:

ԳԼՈՒԽ Զ

ԲԱՅԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

1. ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Նախքան հայերեն բայերի քննության անցնելը՝ տալիս ենք այստեղ հին հայերենի խոնարհման ընդհանուր նկարագիրը այնպես, ինչպես կա դրաբար քերականության մեջ:

Գրաբարի մեջ բայը ունի երեք եղանակ (սահմանական, հրամայական և ստորադասական), երեք ժամանակ (ներկա, անցյալ, ապառնի), երեք սեռ (ներգործական, կրավորական, չեզոք), երկու թիվ (եզակի և հոգնակի), և երեք դեմք (առաջին, երկրորդ և երրորդ): Այս բոլորը արտահայտվում է բայի արմատի վրա ավելացած զանազան վերջավորությունների: Օրինակ՝ գրեցին կազմված է գիր արմատից՝ եցին վերջավորությամբ, որ ցույց է տալիս, թե այդ բայը ներգործական սեռի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի հոգնակի թվի երրորդ դեմքն է:

Որևէ բայի որևէ սեռի բոլոր եղանակների բոլոր ժամանակների բոլոր թվերի և դեմքերի կանոնավոր թվումը կոչվում է խոնարհում:

Կան լեզուներ, որոնց մեջ խոնարհումը միատեսակ է բոլոր բայերի համար. այսպես է օրինակ անգլերենը: Հայերենի մեջ այսպես չէ, այլ տարբեր բայեր տարբեր վերջավորություններ են առնում: Օրինակ՝ նույն գրեցին բայի համապատասխան ձևն է մոռանալ բայից՝ մոռացան, որ եցին վերջավորության տեղ դնում ենք -ացան:

Ինչպես հոլովման, նույնպես և խոնարհման համար զանազան լեզուների վերաբերմամբ առանձին ձևեր են մտածել թեկուզ տարբեր տեսակները իրար խառնելու և նրանց օրենքները ուսումնասիրելու համար: Բոլոր լեզուներն էլ միևնույն ձևով չեն կատարում

այս բաժանումը. սկզբունքը կարող է տարբեր լինել և խմբերի բաժանման հիմքերը կարող են այլևայլ լինել: Բայց նպատակը բոլորի մեջ էլ նույն է. այն է՝ նմանները դասավորել իրար հետ՝ ուսումնասիրության գործը հեշտացնելու համար: Սոնարհման տարբեր ձևերը կոչում են լծորդություն:

Օրինակի համար էսաոնևերենում բայի խոնարհումը միատեսակ է. տարբերությունները կամ անկանոնությունները առաջանում են այս լեզվի բազմատեսակ ձայնափոխությունների, որոնք քերականները բաժանում են վեց գլխավոր դասի, ուստի և դնում են վեց տառ, որ է վեց լծորդություն (Ahrens, 69—77):

Նմանապես մելանեզյան լեզվի մեջ խոնարհումը միակերպ է, որովհետև բայը վերջավորություն չունի, բայց բայարմատը դերանվան հետ կապվելու ժամանակ այնքան ձայնափոխությունների է կրում, որ քերականները հարմար են համարել վերածել հինգ լծորդության (Pempwolff, էջ 12):

Նաբիերենում բայի խոնարհման ձևը միատեսակ է. բայց բայարմատների վերջածայնը միանալով բայական վերջավորությանց հետ, այնպիսի ձայնական խառնուրդներ են առաջ գալիս, որ դրանք հեշտ ըմբռնելու և լավ ուսումնասիրելու համար ստիպվել են քննիչները բոլոր բայարմատները բաժանել 15 խմբի (այն է լծորդության), ըստ իրենց վերջածայնի: Այդ խառնուրդները այնքան շատ են և այնպես են դժվարացնում լեզվի ուսումը, որ ուսումնասիրողը (Kauczor, էջ 164—189) ստիպված է եղել երկարաբան խոսել նրանց մասին: Բարեբախտաբար բայական վերջավորություններ կան միայն ժամանակի և եղանակի համար, իսկ դեմքերը որոշելու համար վերջավորություն չկա. դերանունները միայն բայական են դեմքերը ցույց տալու համար. սրանով դժվարությանց մի մեծ մասը խնայվել է: (Kauczor, 139—149):

Կառաչան լեզվում բայական լծորդություններն են՝
ar, er, re, ir (Huber, 59):

Ռհաուռաման լեզվում բայական լծորդություններն են՝ ar, ër, ër, ir (Conradi, 52):

Գոթերենն ունի I. starke verba, որ ունի վեց դաս, II. Schwache verba, որ ունի չորս լծորդություն (-jan, -ôn, -an, nan):

Նախկին են նաև հին անգլերենը և հր. գերմաներենը, որոնք ունեն՝

I. starke verba 1 լծ.

II. schwache verba. ունի երեք լծորդություն.

ablaut ունեցող բայերը բաժանվում են վեց դասի (Stevers, 51, Braune, 248):

Լատիշերենը ունի հինգ լծորդություն (-āt, -ēt, -īt, ot, -t (Пазгля 156):

Բայերի վերջավորությունը անկախ է լծորդությունից. օրինակ՝ պրս. բայերը վերջավորվում են dan կամ tan, բայց լծորդությունը մի է (խոնարհվում են մի ձևով):

Կան լեզուներ, որ վերջավորություն չունեն բնավ, թեև լծորդություն ունեն, օրինակ՝ անգլ. բայերը ոչ մի վերջավորություն չունեն, և բոլորն էլ արմատ են համարվում:

Ամերիկյան կոնա լեզվում բայերը վերջավորում են a կամ i, օրինակ՝

soka «տանել», takka «տեսնել», tani «դալ», noni «հասնել», naa «գնալ» են:

Առաջին չորսը ցույց են տալիս, որ a հանգը ներգործական է, i չեզոք, բայց վերջին ձևը խոնգարում է այս ենթադրությունը: (Holmer, էջ 190):

Հնդկական սինդհի լեզուն ունի երկու լծորդություն. ա) այն որ բայական ձայնավորն է a, երկրորդը՝ i (Grierson, հա. 8, մաս 1, էջ 45):

Պրովանսալ լեզվի մեջ, որ ֆրանսերենի ընկերն է, լծորդություն չկա: Այս լեզվի մեջ լծորդություն ասելով հասկացվում է խոսակցության ձևը: Այսպես՝ Սավինհանը, (էջ 38), պրովանսալի լծորդությունները բաժանում է երեքի. conjugaisons affirmative, négative, interrogative (հաստատական, բացասական և հարցական լծորդություն): Ապա avoir և être բայերի խոնարհումը տալուց հետո, դնում է միայն rendre բայի խոնարհման տախտակը, իսկ մյուս բայերի համար, եթե կան տարբերություններ, առնում է փոքրիկ դանդաղություններ:

Չիլիի բնիկների լեզվով բայի վերջավորությունները են an, en, in, on, un և ün վեց ձև. բայց բայը վեց լծորդություն չունի, այլ միայն մի, որովհետև բոլորն էլ խոնարհվում են միևնույն ձևով (Febres, էջ 7):

Բայց վերջավորությունը անհրաժեշտ չէ լծորդություն կազմելու համար, կարևոր է միայն խոնարհման ձևը ծայրից ծայր. հնդերենում ամեն բայ վերջավորվում է ti, և լծորդությունը որոշվում է արմատի և վերջավորության մեջտեղ մտած դանազան մասնիկներով, որոնք վեց տեսակ են. այսպես՝

nés-ti, vi-nou-ti, um-ĕ-ti, uč-i-ti, ček-a-ti, mil-ova-ti (Hantich, Gram. tchéque, *էջ 86—87*):

Այսպես նաև սլովակերենում, ուր ամեն բայ վերջավորվում է t'. բայց լծորդութիւնները թվով վեց են, որոնք իրենց գանազան տիպարներով դառնում են 15 (Macht, I, *էջ 67—89*):

Այսպես է նաև լատիներենում, ինչպես տեսանք վերը:

Ընդհակառակը, պարսկերենում բայի անորոշի վերջավորութիւնը երկու տեսակ է tan *և* dan, *բայց որովհետև խոնարհումը միատեսակ է, ուստի վերջավորութիւնը արժեք չունի*[1]:

Գրաբարը ունի չորս լծորդութիւն, այսինքն չորս տարբեր ձևի խոնարհում՝ տարբեր վերջավորութիւններով:

Դերբութեան համար բայի լծորդութեան իրրև տիպար առնում են անորոշը, և անորոշի վերջավորութեամբ էլ որոշում են լծորդութիւնը:

Առաջին լծորդութեան անորոշը վերջանում է ել, *ինչպես՝* սիրել:

Երկրորդ լծորդութեան անորոշը վերջանում է -իլ, *ինչպես՝* խօսիլ:

Երրորդ լծորդութեան անորոշը վերջանում է -ալ, *ինչպես՝* աղալ:

Չորրորդ լծորդութեան անորոշը վերջանում է -ուլ, *ինչպես՝* թողուլ[2]:

Յուրաքանչյուր լծորդութիւն ունի նաև իր երկրորդ տիպարը, որ կազմվում է աճ *կամ* ի *մասնիկի հավելմամբ:*

Առաջին լծորդութեան ունգալին տիպարի անորոշը վերջանում է - աճել, *ինչպես՝* հառաճել:

Երկրորդ լծորդութեան ունգալին տիպարի անորոշը վերջանում է -աճիլ, *ինչպես՝* ուսաճիլ:

Երրորդ լծորդութեան ունգալին տիպարի անորոշը վերջանում է, -աճալ, *ինչպես՝* գողաճալ:

---

[1] *Հետաքրքրութեան համար հիշենք, որ բերբերական առաւել լեզվի մեջ 277 լծորդութիւն կա! (տե՛ս* BSL № 68, *էջ 119):*

[2] *Ամերիկյան մայա լեզվի մեջ էլ բայերի մի խումբ վերջավորվում է* al, el, il, ol *և* ul (Tozzer, 52), *որոնք ցույց են տալիս գործողութիւն կամ վիճակ: Սրանք ճիշտ նման են հայերենի լծորդութեանց, բայց նմանութիւնը բոլորովին պատահական է:*

Հիպերբորյան չուքչի և կամչադալ լեզուներում հգ. ա դեմքը վերջավորում է -mk, -mik, *որոնք ոսկոյն բոլորովին պատահական նմանութիւն ունեն հյ. -մք ձևի հետ (ուսումք ևն)* (Bogoras, *էջ 736 և 745*),

Չորրորդ լծորդութեան ունգալին տիպարի անորոշը վերջանում է -ճուլ, *ինչպես՝* զգեճուլ:

Հնուց ի վեր գրաբարի լծորդութիւնները բաժանվել են չորս՝ եմ, իմ, ամ, ում[1]:

Նոր լեզուներից ֆրանսերենն էլ ունի չորս լծորդութիւն՝ er, ir, oir, re.

Զալեմյան, էջ 121, ասում է, թե «Բերականներն որ ի սկզբանէ հետէ իրարմէ առած չորս լծորդութիւն կը համբեն, բովանդակ լեզուին մէջ իմ լծորդութեան օրինակ չգտնելով՝ կանուն Ա լծորդութենէ կրավորակերպ՝ հասարակ բայ մը երկրորդ անգամ օրինակ կը դնեն՝ իբր թե ներգործականի, կրավորականն ալ նույնպես է ըսելով. և կամ բոլորովին զանց կ'առնեն՝ Ա լծորդութենէ Գ լծորդութեան անցնելով:— Եթե ուրիշ լեզուաց մեջ կայ չորս լծորդութիւն, չորսն ալ իրարմէ տարբեր խոնարհում են, և ունին գատ ներգործական և կրաւորական»:

Աբեղյանն էլ իր «Իննսական քերականութեան» հավելվածում (էջ 446) գրաբարի լծորդութիւնները երեք է հաշվում, կոչելով՝

Ա լծ. ադամ
Բ լծ. գործեմ
Գ լծ. հեղում:

Այս վարանումները ավելորդ են: Հին հայերենի բայերը չորս լծորդութեան են վերաբաժված ոչ թե կապկորեն օրինակելով օտար լեզուները, այլ որովհետև իրոք հայերեն բայերը ներկայի մեջ վերջավորվում են չորս տեսակ՝ եմ, իմ, ամ, ում: *Զի հաշված* -ում *վերջավորութիւնը, որովհետև ընդամենը միայն մի բայ ունենք այս վերջավորութեամբ* (գում):

Լծորդութիւնները հաշվում են չորս՝ ոչ թե ամբողջ բայի խոնարհման ձևերի համեմատ, այլ հատկապես ներկայի: Եթե ամբողջ բայի խոնարհումը աչքի առաջ ունենայինք, տեղ կա, որ պիտի գտնեինք երեք ձև (ինչպես անկատարը), տեղ էլ կա, որ երկու՝ ձև (ինչպես կատարյալը՝ ի կամ այ, և ապառնին՝ իցս կամ այցս): Իսկ կատարյալի հգ. ա դեմքը ամեն տեղ էլ աք է վերջավորում և ապառնիի հգ. ա և բ դեմքերն էլ ամեն տեղ վերջավորում են -ցուք, ջիք:

---

[1] *Այս բաժանումները պատահարար նման է դուրս գալիս հռոմաբերենին. և լատիներենին* (ĕre, āre, ere. īre):

Սխալ է նաև ասել, թե հայերենի մեջ չկան Բ լծորդության պատկանող բայեր կամ թե նրանք ներգործական սեռին չեն պատկանում: Բավական է հիշել գրաբարի խօսիմ, դատիմ, բնակիմ, համարիմ բայերը ևն:

Մենք ընդունում ենք ութնն չորս լծորդություն, ճիշտ ինչպես դնում է մեր ուսուցիչը՝ Գաբագաշյան, ինչպես ընդունել է նաև Մելիոն և ուրիշ շատ հայ և օտար հայագիտներ:

Չորս լծորդությանց շարքն էլ կամայական չէ: Զալըխյան, Գաբագաշյան և ուրիշ շատեր դնում են Ա. լծորդությունը եմ, Բ լծորդությունը իմ, Գ լծորդությունը ամ և Դ լծորդությունը ում: Բայց Ալանյան (Քնն. 446) Ա. լծորդությունը դնում է ամ, Բ լծորդությունը եմ, Գ լծորդությունը՝ ում: Այս վերջին բաժանումը անշուշտ այբբենական շարքի համաձայն է, ա, ե, ու (գեղչելով իմ

Սահմանական եղանակ

ներկա

սիրեմ	հատանեմ	խօսիմ	ուսանիմ
սիրես	հատանես	խօսիս	ուսանիս
սիրէ	հատանէ	խօսի	ուսանի
սիրեմք	հատանեմք	խօսիմք	ուսանիմք
սիրէք	հատանէք	խօսիք	ուսանիք
սիրեն	հատանեն	խօսին	ուսանին

անցյալ անկատար

սիրէի	հատանէի	խօսէի	ուսանէի
սիրէիր	հատանէիր	խօսէիր	ուսանէիր
սիրէր	հատանէր	խօսէր	ուսանէր
սիրէաք	հատանէաք	խօսէաք	ուսանէաք
սիրէիք	հատանէիք	խօսէիք	ուսանէիք
սիրէին	հատանէին	խօսէին	ուսանէին

անցյալ կատարյալ

սիրեցի	հատի	խօսեցայ	ուսայ
սիրեցեր	հատեր	խօսեցար	ուսար
սիրեաց	հատ, եհատ	խօսեցաւ	ուսաւ
սիրեցաք	հատաք	խօսեցաք	ուսաք
սիրեցէք(ցիք)	հատէք(էք)	խօսեցայք	ուսայք
սիրեցին	հատին	խօսեցան	ուսան

լծորդությունը, որ ըստ այմ պիտի բաներ երրորդ տեղը): Այսպես է անում նաև Աբեղյանը (Դրար. քեր. 1936, էջ 30), որ վերացնելով նուլնիակ Ա, Բ, Գ, Դ լծորդության անունները, դասավորում է խոնարհումը ալ, ել, իլ ուլ = ամ, եմ, իմ, ում շարքով:

Մեր բաժանումը հիմնված է այն բանի վրա, թե յուրաքանչյուր լծորդության հետևող բայերի թիվը որքան է: Այսպես է նաև ֆրանսերենը, ուր Ա. լծորդությունը՝ er ունի 3600 բայ, Բ լծորդությունը՝ ir ունի 330 բայ, Գ լծորդությունը՝ oir ունի 17 բայ, իսկ Դ լծորդությունը՝ re ունի 50 բայ (տես Brachet-Dussouchet, Gram. fr., 1903, էջ 193): Պատահաբար միայն ֆրանսերեն բայերի քանակը դուգադիպել է այբբենական շարքին (e, i, o, r):

Այստեղ դնում ենք չորս լծորդությունների և նրանց ընդալին տիպարների խոնարհման համադրական տախտակը:

Սահմանական եղանակ

ներկա

աղամ	դողանամ	թողում	զգենում
աղաս	դողանաս	թողուս	զգենուս
աղայ	դողանայ	թողու	զգենու
աղամք	դողանամք	թողումք	զգենումք
աղայք	դողանայք	թողուք	զգենուք
աղան	դողանան	թողուն	զգենուն

անցյալ անկատար

աղայի	դողանայի	թողուի	զգենուի
աղայիր	դողանայիր	թողուիր	զգենուիր
աղայր	դողանայր	թողույր	զգենույր
աղայաք	դողանայաք	թողուաք	զգենուաք
աղայիք	դողանայիք	թողուիք	զգենուիք
աղային	դողանային	թողուին	զգենուին

անցյալ կատարյալ

աղացի	դողացայ	թողի	զգեցայ
աղացեր	դողացար	թողեր	զգեցար
աղաց	դողացաւ	թող, եթող	զգեցաւ
աղացաք	դողացաք	թողաք	զգեցաք
աղացէք,-իք	դողացայք	թողէք (իք)	զգեցայք
աղացին	դողացան	թողին	զգեցան

ա պ ա ռ ն ի

սիրեցից	հաատից	խօսեցայց	ուսայց
սիրեսցես	հաատցիս	խօսեսցիս	ուսցիս
սիրեսցէ	հաատցէ	խօսեսցի	ուսցի
սիրեսցուք	հաատցուք	խօսեսցուք	ուսցուք
սիրեսջիք	հաատջիք, հաատանիջիք	խօսեսջիք	ուսջիք,-անիջիք
սիրեսցեն	հաատցեն	խօսեսցին	ուսցին

Հ ր ա մ ա յ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

սիրեա	հաատ	խօսեայ	ուսիր
սիրեսջիր	հաատջիր	խօսեսջիր, խօսիջիր	ուսջիր
մի սիրեր	մի հաատաներ	մի խօսիր	մի ուսանիր
սիրեցէք	հաատէք	խօսեցարուք, խօսիջիք	ուսարուք
մի սիրէք	մի հաատանէք	մի խօսիք	մի ուսանիք

Ստորադասական եղանակ

սիրիցեմ	հաատանիցեմ	խօսիցիմ	ուսանիցիմ
սիրիցես	հաատանիցես	խօսիցիս	ուսանիցիս
սիրիցէ	հաատանիցէ	խօսիցի	ուսանիցի
սիրիցեմք	հաատանիցեմք	խօսիցիմք	ուսանիցիմք
սիրեցէք	հաատանիցէք	խօսիցիք	ուսանիցիք
սիրիցեն	հաատանիցեն	խօսիցին	ուսանիցին

Դ ե ր բ ա յ ց ե ր

սիրել	հաատանել	խօսիլ	ուսանիլ
սիրող	հաատ(ան)ող	խօսող	
սիրեալ	հաատեալ	խօսեալ	ուսեալ
սիրելոց	հաատանելոց	խօսելոց(լի)	ուսանելոց,-ելի

ա պ ա ռ ն ի

աղացից	գողացայց	թողից	զգեցայց
աղասցես	գողացիս	թողցես	զգեցցես
աղասցէ	գողացի	թողցէ	զգեցցի
աղասցուք	գողացուք	թողցուք	զգեցցուք
աղասջիք	գողասջիք	թողջիք	զգեցջիք
աղասցեն	գողացին	թողցեն	զգեցցին

Հ ր ա մ ա յ ա կ ա ն ե ղ ա ն ա կ

աղա	գողացիր	թող	զգեցիր
աղասջիր		թողջիր	
մի աղար	մի գողանար	մի թողար	մի զգենուր
աղացէք	գողացարուք	թողէք	զգեցարո՛ւք
մի աղայք	մի գողանայք	մի թողուք	մի զգենուք

Ստորադասական եղանակ

աղայցեմ	գողանայցեմ	թողուցում	զգենուցում
աղայցես	գողանայցես	թողուցուս	զգենուցուս
աղայցէ	գողանայցէ	թողուցու	զգենուցու
աղայցեմք	գողանայցեմք	թողուցումք	զգենուցումք
աղայցէք	գողանայցէք	թողուցուք	զգենուցուք
աղայցեն	գողանայցեն	թողուցուն	զգենուցուն

դ ե ր բ ա յ ց ե ր

աղալ	գողանալ	թողուլ	զգենուլ
աղացող		թողող	
աղացեալ	գողացեալ	թողեալ	զգեցեալ
աղալոց	գողանալոց	թողլոց	զգենլոց

Եթե այս բոլոր խոնարհման ձևերից առանձնացնենք ապառնիներն ու վերջավորութիւնները, կստանանք հետևյալ համապրական ցուցակը.

Սահմանական եղանակ

ներկա

եմ	անեմ	իմ	անիմ	ամ	անամ	ում	նում
ես	անես	իս	անիս	աս	անաս	ուս	նուս
է	անէ	ի	անի	ալ	անալ	ու	նու
ենք	անենք	ինք	անինք	անք	անանք	ունք	նունք
էք	անէք	իք	անիք	ալք	անալք	ուք	նուք
են	անեն	ին	անին	ան	անան	ուն	նուն

ապագայ անկատար

էի	անէի	էի	անէի	ալի	անալի	ուի	նուի
էիր	անէիր	էիր	անէիր	ալիր	անալիր	ուիր	նուիր
էր	անէր	էր	անէր	ալր	անալր	ոլր	նոլր
էաք	անէաք	էաք	անէաք	ալաք	անալաք	ուաք	նուաք
էիք	անէիք	էիք	անէիք	ալիք	անալիք	ուիք	նուիք
էին	անէին	էին	անէին	ալին	անալին	ուին	նուին

ապագայ կատարյալ

եցի	ի	եցայ	ալ	ացի	ացայ	ի	ցայ
եցեր	եր	եցար	ար	ացեր	ացար	եր	ցար
եաց	—	եցաւ	աւ	աց	ացաւ	—	ցաւ
եցաք	աք	եցաք	աք	ացաք	ացաք	աք	ցաք
եցէք	իք	եցայք	ալք	ացէք	ացայք	էք, ացիք	ցայք իք
եցին	ին	եցան	ան	ացին	ացան	ին	ցան

ապառնի

եցից	ից	եցայք	ալց	ացից	ացայց	ից	ցայց
եսցես	ցես	եսցիս	ցիս	ասցես	ասցիս	ցես	ցցիս
եսցէ	ցէ	եսցի	ցի	ասցէ	ասցի	ցէ	ցցի
եսցուք	ցուք	եսցուք	ցուք	ասցուք	ասցուք	ցուք	ցցուք
եսջիք	ջիք	եսջիք անիջիք	ջիք	. ասջիք	ասջիք	ջիք	ցջիք
եսցեն	ցեն	եսցին	ցին	ասցեն	ասցին	ցեն	ցցին

հրամայական

եա	—	եաց	իր	ա	ացիր	—	ցիր
եաջիր	ջիր	եաջիր եջիր	ջիր	աջիր		ջիր	
եր	աներ	իր	անիր	ար	անար	ուր	նուր
եցէք	էք	եցարուք իջիք	արուք	այէք	ացարուք	էք	ցարուք
էք	անէք	իք	անիք	ալք	անալք	ուք	նուք

Ստորադասական

իցեմ	անիցեմ	իցիմ	անիցիմ	ալցեմ	անալցեմ	ուցում	նուցում
իցես	անիցես	իցիս	անիցիս	ալցես	անալցես	ուցուս	նուցուս
իցէ	անիցէ	իցի	անիցի	ալցէ	անալցէ	ուցու	նուցու
իցեմք	անիցեմք	իցիմք	անիցիմք	ալցեմք	անալցեմք	ուցումք	նուցումք
իցէք	անիցէք	իցիք	անիցիք	ալցէք	անալցէք	ուցուք	նուցուք
իցեն	անիցեն	իցին	անիցին	ալցեն	անալցեն	ուցուն	նուցուն

դերբայցեր

ել	անել	իլ	անիլ	ալ	անալ	ուլ	նուլ
ող	(ան)ող	ող		ացող		ող	
եալ	եալ	եալ	եալ	ացեալ	ացեալ	եալ	ցեալ
ելոց	անելոց	ելոց(լիս) անելիս	անելոց	ալոց	անալոց	լոց	նլոց

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բայական այս լոխ եղրերը, որ տեսանք, կոչվում են պարզ ժամանակներ, որովհետև ինքնուրույն և անկախ ձևեր են, կազմված միակ մի բառից կամ բայական ձևից։ Կան նաև բաղադրյալ ժամանակներ, որոնք կազմվում են դերբայներից և օժանդակ բայի բառերութիւնից, այսինքն բաղկացած են երկու բառից։ Այս ձևերի վրա պիտի խոսենք ավելի հետո։

2. Այս լոխ պարզ ձևերը բաժանվում են երկու կարգի. ուղիղ և խոտորնակ. ուղիղ են կոչվում այն ձևերը, որոնք կազմվում են ներկայից կամ անորոշ դերբայից, իսկ խոտորնակ են կոչվում այն ձևերը, որոնք կազմվում են կատարյալից կամ հրամայականից։

Այս երեսփ֊ը հատկապես երեսում է չորս յոթդեմքյանց անգալին ախպարի վրա. օրինակ՝

	ուղիղ		խոտորնակ
սահմ. ներկ.	հատ֊ան֊եմ		կաբ. հատ֊ի
անց. անկ.	հատ֊ան֊էի		ապռ. հատ֊ից
սոռը. ներկ.	հատ֊ան֊իցեմ		
արգել.	մի՛ հատ֊ան֊ի՛ր	հրամ.	հա՛տ
անորոշ	հատ֊ան֊ել		
ներկ. դերբ.	հատ֊ան֊ող	կամ	հատ֊ող
ապ. դերբ.	հատ֊ան֊ելոց	անց.	հատ֊եալ

Ըստ այմ ուղիղ ձևերն են՝ սահմանական ներկան, անցյալ անկատարը, սոռրադատական ներկան, արգելականը, անորոշ և ապառնի դերբայները, իսկ խոտորնակ ձևերն են՝ անցյալ կատարյալը, ապառնին, հրամայականը և անցյալ դերբայը: Ներկա դերբայը ևնթարկվում է թե՛ մեկին և թե՛ մյուսին:

*3. Սղման և ամփոփման կանոններըը խոնարհման ժամանակ խստիվ գործադրվում են, օրինակ՝ եթե կատարյալի եզակի գ դեմքն է սիրեց և մյուս դեմքերը սիրեցի, սիրեցեր, սիրեցաք, սիրեցէք, սիրեցին, այս վերջիններըը առաջանում են *սէրեցայ, *սէրեցայեր, *սէրեցայաք, *սէրեցայէք, *սէրեցային ձևերից,— եթե կեայ բայը ունի նա երկրաբառը, կաբ. կեցի, կեցեր են, պետք է լինեին հնապես *կեացի, *կեացեր են.— եթե բայի արմատն է լից, արմին լցի, լցեր են պետք է առաջացած լինեին լիցի, լիցեր են ձևերից.— եթե ապառնի ա դեմքն է առնից, իսկ մյուս դեմքերը, առնցես, առնցէ են, որոնց հին ձևն է *առնիցես, *առնիցէ են.— կատարյալի ա դեմքն է եղէ, որից ապառնի ա դեմքը եղէց, այս մյուս դեմքերն են եղիցի, եղիցուք են, որոնք ծագած լինեին *եղէցի, եղէցուք ձևերից.— սոռրադատականն է սիրիցեմ, սիրիցես են, որոնք պետք է ծագած լինեին հին *սէրէցեմ, *սէրէցես, և սրանք էլ ավելի հին *սէյրէյցեմ, սէյրէյցես են ձևերից:*

Այս կանոնը կարևոր է հատկապես Ա յոթդեմքյան անգալին ախպարի կատարյալի եզակի գ դեմքի և հրամայականի համար (այսպես նաև Դ յոթդեմքյան), որոնց մեջ երևան է գալիս պարզ արմատը. ինչպես՝ իջանել—է՛ջ. լուցանել—լո՛յց, մտանել—մո՛ւտ, անիծանեմ—անէ՛ծ, կլանել—կո՛ւլ, լուծանել—լո՛յծ, թքանել—թո՛ւք, ցուցանել—ցո՛յց, գտանել—գի՛տ են:

4. Անկատարի -էի, -էիր են վերջավորութիւնը հնադարձ ձևաձգրերում -ի՛, -իր՛ են ձևով է, բայց ըստ որում այժմ ընդունված է ձայնավորից առաջ դրել յ և ոչ ն, մենք էլ պահպանենք ի՛, իր՛ են ձևերը:

5. Կատարյալի հոգնակի երկրորդ դեմքը Ա յոթդեմքյան կըրկին ախպարների և Գ ու Դ յոթդեմքյանց առաջին ախպարների մեջ ունի թե՛ -էք և թե՛ -իք վերջավորութիւնը: Որովհետև -իք աշխարհաբարի ընդունած ձևն է, որ և առաջանում է հգ. գ դեմքի նմանութեամբ, ուստի հնագոյն ձևը պետք է համարել -էք:

Բայց այս ձևով կատարյալի հոգնակի բ դեմքը նույն բայերի մեջ միանում է հրամայականի հետ. ինչպես՝ սիրեցէք, ճաշեք, աղացէք, բողէք, որոնք թե՛ կատարյալ հոգ. գ դեմք են և թե՛ հրամայականի հոգ. բ դեմքն են միանգամայն:

Այս երկդիմութիւնը՝ որ էք-իք վերջավորութեան համար ընդհանուր կանոն է, գոնվում է նաև այլ վերջավորութեան և անկանոն բայերի մեջ. ինչպես՝ եղերուք, դարձարուք, լուացարուք, արբեցարուք, արարէք, լուարուք, ծաներուք, յարերուք են: Ամենատարանի մեջ հաճախ կարդում ենք՝

Լուարուք, դի առացայ.

որ նշանակում է ոչ թե «լսեցէք որ առվեց» այլ՝ «լսեցիք, որ առվեց»,

-Այլ վերջավորվող կատարյալներըը կարող են առանձ թե այլ և թե արուք ձևը. ինչպես՝ ծաներայք կամ ծաներուք «ճանաչեցիք», յարեայք կամ յարերուք «ողջացաք» (Զալիս. 126):

Այս երկդիմութիւնից խուսափելու համար է, որ ավելի ուշ էք վերջավորութեանը գարձրել են իր:

6. Կատարյալի եզակի գ դեմքը Ա յոթդեմքյան անգալին ախպարի և Դ յոթդեմքյան Ա ախպարի մեջ եթե միավանկ է, կարող է առանձ ե նախահավելվածը. այսպես՝

գիտ— եգիտ, առ —եառ, կուլ —եկուլ, ցոյց —եցոյց, հատ —էհատ, լոյծ —ելոյծ, —բեր —երեր են:

Ձայնավորի մոտ այս նախահավելվածը չի գրվում՝ զգուշանալով հորանջից: Հնագոյն հայերենում ասվում էր ած, օծ, արկ, անց և ոչ էած, էօծ էարկ, էանց: Այսպես վիպասանական հին հատվածում. նա անց գնաց և շինեաց՝ ի մէջ Մարաց զՄարաւիկեաս: Ավելի ուշ՝ բաղաձայնի նախահավելվածը անցավ նաև ձայնավորի վրա և սկսեցին գրել էած, էանց, էարկ, էաւծ>էօծ (ըստ որում

ձայնավորի մոտ գրվում է ե և ոչ ե)։ Միևնույն ժամանակ այս ե անցավ բաղաձայններին և այժմ էլ սկսեցին գրել հսպաճ, հսես հասեղծ։ Բայց այս ձևը ընդհանուր ընդունելություն չգտավ (Զալիս. 76)։

Բազմավանկ բառերը այս նախահավելվածից ազատ են. այնպես որ մինչև անգամ ուշ շրջանում անիծանել բայի կատարյալ եզ. գ դեմքը չդարձավ հանիծ, և միայն միշտ անիծ։

Կատարյալի եզ. գ դեմքի վրա ավելացնելով այս հավելվածը, նրա միջոցով առաջքն առնվեց այն երկդիմությանը, որ առաջ էր գալիս կատարյալի և հրամայականի միջև՝ ձևի նույնության պատճառով։

Մեր քերականագետները ասում են, որ ե-ով ձևերի հետ հավասարապես գործածական էր նաև առանց հավելվածի ձևը, այսպես հաս կամ եհաս, բեր կամ երեր են։ Մաքսուդյանցը (Արբա. 1915, 407) ասում է, թե դասական շրջանում՝ ինչպես չկա հած, հօծ, հանց ձևը, նույնպես չկա հաս, բեր են ձևը։ Այս ձևը առաջացել է ավելի ուշ շրջանում՝ նախնական ած, օծ ձևի նմանության։

Բայց նախահավելվածը ոչ միայն կատարյալի եզ. գ դեմքի համար է, այլ և բոլոր այն դեպքերի, ուր բայը առանում է միավանկ ձև։ Ըստ այմ գալ, տալ, դնել բայերի ոչ միայն կատարյալի, այլև ապառնիի, հրամայականի և անցյալ դերբայի ձևերը, և ոչ միայն եզ. գ դեմքը, այլև եզակի և հոգնակի բոլոր դեմքերը, մի խոսքով ամեն տեղ, ուր բայը վերածվում է միավանկի, դրվում է և նախահավելվածը. այսպես՝ եկի, եկից, եկ, եկեալ, եառու, եառուր են[1]։

Ե հավելվածի կատարյալ եզ. գ դեմքի վրա միայն ամփոփվելը՝ պարզապես արդյունք է այն բանի, որ միայն այս դեպքում բայը առանում է միավանկ ձև։ Հետևաբար կարելի է ասել, որ հավելումը եղել է չափազանց կարճ ձևերը երկարելու դիտավորությամբ։ Այս մասին ավելին տես վերը։

7. Կատարյալի հոգնակի ա դեմքը բոլոր լծորդությանց մեջ, մինչև անգամ անկանոն բայերի մեջ, միշտ և անխափան ունի աք վերջավորությունը։ Այսպես՝ սիրեցաք, հատաք, խոսեցաք, ուսաք, աղացաք, գողացաք, բողաք, զգեցաք, և անկանոն բայերից էլ՝ եկաք, տուաք, արարաք, յարեաք, լուաք, ծանեաք են։

[1] Միայն տաց չունի ե։

8. Ապառնին կազմվում է միշտ կատարյալի եզ. ա դեմքի վրա ավելացնելով ց. այսպիսով առացվում է ապառնի եզ. ա դեմ. քը. ինչպես՝

սիրեցի — սիրեցից	հատի — հատից
խոսեցայ — խոսեցայց	ուսայ — ուսայց
աղացի — աղացից	գողացայ — գողացայց
բողի — բողից	զգեցայ — զգեցայց։

Այս օրենքը գործում է ոչ միայն կանոնավոր, այլև անկանոն բայերի համար. ինչպես՝

արարի—արարից, յարեայ—յարեայց, յանգեայ—յանգեայց, լուայ—լուայց, ծանեայ—ծանեայց, կերայ—կերայց, տարայ—տարայց, եղի—եղից, արբի—արբից, կալայ—կալայց, եկի—եկից, կացի—կացից, եղէ—եղէց են։ Բացառությունն են միայն երթալ բայը, որ ունի կար. չոգայ, ապռ. երթայց և տալ բայը, որ ունի կար. եառու, ապռ. տաց։

9. Ապառնի եզակի բ դեմքը կազմվում է ա դեմքի ձայնին ավելացնելով ես կամ իս՝ ըստ յծորդության։ Այս հավելումը շատ հայտնի կերպով երևում է տամ և դնեմ անկանոն բայերի մեջ։ Սրանց ապառնի առաջին դեմքն է տաց, եդից (հին ձևը *դից, միավանկ լինելու պատճառով հետո դարձած եդից), բ դեմքը՝ տացես, դիցես։ Մյուս բոլոր բայերը ենթարկվում են սղման և ամփոփման օրենքներին. այսպես՝

ի ջնջվում է հատից—հատցես, թողից—թողցես, արբից—արբցես, ածից—ածցես, կացից—կացցես են։

ե դառնում է ի,— եղէց—եղիցիս.

այ (հակառակ փոփոխման ընդհանուր օրենքին) ջնջվում է.—ուսայց—ուսցես, զգեցայց—զգեցցիս են։ Ըստ այմ բացառությունն է ուտեմ բայի ապառնին, որի առաջին դեմքը լինում է կերայց կամ կերից, իսկ երկրորդ դեմքը կերիցես, որ թե առաջինից և թե երկրորդից ածանցվելով՝ պիտի դառնար *կերցես։

Այս պարագային՝ երբ երկու ց կողք կողքի պատահեն միմյանց, եթե ապառնի ձևը երկվանկ է (այսինքն արմատը միավանկ է), այդ երկու ց-երը անփոփոխ մնում են։ Իսկ եթե ապառնին երկուսից ավելի վանկ ունի (այսինքն արմատը միավանկ չէ), առաջին ց ձայնը վերածվում է ս-ի։ Այսպես՝ կացցես, բացցես, բացցես, լացցես, աւցցես, հարցցեմ, կնցցես, զգեցցիս, յեցցիս, խցցես, լցցես են, որոնց մեջ դարձյալ ց-երը մնում են, իսկ սիրեսցես, գնաս-

ցես, գործնացես, խօսնացիս, ապացես, գողացիս են ձևերի մեջ գալով ց-երից առաջինը դարձել է ս: Ալսպես և՝ մյուս դեմքերի մեջ և հոգնակի երկրորդ դեմքի ջ-ի մասս:

Ընթերցցիս բացառություն չէ, որովհետև կազմված է ընց(դ) նախդիրով, *թերցցիս ձևից և արմատն է հնխ. ter «կարդալ, բարձր ձայն հանել» (տե՛ս Արմ. Բառ. հտ. է, էջ 131): Ընդհակառակը, ընթանալ բայից՝ ապառնի ընթացիս կազմված չէ ընդ նախդիրով, այլ արմատն է հնխ. sent «երթալ»>հյ. ընթ-աց, որով նույնպես բացառություն չէ:

10. Ապառնի եզակի գ դեմքի ևացի վերջավորությունը, ինչպես նկատում է Գ. Տեր-Մկրտչյանը (Անան. գիտ. էջ 6), հին ձեռագրերում շատ անգամ գրվում է -եցի (ս սղված), ինչպես՝ երևեցի (փոխանակ երևևացի), որ չորս անգամ մինչև էջում պատահում է Անան. գիտ. 6: Ձևագիրը սխալագիր չէ և ուրիշ բառերի գրչությունը հարատած է: Ուստի պետք չէ կասկածել նաև այս ձևի հարատևության վրա: Գ. Տեր-Մկրտչյան կարծում է, որ երևեցի միջին օղակն է երևևացի և երևիցի ձևերի: Իսկ ես կարծում եմ, թե հին հայերենի գավառական մի ձև է, որ առաջացել է ևց>ց բնական սղման օրենքով:

11. Ապառնի հոգ. առաջին դեմքը բոլոր լծորդությանց կրկին տիպարների մեջ էլ վերջանում է -ցուք, իսկ երկրորդ դեմքը՝ միշտ -ջիք:

12. Հրամայականի բուն ձևը երեք տեսակ կազմություն ունի. կամ բայարմատն է (ճա՛ռ, բո՛ղ), կամ սառնում է ա՛, եա՛, եա՛ց վերջավորությունները (ապա՛, սիրեա՛, խօսեա՛ց), և կամ իր, ցիր վերջավորությունները (ուսի՛ր, գողացի՛ր, զգեցի՛ր):

Բայց հրամայականը ունի նաև մի երկրորդ ձև, որ կարելի է կոչել հորդորական: Այս ձևը կազմվում է ջի՛ր մասնիկով (սիրեսջիր, ճաշջիր են), որ ապառնի հոգնակի երկրորդ դեմքի (սիրեսջիք, ճաշջիք են) համապատասխան եզակին է: Սրանից հետևում է, որ եզակի -ջիր ձևն էլ նախապես ապառնի եզակի երրորդ դեմքն էր, և հետո դործածվեց միայն իբրև հրամայական:

13. Հրամայականը ունի նաև բացառական ձևը, որ կոչվում է արգելական: Արգելականը ունի եզակի և հոգնակի, եզակին կազմվում է բայի անորոշ դերբայից, սրա լ վերջածայնը դարձնելով ր և մինուլն ժամանակ սկիզբը ավելացնելով մի՛ արգելական մակբայը. (մի՛ սիրեր, մի՛ հատաներ, մի՛ խօսիր, մի՛ ուսաներ, մի՛ ապար, մի՛ գողանար, մի՛ թողուր, մի՛ պահեր): Այն բայերը,

որոնք անորոշ չունեն, չունեն նաև արգելական, այսպես եմ օժանդակ բայը և ուրիշ պակասավոր բայեր: Սրանից է նաև այն տարբերությունը, որ կա մի կողմից բուն հրամայականի և մյուս կողմից արգելականի միջև, հատկապես անկանոն բայերի մեջ, ինչպես ա՛ռ—մի՛ առներ, բե՛ր—մի՛ բառներ, ե՛կ—մի՛ գար, ա՛ռ—մի՛ ըմպեր են (Զալիք. 61):

Արգելականի հոգնակին կազմվում է եզակի -եր, -իր, -ար, -ուր վերջավորությունները դարձնելով -եք, -իք, -այք, -ուք (մի՛ սիրէք, մի՛ հատանէք, մի՛ խօսիք, մի՛ ուսանիք, մի՛ ապայք, մի՛ գողանայք, մի՛ թողուք, մի՛ պահնուք):

14. Առորդայական ներկան կազմվում է առաջին և երկրորդ լծորդության երկու տիպարների մեջ՝ արմատի և վերջավորության միջև ներմուծելով ից մասնիկը (սիր-եմ, սիր-ից-եմ, հատան-եմ, հատան-ից-եմ, խօս-իմ -խօս-ից-իմ, ուս-ան-իմ -ուսան-ից-իմ), երրորդ լծորդության երկու տիպարների մեջ՝ ամ վերջավորությունը դարձնելով -այցեմ (ապ-ամ- ապ-այցեմ, գողան-ամ -գողան-այցեմ), իսկ չորրորդ լծորդության կրկին տիպարների մեջ՝ արմատի ու վերջավորության միջև ներմուծելով -ուց մասնիկը (թող-ում թող-ուց-ում, պահ-ում -պահ-ուց-ում):

2. ՁԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՄԵՋ

Չորս լծորդության կրկին տիպարների մեջ կան բայեր, որոնք խոնարհման սովորական ձևից որոշ շեղումներ են ցույց տալիս: Այսպիսի շեղումները հավաքում ենք այս հատվածում:

1. Առաջին լծորդության առաջին տիպարին պատկանող բայերից երեքը (ածեմ, բերեմ, հանեմ) փոխանակ խոնարհվելու առաջին տիպարին համաձայն, խոնարհվում են երկրորդ տիպարի ձևով: Այսպես՝

կար.	ածի, բերի, հանի	
ապա.	ածից, բերից, հանից	
հրամ.	ած, բեր, հան:	

2. Առաջին լծորդության երկրորդ տիպարի երեսփից ունեցող բայերից նրանք, որոնց մեջ ան արմատական է և ոչ թե մասնիկ, խոնարհվում են առաջին տիպարի ձևով. ինչպես՝ դարմանեմ, սերմանեմ, ժամանեմ, խաւխանեմ, կործանեմ.

կոր. դարմանեցի, սերմանեցի, ժամանեցի, խափանեցի, կոթծանեցի

ապռ. դարմանեցիկ, սերմանեցիկ, ժամանեցիկ, խափանեցիկ, կոթծանեցիկ

հրամ. դարմանեա՛, սերմանեա՛, ժամանեա՛, խափանեա՛, կոթծանեա՛:

3. Հարկաճել բայը խոսարնակ ձևերի մեջ կորցնում է կ ձայնը, այսինքն խոնարհվում է ևար արմատով. ինչպես՝

կոր.— հարի
ապռ.— հարիկ
հրամ.— հա՛ր
անց. դերբ.— հարեալ:

4. Առաջին լծորդության առաջին տիպարին պատկանող բայերից ասեմ, գիտեմ, կարեմ, մարթեմ խոնարհվում են խառն ձևով.— ուղիղ ձևերի մեջ հետևում են Ա. լծորդության ա տիպարին, իսկ խոսարնակ ձևերի մեջ՝ Գ լծորդության առաջին տիպարին. այսպես՝

սահմ. ներկա

ասեմ	*գիտեմ*	*կարեմ*	*մարթեմ*
ասես	*գիտես*	*կարես*	*մարթես*
ասէ	*գիտէ*	*կարէ*	*մարթէ*
ասեմք	*գիտեմք*	*կարեմք*	*մարթեմք*
ասէք	*գիտէք*	*կարէք*	*մարթէք*
ասեն	*գիտեն*	*կարեն*	*մարթեն*

անց. անկ.

ասէի	*գիտէի*	*կարէի*	*մարթէի*
ասէիր	*գիտէիր*	*կարէիր*	*մարթէիր*
ասէր	*գիտէր*	*կարէր*	*մարթէր*
ասէաք	*գիտէաք*	*կարէաք*	*մարթէաք*
ասէիք	*գիտէիք*	*կարէիք*	*մարթէիք*
ասէին	*գիտէին*	*կարէին*	*մարթէին*

կատարյալ

ասացի	*գիտացի*	*կարացի*	*մարթացի*
ասացեր	*գիտացեր*	*կարացեր*	*մարթացեր*
ասաց	*գիտաց*	*կարաց*	*մարթաց*

ասացաք	*գիտացաք*	*կարացաք*	*մարթացաք*
ասացէք	*գիտացէք*	*կարացէք*	*մարթացէք*
ասացին	*գիտացին*	*կարացին*	*մարթացին*

ապառնի

ասացից	*գիտացից*	*կարացից*	*մարթացից*
ասասցես	*գիտասցես*	*կարասցես*	*մարթասցես*
ասասցէ	*գիտասցէ*	*կարասցէ*	*մարթասցէ*
ասասցուք	*գիտասցուք*	*կարասցուք*	*մարթասցուք*
ասասջիք	*գիտասջիք*	*կարասջիք*	*մարթասջիք*
ասասցեն	*գիտասցեն*	*կարասցեն*	*մարթասցեն*

հրամ.

ասա՛	*գիտեա՛ (գիտա՛) չունի*
ասասջիր	*գիտասջիր*
մի՛ ասեր	*մի՛ գիտեր*
ասացէք	*գիտացէք*
ասասջիք	*գիտասջիք*
մի՛ ասէք	*մի՛ գիտէք*

սաոր. ներկա

ասիցեմ	*գիտիցեմ*	*կարիցեմ*	*մարթիցեմ*
ասիցես	*գիտիցես*	*կարիցես*	*մարթիցես*
ասիցէ	*գիտիցէ*	*կարիցէ*	*մարթիցէ*
ասիցեմք	*գիտիցեմք*	*կարիցեմք*	*մարթիցեմք*
ասիցէք	*գիտիցէք*	*կարիցէք*	*մարթիցէք*
ասիցեն	*գիտիցեն*	*կարիցեն*	*մարթիցեն*

Դերբայ

ասել	*գիտել*	*կարել*	*մարթել*
ասող, ասացող	*գիտող*	*կարող*	
ասացեալ	*գիտացեալ*	*կարացեալ*	*մարթացեալ*
ասելոց	*գիտելոց*	*կարելոց*	*մարթելոց*

5. Երկրորդ լծորդության առաջին տիպարի բայերից նասիմ՝ խոնարհվում է երկրորդ տիպարի ձևով և լինում է

կոր. նասայ, ապռ. նասայց, հրամ. նիսա՛:

6. Երկրորդ լծորդության երկրորդ տիպարի տակ առանձին

խումբ են կազմում այն բայերը, որոնք -ան միջամասնիկի տեղ ունեն չ կամ նչ, որ խոտորնակ ձևերի մեջ կորչում է։

Ահա այս կարգի բայերի խոնարհման պատկերը.

սահմ. ներկա

թաքչիմ	*երկնչիմ*	*մեղանչիմ*
թաքչիս	*երկնչիս*	*մեղանչիս*
թաքչի	*երկնչի*	*մեղանչէ*
թաքչիմք	*երկնչիմք*	*մեղանչիմք*
թաքչիք	*երկնչիք*	*մեղանչէք*
թաքչին	*երկնչին*	*մեղանչին*

անց. անկ.

թաքչէի	*երկնչէի*	*մեղանչէի*
թաքչէիր	*երկնչէիր*	*մեղանչէիր*
թաքչէր	*երկնչէր*	*մեղանչէր*
թաքչէաք	*երկնչէաք*	*մեղանչէաք*
թաքչէիք	*երկնչէիք*	*մեղանչէիք*
թաքչէին	*երկնչէին*	*մեղանչէին*

կատարյալ

թաքեալ	*երկեալ*	*մեղալ*
թաքեար	*երկեար*	*մեղար*
թաքեաւ	*երկեաւ*	*մեղաւ*
թաքեաք	*երկեաք*	*մեղաք*
թաքեալք	*երկեալք*	*մեղալք*
թաքեան	*երկեան*	*մեղան*

ապառնի

թաքեալց	*երկեալց*	*մեղալց*
թաքիցես	*երկիցես*	*մեղիցես*
թաքիցէ	*երկիցէ*	*մեղիցէ*
թաքիցուք	*երկիցուք*	*մեղիցուք*
թաքիջիք	*երկիջիք*	*մեղիջիք*
թաքիցեն	*երկիցեն*	*մեղիցեն*

հրամայական

թաքիր	*երկիր*	*մեղիր*

մի թաքչիր	*մի երկնչիր*	*մի մեղանչեր*
թաքերո՛ւք	*երկերո՛ւք*	*մեղարո՛ւք*
մի թաքչիք	*մի երկնչիք*	*մի մեղանչէք*

սաոր. ներկա

թաքչիցիմ	*երկնչիցիմ*	*մեղանչիցիմ*
թաքչիցիս	*երկնչիցիս*	*մեղանչիցիս*
թաքչիցի	*երկնչիցի*	*մեղանչիցէ*
թաքչիցիմք	*երկնչիցիմք*	*մեղանչիցիմք*
թաքչիցիք	*երկնչիցիք*	*մեղանչիցէք*
թաքչիցին	*երկնչիցին*	*մեղանչիցին*

դերբայ

թաքչիլ	*երկնչիլ*	*մեղանչիլ*
թաքուցեալ	*երկուցեալ*	*մեղուցեալ*
թաքչելոց	*երկնչելոց*	*մեղանչելոց*
թաքչելի	*երկնչելի*	*մեղանչելի*

Այս խոնարհման են հետևում նաև՝

Թռչիմ—թռեալ, թռիր, թռուցեալ
Փախչիմ—փախեալ, փախիր, փախերուք
Հանդչիմ—հանդեալ, հանդիր, հանդերուք
Ջառչիմ—ջառեալ
Մաոչիմ—մաոեալ, մաոիր, մաոիք կամ մաոերուք
Կաոչիմ—կաոեալ
Կորնչիմ—կորեալ, կորիր, կորուսեալ
Մարանչիմ—մարեալ, մարիր, մարուցեալ։

7. Այս կարգի բայերից ամենք չ, նչ, միջամասնիկի փոխարեն ունեն սովորական ան միջամասնիկը. ինչպես՝ թռչել—թռանիլ, զառչիլ—զառանիլ, որոնք խոնարհվում են իրենց սովորական ձևով, այսպես՝ զառանիմ—զառայ, հրմ. զառարուք (և ոչ թե զառերուք), անց. զառեալ։

8. Մեղանչել բայը իր մեջ է միացնում երկու միջամասնիկ՝ ան և չ. ըստ ձևի պատկանում է առաջին յոթերորդության, բայց խոնարհվում է վերի ձևով, միայն զուրկ է ե-ից. այսպես՝ մեղայ, մեղայց (և ոչ թե մեղեայ, մեղեայց)։

9. Առաջին յոթերորդության է պատկանում դարձյալ յանցանեմ բայը, որ սակայն խոնարհման ժամանակ՝ խոտորնակ ձևերի մեջ

հետևում է վերի ձևին, պահելով նույնիսկ և ձայնավորը. ալպես՝ սահմ. ներկա.— յանցանեմ...

անց. անկ.— յանցանէի...

կար.— յանցեալ, յանցեար, յանցեաւ, յանցեաք, յանցեալք, յանցեան:

ապա.— յանցեալց, յանցիցես, յանցիցէ, յանցիցուք, յանցիջիք, յանցիցեն:

հրամ.— յանցիր, մի յանցաներ, յանցերո՛ւք, մի յանցանէք.

սռոր.— յանցանիցեմ...

դերբ.— յանցանել, յանցուցեալ, յանցանելոց:

10. Նկատելի է, որ այս կարգի բայերը չունեն սեփական անցյալ դերբայ, և այդ ձևը փոխ են առնում անցողական բայերից. ինչպես՝ թռուցեալ, մեղուցեալ, գառուցեալ, երկուցեալ կորուսեալ են:

11. Երկրորդ լծորդության առաջին տիպարի բայերից շատ շատերը հրամայականի նվ. p դեմքում լինում են -եա (փոխանակ -եաց). ալպես՝ համարիմ, ճեմիմ, շահիմ, ողորմիմ են լինում են հրամ. համարեա՛, ճեմեա՛, շահեա՛, ողորմեա՛ են.— սրիշ բայեր երկու ձևն էլ ունեն միանգամայն. ինչպես՝ աշխատիմ, դաւիմ, հրամ. աշխատեա՛ կամ աշխատեաց, դաւեա՛ կամ դաւեաց:

Նմանապես Բ լծորդության Բ տիպարի բայերից ամանք հրամայականի հոգնակին p դեմքում առանում են -երուք փոխանակ -արուք. ալպես՝ ազաւիմ,—ազերուք, անկանիմ,—անկերուք:

12. Երրորդ լծորդության առաջին տիպարի բայերից անձկամ, գթամ, դողամ, ճոգամ, խոկամ, յուսամ, ողրամ, որսամ, ջանամ, ցնծամ, խոնարհման ժամանակ խոսարնակ ձևերի մեջ լինում են երկրորդ տիպարի նման՝ կար. անձկացայ, գթացայ, դողացայ, ճոգացայ, խոկացայ, յուսացայ, ողրացայ, որսացայ, ջանացայ, ցնծացայ, ապառնի՝ անձկացայց, գթացայց, դողացայց, ճոգացայց, խոկացայց, յուսացայց, ողրացայց, որսացայց, ջանացայց, ցնծացայց. բայց հրամ. անձկա՛, գթա՛; դողա՛, ճոգա՛, յուսա՛, խոկա՛, ողրա՛, որսա՛, ջանա՛, ցնծա՛: Հոգնակին խառն ձևով՝ ջանացարուք, փութացարուք, որսացարուք, ողրացարուք, յուսացարուք, բայց և՝ ողրացէք, ջանացէք: Կարելի է սակայն դանել նաև սովորական ձևով՝ որսացի, դողացի, ցնծացի, ճոգացի, խոկացի, ողրացի են, ապառնի՝ ողրացից, ճոգացո՛:

13. Բառնամ, ամբառնամ, դառնամ բայերը խոնարհման ժամանակներում խոնարհվում են հետևյալ ձևով.

կատարյալ

բարձի	ամբարձի	դարձայ
բարձեր	ամբարձեր	դարձար
եբարձ	ամբարձ	դարձաւ
բարձաք	ամբարձաք	դարձաք
բարձէք	ամբարձէք	դարձայք
բարձին	ամբարձին	դարձան

ապառնի

բարձից	ամբարձից	դարձայց
բարձցես	ամբարձցես	
բարձցէ	ամբարձցէ	
բարձցուք	ամբարձցուք	
բարձջիք	ամբարձջիք	
բարձցեն	ամբարձցեն	

հրամայական

բա՛րձ	դա՛րձ կամ դարձի՛ր
բարձէ՛ք	դարձարո՛ւք

դերբայներ

բարձեալ	ամբարձեալ	դարձեալ

14. Նույն լծորդությունից բանամ և թանամ բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

կատարյալ		ապառնի	
բացի	թացի	բացից	թացից
բացեր	թացեր	բացցես	թացցես
եբաց	եթաց	բացցէ	թացցէ
բացաք	թացաք	բացցուք	թացցուք
բացէք	թացէք	բացջիք	թացջիք
բացին	թացին	բացցեն	թացցեն

հրամ. դերբ.

բա՛ց	թա՛ց	բացեալ	թացեալ
բացէ՛ք	թացէ՛ք		

16. Լամ, կամ, կեամ բայերը խոնարհվում են հետևյալ ձևով.

ապհմ. ներկա

լամ	կամ	կեամ
լաս	կաս	կեաս
լալ	կալ	կեալ
լամք	կամք	կեամք
լայք	կայք	կեայք
լան	կան	կեան

անցյալ անկատար

էալի	կալի	կէի (*կեալի)
լալիր	կալիր	կէիր
լալր	կալր	կեալր
լայաք	կայաք	կէաք
լալիք	կալիք	կէիք
լալին	կալին	կէին

կատարյալ

լացի	կացի	կեցի
լացեր	կացեր	կեցեր
եկաց, լաց	եկաց, կաց	եկեաց, կեաց
լացաք	կացաք	կեցաք
լացէք	կացէք	կեցէք
լացին	կացին	կեցին

ապառնի

լացիցց	կացիցց	կեցիցց
լացցես	կացցես	կեցցես
լացցէ	կացցէ	կեցցէ
լացցուք	կացցուք	կեցցուք
լացջիք	կացջիք	կեցջիք
լացցեն	կացցեն	կեցցեն

հրամայական

լա՛ց	կա՛ց	կեա՛ց, կեցջե՛ր
մի՛ լար	մի՛ կար	մի՛ կեար
լացէ՛ք	կացէ՛ք	կեցէ՛ք
մի՛ լալք	մի՛ կալք	մի՛ կեալք

սաոր. ներկա

լայցեմ	կայցեմ	կեցեմ (*կեայցեմ
լայցես	կայցես	կեցես
լայցէ	կայցէ	կեցէ
լայցեմք	կայցեմք	կեցեմք
լայցէք	կայցէք	կեցէք
լայցեն	կայցեն	կեցեն

դերբայներ

լալ	կալ	կեալ
լացեալ	կացեալ	կեցեալ
լայոց	կայոց	կեցոց

Ամբողջը խոնարհվում է ադամ բայի պես. կեամ բայի սահացած տարօրինակ ձևերը սրման և ամփոփման արդյունք են. միայն հրամայականները արմատական ձևով են (լա՛ց, կա՛ց, կեա՛ց)։

16. Առեմ բայի հին ձևն է առեամ, որից ծնում են ներկա առեամ, առեայ. անկ. առեայր։ Մյուս ձևերը ամփոփման օրենքով շփոթվել են առեմ բայի ձևերի հետ, որով երկուսի խոնարհումը միացել է։

Տեղամ բայի էլ եղակի գ դեմքը՝ որ է տեղաց, գրված կա նաև տեղեաց (Զալիս. 90)։

17. Գ յօթդասնեայն երկրորդ տիպարի բայերից լուանամ, իմանամ, մոռանամ, ընթանամ, հրամայականի մեջ լինում են լո՛ւա, իմա՛, մոռա՛, ընթա՛. հգ. լուացարուք, իմացարուք, մոռացարուք, ընթացարուք։

*Նույն տիպարից արբենամ, մերձենամ, յամենամ, քաղցենամ առաջանում են հնագույն *արբիանամ, *մերձիանամ, *յամիանամ, քաղցիանամ ձևերից, որոնց մեջ իա գարձել է ե։*

Մերկանամ բայի հրամայականն է մերկա՛, որ փոխ է առնված մերկեմ բայից։

Մերձենամ, յամենամ և քաղցենամ բայերը ունեն միայն իրենց ապիղ ժամանակները, իսկ խոտորնակ ձևերը փոխ են առնում մերձիմ, յամիմ, քաղցնում բայերից, ըստ որում ունենք կոր. յամեցի, քաղցեայ, հրմ. մերձա՛ց, դերբ. քաղցեալ են։

18. Չորրորդ յօթդասնեայն երկրորդ տիպարը ներկայացնում է հինգ տեսակ խոնարհում։

Առաջինն է նում-ցայ ձևը, որ ներկայացրինք վերևում։ Սրան

են հետևում յեՆում, ընթեռնում, որոնց խոտորնակ ձևերը լինում են՝

լինում—լեցայ, լեցայց, լեցիր, լեցեալ.

ընթեռնում—ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, ընթերցուք, ընթերցեալ.

երկրորդն է նում-ցի ձևը, որին հետևում են լնում, խնում, ընկենում. սրանց էլ խոտորնակ ձևերը լինում են՝

լնում—լցի, լցից, լից, լցեալ
խնում—խցի, խցից, խից, խցեալ
ընկենում—ընկեցի, ընկեցից, ընկեա, ընկեցեալ։

(Կատարյալ եղ. գ դեմքը լինում է ընկեաց և ընկից) օրինակ՝ Ընկեց ի մէջք օրհոդին Ալանաց (Վիպաս. երզ)։

Երրորդն է նում-ի, որի միակ օրինակն է առնում. սրա խոտորնակ ձևերը լինում են՝ առնում—առի, առից, առ, առեալ։

Չորրորդն է նում-այ ձևը, որին հետևում են զբօսնում, հեղձնում, ջեռնում, զգածնում, սրանց խոտորնակ ձևերը լինում են՝

զբօսնում—զբօսայ, զբօսայց, զբօսիր, զբօսեալ
հեղձնում—հեղձայ, հեղձայց, հեղձիր, հեղձեալ
ջեռնում—ջեռայ, ջեռայց, ջեռիր, ջեռեալ կամ ջեռուցեալ
զգածնում—զգածայ, զգածայց, զգածիր, զգածեալ։

Այստեղ է պատկանում դարձեալ երդնում, որի հինը լինելով *երդուենում, խոտորնակ ձևերում լինում է՝

երդնում—երդուայ, երդուայց, երդուիր, երդուեալ (այսինքն ու ընկած բաղաձայնից առաջ, իսկ ձայնավորից առաջ պահված)։

ճաճում կամ ճիճում բայը, որի հետ նույն է ճեճում, «հյուսել» կատարյալում լինում է ճաճայ, ճիճայ, թեև ճեճում լինում է ըստ օրինի ճեճի.— այս անկանոնությունը կարելի է բացատրել նրանով, որ ճեճում Գ լծորդության Ա տեսակին է պատկանում (արմատը հնխ. pen), բայց սխալմամբ համարվել է Բ տեսակի կամ իրեք ճաճում գալիս է *ճաճ-ճում ձևից։

Հինգերորդն է նում-եայ, որին հետևում են զարթնում, հարթնում, այտնում, ուռնում. ոստնում, պշնում, ցածնում, ցասնում, քաղցնում, փախնում։ Սրանց խոտորնակ ձևերը լինում են՝

զարթնում—զարթեայ, զարթեայց, զարթիր, զարթուցեալ
հարթնում—հարթեայ, հարթեայց, հարթիր, հարթուցեալ
այտնում—այտեայ, այտեայց, այտիր, այտուցեալ

ուռնում—ուռեայ, ուռեայց, ուռիր, ուռուցեալ
ոստնում—ոստեայ, ոստեայց, ոստիր, ոստուցեալ
պշնում—պշեայ, պշեայց, պշուցեալ
ցածնում—ցածեայ, ցածեայց, ցածիր, ցածուցեալ
ցասնում—ցասեայ, ցասեայց, ցասիր, ցասուցեալ
քաղցնում—քաղցեայ, քաղցեայց, քաղցեալ
փախնում—փախեայ, փախեայց, փախիր, փախուցեալ։

19. Չորրորդ լծորդության անկատարի ու ձայնավորի տեղ հաճախ ձեռագրերում գրված է լինում ոյ. ինչպես՝ ճեղոյի, առնոյի, առնոյիր են՝ փոխանակ ճեղուի, առնուի, առնուիր են (Զալիս. 101),

20. Դնում եմ այստեղ վերջին չորս ձևերից խոնարհման մի ամբողջական օրինակ. առաջին ձևի օրինակը (զգեՆում)՝ գրված է ընդհանուր համապրական ցուցակում։

Սահմանական եղանակ

լնում	առնում	երդնում	զարթնում
լնուս	առնուս	երդնուս	զարթնուս
լնու	առնու	երդնու	զարթնու
լնումք	առնումք	երդնումք	զարթնումք
լնուք	առնուք	երդնուք	զարթնուք
լնուն	առնուն	երդնուն	զարթնուն

անց. անկատար

լնուի	առնուի	երդնուի	զարթնուի
լնուիր	առնուիր	երդնուիր	զարթնուիր
լնույր	առնույր	երդնույր	զարթնույր
լնուաք	առնուաք	երդնուաք	զարթնուաք
լնուիք	առնուիք	երդնուիք	զարթնուիք
լնուին	առնուին	երդնուին	զարթնուին

կատարյալ

լցի	առի	երդուայ	զարթեայ
լցեր	առեր	երդուար	զարթեար
լից, եղից	առ, էառ	երդուաւ	զարթեաւ
լցաք	առաք	երդուաք	զարթեաք
լցէք	առէք	երդուայք	զարթեայք
լցին	առին	երդուան	զարթեան

ապառնի

լցից	առից	երդուայց	զարթնայց
լցցես	առցես	երդուիցես	զարթիցես
լցցէ	առցէ	երդուիցէ	զարթիցէ
լցցուք	առցուք	երդուիցուք	զարթիցուք
լցջիք	առջիք	երդուիջիք	զարթիջիք
լցցեն	առցեն	երդուիցեն	զարթիցեն

հրամայական

լից, լցջիր	ա՛ռ, առջիր	երդուիր	զարթիր
մի՛ լնար	մի՛ առնար	մի՛ երդնար	մի՛ զարթնար
լցէ՛ք	առէ՛ք	երդուարո՛ւք	զարթի՛ք
մի՛ լնաք	մի՛ առնաք	մի՛ երդնաք	մի՛ զարթնաք

սաղ. ներկա

լնուցում	առնուցում	երդնուցում	զարթնուցում
լնուցուս	առնուցուս	երդնուցուս	զարթնուցուս
լնուցու	առնուցու	երդնուցու	զարթնուցու
լնուցումք	առնուցումք	երդնուցումք	զարթնուցումք
լնուցուք	առնուցուք	երդնուցուք	զարթնուցուք
լնուցուն	առնուցուն	երդնուցուն	զարթնուցուն

դերբայներ

լնուլ	առնուլ	երդնուլ	զարթնուլ
լցեալ	առեալ	երդուեալ	զարթուցեալ
լցլոց	առնլոց	երդնլոց	զարթնլոց

21. Վերնում մի քանի տեղ տեսանք բայերի խոնարհման կրկնակ ձևեր. օրինակ՝ մասչիմ *բայի հրամայականի հոգնակին է* մասիք *կամ* մասերուք.— աշխատիմ, դասիմ *բայերի եզակի հրամ.* աշխատեա՛, աշխատեաց, դասեա՛, դասեաց.— որսամ, դողամ, ցնծամ, ճոգամ, խոկամ, ողբամ *են բայերի կատարյալը լինում է* որսացայ, դողացայ, ցնծացայ, ճոգացայ, խոկացայ, ողբացայ *կամ* որսացի, դողացի, ցնծացի, ճոգացի, խոկացի, ողբացի *են:*

Ուրիշ շատ այսպիսի կրկնակ ձևեր էլ կան. ինչպես՝

փայլեմ և փայլիմ
պակասէ և պակասի

ծաղկէ և ծաղկի
ամպարշտեցի և ամպարշտեցայ
ապստամբեցին և ապստամբեցան
բնակեաց և բնակեցաւ
գառեաց և գառեցաւ
զարձայք և զարձարուք
կալէք և կալարուք, են են են:

Հատկապես խառնակ է օրինակ՝ ցնծամ *բայի խոնարհումը:*

Այսպիսի երեսուվեցները արդյունք են երեք բանի.

1. Ոմանկան ձևեր, որոնք ուշ ժամանակի գրիչների ձեռքով մտել են հին գրվածքների մեջ և նրանց հարազատությունը խանգարել: Օրինակ՝ հոգնակի հրամայականի ընթերցիք, ջանացէք, եկէք, տարէք, կերէք *են ձևեր, փոխանակ հարազատ գրաբար* ընթերցարուք, ջանացարուք, եկայք, տարայք, կերայք *ձևերի (Զալիս. 126):*

2. Խոնարհման այս կամ այն ձևը փոխ է առնվում մի ուրիշ լծորդությունից. օրինակ՝ -նում, *չիմ վերջացող բայերի մի մասը չունեն անցյալ դերբայ և այդ ձևը փոխ են առնում անցողականից: Այսպես՝* բռնում—բռուցեալ, զարթնում—զարթուցեալ, փախչիմ-փախուցեալ *են (տես ստորև): Նույնպես՝* մերկանամ, մերձենամ, յամենամ *և քաղցենում բայերի զանազան ձևերը փոխ են առնված* մերկեմ, մերձիմ, յամեմ, քաղցնում *բայերից: Կասում «կամենալ» բայի ապառնին, որի կանոնավոր ձևն է* կասցէ, *գործածված է նաև կասեցէ ձևով, իբր թե կասել բայից ձևացած լիներ (Զալիս. 104):*

3) Բայց ամենից ավելի կարևոր է այն, որ զանազան բայեր ունեն երկու կամ երեք ձև, որով և՝ երկու կամ երեք լծորդություն: Այնպես որ կարող են մի քանի ձևով խոնարհվել. օրինակ՝

տարածել և տարածանել
ներկել և ներկանել
վերծալ և վերծանել
զբաղել և զբաղնուլ
կարկառել և կարկառուլ
քրտնել, քրտնիլ, քրտանել, քրտնալ և քրտնուլ
զբօսնուլ, զբօսանիլ և զբօսանալ
ցանկալ և ցանկանալ

դերծել, դերծանել և գերծել
ջեռնուլ և ջեռանիլ են։

Ընդհանրապես անիմ, ամ, ում *վերջավորած բայերի խոնարհումը երկդիմի և անորոշ է (Զալիս. 125), իսկ* -անիմ -չիմ, -նում *վերջավորած բայերի փոխանակութիւնը սովորական երևոյթ է. այսպես՝* բռնում, բռչիմ *և* բռանիմ, փախցնում *և* փախչիմ, այտնում *և* այտչիմ *են։ Օրինակ՝* բռչիմ *և* բռնում *բայերը խոտորնակ ժամանակների մէջ հավասարապես լինում են* բռեայ, բռեայց, բռի՛ր, բռուցեալ, *իսկ* բռանիմ՝ *որ չունի խոտորնակ ձևեր (պիտի լիներ* բռայ, բռայց, *իսկ հրամայականը՝ դարձյալ* բռի՛ր), *այդ ձևերը փոխ է առնում* բռչիմ—բռնում *բայից։ Սրա հակառակ* զբօսանիմ *և* սկսանիմ *խոտորնակ ձևերում լինում են* զբոսայ, սկսայ, զբօսայց, սկսայց, զբօսեալ, սկսեալ, *իսկ* զբօսնում *և* սկսնում *չունենալով խոտորնակ ձևեր, վերի ձևերն են փոխ առնում։*

Առանձնութեան պատճառներից մեկն էլ հետևեալ գրիչներն են, որոնք իրենց ժամանակակից զանազան բարբառների հնացած ձևերը մացրել են հին հեղինակների գրութեանց մէջ։ Այսպես, օրինակ. ռամիկ լեզվից առնված ձևեր են՝

հեծնում (փխ. հեծանիմ)
պրծնում (փխ. պրծանիմ)
լքնում (փխ. լքանիմ)
քաղցիմ (փխ. քաղցնում, քաղցենամ)
ուռչիմ
այտչիմ են (Զալիս. 125 ծան.)։

3. Անկանոն բայեր

Երբ խոնարհման մէջ շեղումները ավելի խոր են, այնպես որ ոչ միայն վերջավորութեանց, այլ նաև արմատի վրա են ազդում, կոչում ենք անկանոն բայ։

Գրաբարում կա 12 անկանոն բայ, որոնցից յոթը պատկանում են Ա. լծորդութեան, երկուսը՝ Բ. լծորդութեան և երեքը՝ Գ. լծորդութեան[1]։

Ա. լծորդութեան անկանոն բայերն են՝ առնել, դնել, ըմպել, լսել, ճանաչել, յառնել, ուսանել։

[1] *Հետաքրքրական է, որ մայրերենը անկանոն բայ չունի։*

Բ. լծորդութեան անկանոն բայերն են՝ ունիլ, տանիլ։
Գ. լծորդութեան անկանոն բայերն են՝ գալ, երթալ, տալ։
Ահա այս բայերի խոնարհման ամբողջական պատկերը.

1. Առնել

սահմ. ներկա

առնեմ	*առնեմք*
առնես	*առնէք*
առնէ	*առնեն*

անկատար	հրամայական
առնէի	*արա*
առնէիր	*արասջիր*
առնէր	*մի՛ առներ*
առնէաք	*արարէք*
առնէիք	*առնիջիք*
առնէին	*մի՛ առնէք*

կատարյալ	սաոր. ներկա
արարի	*առնիցեմ*
արարեր	*առնիցես*
արար	*առնիցէ*
արարաք	*առնիցեմք*
արարէք	*առնիցէք*
արարին	*առնիցեն*

ապառնի	դերբայներ
արարից	*առնել*
արասցես	*արարող*
արասցէ	*արարեալ*
արասցուք	*առնելոց*
արասջիք	
առնիջիք	
արասցեն	

2. Դնել

սահմ. ներկա	
դնեմ	դնեմք
դնես	դնէք
դնէ	դնեն

անկատար	հրամայական
դնէի	դիր
դնէիր	դիջիր
դնէր	մի դներ
դնէաք	դիք
դնէիք	մի դնէք
դնէին	

կատարյալ	սաոր. ներկա
եդի	դնիցեմ
եդեր, եդիր	դնիցես
եդ	դնիցէ
եդաք	դնիցեմք
եդիք	դնիցէք
եդին	դնիցեն

ապառնի	դերբայներ
եդից	դնել
դիցես	եդեալ
դիցէ	դնելոց
դիցուք	
դիջիք	
դիցեն	

3. Ըմպել

սահմ. ներկա
ըմպեմ
ըմպես
ըմպէ
ըմպեմք
ըմպէք
ըմպեն

անկատար	սաոր. ներկա
ըմպէի	ըմպիցեմ
ըմպէիր	ըմպիցես
ըմպէր	ըմպիցէ
ըմպէաք	ըմպիցեմք
ըմպէիք	ըմպիցէք
ըմպէին	ըմպիցեն

կատարյալ	դերբայներ
արբի	ըմպել
արբեր	արբեալ
էարբ	ըմպելոց
արբաք	
արբէք	
արբին	

ապառնի	հրամայական
արբից	ար
արբցես	արբջիր
արբցէ	մի ըմպեր
արբցուք	արբէք
արբջիք	մի ըմպէք
արբցեն	

4. Լսել

սահմ. ներկա	անկատար
լսեմ	լսէի
լսես	լսէիր
լսէ	լսէր
լսեմք	լսէաք
լսէք	լսէիք
լսեն	լսէին

կատարյալ	սաոր. ներկա
լուայ	լսիցեմ
լուար	լսիցես
լուաւ	լսիցէ

լուաք	լսիցեմք
լուայք	լսիցէք
լուան	լսիցեն

ապառնի դերբայներ

լուայց	լսել
լուիցես	լսող
լուիցէ	լուեալ
լուիցուք	լսելոց
լուիջիք	
լուիցեն	

հրամայական

լո՛ւր
լուիջի՛ր
մի՛ լսեր
լուարո՛ւք
մի՛ լսէք

5. Ճանաչել

սահմ. ներկա	անկատար
ճանաչեմ	ճանաչէի
ճանաչես	ճանաչէիր
ճանաչէ	ճանաչէր
ճանաչեմք	ճանաչէաք
ճանաչէք	ճանաչէիք
ճանաչեն	ճանաչէին

կատարյալ	հրամայական
ծանեալ	ծանիր
ծանեար	ծանիջիր
ծանեաւ	մի՛ ճանաչէր
ծանեաք	ծաներո՛ւք
ծանեալք	մի՛ ճանաչէք
ծանեան	

ապառնի	սաղ. ներկա
ծանեալց	ճանաչիցեմ
ծանիցես	ճանաչիցես

ծանիցէ	ճանաչիցէ
ծանիցուք	ճանաչիցեմք
ծանիջիք	ճանաչիցէք
ծանիցեն	ճանաչիցեն

դերբայներ

ճանաչել
ճանաչող
ծանուցեալ
ճանաչելոց

Դիտ.— Անցյալ դերբայի համար չկա հատուկ ձև. փոխ է առնված ծանուցանեմ բայից:

6. Յառնել

սահմ. ներկա	անկատար
յառնեմ	յառնէի
յառնես	յառնէիր
յառնէ	յառնէր
յառնեմք	յառնէաք
յառնէք	յառնէիք
յառնեն	յառնէին

կատարյալ	սաղ. ներկա
յարեալ	յառնիցեմ
յարեար	յառնիցես
յարեաւ	յառնիցէ
յարեաք	յառնիցեմք
յարեալք	յառնիցէք
յարերաք	յառնիցեն
յարեան	

ապառնի	դերբայներ
յարեալց	յառնել
յարիցես	յարուցեալ
յարիցէ	յառնելոց
յարիցուք	
յարիջիք	
յարիցեն	

հրամայական

արի
յառնիջիր
յարիջիր
մի յառներ
արիք
մի յառնէք

Դիտ.— Անցեալ դերբայը չունի հատուկ ձև. փոխ է առնված յարուցանել բայից:

7. Ուտել

սահմ. ներկա	անց. անկատար
ուտեմ	*ուտէի*
ուտես	*ուտէիր*
ուտէ	*ուտէր*
ուտեմք	*ուտէաք*
ուտէք	*ուտէիք*
ուտեն	*ուտէին*

կատարյալ	հրամ.
կերայ	*կեր*
կերար	*կերիջիր*
կերաւ, եկեր	*ուտիջիր*
կերաք	*մի ուտեր*
կերայք	*կերայք*
կերան	*մի ուտէք*

ապառնի	ստոր. ներկա
կերայց	*ուտիցեմ*
կերեսես	*ուտիցես*
կերիցէ	*ուտիցէ*
կերիցուք	*ուտիցեմք*
կերիջիք	*ուտիցէք*
կերիցեն	*ուտիցեն*

դերբայներ
ուտել
կերող
կերեալ
ուտելոց

Դիտ.— Ուշ ժամանակ ուտել բայի կատարյալն ու ապառնին սկսեցին գրել կերի, կերեր, կերին, կերից, իբր թե զուտ ներգործականի ձև տալու համար, իսկ հրամայականը սկսեցին գրել առնելով դարձրին կերէք՝ փոխանակ կերայք (Զալիս. 115):

8. Ունիլ

սահմ. ներկա	անկատար
ունիմ	*ունէի*
ունիս	*ունէիր*
ունի	*ունէր*
ունիմք	*ունէաք*
ունիք	*ունէիք*
ունին	*ունէին*

կատարյալ	ստոր.
կալայ	*ունիցիմ*
կալար	*ունիցիս*
կալաւ	*ունիցի*
կալաք	*ունիցիմք*
կալայք	*ունիցիք*
կալան	*ունիցին*

ապառնի	դերբայներ
կալայց	*ունել*
կալցիս	*(ունող)*
կալցի	*կալեալ*
կալցուք	*ունելոց*
կալջիք	
կալցին	

	հրամայական
	կա՛լ, կա՛
	կալջի՛ր
	կալարո՛ւք
	(կալալք)
	մի՛ ունիր
	մի՛ ունիք

Դիտ.— 1. Ալպես է խոնարհվում նաև ընդունիմ, կար. ընկալայ հրմ. ընկա՛լ. դերբ. ընկալեալ:

Ունիմ բայը երկու իմաստ ունի. «1. ունիմ, ունենալ և 2. բռնել»: Առաջին իմաստը պահում են ունիմ ձևից կազմված ժամանակները (ուղիղ ձևեր), իսկ «բռնել» իմաստը պահում են կալ ձևից կազմված ժամանակները (խոտորնակ ձևեր): Այս վերջիններին էլ «ունենալ» իմաստը տալու համար՝ գործ են ածում եմ կամ լինիմ էական բայը սեռական կամ տրական խնդրով. ինչպես՝ ինձ իմ (կամ ինձ) որդիք «որդիներ ունեցաւ: Լիջի՛ր ուել իշխանութիւն «իշխանութիւն ունեցիր» (Զալխ. 116):

9. Տանիլ

սահմ. ներկա	հրամայական
տանիմ	*տա՛ր*
տանիս	*մի՛ տանիր*
տանի	*տարա՛լք*
տանիմք	*մի՛ տանիք*
տանիք	
տանին	

անց. անկ.	սռոր.
տանէի	*տանիցեմ*
տանէիր	*տանիցես*
տանէր	*տանիցէ*
տանէաք	*տանիցեմք*
տանէիք	*տանիցէք*
տանէին	*տանիցեն*

կատարյալ	դերբայներ
տարայ	*տանել*
տարար	*տարեալ*
տարաւ	*տանելոց*
տարաք	
տարայք	
տարան	

ապառնի

տարայց
տարցիս
տարցի
տարցուք
տարջիք
տարցին

10. Գալ

սահմ. ներկա	ապառնի
գամ	*եկից*
գաս	*եկիցես*
գայ	*եկիցէ*
գամք	*եկիցուք*
գայք	*եկիջիք*
գան	*եկիցեն*

անց. անկատար	հրամայական
գայի	*ե՛կ*
գայիր	*եկեա՛ջիր*
գայր	*մի՛ գար*
գայաք	*եկա՛լք*
գայիք	*մի՛ գայք*
գային	

կատարյալ	սռոր.
եկի	*գայցեմ*
եկիր	*գայցես*

եկն	*գալցէ*
եկաք	*գալցեմք*
եկիք	*գալցէք*
եկին	*գալցեն*

դերբ.

գալ
եկեալ
գալոց

11. Երթալ

սահմ. ներկա

երթամ
երթաս
երթայ
երթամք
երթայք
երթան

անց. անկատ.	սաղոր. ներկա
երթայի	*երթայցեմ*
երթայիր	*երթայցես*
երթայր	*երթայցէ*
երթայաք	*երթայցեմք*
երթայիք	*երթայցէք*
երթային	*երթայցեն*

կատարյալ	դերբ.
չոդայ	*երթալ*
չոդար	*երթեալ*
չոդաւ	*երթալոց*
չոդաք	
չոդայք	
չոդան	

ապառնի	հրամայական
երթայց	*երթ*
երթիցես	*մի՛ երթար*

երթիցէ	*երթայք*
երթիցուք	*մի՛ երթայք*
երթիջիք	
երթիցեն	

Դիտ.— 1. Կատարյալն չոգայ ևն ձևերը գրվում են նաև չքայ ևն. բայց ուղիղ չէ, որովհետև չոգ- արմատը նույն է չու արմատի հետ և ծագում է հնխ. gʰou- արմատից. հնխ. ū տալիս է գ ա ոչ ք:

12. Տալ

սահմ. ներկա	ապառնի
տամ	*տաց*
տաս	*տացես*
տայ	*տացէ*
տամք	*տացուք*
տայք	*տայջիք*
տան	*տացեն*

անց. անկատար	հրամայական
տայի	*տո՛ւր*
տայիր	*տայջիր*
տայր	*մի՛ տար*
տայաք	*տո՛ւք*
տայիք	*մի՛ տայք*
տային	

կատարյալ	սաղոր.
եւտու	*տայցեմ*
եւտուր	*տայցես*
եւտու	*տայցէ*
տուաք	*տայցեմք*
եւտուք	*տայցէք*
եւտուն	*տայցեն*

դերբ.

տալ
տուող
տուեալ
տալոց

Դիտ.— ամմ բայի ապառնին (ասց), ինչպես և երթամ բայի ապառնին (երթայց) միակ բացառութիւններն են այն օրէնքի, որով ապառնին կազմվում է միշտ կատարյալից։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Անկանոն բայերի մեջ անկանոն խոնարհում ունին միայն խոտորնակ ժամանակները, իսկ ուղիղ ժամանակները կանոնավոր են։

2) Հակառակ նրան, որ կանոնավոր բայերի մեջ կատարյալի հգ. բ դեմքը հաճախ նույն է հրամայականի հետ, անկանոն բայերի մի մասը զերծ է այս երկդիմութիւնից և կատարյալ ու հրամայական բոլորովին տարբեր են իրարից։

Այսպես են՝

կատարյալ	հրամայական
եկիք	*եկայք*
եղիք	*դիք*
չոգայք	*երթայք*

4. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնց այս ու այն ժամանակները, մասամբ կամ ամբողջապես, պակասում են։

Պակասավոր բայերը երկու տեսակ են.

ա) Այն բայերը, որոնց ուղիղ ժամանակները կան, բայց խոտորնակ ժամանակները չեն գործածվում. կամ ընդհակառակը, խոտորնակ ժամանակները կան, բայց ուղիղ ժամանակները չեն գործածվում։ Սովորաբար այս կարգի բայերը իրարով լրացվում են. ինչպես՝ ըմպել բայը ունի ներկա, անկատար, արգելական և ստորադասական. չունի կատարյալ, ապառնի և հրամայական։ Սրանց հակառակ, նրան հոմանիշ արբ- բայը չունի ներկա, անկատար, արգելական և ստորադասական, և ունի միայն կատարյալ, ապառնի և հրամայական։ Այս երկուսը իրար լրացնում են և ըմպեմ բայի խոնարհումը ամբողջանում է։ Այսպես են նաև երթամ (չոգայ, գնացի), ուտեմ (կերայ) են։

Ոմանք այս կարգի բայերը պակասավոր են համարում, ուրիշներ՝ անկանոն։ Մենք հետևեցինք երկրորդ խմբին և այս կարգի բայերը (որոնք են՝ ըմպել, ուտել, ուճիլ, գալ, երթալ, լրացվում են արբ, կեր, կալ, եկ, չոգ արմատներով) դրինք անկանոն բայերի շարքը։

ա) Այն բայերը, որոնք ունում են առանց լրացման, մենք դրինք պակասավորների շարքը։

բ) Կան բայեր, որոնց միայն մի քանի ժամանակը կամ միայն մի քանի դեմքն է գործածվում, ունացյալը նույնիսկ անհայտ է։ Այս կարգի բայերը իսկական պակասավոր բայեր են։

Գրաբարի պակասավոր բայերը վեցն են թվով, որոնց խոնարհման պատկերը հետևյալն է.

1. Բամ «ասեմ», որ հազվադեպ գործածութիւն ունի, գործ է ածվում միայն ասեմ բայի հետ միասին. ինչպես՝ ասեմ բամ, ասէ բայ, ասացի բամ են։ Սրանից առնենք միայն՝

սահմ. ներկա	հրամայական
բամ	*բա՛*
բաս	
բայ	
բամք	
—	
բան	

Սրանից է կազմված նաև բամբասել բայը, որ բարդված է ներկայի եզակի երկու դեմքերից (հմմտ. գվո. ասէ-կոսէ)։

2. Գոզ «ասել», որից կան միայն ապառնին և հրամայականը.

ապառնի	հրամայական
—	*գո՛զ, գոզջի՛ր*
գոզցես	*գոզէ՛ք գոզջի՛ք*
գոզցէ	
գոզցուք	
գոզջիք	
գոզցեն	

Արգելականը չկա, ըստ որում անորոշը պակասում է։

3. Գոմ «կալ, գտնվիլ», ունի միայն սահմ. ներկայի, անկատարի և ստորադասականի մի քանի դեմքերը և անորոշը։

սահմ. ներկա	անկատար	ստորադասական
գոմ	*գոյի*	*գուցէ*
գոս	*գոյիր*	*գուցեն*

գոլ	գոլը	
գոմք	գոլաք	
գոլք	գոլիք	դերբ.
գոն	գոլին	գոլ

Մեսրոպյան շրջանում այս ձևերից գործածականն են միայն եզակի և հոգնակի երրորդ դեմքերը (գոլ, գոն, գոլը, գոլին, գուցէ, գուցեն), երբեմն էլ գոլ անորոշը, մի անգամ գործածված է գոմք (եմք և գոմք): Հետին շրջանում գործածված են հաճախ մյուս դեմքերը և մանավանդ անորոշը՝ գոլ (հոլովված գոլոյ, գոլով):

Հին է նաև գոյր «էր, լինում էր». ինչպես՝ նմին նման գոյր ընթան նման էր լինում»:

Ոսկեդարում հաճախ է «ինալ» չեզոք բայի փոխարեն ասվում է գոյ. օրինակ՝

Գոլ ասա այլ մի = է ասա այլ մի
«այստեղ մի մարդ կա»:

Բայց ընտիր հայերեն չէ եմ՝ ոչ-չեզոք, այլ էական բայի տեղ գործածել գոմ. օրինակ՝ պետք չէ ասել՝

հիւանդ գոյ, վայելուչ գոլր, ճշմարիտ գոլ, այլ պետք է ասել՝
հիւանդ է, վայելուչ էր, ճշմարիտ լինել:

Սրա բացասականն է ոչ գոյ «չկա», որի փոխարեն հաճախ ասվում է չիք. օրինակ՝

Չիք ոք բարի «բարի մեկը չկա»:
Չիք ասա տեղի բնակութիւն «այստեղ բնակութիւն տեղ չկա»:

4. Եմ էական բայը. ունի միայն հետևյալ ժամանակները.

սահմ. ներկա	անկատար	սաոր.	հրամ.
եմ	*էի*	*իցեմ*	
ես	*էիր*	*իցես*	
է	*էր*	*իցէ*	*եր*
եմք	*էաք*	*իցեմք*	
էք	*էիք*	*իցէք*	*երուք, էք*
են	*էին*	*իցեն*	

Է նշանակում է «կա», էր «կար». ինչպես՝ է ոք ասա, էր այր մի:

5. Կայ «գոլութիւն ունենալ»:

Գործածականն են միայն ներկայի, անկատարի և սաորադասականի եզ. և հոգ. գ դեմքը, անորոշն է կալ, որ անսովոր է.

սահմ. ներկա	անկ.	սաոր. դերբ.
կալ	կայր	կայցէ (կալ)
կան	կային	կայցեն

Սրա բացասականն է չկայ, չկայր են:

Տարբեր է կալ «կանգնել» չեզոք բայը:

Սրա էլ բացասականն է ոչ կայ, որ նշանակում է «չի կանգնում»:

Կալ և գոլ բայերով են կազմվում՝ գոյ իմ, չկայ իմ «ունիմ, չունիմ»:

6. Պարտիլ «պարտավորվիլ».

Գործածական են միայն ուղիղ ժամանակներից հետևյալ ձևերը.

սահմ. ներկա	անկատար	սաորադասական
պարտիմ	*պարտէի*	*պարտիցիմ*
պարտիս	*պարտէիր*	*պարտիցիս*
պարտի	*պարտէր*	*պարտիցի*
պարտիմք	*պարտէաք*	*պարտիցիմք*
պարտիք	*պարտէիք*	*պարտիցիք*
պարտին	*պարտէին*	*պարտիցին*

Այս բայը չպետք է շփոթել պարտիմ կրավորական բայի հետ, որի խոնարհումը ամբողջական է: Առաջինը նշանակում է «պետք եմ, պարտավոր եմ կամ պարտք ունիմ (դրամական ևն)», իսկ վերջինս նշանակում է «հաղթվիլ»:

7. Կրիմ «գոլութիւն ունենալ» բայից մեսրոպյան շրջանում (և ավելի հետո էլ) գործածական են կրի «կաց», կրին «կան», կրէր «կար»: Գիտէր գինչ կրէր ի մարդն (հն. կար). Ցհ. Բ, 25. Որ ի մէջ լերբայեցւոց գիրք կրին. Եւ ի մէջ եբրայեցւոց բաղում ինչ չմիաբանութիւն կրի. Որ ի Շամբռատացւոց եբրայական գիրքն կրին. Եւս. քր. ա:

8. Գործն, առնի գործ են ածվում հաճախ Ոսկեդարում «լինիս» նշանակությամբ (Ձալիս. 114):

5. ԱՆԴԵՄ ԿԱՄ ՄԻԱԴԵՄ ԲԱՅԵՐ

Անդեմ կամ միադեմ են կոչվում այն բայերը, որոնք ենթակա չունեն և գործածվում են միայն եզակի գ դեմքով:

Այս կարգի բայերը սովորաբար տրական հոլով խնդիր են առնում:

Անդեմ բայերը երկու ձևով են լինում.

ա) Ձեզոք բայ, իր զանազան ժամանակներով, և միշտ եզակի երրորդ դեմքով. բ) եմ կամ լինիմ բայի զանազան ժամանակներով կազմված ձևեր:

Տալիս ենք այս երկու ձևով զանազան օրինակներ.

ՁԵԶՈՔ ԲԱՅՈՎ

Թուի.— *Թուի ինձ թէ... նմա այնպէս թուեցաւ. Թուէր (նմա) թէ կայցէ լեզու գեաղ. Թուէր (ինձ) ի տեսլեան իմում, եթէ կայի ... ինձ այսպէս թուի. Զիմիրդ թուի քեզ. Նոցա այսպես թուեցաւ. Թուեցան յաչս անզգամաց թէ մեռան. Բարւոք թուի ինձ. Հաճոյ թուի յաչս իմ. Զար թուի ինձ:*

Հասանէ.— *Հասանէ քեզ գարձեալ մարդարէանալ. Եհաս նմա թագաւորել. Ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել. Ժամանակ ինչ աւերել հասանէր քաղաքին. Անդր հասանէ մեզ անկանիլ. Եթէ և մեռանել հասանիցէ:*

Ձախողի.— *Եկն և նա յայս պատերազմ, և նմա ձախողեցաւ, որպէս և առաջնոցն (Բուզ. գ. 34), Ցորժամ ի միս առնուցու սին, եթէ որով իւիք ինքն ձախողեցաւն, մարթ էր և նմա նովին պատուով և մեծարանօք վայելել (Ոսկ. ես.):*

Մարթի.— *Մարթի և այժմ լինել. Զիմիրդ մարթի այժմ լինել (Յհ. գ. 9). Մարթի ի վերայ հասանել կամ ուսանել (Եւս. քր. ա). Առանց կատարեան մարթի տեսանել զարքայութիւնն, բայց առանց ողորմութեան անհնար է տեսանել. Մարդ չմարթի զքեզ կոչել. Զողորմութիւն չմարթի գաղա գործել. իսկ զաղօթսն և զպահն մարթի. ի Նազարեթէ մարթիցի՞ բարւոյ իմիք լինել (Ոսկ. Մաթ.), Զինչ տեսիլ յայտնի քան զայս՝ յարութիւն մեռելոց մարդկան մարթի ցուցանել. Զիմիրդ մարթիցի լինել թողութիւն (Կոչ. ժը. բ). Վնասակարացն ընդ անվնասակարան չմարթի բնակել (Եզն.). Չմարթի այլազգ հասանել փառաց, եթէ ոչ փախչելովք ի փառաց (Ոսկ. փիլիպ.), Մարթեր...*

Մնայ.— *Մնայ մեզ. կայ մնայ մեզ մեռանել.*

Յաջողի.— *Յաջողեսցի ձեզ. Ոչ յաջողեսցի ձեզ. Որ սիրէնն զԱստուած, ամենայն ինչ յաջողի նոցա ի բարութիւն. Ամենայն զոր ինչ արասցէ՝ յաջողեսցի նմա:*

Պիտի.— *Սակաւ ինչ պիտի. Ոչ պիտի մեզ այր սպանանել յիսրայելէ (Բ. Թգ. իա. 4). Ի քէն ակն ոչ ունէի և ոչ պիտի իսկ. Պիտի պատուել զնոսա՝ որչափ ի քէն է հրամայեալ (Ագաթ.). Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի (Եղիշ.). Եւ զի՞ պիտիցի զարանց ասել (Ոսկ. եփես.). Եւ արդ զի՞ պիտիցի ասել զայս (Ոսկ. ես.). Այր ոչ պիտի ծածկել գլուխ իւր (Ոսկ. ես.). Լսելիք ներքինիքն պիտին (Ոսկ. յհ. ա. 1. 16). Յաւելագոյն քան զսահմանս պիտէր պատմութիւն (Կոչ. ժգ.). Բանզի ոչ եթէ պնդութիւն մարմնոյ պիտիցի, այլ ոգւոցն և մտաց յօժարութիւն (Ոսկ. մ. ա. 8). Մի զամենայն ինչ խառն առաջի արկեալ մեկնեսցես, բայց միայն զայն, որ ի կարգ անդր պիտիցի (Նւագր. գ):*

Յաւէ, *յաւէր, յաւեաց, յաւեսցէ, յաւիցէ.*— *Տանջեցեր զնոսա և նոցա ոչ յաւեաց. Մի ինչ անպատ արուք յաւիցէ մարմնոյն (Ոսկ. բ. տիմ.). Զիք ոք ի ձէնջ, որում յաւէր վասն իմ. Օրհնեալ էք դուք ի տեառնէ, զի յաւեաց ձեզ վասն իմ. Եւ ոչ յաւէր ձեզ վասն բնիմանն Յովսեփու. Հովուաց նոցա ոչինչ յաւէր վասն նոցա. Զի տեսցեն և յաւեսցէ նոցա և չտեսցեն ի նմանէն (Եփր. Թգ.). Յաւեաց նմա վասն անկելոցն ի հուր և ասնջելոց (Եզն. 247):*

Բ) ԵՄ, ԼԻՆԻՄ ԲԱՅՈՎ

Սրանք երեք տեսակ են. առաջին տեսակը կազմվում է ե, եր, իցե էական բայով, որոնց մոտ լինի, եղև, լիցի են չի գործածվում.— երկրորդ տեսակը ընդհակառակը կազմվում է լինի բայով և սրանց մոտ ե, եր, իցե չի դրվում.— երրորդ տեսակը ընդունում է թե ե, եր, իցե էականը և թե լինի օժանդակը: Այս բոլորի համար առանձին կանոն չկա, և վարժութեամբ միայն կարելի է իմանալ:

Դնում ենք երեք տեսակի ձևերը՝ այբբենական կարգով.

Ազդ.— *Ազդ եղև Մաահէէի բանս այս. Ազդ եղև ինձ վասն ձեր. Ազդ եղև Մակաբայեցւոցն պաշարումն ամրոյն. Ազդ եղև նմա. Իբրև ազդ եղև նենգութիւնն յալտդ լինելոյ ի նոցանէ. Գայցէ ազդ լինիցի զմէնջ. Ազդ լինէր...*

Անկ.— *Նմա անկ է անպրանկութիւնն (Օրին. իա. 17). Մինչև եկեսցէ՝ որում անկն է (Եզեկ. իա. 27). Վասն զի Տոբիայ անկ իսկ էր ժառանգել զնա (Տոբ. գ. 25). Քեզ անկ է առնուլ զմանուկն իմ (Տոբ. է. 9). Ինձ անկ է իշխանութիւնն, ինձ պատշաճ է (Եւս. քր. ա). Գրեացուք՝ եթէ բժշկելքն էին ինչ նմա անկ, նա ոչ թա-*

գաւօրութեանն ինչ անկ էր (Եզն.). Միթէ ի նա ինչ անկ իցէ վկայութիւնդ (Սերեր. բ)։

Արժան.—*Որ երդնու յոսկին կամ ի պատարագն, արժան է. Տալ ի կողմանց, ասաի արժան իցէ. Ասէին զայն ինչ՝ զոր ոչ էր արժան. Զգուշանալ արժանի է. Ոչ է արժան գործել ի շաբաթու. Ո՛չ արժան ոչ պատշաճ մերոյ չափոյ հասակի կեղծավորութեամբ մատանել. Ոչ է ասէն բանաւորին արժան ի տան թագաւորին լինել (Ս. Գր.). Արժան էր՝ թէ վաղուց էիր դու վախճանեալ ի տանջանացդ (Ագաթ.)։*

Բաւ.— *Բաւ է։*

Դեպ.— *Ի դէպ էր ինձ անսալ ձեզ (Դտ. ժը. 14). Ի դէպ է անցանել (բանիս), համարել (ի կարգիս). (Եւս. քր. ա). Եւ զինչ ի դէպ իցէ այս առաջնոց բանիցն (Ոսկ. մ. բ. 12). Եւ ի դէպ էր Ագամալ ասել (Եզն.). Ի դէպ է, թէ անդ գանակք էին վասն դաւին (Ոսկ. մ. գ. 31). Դէպ լինիցի սմա հիւանդանալ ի ճանապարհին. Դէպ եղև քահանային միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ. Դէպ լինէր երևել աթռ հնծեալս. Դէպ եղև դիպել. Դէպ եղև եդ-բալս եօթն ածել (Ս. Գր.)։*

Լու, լուր.— *Յորժամ լս եղև հրամանն թագաւորին (Եսթ. բ. 8). Լս եղև վաճառականաց աշխարհին (Ա. մկ. գ. 41). Լս եղեն բանքն, զոր խօսեցաւ Դաւիթ (Ա. թագ. ԺԷ. 31). Եթէ լսեր լիցի այդ առ դատաւորն (Մաթ. Իր. 41). Լսեր եղև, եթէ ի տան է (Մրկ. բ. 2)։*

Կամ, կամք.— *Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ. Եւ նմա կամ իցէ բնակել ընդ նմա. Կամ եղև և ինձ կարգաւ գրել քեզ. Որոց դիարդ և կամ եղև անձանց իւրեանց, բերէին նուէրս Տեառն. Եթէ կամք իցեն արքային. Եթէ կամք իցեն քեզ. Գրեցէք, որպէս կամք իցեն ձեզ։ Իբրև կամք եղեն Աստուծոյ (ՍԳր.). Ցետ սորա կամ եղև՝ պետութեանցն տանտամանալ լինել (Եւս. քր. ա).*

Հարկ.— *Հարկ է զալ գալթակղութեան. Հարկ էր արձակել. Հարկ է և նմա տնել ինձ զոր մատուցանիցէ (ՍԳր.)։*

Հնար.— *Եթէ հնար է, անցցէ բաժակս. Մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ, և զընտրեալսն, փութայր՝ եթէ հնար ինչ իցէ նմա երթալ. Եթէ հնար ինչ էր, գաչս ձեր հանէիք. Ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ. Ոչ իսկ հնար է հասանել նոցա. Ոչինչ էր հնար նոցա ելանել ի միջոյ նոցա. Ոչինչ էր հնար ցաւոցն զգալ. Զիք ինչ հնար (ՍԳր.). Առաջի Աստուծոյ ամենայն ինչ հնար է (Կոչ. ժգ). Մեզ չէ հնար, այլ արարչին հնարաւոր է (Ոսկ. ա.*

թես. ը). Ցառնել չիցէ հնար. Անդրէն հնար չիցէ գառնալ (Կոչ. ԺԶ)։— Զօրս անհնար է ինձ իմանալ. Առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել Աստուծոյ. Անհնար իցէ առնլ Աստուծոյ (ՍԳր.)։

Մարթ.— *Չէ մարթ այլմ լինել. Միթէ մարթ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ. Ոչ է մարթ մարգարէի կորնչիլ արտաքոյ քան զԵրուսաղէմ. Իսկ ի Նազարեթէ մարթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով, մարթ է. Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է (ՍԳր.)։*

Շատ.— *Շատ է արդ, Տէր, սա գոգի իմ լինէն. Շատ է արդ, մի պարծեսցի կորն իբրև զուղիղն. Ո՞չ իցէ քեզ շատ, զի առիր զայրն իմ. Շատ լիցի ձեզ որդիք Ղեւեայ. Շատ լիցի ձեզ բնակիլդ ի լերինս յայսմ. Շատ են քեզ շնորհք իմ. Շատ լիցին ձեզ թոշակքն ձեր (ՍԳր.). Ոչ երբէք ասեն շատ (է) (Առակ. ւ. 16). Մինչև լեօթն անգամ՝ շատ է (Սիր. համար.)։*

Պատշաճ.— *Ոչ էր պարտ և պատշաճ (բ. մկ. դ. 19). Ինձ անկ է հայրենի իշխանութիւնն... (և միւսն) ասէր. Ինձ պատշաճ է (Եւս. քր. ա). Ցոչինչ գառնալ և գարձուցանել չէ պատշաճ (Եզն.)։*

Պարտ.— *Պարտ է մեզ՝ որ կարօղս եմք, զանկարութիւն տկարացն բառնալ. Ապա եթէ այնպէս ինչ պարտ իցէ լինել. Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ. Ինձ պարտ էր ի ձէնջ վկայութիւն առնուլ. Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց նմանիլ. փոխանակ զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վասն ժամանակին (ՍԳր.). Միթէ հանապազ պարտ իցէ ձեզ ուրախութեամբ մատնել ի սրբութիւնս իմ (Ես. դ. 29). Պարտ է նմա երթալ լեռնատպէմ. Պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս, իսկ արդ ոչ էր պարտ ոգորմել և քեզ ծառայակցին քում. Ոչ գնոյնս պարտ էր չարչարել Քրիստոսի. Համարձակեցայց, որպէս և պարտ իցէ ինձ խօսել. Չէ պարտ այդպիսւոյդ կեալ. Ոչ է պարտ այսպէս լինել (ՍԳր.)։*

Պարտ և պատշաճ.— *Ոչ էր պարտ և պատշաճ ի տաբր տեղւոջէ անտի գանձ երթալ գոհից կաց գից պաշամանն (բ. մկ. դ. 19). Պարտ ու պատշաճ էր մեզ ոչ կաթօռանալ (Ոսկ. մ. ա. 1). Պարտ ու պատշաճ է մաքրել (Ոսկ. ես.). Պարտ ու պատշաճ է առ միմեամբք մակաղել (Ոսկ. մ. ա. 13). Ժամանակն յորում պարտ ու պատշաճ էր նմա յայտնել (Սիր. օրին.) Զիարդ գտաբէր նա ի գործոյ անտի՝ որ պարտ ու պատշաճ էր նախանձել նորա (Սիր. թգ.)։*

Վայել.— *Քեզ վայել է օրհնութիւն. Տան քում վայել է սրբութիւն. Քեզ իսկ վայել է։*

Փոյթ.— Չի՛ փոյթ է տեառն. Մի՛թէ զեզանց ինչ փո՛յթ էր Աստուծոյ. Ոչինչ է քեզ փոյթ. Ոչինչ փոյթ է քեզ զամէնքէ. Ոչ է քեզ փոյթ զամէնքէ. Որում փոյթ իցէ վասն ամենեցուն. Փոյթ լիցի նմա վասն սրբոցն. Փոյթ լիցի առնել պատճէն մի հրամարտակիդ. Մեզ չէ՛ փոյթ, դու գիտես. Չէ՛ փոյթ նմա վասն ոչխարացն. Ո՛չ գի զաղքատաց ինչ փոյթ էր նմա. Եւ ոչինչ գայնմանէ Գագիովնի փոյթ լինէր (ՍԳր.)։

Օրէն.— Որպէս օրէն է համբերողաց բացէ ի բաց անարգել ինչ, զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել. Զոր ոչ էր նմա օրէն առնել. Ոչ է օրէն քեզ անդր գիմի եդբօր քո. Արար գնա՝ որպէս և օրէն էր. Արասցէ յոդջակիզ՝ որպես և օրէն իցէ. Որպես օրէն է ամենայն երկրի. Արժան և օրէն է լիշել. Որում օրէն էր ինձ առ ածելոյ (ՍԳր.)։

Ալապես ասում ենք նաև՝ ամօթ է, պարծանք են, զարմանք էին, սխալ լիներ են։

Բնութեան երեւոյթները նշանակվում են լինի բայով. ինչպես՝

Լինի անձրև, եղև անձրև, ի լինել անձրևի.

Եղև ձիւն, եղիցի կարկուտ.

Ե՞րբ լինիցի երեկոյ, ե՞րբ լինիցի առաւօտ.

Իբրև այդ եղև, իբրև ընդ երեկս լինէր։

Եղև առաւօտ, եղև երեկոյ։ Եւ եղև երեկոյ և եղև վաղորդայն.

Կամ գ դեմքի բայերով՝

Նահատակաւ «մ[ի]թնեց».

Ոչ տեղաց լերկիր «անձրև չեկաւ».

Երբեմն էլ գոյականի հետ միացած բայով՝

Սկսաւ օրն տարաժամել.

Երեկոյացեալ էր ժամն.

Ի հասարակել գիշերի «երբ կէս գիշեր եղաւ»։

Տիւն լուսաւորէր.

Լուսանալը առաւօտն.

Իբրև այդն գառաւօտն մերկացաւ.

Ընդ այդոյն առաւօտանալն.

Ընդ այդոյն առաւօտուն լուսանալոյ.

Անդեմ բայի ձև ունենք՝

Դեռ աւուր շատ կայ «դեռ մինչև երեկոյ բավական ժամանակ կա».

Մինչ դեռ աւուր կայ «դեռ ցերեկ է».

Դեռ գիշերոյ կայ։

Ներգործական ձևով ասում են՝

Ածեմ անձրև.

Արկանէ ցօղ.

Տեղացից հուր յերկնից.

Իսկ անձրևէ, ձիւնէ, կարկտէ, ամպէ են անդեմ բայերը հնում հայերենի ձևեր են։

Անդեմ բայերի կարգն են դնում նաև անասունների ձայն արտահայտող բայերը. ինչպես՝ մռնչէ առիւծ, բառաչէ կով, հաջէ և ոռնա շուն, մնչէ տատրակ, խրխնջէ ձի, խռնչէ խոզ, խօսի հաւ, կանչեն, ճռռեն, ճռաւոցն թռչունք են։ Բայց այս բայերը իսկապես անդեմ չեն։

Անդեմ բայերի զարմանալի մի ձև ունի ամերիկյան կրի լեզուն. ամեն մի գոյականի վերջում դնելով skaw մասնիկը, ստացվում է մի անդեմ բայ, որի նշանակությունն է «այդ առարկայից շատ կա»։ Օրինակ, kinusew «ձուկ» բառից՝ kinuseskaw «ձուկը առատացել է»։ Ալապես նաև «փայտը շատացել է, անասունները բազմացել են» են։

Այս բայերը յոթ յօտրպաթյուն են կազմում նույն լեզվի մեջ։

(Lacombe, էջ 92)։

6. ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ԲՆԵՐԻ ՓՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԳՈՒՄԸ

Հնխ. բայական դրութեան պարզումը և յօտրպաթյունների վերածումը կատարված էր արդեն և դարից առաջ, այնպես որ երբ առաջին անգամ հայերենը գրի առնվեց, արդեն այս վերանորոգչական աշխատանքը բոլորովին վերջացած էր և մենք նեկա ենք գրաբարի մեջ շատ կանոնավոր բայական մի դրության։ Այս կողմից խոնարհումը գանազանվում է հոլովումից, ուր դրությունը դեռ անկարգ ու անկերպարան էր և պետք ուներ վերամշակման ու կանոնավորման։

Ինչպես մյուս լեզուների մեջ, նույնպես և հայերենում առաջին և կարևոր նորոգությունն էր հնդեվրոպական բների կրճատումը։ Հայերենն էլ լատիներենի, նոր հունարենի և նոր պարսկերենի նման ունի միայն երկու բան, մեկը նեկալի և մյուսը կատարյալի համար։ Օրինակ՝ հնխ. men «միտք» արմատից հմ. մճամ և մճացի։ Ալապես նաև անվանական (dénominatif) բայերից —հաւատամ և հաւատացի։

Երկու բներից առաջինը ցույց է տալիս տևական գործողություն, երկրորդը՝ մի անգամ եղած վերջացած գործողություն (որ է aoriste)։ Հնխ. կատարյալի (parfait) ձևը ջնջված է, ինչպես ջընջված են առհասարակ բոլոր կրկնավորները. և այս շատ բնական էր. այն ժամանակ, երբ արմատը դադարեց բայի հիմնական տարրը լինելուց, բայի սկզբի կրկնավոր մասը այլևս իմաստ չուներ. հունարենը շարունակեց դեռ այդպիսի ձևը և նույնիսկ անվանական բայերից կազմեց կրկնավոր կատարյալի ձևեր, բայց դա անցողական մի շրջան էր և նոր հունարենը չունի այլևս այդպիսի կատարյալ։

Հայերենի մեջ ներկայի բնից առացվում է՝ 1. սահմանական ներկա (լքանեմ). 2. անկատար (լքանեի, տեսական). 3. արգելական (մի՛ լքաներ). 4. առորդաստական ներկա (լքանիցեմ). 5. անորոշ (լքանել)։

Կատարյալի բնից առացվում է . 1. սահմանական առիւստ (լքի). 2. հրամայական (լիք). 3. առորդաստական առիւստ (որ է հաճախ ապառնի.— լքից). 4. սովորաբար նաև անցյալ դերբայ (լքեալ)։

Ներկայի բներ

Հայերենի մեջ ներկայի բները չորսն են, որոնք որոշվում են ն, ի, ա, ու ձայնավորներով. սրանցից յուրաքանչյուրը ունի երկու տիպ. մեկը առանց ընգալինի, մյուսը ընգալինով. ինչպես՝ 1. բերեմ (բերի), լքանեմ (լքի), 2. բերեմ (բերալ), լքանիմ (լքալ), 3. լուսամ (լուսացայ), զարմանամ (զարմացայ), 4. հեղում (հեղի), առնում (առի)։ Բացի սրանցից ի բոնը ունի նաև չ-ով մի ձև. ինչպես՝ փախչիմ (փախեալ), մարանչիմ (մարեալ)

Այս բոլորը առաջացել են նախապես իրարից բոլորովին անկախ կազմութիւն ունեցող ձևերի խառնուրդից և յայն չափերով կիրառված անալոգիայի միջոցով։

Ն Բուն
(առանց ընգականի ձև)

Երեք բայ կա, որոնք առաջանում են հնխ. բնավոր արմատական բներից. դրանք ճանաչվում են իրենց նախնական առիւստով (առանց ց-ի).

բերեմ <bherō (բերի)
ածեմ <ag¹ō (ածի)
հանեմ (կա. հանի)

Սրանց մեջ ն համապատասխանում է հնխ. e ձայնին. ինչպես՝ բերեմ = հն. φερε—<հնխ. bhére-si, bhére-ti։

Մնացյալ բայերը երկրորդական են, մեծ մասամբ անվանական. սրանց մեջ ն համապատասխանում է ոչ թե հնխ. e-ին, այլ հնխ. e-ye- անվանական բունին և կամ խառնված է -éye- անցողական ու հաճախական բունի հետ։ Այսպես, օրինակ՝ գործեմ կարելի է համարել թե իբր ածանցված գործ արմատից և թե իբր առաջացած հնխ. worg¹-eye- բունից. ճիշտ ինչպես հն. φορέω կարելի է համարել իբր անվանական բայ՝ φόρος-ից և իբր առաջացած հնխ. bhoreye- հաճախականից (itératif)։ Դրա համար է որ հյ. ն բունը տալիս է գործ ցույց ավող անվանական բայեր (օրինակ՝ ընտեմ կազմված բնտիր արմատից) և ոչ վիճակ (ինչպես, օրինակ՝ ծնրպանամ)։

Ն Բուն
(ընգական ձև)

Այս կարգի բները նախնական են և նրանց առիւստը առանց ց-ի է կազմվում։ Այն բայերը, որ պատկանում են այս տիպին, մեծ մասամբ համապատասխանում են հնխ. ընգալին միջամանիկավոր ձևերին։ Միջամանիկաձև ընգականը արմատից դուրս է առնված և կցված է իրրև հետամանիկ։ Երևույթը ճիշտ նույնն է, ինչ որ հ. սլավերենում, ուր օրինակ՝ būnǫ «արթնանամ» միջամանիկավոր ձևը համապատասխանում է լիտ. bundù «արթնանում եմ» միջամանիկավոր ձևին։ Օրինակներ՝

լքանեմ (լքի, ելիք)<հնխ. linq-
բեկանեմ (բեկի)<հնխ. bheng-¹
բուծանեմ (բուծի)<հնխ. bhung¹
գտանեմ (գտի)<հնխ. vind-
անիծանեմ (անիծի)<հնխ. neind-
դիպանեմ (դիպի)<հնխ. dheing¹h
լիզանեմ (լիզի)<հնխ. leing¹h
հասանեմ (հասի, եհաս)<հնխ. ⁰nk¹-
աւծանեմ (աւծի) հնխ. ong²-
անցանեմ (անցի)
արկանեմ (արկի)
ելանեմ (ելի)

եղծանեմ (եղծի)
պագանեմ (պագի)
զկրծանեմ (զկրծի, զկրծ)—չունի ե, որովհետև զ նախդիր է։
թքանեմ (թքի, եթուք)
իջանեմ (իջի, էջ)
լուծանեմ (լուծի, եղոյծ)
լուցանեմ (լուցի, եղոյց)
խածանեմ (խածի, եխուծ)
խփանեմ (խփի, եխուփ)
կլանեմ (կլի, եկուլ)
հատանեմ (հատի, եհատ)
հարցանեմ (հարցի, եհարց)
մուծանեմ (մուծի, եմոյծ)
մտանեմ (մտի, եմուտ)
ողոքանեմ (ողոքի)
սուզանեմ (սուզի, եսոյզ)
սպանանեմ (սպանի, սպան)
սեղծանեմ (սեղծի, սեղծ)
տեսանեմ (տեսի, եսես)
ցուցանեմ (ցուցի, եցոյց)
օծանեմ (օծի, օծ)

Մի քանի բայեր ունեն միաժամանակ թե ունգալին և թե առանց ունգալինի ձև. ինչպես՝

ներկանեմ (եներկ) — ներկեմ (ներկեաց)
տարածանեմ (տարածի) — տարածեմ (տարածեաց)։

Կան մի քանի բայեր էլ, որոնց անգալինը -նեմ ձևով է. այսպես են՝ առնեմ, յառնեմ, դնեմ, որոնց խոնարհումը անկանոն է։

*Վերոհիշյալ օրինակների մեջ -ան- ներկայանում է հնխ. արմատի միջին ունգականը։ Կան ուրիշ բայեր էլ, որոնք թեև պատկանում են ունգական տիպարին, բայց նրանց մեջ -ան- չունի իր համապատասխանը հնխ. ձևի մեջ։ Այսպիսի բայերը կազմված են, ուրիշ, կատարյալի վրայից՝ նախորդների նմանողությամբ։ Օրինակ՝ հնխ. pṛk¹ արմատից ske մասնիկով առացվում է prk¹-ske բունը, որից պիտի առաջանար հյ. ներկ. *հարցեմ=սանս. pṛččhā́-mi և կար. հարցի, եհարց=սանս. áprṛččhat .— կատարյալի ձևերը պահված են անփոփոխ, իսկ ներկ. *հարցեմ ձևը առանալով նախորդների նմանությամբ -ան- մասնիկը՝ դարձել է հարցանեմ։*

*Հնխ. leuk¹ արմատից նույն մասնիկով առանում ենք leuk¹-ske-, որից հյ. պիտի առանալինք կար. լուցի, ներկ. *լուցեմ. վերածվել է լուցանեմ։*

Հնխ. skeu արմատից նույն մասնիկով առանում ենք skeu-ske-, որից հյ. պիտի առանալինք կար. ցուցի, ներկ. ցուցեմ, վերածվել է ցուցանեմ։

Այս վերահիշյալ օրինակները, որոնցով պարզվում է երևույթը, ցույց են տալիս, թե միացյալ բոլոր ունգալին տիպարի բայերն էլ կազմված են նման եղանակով։ Հատկապես պետք է հիշել անցողական բայերը։

Այս բնով ունենք նաև երկու բայ, որոնք միաժամանակ ունգալին են և ունեն -չ- հավելվածը. այսպես՝ ճանաչեմ (ծանեայ) և մեղանչեմ (մեղայ). սրանց վրա տես ի բունի տակ։

Ի Բուն

Ի բունը երկու պաշտոն ունի.

1. Կազմում է ն բնով բայերի կրավորականը՝ պարզապես ն վերածելով ի. ինչպես՝ բերիմ, լքանիմ։

2. Կազմում է բայեր, որոնք ամեն կերպով նույնն են ն բնով բայերի հետ. ինչպես՝ ճառիմ, մեռանիմ։ Այսպիսի բայերը նույնն են, ինչ որ արիականի և հունարենի հատուկ վերջավորությամբ բայերը, և լատիներենի ու իռլանդերենի բացառական բայերը. օրինակ՝ հն. ἔζομαι, սանս. mriyáte, լտ. morior.

Այս ի հիշեցնում է իսկույն հյ.— -ի- կամ լիտ. -i-, որ գտնում ենք վիճակ արտահայտող բայերի մեջ. ինչպես՝ հյ. biditŭ. «արթուն է»։ Այս մասնիկի բնավոր մի ձևից առաջացել է արիական լեզուների կրավորականը՝ -ya- ձևով (օրինակ՝ անս. budh-yá-te- „il est éveillé“), ինչպես և հունարենի վիճակ արտահայտող բայերը (օրինակ՝ μαίνεται «գիժ է»)։ Երևի բալթիկ—սլավոնական խմբի անբուն -i- ձևն է, որ գտնում ենք նաև հայերենում, միայն եթե չենթադրենք -iye- ձևը, որ գտնում ենք անս. mr-iyá-te «մեռանիմ», հն. fiδ-ίω «քրտնիմ» և ուրիշ մի քանի բայերի մեջ։ Չի կարող լինել -ye- մասնիկը, որովհետև այս y ձայնը պիտի տար -ջ (ինչ. ջնջեմ = հն. θείνω) և կամ խառնվելով նախորդ բաղաձայնի հետ, պիտի տար զանազան արդյունքներ, բայց ոչ ի։— Բայց սլավոնականում -i- ձևի կողքին կա նաև անկրևույթ -ě- բունը. ինչպես՝

sedĕ-ti «նստել» և sĕdi-tŭ «նստում է». հունարենն էլ ունի μαίνεται ձևի դեմ aor. μανῆ-ναι, որով անկարելի չէ, որ հյ. նստիմ ձևն էլ առաջացած լինի հնխ. -ē-ից կամ նրա ածանց -ēye- ձևից, որ գտնում ենք ալլուր. համմ. լտ. sedeō, sedēre:

Այս տատանումների մեջ չի կարելի որեմն վերջին վճռական խոսքն ասել հյ. ի բնի ծագման մասին:

*Հայերենի տեսակետով ի բունը և բնի երկրորդական ձևն է և այս ի ձայնն էլ երևում է միայն նեղկալի և հրամայականի մեջ, իսկ անորոշը, անկատարը և սոսրագասականը ունեն -ե-. այսպես՝ բերել, բերեի, բերիցիմ (<*բերէցիմ<*բերելցիմ):*

Ի բունը ունի 3 տիպար. 1) պարզ (առանց ընգալինի), 2) ընգականով, 3) չ-ով:

1. Առանց ընգականի

*Մի բայ միայն կա՝ որ նախնական է, այն է նստիլ (կար. նստայ), հինը *նիստել, արմատը նիստ<հնխ. nizd-, կազմված ni մասնիկով sed «նստել» արմատից. մյուս բայերը երկրորդական են, ինչպես՝ հոտիմ (կար. հոտեցայ), հոտ արմատից. կամ սաստկական կրկնությամբ՝ հոտոտիմ.*

2. Ընգականով

Այս տիպի բայերը նախնական են և նրանց կատարյալը չունի -ց-. սրանք էլ ծագում են հնխ. ընգային միջամասնիկավոր ձևվերից,—ինչպես՝ ուսանիմ (ուսայ<հնխ. unk-², ագանիմ (ագայ)< հնխ. óvō, բայց համմ. լիտ. aunù:

Հաճախ այս ձևը կազմված է հնխ. առանց ընգականի ձևի փոխարեն. ինչպես՝ ծնանիմ (ծնայ)<հնխ. g¹en-, մեռանիմ (մեռայ)<հնխ. mer-, փլանիմ (փլայ)<հնխ. phōl-, անկանիմ (անկայ)<sŋg-:

Այս կարգի բայերը լեզվի պատմական ընթացքում այլևս չէին կազմվում. հետևյալ հիշենք՝

ագանիմ (ագայ)	*շիջանիմ (շիջայ)*
բուսանիմ (բուսայ)	*ոռոգանիմ (ոռոգայ)*
զառածանիմ (զառածայ)	*ուսանիմ (ուսայ)*
հեծանիմ (հեծայ)	*պրծանիմ (պրծայ)*
մածանիմ (մածայ)	*սկսանիմ (սկսայ)*
սիրածանիմ (սիրածայ)	
փլանիմ (փլայ)	
փրծանիմ (փրծայ):	

3. չ-ով ձևեր

Այս կարգի բայերը բոլորն էլ նախնական են և նրանց կատարյալը առանում է -եայ, մի մասը առանց ընգականի է և մի մասը ընգականով:

Առանց ընգականի են՝

թաքչիմ (թաքեայ)	*թռչիմ (թռեայ)*	հնխ. <ptĕr-
կառչիմ (կառեայ)	*մառչիմ (մառեայ)*	
հանգչիմ (հանգեայ)	*փախչիմ (փախեայ)*	
	զառչիմ (զառեայ):	

Ընգականով են՝

երկնչիմ (երկեայ)
կորնչիմ (կորեայ)
մարանչիմ (մարեայ):

*Կազմության կողմից վերջիններիս հետ և նման են ճանապչիմ (*ծանապչիմ, կար. ծանեայ) և մեղանչիմ (մեղայ), որոնք ունեն թե ընգականը և թե չ հավելվածը, բայց պատկանում են ի բունին: Սրանից երևում է, որ նախորդ օրինակները անցել են ի բունին, նշանակության պատճառով: Ճանապչիմ և մեղանչիմ ձևերի մեջ չ-ից առաջ կա ա, ճիշտ սրա նման կա ի ձայնավորը վերի -չիմ ձևերի մեջ, ինչպես երևում է կար. -եայ (հինը *-էայ) և սոսր. երկի-ցես (*երկի-լցես) վերջավորությունից և նաև բայերի գոյական ձևերից. ինչպես՝ հանգիստ, երկի-ւղ: Բաս այսպիսով թաքչիմ, փախչիմ են գալիս են հնագույն *թաքիչիմ, *փախիչիմ են ձևերից: Այսպիսով սուն բայերի կազմությունը մի կողմից և նրանց սկըսնական (inchoatif) նշանակությունը երկրորդ կողմից նույնացնում են նրանց լտ. -scō=հնխ.ɜκω<հնխ. sk^{e}/$_{0}$ վերջավորությամբ բայերի հետ: Եվ որովհետև հյ. չ ծագում է ky խմբից, ուստի պետք է ենթադրել, որ հնխ. -sk- բայարտյունը ընդարձակվել է ye մասնիկով և դարձել է -skye- (որից չ). այս -skye- տիպը շատ լավ պահված է հաթերենում, բայց նաև ունենք հն. ἐγρήσσω «արթուն լինալ, հսկել», որ ծագում է ἐγρηκτω ձևից: Մինչև անգամ *թաքիչիմ, *երկինչիմ են ձևերի մեջ գտնված ի ձայնը գտնում է նաև հունարենի և լատիներենի մեջ, նույն sc^{e}/$_{0}$ բնի մոտ, համմ. δεδίσκομαι, ἀλιτσκομαι, լտ. reminiscor են, որոնց բունն է τσκ-ω, isc-ō:*

Սրանցից դուրս կան նաև տանիմ, ունիմ բայերը, որոնց խոնարհումը անկանոն է:

Ա. Բուն

Ա բնով բայերը ցույց են տալիս մեծ մասամբ մի վիճակ կամ մի վիճակի մեջ մտնելը. այս նշանակությամբ նույնանում են լատ. cubāre «պառկել», micāre, «փայլել» *ձևի բայերի հետ, ինչպես նաև լիտ. հաճախական բայերի հետ. ինչպես՝* rymóti «հենվել» (remti «հենցուկ տալ» *ձևի դեմ)։*

1. Առանց ռնգականի

Այս կարգի բայերի մեջ ա առաջանում է հնխ. -ā-ye- բնի ամփոփմամբ. այս բանը հայտնի կերպով երևում է անվանական բայերի մեջ. հմ. յուսամ, (յոյս *բառից*) *համապատասխանում է սանս.* pṛtanāyáti «մարտնչիմ», *հն.* τιμάω «պատվել», *լատ.* onerō «բարձել» *հմ.* kotoraja «վովիմ» *են անվանական բայաձևերին։ Ոչ անվանական բայերն էլ կազմված են անշուշտ լիտ.* žiõ-ju „je-suis béant“ *և լատ.* hiō (*hiā-(ye)e-) *բայերի նման. օրինակ՝* ործամ *ճիշտ ու ճիշտ համապատասխանում է հմ.* rygayą «փոխվում եմ» *ձևին.— կեամ համապատասխանում է ոչ հն.* ζῆ (<*gʷ yē-) *և ոչ հն.* βιῶ—(<*gʷ iyō) *ձևերին, այլ հիմնված է հնխ.* *gʷ iy-ā-ye *բնի վրա, մնամ չի համապատասխանում անշուշտ լատ.* manē-re, *հն.* (με)—μένη-κα *ձևերին, այլ հիմնվում է հնխ.* mēn-ā-ye *ձևի վրա, որի հետ նույն են լատ.* cēlā-re, cēlo, occupāre, ēducāre, indicāre, *հմ.* -mēta-ti, -mētają «հնամել» *են։*

Այս բնի ա ձայնավորը ենում է կատարյալի մեջ էլ, որ կազմվում է միշտ g-ով, ինչպես՝ ործացի, մնացի, կեցի (*կեացի)։

Այս բնին հետևող բայերից են.

Ներգործական ձևով՝

աղամ — աղացի — աղալցեմ
գնամ — գնացի
դողամ — դողացի
լամ — լացի
կամ — կացի
խաղամ — խաղացի
խնդամ — խնդացի
կարդամ — կարդացի
կեամ — կեցեմ (Եզն. 99), կեցի, եկեաց, կեցից, կեցցես, հրմ. կե՛ց
հաւատամ — հաւատացի
ճեամ — ճեացի
որոտամ — որոտացի
տեղալ — տեղաց։

Կրավորական ձևով՝

գթամ — գթացայ, գթալցիմ
յուսամ — յուսացայ
փութամ — փութացայ։

Առանց ներգ. և կրավ. իմաստի, երկու ձևով էլ՝

հոգամ — հոգացի, հոգացայ
ողբամ — ողբացի, ողբացայ
որսամ — որսացի, որսացայ
ջանամ — ջանացի, ջանացայ
սգամ —սգացի, սգացայ
ցնծամ — ցնծացի, ցնծացայ։

Սրանց սաոր. ձևը միայն ներգ. հոգալցեմ, ջանալցեմ են։

2. Ռնգականով

Ներկայանում է երկու ձևով. նա և կամ ա ձայնավորի հետ միացած՝ -անա. *առաջինից ունենք երկու օրինակ. բառնամ (*բարձնամ) և դառնամ (*դարձնամ), որոնց կատարյալն էլ նախնական է (բարձի, դարձայ)։ Երկրորդից ունենք ավելի շատ օրինակներ, ինչպես՝*

սառնամ — սառացայ	*բանամ — բացի*
լոգանամ — լոգացայ	*թանամ — թացի*
լուանամ — լուացի	*իմանամ — իմացայ*
ուրանամ — ուրացայ	*զարմանամ — զարմացայ։*

Նույն մասնիկը գործածվում է նաև բազմաթիվ բայերի համար, որոնք նշանակում են «վերածվել մի բանի, դառնալ մի բան». ինչպես՝ քահանայանամ, տկարանամ (քահանայ, տկար բառերից) են։— Արբենամ բայի մեջ գտնում ենք ե, որ առաջանում է եա ձևից։ Նույնպես ունենք յագենամ, մերձենամ, յամենամ (եցայ), իսկ քաղցենամ՝ քաղցեայ։

Այս մասնիկը նույն է հնխ. -nā- բնի հետ, որ գրվում էր երկվանկ արմատների վրա, որոնք վերջնում էին երկար ձայնավորով, իբրև ձայնդարձ ունենալով ə. ինչպես՝ սանս. pṛṇā́ti «il

emplit» դր. ծնվաքու։ Ավելի հետո սանսկրիտի մեջ ալս -nā- դարձավ մասնիկ. նույնը նաև հայերենի մեջ։

-Ամ ձևի տեղ -եամ ձևով ունենք՝
առնամ — առեալը, հետո եղավ առել...
կեամ — կեցի
*փրփրեամ — կա անկ. փրփրեալը միայն։

ՈՒ ԲՈՒՆ

1. Առանց ռնգականի

Ու բունը կարելի է բացատրել հնխ. u- բնով, առանց բնային ձայնավորի և կամ նույն բնի վրա ավելացնելով երկրորդական -ye- մասնիկը։ Ալսպես գելում (կր. գելի), որ համապատասխանում է հն. *fελύ-σθη*, լտ. *voluō*, հն. *εἰλύ-ομαι*, գոթ. *walwjan* ձևերին, կարող է բացատրվել հնխ. welu- կամ welu-ye- ձևից։ Ալսպես կարելի է բացատրել նաև մլուս -ու- բնով նախնական բալերը. ինչպես՝ հեհում (կր. հենի) = լիթ. *pinù*, գոթ. *spinnan* (*spenwe ից)։

հեղում (հեղի)— լիթ. *pilù*, լտ. *pluit*. գեղում (գեղի).

ցելում (սրա ու ձայնը չկա ալլուր, որովհետև լիթ. *skelìù* առաջանում է *skelyō ձևից).

գերծում (գերծի), գենում (գենի), թողում (թողի), լեսում (լեսի), լիզում (լիզի), կասում (կասի), կիզում (կիզի), հերձում (հերձի), լեռում (լեռի), քերծում (քերծի). կան մի խումբ անվանական բալեր ու բնով. ինչպես՝

արգելում (արգելի) — արգել բառից.
լաւելում (լաւելի) — (առ)աւել բառից.

Սրանք կարելի է բացատրել հնխ. -ō-ye- և կամ -u-ye- ձևով. առաջինի համար համմ. լիթ. -ûjù տիպի բալերը և հն. ϑῠλάω, ϑηλάσω տիպի բալերը, իսկ երկրորդի համար՝ լատ. *statuō* տիպի բալերը։

2. Ռնգականով

Սրանք կազմված են -neu- մասնիկով։ Հնդեվրոպական նախալեզվում -neu-, -nu- բնները կարելի էր միայն գտնել -u- ձայնավորով հանգող արմատների մեջ, շուտով սրանից կազմվեց

-neu- մասնիկը, որ բավական մեծ դեր է խաղում սանսկրիտի և հունարենի մեջ, նույնից է նաև հայերենը։ Օրինակ՝

առնում (առի) — հն. ἄρνυμαι (կր. ἠρόμην).
գ-գենում (գ-գեցայ) — հն. *ϑέννυμαι*.
ընկալնում (ընկալայ), ջեռնում (ջեռայ), ընթեռնում (ընդ-թերբինում), ցայ
հեղձնում (հեղձայ), ընկենում (եցի), խնում(խցի), լենում (լեցայ)։

Հայերենը մինչև անգամ ունի նու ալնտեղ, ուր առաջ կար -nā-, ալսպես՝ լցնում (լցի)—սնս. *pṛṇā'ti* «լցնում է»։

Անկանոն են երդնում (երդուայ), երդուեալ, զրաղնում (չունի կր., իսկ զրաղեցայ գալիս է զրաղիմ բալից)։

Մի խումբ բալերի կատարյալը լինում է -եալ. ինչպես՝

ալտնում (ալտեալ) պշնում (պշեալ)
զարթնում (զարթեալ) սարսնում (սարսեալ)
ուռնում (ուռեալ) ցածնում (ցածեալ)
պակնում (պակեալ) ցասնում (ցասեալ)
հարթնում (հարթեալ) քաղցնում (քաղցեալ)։

Ո ԲՈՒՆ

Միայն մի բալ կա ալս բնով. ալն է գոմ. սա ծագում է հնխ. wes- արմատից, որի նախկան պիտի տար հյ. գեմ, գես, գե, ալս ձևերը ջնջված են հայերենից և միայն կատարյալի *vóse* ձևից առացված է գո-, որ և դարձել է նեկա։

ԿԱՏԱՐՑԱԼԻ ԲԱՆԻ (AORISTE)

Հայերենն ունի երկու տեսակ aoriste. արմատական, որոնք ոչ մի հատկանշական մասնիկ չունեն, և ց-ով aoriste։ Սրանք ունեն երկու տեսակ վերջավորություն՝ ի կամ ա. ինչպես՝ բերի, գործեցի կամ բերայ, գործեցայ. առաջինը նեկալի -ե բնի համար, երկրորդը նեկալի -ի- բնի համար։ Դյուրության համար կարելի է առաջինը կոչել նեղգործական, երկրորդը հասարակ, ի նկատի ունենալով նրանց նշանակություններն և ոչ թե հնդեվրոպական ծագումը, ընդ որում այդ վերջավորություններն հնդեվրոպական նեղգործական և հասարակ վերջավորությանց հետ գործ չունեն։

Հայերենի ներգ. aoriste ձևերը ներկայացնում են հնխ. բնաւոր ութի երկրորդական վերջավորութիւնները, այս են ցույց տալիս այն բայաձևերը, որոնց ծագումը հայտնի է: Օրինակ՝ ելիք = հն. ἔλιπε, լքեր = հն. λίπες (մի մասնիկի հավելումով): Բայց, որովհետև հնխ. երկրորդական վերջավորութիւնները մեծ մասամբ կազմված են մի բաղաձայնական տարրից և բառի վրա մի նոր վանկ չեն ավելացնում, ուստի բնի ձայնավորը սովորաբար ընկնում է (ինչպես ցույց է տալիս երեր = ἔφερε, սնս. ábharat) և այն ժամանակ բունը երևում է հայերենում բեր- ձևով:

Այս բանը երևում է ստորադասականի կազմութեան մեջ.— ներկայի բերե- բունը տալիս է ստոր. *բերեյցեմ > *բերեցեմ > բերիցեմ, բերիցես, իսկ կատարյալի (aor.) բեր- բունը տալիս է ստոր. բերից, բերցես:

Հասարակ aoriste-ի (կատարյալի) -ա- վերջավորութեան (բերայ ևն) ծագումը անհայտ է, նա կատարյալի (aor.) բնի անբաժան մասը չի կազմում և չի երևում ստորադասականի մեջ (բերցիս), (բացի եզ. ա դեմքից, որ նմանողութեան արդիւնք պետք է լինի), ոչ էլ հրամայականի մեջ (բեր-իր):

Կատարյալի -ա վերջավորութիւնը գործածական է բոլոր այն բայերի մեջ, որոնց ներկան ունի -ի, բայց նաև -ա, -ու, որոնք նշանակութեան կողմից հիշեցնում են հասարակ բայը. ինչպես՝ բարկանամ — բարկացայ, զգենում — զգեցայ ևն.

սիրեցի	խօսեցայ
սիրեցեր	խօսեցար
սիրեաց	խօսեցաւ
սիրեցաք	խօսեցաք
սիրեցէք, իք	խօսեցայք
սիրեցին	խօսեցան

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐՅԱԼ

Արմատական կատարյալը համապատասխանում է հնխ. բնաւոր ձևերին՝ երկրորդական վերջավորութեամբ: Ձևով երբեմն նրանք հին aoriste-ներն են. ինչպես՝ ելիք = հն. ἔλιπε, եգիտ = սանս. óvidat.

Բայց կարող են նաև լինել անկատարի ձևը. ինչպես՝ երեր = հն. ἔφερε, սանս. ábharat, հարց = սանս. ápṛčchat.

Հայերենը ստեղծելով հնխ. անկատարից բոլորովին անկախ մի անկատար, կարող էր հին անկատարը իբրև aoriste գործածել: Նույնը կատարվել է սլավականում, ուր ստեղծվելով մի նոր անկատար, օրինակ՝ padą, pasti «ընկնել», բայի անկատարը padŭ գործ է ածվում իբրև aoriste: Հայտնի է արդեն, որ հնխ-ում միայն մի տարբերութիւն կար անկատարի և aoriste-ի միջև. անկատարին ընկերանում էր նախնական վերջավորութեամբ մի ներկա՝ նույն բնից, իսկ aoriste-ին ոչ: Այսպես սանս, âjanata, անկատար է (jânate ներկայի), իսկ հն. ἐγένετο, որ համապատասխանում է նրան տառ առ տառ, ընդհակառակը, aoriste է, որովհետև չունի *γενεται ձևով մի ներկա, այլ նրա ներկան է γίγνεται, և սրա անկատարը ἐγίγνετο, հայերենն ունի aor. ծնաւ, ճիշտ նույն նշանակութեամբ ինչպես հն. ἐγένετο:

Արմատական aor. ունեն -աւե- և -աւի- բնով բայերը (որ հանրապես, -ե և -ի- բնով բայերից մի քանիսը (որ նշանակեցինք վերը), -ու բնով բայերը և -ևու- բնով բայերից նրանք, որոնց մեջ -ևու-ից առաջ բունը չի հանգում ձայնավորով, այսպես՝ հեղում — հեղ, առնում — առ, ջնջում — ջնաւ, կամ -եայ ձևով՝ զարթնում — զարթեայ, իսկ aor. երդուայ (բունը երդու-, ներկա երդնում) բացառութիւն է:

-եա ձևով aoriste- ները, որ պատահում ենք -չ- ձևով ներկայի մոտ և մի քանի մասնակի դեպքերում (ինչպես՝ յարեայ), անշուշտ առաջացել են հին անկատարից: Եթե չհաշվենք -ա-, որ նշանն է բոլոր հասարակ aoriste-ների, այստեղ գտնում ենք իրոք -ի-, և (յ-) արի- հիշեցնում է ճիշտ լտ. ori-tur «յառնէ» և այդ ի ձայնը ամբողջապես երևան է դալիս անկանոն հրամայականի մեջ, որ է արի՛ (առանց յ նախդրի): Վերևում տեսանք որ չ ծագում է iskye ձևից և այդ էլ առաջանում է i- բնի -skye աճումով. ինչպես՝ լտ. (re-) miniscor «յիշեմ», հալ. mĭnĭ-tŭ «մտածում է» ձևի դեմ: Ուրեմն aor. եա- պահել է բնի անկատարը, որի աճումն է չ-ով ներկան:

Ց-ով կատարյալ (aor.)

Կատարյալի ց առաջանում է հնխ. ske-ից, որ բայական բնեբի 12-րդ ձևն է, հունարենն էլ ունի նույն մասնիկով prétérit-ներ. ինչպես՝ φάσκον, φεύγεσκον, φύγεσκον, φιλέεσκον ևն: Այս մասնիկը ոչինչ չունի իսկապես aoriste-ական. արդեն տեսանք, որ հայերենի

aoriste-ը ներկայացնում է երկրորդական վերջավորութիւններով հնխ. մի ձև, բայց ոչ անհրաժեշտաբար aoriste.

Այս մասնիկը ավելանում է ճիշտ ձայնավորահանգ բնի վրա. կանոնավորապես այն բայերի վրա, որոնց ներկան ունի -ա-. ինչպես՝ ՙնամ—ՙնացի, լուսամ—լուսացայ, լուանամ—լուացի, զարմանամ—զարմացայ. նաև այն բայերի վրա՝ որոնց ներկան ունի -ցու- և որոնք ունեն (կամ ունեին նախապես) մի ձայնավոր՝ այդ -ցու-ից առաջ. ինչպես՝ զգենում—զգեցայ, լնում (*լինում)—լցի, ելից: -ե- և -ի բնով անանգային ներկաները ունեն g-ով կաուտրյալ (aor.), բացի մի քանի բացառութիւններից (ածեմ, բերեմ, հանեմ, նըստեմ).— բայց այս g ավելանում է ոչ թե ե-ի կամ ի-ի վրա, այլ եա-ի վրա. այսպես՝ գործեմ, կաբ. գործեաց, գործեցի.— գործիմ, գործեցայ:— Զորս բայ կա, որոնք ունեն միայն ա. այն է ասեմ—ասացի, գիտեմ—գիտացի, մարթեմ—մարթացի, կարեմ—կարացի:

Այս -եա- ծագում է հնագոյն -isā- ձևից, ուր ā նույն է բայերի ա բնի հետ (տես վերը յուսամ, որժամ կեամ<հնխ. g^w iy—ā-ye- ևն), իսկ -is- մի մասնիկ է, որ գտնում ենք հաճախ հնաոիպ հնդեվրոպական լեզուների մեջ, այն է՝ արիականում և լատիներենում, ինչպես՝ սանս. ábhārišam «կրեցի» (աորիստ), գաթա xšnəvīšā «գոհացնեմ» (աոոր.), լա. ēg-is-tī, ēg-is-tis. ēg-er-unt: Նույն is մասնիկը գտնվեց նաև թոխարերենում և հայերենում, հատկապես (prétérit) հզ. p դեմքում: Այսպես, հայերեն՝

	nehhum	*տանում էի*
	naištēn	*տանում էիք*
վեդ.	vádhīm	*զարկի*
	vadhiṣṭa	*զարկիք*
սոոր.	vádhiṣ iḥ	

Վեդայական հնդկերենում բավական տարածվեց այս ձևը:

Համեմատութիւններից երևում է, որ այս is մասնիկի հավելումը հնդեվրոպական նախալեզվի ամենահին շրջանի հատկութիւնն էր: Այս մասնիկը ավելանում էր սահմանականի այն վերջավորութիւնց մոտ, որոնք սկսում էին բաղաձայնով, ինչպես նաև սոոբատականի մեջ: Հատկապես այս մասնիկին էին դիմում, երբ արմատը միավանկ էր և վերջանում էր բաղաձայնով, այնպես որ s կամ t բաղաձայններով սկսող մի վերջավորութեան հավելումը պիտի մթագներ արմատը: Այս մասնիկի հավելումը սակայն իմաստի ոչ մի փոփոխութիւն չէր առաջացնում (Meillet, BSL № 102, էջ 127—9):

Հույնը, սլավը և գերմանականը չգիտեն այս մասնիկը, հայերենը դուրս է գալիս այստեղ իրեև մի ավանդապահ վաղնջական լեզու: Երկու ձայնավորի մեջ s ընկնելով (համմտ. *bhoso-go> բոկ), -isā- դառնում է -իա, որ հետո վերածվել է -եա (համմտ. տեղեաւ փխ. *տեղիաւ)[1], որով -եաց <հնխ. -is-ā-ske-: Այսպիսով -եաց վերջավորութեան -եա մասը բոլորովին տարբեր է յարեաւ, փախեաւ են (դերբ. յարուցեալ, փախուցեալ և ոչ թե յարեալ, փախեալ) aoriste-ների եա մասից, որ ծագում է հին ia ձևից և ոչ is-ā[2]:

7. ՀԱՅԵՐԵՆԻ ԱՌՆԱՐՀՄԱՆ ՓՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԱԴՈՒՄԸ

Այն աշխատանքը, որ կատարվեց գանազան լեզուների մեջ պարզելու համար հնդեվրոպական խոնարհումը, կատարվեց նաև հայերենի մեջ բավական խոշոր չափերով: Քանդվելով բնների դրութիւնը, վերացվեց ներդործական և հասարակ վերջավորութիւնց գանազանութիւնը, ջնջվեց երկակի թիվը:

Հին հայերենը գանազանում է իրապես հինգ լծորդութիւն, որոնք որոշվում են սահմանական ներկայի ե, ի, ա, ու, ո ձայնավորով. այսպես՝ սիրեմ, խօսիմ, աղամ, թողում, գոմ (վերջինս վորևէր

սիրեմք	խօսիմք	աղամք	թողումք	գումք
սիրէք	խօսիք	աղայք	թողուք	գոյք
սիրեն	խօսին	աղան	թողուն	գոն:

Այս բոլորի մեջ տեսնում ենք կատարյալ նուլնութիւն. այն տարբերութիւնները, որ երևում են առաջին հայացքից, վերանում են իսկույն, երբ նկատենք, որ ի ներկայացնում է եյ և թե բառավերջում -ույ և -իյ տալիս են ու, ի: Միօրինակութիւնը այնպես կատարյալ է, որ մինչև անգամ անտես է արված այն ձայնական օրենքը, որով անգականից առաջ պիտի աննշանալինք ի փոխանակ ե, ու փոխանակ ո:

Ի նկատի ունենալով այս բացատրութիւնները, հիշյալ հինգ լծորդութեանց ավելի հին պատկերը կարելի է վերականգնել հետևյալ ձևով.

*սիրիմ	խօսիմ	աղամ	թողում	*գում
սիրես	խօսիս	աղաս	թողուս	գոս
*սիրել	*խօսիլ	աղալ	*թողուլ	գոլ
*սիրիմք	խօսիմք	աղամք	թողումք	*գումք
*սիրելք	*խօսիլք	աղալք	*թողուլք	գոյք
*սիրին	խօսին	աղան	թողուն	*գունւ

Ռնգալին տիպերը խոնարհվում են միևնույն ձևով, ինչ որ նախորդները. ինչպես՝

*հատանիմ	ուսանիմ	գողանամ	զգենում
հատանես	ուսանիս	գողանաս	զգենուս
*հատանել	*ուսանիլ	գողանալ	*զգենուլ
*հատանիմք	ուսանիմք	գողանամք	զգենումք
*հատանելք	*ուսանիլք	գողանալք	*զգենուլք
*հատանին	ուսանին	գողանան	զգենուն:

Հրամայական

Հայերենի երկու տեսակ հրամայականներից առաջինը, որ է բուն հրամայականը, կազմվում է aoriste-ից և տալիս է դրական հրաման, երկրորդը՝ որ է արգելականը և գործածվում է միշտ մի՛ <հնխ. mē մակրայի հետ, կազմվում է անորոշից, այսինքն ներկայից: Բուն հրամայականի եզ. բ. դեմքը համապատասխանում է հնխ. ձևին. ինչպես՝ bhére>բեր, ág¹e> ած են:

Արգելական բ վերջավորութիւնը, որ կցված է բնի ձայնավորի ծայրին, կարող է գալ միայն հնխ. -r+ ձայնավոր ձևից և ազգակից է հն. þr լիտ. ir ձևերին: Մասնիկի շնորհիվ է, որ բնի ձայնավորն էլ ենացել է անկորուստ: Այսպես՝ (մի բերեր պիտի լինի mē bhere-re, մի լնար <mē plēnu-re, մի ածեր <mē ag¹e-re են) վերջաձայն e ներկայացնելով որևէ ձայնավոր): Մասնիկի հավելումը հրամայականի վրա, ոչինչ չունի տարօրինակ. այսպես է նաև լիտվաներենում, ուր մասնիկն է -ki. ինչպես՝ eĩ-ki «գնա»: Հնխ. պիտեր նուլնպես dhi և tōt մասնիկները, որ կցում էր հրամայականին:

Հրամայականի հգ. բ դեմքը ունի ներկ. հգ. բ դեմքի ձևը. ինչպես՝ բերէք, մի բերէք, լքէք, մի լքանէք: Այս ձևը համապատասխանում է հնխ. -te վերջավորութեան. ինչպես՝ հնխ. bhére-te> բերէք, àg¹e-te> ածէք են:

Հրամայականի ձևերի սահմանափակումը հայերենի մեջ (ներկան միայն արգելականի համար, իսկ aoriste-ը դրականի համար) համապատասխանում է հունարենի այն օրենքին, որով ներկա հրամայականը գործածվում է թե իբրև դրական և թե իբրև արգելական (λεῖπε թող, μὴ λεῖπε մի թողուր). իսկ aoriste հրամայականը միայն իբրև դրական (λίπε թող): Հայերենը հունարենից մի քայլ առաջ է անցել և երբ aoriste-ը դրականին է միայն հատկացված, ներկա հրամայականն էլ միայն արգելականին է հատկացրել: Եվ այս տարբերացումը շատ արտահայտական է. aoriste-ը ցույց տալով պարզապես կատարված գործը, հարմար է դրական հրամանի, իսկ ներկան՝ ցույց տալով գործը իր ուղղութեան մեջ, հարմար է արգելականի: Ալբանականումն էլ սովորաբար դրական հրամայականի համար գործ է ածվում կատարյալը (perfectif), արգելականի համար անկատարը (imperfectif), ինչպես՝ ne nosi «մի բերիր», ponesi «բերր»:

Հրամայականի վերոհիշյալ ձևերը հնուց էր բացատրել. մյուսները ենում են անծանոթ. այսպես, հատարակ բայի aoriste հրամայականի եզ. բ դեմքը՝ -իր վերջավորութեամբ. ինչպես՝ անկայ—անկի՛ր. կամ պարզապես բ ձևով. ինչպես՝ լուայ—լո՛ւր.— սրա համապատասխան հգ. բ դեմքը՝ -արուք վերջավորութեամբ. անկարուք, լուարուք, թաքերուք (կա. բաքեայ):

Կատարյալը հրամայականի վերածելու ժամանակ, եթե միավանկ է, վերջաձայն ց ենում է, իսկ եթե բազմավանկ է՝ ց կրճատվում է. ինչպես՝ կա՛ց, լի՛ց, (կոր. եկաց, ելից) բայց գործած,

ձեմ, ասա, լարե հատ, (կար. գործեաց, ձեաց, ասաց, լարոյց, հատոյց) են։

*Կա հրամայականի եզ. բ դեմքի համար -ջիր, և հգ. բ դեմքի համար -ջիք (հնապես -*իջիր, -*իջիք) վերջավորութիւնը, որ հատուկ է գլխավորապես հասարակ բայի aoriste հրամայականին, բայց կա նաև ներգործականում և ներկ. հրամայականում. ինչպես՝ հայեցայ, հայեսջիր, կալայ — կալջիր, ասացի — ասասջիր, ազաճիմ — ազաճիջիք, ուտեմ — ուտիջիք և այլն։ Այս ձևը շատ կարևոր է, որովհետև -ջիք գործածվում է իբրև առորադասական aoriste հգ. բ դեմքը, ինչպես՝ գործեցից — գործեսջիք։ Այս մասնիկի ծագման համար որոշ բան չի կարելի ասել։ Բայց որովհետև -ջ ձայնը կարող է ծագել հնխ. gh և -dhy- ձևերից, ուստի և կարելի է լիր, ջիք վերջավորութիւնները համեմատել առաջին դեպքում հնխ. -ghe> սանս. ha = լիտ. gi = հն. -ϑε (ինչպես՝ εἰ-ϑε, ἀἰ-ϑε) մասնիկի հետ, երկրորդ դեպքում հնխ. -dhi>սանս. -dhi(hi) = հն.-ϑι մասնիկի հետ, որ հրամայականի եզ. բ դեմքի վերջավորութիւնն է (վերջին դեպքում ենթադրելով, որ ձայնավորի հավելումով հնխ. -dhi դարձել է -dhy-)։*

Ինչպես տեսանք, հրամայական կազմելու վերջավորութիւններից մեկն էլ բ բաղաձայնն է, որից ունենք առաջին հերթին լե՛ր «եղիր», որի արմատն է լե-լինել, նույն բ վերջավորութիւնը գտնում ենք աշխ. եղի՛ր, լեցո՛ւր, վազի՛ր, արձակի՛ր, փախի՛ր են ձևերի մեջ։

Տանել բայի հրամայականն է տար, բայց այդ բայի արմատն էլ է տար, օրինակ՝ տարեալ, տարողութիւն, ուստի հայտնի չէ, թե տար հրամայականը արմատ է (ինչպես՝ մոլծ, մուտ, բեր), թե բ վերջավորութիւնով կազմված։ Բոլոր արդիականների մեջ սովորական է այդ բ մասնիկը. ինչպես՝ մի՛ լինիր, մի՛ սիրեր, մի՛ թողուր են։

Արդիականի այս վերջավորութիւնն է, որ անցել է նաև պատճառական բայերի հրամայականի վրա. օրինակ՝ լցո — պլ. լեցու, լեցուր, դարձ — դարձո, պլ. դարձու, դարձուր։

Այս բ արևելյան հայերենում տեղափոխվելով՝ ձայնավորից առաջ է անցել և լցուր դարձել է լցրու, դարձուր դարձրել է դարձրու և այս տեղից էլ անցնելով կատարյալին եղել է՝

դարձրի	*լցրեցի*
դարձրիր	*լցրեցիր*
դարձրեց...	*լցրեց և այլն։*

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

Առոր. ներկայի վերջավորութիւններն են իցեմ, իցես, իցէ, իցեմք են. որ բաղկացած է երկու մասից՝ ից և եմ, ես, է... այսպես՝ սիրիցեմ, խոսիցեմ, աղայցեմ, թողուցում և գոմ բայից էլ գուցէ (գոյցէ)։

Ինչպես նախնական լատիներենում, նույնպես և հայերենում ստորադասականը հին ըղձական է։ Հնխ. ըղձականի մասնիկն էր i, որ բնի o վերջաձայնի հետ միանալով՝ կազմում էր oi երկբարբառ։ Այս oi տալիս է հյ. է։

Հնխ. ske մասնիկը, որ հնավիճակ լեզուների մեջ մեծ կենդանութիւն է ունեցել, ինչպես ցույց են տալիս կամխաբերենը, թոխարերենը և լատիներենը, համմտ. հատկապես հն. ἔσκον, լտ. escit «կլինի», պալի accẖati, պրակր. accẖaï «լինում է»։ Այնուհետև, սահմ. ներկայի ազդեցութիւնով ամբողջը խոնարհվում է իբրև ներկա, ինչպես՝ բերեմ — բերիցեմ, բերիմ — բերիցիմ, առնում — առնուցում են։ Ըստ այսմ ձևերը վերլուծվում են իբր

*բերիցեմ<*bheroi-ske-m,	*բերէցեմ*
*գործիցեմ<*worg[u]oi-ske-m	*գործէցեմ*
*իցեմ <*es-ī-ske-m, eiskem,	*ելցեմ, էցեմ, իցեմ*։*

*Առոր. aor. (որ մեր քերականները կոչում են ապառնի), ներկայացնում է միևնույն մասնիկը (բացի տալ անկանոն բայից), բայց այս անգամ խոնարհումը մի քիչ տարբեր է և գոնե մասամբ՝ ներկայացնում է ավելի հին ձևը։ Այսպես՝ ներգործականի եզ. ա դեմքն է -ից (ինչպես՝ բեր-ից, գործեց-ից), որ ներկայացնում է հնխ. īskō, ուր տեսնում ենք միակ հետքը հայերենի մեջ առաջին դեմքի բնավոր ō վերջավորութիւն, ի<ī հնխ. ըղձականի ī մասնիկն է։** Եզ. բ և զ դեմքի մեջ խոնարհումը -իցեմ ձևի նման է. ինչպես՝ բեր-ցես, բեր-ցէ, բեր-ցեմ, որոնց մեջ ի ընկած է։ Այս անկումը առաջ է բերում կրկնակ ց՝ այն դեպքերում, երբ բայի բունը վերջանում է ց-ով։ Այս պարագային, ինչպես տեսանք, երբ բայի բունը միավանկ է, կրկնակ ց միամ են անփոփոխ, իսկ երբ բազմավանկ է, առաջինը վերածվում է ս. ինչպես՝ բաց-ից (կար. բաց-ի), բաց-ցես, կաց-կացցես, ստաս-ցիս, գործես-ցես, մնաս-*

* Mariès, REA, 1930, X. 178.

** Նույն տեղում։

ցես:— Հգ. ա դեմքը (բեր-ցուք) կարող է բացատրվել. ըստ օրինի սպասելի էր *բերցումք, որի մեջ մ-ի անկումը չի կարող առաջանալ ձայնաբանական պատճառներից, այլ անշուշտ առաջացել է եզ. ա դեմքի ազդեցությամբ (բերից), ուր նույնպես չկա -մ: -Ու- կարող է առաջանալ կամ o ձայնից և կամ ընդհականին նախորդող o ձայնից: Առաջին դեմքում կարող ենք համեմատել հն. սոոր. φέρωμεν, երկրորդ դեպքում հն. φέρομεν. այսպիսով երևան է գալիս կորած -մ ձայնի հետքը:

Կրավորականի մեջ սոոր. aor. նման է նախորդին, միայն թե ե-ի դեմ այստեղ գտնում ենք ի, (բերցիս, բերցի, բերցին), իսկ եզ. ա դեմքը կազմված է (կրավորականի, ներգործականի) aoriste-ի ա դեմքի օրինակով. ինչպես՝ բերի — բերից, նմանապես՝ բերայ — բերայց: Հոգ. ա և բ դեմքերը (բերցուք, բերջիք) նույն են թե՛ ներգործականի, և թե՛ կրավորականի մեջ:

-Նա-ձևով aoriste-ների սաորադասականը հետևյալ ձևով է. երկեայց, երկիցես, երկիցե՛ն (կար. երկեալ):

Սահմանական aoriste

Հնխ. սահմ. aoriste-ը կազմվում էր երկրորդ կարգի վերջավորություններով, որոնք վերջում ձայնավոր հնչերան չունեն, հնխերենին անցնելիս վերջավորությունները ջնջվելով՝ պիտի միասին բայի բունը: Այսպես բերեմ բայի հնխ. aor. եզ. երեք դեմքերը bhérom, bhéres, bheret (>սանս. bharàm, bháras. bhàrat, հոմեր. φέρον, φέρες, φέρε) հավասարապես պիտի դառնային հյ. բեր: Իսկ եթե առնենք նույն բայի նախահավելվածավոր ձևը (հնխ. ébherom, ébheres, ébheret (>սանս. ábharam, ábharas, ábharat, հն. ἔφερον, ἔφερες, ἔφερε), այն ժամանակ էլ հավասարապես պիտի ստանայինք հյ. երեր: Այս երկդիմությունից խուսափելու համար հնխերենը դիմել է մի առանձին միջոցի. բեր կամ երեր ձևը պահել է միայն ներգ. եզ. գ դեմքի համար, միավանկ ձևերի մեջ, իսկ մյուս դեմքերի և բազմավանկների գ դեմքի համար կազմել է առանձին վերջավորություններ. այսպես՝ երեր <êbheret հն. ἔ-φερε, եկիք = հն. ἤλυθε. եհարց = սանս. á-pṛčchat, եկաց հն: Բայց գործեցի, գործեցեր, գործեաց, մնաց հն: Ավելացնելով վերջավորությունները բայի բնի վրա, բնականաբար առացվում են բազմավանկ ձևեր: Հայերենը կանոն է ընդունել ե նախահավելվածը դնել միավանկների վրա, իսկ բազմավանկները թողնել առանց այդ հավելվածի, ուստի և aor. բոլոր դեմքերը, բացի եզակի երրորդից, առհասարակ չեն առանում նախահավելվածը, բացառությամբ մի քանի անկանոն բայերի: Կրավորականում եզ. գ դեմքում ավելանում է ւ. ինչպես՝ գործեցաւ, բերաւ, եղև. այս ւ ձայնի ծագումը անհայտ է:

Եզ. առաջին դեմքի վերջավորությունն է ի, որ իբրև ձայնավոր երևում է բաղաձայնից հետո և դառնում է կիսաձայն՝ ձայնավորից հետո, այսպիսով առանում ենք ներգ. բերի, կրավ. բերայ, ինչպես նաև եղէ (<եղե-յ): Այս ի-ի ծագումը անհայտ է:

Եզ. երկրորդ դեմքի վերջավորությունն է ներգ. -եր, կրավ. -ար: Այստեղ ր անշուշտ նույն է հրամայականի -ր վերջաձայնի հետ. հավանաբար այս մասնիկը ավելացել է aoriste-ի վրա հրամայականի ազդեցությամբ: Մասնիկի հավելումը պատճառ է դարձել պահպանելու բունի ձայնավորը՝ որ է հնխ. e>հյ. ե. այսպես bhéres, որից *bheres-re> հյ. բերեր:

Հգ. ա դեմքի վերջավորությունն է աք (թե՛ ներգ. և թե՛ կրավ.) ինչպես՝ բերաք, որ համապատասխանում է հնխ. bhéro-men ձևին. մ ձայնի կորուստը առաջացած է նմանության համար. ինչպես բերցուք ձևի մեջ, իսկ ներգ. ա ձայնավորի ծագումը անհայտ է:

Հգ. բ դեմքի վերջավորությունն է -յք. ինչպես՝ ներգ. բերէք (<բերեյք), կր. բերայք. առաջինը համապատասխանում է ճիշտ հնխ. bhere-te ձևին. t հոգնակիի նշանն է, ինչպես ներկայումս:

Հգ. գ դեմքի վերջավորությունն է ներգ. ին, կր. ան, ինչպես՝ բերին, բերան, հնդեվրոպական համապատասխանությունն է -nt, որ պիտի տար հյ. ն. ինչպես երևում է եկն <հնխ. egent ձևից. ըստ այմ պիտի ունենայինք հնխ. bhéront ձևի դեմ հյ. *բերն>*բեռն: Հայերենը ավելացրել է ութ՝ն ի, ա ձայնավորները՝ որոնց ծագումը անհայտ է:

Երկու խոսք էլ ասենք կրկնավոր կատարյալի մասին, որի միակ հետքը պահում է հյ. արարի:

Կարևոր է իմանալ, թե ինչպես է կատարյալի մեջ կրկնությունը հնդեվրոպական ժառանգ լեզուների մեջ: Երևի նախալեզվում կային դեպքեր, երբ կրկնությունն չէր գործածվում բայի մեջ, մի բառ կա, որ կրկնական չուներ խոնարհման մեջ՝ այն է՝ woid-a (տեսայ, գիտեմ)> սանս. vēda, հն. οἶδα, լա. vīdī, գոթ. vaid: Հետևաբերում, սակայն, այնպես ընդհանրացավ կրկնականը, որ հաճախ կարելի է դտնել մի բայ, որ կրկնավոր կատ. չունենար: Լատինն ընդհակառակը, մի քանի հետք միայն պահեց կրկնավոր կատարյա-

լից և ինացյալը բոլորը ջնջից լեզվից (Henry, Gr. comp. gr. lt., 280)։ Ալսպես է նաև հայերենը, որ ընդհանրացրեց առանց կրկնութ֊յան կատարյալի ձևը և պահել է միայն անկանոն բայերի մեջ արարի ձևը։

Ա Ն Կ Ա Տ Ա Ր

Կազմվում է ներկայի բնի վրա ավելացնելով որոշ վերջավորութ֊յուններ. ե և ի բները ունեն միևնույն ձևը, որ է ե բնի անկատարը. բերեի նշանակում է թե՛ ներգործական և թե՛ կրավորական։

բերեի	խօսեի	ազալի	թողուի	
բերեիր	խօսեիր	ազալիր	թողուիր	
բերէր	խօսէր	ազալր	թողուր	գոլր
բերեաք	խօսեաք	ազալաք	թողուաք	
բերեիք	խօսեիք	ազալիք	թողուիք	
բերեին	խօսեին	ազալին	թողուին	գոլին։

Ալստեղ էլ միօրինակութ֊յունը կատարյալ է, առաջին ձևի եզ. գ դեմքը (բերէր) գալիս է հնագույն *բերեյր ձևից և չորրորդի եզ. գ դեմքը (լնուլր) գալիս է հնագույն *լնուլր ձևից, որով նույն դեմքի մեջ բոլոր տեսակների նշանն է լինում -լր։ Միօրինակութ֊յունը խանգարում է երրորդ լծորդութ֊յան մեջ ա-ից հետո ներմուծված յ ձայնը, որ առաջացել է հորանջից խուսափելու համար։ Հայերենի մեջ ալ երբեք տանելի չէ, թեև ուի կամ եի տանելի են։— Հնագույն ձևը ա լծորդութ֊յան մեջ էր եի, եիր... ալսպես են և բոլոր հնագույն ձևագիրները. ավելի հետո սկսեցին գրել ըէի են, որ և անցել է արդի լեզվին և մտել է նոր տպագրութ֊յանց մեջ։

Անկատարի ձևերը մասամբ նման են aoriste-ի ձևերին. ալսպես եզ. բ դեմքի վերջավորութ֊յունը բ, հոգ. ա դեմքի աք վերջավորութ֊յունը։— Եզ. գ դեմքը մյուսներից մի վանկ պակաս է և ունի բ վերջավորութ֊յունը։ Ավելի կարևոր է նկատել ի ձայնավորը, որ գրեթե բոլոր դեմքերի մեջ էլ կա։ Թվում է թե բերե-ի մի բարդ ձև է, ինչպես հալ. nesē-achū «բերէի» անկատարը. և եթե ի նկատի առնենք, որ սահ. բերիցեմ ձևն էլ բարդ է, այն ժամանակ կարող ենք ասել, որ ի, իր են «լինել» բայի préterit-ի ձևերն են։ Այդ դեպքում ի համապատասխանում է հմմտ. ῆν, սանս. ā'sa ձևերին, որ է հնխ. կատարյալը։ գ դեմքը -յ-ր ունի

առանձին ձև, որովհետև առաջանում է հնխ. անկատարի միավանկ ձևից, որ է *est>սանս. ā'ḥ, հն. ἦς (իսկ -ր մասնիկ է ինչպես բ դեմքում)։ Թե ներկայի բունը գործածվում էր «լինել» բայի այս հին կատարյալից առաջ՝ մի իրողութ֊յուն է, որ դյուրին է հաստատել, բայց դժվար է բացատրել, ինչպես ուրիշ լեզուների համապատասխան բարդ ձևերի առաջին եզրը, օրինակ՝ լատ. legē-bam, հալ. nesē achū, գոթ. nasi-dē են։ Այս պարագային եմ բայի անկատարը (եի...) կազմված պիտի լինի բերեի են ձևի նմանողութ֊յամբ. երկուսն էլ (եմ և բերեմ) ծայրից ծայր նման խոնարհում ունեն և կազմված են փոխադարձ ազդեցութ֊յամբ։

Դժվար բացատրելի ձևեր են նաև մյուս լեզուների անկատարը. ալսպես լտ. amābam, գոթ. salbōda ենթադրում է, թե այս բոլորը կազմված են բայարմատի և bhū, dhē և es օժանդակների բարդութ֊յամբ (վերջինը հայերենի համար է)։

Անկատարը Բրըտոն լեզվի մեջ էլ կազմվում է ė վերջավորութ֊յամբ, որ իհարկե պատահական նմանութ֊յուն ունի հայերենի հետ. ալսպես՝

me gâre	սիրեմ	me gâré	սիրէի
te gâre	սիրես	te gâré	սիրէիր

(Guillome, 62)

8. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅՑԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՑՈՒՆԸ

Շատ սովորական և ընտանի մի խումբ բայերի գործածութ֊յան ժամանակ, մարդիկ կարիք են զգացել՝ նշանակութ֊յան այս ինչ կամ այն ինչ նրբութ֊յունը տալու նպատակով՝ գործածել միևնույն դաղափարի համար հոմանիշ, բայց տարբեր արմատներ։ Երբեմն էլ պահանջը բավարարվում է միայն բնի փոփոխութ֊յամբ. այս ինչ ժամանակի համար գործածվում է սովորական բունը, մի երկրորդի համար փոփոխված կամ աճած բուն են։ Օրինակ՝ առտիկյան հունարենում «գնալ, երթալ» դաղափարի համար խոնարհման մեջ չորս տարբեր ձև է գործածվում. ներկա ἔρχομαι, ապառնի εἶμι, աօր. ἦλθον, կատ. ἐλήλυθα. «առնել» դաղափարի համար՝ ներկ. ὀφῶ, ապ. ὄψομαι, աօր. εἶδον են։ Վերականադետները ա ենթադ֊ն անունն են տալիս ալսպիսի բայերին, թեև լեզվաբանի համար ալստեղ ոչ մի անկանոնութ֊յուն չկա, այլ միայն ձևերի դանադանութ֊յուն։ Վերի բացատրութ֊յունից երևաց, որ անկանոն կոչված բայերը կարելի է երկու կարգի բաժանել. 1) նրանք, որոնց դանադան ժա-

մանակները կազմված են բոլորովին տարբեր արմատներից (այլ-արմատ բայեր), 2) նրանք, որոնց դանազան ժամանակները թեև միևնույն արմատից են կազմվում, բայց ներկայացնում են տարբեր բներ (այլաբուն բայեր):

Մեկնելով այս տեսակետից, ամենահին լեզուն ունի որոշ թվով անկանոն բայեր: Նոր լեզուները մի կողմից ջնջել են հների անկանոնութիւնները, բայց շատ անգամ էլ ավելացրել են նոր անկանոնութիւններ: Այս անկանոնութիւնների մեծ մասը առաջանում է խոնարհման մեջ ձայնական փոփոխութիւնների պատճառով. օրինակ՝ ֆրանսերենի մեջ mourir *«մեռնել» բայը անկանոն է, որովհետև խոնարհվում է ներկայում մերթ* eu *և մերթ* ou *ձայնավորով. այսպես՝*

je meurs	nous	mourons
tu meurs	vous	mourez
il meurt	ils	meurent

Ուրիշ դեպքերում բայի դանազան ժամանակները կազմվում են տարբեր բայերից. օրինակ՝ ֆրանս. aller *«երթալ» բայը կազմված է երեք համանիշ բայերից. այն է լտ.* vadere, ire *և ֆրանս.* aller, *որի ծագումը անհայտ է: Այսպես ներկա՝*

je vais	nous allons
tu vas	vous allez
il va	ils vont

արդեն ներկայացնում է երկու բայ, իսկ ապառնին էլ՝ j'irai, tu iras, il ira *են՝ ծագում է երրորդ բայից:*

Անգլերենի, գերմաներենի, ինչպես և մյուս գերմանական լեզուների անկանոն բայերի մեծագույն մասը հիմնված է ձայնդարձի տարբերութեան վրա: Պարսկերեն բայի անկանոնութիւնները ավելի քիչ են և կախված են միայն հրամայականի տարբերութիւնից, ինչ որ բնի տարբերութեան պատճառով է:

Լեզուներ կան, որոնց մեջ անկանոն բայերի թիվը մեծ է և մեծ դժվարութիւն է պատճառում նորեմաններին: Այսպես՝ ֆրանսերենում անկանոն բայերի թիվը 100-ից անց է. այսպես նաև պարսկերենում, իսկ գերմաներենում 200-ից ավել է. այսպես նաև անգլերենում: Անկանոն բայերի թիվը հոլանդերենում 210 է (Valette, *էջ 141—6):*

Անկանոն բայերի կողմից շատ աղքատ է հինգումանի լեզուն, որ գիտե միայն վեց անկանոն բայ (տալ, գնալ, անել, լինել, առնել, մեռնել). և սրանց էլ անկանոն ձևը միայն անց. դերբայն է, ապացյալը կանոնավոր է (Bonnerjea, *էջ 22):*

Որովհետև բների թիվը բավական մեծ էր հնդեվրոպական նախալեզվում, ուստի ժառանգ լեզուները էլ անկանոն բայերի խոնարհման մեջ կարող են ներկայացնել մի քանի բներ: Սակայն հայերենը վաղուց ջնջած լինելով այդ բազմազան բները և սահմանափակված լինելով միայն երկու բնի մեջ, բնականաբար անկանոն բայերի մեջ էլ պիտի ներկայացներ միայն երկու բուն: Այսպես այլաբուն բայերից ուտեմ—կերայ, այլաբուն բայերից՝ յանցանեմ —յանցեայ (ներկան ունի անկանոն -նի- բնով, aoriste-ը -նա- բնով):

ԱՅԼԱԲՈՒՆ ԲԱՅԵՐ

Ուտեմ. հնխ. ōd- *արմատից. մյուս լեզուները ունեն* ed-, *հայտնի չէ միայն, թե ինչու* ōd *ձևը անցել է ներկային, միևնույն ժամանակ անհարմար կլինի կարծել, թե ուտեմ ներկայացնում է հնխ. կատարյալը: Աորիստում սանս. և հն. ունեն տարբեր արմատներ (սանս.* ághas, *հն.* ἔφαγε*). հայերենն էլ ներկայացնում է կեր<հնխ.* g$^{\text{ə}}$er *արմատը.— Աոր. գ դեմքը և հրամ. ունեն ներգործական ձև. այսպես՝ կերայ, բայց եկեր, կեր.— առորեական կանոն է կերայց, կերիցես են:*

Ըմպեմ. *արմատն անծանոթ.* aor. արբի<հնխ. sṛbh *արմատից:*

Գամ. *արմատը հնխ.* wā—. aor. եկի<հնխ. g$^{\text{ə}}$ā- *արմատից, որի վրա պահված է նախահավելվածը՝ միավանկ լինելու պատճառով (ինչպես* եառու *և* եգի *ձևերի մեջ).* g$^{\text{ə}}$ā- *արմատի ձայնավորի հետքը պահում է դեռ հրմ. եկայք.— եզ. գ դեմքը* եկն* *ծագում է նույն արմատի ունգայնավոր* g$^{\text{ə}}$em- *ձևից, համմտ. սանս.* ágan *«եկնա»: Առոր. եկից, եկեացես բոլորովին անծանոթ ծագում ունեն, միայն նախահավելվածը անցել է միավանկներից:*

Երթամ. հնխ. erth- *արմատից, aor.* չոզայ, *որի հետ նույն է չու. aoriste-ի մյուս ձևերը կազմվում են* երթ- *արմատից, հրմ. ե՛րթ, առոր. երթայց, երթիցես, անց. դերբ. երթեալ:*

---

* *Սխալ կլինի կարծել, թե եկն բառի մեջ ն հոդ է. փոխանակ ասելու եկ ես, երբ թե չշփոթելու համար ե՛կ հրամայականից: Բառավերջին* m *հոդը տալիս է ն. ինչպես՝* quam>քան:

Ուճիմ. aor. կալայ, հրմ. կա՛լ.— *ալբաներենի մեջ «առնիմ» բայը երկու ձևով է. ներկ.* kam, *կոր.* patše, *որից՝ ընդունիմ—ընկալայ։*

Գոզ — *«ասել». ներկան կորած է. կան միայն* aoriste-*ի ձևերը եզ.* գո՛զ, գոզջի՛ր, գոզի՛ք, գոզցես, գոզցուք, գոզջիք, գոզցեն։ *Արմատը հնխ.* wogʷ h-. *«ասեմ» բայը շատ լեզուների մեջ ալլարմատ է. ինչպես՝ հն.* λέγω, ἐρῶ, εἶπον.

ԱՅԼԱԲՈՒՆ ԲԱՅԵՐ

Եմ, էի, էիր, էր, իցեմ, հրմ. ԼՐ, էք (միայն ողջ ԼՐ, ողջ էք)։

Եղաճիմ. aor. *բուն* եղե—, *որ միակն է իր ձևով, բայց խոնարհվում է սովորական վերջավորություններով,* եղէ (<եղեէ), եղեր, եղև, *սոր.* եղէց (<եղեէց), եղիցիս *են։*

Եղէ *«եղայ» բայաձևի մեջ անսովոր է է վերջավորությունը, որ միակն է իր տեսակի մեջ։* Meillet, MSL, 10, 260 *այս է համարում է* ե+ի *ձևից. համմ.* բերի, գտի *են։*

Լինիմ. *չունի սահմ.* aor., *բայց կան* aor-*ի բնի մյուս ձևերը. ինչպես՝ հրմ.* լեր, *սոր.* լիցիմ, *անց. դերբ.* լեալ։

Գում. *շատ պակասավոր է, ունենք միայն ներկ. (*գամ, գաս, գայ, գամք, գայք, գան*) և անկ. դոյր, դոյին. սա բացատրվում է նրանով, որ ներկայացնում է հնխ. կատարյալը։*

Առնեմ. aor. արարի, *հրմ.* արա՛ *(հինը *արար. վերջին բաղաձայնը կրճատված),* սոր. արարից, արասցես *(պիտի լիներ *արարցես. ինչպես՝ հարից — հարցես, բայց ա յօտրդութիյան բաների նմանողությամբ դարձել է արասցես). անց. դերբ.* արարեալ, aoriste-*ը կազմված է կրկնության հնխ.* ar *արմատից։*

Յառնեմ. յարեայ, արի, արիք *(որանք չունեն* յ *նախդիրը), դերբ.* յարուցեալ *(առնված յարուցանեմ անցողականից)։*

Դնեմ. *հնխ.* dhē *արմատից, իրը *դինեմ, հնխ. արմատական* aoriste-*ը պահված է, որով ունենք* եդ = *սանս.* ádhāt. aoriste-*ի մյուս ձևերն էլ լինելով միավանկ՝ սոացել են* ե *հավելվածը. ինչպես՝* եդի...։ *Հրամայական դի՛ր միայն է միավանկ, իսկ սոր. եզ.* ա *դեմքը (եդից) և անց. դերբ.* եդեալ *սոացել են հավելվածը, մինչդեռ սոր. եզ.* ր *դեմքը դիցես և մյուսները չունեն, որովհետև բազմավանկ են։*

Տամ. *միակ հաստատուն բայն է, որ պահել է հնխ. ձայնդարձը խոնարհման մեջ, ներկ.* տամ *ցույց է տալիս* ə *ձայնավորը, ուստի և*

ներկայացնում է հնխ. də-ye-, *և կազմությամբ նման է հլ.* da-ją *«տալիս եմ» ձևին։— Ընդհակառակը, սահմ.* aor. եատու *ունի* -ու- <*հնխ.* ō. *q դեմքը ես համապատասխանում է սանս.* ádhāt *ձևին, մյուս բոլոր դեմքերը ունեն նախահավելվածը՝ բացի հզ. ա դեմքից (տուաք), որ միավանկ չէ։ ա դեմքը (եատու) չի համապատասխանում սանս.* ádōm *ձևին, որ պիտի լիներ *եա.— հլ.* եատու *ժագում է *եատույ ձևից, ուր* յ aor. *ա դեմքի հավելական վերջավորությունն է, որ ու-ից հետո ընկնելու է.—* եատուր *(համմ. սանս.* ádāḥ*) պահել է իր* -ու- *ձայնը, ճիշտ ինչպես լքեր պահել է* ե *ձայնը և եդիր (համմ. սանս.* ádhāḥ*) պահել է իր* ի *ձայնը* <*հնխ.* ē.— *սոր.* aor. *տաց, տացես են ունի նույնպես* ա, *որ է հնխ.* ə։ *Միակն հայերեն սորապատասխանն է, որ չունի իցեմ ձևի ի ձայնավորը։ Թվում է թե ներկայացնում է ուղղակի հնխ.* də-ske- *բունը, որ կազմված է հնխ. *(i)s-(s)ke- բնի նման, որից ժագում է իցեմ։*

Լսեմ. *առաջանում է անշուշտ* -k *աճումից, իսկ* aor. լուայ s *աճումից (համմ. սանս.* çruṣ-ṭiḥ *«հնազանդություն», հլ.* slyš-ati *լսել), արմատը ներկայացնում են սանս.* çrutáḥ, *հն.* κλύω *են.— հրմ.* լուր։

Ճարկանեմ. aor. ճարի. aoriste-*ը ժագում է հնխ.* pṛ- *արմատից. ներկան նրա* prg *աճականից։*

Ճանաչեմ. aor. ծանեայ։

տանիմ. aor. տարայ, տա՛ր, տարայց, տարցիս։

9. ԲԱՑԱԿԱՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅԱՆՑ ԾԱԳՈՒՄԸ

Ընդ. ա դեմքի -մ *վերջավորությունը ժագում է հնխ. անբուն* -mi *ձևից. ալսպես՝* եմ <*հնխ.* ésmi, բառնամ, *հն.* ϕέρωμι, լնում, *հն.* ζέυγνῦμι. *այս բոլորի մեջ հլ. մ անբուն* -mi *ձևն է ներկայացնում։ Բնավոր ձևի եզ. ա դեմքի վերջավորությունն էր հնխ.— ō, որ հայերենի մեջ պիտի ընկներ. և հնխ.* bhérō *(հն.* ϕέρω, լտ. ferō, *գոթ.* baira*) ձևի դեմ պիտի սառնալինք հլ.* բեր, *այս անսառելի ձևից ազատվելու համար ահա հայերենը բնի ձայնավորը, ինչպես և անբուն ձևի* -mi *վերջավորությունը գրել է նաև մյուս բայերի վրա։ Նույն երևույթը նկատելի է նաև սանսկրիտի, իրանդերենի և ալբանական բարբառների մեջ, այնպես որ իրար բոլորովին համապատասխան են գալիս հլ. բերեմ = սանս.* bhárāmi = *իրլ.* berim = *սերբ.* berem.

Եզ. բ դեմքի վերջավորութիւնն է -u. առաջին անգամով կարելի էր այս մասնիկը առաջացած համարել si ձևից, որ հնխ. եզ. բ դեմքի վերջավորութիւնն է: Բայց հնխ. si չէր կարող տալ հյ. u, որովհետև s գանգվում երկու ձայնավորի միջև՝ պիտի չնչվեր: Հյ. u կարող է ծագել միայն -ssi ձևից. այսպես՝ հյ. bu (էական բայի եզ. բ դեմքը) ծագում է հնխ. essi (հոմեր. ἐσσι, հլտ. ess) ձևից: Պետք է նկատել այստեղ, որ այս միակ ձևը ազդելով մյուսների վրա, կրկնակ ss-ը տարածվել և ընդհանրացել է բոլոր բայերի մեջ, որով և առաջացել է ամեն տեղ u վերջավորութիւնը:

Եզ. գ դեմքի վերջավորութիւնը ամեն տեղ էլ յ է, սա բոլորովին նման է հնխ. եզ. գ դեմքի -ti վերջավորության հետ, որ բուն ձայնական օրենքների պիտի տար յ. համա. բալ = հն. φάτις հայր— հն. πατήρ են: Բուն այսմ ուղիղ չէ համեմատել էական բայի եզ. գ. դեմքը՝ ե, իր համապատասխան հնդ. ésti ձևի հետ, որ պիտի տար եսա. համա. vesti> զգեաս: Պետք է ուրիշն ենթադրել, որ այստեղ էլ կատարվել է մյուս բայերի ազդեցութիւնը էականի վրա և եզ. գ դեմքի ti>յ վերջավորութիւնը անցել է նաև այստեղ:

Այս երեք դեմքերը կարող են ծագել նաև հնխ. հասարակ վերջավորութիւններից. այսպես -մ<հնխ. mi կամ mai, ս <հնխ. si կամ sai, յ <հնխ. ti կամ tai:

Հգ. ա դեմքի վերջավորութիւնն էր հնխ. -mes, որ պիտի տար հյ. -մ. բայց, որովհետև սրանով հգ. ա դեմքը պիտի շփոթվեր եզ. ա դեմքի հետ, ուստի ավելացվել է -ք վերջավորութիւնը, որ հոգնակիի վերջավորութիւնն է:

Հգ. բ դեմքի վերջավորութիւնն էր հնխ. -the (երկրորդ կարգում -te). հայերենի մեջ այս երկուսն էլ կարող էին տալ -յ. այսպես՝ հնխ. bhérethe կամ bherete> հյ. *բերեյ. և հայտնի չէ թե իսկապես սրանցից որն է հայերենի աղբյուրը: Բայց որն էլ որ լիներ, այս ձևը պիտի շփոթվեր եզ. գ դեմքի հետ, ուստի այստեղ էլ պատշաճորեն ավելացվել է հոգնակերտ ք ձայնը:

Հգ. գ դեմքի վերջավորութիւնն է հնխ. -nti (հասարակ-ntai). այս երկուսից էլ կարող էր ծագել հյ. -ն վերջավորութիւնը. օրինակ՝ բառնան հն. bάṛanti են: Բայց ձայնդարձի օրենքով, ինչպես հգ. ա, նույնպես և հգ. գ դեմքում ունեինք հնխ. -o-. հայերենը թոդհանրացրել է մյուսների e բունը. բուն այսմ ունենք հնխ. bhéronti, bhéromes ձևերը, որոնք նախ դարձել են bhérenti, bhéremes, որից հյ. բերեն, բերեմք:

10. ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գրաբարի չորս լծորդութիւնները (եմ, իմ, ամ, ում) իրենց գոյութիւնը շարունակում են միջին հայերենում: Տարբերութիւնը միայն այն է, որ թեև շատ բայեր իրենց լծորդութիւնը անփոփոխ պահում են, ուրիշներ ընդհակառակը իրենց լծորդութիւնը փոխելով՝ մի լծորդութիւնից անցել են մի ուրիշ լծորդութիւն: Կան և բազմաթիվ նորակերտ բայեր, ինչպես նաև օտար լեզուներից փոխառյալ նորանոր բայեր, որոնք գոյութիւն չունեն գրաբարում, բայց ենթարկվել են գրաբարի չորս լծորդութիւններից որևէ մեկին:

Կարաստ իր Միջին հայերենի քերականութեան մեջ (էջ 261—298) տալիս է միջին հայերենի չորս լծորդութեանց բայերի ընդարձակ մի ցանկ, որ և արտատպում ենք այստեղ:

Ա. Լծորդութիւն

1. Բայեր՝ որոնք նույն են գրաբարի հետ.

ալրեմ, ասեմ, բերեմ, բռնեմ, գիտեմ, գնեմ, գրեմ, եմ, եփեմ, լեմ, լամ, խառնեմ, խլեմ, խմեմ, ծախեմ, ծեծեմ, կարգեմ, կարեմ, «կարող եմ», կարծեմ, կոչեմ, կարեմ, համբերեմ, հանեմ, ձգեմ, մեկնեմ, մսխեմ, նեղեմ, շինեմ, ուտեմ, պահեմ, պատկեմ, սղալեմ «սխալիլ», վախեմ, վարձեմ, վկայեմ, վճարեմ, քակեմ, քշեմ:

2. Բայեր՝ որոնք ձայնափոխութեամբ մասամբ տարբերվում են գրաբարի համապատասխան ձևերից.

ալժեմ, աժեմ <արժեմ
անկնեմ <անուանեմ
արծեմ <արածեմ
աւրեմ <աւերեմ
բաժնեմ <բաժանեմ
գրաւխնեմ <գրաւականեմ
ժաժեմ <շարժեմ
ժողվեմ <ժողովեմ
խորվեմ <խորովեմ
համեմ <հրամայեմ
ղրկեմ, լղարկեմ <լուղարկեմ
մանարեմ <մանրեմ
մատնէհրեմ <մատնեհարեմ

մեծրեմ<մեծարեմ
յայրենեթիւեմ, հայրենեթիւեմ «աքսորել, երկրէն վտարել»<*հայրենեթատիեմ
շալկեմ<շալակեմ
շաղղեմ<շաղեմ, շաղաղեմ
շանցնեմ «վատնել»<*շանացանել
վալլէ<վալելէ
տուգնեմ<տուգանեմ
քաշեմ<քարշեմ
ուղղեմ „weise an“<ուղղեմ
լեմեմ<լամեմ
լորդրեմ<լորդորեմ
ուղեմ<լուծեմ:

3. Նոր բայեր՝ որոնք չկան գրաբարում.

աճեմ, առջնարեմ, դառըսարընեմ, ըղորդեմ, ծախվորեմ, պատճռվորեմ, սարեմ, վերչեմ, փնտռեմ.

4. Օտար փոխառյալ բայեր.

գնդանեմ, խալըսեմ, հիլալեմ, մոնեաեկեմ, սահրկեմ, ուզրեմ, բլալթեմ, պռուգեմ, ջալընջեմ, ջասուեմ, սալդեմ (սաղեմ), տրպչեմ, տրֆընդեմ, ֆալլեմ:

5. Բայեր՝ որոնք գրաբարի տարբեր լծորդութիւնից կամ տիպարների են պատկանում.

արգիլեմ, արգելեմ = արգելում
լսեմ, լեամ = լսում
գինեմ = գնում
թողեմ = թողում
լեղեմ = լեղում
աւելեմ, աւիլեմ = աւելում
թարթեմ = թարթախում
կարմրեմ = կարմրիմ
սպիտակեմ = սպիտակիմ
համրեմ = համարիմ
մաեմ = մաանեմ
լուծեմ = լուծանեմ
խաեմ = խաոանամ
համեմ = հրամայիմ կամ *հրամանեմ?

6. Գրաբարի չ՛և ն մասնիկներով աճած բայերը մասամբ միայն պահած են միջին հայերենում. ինչպես՝

ճանչեմ<ճանաչեմ
այնեմ<առնեմ
դնեմ<դնեմ
եյնեմ<ելանեմ
գտրկնեմ<գտրկանեմ
հարցնեմ<հարցանեմ
սպասնեմ<սպասանեմ
ցուցնեմ<ցացանեմ
օծնեմ<օծանեմ
տեսնեմ<տեսանեմ:

Բ. Լծորդություն

1. Գրաբարի հետ նույնանձև բայեր.

ապրիմ, ընդունիմ, խօսիմ, կամիմ, կալիմ, հաշտիմ, հաւնիմ (գրբ. հաւանիմ), նստիմ, ունիմ, պարտիմ, պիտի, պաղիմ, շահիմ, տանիմ:

2. Գրաբարին անհայտ բայեր.

գառըտանիմ, ուրդիմ, վգնկիմ, մնկի, փոշամընիմ:

3. Ն միջամասնիկով կազմված բայեր.

անցնիմ = անցանիմ
ընկնիմ = անկանիմ
լինիմ = լինիմ
հագնիմ = ագանիմ
հասնիմ — հասանիմ
մեռնիմ = մեռանիմ
ասնիմ = ասանիմ:

4. Չ միջամասնիկով բայեր.

գարթչիմ, փախչիմ «ազատվիլ»:

5. Չեզոք բայեր, որոնց ներգործականն էլ կա -եմ ձևով և կրավորականը՝ -ուիմ ձևով.

բաժնիմ — բաժնեմ — բաժնուիմ
հասնիմ — հասնեմ — հասնուիմ
լուծիմ — լուծեմ — լուծուիմ

ժողվիմ — ժողվեմ — ժողվուիմ
շաւապիմ — շաւապեմ — շաւապուիմ
լիսաւիմ — լիսաւեմ — լիսաւուիմ
աւիրիմ — աւիրեմ — աւիրուիմ
ալրիմ — ալրեմ — ալրուիմ
եփիմ — եփեմ — եփուիմ
հալիմ — հալեմ — հալուիմ
թրջիմ
խորվիմ — խորվեմ
ըղօրդիմ — ըղօրդեմ
կաթօղվորիմ

Գ լծորդութիւն

1. Գրաբարի հետ նոյն բայերը.

գամ, լամ, կամ, տամ, դնամ, ՚ծնամ, ադամ, աւտամ կամ ավտամ (= հաւատամ), երթամ, խաղամ, խղճամ, կարդամ, հոգամ, լեռամ (< լեռամ), ջանամ։

2. Սաասկական բայերից է փոքնքատալ, որի միայն պարզականն ունի գրաբարը, որ է փոնգալ։

3. Բայեր, որոնք համապատասխանում են գրաբարի -նամ կամ -անամ ձևին.

բանամ < բանամ
դառնամ < դառնամ
ամբնամ < ամբանամ
աշողնամ < յաջողանամ
գիրնամ < գիրանամ
գողնամ < գողանամ
թանամ < թանամ
թանձրնամ < թանձրանամ
թուլնամ < թուլանամ
լոկնամ < լոգանամ
լուանամ < լուանամ
խոշրնամ < խոշորանամ
ծանդրնամ < ծանրանամ
հասկնամ < հասկանամ
հարբսանամ < հարբսանամ

հոմնամ < հոմանամ
մոռնամ < մոռանամ
յեւելնամ < (առ)աւելանամ
յիմնամ < իմանամ
յոժրընամ < յոժարանամ
նօսրնամ < անօսրանամ
շողնամ < շողանամ
ողջնամ < ողջանամ
չորնամ < չորանամ
սեւնամ < սեւանամ
փոքրնամ < փոքրանամ։

Սրանց վրա պետք է ավելացնել նաև մի խումբ նորակերտ բայեր, որոնք չկան գրաբարում. այսպես են՝

ապեկնամ, լինամ, կշտանամ, ճանչնամ, ուժգնամ, սուլտանանամ, տառապելնամ «աղքատանալ» (գրբ. տառապեալ բառից, որ միջին հայերենում նշանակում էր «աղքատ»)։

4. Բայեր, որոնք վերջավորում են -նալ կամ -ենալ և այս ձևի տակ չկան գրաբարում, այլ կազմված են միջին հայերենում. միաժամանակ ունեն նաև իրենց պարզ ձևը՝ -եմ, -իմ վերջավորությամբ։ Այսպես են՝

ածենամ, ալժենամ — ածեմ, ալժեմ
ամաչենամ — ամաչեմ
պիտենամ — պիտեմ
թվենամ — թվիմ
լինամ, լիննամ < լինենամ, լինիմ
ծարվենամ — ծարվիմ
կամենամ — կամիմ
կարենամ — կարեմ
կենամ — կամ
ճանչենամ — ճանչեմ
մօտենամ — մօտիմ
ուզենամ — ուզեմ
ուռենամ — ուռիմ
ունամ, ունենամ < ունենանամ, ունիմ
պարտենամ — պարտիմ
պիտենամ — պիտիմ
վախենամ — վախեմ։

Դ լծորդություն

1. Թրաբարի հետ նույն ձևեր են՝ առնում երդնում, ընկենում, թողում են։

2. Թեև թրաբարի մեջ տարբեր լծորդության են պատկանում, բայց միջին հայերենում վերածվել են -ում լծորդության։ Այսպես են՝

գտնում — գտանեմ
իջնում — իջանեմ
տեսնում — տեսանեմ
կլնում — կլանեմ
կալնում — կալում
սկսնում — սկսանիմ
հնծնում — հնծանիմ
ուսնում — ուսանիմ
պրծնում — պրծանիմ
մտնում — մտանեմ
ելնում — ելանեմ
սահծնում — սահծանեմ

և այլն։

Միջին հայերենի խոնարհման մեջ հիմնական ձևը սաորադասական ներկան է, որ հին հայերենի սահմանական ներկան է, գրեթե անփոփոխ պահված։

Ահա չորս լծորդության սաորադասականի ներկայի խոնարհման պատկերը.

Ա լծ.	Բ լծ.
սիրեմ	խօսիմ
սիրես	խօսիս
սիրէ	խօսի
սիրենք	խօսինք
սիրէք	խօսիք
սիրեն	խօսին
Գ լծ.	**Դ լծ.**
գողնամ	գտնում
գողնաս	գտնուս

գողնա(յ)	գտնու
գողնանք	գտնուք
գողնա(յ)ք	գտնոյք, —նուք
գողնան	գտնուն։

Միջին հայերենի սահմանական ներկան կազմվում է թրաբարի սահմանական ներկայի վրա ավելացնելով կու նախամասնիկը։

Ահա չորս լծորդության սահմանական ներկայի խոնարհման պատկերը.

Ա լծ.	Բ լծ.
կու սիրեմ	կու խօսիմ
կու սիրես	կու խօսիս
կու սիրէ	կու խօսի
կու սիրենք	կու խօսինք
կու սիրէք	կու խօսիք
կու սիրեն	կու խօսին
Գ լծ.	**Դ լծ.**
կու գողնամ	կու գտնում
կու գողնաս	կու գտնուս
կու գողնա(յ)	կու գտնու
կու գողնանք	կու գտնուք
կու գողնա(յ)ք	կու գտնոյք
կու գողնան	կու գտնուն։

Միջին հայերենի սահմանականի անկատարը գրաբարի սահմանականի անկատարի հետ նույն է, միայն այստեղ՝ ներկայի նման գրացած կու նախամասնիկով։ Իսկ գրաբարի անկատարը միջին հայերենում դարձել է սաորադասականի անկատար, որ գրաբարում գոյություն չուներ։

Ահա չորս լծորդության սահմանականի և սաորադասականի անկատարի խորհման պատկերը.—

Սաոր.	Սահմ.
Ա լծ.	
սիրէի	կու սիրէի
սիրէիր	կու սիրէիր

սիրէր	կու սիրէր
սիրէաք	կու սիրէաք
սիրէիք	կու սիրէիք
սիրէին	կու սիրէին

Բ լծ.

խօսէի	կու խօսէի
խօսէիր	կու խօսէիր
խօսէր	կու խօսէր
խօսէաք	կու խօսէաք
խօսէիք	կու խօսէիք
խօսէին	կու խօսէին

Գ լծ.

գողնայի	կու գողնայի
գողնայիր	կու գողնայիր
գողնա(յ)ր	կու գողնա(յ)ր
գողնայաք	կու գողնայաք
գողնայիք	կու գողնայիք
գողնային	կու գողնային

Դ լծ.

գտնուի	կու գտնուի
գտնուիր	կու գտնուիր
գտնոյր	կու գտնոյր
գտնուաք	կու գտնուաք
գտնուիք	կու գտնուիք
գտնուին	կու գտնուին:

Ապառնիի համար միջին հայերենում առանձին ձև չկա. գործածվում է սահմանականի ներկան (կու նախամասնիկով միացած) և կամ կամիմ բայի հետ միացած անորոշը: Օրինակ՝

կու տամ «պիտի տամ».

Ես կու ասեմ ու կու ցուցընեմ ալանի ու լերեան „je parlerai dans la cour et montrerai clairement et évidemment“ (Անսիպք, էջ 27):

գնալ կամի «պիտի գնալ»
կամի եկնել «պիտի եկնե»
կամի ընծալիլ «պիտի ծագի»
կամի մեռնիլ «պիտի մեռնի»
Այգուցն ընդ երեկս մեռանել կամի (Յովսէմ, 26բ). «Էգուց երեկոյ պիտի մեռնի». (Նրբ հիվանդին) փորձ առէի, ապա գիտացիր որ մեռանել կամի առույգ (Մխ. Բժշ. 70). լերկարել կամի «պիտի երկարի»:

Այս ձևը հատկապես սովորական է Մխիթար Հերացու մոտ, որ կիլիկեցի չէ: Հետևյալ օրինակները քաղված են նրա բժշկարանից,— լիշել կամիմ, կամիմ լիշել, լիշել կամիմք, կամինք լիշել, կամի լինել, բորբոսել կամի, բորբոսել կամին, կամի ընծալիլ, կամի հանել, կամի սկսանիլ, կամի քաշել:

Օրինակներից երևում է, որ կամիմ բայը կարող է անորոշից թե առաջ դրվել և թե հետո:

Ըստ այմ ապառնիի երեք ձևերն են՝

կու սիրեմ	կամիմ սիրել	սիրել կամիմ
կու սիրես	կամիս »	» կամիս
կու սիրէ	կամի »	» կամի
կու սիրենք	կամինք »	» կամինք
կու սիրէք	կամիք »	» կամիք
կու սիրեն	կամին »	» կամին:

Կատարյալը միջին հայերենում կազմվում է ճիշտ գրաբարի ձևով, այն է՝ բայի արմատի վրա դնելով Ա. և Բ լծորդութեան մեջ ց, Գ լծորդութեան մեջ ացի, իսկ Դ լծորդութեան մեջ արմատը մաքուր պահելով. այս ձևով կատարյալի բանը կազմելուց հետո, ավելացնում ենք կատարյալի վերջավորութիւնները. ալսպես՝

Ա լծ.	Բ լծ.
սիր-ց-ի	խօս-ց-ա(յ)
սիր-ց-եր(իր)	խօս-ց-ար
սիր-ց	խօս-ց-աւ
սիրց-աք	խօս-ց-աք
սիր-ց-իք	խօս-ց-ա(յ)ք
սիր-ց-ին	խօս-ց-ան

Գ լծ.	Դ լծ.
գող-ց-ա(յ)	գտ-ա(յ)

գողց-ար	*գա-ար*
գողց-աւ	*գա-աւ*
գողց-աք	*գա-աք*
գողց-ա(յ)ք	*գա-ա(յ)ք*
գողց-ան	*գա-ան:*

Հրամայականը նույնպես, քիչ տարբերությամբ, նույն է գրաբարի հետ. այսպես՝

Ա լծ.	Բ լծ.
սիր-է	*խօսեաց*
սիր-եց-էք	*խօսեցէք*
Գ լծ.	Դ լծ.
գողացիր	*գիտ*
գողացէք	*գա-եք:*

Վերը նկարագրված կանոնավոր բայերի ձևով կազմվում են նաև անկանոն բայերը, որոնք ընդհանրապես գրաբարի հետ նույն են, բայց միջին հայերենում շատ ավելի պարզված, քանի որ ապառնին՝ որ կազմում է գլխավոր դժվարությունը, այստեղ ջնջված է: Այստեղ իրր անկանոն մնում են միայն կատարյալը, հրամայականը և անցյալ դերբայը, որոնց մի մասն էլ արդեն կանոնավորի է վերածված:

Ահա անկանոն բայերի խոնարհումը՝ գրաբարի անկանոն բայերի շարքով.

1. առնել>այնել

սաոր. նկրկ.— այնեմ, այնես, այնէ, այնենք, այնէք, այնեն.
անկ.— այնէի, այնէիր, այնէր.
կոր.— այրի, այրիր, արար, այրաք, այրիք, այրին.
հրամ.— արա՛
դերբ.— այրել.

Հնագույն ձևն էր այրնել, որ ԺԲ դարում ունի դեռ Մխիթար Հերացին: Այս հնդկական մոտ ունենք նաև այրնես, այրնէ, այրնեն, նաև արնես, արնե, իսկ վաստակոց գրքի մեջ էլ արնելոյ< առնելոյ: Ավելի ուշ ժամանակի ձևեր են առնեմ, առնես, առնէ, առնօղ, արել, արած:

2. դնել>դնել

սաոր. նկրկ.— դնեմ, դնես, դնէ, դնենք, դնէք, դնեն.
անկ.— դնէի...
կար.— դրի, դրիր, եդիր կամ երեդ, դրաք. դրիք, դրին.
հրամ.— դիր.
դերբ.— դրել, դրած:

(3. լմպել)

Այս բայը ջնջված է միջին հայերենում, ինչպես և աշխարհաբարում, փոխանակվելով խմել բայով:

4. լսել>լսել

սաոր. նկրկ.— լսեմ, լսես, լսէ, լսենք, լսէք, լսեն.
անկ.— լսէի...
կոր.— լսեցի, լսեցիր, լսեց, լսեցինք, լսեցիք,— ցին.
հրամ.— լսէ, լսեցէ՛ք.
դերբ.— լսել, լսած

Կատարյալը, հրամայականը և անցյալ դերբայը կազմելով ուղիղ ժամանակների նման, ամբողջ բայը կանոնավորի է վերածված:

5. ճանաչել>ճանչել

սաոր. նկրկ.— ճանչեմ, ճանչես, ճանչէ, ճանչենք, ճանչէք, ճանչեն.
անկ.— ճանչէի...
կոր.— ճանչեցի...
հրամ.—
դերբ.— ճանչած

Գրաբարի անկանոն ձևերը (ծանեալ, ծանիր, ծանուցեալ) կազմվելով ուղիղ ձևից, անկանոնությունները ջնջված են և բայը վերածված է կանոնավորի:

Ունի նաև ճանչնամ, ճանչեցամ ձևերը, որոնք նույնպես կանոնավոր են:

(6. յառնել)

Այս բայը ջնջված է միջին հայերենից, ինչպես և աշխարհաբարից:

7. ուտել>ուտել

սաոր. նկրկ.— ուտեմ, ուտես, ուտէ, ուտենք, ուտէք, -են.

անկ.— ուէէի...
կար.— կէրա(յ), կէրար, կէրաւ, կէրանք, կէրաք, -ան.
հրամ.— կէր.
դերբ.—

8. *ունիմ*

Այս բայը սահմանում է մի քանի ձև. այսպես, անորոշ դերբայ՝ ունենալ, ունճալ, ներկ. ունենամ, ունենաս, ունենա, ունենանք, ունենաք, ունենան.— ուննամ, ուննաս, ուննայ, ուննանք, ունաք, ուննան.— ունամ, ունաս, ունայ, ունանք, ունաք, ունան. անկատար՝ ուննայի կամ ունայի, ունայր, ուննային.— իբրև ինացորդ դրաբարի կա միայն կար. կալաւ, հրամ. կա՛յ, դերբ. կալել, որ աշխարհաբարում ջնջված են. միջին հայերենում էլ բնդունիմ բայի դերբայն է բնդունած՝ փոխանակ հին ընկալած ձևի (Karst, 315)։

9. *տանիլ>տանիլ*

սահր. ներկ.— տանիմ, տանիս, տանի, տանինք, տանիք, տանին.
անկ.— տանէի...
կար.— տարայ, տարար, տարաւ...
հրամ.— տար.
դերբ.— տարել.

10. *գալ>գալ*

սահր. ներկ.— գամ, գաս, գա(յ), գանք, գաք, գան.
անկ.— գայի, գայիր, գա(յ)ր.
կար.— եկի, եկիր, երեկ, եկաք, եկիք, եկին.
հրամ.— արեկ.
դերբ.— եկել.

11. *երթալ>երթալ*

սահր. ներկ.— երթամ, երթաս, երթա(յ), երթանք, երթաք,-ան
անկ.— երթայի...
կար.— չիք.
հրամ.—
դերբ.—

12. *առնել>առնել*

սահր. ներկ.— առնեմ, առնես, առնէ(յ), առնենք, առնեք, առնեն.
անկ.— առնէի, առնէիր, առնէ(յ)ր, առնէաք, առնէիք, առնէին.

կար.— առի, առիր, արեւ, առաք, առիք, առին.
տվի տվաք տվին
հրամ.— տուր
դերբ.— տվել, առած.

Գրաբարի գարտուղի ձևերից մի քանիսն էլ շարունակում են դեռ իրենց գոյությունը միջին հայերենում։ Այսպես՝

Ասեմ, գիտեմ, կարեմ բայերից անինք կար. ասաց, ասցաք, ասցին, դերբ. ասցել, կար. դիտացին, հրամ. դիտացիր, դիտացիք, կար. կարցի, կարցաք.

Այսպես նաև բառնամ, դառնամ դառնում են բարձ—, դարձ—

Երդնում բայից անինք հրմ. երդվի՛ր, դերբ. երդուել, երդված.

բերեմ, առնում բայերից անինք կար. բերի՛ն, առի, առի՛ն (Karst, 313), *հրմ. բերէ՛ք։*

11. ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՓՈՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՇԱՓՈՒՄԸ

Երբ համեմատում ենք գրաբարի հոլովման և խոնարհման ձևափոխությունը միջին հայերենում, տեսնում ենք այն մեծ տարբերությունը, որ կա երկու ձևափոխություններն միջև։ Խոնարհման կրած ձևափոխությունը գրեթե ոչինչ է համեմատությամբ հոլովման կրած ձևափոխության։ Սրա պատճառն այն է, որ հոլովումը գրաբարում ոչ մի կանոնի չի ենթարկվում։ Եթե տրված լինի մի որևէ բառ, անկարելի է իմանալ, թե այդ բառը գրաբարի ութը կանոնավոր հոլովումներից որին է պատկանում։ Մինչդեռ որևէ բայ իր վերջավորությամբ անմիջապես որոշում է, թե ու՛ր լծորդության է պատկանում և ինչպես պետք է խոնարհվի։ Ահա հոլովման այս անորոշությունը պատճառ դարձավ, որ ամբողջ հոլովական դրությունը քայքայվեր և միակերպության վերածվեր։ Իսկ խոնարհումը մնաց գրեթե անխոտոր։

Գրաբարի խոնարհման ձևափոխության առաջին պատճառը սահրադասականը եղավ։

Գրաբարը թեև սահրադասականի ներկա ժամանակը ուներ, բայց սահրադասականի անց. անկատարի համար առանձին ձև չուներ, և այդ պակասը լրացնում էր՝ նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը։ Սահմանականի անկատարը իրեև սահրադասական գործածելու այս ձևը ազդեց նաև ներկայի բա ևմ

շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իբրև ստորադասական ներկա, և սրա հետ նաև իբրև ապառնի, որ հաճախ նույնանում էր ստորադասականի ներկայի հետ: Ուրիշ խոսքով քանի որ ասում էին՝

Թող ինքն երթայր և առնուր.

սրա նմանությամբ սկսեցին ասել՝

Թող ինքն երթայ և առնու.

փոխանակ ասելու՝

Թող ինքն երթիցէ և առցէ:

Սահմանական ներկան իբրև ստորադասական և ապառնի գործածելու այս սովորությունը սկսել էր արդեն ե դարում:

Նույնիսկ ե դարի առաջին շրջանի ընտիր գրվածքների մեջ կան այսպիսի դարձվածքներ.

Ե՛կ առաքեմ զքեզ.
Գնամք ասել, գնամք.
Եկ երթա՛մք շրջիմք.
Թող անիծանե՛ք.
Ասեմք կի իջցէ (ասե՛նք որ իջնի):
(Ագաթ. Բ, 74):

Ուշադրության արժանի է այն կետը, որ այսպիսի ապառնին ու ստորադասականը հին նախնիք գործածում էին դեմ առ դեմ խոսակցության մեջ, որից հետևում է, որ այս ձևը սկսեց նախապես բուն ժողովրդական լեզվի մեջ:

Ե դարի վերջում, հատկապես Փարպեցու մոտ այս կարգի օրինակները շատացան և էլ ավելի զարգացան Ե դարից հետո: Ահա մի քանի օրինակ այս շրջանից.

Ձինչ և պետք է քեզ՝ արա զիս.
Ոչ միում մարդոյ՝ որ լայդմ օրէնս է, չտամ ապրել.
Եթէ ըմբռնեմ, չտամ ապրել.
Եթէ ոչ առնում, ոչ գնամ ասել.
Մինչև ոչ կալեալ առնիմ, ոչ գնամ ասել.
Ցորժամ դուք ամենեքեան իջանէք, զիս ի իջուցանե՛ք.
Վրաց արքայ ասէ թէ ես միում ամեաց զկռիւ չտամ տեսանել.
Պարսից արար թէ ես յորժամ գամ արձակեմ ի կալանաց.
Հրամայեա և այնպես առնեմք. կոչեա և գամք:
Յարքայից արքայէ ի ծառայութենէն մի ելանէր, և ես միջնորդ լինիմ և աղաչեմ զթագաւորն և հաշտեցուցանեմ ընդ քեզ. և որ ինչ արժան է տալ քեզ՝ չտամ զի տայ: (Ագաթ. Ա, 114),

է դարում և մանավանդ ավելի հետո՝ ապառնիի և ստորադասականի հին ձևը միայն նկատողական լեզվին մնաց, իսկ միջին հայերենում տիրապետող հանդիսացավ սահմանական ներկայի ձևը՝ փոխանակ ց-ով ստորադասականի և ապառնիի:

Ահա մի քանի օրինակ՝ այս շրջաններից.

Է դար.—

Եկ որ պատերազմիմք.
Կաց տեսանեմ.
Զայդ թող բերեն.
Փախիք որ մեք կոտորեմք
Պահեա զդա որ իջանեմք և դնդի խաղամք:

ԺԲ—ԺԴ դար.

Ջուր զոր խմէ, հով թող խմէ,

կիլիկիա մօտևոր է. առնում երբ ուզեմ, ապա թող երթայ լալլ զհե ինձ երկիր բանամ.

Եյ ածին որ էլնէին ընդ Կուկլալ կապանն.
Ուզէր որ ապանէր (Ալան. Բ, 75):

Ալանյանը (անդ) կարծում է, միջին հայերենում էլ հին ստորադասականն ու ապառնին դեռ բոլորովին վերջացած չէին (գոնե գրական լեզվում) և այս ձևերը գործածվում էին, ուր որ նախընթաց եթէ, որ, մի՛, մինչ են բառերը գրված չէին, այսինքն այնտեղ, ուր հեղինակը ուզում էր ստորադասականը կամ ապառնին սահմանականից զանազանել: Իսկ Կարստը (299) այսպիսիները համարում է քարացած ձևեր կամ հնաբանությունն (archaismen): Օրինակ Անսիգքը (էջ 77) ունի զինչ և իցէ, մինչդեռ բնական ու սովորական ձևն է զինչ ու լինի (էջ 23, 85), որ ու լինի (էջ 53):

Ներկայի և ստորադասականի փոխանակության օրինակ է ներկայացնում նաև հինդուստանի լեզուն: «Հինդուստանի լեզվում հին պարզ ներկան կորցրել է իր նախնական նշանակությունը և այժմ գործածվում է միմիայն իբրև ստորադասականի ներկա: Իսկ jaipuri լեզվում ոչ միայն ստորադասական ներկա է, այլև իր սկզբնական իմաստով՝ պարզ սահմանական ներկա» (Grierson, հա. 9, մաս 2-րդ, էջ 40):

Միջին հայերենի նախնական շրջանում, երբ դեռ սահմանական ներկան լիովին ստորադասականի դերը չէր վերցրել. լեզվի

մէջ փորձ եղաւ նոր աստրադասական կազմելու կենամ բայի օդնութեամբ, որ ու շաղկապով միանում էր բուն բայի ներկային: Ահա օրինակները (Karst, 300):

Որ չերկրէն ի դուրք կենայ ու երթայ ի վաճառ.
Որ խալապան կենայ ու լինի «որպէս պի խառվութիւն տիրէ կուիվ լինի».
Որ առջև կենայ ու վճարվի.
Որ աչով առուտուր կենայ ու այնէ.
Որ կենայ ու գանկտի.
Որ դևռ կենայ և (ու) եփի.
Եթէ կենայ ու գայ «եթէ գայ».
Եւ (թէ) կենայ ու ապրանայ ծնծօղն.
Թէ ոք կենայ ու երթայ իր ճամփուն. և այլք կկենան ու պահնն զճանապահն, որ սպանութիւն այնեն կամ գողութիւն (Սմբ. դատ. 182):
Ապա ղէդ ի վանք կենան ու հանդչին.
Եթէ կենաս ու հնձես.
Երբ գանուն որ գբահանայական գործ կենայ ու այնէ (Սմբ. դատ. 31).
Բայց երբ կենայ ու լինի եպիսկոպոսին ընտրօղութիւնն (Սմբ. դատ. 73).
Թէ կենայ ու կոտրէ «եթէ սպանէ».
Քաւիլ թէ կենայ ու մեռնի «բացի այն պարագալից, որ մեռնի».
Որ կենայ ու ուտէ.
Թէ կենան ու կռվին.
Թէ կենան ու պահեն.
Ցորժամ եղբարքն կենան ի չիրացմէ բաժնվին.
Թէ կենա ու ևչնէ.
Թէ կենայ ու երթայ.
Եթէ կենայ ու ի վայր գա.
Որ կենա ու կռվի.
Որ կենա ու ապրանա.

Եւ թէ մարդոյն լինդքն ու կամ խամծեկն կենայ ու ուռվի, ու կամ թէ գաշտիկ լինի ի միւքն ու կենայ ու ուռվի:

Աստրադասականի այս նոր ձևը, որ ինչպես տրված օրինակներից երևում է, ցայց էր տալիս մի անգամ միայն կատարված գործողութիւն և ոչ թէ ներկայի մէջ շարունակվող և սևական մի

գործողութիւն, չկարողացավ ընդհանուր գործածութիւն գտնել և հատատավել լեզվի մեջ: Այլ իբրև մի վաղանցիկ երևույթ, մրցման մեջ հաղթվեց բուն աստրադասականից (որ սահմանականի ձևն էր) և գործածութիւնից դադարեց:

Այսպիսով, զրաբարի սահմանական ներկան դարձավ միաժամանակ թէ սահմանական ներկա, թէ ապառնի և թէ աստրադասական: Երեք տարբեր պաշտոններով գործածութիւնը բնականաբար տեղիք պիտի տար շփոթութեան և խառնուի երկդիմութեան:

Այս խառնակութեան առաջն առնելու և լեզվի գոնէ երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարվեց նոր մասնիկը, որի ծագման քննութեամբ պիտի զբաղվենք այժմ:

Առաջին անգամ նոր մասնիկը երևան է գալիս գրականութեան մեջ՝ ԺԲ դարում. Մխիթար Հերացին ունի երկու ձև՝ նուազ (էջ 48) և նու լինի (էջ 60, 91), որոնք Վենետիկի 1832 թ. հրատարակութեան մեջ թևև գրված են միահար իբրև մի բառ (նուազ, նուլինի), բայց պետք է անջատ համարել (Karst, 304): Ավելի ուշ՝ կիլիկյան շրջանի հեղինակների մոտ գտնում է բոլորովին ընդհանուր և սովորական: Այսպես՝ Սմբատ Գունդստաբլի «Անսիզք Անտիոքայ» աշխատութեան մեջ ունենք հետևյալ օրինակները, որոնց մեջ նու պարզ ներկայի նշան է, իսկ առանց նու-ի ձևը աստրադասական է:

Դուն, Ֆուլան լիճ ճորա, մենք եկել ենք ու նու հրաւիրենք զքեզ որ գաս սուր ի դարպասն, պացխուն և իրաւունք առնուս ու նու տայ քեզ դարպասն օր և պոման յայս օրինէս ինչվի ԺԵ օր. և լեգցինէ ի ԺԵ օր, և լեգուցն մէկալն աւուրն ի ԺԵ օր. որ նու լինի ամէնն ԺԷ օր, որ ի դարպասն գաս (էջ 13):

Նու ուզէ իրաւունք ի դարպասէն. և դարպասն նու հրաւիրէ զքեզ և նու տայ քեզ օր ու նու դնէ քեզ պոման, որ գաս լսես զքո պարոնին գանգատն և իր պացխուն այնես (էջ 15):

Եւ տայ ի դարպասն հաղար դեկան անտաքցի, որ նու այնէ ԵՃ կարմիր սուրի (էջ 31):

Իմ պարոն, ես օդոած եմ ի Ֆուլան կապլվոր ու բաժին մի այլ անսիզվորք կան և նու առջնարեն գիս, ու իրենք նու վճարվին, ու ես ձեր հին լիճ ճորա եմ, ու չէ պատեհ. նու աղչեմ զձեզ որ ճամէք որ արգիլեն զամէնին տալն, ու թող բերեն այլ անսիզվորքն գիրենց սիզեղնին առջև ձեր, ու թող ամեն մարդ հայնց ուենեցայ գիր վճարն հետ ու ի հետ (էջ 41):

Քերվանա, որ ի Սիս կ'երթաս, դուն խապար առնիս պապաչին (Լեոնի երգից. Dulaurier, էջ 540)։

Կու մասնիկի առեղծումը հալեբենում՝ այնքան նշանավոր մի երևույթ էր և այնքան հատկանշական, որ նա դարձավ գրաբարի ու միջին հալեբենի բաժանման կետը, նրանց սահմանագիծը (Karst, 307)։ Նրանով վերջացան հին ապառնին և առորագասականը, որոնք հին գրական լեզվի, մանավանդ բարձրագոյն մատենագրության կարելի է ասել ուժն ու հոգին էին կազմում, մանավորապես հարցական, թեական և հարաբերական նախադասությանց մեջ (Այան. Ա, 114)։

Զարմանալի էր գուգադիպությունը։ Երբ կարդում ենք մի գրաբար հատված, շարունակ մեր ականջը շոշում են ս և ց հնչյունները՝ մերթ գոյականների և ածականների հոլովման մեջ, մերթ բայերի ապառնիի և առորագասականի մեջ։

Այսպիսի անհավատ և դանդաչանաց բանից ախմարաց մտաց կարկառելոց՝ չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի (Եզն. 115)։

Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ։

Այժմ այս բոլոր ս-երն ու ց-երը վերջացան և նրանց տեղ սիրեցին կ ու բ հնչյունները։ Հալեբենը կորցրեց իր սուրզ հատկութիւնը։

Ի՞նչ ծագում ունի այս կու մասնիկը։

Պետերմանը (Abh. der Akad. der Wiss. zu Berlin, 1866, էջ 79) ավել է այս մասնիկի ծագման համար բազմաթիվ բացատրություններ, որոնց մասին խոսում է Կարտը (էջ 307)։ Բոլորովին անհաջող և սխալ է ըստ Կարտի՝ Պետերմանի այն մեկնությունը, որով կու մասնիկը հանում է կամ, կամք բառից։ Իբր թե այս բառից ձևնավորը ընկել է և մ վերածվել է իրեն համապատասխան ու ձևնավորին։ Սրանով բացատրված է լինում ոչ միայն մասնիկի ձևը, այլև նրա նշանակությունը, ըստ որում կու կազմում է ապառնի. և օրինակ՝ կու աղօթեմ համապատասխան կլինի ճիշտ գերմ. „ich will, ich werde beten“ բացատրությանն։ Անընդունելի է այս բացատրությունը, որովհետև 1) կամ չի կարող ձևնապես վերածվել կու. 2) կու մասնիկը չի գալիս տալիս ապառնին, ինչպես կարծում է Պետերմանը՝ հետևելով աշխարհաբարին։ Միջին հալեբենում կու ժամանակի նշան չէ, այլ եղանակի։ Նա միայն աշխարհաբարումն է, որ գործել է ապառնիի մասնիկ, իսկ միջին

հալեբենում որոշում է սահմանականը և գործածվում է թե ներկա, թե անցյալ անկատար և թե ապառնի ժամանակների համար։

Բացի սրանցից, Կարտը ցույց է տալիս, որ 1) կու կապ չունի գոմ բայի հետ. 2) կապ չունի թյուրքական Pt կամ KP qā նախամասնիկի հետ, որ դրվելով դերբայի սկիզբը՝ կազմում է ներկա. 3) կապ չունի մարոկյան սահմ. ներկայի ka նախամասնիկի հետ, որ արաբերենի միջոցով անցած լինի հալեբենին։

Միջագետքում (Մոսուլ և Բաղդատ) արաբ բարբառների մեջ սահմ. ներկան կազմվում է կատարյալի վրա դնելով kē-, qā-, gā- նախամասնիկները (BSL 36, № 107, էջ 138)։

Ամերիկյան կրի լեզվում ապառնի կազմելու համար ներկայի վրա դնում են ka (Lacombe, էջ 56).— պատահական է։

Մարոկկոյի արաբ բարբառներում սահմ. ներկա կազմելու համար անենք հետևյալ նախամասնիկները.

kā կամ lā (բուն նշ. կա, գոյություն ունի)
tā (» » այստեղ)
qā (» » ահա, ահա)

ինչ. kā-nəḥdəm
lā--nəḥdəm
tā-nəḥdəm
qā-nəḥdəm
} «աշխատում եմ»։

(BSL 36, № 107, էջ 135)։

Բելուջերենում էլ k նախամասնիկը կցվելով կատարյալի վրա՝ կազմում է ներկա (Grund. Ir. phil. I 243)։

Այս բոլորը միայն պատահական նմանություն ունեն հալեբեն կու, կը մասնիկի հետ։

Պատահական է դարձյալ լազերենի բայական կո մասնիկը, որ ըստ Մառի (Грам. чан. яз. 53, 56) միանում է կատարյային և կազմում է ապառնիի մի տեսակը. ինչպես՝

ճարի-կո «պիտի գրեմ, կգրեմ»
ճարի-կո-թ «պիտի գրենք, կգրենք»

Սրա բացատականն էլ կա՝ ինչպես՝

վաթի մ-ճարիկո «չպիտի գրեմ»։

Ըստ Մառի այս կո նշանակում է „нужно, պետք է», որ սակայն բառարանում գոյություն չունի. կա միայն կոր (էջ 157բ)

«պետք էր», որից երևի ըստ իր բարի սովորութեան հնարում է վերի բացատրութիւնը:

Հազ. կո գործածվելով միայն ապառնի կազմելու համար, կցվելով միայն կատարյալին և ընդհանուր գործածական մի ձև չլինելով, բնավ հարմարութիւն չունի առեղծելու մեր սահմանման կու նախդիրը:

Պատահական նմանութիւն ունի գարձյալ կը մասնիկը հինդուստանի լեզվի հետ. այս լեզվի բանգարու կամ ջատու բարբառով ապառնին կազմվում է gā (gē, gī) մասնիկով, որ դրվում է ներկայի ծայրը. օրինակ՝ mārā «զարնում եմ», mārāgā «պիտի զարնեմ» (Grierson, հա. 9, մաս 1, էջ 255): Նմանապես հնդկական ռաջաթանի լեզվի մարվարի բարբառում ապառնի կազմելու ձևերից մեկն է ներկայի վերջում դնել gō. ինչպես՝ mārū-gō «պիտի զարնեմ», իսկ մալվի բարբառում gā ձևով (Grierson, հա. 9, մաս 2-րդ, էջ 28, 58):

Բերբերական սլուակ բարբառում ներկա կազմելու համար բայի սկիզբը դնում են ն qa մասնիկը. օրինակ՝

qa ouaɣ	*խմում եմ*
qa suat	» *ես*
qassu	» *է*
qansu	*խմում ենք*
qasum	» *էք*
qasun	» *են:*

(Basset, 17):

Բանտու ընտանիքից կիկամի լեզվով ներկայի շարունակականը կազմվում է բուն ներկայի վրա ավելացնելով ga մասնիկը, որ ցույց է տալիս տևական մի գործ: Օրինակ՝ toa «ծեծել» արմատից՝ ni-tōa-ga «կծեծեմ կոր» (Velten, 16):

Սոլոմոնյան կղզիների օրահա լեզուն ապառնի կազմելու համար բայի վրա դնում է ke նախդիրը (Ivens, էջ 598):

Աֆրիկյան կանիրի լեզվով կատարյալը կազմվում է ki մասնիկով, որ նաև ke կամ gi հնչումն ունի. օրինակ՝

kirageika	*սիրեցի*	kiragiĭe	*սիրեցինք*
kiragum	*սիրեցիր*	kiragu	*սիրեցիք*
kirago	*սիրեց*	kerago	*սիրեցին:*

(Duisburg, 46, 47):

Վերջապես կարելի էր կարծել, որ կու ծագում է արաբ. ya-մասնիկից, որ գրվում է սահմ. ներկայի և անկատարի եզակի և հոգնակի գ դեմքի վրա. (ինչպես՝ ya-ktubu «գրում է», ya-ktubu-na «գրում են»), և որ հայերենի մեջ վերածվել է կու, ըստ որում հայերեն բառերի սկզբում կարող չէ դանվել եա երկբարբառը: Աչառյանը (Բ. 76) մերժում է նաև այս անունդի ենթադրութիւնը:

Կու մասնիկի ծագման ճիշտ բացատրութիւնը տալիս է Այարընյան (անդ), որ թեև Պետերմանը (անդ) մերժում է, բայց այժմ բոլոր լրջախոհ հայագիտների կողմից ընդունված է:

Ըստ այս կարծիքի՝ կու մասնիկը ծագում է կայ ու նախաձևից, որ բուն նշանակում է «կանդնում է և...»:

Կալ «կանգնել» բայը մնացորդյան շրջանի հայերենում ավելադրութեամբ գործածվում էր երբեմն ուրիշ բայերի հետ՝ խմաստը զորացնելու համար: Այսպես՝

Նա կայր ցուցաներ,
կալ ակն ունել.

որ հիւանդոտքն էին՝ լալին և կալին (Եւս. պատմ. դ. 6, ուր հայն օրինակում ունենք միայն «լալին» ըստ ՆՀԲ):

Այս գործածութիւնը ավելի սովորական է մնալ բայի հետ. ինչպես՝

կաց ասա դու.
կացից ասացից Աստուծոյ.
կացաք ասացաք իրաւանց.
կալ ասալ մարդկան միանգամ մեռանել:

Այս օրինակները Ս. Գրքից են: Մեսրոպյան շրջանից հետո ունենք՝

Որ գործեցին զչար՝ անվախճան տանջանքն կան ասան, Յճխ.
Արդ կալ և ասալ ինձ աննեղելի պատուհաս, Շար.

Կայ և... ձևը հետին դարերում ավելի էր շատացել անշուշտ, մանավանդ ոսմիկ լեզվի մեջ, ուր և շաղկապը փոխանակվելով ու ձևով, գարձել էր կայ ու...: Երկու անգամ հին ձևը գտնում ենք Մխիթար Հերացու մոտ. այսպես՝

կալ և դիպի՝ էջ 39, կալ և շարժի, էջ 49:

Ուրիշ աղբյուրներից ունենք՝

Կայ և ուրդի որ բորբոսի «պատահում է որ բորբոսնում է»։ Եւ այլ՝ կանք ու տեսանենք ի վայրի կենդանեացն, որ առնուն խոտեր և դնեն իւրեանց տեղեստանն։

Կայ ու ձևը հաճախական գործածութեան մեջ ավելի պարզվելով՝ դարձավ կու. ըստ այսմ ենթադրելի է՝

կու տեսանէ<կայ ու տեսանէ.
կու ճնայ<կայ ու ճնայ.
կու նայի<կայ ու նայի.
կու ուրդի<կայ ու ուրդի.
կու ուտէ<կայ ու ուտէ.
կու կապէ<կայ ու կապէ.

Այս առթիվ մի քանի նկատողութիւն անհրաժեշտ է.

1. Փոփոխութիւնը անշուշտ սկսել է ներկայի եզակի գ դեմքից, որ հետո տարածվել է ներկայի եզ. և հոգ. բոլոր դեմքերի վրա, և հետո էլ անկատարի վրա։ Այսպես՝

կու լսենք<կայ ու լսենք<կանք ու լսենք.
կու տեսաներ<կայ ու տեսանէր<կայր ու տեսանէր.
կու բերեմ<կայ ու բերեմ են.

Այսպիսի երևույթ սովորական է բոլոր լեզուների մեջ։ Իբրև օրինակ հիշենք աշխարհաբարի պիտի մասնիկը, որ ինքնին ներկայի եզ. գ. դեմքն է, բայց այժմ գործածվում է իբրև մասնիկ՝ կազմելու համար ապառնիի և անցյալ ապառնիի եզակի և հոգնակի բոլոր դեմքերը։ Մարաղայի բարբառում էր՝ որ գրաբարի անկատարի եզ. գ դեմքն է, դարձել է անկատարի եզ. և հոգ. բոլոր դեմքերի նշանը. ինչպես՝ իւզելի՛մ էր «ուզում էի», իւզելի՛ս էր «ուզում էիր» են։

2. Առաջին վանկի ա ձայնավորի ջնջումը սովորական երևույթ չէ միջին հայերենի ձայնարանութեան մեջ։ Սակայն չափազանց շատ գործածվող բառերն ու մասնիկները այսպիսի օրենքների չեն հպատակվում և ցույց են տալիս անսովոր ազդեցներ։ Ծրանաբերնումն էլ բառի ծայրի u ձայնավորը չի կրճատվում, բայց ահա ժողովրդական լեզվում ասում են t'as pas փոխանակ ասելու tu n'as pas «չունես»։ Հայերենի մեջ՝ միավանկ բառերի միջին ո ձայնավորը չի կարող կրճատվել. կարելի չէ ասել գղ փոխանակ գող, ձղ փոխանակ ճող են. բայց ահա թո՛ղ դառնալով հրամայականի մասնիկ, ոչ միայն դարձել է թխ. այլ և պարզապես թ. ինչպես՝

թխ գա, թերթա «թող գա, թող երթա», ինչպես կարելի է բացատրել պիտի մասնիկի պիտ, տի, ա անսովոր կրճատումները, եթե ոչ նույն օրենքով։

Ըստ այսմ կայ ու դարձել է կու, մանավանդ որ ա և ու ձայնավորների հանդիպումը պահանջում էր այդ հապավումը։ Նույն երևույթը նկատում ենք նաև Պոլսի բարբառում հրամայականի մի՛ մասնիկի վրա, ուր ի՝ շեշտյալ լինելով հանդերձ կրճատվել ջնջվել է ամբողջապես, նույնիսկ շեշտը փոխադրելով հաջորդ վանկի վրա. ինչպես՝ մե՛րթար<մի՛ երթար, մը՛սեր<մի՛ ասեր, մի՛ ըսեր, մո՛ւտեր<մի՛ ուտեր են։ Բաղաձայնով սկսող բառերի մոտ նույնը դառնում է մը՛. ինչպես՝ մը՛ խօսիր, փոխանակ՝ մի՛ խօսիր։

Ճիշտ նույն ձևով կայ ու = կայու հետո դարձած կու, ավելի հետո էլ դարձել է բաղաձայնի մոտ կը, ձայնավորի մոտ՝ կ։

3. Կարելի էր առարկել նաև այն, որ կայ ու ձևը շատ սահմանափակ գործածութիւն ունի հին և միջին շրջանի գրականութեան մեջ (Karst, 309)։ Գոնե բավական հաճախակի գործածութիւն պետք է ունեցած լիներ, որ կարելի լիներ ասել, թե դա հետո ավելի ևս տարածվեց և գարձավ ընդհանուր գործածական ու մասնիկը։ Բայց այս էլ սովորական երևույթ է լեզուների մեջ։ Լեզվի մեջ գոնված բացառիկ մի դեպք, մի միակ երևույթ բավական է որ նա ունենա ավելի հարմարութիւն, քան մյուս ձևերը, հանկարծ կսկսի տարածվել և քիչ ժամանակի մեջ այնպես կշատանա, որ կվտարի մյուս ձևերը և մի միակ տիրապետողը կդառնա։ Նույնիսկ կու ձևը, որ այնպես սովորական գարձավ հետո, ճնշվեց գրոց իսկ կու ձևը, որ այնպես սովորական դարձավ հետո, ճնշվեց գրոց իսկ և ժամանակ մը միայն գործածվում էր (ըստ Ալան. Բ, 77), և Մխիթար մեջ դեռ ցանցառ է գործածվում (ըստ Ալան. Բ, 77), և Մխիթարի մեջ դեռ ցանցառ է գործածվում (ըստ Ալան. Բ, 77), և Մխիթար Հերացին դեռ երկու օրինակ միայն ունի, ինչպես որ երկու օրինակ ունի նաև կայ և... ձևով։

Կու ձևի գործածութեան առաջին վկայութիւնները մենք գրանում ենք ԺԲ դարից, բայց անշուշտ նա ավելի հին էր և «ԺԱ. դարեն առեղի անշուշտ առմկին սովորականն էր այն նոր ձևով կու վախես, կու խմեր, կու լինի են» (Ալան. Բ. 77)։

*4. Թե ինչու համար կայ ձևը ընտրվեց լեզվի մեջ և վերածվեց սահմանականի իրեն հայտարար՝ շատ լավ բացատրում է Ալ

օր: Ընտրելով այս կայ ձևը, որ միայն սահմանական կարող էր լինել և հարակցելով մի ուրիշ բայի, որ տատանվում էր սահմանականի և ստորադասականի միջև, իսկույն պիտի վերանար տատանումը և անմիջապես պիտի հասկացվեր, որ այդ բայը սահմանական է, ինչպես որ սահմանական է նաև կայ: Այսպես, օրինակ՝ կայ ու ճայի ձևի մեջ՝ ճայի թե ստորադասական է և թե սահմանական. բայց որովհետև կայ սահմանական է, ուստի ճայի էլ սահմանական է: Վերցնենք կայ, միայնակ ճայի կդառնա ստորադասական:

Սրա համար է որ կամ, ինչպես նաև ուզիմ, կրնամ, գիտեմ չեն կարող ստանալ կը մասնիկը. և կարելի չէ ասել կգիտեմ, կկրնամ, կուզիմ, ինչպես և կկամ:

5. Կամ բայի այս գործածութիւնը միշտ իր համապատասխանն ունի կենամ ձևի գործածութեան հետ: Վերը տեսանք, (տես էջ 388) որ կենամ, կենայ են ստորադասականները գործածվելով ու շաղկապով մի ուրիշ բայի սահմ. ներկայի հետ՝ տալիս էին նրան ստորադասականի արժեք: Ճիշտ միևնույնը եղավ կամ, կայ ձևի հետ էլ: Երկուսից հնագույնը առաջինն է, ուստի կարող ենք ասել թե կայ առաջացավ կենայ ձևի օրինակով և նրա ծնունդն է:

Այդ դեպքում հարց է ծագում՝ թե ինչո՞ւ կենա ձևը չշարունակվեց և վերացավ լեզվից:

Պատասխանը շատ պարզ է:

Կենայ ձևը ստեղծվել էր ստորադասականը որոշելու և սահմանականի հետ չշփոթելու համար: Երբ ստեղծվեց կայ ձևը և սահմանականը որոշվելով՝ ստորադասականի հետ շփոթելու առաջն առնվեց. այլևս կենայ ձևի կարիք չկար: Հինը՝ իր երկարութեան պատճառով զոհվեց կարճին, թեև նոր էր: Ձավակը հոր տեղը գրավեց:

6. Կամ և կենամ (կայ և կենայ) միևնույն բառերն են և պատկանում են միջին հայերենում կազմված այն բայերի շարքին, որոնց վրա խոսել ենք վերը: Երկուսն էլ այս դեպքում ծառայում են իբրև օժանդակ. ինչպես՝ պիտի ապառնիի համար և թո՛ղ՝ հրամայականը համար:

Կալ «կենալ, կանգնիլ», «գոյութիւն ունենալ» իբրև օժանդակ բայակերտ գործածական է շատ լեզուների մեջ: Այսպես՝

կալ «կանգնել>լինել» իմաստի համար օրինակներ ունենք նաև ուրիշ լեզուներում. ինչպես՝ լտ. stare, որ բուն նշանակում է «կանգնել». բայց նաև «ինալ, լինել, այս կամ այն վիճակում լինել,

ինալ, տևել» են. ռուս. стану «կլինեմ», стал «եղա», հատկապես ալթայական լեզուների մեջ՝ կումուխերեն turmak «կանգնել», որև «լինել», որից էական բայը՝ dur, dər, dir (Дмитриев, 45): Նաև բայի շարունակական ձևը՝ ինչպես՝ կումուխ. oxuy tura ma «կկարդամ կոր, կարդալիս եմ» (անդ, 94), ածկ. yatəbdurmak «պառկած ինալ, պառկելը՝ շարունակել, շարունակ պառկած լինել», dər, dir, dur «է» (էական բայ):

Գերմ. war «էի», gewesen «եղած» և անգլ. was «էր, կար», որոնք ծագում են հնխ. ves «բնակիլ, գոյութիւն ունենալ» արմատից (=հյ. գոյ): Ավելի լավ են արաբ. كان kāna «էր, կա, գոյութիւն ունենալ» (որ գրվելով բայերի այլ ժամանակների վրա, կազմում է անկատար և գերակատար») և թրք. dur-maq «կանգնել», որ դառնում է մի կողմից էական բայ՝ dur, dər, də «է» ձևով և մյուս կողմից ծառայում է իբր օժանդակ՝ բայերի գործողութեան տևականութիւնը ցույց տալու համար. օրինակ՝ aγlayəb durmaq «շարունակ լալ», բառացի «լալ-կենալ»: Կենսաբանական Ամերիկայի սուբտիրա լեզվով ներկայի մի տևական կազմվում է gisto «ապրել, գոյութիւն ունենալ» բայով. օրինակ՝ ikū gisto-nanu «ես ապրել (մասնիկ) ադալ = «ադում եմ» (Kieckers, էջ 187):

Արդյոք հայերենը այս արաբերեն կամ մանավանդ թուրքական բացատրութեան օրինակութիւնը կամ թարգմանութիւնն չէ, ինչպես կարծում է Ն. Հ. Նաւինեան, Եւս. պատ. գ. 6 լային և կային տատութիւնը համարում է «ոճ ամփակաև, աղլայքալ տուրմագ»:

Անշուշտ այս ենթադրութիւնը անտեղի է, կայ բայով կազմված տատութիւններ սովորական էին մեսրոպյան շրջանում, արաբ. ներից և թուրքերից շատ առաջ, հետևաբար նրանցից անկախ են: Այսպիսի ձևեր, որ իրարից անջատ լեզուների մեջ հավասարապես գոյութիւն ունենում են, ընդհանուր մարդկային նման մտածողութեան արդյունք են, ինչպես են պիտի ապառնին, թող հրամայականը նա:

7. Դրականապես հաստատելու համար, թե կու ծագում է կալ բայից՝ մենք իբրև լավագույն ապացույց ծառայում է կեսարիո բարբառի բացատրականի կազմութիւնը: Այստեղ մենք ունենք՝

չկամ կարդամ	«չեմ կարդում»
չկար գրէի	«չէի գրում»
չկաս գրէիր	«չէիր գրում»

(Ալպոյաճեան, Պատմ. հալ կես. Բ. 1664):

Կասկած չկա, որ այս բոլորի մեջ չկամ, չկաս, չկար դանագան խոնարհյալ ձևերն են կալ «կենալ» բայի, որից ածանցված է նաև կայ ու>կու։

Կու մասնիկի միջոցով մենք քննեցինք դրաբարի եղանակների փոփոխությունը միջին հայերենում։ Լրացնելու համար միջին հայերենի բայերի քննությունը, մենք պիտի խօսենք նաև ա) լծորդությանց փոփոխության, բ) խոնարհման կանոնավորման, գ) վերջավորությունների ձևափոխության և դ) նախահավելվածի մասին։

ա. Լծորդությանց փոփոխությունը

Երբ համեմատում ենք միջին հայերենի բայերը իրենց համապատասխան դրաբար ձևերի հետ, տեսնում ենք, որ մեծամասամբ միևնույն են և եթե տարբերություն կա, այդ տարբերությունը միայն ձայնարանական է։ Այսպես. ճանչեմ<ճանաչեմ, այնեմ<առնեմ են։ Բայց կան նաև բազմաթիվ դեպքեր, երբ տարբերությունը լծորդության կամ տիպարի վրա է լինում։ Օրինակ՝ լուծեմ<լուծանեմ, աւիլեմ<աւելում են։

Լծորդության փոփոխությունները կայանում են դլխավորապես հետևյալ դեպքերում.

1. Դրաբարը չգիտե դանագանել բայական սեռը լծորդության միջոցով. ճիշտ է, որ Ա. լծորդությունը կրավորական դառնալու համար վերածվում է Բ լծորդության, բայց Բ լծորդությունը, ինչպես նաև Գ և Դ լծորդությունները մեծամ մասամբ թե՛ ներգործական են և թե՛ կրավորական։ Այսպես են օրինակ՝ ճամարիմ, աղամ, գողանամ, բողում, ընթեռնում։

Միջին հայերենը կարողացավ այս խառնակությունը բարվոքել և ստեղծել կրավորականի առանձին ձև՝ -ուիլ վերջավորությամբ։

Կրավորականի այս ձևը կազմելուց և կրավորականը ազատագրելուց հետո, դրաբարի նախկին կրավորականների մի մասը (նրանք՝ որ իլ վերջավորությունն էին կրում) ազատ մնաց։ Այսպիսի բայերը կամ պիտի ջնջվեին՝ իրրև ավելորդ և կամ հարստանալու համար՝ նոր արժեքով պիտի օժտվեին։ Այս է համանիշների օրենքը լեզվի մեջ։ Երկու ձևերն էլ գործադրվեցին։ Այսպիսով միջին հայերենում -ել վերջավորությամբ ներգործականի և ուիլ վերջավորությամբ կրավորականի կողքին ստեղծվեցին -իլ վերջավորությամբ չեզոք բայեր։ Այս եղավ սքանչելի մի միջոց հայերենում բայական սեռը դանագանելու համար՝ համաձայն վերջավորության։

Այսպես, ունենք միջին հայերենում՝

ներգ.	չեզ.	կրավ.
բաժնեմ	բաժնիմ	բաժնուիմ
եփեմ	եփիմ	եփուիմ
այրեմ	այրիմ	այրուիմ

Սեռերի բաժանման այս ձևը անցավ նաև նոր բարբառներին և նրանց միջոցով էլ արևմտյան գրական հայերենին, ուր դժբախտաբար բոլոր բայերի վրա չտարածվեց։

2. Դրաբարի մեջ մի խումբ բայեր ներկայանում են թե՛ ոչնդային և թե՛ ոչ-ոնդային ձևով։ Այսպես են՝

դառանեմ — դառեմ	աղանձնեմ — աղանձեմ
յառանեմ — յառեմ	սկանջանեմ — սկանջեմ
դանդանեմ — դանդեմ	տատրիջանեմ — տատրիջիմ
ներկանեմ — ներկեմ	խցանեմ — խցեմ
խխանեմ — խխեմ	տարաժանեմ — տարաժեմ
բնկանեմ — բնկեմ	

Այս դանագանությունը սկսում է ե դարից։ Անանուն մեկնիչը (էջ 147) ասում է թե՛ ոնդային ձևը գրական է, իսկ ոչ-ոնդային ձևը ռամիկ, և օրինակ է տալիս ոռոգանեմ և ոռոգեմ բայերը։

Կարապետը (էջ 267) շատ հավանական է համարում, որ վերոհիշյալ բայերից ոչ-ոնդային ձևերը միջին-հայերեն են։ Իրոք էլ դրաբարի մռաճեմ, լուծանեմ, խառանամ—և հրամայեմ ձևերի դեմ միջին հայերենում դտնում ենք մռեմ, լուծեմ, խառեմ, համեմ։

3. Նախորդին նման կան և մի խումբ բայեր էլ, որոնք ունեն կրկին ձև՝ իմ, եմ և -ենամ, այսպես են մեսրոպյան շրջանից և ավելի ուշ ժամանակից՝ յամեմ-յամենամ, մերձիմ-մերձենամ, մօսիմ-մօսենամ, յագիմ-յագենամ, գիտեմ-գիտենամ, քաղցեմ-քաղցենամ, արբիմ-արբենամ, կատաղիմ-կատաղենամ, կամիմ-կամենամ, ճանաչեմ-ճանաչենամ։ Սրանցից առաջիններն պարզ բայական ձևեր են, երկրորդները՝ անվանական բայեր, որոնք կազմված են -ենամ մասնիկով (ինչպես հիւանդ բառից հիւանդանամ, ծեր բառից ծերանամ են)։ Միայն թե այստեղ առնված է բառի բունը ի վերջավորությամբ, որ միանալով ա ձայնի հետ՝

ավել է ե. այսպես՝ *յամի-յամենամ, *մերձի-մերձենամ, *քաղցի-քաղցենամ, *յագի-յագենամ, ճիշտ ինչպես ունինք ընտանի-ընտանենամ, կատաղի-կատաղենամ:

Հայտնի չէ, թե մեսրոպյան շրջանում և ավելի հետո ինչ դառնապանութիւն էր դրված հիշյալ երկու ձևի բայերի միջև. բայց գիտենք, որ միջին հայերենը ոչ միայն դանազանից նրանց գործածութիւնը, այլև նրանց օրինակով կազմից նորանոր բայեր:

Կարասը (էջ 284—5) ասում է, թե միջին հայերենում առաջին անգամ հրապարակ իջած ձևերն են երեք բայ գիտենամ, կամենամ և ճանաչենամ: Մյուսները գրաբարին անծանոթ են և կազմված են միջին հայերենում: Այս կետը անշուշտ վճռական չէ: Հիշյալ բայերի մեջ կա որ իր կազմութիւնով շատ հին է և կա էլ՝ որ նոր է: Այսպես անշուշտ հին է ծարվենամ>ծարաւենամ, որ ծագում է հնագույն ծարաւի ձևից (և ոչ թե ավելի նոր ծարաւ բառից): Ընդհակառակը խենթենամ, որ այժմ գործածական է պոլսահայ բարբառում, անշուշտ նոր է, որովհետև արմատն է խենթ և չկա *խենթի: Ըստ այսմ այս կարգի բայերը կազմված են -ենամ ձևի բայերի նմանութիւնով:

Այնուհետև միջին հայերենում տեղ տեղ այս միջին ե ձայնավորն էլ ընկնում է և մասնիկը դառնում է -ցամ, իսկ եթե բայի արմատն էլ վերջանում է ն, երկու ն-երի հանդիպման ժամանակ մեկը կորչում է: Այսպես ունենք՝

ճանչենամ — ճանչնամ
լինենամ — լիննամ — լինամ
ունենամ — ուննամ — ունամ:

Առանձնապես հետաքրքիր է միջին հյ. կենամ բայը, որ կազմված է կամ բայից՝ առանձով -ենամ մասնիկը մյուսների նմանութիւնով (համմ. Karst, 283 ծան.): Նախապես կամ նշանակում էր «կանգնած եմ» և միջ. հյ. կենալ «կալ, գոյութիւն ունի», այսօր ընդհակառակը կայ նշանակում է «գոյութիւն ունի» և կենալ «կանգնել» (Այտն., 72 ծան.):

Միջին հայերենում -ենամ վերջավորութիւնով բայերը պարզ ձևերի հետ նշանակութիւնով թեև նույն, բայց դանազանվում են գործածութիւնն կողմից. պարզ բայերը ունենում են սահմ. ներկ. և անկատար, իսկ անվանականունները գործածվում են կատարյալի, հրամայականի, ապառնիի, անորոշ դերբայի և հատկապես ստորադասական ներկայի և անկատարի մեջ: Այս երևույթը շարունակվում է դեռ աշխարհաբարի մեջ: Այսպես՝ արևմտահայ բարբառներում և գրականում ունենք՝

սահմ. ներկ.	ունիմ	անկ.	ունէի
»	գիտամ	»	գիտէի

դերբայ	ունենալ, գիտնալ
ապառնի	պիտի ունենամ, պիտի գիտնամ
հրամ.	ունեցիր, գիտցիր
կատար.	ունեցա, գիտցայ
ստոր. ներկ.	ունենամ, գիտնամ
» անկ.	ունենայի, գիտնայի ևն:

Սրանք ներկայացնում են բայի երեսւյթը, որի մասին խոսել ենք:

4. Լծորդութեան փոփոխութեան տեսակետից հետաքրքրական է Դ լծորդութեան բաները: Երկու հակառակ հոսանք է նկատվում այստեղ: Մի կողմից գրաբարի -ում վերջավորվող բայերը ջնջվում կամ վերածվում են Ա. լծորդութեան (ինչպես արդի աշխարհաբարում է), մյուս կողմից՝ որիշ լծորդութեան բայեր վերածվում են Դ լծորդութեան -ցում ձևին: Այսպես՝ արգելում, լխում, զենում, թողում, յեղում, աւելում վերածվել են Ա լծորդութեան, իսկ զատենամ, իջանենամ, տեսանենամ են անցել են Դ լծորդութեան: Ժդ դարում և Մոթ. Եւագր. գրում է մի կողմից ակսեու (էջ 97, 99) և մյուս կողմից՝ յեցիլ (տես. յենուլ) (էջ 137): Ներսես գրութեան մեջ են թողում և առնում: Երկար ժամանակ թողում դիմադրում է հոսանքին, բայց վերջապես նա էլ վերածվում է թողեմ ձևին: Իսկ առնում, որ մնում է երկար ժամանակ անփոփոխ, ուշ կիլիկեան շրջանում դառնում է վերջապես առնեմ (Karst, 292):

բ. Ժոնարհման կանոնավորութիւնը

Ինչպես ամեն նոր լեզվի, նույնպես և միջին հայերենի հիմնական սկզբունքն է եղել վերացնել գրաբարի անկանոն ձևերը, այսինքն ջնջել բացառութիւնները՝ նմանութիւնները նրանք ընդհանուր կանոնին: Այս բանը հատկապես երևում է անկանոն բայերից.— գրաբարի մեջ ունենք 12 անկանոն բայ. սրանցից երկուսը (ըմպել, յառնել) ջնջված են լեզվից, իսկ լսել, ճանչել վերածված են կանոնավորի. երբայ բայն էլ պակասավորի վերածվելով՝ նույնպես ջնջված է անկանոնների շարքից: Այսպիսով 12 անկանոն բայերից

Ձեռք են միայն յոթը, որ է ամբողջի կեսը, որովհետև ունիմ բայը միջին հայերենում հաղիվ կարելի է անկանոն հաշվել։

Գրաբարի ապառնիի և աորիստականի ջնջումը նույնպես մեծագույն աստանձներից մեկն է բայի խոնարհման պարզման և կանոնավորման։

Գրաբարի մեջ հրամայականը եզակիում և հոգնակիում բացի սովորական սիրեա՛, սիրեցէ՛ք ձևերից, ուներ նաև—ջի՛ր, -ջիք ձևերը (ինչպես՝ խօսեաջի՛ր, սիրեաջի՛ր, խօսիջի՛ր, խօսիջի՛ք են)։ Ապառնին ջնջելու հետ՝ միջին հայերենը ջնջեց նաև հրամայականի այս արկածավոր ձևերը, որոնց կազմությունը բավական դժվար էր և անկանոն։

Գրաբարի մեջ ածեմ, բերեմ, ճանեմ գոյաուղի են. միջին հայերենում արդեն գոնում ենք կանոնավորի վերածված ձևեր։

գ. Վերջավորությունների ձևափոխությունը

Գրաբարի խոնարհումը վեց եղր ուներ. սրանցից միայն աորիստական ներկան սեփական վերջավորություն չուներ և միանում էր սահմ. ներկայի վերջավորությանց հետ. այսպես՝

եմ — իցեմ	*եմք — իցեմք*
ես — իցես	*էք — իցէք*
է — իցէ	*են — իցեն են։*

Միջին հայերենը ջնջեց ապառնին և միացրեց ներկայի հետ, այսպիսով ունեցավ չորս տեսակ վերջավորության՝ չորս առանձին եղրերի համար, որոնք են սահմ. ներկա, անկատար, կատարյալ և հրամայական։

Սահմ. ներկայի վերջավորությունները ընդհանրապես նույն են գրաբարի հետ. այսպես՝

	գրբ.		միջ. հյ.		գրբ.		միջ. հյ.
Ա	*մ*	*>*	*մ*		*մք*	*>*	*նք*
Բ	*ս*	*>*	*ս*		*ք*	*>*	*ք*
Գ	*—*	*>*	*—*		*ն*	*>*	*ն*

Տարբերությունը միայն հգ. ա դեմքի մեջ է, որ գրաբարում ունի մ, իսկ միջին հայերենում, ինչպես և աշխարհաբարում, ենք ձևը։ Եթե երբեմն միջին հայերենում էլ պատահում են մ ձևով

հգ. ա դեմքի դեպքեր, դրանք հնաբանություն են, և այդ երեում է նրանից, որ երբ բան կիլիկյան ոճով է խոսակցությանը, միշտ գոնում ենք ենք և ոչ մ։ Բացի սրանից, նույնիսկ այն հեղինակների մոտ, որոնք գրաբար են գրել, երբեմն երևան է գալիս ենք ձևը, որ նշան է, թե այդ հեղինակների սովորական լեզուն ենք ձևով էր։ Այսպես Վարդանի պատմության մեջ ենք ձևով սպրդած օրինակներ են՝ ենք էջ 157, 161, չենք 157, 158, չդիտենք 160, լիշենք 160, ուզենք 158 (Karst, 309)։

Նույնիսկ Մխիթար Հերացու ժամանակից արդեն երևում է ենք ձևը, օր. ենք էջ 65, կանք 120, կարենք 66 կամինք 76, լիշենք 62, 113, տանք 50, տեսանենք 120 են (Karst, 309)։

Մ>ն ձայնափոխության պատճառը տես ձայնաբանության նվիրված հատորում։

Մնացյալ դեմքերը միջին հայերենում ենք են անփոփոխ և այդ վիճակը շարունակվում է նաև աշխարհաբարի մեջ։

Եթե Գ լծորդության հգ. գ դեմքի մեջ գոնում ենք յ վերջավորությունը, դա մի մեռյալ տառ է, որ մինչև այսօր էլ շարունակում է իր ներկայությունը գրության մեջ։ Ինչպես նոր հայերենում, նույնպես և միջին հայերենում այդ յ չէր հնչվում. ասվում էր գողնա, կու խաղա են, թեև գրվում էր գողնայ, կու խաղայ են։ Սրա պարզ ապացույցը այն է, որ նույն կարգի բառերը գրվում էին նաև առանց յ. օրինակ՝ թուլնա, լուսնա, խոշրնա, յեւելնա, ճօսրնա, ապեկնա, ուժովնա (Karst, 282—3)։

Այսպես նաև Գ լծորդության հգ. բ դեմքի մեջ յ գրչությունը ձևական էր.— գողնայք, կու գողնայք են հնչվում էին գողնաք, կու գողնաք են՝ ճիշտ ինչպես արդի աշխարհաբարում։

Վերջապես Գ լծորդության հգ. բ դեմքի մեջ էլ -ույք վերջավորությունը պետք է կարդալ -ուք, ինչպես որ կա գրված թե գանույք և թե գանուք (Karst, 290)։

Անկատարի մեջ գրաբարի վերջավորություններն են՝

Ա	*-ի*	*-աք*
Բ	*-իր*	*-իք*
Գ	*-ր*	*-ին*

որոնք անփոփոխ ենում են միջին հայերենում։

Այստեղ էլ Գ և Գ լծորդության մեջ, գ դեմքի յ ձայնից առաջ երևում է յ, որ սակայն մեռյալ տառ է և գրաբարի գրության հետևողության։ Այսպիսի դեպքերում յ չէր հնչում, օրինակ՝

գողնայր, գանոյր կարդացվում կամ հնչվում էին գողնար, գոնար: Սրա ապացույցն այն է, որ այս կարգի բառերը գրված կան նաև առանց յ-ի, ինչպես՝ կու լար (Karst, 280), և երկրորդ՝ որ արդի հայերենում էլ հնչում ենք առանց յ-ի:

Կատարյալի դիմանիշներն են գրաբարում՝

Ա	—	-ք
Բ	-ր	-ք
Գ	-(ե)	-ն

Այս բոլորը անփոփոխ մնում են նաև միջին հայերենում:

Հետաքրքրական է Ա լծորդության անգային սիպարի կատարյալի խոնարհումը, որ գրաբարում ունի ի, եր, —, ապ, եք, իճ վերջավորությունները, իսկ միջին հայերենում (այսպես և աշխարհաբարում) -ա, -ար, -աւ, -ապ, -այք, -ան:

Այսպես են՝ օրինակ՝

գտանեմ — գտի	գտնում — գտայ
իջանեմ — իջի	իջնում — իջայ
տեսանեմ — տեսի	տեսնում — տեսայ
ելանեմ — ելի	ելնեմ — ելայ
մտանեմ — մտի	մտնեմ — մտայ
հասանեմ — հասի	հասնեմ — հասայ:

Զարմանալին այն է, որ այս վերջավորությունները, ինչպես հետո ընդարձակ պիտի խոսենք, կրավորականի վերջավորություններն են. այնպես որ միջին հայերենի գտայ, գտար, գտաւ, գտապ, գտայք, գտան են ձևերը գրաբարի համար կրավորական են: Ուրիշ խոսքով գրաբարի կրավորականը միջին հայերենում դարձել է ներգործական:

Այս զարմանալի երևույթը կորցնում է իր տարօրինակ կերպարանքը, երբ նկատենք, որ գրաբարի մեջ -ա, -ար, աւ... վերջավորությունները մշտապես և կանոնավորապես կրավորականի հատուկ վերջավորություններ չեն, այլ շատ անգամ ծառայում են նաև իբր ներգործական: Այսպես՝ ոչ միայն Բ լծորդության առաջին տիպարը (խօսիմ) և Գ լծորդության բ տիպարը (զողանամ), այլև Դ լծորդության բ տիպարը (զգենում) և Բ լծորդության բ տիպարը (ուսանիմ), ինչպես և անկանոն բայերից ունիմ, տանիմ, ճանաչեմ, յառնեմ, ուտեմ, երթամ՝ իրենց կատարյալը կազմում են -ա, -ար, աւ... ձևով, թեև ընդհանրապես ներգործական են:

Միջին հայերենում այսպիսի կրավորակերպ վերջավորությունների իբրև ներգործական գործածությունը ամենևին խանդարիչ չէր իմաստի տեսակետից, որովհետև միջին հայերենը, ինչպես և արդի աշխարհաբարը, ուներ իր սեփական կրավորականը՝ իլ, ձևով:

Այսպիսով միջին հայերենի (և աշխարհաբարի) կատարյալի -ա, -ար, աւ վերջավորությունը իրապես ոչ թե կրավորականից ներգործականի անցում է (հմմտ. Karst, 326), այլ լծորդության մասնակի փոփոխություն:

Կատարյալի այս ձևափոխությունը գտնում ենք արդեն ժ դարի սկզբից. այսպես՝ Մատթեոս Ուռհայեցին գիտե իջաւ, հասաւ, մտաւ, Միխայել Ասորին՝ ելաւ, մտաւ, Մխիթար Հերացին՝ տեսայ, ելաւ, հասաւ, եղաւ, եղան, Վաստակոց գիրքը՝ գտան, մտաւ, եղաւ են ձևերը: Արևելահայ գրողներից էլ Վարդան պատմիչը գիտե իջաւ, տեսաւ և Առ. Օրբելյան՝ գտայ, գտաւ, իջայ, իջաւ, իջան, տեսայ, տեսաւ, ելաւ ձևերը (Karst, 327):

Կատարյալի այս ձևափոխության գրդիչ պատճառներից մեկն էլ եղավ անշուշտ նախահավելվածի գործածությունը՝ կատարյալի եզակի գ դեմքի վրա, որ ներկայացնում էր որոշ դժվարություններ:

Անցնենք խոսելու այս մասին:

դ. Նախահավելվածն

Վերը տեսանք նախահավելվածի գործածության հանգամանքները.— այս նախահավելվածը գրաբարում դրվում էր այն բոլոր բայական ձևերի վրա (բացի հրամայականից), որոնք հասել էին միավանկի:

Այս վիճակը շարունակվում է նաև միջին հայերենում ավելի մեծ չափերով քան գրաբարում (Karst, 321), այնպես որ միավանկ կատարյալի ձևերը կամ ջնջվում են և կամ առանում են անպատճառ նախահավելվածը: Այսպես՝ միջին հայերենում կաց, լից, ճաճ ձևերը բոլորովին հնացած և կրճատ ձևեր են և նախահավելվածի գործածությունը պարտադիր է: Այսպես օրինակ՝ եած, եառ, եզարկ, եբող, եճաճ, եսպաճ, եճաս: Ընդհակառակը, դնեմ և առնեմ բայերը կատարյալի մեջ դառնալով դրի, դրիր, դրաք, դրիք, դրին և առի, առիր, առաք, առիք, առին, իբրև երկվանկ՝ ազատ են մնացել նախահավելվածից: Իսկ գամ բայի կատարյալը պահում է անշուշտ նախահավելվածը, ըստ որում միավանկ է (եկի, եկիր, եկաք, եկիք, եկին):

Վերջին երեք՝ բայերը (դնել, տալ, գալ) հետաքրքիր են նրանով, որ իրենց կատարյալի եղակի գ դեմքը (գրբ. եդ, ետ, եկն) բոլորովին միանմանի վերածված լինելով, նախահավելվածն առանալով հանդերձ, միջին հայերենում ստացել են ևս մի նոր հավելված (եր-) և դարձել երկվանկի։ Այսպես նույն բայերի մեջ. հմ. կոր. հզ. գ դեմքի ձևն է՝

դնել — երեդ «դրավ»
տալ — երետ «տվից»
գալ — երեկ «եկավ»։

Այս ձևերը գործածվում են ԺԲ դարից սկսած. այսպես Գրիգոր Երիցն ունի երեկ ձևը. օրինակ՝ Ի թուին ՇՂԱ երեկ թագաւորն Յունաց. Եւ ի նմին աւուր, յորժամ անդ կարմիր ձիւն երեկ յերկինս քրիստոնէից, երեկ ձիւն սպիտակ և մոխրախառն։— Նաև Մխիթար Հերացին՝ Եւ իմանաս որ չերմ ի վճառ երեկ (էջ 14)։

Նույն ժամանակից է երետ ձևը (Այտն. Ա, 144), իսկ Ե դարում մի անգամ հիշված երետ ձևը անշուշտ հետին գրչագրական վրիպակ է (հմմտ. Այտն. Բ, 72 և Karst, 322)։

Ավելի ուշ այս ձևերը սովորական են դառնում. օրինակ՝ երեկ ունին Անտիոք Անտիոքայ, Սմբատ պատմիչ, նաև Վարդան պատմիչ՝ էջ 155, երետ ունին Անտիոք, Սմբատ պատմիչ, Լևոնի երգը, նաև Վարդան պատմ. էջ 157, 161, Ստեփ. Օրբել. և երետ գրչութեամբ էլ՝ Ակնի 1310 թվի մի արձանագրութեան (Շիրակ, 79)։— երեդ ձևն էլ հիշում է Այտն. Բ, 72։ Նաև Ախթամարցին, Ադուէտագիրքը և Պղնձե քաղաքը դիտեն երեկ, երետ ձևերը, որոնց հետ կա դարձյալ հրամ. եդ. ը դեմքի արեկ ձևը՝ որ ունին Անտիոք Անտիոքայ և ավելի ուշ ժամանակի գործեր։

Հետաքրքիր է անշուշտ իմանալ, թե ինչ ծագում ունեն այս երեդ, երետ և երեկ ձևերը։

Այս մասին Աբանյանը ոչ մի բացատրություն չի տալիս։ Կարսար (էջ 323) տալիս է հետևյալ բացատրությունը, որ կրկնում է նաև Մաքսուդյանը (Արրա. 1913, էջ 408—9)։

Երեք բայերի կատարյալը գրաբարում ուներ եկի, եկիր, եկն, եղի, եղիր, եղ, ետու, ետուր, ետ ձևերը։ Սրանց մեջ ե թեև նախահավելված էր, բայց այնպես էր միացել ինացյալ մասի հետ, որ բոլորովին արմատական էր դարձել։ Այսպես, օրինակ՝ գալ բայի արմատն էր եկ։ Համապատասխան սրանց եզ. գ դեմքը եկն, ետ, եղ՝ մի կողմից բոլորովին միանմանի վերածված լինելով և մյուս կող-

մից չունենալով որևէ տարբերիչ նշան մյուս դեմքերից, (մինչդեռ ճասի, եճաս, բերի, երեր են ունեին այդպիսի տարբերիչ նշան), պարտադիր կերպով պիտի առանային նախահավելվածը։ Եվ որովհետև նրանք միջին հայերենում հնչվում էին yeg, yed, yet, իրեն բաղաձայնով սկսող բառեր՝ նախահավելվածն առանալով՝ պիտի դառնային *եկն, *ետ, *եղ։ Բայց եյ ձայնախումբը անսովոր երևույթ է հայերենի մեջ, ուստի սրանք վերածվեցին եղան *եղեկ, *եղետ, *եղեդ, որից հետո էլ երեկ, երետ, երեդ։

Փոխոխության պատճառը եղավ երեկ բառը։

Մի քանի արևելյան լեզուների մեջ գնալ և գալ բայերը «վեր կենալ, գրբ. յառնել» բայի հետ են կապվում։ Օրինակ՝ թրք. asmak են qalqdə gitdi, ճիշտ ինչպես հյ. վեր կացավ գնաց կամ ելավ գնաց, պարսկերեն asmak են ber xīz u biyā «վեր կաց և եկ»։ Օրինակ Ալլամը գրում է.

Bér xīz u biya búta beráyi di'li mā
«Վեր կաց և եկ, ով կուռք, մեր սրտի համար»։

Ճիշտ սրա նման էլ, միջին հայերենում ասում էին (գրաբարի յառնել բայի հրամայական արի «վեր կաց» բառի հարադրությամբ) արի՛ եկ։ Այս գործածը այնքան սովորական դարձավ լեզվի մեջ, որ մի կողմից եկ բայը կրճատվեց և արի՛ առացավ «եկ» նշանակությունը (այսպես՝ Երևանի բարբառում, արևելյան գրականում, որոնց մեջ եկ բայն էլ առհասարակ չնչվեց), և մյուս կողմից արի եկ գործածը կրճատվելով գործած արեկ։

Արեկ, իբրև հրամայական, «եկ» նշանակությամբ գործածված է արդեն Վրք. հց. ք. 124 (արեկ բառնամ զքեզ), ավելի ուշ Անտիոք Անտիոքայ մեջ, էջ 25, 75։ Նույնը հետո գործած նաև կատարյալ, հմմտ. Առ իս արեկ (Յովհաննեան, հետազօտ. Բ, 335)։

Ըստ կարսարի այս արեկ հրամայականի ազդեցությամբ՝ *եղեկ ձևն էլ դարձավ երեկ, որ և իր հետ *եղետ, *եղեդ ձևերն էլ դարձրեց երետ, երեդ։

Այս երեդ ձևի հետ կար նաև եղիր (նույն նշանակությամբ), շատով պիտի ավելանային եկաւ, դրաւ, տուաւ ձևերը։ Մրցման մեջ երեկ, երետ, երեդ վերջապես հաղթվեցին և ջնջվեցին, տեղի տալով նորեկ -աւ ձևին։ Այսօր ինում են նրանք մի քանի բարբառներում միայն. այսպես՝ լենահայ բարբառում երեկ «եկավ» և երետ «տվից» (1463 թվից. տես Բժշկասց. Ճնպրհ. ի Լենահատան, Վենետ. 1830, էջ 87, 149, 151), Նոր-Ջուղայի բարբառում արեկ

«հևալ» և արեւ «տվնց», որոնք իրրև հնացած ձևեր՝ գործածվում են յեկավ և ավեց ձևերի հետ (աՙս իմ Քնն. Նոր-Ջղ. բրբ, էջ 240 և 244)։ Թիֆլիսի բարբառում երիա «տուեց» և Լոռիի ևնթաբարբառում՝ երի «հևաւ» և երեդ «գրեց»։ Նախահավելվածի իրրև վերջին հետք՝ բացի սրանցից ունենք նաև Թիֆլիսի բարբառում երի (<երեր) և Լոռիի ևնթաբարբառում երեր (<երեր)), որոնք միաժամանակ գործածական են դեռ բերաւ համանիշ ձևի հետ։

12. ԽՈՆԱՐՀՈՒՄԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բարբառների մեջ խոնարհումը ներկայացնում է միջին հայերենի խոնարհման շարունակութիւնն ու զարգացումը։

Դնում ենք ալստեղ մի քանի կարևոր բարբառների խոնարհման ամբողջական պատկերը, սկսելով կը ճյուղից և անցնելով նախ ում ճյուղին և հետո ել ճյուղին։

Ա. ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութիւնները (ել, իլ, ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (անել, անիլ, անալ, նուլ) Պոլսի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութիւնները։

Ա. լծորդութիւն

ներկա		անկատար	
եմ>էմ	եմք>էնք	էի>էլի	էաք>էլինք
ես>էս	եք>էք	էիր>էլիր	էիք>էլիք
է>է	են>էն	էր>էր	էին>էլին

կատարյալ

եցի>էցի	եցաք>էցինք
եցեր>էցիր	եցէք>էցիք
եաց>էց	եցին>էցին

Բ. լծորդութիւն

ներկա		անկատար	
իմ>իմ	իմք>ինք	էի>էլի	էաք>էլինք
իս>իս	իք>իք	էիր>էլիր	էիք>էլիք
ի>ի	ին>ին	էր>էր	էին>էլին

կատարյալ

եցայ	էցա	եցաք>էցանք
եցար	էցար	եցայք>էցաք
եցաւ	էցաւ	եցան>էցան

Գ. լծորդութիւն

ներկա		անկատար	
ամ>ամ	ամք>անք	այի>այի	այաք>այինք
աս>աս	ալք>աք	այիր>այիր	այիք>այիք
ալ>ա	ան>ան	այր>ար	ային>ային

կատարյալ

ացի>ացի	ացաք>ացինք
ացեր>ացիր	ացէք>ացիք
աց>աց	ացին>ացին

Դ լծորդութիւնը (իր երկրորդ տիպարով հանդերձ) ջնջված է բարբառից։

Ա. լծորդութեան երկրորդ տիպարը

ներկա		անկատար	
անամ>նէմ	անամք>նէնք	անէի>նէլի	անէաք>նէլինք
անաս>նէս	անէք>նէք	անէիր>նէլիր	անէիք>նէլիք
անէ>նէ	անան>նէն	անէր>նէր	անէին>նէլին

կատարյալ

ի>ի	աք>ինք
էր>իր	էք>իք
—>ավ	ին>ին

Բ. լծորդութեան երկրորդ տիպարը

ներկա	անկատար	կատարյալ
անիմ>նիմ	անէի>նէլի	ալ>ա
անիս>նիս	անէիր>նէլիր	ար>ար
անի>նի	անէր>նէր	աւ>ավ
անիմք>նինք	անէաք>նէլինք	աք>անք

անիք>նիք	անէիք>նէյիք	այք>աք
անին>նին	անէին>նէյին	ան>ան

Գ լծորդութեան երկրորդ տիպարը (անորոշն է նաև կամ անալ, միջին ա ընդելով կամ պահելով)։

ներկա	անկատար	կատարյալ
անամ>նամ	անայի>նայի	ացայ>ցա
անաս>նաս	անայիր>նայիր	ացար>ցար
անայ>նա	անայր>նար	ացաւ>ցավ
անամք>նանք	անայաք>նայինք	ացաք>ցանք
անայք>նաք	անայիք>նայիք	ացայք>ցաք
անան>նան	անային>նային	ացան>ցան

Ըստ այսմ Պոլսի բարբառը ունի երեք լծորդութիւն և երեք ընդհանուր տիպար, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետեւեալ բայերը.

Ա լծ.	սիրել	— բաքնել.
Բ լծ.	խօսիլ	— հաքնիլ
Գ լծ.	խաղալ	— մօռնալ

Խոնարհման մեջ բայի հիմնական ձևերն են սաորադասականի ներկան և անցյալը, սահմանականի կատարյալը, հրամայականը և դերբայները. մնացյալ բոլոր ժամանակները կազմվում են նույն պարզ ձևերից։

Դնում ենք բոլոր լծորդութեանց հիշյալ պարզ ձևերի խոնարհումը։

Ա լծորդութիւն

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կար.
սիրէմ	սիրէյի	սիրէցի
սիրէս	սիրէյիր	սիրէցիր
սիրէ	սիրէր	սիրէց
սիրէնք	սիրէյինք	սիրէցինք
սիրէք	սիրէյիք	սիրէցիք
սիրէն	սիրէյին	սիրէցին

հրամ.— սիրէ, սիրեցէք
դերբ.— սիրող, սիրած, սիրել, սիրեր, սիրէլիք, սիրէլու։
Այսպես են խոնարհվում, օրինակ՝

լսել>լսէլ, լսէցի, լսէ.
բռնել>բռնէլ, բռնէցի, բռնէ.
ձեժել>ձէձէլ, ձէձէցի, ձէձէ.
համբերել>համփերէլ, համփերէցի, համփերէ.
ազատել>ազադէլ, ազադէցի, ազադէ.
վաեել>վաէլ, վաէցի, վաէ.
խաոնել>խաոնէլ. խաոնէցի, խաոնէ.
կլանել>գըլլէլ, գըլլէցի, գլլէ.
ապահանել>ըսպահննել, ըսպահննէցի, ըսպահննէ

Ա լծորդութեան երկրորդ տիպարը

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կար.
բաքնէմ	բաքնէյի	բաքի
բաքնէս	բաքնէր	բաքավ
բաքնէնք	բաքնէյինք	բաքինք
բաքնէք	բաքնէյիք	բաքիք
բաքնէն	բաքնէյին	բաքին

հրամ.— բաք, բաքէք.
դերբ.— բաքնէլ, բաքած, բաքէր, բաքնող, բաքնէլու, բաքնէլիք։
Այսպես են խոնարհվում հետեւյալ բայերը.

թքանել>թուքնել, թուքի, թո՛ւք
խածանել>խաղնէլ, խածի, խա՛ծո
ք....>քաքնել, քաքի, քա՛ք
զարկանել>զարնէլ, զարկի, զա՛րկ

Բ լծորդութիւն

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կար.
խօսիմ	խօսէյի	խօսէցա
խօսիս	խօսէյիր	խօսեցար
խօսի	խօսէր	խօսէցավ
խօսինք	խօսէյինք	խօսէցանք
խօսիք	խօսէյիք	խօսէցաք
խօսին	խօսէյին	խօսէցան

հրամ.— խօսէ, խօսէցէք.
դերբ.— խօսող, խօսած, խօսիլ, խօսէր, խօսէլիք, խօսէլու.

Ալսպես են խոնարհվում. օրինակ՝

բանիլ>բանիլ, բանէցա, բանէ
ծնանիլ>ձնիլ, ձնէցա, ձնէ
կանգնիլ>գալնիլ, գալնէցա, գալնէ
հաւանիլ>հաւնիլ, հաւնէցա, հաւնէ
նստիլ>նստիլ, նստէցա, նստէ
մաշիլ>մաշիլ, մաշէցա, մաշէ
յոգնիլ>հոգնիլ, հոգնէցա, հոգնէ
նալիլ>նալիլ, նալէցա, նալէ

Նուշնպես՝ դեղնիլ, խափանիլ, նմանիլ>ըլմանիլ, պակասիլ>բակսիլ, քրքընիլ (քրքընեցա, քրքընէ)։

Բ լծորդության երկրորդ տիպար

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. կար.
հաքնիմ	հաքնէյի	հաքա
հաքնիս	հաքնէյիր	հաքար
հաքնի	հաքնէր	հաքայ
հաքնինք	հաքնէյինք	հաքանք
հաքնիք	հաքնէյիք	հաքաք
հաքնին	հաքնէյին	հաքան

հրամ.— հաքի(ր), հաքէք.

դերբ.— հաքնիլ, հաքած, հաքէր, հաքնող, հաքնելու, հաքնէլիք։

Ալսպես են խոնարհվում. օրինակ՝

անցանիլ>անիլ, անցա, անցէ
հասանիլ>հասնիլ, հասա, հասնի
մեռանիլ>մէռնիլ, մէռա, մէռի
բուսանիլ>փուսնիլ, փուսա, փուսի(ր)
հառաջանիլ>հառնիլ, հառա, հառի(ր)։

Ալսպես են խոնարհվում նաև -չիլ վերջավորած բայերը, որոնք կատարյալի, հրամայականի անցյալ դերբայի մեջ չ ձայնը չնջում են. ալսպես՝ կպչիլ>գըպճիլ (գըպիլ). գըբա, գբի, գրած, գբէր

փախչիլ>փախճիլ (փախիլ), փախա, փախի, փախած, փախէր
թռչիլ>թռիլ, թռա, թռի, թռած, թռէր

դպչիլ>տպճիլ (դբիլ), դըբա, դբի, դրած, դբէր
փախչիլ>փակճիլ (փագիլ), փագա, փագի, փագած, փագէր
փչիլ>փւճիլ (փլիլ), փլա, փլի, փլած, փլէր

բայց հանգչիլ>հանքճիլ, պահելով չ ձայնը՝ լինում է հանքճէցա, հանքճէ (իբր բ լծորդություն)։

Գ լծորդություն

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. անց.
խաղամ	խաղալի	խաղացի
խաղաս	խաղալիր	խաղացիր
խաղա	խաղար	խաղաց
խաղանք	խաղալինք	խաղացինք
խաղաք	խաղալիք	խաղացիք
խաղան	խաղալին	խաղացին

հրամ.— խաղա, խաղացէք

դերբ.— խաղալ, խաղացած, խաղացէր, խաղացող, խաղալու, խաղալիք։

Ալսպես են խոնարհվում, օրինակ՝

թնձկալ>թղթալ, թղթացի, թղթա
լուանալ>վալ, վացի, վա
խնդալ>խնդալ, խնդացի, խնդա
երերիլ>էրէրալ, էրէրացի, էրէրա
հագալ>հազալ, հազացի, հազա
հաւաւալ>հավրտալ, հավրտացի, հավրտա
հաւաւալ>հավդալ, հավդացի, հավդա
ճնալ>ճնալ, ճնացի, ճնա
հևալ>հէվալ, հէվացի, հէվա
մուրանալ>մուրալ, մուրացի, մուրա
երևիլ>էրէվալ, էրէվացի, էրէվա

Գ լծորդության երկրորդ տիպար

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. կար.
մօռնամ	մօռնալի	մօռցա
մօռնաս	մօռնալիր	մօռցար
մօռնա	մօռնար	մօռցավ

մօռնանք	*մօռնալինք*	*մօռցանք*
մօռնաք	*մօռնալիք*	*մօռցաք*
մօռնան	*մօռնալին*	*մօռցան*

հրամ.— *մօռցի(ր), մօռցէք.*

դերբ.— *մօռնալ, մօռցած, մօռցէր, մօռցող, մօռնալու, մօռնալիք*

Այսպես են խոնարհվում. օրինակ՝

ամաչել>ամըշնալ, ամըծծա, ամըճճի(ր)
դիտել>գիտնալ, գիտծա, գիտծի(ր)
դողանալ>գօղնալ, գօղծա, գօղծի ր)
դառնալ>դառնալ, դառցա, դառցի(ր)
դիմանալ>գիմանալ, գիմացա, գիմացի(ր)
թուլանալ>թուլնալ, թուլցա, թուլցի(ր)
իմանալ>իմանալ, իմացա, իմացի(ր)
կալ>գէնալ, գէցա, գէցի(ր)
կարենալ>գրնալ, գրցա, գրցի(ր)
կարօտանալ>գարօտնալ, գարօծծա, գարօծծի(ր)
հասկանալ>հասկընալ, հասկըցա, հասկրցի(ր)
հիւանդանալ>հըվընտնալ, հըվընծծա, հըվընծծի(ր)
ճանաչել>ճաշնալ, ջանծծա, ջանծծի(ր)
մնծանալ>մէծնալ, մէծնծծա, մէծնծծի(ր)
մեղքանալ>մէխկընալ, մէխկըցա, մէխկըցի(ր)
մօտիլ>մօգէնալ, մօգէցա, մօգէցի(ր)
նեղանալ>նեղնալ, նէղծա, նէղծի(ր)
» *>նէղանալ, նէղացա, նէղացի(ր)*
շատանալ>շատնալ, շատծա, շատծի(ր)
ողջանալ>օղջընալ, օղջընցա, օղջընցի(ր)
ուռիլ>ուռէնալ, ուռէցա, ուռէցի(ր)
պառաւիլ>բառվընալ, բառվըցա, բառվըցի(ր)
**ոնդանալ>ընդնալ, ընդծա, ընդծի(ր)*
վախենալ>վախնալ, վախծա, վախծի(ր)
տաքանալ>դաքնալ, դաքծա, դաքծի(ր)
ցածանալ>ցագնալ, ցածծա, ցածծի(ր)
քչանալ>քիչնալ, քիչծա, քիչծի(ր)
քնել>քնանալ, քնացա, քնացի(ր)

Անխոնարհելի բայերը կազմվում են այս ձևով, մինչև իսկ դո-ւլականների հոլովել ձևից. ինչպես՝ շնօրքօվել։

ՆԵՐՔԻՆ ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոնարհման մեջ բարբառիս հատուկ կարևոր մի կէտ էլ այն է, որ որոշ բաղաձայններ զանազան ժամանակներում կրում են որոշ ձայնական փոփոխութիւններ. այսպես՝

ծ ձայնը կատարյալում, հրամայականում, երկու անցյալ դերբայներում (այսինքն այն բոլոր դէպքերում, ուր ծ ընկնում է բառավերջում կամ ձայնավորի մոտ), դառնում է ձ։ Այս միևնույն ժամանակներում, երբ ծ ընկնում է ց-ի մոտ, միանալով նրա հետ՝ դառնում է ծծ։ Իսկ ապառ. ներկայում, ապառ. անցյալում, անորոշում, ներկա և երկու ապառնի դերբայներում (այսինքն այն բոլոր դէպքերում, ուր ծ ընկնում է բաղաձայնի մոտ), դառնում է զ. այսպես են՝ խածանել>խազնել, խազնեմ, խազնելի, խածի, խած, խածէք, խածած, խածէր, խազնելու, խազնելիք.— ցածանալ>ցազնալ, ցազնամ, ցազնալի, ցածծա, ցածծի(ր), ցածծած, ցածծէր, ցածծող, ձազնալու, ցազնալիք.— մնծանալ>մէզնալ, մէզնամ, մէզնալի, մէծծա, մնծծի(ր), մնծծած, մէծծէր, մէծծող, մէզնալու, մէզնալիք։

ց ձայնը համապատասխան պայմաններում տալիս է ց կամ ս. այսպես կատարյալում, հրամայականում, երկու անցյալ դերբայներում (այսինքն այն բոլոր դէպքերում, ուր ց ընկնում է բառավերջում կամ ձայնավորի հետ) դառնում ց. իսկ ապառ. ներկայում, ապառ. անցյալում, անորոշում, ներկա և երկու ապառնի դերբայներում (այսինքն այն բոլոր դէպքերում, ուր ց ընկնում է և բաղաձայնի մոտ) դառնում է ս։ Այսպես է անցանել>ասնիլ, ասնիմ, ասնէլի, անցա, անցի(ր), անցած, անցէր, ասնող, ասնէլու, ասնէլիք։

չ ձայնը համապատասխան պայմաններում տալիս է ծծ կամ շ. ինչ. ճանաչել>ճանչնալ>ջանչնալ, ջանչնամ, ջանչնալի, ջանծծի(ր), ջանչնալու, ջանչնալիք, ջանծծող, ջանծծած։ Այսպես և ամաչել>ամըշնալ, ամըշնալ. ամըծծա են։

ղ ձայնը՝ երբ պատահում է ց-ի մոտ, դառնում է խ, իսկ ց ձայնն էլ դարձնում է ծ. այսպես նեղանալ>նէղնալ, նէղնամ, նէղծի(ր), գողանալ>գօղնալ, գօղծա, գօղծի(ր)։

Առանձնական դ, տ, բ ձայնները՝ երբ պատահում են ց-ի մոտ, նրա հետ միանալով տալիս են ծծ, ինչ. գիտել>գիտնալ, գիծծա, գիծծի(ր), կարօտանալ>գարօտնալ, գարօծծա, հիվանդանալ>հըվընտնալ, հըվընծա, շատանալ>շատնալ, շատծա են։

Ի, ի ձայների մոտ բայական վերջավորութ յանց ց ձայնը դառնում է ծ, ինչպես՝ տաքանալ>դաքնալ, դաքծա, վախենալ>վախնալ, վախծա և այլն։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Ա լծորդության անորոշի -ել վերջավորությունը դարձել է -էլ. ներկայում դրվում են -իմ, իս, -է, -ինք, -իք, -ին վերջավորությունները, որով ներկայի խոնարհումը նույնացած կլինի երկրորդ լծորդության խոնարհման հետ (բացի եզ. գ դեմքից), ինչպես է նաև անկատարում, բայց կատարյալի մեջ հին հայերենի վերջավորությունները պահվում են, որով և երկու լծորդությունները զանազանվում են դարձյալ իրարից։ Այսպես՝

ներկա		անկատար	
եմ>իմ	եմք>ինք	էի>էլի	էաք>էլինք
ես>իս	էք>իք	էիր>էլիր	էիք>էլիք
է>է	են>ին	էր>էր	էին>էլին

կատարյալ

եցի>էցի	եցաք>էցինք
եցեր>էցիր	եցէք>էցիք
եց>էց	եցին>էցին։

Բ լծորդության անորոշի -իլ վերջավորությունը լինում է -էլ, ներկայի, անկատարի և կատարյալի վերջավորությունները հետևում են հին հայերենի վերջավորությանց, որով Բ լծորդության տիպարը պահվում է։

ներկա		անկատար	
իմ>իմ	իմք>ինք	էի>էլի	էաք>էլինք
իս>իս	իք>իք	էիր>էլիր	էիք>էլիք
ի>ի	ին>ին	էր>էր	էին>էլիք

կատարյալ

եցայ>էցա	եցաք>էցանք
եցար>էցար	եցայք>էցաք
եցաւ>էցավ	եցան>էցան։

Գ լծորդության անորոշի վերջավորությունն է հին հայերենի պես -ալ, խոնարհման մեջ հին հայերենի վերջավորությունները գրեթե անփոփոխ պահվում են. այսպես՝

ներկա		անկատար	
ամ>ամ	ամք>անք	այի>ային	այաք>այինք
աս>աս	ալք>ալք	այիր>այիր	այիք>այիք
ալ>ա	ան>ան	այր>ար	ային>ային

կատարյալ

ացի>ացի	ացաք>ացինք
ացեր>ացիր	ացէք>ացիք
աց>աց	ացին>ացին։

Դ լծորդությունը առհասարակ ջնջված է մեր բարբառներում, այսպես նաև Նոր-Նախիջևանի բարբառում և նրան հետևող քայլերը վերածվել են ուրիշ լծորդությանց. ինչպես՝ թողուլ՝ որ դարձել է թօղցնել, իբրև անցողական։

Ա լծորդության երկրորդ տիպարը անորոշում պահում է հին ձևը (-անել>-ցնել). հին հայերենի վերջավորությունները գրեթե անփոփոխ մնում են ամբողջ խոնարհման մեջ։ Բայց այս խոնարհման հետևում են միայն մի քանի բայեր, մնացյալները բոլորը ձևափոխվելով անցել են Բ լծորդության ընդհանուր տիպարին։ Այնպես որ կարող ենք ասել, թե Ա լծորդության ընդհանուր տիպարը ջնջված է նոր լեզվի մեջ։

ներկա		անկատար	
անեմ>նիմ	անեմք>նինք	անէի>նէլի	անէաք>նէլինք
անես>նիս	անէք>նիք	անէիր>նէլիր	անէիք>նէլիք
անէ>նէ	անեն>նին	անէր>նէր	անէին>նէլին

կատարյալ

ի>ի	աք>ինք
իր>իր	էք>իք
—>ից	ին>ին։

Բ լծորդության երկրորդ տիպարը թեև անորոշի վերջավորությունը դնում է -ցնել, բայց խոնարհման ժամանակ գրեթե անփո-

փոխ պահում է հին հայերենի Բ լծորդության երկրորդ տիպարի վերջավորությունները. այսպես՝

ներկա	անկատար	կատարյալ
-անիմ>-նիմ	-անէի>-նէյի	-այ>-ա
-անիս>-նիս	-անէիր>-նէյիր	-ար>-ար
-անի>-նի	-անէր>-նէր	-աւ>-ավ
-անիմք>-նինք	-անէաք>-նէյինք	-աք>-անք
-անիք>-նիք	-անէիք>-նէյիք	-այք>-աք
-անին>-նին	-անէին>-նէյին	-ան>-ան։

Գ լծորդության երկրորդ տիպարը սկզբից մինչև վերջը պահում է հին հայերենի վերջավորությունները. ինչպես՝

ներկա	անկատար	կատարյալ
-անամ>-նամ	-անայի>-նայի	-ացայ>-ցա
-անաս>-նաս	-անայիր>-նայիր	-ացար>-ցար
-անայ>-նա	-անայր>-նար	-ացաւ>-ցավ
-անամք>-նանք	-անայաք>-նայինք	-ացաք>-ցանք
-անայք>-նաք	-անայիք>-նայիք	-ացայք>-ցաք
-անան>-նան	-անային>-նային	-ացան>-ցան։

Դ լծորդության երկրորդ տիպարը՝ առաջին տիպարի նման բոլորովին ջնջված է նոր բարբառներում. բայց Նոր-Նախիջևանի բարբառը մյուս բարբառներից դանազանվում է նրանով՝ որ նորից է վերականգնում այս տիպարը՝ պահելով հին հայերենի առնում բայը և առաջին լծորդության երկրորդ տիպարին վերաբերող բայերի մի մասը վերածելով այս տիպարին, ինչպես՝ գուդնում «գտանեմ», դեսնում «առնանեմ», մուդնում «մտանեմ», բուքնում «բռքանեմ», հեծնում «հեծանեմ»։

Ըստ այսմ Նոր-Նախիջևանի բարբառը ունի երեք լծորդություն և չորս ընդհանուր տիպար, որոնց խոնարհման համար կառնենք հետևյալ օրինակները.

Ա. լծ. լսել, լսիմ — բաքնել, բաքնիմ
Բ լծ. հարութել, հարութիմ — հաքնել, հաքնիմ
Գ լծ. խաղալ, խաղամ — մօռնալ, մօռնամ
Դ լծ. — մդնել, մուդնում։

Խոնարհման մեջ բայի հիմնական ձևերն են սաորադասականի ներկան և անցյալը, սահմանականի կատարյալը, հրամայականը և դերբայները. միացյալ բոլոր ժամանակները (սահմանական ներկա, անկատար, ապառնի են) կազմվում են նույն պարզ ձևերից։

Այստեղ դնում ենք բոլոր լծորդություններից հիշյալ պարզ ձևերի խոնարհումը.

Ա լծորդություն

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կար.
լսիմ	*լսէյի*	*լսեցի*
լսիս	*լսէյիր*	*լսեցիր*
լսէ	*լսէր*	*լսից*
լսինք	*լսէյինք*	*լսեցինք*
լսիք	*լսէյինք*	*լսեցիք*
լսին	*լսէյին*	*լսեցին*

հրամ.— լսէ, լսեցէք.
դերբ.— լսող, լսած, լսիլ, լսել, լսելիք, լսելու.

Այսպես են խոնարհվում ի մեջ ալլոց՝

աշխատել>աշխադէլ «շահիլ», կար. աշխադեցի
բռնել>բռնել, բռնեցի
համբերել>համփըրել, համփըրեցի
համբուրել>համփըրել, համփըրեցի
հանել>հանել, հանեցի
մաշել>մաշել, մեշեցի
մխոցրել>մխոտրել, մխոտրեցի
ողորմիլ>օղորմել, օղորմեցի
պաղատիլ>բաղադել, բաղադեցի
վառել>վառել, վառեցի։

Ա. լծորդության երկրորդ տիպար

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կար.
բաքնիմ	*բաքնէյի*	*բաքի*
բաքնիս	*բաքնէյիր*	*բաքիր*
բաքնէ	*բաքնէր*	*բաքից*
բաքնինք	*բաքնէյինք*	*բաքինք*

բաքնիք	բաքնէլիք	բաքիք
բաքնին	բաքնէլին	բաքին

հրամ.— բաք, բաքէք

դերբ.— բաքնէլ, բաքած, բաքիլ, բաքնօղ, բաքնէլու, բաքնէլիք։

Ալապես են մի քանի սակավաթիվ բայեր, որոնք են՝

պագանել>բաքցնել, բաքի
թքանել>թուքցնել, թուքի
խածանէլ>խածնել, խածի
ք... >քաքնէլ, քաքի

«Խածանել» բայը ունի երկա. ձև. հին բարբառով խածնել, նոր բարբառով խազնել, խոնարհման մեջ ն ծնում է ամեն տեղ՝ ուր կա մի հաջորդական ձայնասղոր. այսպես՝ կատարյալին, հրամայականի և անցյալ դերբայի կրկին ձևերի մեջ.

Ա. լծորդություն

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. կար.
հարփիմ	հարփէլի	հարփէցա
հարփիս	հարփէլիր	հարփէցար
հարփի	հարփէր	հարփեցավ
հարփինք	հարփէլինք	հարփէցանք
հարփիք	հարփէլիք	հարփէցաք
հարփին	հարփէլին	հարփէցան

հրամ.— հարփէ, հարփեցէք.

դերբ.— հարփէլ, հարփած, հարփիլ, հարփօղ, հարփէլու, հարփէլիք։

Թուխոխում ներկ. եզ. 1 դեմքը վերջանում է միշտ ի փխ. ի, որով նմանանում է Ա. լծորդության հետ, ինչպես՝ հարփի՛, փանի՛, գայի՛, ուզի՛։

Ալս լծորդության տակ են գնում ի մեջ ալլոց,

բանիլ>բանէլ, բանէցա
բուսանիլ>փանէլ, փաննեցա
գանգատիլ>գանդըդվիլ, վէցա
զարթնուլ>զաշթէլ, զաշթէցա

ծնանիլ>ձնէլ, ձնէցա
կանգնիլ>գայնէլ, գայնէցա
հանդիպիլ>հանդըբէլ, հանդըբէցա
հաւանիլ>հաւնէլ, հաւնէցա
մաշիլ>մաշէլ, մաշէցա, մաշէ (թե՛ ներգործական և թե՛ չեզոք գործածութեամբ)։
յոգնիլ>հոքնէլ, հոքնէցա
նայիլ>նայլէլ, նայլէցա
շարժկիլ>ժաշքըթէլ, ժաշքըթէցա
ուռիլ>ուռէլ, ուռէցա
վայելիլ>վայլէլ, վայլէցա
վառիլ>վառէլ, վառէցա, վառէ (թե՛ ներգործական և թե՛ չեզոք գործադրութեամբ)։
ցաւկիլ>ցաթքէլ, ցաթքէցա
քրտնիլ>քրդընէլ, քրդընէցա
օգտիլ>օքդիլ, օքդէցա։

Բ լծորդություն երկրորդ տիպար

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. կար.
հաքնիմ	հաքնէլի	հաքա
հաքնիս	հաքնէլիր	հաքար
հաքնի	հաքնէր	հաքավ
հաքնինք	հաքնէլինք	հաքանք
հաքնիք	հաքնէլիք	հաքաք
հաքնին	հաքնէլին	հաքան

հրամ.— հաքիր, հաքիք.

դերբ.— հաքնէլ, հաքած, հաքիլ, հաքնօղ, հաքնէլու, հաքնելիք։

Թուխոխ գյուղում ներկա եզ. գ. դեմքը՝ նախորդի նման վերջավորվում է միշտ ի, ինչպես՝ հաքնի, աճցնի են։

Ալս լծորդության տակ են գնում ի մեջ ալլոց հետևյալ բայերը.

անցանել>անցնէլ, անցա
գաանել>գանէլ, գաա
իջանել>ինչնէլ, ինչա
հասանել>հասնէլ, հասա
հեծանել>հէդնէլ, հէծա

մեռանիլ>մէռնէլ, մէռա
մոռանիլ>մոռնէլ, մոռա
տեսանիլ>տեսնէլ, դէսա։

Այսպես են խոնարհվում նաև -չիլ վերջավորված բայերը՝ որոնք կատարյալի, հրամայականի և անցյալ դերբայի մեջ չ ձայնը ջնջում են. այսպես՝

կպչիլ>գպչէլ, գբա, գբիր, գբիք
փախչիլ>փախչէլ, փախա, փախիր, փախիք
թռչիլ>թռչէլ, թռա, թռիր, թռիք
գպչիլ>ապչէլ (այս բայը գոլութիւն ունի միայն Զալթըրի մեջ, ապչել, մի՛ ապչիր, մի՛ ապչիք ձևերով. ուրիշ ժամանակներ չկան)։

Գ լծորդութիւն

ստոր. ենթկ.	ստոր. անց.	սահմ. կար.
խաղամ	*խաղայի*	*խաղացի*
խաղաս	*խաղայիր*	*խաղացիր*
խաղա	*խաղար*	*խաղաց*
խաղանք	*խաղայինք*	*խաղացինք*
խաղաք	*խաղայիք*	*խաղացիք*
խաղան	*խաղային*	*խաղացին*

հրամ.— *խաղա, խաղացէք.*

դերբ.— *խաղալ, խաղացած, խաղացիլ, խաղացօղ, խաղալու, խաղալիք։*

Այսպես են խոնարհվում ի մեջ այլոց՝

թռնձկալ>թռնձգալ, թռնձգացի
խնդալ>խնդալ, խնդացի
հազալ>հազալ, հազացի
հաւատալ>հաւատալ, հաւատացի
հեծկլտալ>հէծգըլտալ, հէծգըլտացի
հևալ>հէվալ, հէվացի
ործկալ>օրճգալ, օրճգացի,— նաև՝
ուզել>ուզենալ, ուզանալ (ենթկ. ուզենամ, ուզանամ, անց. ուզենայի, ուզանայի, կար. ուզացի, հրամ. ուզա)։

Գ լծորդութիւն երկրորդ տիպար

ստոր. ենթկ.	ստոր. անց.	սահմ. կար.
մօռնամ	*մօռնայի*	*մօռցա*
մօռնաս	*մօռնայիր*	*մօռցար*
մօռնա	*մօռնար*	*մօռցավ*
մօռնանք	*մօռնայինք*	*մօռցանք*
մօռնաք	*մօռնայիք*	*մօռցաք*
մօռնան	*մօռնային*	*մօռցան*

հրամ.— *մօռցիր, մօռցիք.*

դերբ.— *մօռնալ, մօռցած, մօռցիլ, մօռցօղ, մօռնալու, մօռնալիք։*

Այսպես են խոնարհվում ի մեջ այլոց՝

ամաչել>ամըշնալ, ամըշցա
բառնալ>բառնալ, բառցա
գիտել>գիդնալ, գիդցա
գողանալ>գօղնալ, գօղցա
դառնալ>դառնալ, դառցա
դիմանալ>դիմանալ, դիմացա
երևիլ>էրեվնալ, երևցա
թուլանալ>թուլանալ, թուլացա
իմանալ>իմանալ, իմացա
խոստանալ>խոստանալ, խոստացա
կալ>գէնալ, գէցա
կամիլ>գամէնալ, գամէցա
կարենալ>գրնալ կամ գարնալ, գրցա կամ գարցա
հասկանալ>հասկընալ, հասկըցա
հնանալ>հինանալ, հինցա
հպարտանալ>հաբըրնալ, հաբըրցա
ճանաչել>ջաշնալ, ջանչըցա կամ ջանցըցա
շփանալ>շփանալ, շփացա
ունել>ունէնալ, ունէցա
պարծիլ>բարձէնալ, բարձէցա
սովորիլ>սօրվէնալ, սօրվէցա
տառնալ>տառնալ, տառցա
քաղցնուլ>քախցընալ, քախցըցա։

Դ լծորդութ յան երկրորդ տիպար

սաոր. ներկ.	սաոր. անց.
մուդնում	մուդնուլի
մուդնուս	մուդնուլիր
մուդնու	մուդնուր
մուդնունք	մուդնուլինք
մուդնուք	մուդնուլիք
մուդնուն	մուդնուլին:

Այս խոնարհման հետևում են գաանեմ>գուդնում, տեսանեմ>դեսնում, մտանեմ>մուդնում, թքանեմ>թուքնում, հեծանեմ>հեծնում բայերը: Այս բոլորն էլ սակայն ունեն միայն սաոր. ներկա և անցյալ (և նրանցից ածանցված) ձևերը. մնացյալ ձևերը խոնարհվում են ուրիշ լծորդութ յամբ: Այսպես՝ թքանել հետևում է Ա լծորդութ յան երկրորդ տիպարին, իսկ մյուս չորս բայերը (գտանեմ, տեսանեմ, մտանեմ, հեծանեմ) Բ լծորդութ յան երկրորդ տիպարին: Առհասարակ այս լծորդութ յունը ջնջվելու վրա է: Ներկայի եզ. գ դեմքը քաղաքի մեջ վերածված է Ա լծորդութ յան (գդնե, դեսնե, մդնե, թուքնե, հեծնե), թեև հները խոնարհում էին չորրորդ լծորդութ յամբ. Պատկանյանի ժամանակ դեռ ասում էին գու մուդնու (Պատկ. Բ, էջ 298), մյուս դեմքերը նոր լեզվի մեջ լսվում են թե՛ Դ լծորդութ յան, և թե՛ Բ լծորդութ յան ձևով: Անցյալ անկատարի ձևը քաղաքում առհասարակ դարձել է Բ լծորդութ յան, թեև հների մեջ կենդանի էր: Գյուղերը թե՛ ներկան, և թե՛ անցյալը պահել են անփոփոխ Դ լծորդութ յամբ:

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի երեք լծորդութ յուններըը (ել, իլ, ալ) և նրանց երկրորդ տիպարները (աճել, անիլ, ացալ) Վանի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութ յունները.

Ա լծորդութ յուն

ներկա		անկատար	
եմ>եմ	եմք>ենք	էի>ի	էաք>ինք
ես>ես	էք>էք	էիր>իր	էիք>իք
է>ի	են>են	էր>էր	էին>ին

կատարյալ

եցի>իցի	եցաք>իցինք
եցեր>իցիր	եցէք>իցիք
եաց>եց	եցին>իցին

Բ լծորդութ յուն

ներկա		անկատար	
իմ>եմ	իմք>ենք	էի>ի	էաք>ինք
իս>ես	իք>էք	էիր>իր	էիք>իք
ի>ի	ին>են	էր>էր	էին>ին

կատարյալ

եցայ>ա	եցաք>անք
եցար>ար	եցայք>աք
եցաւ>ավ	եցան>ան

Գ լծորդութ յուն

ներկա		անկատար	
ամ>ամ	ամք>անք	ալի>ի	ալաք>ինք
աս>աս	ալք>աք	ալիր>իր	ալիք>իք
ալ>ա	ան>ան	ալր>էր	ալին>ին

կատարյալ

ացի>ացի	ացաք>ացինք
ացեր>ացիր	ացէք>ացիք
աց>աց	ացին>ացին

Ա լծորդութ յան երկրորդ տիպար

ներկա		անկատար	
անեմ>նեմ	անեմք>նենք	անէի>նի	անէաք>նինք
անես>նես	անէք>նէք	անէիր>նիր	անէիք>նիք
անէ>նի	անեն>նեն	անէր>նէր	անէին>նին

կատարյալ

ի>ա	աք>անք

եր>ար էք>աք
—>ավ ին>ան

Բ լծորդության երկրորդ տիպար

ներկա	անկատար	կատարյալ
անիմ>նեմ	անէի>նի	այ>ա
անիս>նես	անէիր>նիր	ար>ար
անի>նի	անէր>նէր	աւ>ավ
անիմք>նէնք	անէաք>նինք	աք>անք
անիք>նէք	անէիք>նիք	այք>աք
անին>նեն	անէին>նին	ան>ան

Գ լծորդության երկրորդ տիպարը (անորոշն է -ցել կամ -ացել՝ միջին ա-ն ջնջելով կամ պահելով)՝

ներկա	անկատար	կատարյալ
անամ>անամ	անայի>անի	ացայ>ացա
անաս>անաս	անայիր>անիր	ացար>ացար
անայ>անա	անայր>անէր	ացաւ>ացավ
անամք>անանք	անայաք>անինք	ացաք>ացանք
անայք>անաք	անայիք>անիք	ացայք>ացաք
անան>անան	անային>անին	ացան>ացան

Այս համեմատական աղյուսակից տեսնում ենք, որ բայերի խոնարհումը մեծ ձևափոխություններ չի ներկայացնում վանի բարբառում: Եղածները գլխավորապես ձայնական են: Նկատելի է, որ Ա լծորդության ներկա ժամանակի ե ձայնավորը ինում է, նույնպես և է. միայն եզ. գ դեմքում է-ն դառնում է ի: Անցյալ ժամանակներում է և այ ձայնները ուր որ ձայնավորի պատահեն՝ ջնջվում են. ինչպես՝ կուզէի>կուզի, կխազայի>կխազի:

Ըստ այմ վանի բարբառը ունի երեք լծորդություն և երեք անցալին տիպար, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետևյալ բայերը.

Ա լծ. ուզել էճնել
Բ լծ. սովրել խալնել
Գ լծ. խաղալ խաստանալ

Այս բաժանումը ըստ գրաբարի է. վանի բարբառը իրապես պահել է միայն Ա լծորդության առաջին տիպարը (կոր. ուզիցի),

Գ լծորդության առաջին և երկրորդ տիպարները (կոր. խաղացի, խաստացա), իսկ մեացյալը (այն է՝ Ա լծորդության երկրորդ տիպարը և Բ լծորդության առաջին և երկրորդ տիպարները) խառնվել և ձուլվել են մեկի մեջ, իբր տիպար ընդունելով Բ լծորդության երկրորդ տիպարը (կոր. խակյա): Այսպիսով վանի բարբառը պահել է միայն գրաբարի չորս տիպարները. այն է Ա լծ. ա տիպար, Բ լծ. բ տիպար և Գ լծ. ա և բ տիպար:

Երկրորդ լծորդության ա տիպարի ջնջումով վանի բարբառը երևանի բարբառի նման դրկվել է միջին հայերենի և պոլսահայ բարբառի (ինչպես և արևմտյան գրականի) այն հատկությունից, որով կարելի է լինում զանազանել ներգործական բայը չեզոքից, առաջինը դնելով էլ վերջավորությամբ, երկրորդը՝ իլ, օր. մարել «հանգցնել» մարիլ «հանգիլ» (ինքնին): Սակայն վանի բարբառում էլ կան մի քանի նման բայեր. ինչպես՝

Պատառել>պատռել. կոր. պատռիցի (ներգործական) և պատառա (չեզոք) «ճաթեցա, ճաքեցա», որ և կրավորականի ձևով պատռըվա:

Փլչիլ>պլել, կոր. պլիցի (ներգործական) փուլ ածեցի, քանդեցի», պլա (չեզոք) «փուլ եկա», առաջինը Ա լծ. ա տիպարով, երկրորդը՝ Բ լծ. ա տիպարով: Այժմ շփոթության առաջը առնելու համար առաջին դեպքում ասում են անցողական բայով՝ պլըցուցի:

Հալիլ>խալել, կոր. խալիցի (ներգործական) և խալա «հալվեցի» (չեզոք):

Ա լծորդության

սաոր. ներկ.	սաոր. անց.	սահմ. կոր.
ուզեմ	ուզի	ուզիցի
ուզես	ուզիր	ուզիցիր
ուզի	ուզէր	ուզից
ուզենք	ուզինք	ուզիցինք
ուզէք	ուզիք	ուզիցիք
ուզեն	ուզին	ուզիցին

հրամ.	դերբ.
ուզի	ուզել, ուզող
մուզե	ուզած
ուզէք	ուզիր. ուզեր, ուզե
մէք ուզե	ուզելու

Գլուխկան բարբառում կար. եզ. ա դեմքի -իցի վերջավորության փոխարեն գտնում ենք -իցիմ, որ կազմված է նեբկալի համանությամբ: Այսպես, օրինակ՝ իփիցիմ, ուզիցիմ և այլն: Նույնը գտնում ենք նաև մյուս ծոբդությունների և անկանոն բայերի մեջ. ինչպես՝ առեցիմ, տվիմ կամ տվեցիմ, պոցիմ, ճստամ, լոցիմ:

Այս խոնարհման տակ են գնում՝

ածել>ածել (հավի), ածիցի
աղօթել>աղօթել, աղօթեցի
այրել>իրիցել, իրիցիցի
անիծել>անիծել, անիծիցի
ապսպարել>ապըսպրել, ապըսպրիցի
արձակել>առցկել, առցկիցի
աւերել>ավիրել, ավիրիցի
բաժանել>պաժնել, պաժնիցի
բամբասել>պամբասել, պամբասիցի
բաշխել>պաշխել, պաշխիցի
բովել>պէօվել, պէօվիցի
բռնել>պռնել, պռնիցի
բրդել>պրտել, պրտիցի
գգե՛>կլըգել, կլըգիցի
գլորել>կլորել, կլորիցի
դեղել>տեղել, տեղիցի
եփել>իփել, իփիցի
զենուլ>զինել, զինիցի
զրուցել>զրիւցել, կար. զրիւցիցի և վերջին վանկի ազմամբ զրիւցի
թաթախել>թաթխել, թաթխիցի
թանալ>թացել, թացիցի
թափել>թափել, թափիցի
թխել>թխել, թխիցի
թրծել>թռծել, թռծիցի
թքանել>թքչել, թքչիցի
ժողովել>ժօղվել, ժօղվիցի
լակել>լակել, լկել, լակեցի, լկիցի
լափել>լափել, լափիցի,
լծել>լծել, լծիցի
լնուլ>լցել, լցիցի

խաբել>խապել, խապիցի
խայթել>խեթել, խեթիցի
խանձել>խոնձրել, խոնձրիցի
խառնել>խառնել, խառնիցի
խարշել>խաշել, խաշիցի
խարտել>խառտել, խառտիցի
խեղդել>խեխտել, խեխտիցի
խլել>խլել, խլիցի
խնայել>խնայել, խնայիցի
խնջել>խնչել, խնչիցի
խրել>խրել «փակել», խրիցի
խօսիլ>խուսել, խուսիցի (աքլորի)
ծալել>ծալել, ծալիցի
ծախել>ծախել, ծախիցի
ծածկել>ծածկել, ծածկիցի
ծամել>ծամել, ծամիցի
ծեփել>ծիփել, ծիփեցի
ծծել>ծծել, ծծիցի
կախել>կախել, կախիցի
կանչել>կանչել, կանչիցի
կապել>կապել, կապիցի
կարել>(կար)>կարել, կարիցի
կարկաուել>կարկըտնել, կարկըտնիցի
կթել>կթել, կթիցի
կծել>կծել, կծիցի
կնքել>կնքլել, կնքլիցի
կշռել>կշռել, կշռիցի
կոխել>կոխել, կոխիցի
կոճակել>կօճկել, կօճկիցի
կոթծել>կռռծել (շուռ տալ), կռռծիցի
կռուել>կռվել, կռվիցի,
կտրել>կտրել, կտրիցի
կրել>կրել, կրիցի
հալել>խալել, խալիցի
համարել>խամրրել, խամրրիցի
հանել>խանել, խանիցի
հաջել>հաճել, խաճիցի
հինել>խինել, խինիցի

հորել>խորել, խորիցի «թաղել»
հորդել>խորտել, խորտիցի
ձգել>իակել, իակիցի
ճարել>ճարել, ճարիցի
մանել>մանել, մանիցի
մաշել>մաշել, մաշիցի
(յ)ուղել>ուղել, ուղիցի
յօտել>էօտել, էօտիցի
շաղաղել>շաղաղել, շաղաղիցի
շինել>շինել, շինիցի
շրջել>սոճել, սոճիցի
ոլորել>էօլէօրել, էօլէօրիցի
ողողել>օղօղել, օղօղիցի
ուղարկել>էօրէօկել, էօրէօկիցի
չարչարել>չորչըրել, չորչըրիցի
պագանել>պաքլել, պաքլիցի
պահել>պախել, պախիցի
պատկել>փսակել, փսակիցի
ջարդել>ճոբտել, ճոբտիցի
սպանանել>ըսպանել, ըսպանիցի
սրբել>սրպել, սրպիցի
սրսկել>սրսըկել, սլսըկիցի
վազել>վոզել, վոզիցի
վայելել>վայիլել, վէլէլ, լէվել,-իցի
վառել>վռռել, վռռիցի
վարել>վռրել, վռրիցի
վարձել>վռրժել, վռրժիցի
տաղել>դողել, դողիցի
տաշել>տաշել, տաշիցի
տապակել>տապկել, տապկիցի
տնկել>տնգլել, տնգլիցի
տփել>տփել, տփիցի «ծեծել»
ցանել>ցանել, ցանիցի
ցնկնել>ցինել, ցինիցի
ցրուել>ցվրել, ցվրիցի
փաթաթել>փոթիւթել, փոթիւթիցի
փակել>փոկել, փոկիցի
փարատել>փարատել, փարատիցի

փշրել>փշրել, փշրիցի
փոխել>փոխել, փոխիցի
փորել>փորել, փորիցի
» >պորել, պորիցի
փչել>փչիլ, փչիցի
փռել>փռել, փռիցի
փխել>փխաել, փխսիցի
քակել>քյակել, քյակիցի
քաղել>քյադել, քյադիցի
քամել>քյամել, քյամիցի
քայլել>քէլել, քէլիցի
քանդել>քյանդել, քյանդիցի
քարշել>քյաշել, քյաշիցի
քերթել>քյըրթել, քյըրթիցի
քորել>քյորել, քյորիցի
քշել>կշել, կշիցի
քսել>կսել, կսիցի
քրքրել>քյըրքյըրել, քյըրքյըրիցի
օձել>օձել, օձիցի
օրհնել>օխնել, օխնիցի
օրօրել>ուրուրել, ուրուրիցի

Ա. լծորդություն հրկրորդ տիպար

սառր. ներկ.	սառր. ապհ.	սահմ. կար.
էճնեմ	էճնի	էճա
էճնես	էճնիր	էճար
էճնի	էճնէր	էճալ
էճնենք	էճնինք	էճանք
էճնէք	էճնիք	էճաք
էճնեն	էճնին	էճան

հրամ.	դերբ.
էճի	էճնել
մէճնե, մի էճնե	էճնող
էճէք	էճիր
մէք էճնե, մէճնէք	էճած
	էճնէլու

Ինչպես Պոլսի բարբառում, նուինպես և այստեղ չափազանց կրճատված է այս տիպարին պատկանող բայերի թիվը։ Ունենք միայն՝

անցանել>ընցնել, ընցա
գտանել>կընդնել, կընդա, կընդալ
ելանել>էլնել, էլա, հրմ. էլի
մտանել>մանել, մտա
իջանել>էճնել, էճա

Բ լծորդութեան առաջին տիպար

սառ. ներկ.	սառ. անկ.	սահմ. կար.
սովրիմ	սովրի	սովրա
սովրիս	սովրիր	սովրար
սովրի	սովրէր	սովրավ
սովրինք	սովրինք	սովրանք
սովրէք	սովրիք	սովրաք
սովրին	սովրին	սովրան

հրամ.	դերբ.
սովրի	սովրիլ
մի սովրիս	սովրող
սովրէք	սովրած, սովրեր
մէքլ սովրիս	սովրէլու

Այս լծորդութեան համեմատ են խոնարհվում հետևյալ բայերը.

դադարիլ>տուարիլ, տուարա
բորբոսիլ>պէօրպանիլ, պէօրպըռնա
բուսանիլ>պիւսնիլ, պիւսել (թեև բնագիս պատկանում է Բ լծ. բ տիպարին, բայց կար. բուսա ձևից անցել է ա տիպարին և եղել է պիւսել)։

Խոստովանիլ>խոստօվանիլ. կար. խոստօվանա կամ խոստովանեցի։

խաւարել>խավարիլ, խավարա
թմրամիլ>թօմրռնիլ, թօմրռա
թմբրիլ>թմբրիլ, թմբրա

խրտնուլ>խռտնիլ, խռտնա
ծաղկիլ>ծաղկիլ, ծաղկա
ծարաւիլ>ծարաւիլ, ծարաւա կամ ծարվըցա
հաւանիլ>խաւնիլ, խաւնա
մոլորիլ>մէօլըրիլ, մէօլըրա
մրսիլ>մսիլ, մսա
ճապաղիլ>ճապղիլ, -դալ, (թռնաքը ծրիլ)
նեխիլ>նեխիլ, նեխա
նստիլ>նստիլ, նստա
պառակիլ>պառկիլ, պառկա
սառակիլ>սառկիլ, սառկա
սկիլ>սկիլ, սկա (ջրի տակ սուզվիլ)
վատառկիլ>վռտառկիլ, վռտառկա
տափակիլ>տափկիլ, տափկա
ցնդիլ>ցընթիլ, ցընթա
փտիլ>փտիլ, փտա
քրտնիլ>քըրտնիլ, քըրտնա
ծլիլ>ծլիլ, ծլա
կակազիլ>կակըղիլ, կակըղա (իբրև թե բայը լիներ կակազիլ)
կանդնիլ>կայնիլ, կայնա
կառաղիլ>կառղիլ, կառղա
խմիլ>խմիլ, կար. խմա, խմար, խմալ (իբր թե բայը լիներ խմիլ)։

Այստեղ է պատկանում նաև հնաթյան մի գեղեցիկ մնացորդը. զախախորել, որ գրաբարի զարհուրիլ բայն է, բայց կազմված պարզ աի (առանց ր-ի) արմատից, և խոնարհվում է այսպես՝

Սառ. ներկ.— զախախորիմ, զախախորես, զախախորի...
Կար.— զախախորա, զախախորար, զախախորալ...

Բայց վանի բարբառը այս դեպքում ավելի առաջ է գնում, նա պահել է բայի նախնական ձևը՝ առանց զ սառակականի՝ ախախորել (ախախորա, կախախորիմ...), մինչդեռ գրաբարը կորցրել է նախնական *արհուրիլ ձևը և գիտե միայն նրա գոյականը՝ արհաւիրք։

Բ լծորդության երկրորդ տիպարը

ապոր. ներկա	ապոր. անկատար	սահմ. կատարյալ
խալնեմ	խալնի	խակլա
խալնես	խալնիր	խակլար
խալնի	խալնէր	խակլավ
խալնենք	խալնինք	խակլանք
խալնէք	խալնիք	խակլաք
խալնեն	խալնին	խակլան

հրամայական	դերբայներ
խակլի	խալնել
մի՛ խալնե	խակլած
խակլէք	խակլիր,-եր
մէջ խալնե	խալնող

Այս լծորդության հետևող բայերի թիվը շատ քիչ է, այն է՝ հասանիլ>հասնել, հասա (գրաբարում երկու լծորդությամբ էլ կա՝ ճասանեմ և ճասանիմ)։

մոռանիլ>մոռնալ, մոռա
ծնանիլ>ծնիլ, ծնա
պրծանիլ>պոծնալ, պոծա
հնծանիլ>խէղդիլ, խէղծա
անկանիլ>իյնալ, իյնգլո

Այստեղ են վերաբերում նաև դրաբարի -չիլ վերջավորող բայերը, որոնք գրկվում են իրենց չ մասնակից. ինչպես՝

փախչիլ>փախնիլ, փախա
ուռչիլ>ուռիլ, ուռա
դիպչիլ>տիպնիլ, տիպա
թռչիլ>թռնիլ, թռա

խրոչիլ>խռնիլ, խռնա (այս վերջինը պահելով իր ճ ձայնը կատարյալում, ավելի պատկանում է Բ լծ. ա տիպարին)։

Գ լծորդության առաջին տիպար

ապոր. ներկ.	ապոր. անց.	սահմ. կոր.
խաղամ	խաղի	խաղացի
խաղաս	խաղիր	խաղացիր
խաղա	խաղէր	խաղաց
խաղանք	խաղինք	խաղացինք
խաղաք	խաղիք	խաղացիք
խաղան	խաղին	խաղացին

հրամ.	դերբ.
խաղա՛	խաղալ
խաղացէք	խաղացած, -ցիր
մի՛ խաղա	խաղացող
մէջ խաղա (մէհլ խաղա)	խաղալու

Ծանոթ. 1.— Միջին ձայնավորի կրճատմամբ կարելի է ասել նաև կոր. խաղցի (խսխացի), խաղցիր և այլն, հրմ. խաղցէք, դերբ. խաղցած, աղցած ևն։

2.— Գ լծորդության ապոր. անց. նալնանում է Ա լծորդության ապոր. անց. ձևի հետ, բայց ապրքեր ճանապարհներով։

Այս լծորդության հետևող բայերն են՝

աղալ>աղալ, աղցի
արածել>արածալ, արածացի (թե ներգործական «արածել, արածացնել» և թե չեզոք «արածիլ» իմաստով)
դովել>կէօվալ, կէօվացի
դողալ>աէօղալ, աէօղացի
եռալ>լեռալ, լեռացի
երևիլ>էրէվալ, էրէվացի
զզուիլ>զզվալ, զզվացի
լողալ>լօղալ, լօղացի
լուանալ>լվալ, վլալ, վլացի, լվացի
խղճալ>խխճալ, խխճացի
խշխշալ>խշխշալ, խշխշաց (ծառը)
ծիծաղիլ>ծծղալ, ծծղացի
կաղկանձել>կընձկընձալ, կընձկընձացի
» >կմզմզալ, կմզմզացի
կարդալ>կոըտալ, կոըտացի
կակծալ>կակծալ, կակծացի

հաղալ>խոզալ, խոզացի
հաւատալ>խավատալ, խավատացի, ավատալ, ավատացի
հոտոտել>խոտոտալ, խոտոտացի
ձգտալ>սկըռտալ, սկըռտացի
ճչալ>ճչալ, ճչացի
ճնալ>ճնալ, ճնացի
յօրանջել>օրօշկըտալ, օրօշկըտացի
նաւալ>նվալ, նվացի
ողորմիլ>օղօրմալ, օղօրմացի
ոռնալ>վոռնալ, վոռնացի
ործկալ>վոռծկալ, վոռծկացի
սարսափիլ>սէրսափալ, սէրսափացի
սողալ>սօղալ, սօղացի
ցաւիլ>ցավալ, ցավացի
փոնգտալ>փոըռնհլտալ, փոըռնհլտացի
» >փոըշտալ, փոըշտացի
փայլիլ>փէլքկըտալ, փէլքկըտացի

Դ լծորդութեան երկրորդ տիպը

սառ. ներկ.	սառ. անց.	սահմ. կար.
խաստանամ	խաստանի	խաստացա
խաստանաս	խաստանիր	խաստացար
խաստանա	խաստանէր	խաստացավ
խաստանանք	խաստանինք	խաստացանք
խաստանաք	խաստանիք	խաստացաք
խաստանան	խաստանին	խաստացան

հրամ.	դերբ.
խաստացի	խաստանալ
խաստացէք	խաստացող
մի խաստանար	խաստացիր, -եր
մէք խաստանա	

Սրա համեմատ են խոնարհվում հետևյալ բայերը.

ամաչել>ամչ(նալ, ամչ)ցա
բառնալ>պառնալ, պառցա

բարկանալ>պօրկանալ, պօրկացա
բարձրանալ>պօնցրանալ, պօնցրացա
գիտել, գիտենալ>կիտնալ, կիտցա, կիցա
դառնալ>տառնալ, տառցա
իմանալ>իմանալ, իմցա
լռանալ>լօխկնալ, լօխկըցա
կարենալ>կանալ, կառցա, կացա
հանդստանալ>խանդլըստանալ, խանդլըստացա
հասկանալ>խասկնալ, խասկըցա
հիւանդանալ>խիվընդնալ, խիվընցա, -ձա
ճանաչել>ճանչընալ, ճանչըցա
մոռանալ>մոռնալ, մոռցա
նեղանալ>նեղդնալ, նեղացա
շփանալ>շփանալ, շփացա
վախենալ>վախէնալ, վախէցա

ԱՌՏԻՒԱԼԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութիւնները (-ել, -իլ, -ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (-ացնել, ացիլ, ացալ, -ցուլ) Առտիւալի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութիւնները.

Ա. լծ. -ել Մչ. -ել Լհ. էլու
Բ. լծ. -իլ Մչ. -ել Լհ. էլու
Գ. լծ. -ալ Մչ. -ալ Լհ. -ալու
Դ. լծ. -ուլ Մչ. -ուլ —

Երկրորդ տիպար

Ա. լծ. -անել Մչ. -նել Լհ. -նէլու
Բ. լծ. -անիլ Մչ. -նել Լհ. -նէլու
Գ. լծ. -անալ Մչ. -նալ Լհ. -նալու
Դ. լծ. -նուլ Մչ. -նուլ —

Օրինակ՝

սիրել> Մչ. սիրել Լհ. սիրէլու
խօսիլ> Մչ. խօսել Լհ. խօսէլու
խաղալ> Մչ. խաղալ Լհ. խաղալու
թօղուլ> Մչ. թօղուլ Լհ. թօղէլու

պագանել> Մչ. բաքնել Լհ. բաքնէլու
ապանիլ> Մչ. հաքնել (Լհ. հապ'նէլու)
մոռանալ> Մչ. մօռնալ Լհ. մօռնալու
առնուլ> Մչ. առնուլ Լհ. առնէլու

Բայց թեև այսպես լծորդութիւնները բաւական հարազատ ձեով պահված են, սակայն խոնարհումը շատ պարզված է, որա պատճառը կատարյալի ջնջումն է: Ինչպես հայտնի է, սլավոնական լեզուների, ինչպես նաև գերմաներենի և անգլերենի մեջ բայերի անկատարն ու կատարյալը մի ձև ունեն: Բացի սրանից այդ լեզուներում հետզհետե զարգանում է կատարյալը հարակատարով փոխանակելու ձևը. օրինակ՝ ֆրանսերենում կատարյալի բուն ձևը՝

jaimai nous aimâmes
tu aimas vous aimâtes
il aima ils aimèrent

որ քերականութեան և գրական լեզվի մեջ հաճախ հիշվում է, 100 տարուց ի վեր ջնջված է ժողովրդական լեզվի մեջ: Դրա փոխարէն ժողովուրդը, նրան հետևելով նաև գրողները այժմ գործածում են հարակատարը՝ կազմված avoir «ունեմ» օժանդակով և բայի անցյալ դերբայի հարադրութեամբ. այսպես՝

j'ai aimé nous avons aimé
tu as aimé vous avez aimé
il a aimé ils ont aimé

Նույնը գերմաներէն՝

ich habe geliebt wir haben geliebt
du hast » ihr habet »
er hat » sie » »

Այս ձևով կազմվում է նաև Աստիալի բարբառում, ինչպես կտեսնենք ստորև:

Բայց ինչպես որ ամեն մի հին կարգ ջնջվելուց հետո որևէ հետք թողնում է, նմանապես և՝ կատարյալը:

Սուչավայի բարբառով գրված նմուշի մեջ ոչ մի կատարյալ չկա, բոլորն էլ հարակատար են, իսկ լեհահայ բարբառով գտնում եմ 26 օրինակ կատարյալի համար (Հանուշի բառացանկում): Ահա դրանց ցուցակը.

աղալ (ցորեն) — աղցի>ախցի
ապրել — աբբէցի
առաջանալ — առօխցա
ասել — ասէցի
արածել — արձէցի
արածեցնել — արձէցուցի
բերել — բ'էբա
գալ — էգա, էգան
գտանել — գ'դա
գարնել — գարգա
ծախել — ձախէցի
ծիծաղել — ձիձաղէցա
ծնիլ — ձնէցի
կապել — գաբէցի
հարբել — հարբ'էցա
ճկել — ջիգէցի «ծռեցի»
նստիլ — նըզդ'ա
ուտել — գէբա (նաև Մչ. գերա)
պռոշել — բ'օրջ'էցի «բղավեցի»
տալ — դուվա «տվի»
տեսանել — դէսա
փլիլ — բ'ըլէցի «փուլ եկա»
փնտռել — բ'ընդրէցի
փչել — փչէցի «երգեցի»
քարշել — քաշէցի
քշել — քշէցի

Կատարյալի կորուստից հետո Աստիալի բարբառի խոնարհումը ազատվելով կատարյալի ներկայացրած դժվարութիւններից, չափազանց հեշտանում է: Խոնարհման հիմնական ձևերը մնում են ստորադասականի ներկան և անցյալը, հրամայականը և դերբայը: Առաջին երկուսը վերջավորութիւններով նույն են և տարբերվում են միայն վերջավորութեան նեբրին ձայնավորով, որ բայի անորոշի ձայնավորն է հենց: Տարբեր ձևեր ունեն միայն հրամայականը և անցյալ դերբայը, այս վերջինն էլ ունի միայն երկու ձև. այն է -իլ և -ցիլ: Ահա թե ինչ է մնում գրաբարի ութ տեսակ դասադասակերպ խոնարհումից:

Սառել դնում եմ նախ էական բայի խոնարհումը և ապա սիրել բայի հիմնական չորս եղրերի խոնարհումը (Սուչավայի բարբառով)։

Էական բայ

ներկա	անկատար
չէս իմ	էի
դ'ուն իս	էիս
ինքն է	էր
մինք ինք	էինք
դ'ունք իք	էիք
իրօնք ին	էին

Սիրել

սառ. ներկա	սառ. անց.	հրամայական
սիրեմ	սիրէի	սիրէ
սիրես	սիրէիս	սիրեցէք
սիրէ	սիրէր	դերր.
սիրինք	սիրէինք	սիրօղ
սիրիք	սիրէիք	սիրած
սիրին	սիրէին	սիրիլ

Ծանոթ.— Անկատարի եզակի բ դեմքը վերջանում է միշտ ս (փոխանակ գրր. բ), որ առաջացել է ներկայի եզ. բ դեմքի ս բաղաձայնի նմանութեամբ։ Լեհահայ բարբառում չկա անկատարի վրա ս և շարունակվում է բ ձևը (Հանուշ, էջ 73)։

Սրա նման է նաև մյուս լծորդութիւնների խոնարհումը.

սառ. ներկա	սառ. անց.	հրամայական
նալիմ	նալէի	նալիրը
նալիս	նալէիս	նալեցէք
նալէ	նալէր	դերր.
նալինք	նալէինք	նալօղ
նալիք	նալէիք	նալած
նալին	նալէին	նալիլ

սառ. ներկա	սառ. անց.	հրամայական
հաղամ	հաղալի	հաղացիրը
հաղաս	հաղալիս	հաղացէք
հաղա	հաղար	դերր.
հաղանք	հաղալինք	հաղացօղ
հաղաք	հաղալիք	հաղացիլ
հաղան	հաղալին	

Զորրորդ լծորդութիւնը, որ իր երկու տիպարներով ընդված է մեր արդի բարբառներում, Աստիալի բարբառում դեռ կենդանի է ևս։ Բացի թողուլ բայից, գտնում ենք այստեղ առնուլ, գ'դնուլ, մըդնուլ, դեսնուլ<(առնուլ, գտանել, մտանել, տեսանել) բայերը և լեհահայ բարբառումն էլ հնձնուլ «ձի հեծնել», իսկ Հնգ. ցըցնուլ «ցուցանել», գունջնում «կիջնեմ» բայերը։

Դնում ենք այստեղ թողուլ բայի խոնարհումը.

սառ. ներկա	սառ. անցյալ	հրամայական
թօղնում	թօղնուլի	թօխ
թօղնուս	թօղնուլիս	թօղեցէք
թօղնա	թօղնէր	դերր.
թօղնանք	թօղնուլինք	թօղնուլ
թօղնաք	թօղնուլիք	թօղիլ
թօղնան	թօղնուլին	

Մյուս բայերից հրամայականը լինում է՝

ա՛ռ, առեցէք
մըդիրը, մըդեցէք
դէսիրը, դէսեցէք։

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութիւնները (ել, իլ, ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (անել, անիլ, անալ, նալ) Համշենի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութիւնները։

Ա. լծորդութիւն

ներկա	կատարյալ
եմ>իմ	եցի>էցի

ես>էս ձ., իս Մ.	եցեր>էցիր
է>ս ձ., է Մ.	եաց>էց (Մ-էց)
եմք>ինք ձ., իք Մ.	եցաք>էցար
էք>էք	եցէք>էցիք
են>ին	եցին>էցին

անկատար

էի>է՛յը, ձ., էյի Մ.	էաք>ա՛յքը ձ., ա՛քը Մ.
էիր>էյդ ձ., էյիր, էյդը Մ.	էիք>է՛յքը ձ., էքը Մ.
էր>էր	էին>է՛յնը

Բ լծորդություն

ներկա	կատարյալ
իմ>իմ	եցայ>էցա
իս>իս	եցար>էցար
ի>ի	եցաւ>էցավ
իմք>ինք	եցաք>էցաք
իք>իք	եցայք>էցաք
ին>ին	եցան>էցօն

Անկատարը նույն է Ա. լծորդություն հետ.

Գ լծորդություն

ներկա	կատարյալ
ամ>օմ	ացի>ացի
աս>աս	ացեր>ացիր
այ>ա	աց>աց
ամք>օնք	ացաք>ացաք
այք>ար	ացէք>ացիք
ան>օն	ացին>ացին

անկատար

այի>ա՛յը	այաք>ա՛յքը
այիր>ա՛յդ	այիք>այքը
այր>ար	ային>այնը

Դ լծորդություն

ներկա	անկատար
ում>ում	ուի>էյ
ուս>ուս	ուիր>էյդ
ու>ու	ոյր>ուր
ումք>ունք	ուաք>ա՛յքը
ուք>ունք	ուիք>է՛յքը
ուն>ուն	ուին>է՛յնը

կատարյալ

ի>ի	աք>աք
եր>իր	էք>իք
—>ավ	ին>ին

Ա լծորդության երկրորդ տիպարը ջնջված է.

Բ լծորդության երկրորդ տիպար

ներկա	անկատար	կատարյալ
անիմ>ենիմ	անէի>ենի՛յը	այ>ա
անիս>ենիս	անէիր>ենէյդ	ար>ար
անի>ենի	անէր>ենիր	աւ>ավ
անիմք>ենինք	անէաք>ենա՛յքը	աք>աք
անիք>ենիք	անէիք>ենի՛յքը	այք>ար
անին>ենին	անէին>ենի՛յնը	ան>օն

Դ լծորդության բ տիպար (անորոշն է նուշ կամ քնուշ՝ միջին ա ջնջելով կամ սղելով).

ներկա	անկատար	կատարյալ
անամ>նօմ	անայի>նոյը	ացայ>ցա
անաս>նաս	անայիր>նոյդ	ացար>ցար
անայ>նա	անայր>նոր	ացաւ>ցավ
անամք>նօնք	անայաք>նայքը	ացաք>ցար
անայք>նար	անայիք>նո՛յքը	ացայք>ցոք
անան>նօն	անային>նոյնը	ացան>ցօն

Դ լծորդութ յան երկրորդ տիպար

ներկա	անկատար
նում>նում	նուի>նեյ
նուս>նուս	նուիր>նեյդ
նու>նու	նույր>նուր
նումք>նունք	նուաք>նա՛յքը
նուք>նուք	նուիք>նեյքը
նուն>նուն	նուին>նե՛յնը

կատարյալ	
(ց)ա՛>ա	(ց)աք>աք
(ց)ար>ար	(ց)ալք>ալ
(ց)աւ>ալ	(ց)ան>օն

Դ լծորդութ յունը այս բարբառում չի ջնջված և պահվում է ըստ կարելվույն հարազատ ձևով, բայց նաչն լծորդութ յան երկու տիպարները չեն համապատասխանում պրաբարի երկու տիպարներին: Առաջին տիպարից միում են միայն թողուլ, ճարուլ, և երկրորդ տիպարից միայն զերծնուլ, առնուլ, լնուլ, իսկ մյուսները ձևափոխված են առաջին լծորդութ յան երկրորդ տիպարից:

Ըստ այսմ Համշենի բարբառը ունի Ա, Բ, Գ, Դ լծորդութ յունների առաջին տիպարները և Բ, Գ, Դ, լծ. երկրորդ տիպարները, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետևյալ բայերը.

Ա.	լծ. սիրել	—
Բ	լծ. խօսել	հագնիլ
Գ	լծ. խաղալ	մոռանալ
Դ	լծ. թողալ	(մանել)

Ա. լծորդութ յուն

սառ. ներկա		սառ. անցյալ		
(ձանիկ)	(Մալա)	(ձանիկ)	(Մալա)	
սիրիմ	սիրիմ	սիրէլը	սիրեյի	
սիրէս	սիրիս	սիրէլդ(ը)	սիրէյդը,	սիրեյիր
սիրու	սիրե	սիրէր	սիրէր	
սիրինք	սիրիք	սիրա՛լքը	սիրա՛քը	

սիրէք	սիրէք	սիրէլքը	սիրէքը
սիրին	սիրին	սիրէյնը	սիրէյնը

կատարյալ	դերբայներ
սիրեցի	սիրօղ
սիրեցիր	սիրած
սիրեց (Մ. սիրից)	սիրել
սիրեցաք	սիրուշ
սիրեցիք	սիրելիք
սիրեցին	սիրելու

հրամ. սիրա, սիրեցեք

Այսպես է խոնարհվում բայերի մեծագույն մասը. ինչպես՝

ադաչնել>ադաչուշ, ադաչեցի, ադաչա
աւելնել>ավիլուշ, ավիլեցի, ավիլա
աւերնել>ավիրուշ, ավիրեցի, ավիրա
բանել>պունուշ, պունեցի, պունա
կանչնել>գօնչուշ, գօնչեցի, գօնչա
ծամնել>ձօմուշ, ձօմեցի, ձօմա
ճանաչնել>ջօնչուշ, ջօնչեցի, ջօնչա
վախենալ>վախուշ, վախել, վախեցա, վախա
կաթնել>գաթուշ, գաթեցի, գաթա

Առաջին լծորդութ յան երկրորդ տիպարի բայերից պահված են միայն թքանել, խածանել, ք..., պազանել, զարկանել և սպանանել բայերը: Համշենի բարբառում այս բայերը ստացել են հետևյալ ձևերը.

թքանել>թքնուշ, կոր. թքնեցի, հրմ. թքնա՛
խածանել>խաձուշ, կոր. խաձեցի, հրմ. խաձա
պազանել>բազնուշ, կոր. բազնեցի, հրմ. բազնա՛
զարկանել>զանուշ, կոր. զարգի, զանեցի, էզարգ կամ էզգարգ, հրմ. զանա
սպանանել>սպօնուշ, սպօննեցի, սպօննա՛

Իսկ երրորդ բայը ստացել է երկու ձև. մեծերի համար փնուշ <գրբ. փին արմատից (կոր. փնեցի, հրմ. փնա), իսկ փոքրերի համար բաքուշ (կոր. բաքեցի, հրմ. բաքա): Այսպիսով Ա լծորդութ յան բ տիպարը կանոնավորված և ջնջված է լեզվից:

Անկանոն է միայն ելանել>էլլուշ, էլա, էլ, մի էլլել:

Բ լծորդություն

ստոր. ներկա	ստոր. անցյալ
խօսիմ	խօսէլը
խօսիս	խօսէլդ(ը)
խօսի	խօսէր
խօսինք	խօսէլքը
խօսիք	խօսէլքը
խօսին	խօսէլնը

Տր. ներկայի հգ. ա և ը լինում են խօսիք, խօսէք, իսկ անկ. եզ. ը -էլդը, գ. -իր. հգ. աքը, էքը, էլնը.

կատարյալ	անկատար
խօսէցա	խօսօղ
խօսէցար	խօսած
խօսէցավ	խօսիլ
խօսէցաք	խօսուշ
խօսէցոք	խօսէլիք
խօսէցօն	խօսօլու

հրամ.— խօսա, խօսէցէք

Այսպես են խոնարհվում՝

կակղել>գագղուշ, գագղեցա, գագղո
հատատել>հօդմըդուշ, կոր. հօդմըդեցա, հրմ. հօդմըդո
կաթիլ>գաթուշ, գաթեցո, թո

Բ լծորդության երկրորդ տիպար

ստոր. ներկա	ստոր. անցյալ
հաքնիմ	հաքնէլը
հաքնիս	հաքնէլդ
հաքնի	հաքնիր
հաքնինք	հաքնէլքը
հաքնիք	հաքնէլքը
հաքնին	հաքնէլնը

կատարյալ	դերբայներ
հաքա	հաքնօղ
հաքար	հաքած
հաքավ	հաքնիլ
հաքաք	հաքնուշ
հաքոք	հաքնէլիք
հաքօն	հաքնէլու

հրամ.— հաքիր, հաքէք

Այսպես են խոնարհվում՝

անկանիլ>ընգնուշ, ընգա, ընգի(ր)
անցանիլ>օնցնուշ, օնցա, օնցի(ր)
բուսանիլ>պուսնուշ, սա, սի(ր)
մեռանիլ>մէռնուշ, ռա, ռի(ր)
լուցանիմ> լուսնուշ «վառվիլ», լուսնիմ, լուցա, լուցիր

Այսպես են խոնարհում նաև -չիլ վերջավորած բայերը, որոնք կատարյալի, հրամայականի և անցյալի դերբայի մեջ չ ձայնը կորցնում են, այսպես՝

թուչիլ>թուչուշ «ցատկել», թուա, թուիր, թուած
ուռչիլ>ուռչուշ, ուռա, ուռիր,
փախչիլ>փախչուշ, փախա, փախի(ր)
փչիլ>պչիլ, պլա, պլէ՛ո!

Պչիլ բայը առացել է ափրնուշ ձևը՝ «դպչիլ. 2. ըմբշամարտիլ» նշանակությամբ, կոր. տիբա, հրմ. տիբի(ր), այսպես նաև ուռչիլ բայը՝ որ ուռչուշ ձևի հետ ունի նաև ուռնուշ ձևը։

Իսկ հանդչիլ>ճօնկշուշ բայը վերածվելով Բ լծ. ա տեսակին, դառնում է կոր. ճօնկշեցա, հրմ. ճօնկշո։

Գ լծորդություն

ստոր. ներկա	ստոր. անցյալ
խաղամ	խաղա՛լը
խաղաս	խաղա՛լդ
խաղա	խաղար
խաղանք (Տր.—օք)	խաղա՛լքը
խաղաք (Տր. էք)	խաղալքը
խաղան	խաղա՛լնը

կատարյալ	դերբայներ
խաղացի	*խաղացօղ, խաղօղ*
խաղացիր	*խաղ(ա)ցած*
խաղաց	*խաղալ*
խաղացաք	*խաղուշ*
խաղացիք	*խաղալիք*
խաղացին	*խաղալու*

հրամ.— *խաղա, խաղացէք.*

Ալպես են խոնարհվում՝

հինել>*հինուշ, հինամ, հինացի,*
խնջել>*խնչուշ, խնչացի, խնչա*
ծծել>*ձձվուշ, ձձվացի, ձձվա*
լուանալ { *լվընուշ, լվացի, լվա* / *լօվընուշ, լօվացի, լօվա*
խրտնել>*խըլդուշ, խըլդամ, խըլդացի, խըլդած.*

Այս լծորդութեան խոնարհման ժամանակ պատահում են բայեր, որոնք միջին վանկում ունենալով ա ձայնավորը՝ կրճատում են այնինչ.

խաղալ — խաղացի կամ խախցի, խախցիր...
աղալ — աղացի կամ ախցի.

Գ լծորդութեան երկրորդ տիպար

սաոր. ներկա	սաոր. անցյալ
մօնամ	*մօնայ(ը(*
մօնաս	*մօնայդ*
մօնա	*մօնար*
մօնանք	*մօնայքը*
մօնաք	*մօնայքը*
մօնան	*մօնայնը*

կար.	դերբայներ
մօցա	*մօցօղ*
մօցար	*մօցած*
մօցալ	*մօնալ*

մօցաք	*մօնուշ*
մօցօք	*մօնալիք*
մօցօն	*մօնալու*

հրամ.— *մօցի, մօցէք*

Ալպես են խոնարհվում՝

դողանալ>*կօղնուշ, կօխցա, կօխցի(ը)*
գիտենալ>*կիդընուշ, կիդըցա, կիդըցի(ը)*
ամաչել>*օմչընալ, օմչըցա, օմչըցի(ը)*
երդնուլ>*էշմըննուշ, վընցա, վընցիր*
երևիլ>*էրէվնուշ, էրէվցա, էրէվցիր*
թալանալ>*թալնուշ, թալցա, թալցի(ը)*
անհնալ>*ընհնուշ, ընհնուշ, ընհընցա, ընհընցի(ը)*
հասկանալ>*հասկընհնուշ, հասկընցա,հասկընցիր*

Գ լծորդութեան ը տիպարին են պատկանում անվանական բայերը, որոնք շատ բազմաթիվ են և վերջավորվում են -անալ կամ -նալ, ինչպես՝

լմնանալ>*լընհնուշ, լընցա, լընցի(ը)*
լուսանալ>*լուսընուշ, ըցավ, ըցի(ը)*
հասատանալ>*հասատընուշ, հասատըցա, ցի(ը)*
անօթենալ>*ընօթընուշ, տըցա, ըցիր*
նմանիլ>*լմընուշ, լմնցա, լմնցի*
չօրանալ>*չօլնուշ, չօլցա, չօլցի(ը).*
երկայնիլ>*էրգընհնուշ, էրգընցա, գընցիր*
մեծանալ>*մէձընուշ, մէձըցա, մէձըցի(ը(*
հալանալ>*հալընուշ, հալըցա, հալըցի(ը)*
շատանալ>*շադընուշ, շադըցա, շադըցի(ը)*

Դ լծորդութեան

սաոր. ներկա	սաոր. անցյալ
մդնում	*մդնէլ*
մդնուս	*մդնէլդ*
մդնու	*մդնուր*
մդնունք	*մդնելքը*
մդնուք	*մդնէլքը*
մդնուն	*մդնէլնը*

կատարյալ	դերբայներ
մդա	մդնօղ
մդար	մդած
մդավ	մդնուլ
մդաք	մդնուշ
մդոք	մդնէլիք
մդօն	մդնէլու

Ճրաւմ.— մէդ, մդի(ր), մդէք։

Ալապես են խոնարհվում՝

առանանել>դէանուշ, դէաա, դէս (դէսի, դէսիր)
գաանել>կդնուշ, կդա, էկիդ, կիդ (կդի, կդիր)
զերծնուլ>զէլձնուշ, զէլձա, զէլձի, զէլձիր (չիք զէլձ)
առնուլ>առնուշ, առի (առիր, առավ=էդաո, առաք, առիք, առին) առ, առէք
իջանել>իշնուշ, ինչա (ինչար, ինչավ, ինչաք, ինչոք, ինչօն), իչ (իչի Տ, իչիր Տ, ինչի, ինչիր), ինչէք, իչէք Տ.
լնուլ>լուշ, ներկ. լում, անկ. լեյ (լէդի, լար, լա՛լքը, լէ՛լքը, լէ՛լնը), լցի (լցիր, էլից=լցավ, լցաք, լցիք, լցին=էլին), լից, լցէք
թողուլ>թօղուշ, Ն. թօղում, թօղուս, թօղա,.. անկ. թօղէյ, թօղէյդ, թօղար, թօղա՛լքը, թօղէ՛լքը, թօղէ՛նը, կա. թօղի, թօղիր, թօղավ=էթէվ, թօղաք, թօղիք, թօղին), հրմ. թէօխ=թէվ, թօղէք.
հարուլ «հղշևրևլ, հզան հարու ատլը»>հարուշ, ներկ. հարու, կար. հարավ (կմ. հարուց), հրմ. հարու, մի՛ հարուլ,
հեծանիլ>հէդնուշ, ներկ. հէդնում, կար. հէձա, հրմ. հէձի, հէձիր, մի՛ հէդնուլ։

Ալս բոլորը ատոր. անց. հզ. ց դեմքում լինում է դէանուր, դդնուր, զէլձնուր, հարուր, հէդնուր, առնուր, իշնուր, լուր, թօղուր։

ԿԻԼԻԿԻԱՑԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութիւնները (ել, իլ, ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (աճել, աճիլ, աճալ, ճուլ), Զեյթունի գավառականում կրում են հետևյալ ձևափոխութիւնները.

Ա. լծորդութիւն

ներկա		անկատար	
եմ>իմ	էմք>ինք	էի>ինք	էաք>օնք
ես>իս	էք>էք	էիր>այ	էիք>տք
է>ե, է,	ևն>ին	էր>էյ	էին>աճ

կատարյալ	
եցի>իցի	եցաք>իցօնք
եցեր>իցիյ	եցէք>իցոք
եալ>ից	եցին>իցին

Ա. լծորդութիւն երկրորդ տիպար

ներկա			
անեմ>նիմ	անեմք>նինք	անէի>նը	անէաք>նընք
անես>նիս	անէք>նոք	անէիր>նըյ	անէիք>նիք
անէ>նե, նէ	անեն>նին	անէր>նէյ	անէին>նըն

կատարյալ	
ի>ո	աք>ոնք, օք
եր>ոյ	էք>տք
—>ով	ին>ոճ

Բ լծորդութիւն

ներկա		անկատար	
իմ>ը՛մ, ըմ	իմք>ը՛նք, ընք	էի>ի, ը,	էաք>ոնք, ինք
իս>ը՛ս, ըս	իք>ը՛ք, ըք	էիր>իյ	էիք>իք
ի>ը՛, ը	ին>ը՛ն, ըն	էր>էյ	էին>ինճ

Բ լծորդութիւն երկրորդ տիպար

ներկա	անկատար	կատարյալ
անիմ>նըմ	անէի>նի	այ>ո
անիս>նըս	անէիր>նիյ	ար>ոյ
անի>նը	անէիր>նէյ	աւ>ով
անիմք>նընք	անէաք>նինք	աք>ոնք
անիք>նըք	անէիք>նիք	այք>տք
անին>նըն	անէին>նինճ	ան>օճ

Գ լծորդություն

ներկա	անկատար	կատարյալ
ամ>ում	ալի>ի	ացի>ացը՛
աս>ous	ալիր>իյ	ացեր>ացեյ
ալ>ո	ալը>էյ	աց>ոց
ամք>ուցք	ալաք>իցք	ացաք>ացուցք, որ
ալք>մք	ալիք>իք	ացէք>ացը՛ք
ան>ուց	ալին>ինց	ացին>ացը՛նց

Գ լծորդության երկրորդ տիպար

անամ>նում	անալի>նի	ացալ>ցո
անաս>նous	անալիր>նիյ	ացար>ցոյ
անալ>նո	անալը>նէյ	ացաւ>ցով
անամք>նուցք	անալաք>նիցք	ացաք>ցուցք, ցոք
անալք>նոմք	անալիք>նիք	ացալք>ցոմք
անան>նուց	անալին>նինց	ացան>ցուց

Դ լծորդություն

ում>ում	ուի>ի	ի>ա
ուս>ous	ուիր>իյ	իր>այ
ու>ու	ուը>էյ	—>ով
ումք>ուցք	ուաք>իցք	աք>ուցք
ուք>մք	ուիք>իք	էք>մք
ուն>ուց	ուին>ինց	ին>ուց

Ցուցակից երևում է, որ Չևլիմանի դավառականում գրաբարի երեք լծորդությունները իրենց կրկնակ տիպարներով շարունակվում են: Զորրորդ լծորդությունը, որ գրեթե ամեն տեղ ջնջված է, կենդանի է Չևլիմանի դավառականում, բայց միայն երեք առաջին տիպարը և այն էլ մի միակ բայով (բողուլ): Երկրորդ տիպարը ջնջված է:

Սրանց խոնարհման համար իբրև օրինակ առնում ենք հետևյալ բայերը.

Ա. լծ.	սիլիլ	բաքնիլ
Բ լծ.	մը՛սը՛լ	հագ՛նըլ
Գ լծ.	հազօլ	գ՛ուդնուլ
Դ լծ.	թուդուլ	—

Ա. լծորդության առաջին տիպար

սաոր. ներկա	սաոր. անցյալ	կատարյալ
սիլիմ	սիլա	սիլիցի
սիլիս	սիլալ	սիլիցիլ
սիլի	սիլէյ	սիլից
սիլինք	սիլանք	սիլիցանք
սիլէք	սիլաք	սիլիցաք
սիլին	սիլան	սիլիցին

հրամ.— *սիլէ, սիլինք, սիլիցէք*
դերբ.— *սիլիլ, սիլօձ, սիլիլ, սիլիլո, սիլիլէք*

Կատարյալի հողն. Ա դեմքը ունի երկու ձև՝ սիլիցօք և սիլիցօնք. առաջինը որ ծագում է գրբ. սիրեցաք ձևից, քիչ գործածական է: Սովորական է սիլիցօնք, որ աշխարհաբարի սիրեցինք ձևի հնագույն սիրեցանք ձևից է ծագում: Այսպես նաև մյուս բոլոր խոնարհումների մեջ, ինչ. ավլիցօք, ավլիցօնք «ավլեցինք» խաղացօք, խաղացօնք, «խաղացինք», հազացօք, հազացօնք «հազացինք»:

Այսպես են խոնարհվում, օրինակ՝

բոլորիլ>բ՛իլիի, բ՛իլիցի, բ՛իլև «մահ գալ»
խայթիլ>խէթիլ, իցի, և
խանգարիլ>խանգ՛ալիլ, իցի, և
խարշիլ>խեշիլ, իցի, և
խափանիլ>խափանիլ, իցի, և
խեղդիլ>խը՛ղդ՛իլ, իցի, և
խլիլ>խը՛լիլ, իցի, և
խծուիլ>խը՛ծրիլ, իցի, և
խլանիլ «պատառել»>խը՛զդիլ, իցի, և
խմիլ>խը՛միլ, խը՛միցի, խը՛միև
խնջիլ>խը՛նչիլ, իցի, և
խնդրիլ>խը՛նդ՛րիլ, իցի, և
խփիլ «փակել»>խը՛փիլ, խը՛փիցի, խը՛փիև
ծագիլ>ձէթիլ, ձէթիցի, ձէթիև
ծալիլ>ձալլիլ, ձալլիցի, ձալլիև
ծախիլ>ձախիլ, ձախիցի, ձախիև
ծածկիլ>ձաձգիլ, ձաձգիցի, ձաձգիև
ծամիլ>ձամիլ, ձամիցի, ձամիև

ծևծևել>ձիձիել, ձիձիցի, ձիձև
ծևփևել>ձիփիել, ձիփիցի, ձիփև
ծծել>ձը՝ձիլ, ձը՝ձիցի, ձը՝ձև
կաղմել>գաղմիլ, գաղմիցի, գաղմև
կախել>գախիլ, գախիցի, գախև
կամճել>գամճիլ, գամճիցի, գամճև
կառաբել>գադալիլ, գադալիցի, գադալև
կարել>գալիլ, գալիցի, գալէ
կարկառել>գալգըդիլ, գալգըդիցի, գալգըդև
կլթել>գը՝լթիլ, գը՝լթիցի, գը՝լթև
կճել>գը՝ջիլ, գը՝ջիցի, գը՝ջև
կրել>գը՝լիլ, գը՝լիցի, գը՝լև
կցել>գը՝ցիլ, գը՝ցիցի, գրցև
կշռել>գը՝շիցի, գը՝շը՝ա
կոխել>գէխիլ, գէխիցի, գէխև
կոկել>գիգիլ, գիգիցի, գիգև
կոճակել>գուջգիլ, գուջգիցի, գուջգև
կոփել>գիփիլ «տաշել», գիփիցի, գիփև
կրծել>գը՝լձիլ, գը՝լձիցի, գրլձև
կտրել, կտրել>գը՝գռիլ, գը՝գռիցի, գը՝գռև
(երկու խմաստով)
կացել>գը՝գցիլ, գը՝ցիլ, գը՝ցիցի, գը՝ցե
հալել>հալիլ, հալիցի, հալև
հալածել>հալածիլ, հալածիցի, հալածև
համարել>համլիլ, համլիցի, համլև
հանել>հանիլ, հանիցի, հանև
հաջել>հէջիլ, հէջից, հէջև
հառաչել>հառչիլ, հառչիցի, հառչև
հաւաքել>հաֆը՝իլ, հաֆը՝իցի, հաֆը՝և
հերկել>հիլգիլ, հիլգիցի, հիլգև
հինել>հինիլ, հինիցի, հինև
հիւսել>հիսիլ, հիսիցի, հիսև
հրել>հը՝լիլ, հը՝լիցի, հը՝լև
ձգել>ը՝ձգ՝իլ, ը՝ձգ՝իցի, ը՝ձգ՝և
ճապաղիլ>ջաբղիլ, ջաբղիցէ, ջաբղև
ճգնիլ>ջը՝գ՝նիլ, ջը՝գ՝նիցի, ջը՝գ՝նև
մանել>մանիլ, մանիցի, մանև
մաքսել>մալսիլ, մալսիցի, մալսև

մխիթարել>մխիթալիլ, մխիթալիցի, մխիթալև
մկրտել>մը՝գը՝լդիլ, գիցի, գև
դնդալ>գէնիլ, գէնիցի, նև
յաղթել>հախթիլ, թիցի, թև
յօտել>հաղիլ, գիցի, գև
(յ)ուզել>ուգիլ, գիցի, գև
նիրկել>նիլգիլ, գիցի, գև
նզովել>նզօվիլ, վիցի, վև
ննջել>նըննջիլ, ջիցի, ջև
շաղել «թրջել»>շաղիլ, գիցի, գև
շարել>շալիլ, լիցի, լև
շինել>շինիլ, նիցի, լև
շրջել>շը՝լդ՝իլ «փոխել», ջ՝իցի, ջ՝և
շփել>շը՝փիլ, փիցի, փև
ոլորել>իլլիլ, լիցի, լև
չարչարել>չարչալիլ, չալչալիցի, չալչալև
պահել>բէհիլ, հիցի, հև
պաշտել>բաշդիլ, գիցի, գև
պատմել>բադմիլ, միցի, մև
պար(ա)պել>բալբիլ, բիցի, բև
պրպտել>բը՝լբը՝դիլ, բը՝լբը՝գիցի, բը՝լբը՝գև
ջարդել>ճալդ՝իլ, ճալդ՝իցի, ճալդ՝և
սեղմել>սէղմիլ, սէղմիցի, սէղմև
սիրել>սիլիլ, սիլիցի, սիլև
սպասաւանել>ըսպասննիլ, ըսպասննիցի, պասննև
վազել>վազիլ, վազիցի, վազև
վայելել>վէլիլ, վէլիցի, վէլև
վայթել>վէգ՝իլ, վէգ՝իցի, վէգ՝և
վառել>վառիլ, վառիցի, վառև
վարել>վալիլ, վալիցի, վալև
վճարել>վջալիլ, վջալիցի, վջալև
տապակել>գաբգիլ, գաբգիցի, գաբգև
տնկել>գը՝գիլ, գը՝նգիցի, գը՝նգև
ցանել>ցանիլ, ցանիցի, ցանև
փոխել>փէխիլ, փէխիցի, փէխև
փչել>փը՝չիլ, փը՝չիցի, փը՝չև

փռել>փը՛ռիլ, փը՛ռիցի, փը՛ռե
փրկել>փը՛լկիլ, փը՛լկիցի, փը՛լկե
փեռել>փիղիլ, փիղիցի, փիղե
փշրել>փը՛շը՛լիլ, փը՛շը՛լիցի, փը՛շը՛լե
քակել>քագել, քագիցի, քագե
քաղել>քաղիլ, քաղիցի, քաղե
քամել>քամիլ, քամիցի, քամե
քարշել>քէշիլ, քէշիցի, քէշէ
քերել>քիլիլ, քիլիցի, քիլե
քերթել>քիլթիլ, քիլթիցի, քիլթե
քննել>քը՛ննիլ, քը՛ննիցի, քը՛ննե
քսել>քը՛սիլ, քը՛սիցի, քը՛սե
օձել>ուձիլ, ուձիցի, ուձե
օրհնել>ուխնիլ, ուխնիցի, ուխնե
» >ուխնիլ, ուխնիցի, ուխնե
օրօրել>իլլիլ, իլլիցի, իլլե

Ե ր կ ր ո ր դ տ ի պ ա ր

բաքնիմ բաքնը, բաքնի, բաքո
բաքնիս բաքնըլ, բաքնիլ, բաքոլ
բաքնեն բաքնէլ, բաքնիլ, բաքոլ
բաքնինք բաքնըընք, բաքնինք, բաքոնք
բաքնուք բաքնիք, բաքնըք, բաքոք
բաքնին բաքնըն, բաքնին, բաքոն
հրամ.— բոք (բաքէլ), բաքէք
դերբ.— բաքնիլ, բաքոճ, բաքիլ, բաքնիլո, բաքնիլէք
պատանել>բաքնիլ, բաքո, քէլ (բօք)
տեսանել>դիանալ, դիտո, դիս
ք... >քաքնիլ, քաքո, քօք
խածանել>խաձնիլ, խաձո, խօձ կամ խաձէլ
թքանել>թօքնալ, թոքո, թոք

Ծանոթ.— տեսանենք բայը թեև առացել է անորոշում դիսեալ ձևը, բայց խոնարհվում է կանոնավորապես Ա. յ. բ տիպարի ձևով. ապառնի դերբայում լինում է դիսցալո, դիսելիք կամ դիսցալէք։

Բ յ ո ր դ տ ե ս ա կ ա ն ա ռ ա ջ ի ն տ ի պ ա ր

մը՛սը՛մ	մը՛սի	մը՛սիցո
մը՛սը՛ս	մը՛սիլ	մը՛սիցոլ
մը՛սը՛	մը՛սէլ	մը՛սոց
մը՛սը՛նք	մը՛սոնք	մը՛սիցոնք
մը՛սը՛ք	մը՛սիք	մը՛սիցոք
մը՛սը՛ն	մը՛սին	մը՛սիցոն

հրամ.— մը՛սը, մը՛սիցէք
դերբ.— մը՛սը՛լ, մօսօճ, մը՛սիլ, մը՛սիլո, մը՛սիլէք

դադարիլ>դ՛ադրըլ, դադրիցո, ըն
խոստովանիլ>խըսդըվանըլ, -նիցո, նե
ծարաւիլ>ձալվիլ, ձէլվիլ, ձալվիցո...
? >հալվիլիլ, հալվիւլիցո, հալվիւլե
ծլիլ>ձը՛լիլ, ձը՛լիցի կամ ձը՛լիցո, ձ՛ըլե
ծխծաղիլ>ձըձաղըլ, ձըձաղիցո, ձըձախցը, ձըձաղե
ծխծաղիլ>ձըղաղըլ, ձըղաղիցո, ձըղաղցը, ձըղաղցէլ
ծնիլ>ձը՛նը՛լ, ձը՛նիցո, ձը՛նե
կանգնիլ>գանըլ, գանիցո, գանե
կառաղիլ>գաղըլ, գաղդիցո, գաղդե
կկղիլ>գը՛ղը՛լ, գը՛գդիցո, գը՛գդե
հալիլ>հէլիլ, հէլիցո, հէլե
հանդիպիլ>հանդըբը՛լ, իցո, հանդիպե
հաւանիլ>հաւնըլ, նիցո, հաւնե
ճալթիլ>ջէթիլ, ջէթիցո, ջէթե
մգլիլ>մը՛գ՛լիլ, մը՛գ՛լիցո, մը՛գ՛լե
մրսիլ>մը՛սը՛լ, մը՛սիցո, մը՛սե
նեխիլ նէխիլ, նէխիցո, նէխե
նստիլ>գը՛սդը՛լ, գը՛սդիցո, գը՛սդե
նամանիլ>ը՛մը՛նիլ, նիցո, ը՛մը՛նե
ողորմիլ>ուղումիլ (կամ-մալ), լմիցո, լմե
պապանձիլ>բաբանձըլ, նձիցո, նձե
պառ(ա)կիլ>բառդիլ, գիցո, գե
սառակիլ>սաղգիլ, սաղգիցո, սաղգե
վախճանիլ>վախջանըլ, նիցո, նե
փախիլ>փը՛դը՛լ, փը՛գդիցո, փը՛գդե

քծնիլ>քը՛ձնալ, քը՛ձնիցո, քը՛ձնե
քրանիլ>քը՛ղը՛նիլ, քը՛ղը՛նիցո, քը՛ղը՛նե:

Բ լծորդության առաջին տեսակը ունի չորս տեսակ վերջավորություն, այն է անորոշում ըլ, ը՛լ իլ, ալ, որանց հետևելով սաոր. ներկան էլ լինում է ըմ, ը՛մ, իմ, ամ, բայց բոլորի էլ կատարյալը լինում է -իցո, որով բոլորը միանում են մի լծորդության մեջ:

Այսպես օրինակ՝ խօսիլ>խուսալ հանդում է ալ, բայց դա չի նշանակում Գ լծորդություն, որովհետև այդ դեպքում պիտի լիներ ա>օ ձայնափոխությամբ խուսօլ:

սաոր. ներկա	սաոր. անկատար	կատարյալ
խուսամ	խուսի	խուսիցո
խուսաս	խուսիլ	խուսիցոլ
խուսա	խուսէլ	խուսիցով
խուսանք	խուսինք	խուսիցոնք
խուսաք	խուսիք	խուսիցոք
խուսան	խուսին	խուսիցոն

երկրորդ տիպար

հագնում	հագնի	հագո
հագնըս	հագնիլ	հագոլ
հագնը	հագնէլ	հագով
հագնընք	հագնինք	հագոնք
հագնըք	հագնիք	հագոք
հագնըն	հագնին	հագոն
հրամ.—	հագէլ,	հագէք
դերբ.—	հագնըլ,	հագոձ, հագ իլ
	հագնիլէք	հագնիլո
հասանիլ	հասնըլ,	հասո, հասէլ
մէռանիլ	մէռնըլ,	մէռո, էլ
մտանիլ	մօգնոլ,	մօգո, մըդէլ
ուսանիլ	ուսնօլ	ուսո, էլ
կաբենալ	գանըլ,	գանո, էլ

-էիլ վերջացող բայերը, եթե չ արմատական չէ, կորցնում են այն և խոնարհվում են բ լծորդության երկրորդ տիպարի համաձայն: Այսպես են՝ փախչէիլ>փագչըլ, փագո, փագէլ

փախչիլ>փախչիլ, փախո, փախէլ
փըչիլ>փը՛չիլ, փօղո, փը՛չէլ:

Գոլահայ բարբառի քննության մեջ խոսել ենք այն մասին, թե ինչպես միևնույն բայից առաջին լծորդությամբ սաացվում է ներգործական, իսկ երկրորդ՝ չեզոք բայ: Այսպես, օրինակ՝ վառել «մի բան վառել», վառիլ «ինքնին վառվել»: Իսկ կրավորականը լինում է վառվիլ:

Այս երևույթը կա նաև Զեյթունի բարբառում:

Ստորև կնայենք այն բայերի, որոնք երկու լծորդությամբ էլ խոնարհվում են, առաջինը էլ>իլ (կոր.— իցի), երկրորդը -իլ>-ըլ, -ալ (կոր.— իցո):

ներգործական	չեզոք
ազատել>ազատիլ	ազատիլ>ազատըլ
ազատնձել>ազընձիլ	ազատնձիլ>ազընձալ (իսկ «քոր գալ» իմաստով ազընձը՛լ)
ազատձել>ազձիլ	ազատձիլ>ազձըլ
աւ(ե)րել>ավլիլ	աւ(ե)րիլ>ավլըլ
գլորել>գ՛ը՛լը՛ձիլ	գլորիլ>գ՛ը՛լցըը՛լ
գլորել>գ՛ը՛լը՛լիլ	գլորիլ>գ՛ը՛լը՛լըլ
եփել>իփիլ	եփիլ>իփալ
թափել>թափիլ	թափիլ>թափըլ
թրջել>թը՛ջ՛իլ, դ՛ը՛լջիլ	թրջիլ>թը՛լջը՛լ, դ՛ը՛լջըլ
խանգարել>խանդրիլ	խանգարիլ>խանդրըլ
խարտկել>խարտկիլ	խարտկիլ>խարտկըլ
խարշել>խէշիլ	խաշիլ>խէշը՛լ, խէշալ
խաւարել>խավալիլ	խաւարիլ>խավալըլ
խափանել>խափանիլ	խափանիլ>խափանըլ
ծակել>ձագիլ	ծակիլ>ձագըլ
կարել>գը՛դրիլ	կրտիլ>գը՛գըրը՛լ
կործանել>գուշանիլ	կործանիլ>գուշանըլ
կտաւել (ցորեն)>գը՛լդիլ	կտաւիլ>գը՛լդը՛լ
հալել>հալիլ	հալիլ>հալըլ
հալածել>հալաձիլ	հալածիլ>հալաձըլ
ճնդքիլ>չէխքիլ	ճնդքիլ>չէխքը՛լ
մանրել>մանդրիլ	մանրիլ>մանդրըլ
մաշել>մէշիլ	մաշիլ>մէշալ

մոլորել>մը՝լը՝լիլ	մոլորիլ>մը՝լը՝լը՝ւ
նեխնել>նեխիլ	նեխիլ>նեխալ
չոքել (չոքեցնել)>չոքիլ	չոքիլ>չոքալ
պատառել>բաղդիլ	պատառիլ>բաղդըլ
պարպել>բալբիլ	պարպիլ>բալբըլ
վառել>վառիլ	վառիլ>վառըլ
փշրել>ֆը՝շը՝լիլ	փշրիլ>փը՝շը՝լը՝ւ
քրքրել>քը՝լքը՝լիլ	քրքրիլ>քը՝լքը՝լը՝ւ

-Ոտ մասնիկով կազմված բայերը այս երկու ձևով էլ գործածվում են (առաջինը ներգործական, երկրորդը չեզոք), ինչպես՝

հոդատել>հուդուդիլ	հոդոտիլ>հուդուդալ
ալիւրոտել>մլլըդիլ	ալիւրոտիլ>մլլըդը՝ւ
ձիթոտել>ծը՝թը՝դիլ	ձիթոտիլ>ծը՝թը՝դը՝ւ
մրոտել>մը՝լը՝դիլ	մրոտիլ>մը՝լը՝դը՝ւ
ջրոտել>չ՛ը՝լը՝դիլ	ջրոտիլ>չ՛ը՝լը՝դը՝ւ

Երկու բայ անենք, որ հատարակ են, այսինքն միևնույն վերջավորութիւնով թե՛ ներգործական են և թե՛ չեզոք: Սրանք են՝

ծնել>ձրնըլ, որ է «ծնուցանել և ծնվել». ինչպես՝ գիօվը դաւնօ ձը՝նիցով «կովը հորթ ծնեց», դաւնուն ի՞փ ձը՝նիցով «հորթը երբ ծնվեց»:

ցնկնել>ցը՝նգնը՝լ, օր. փը՝սը՝դը ցը՝նգնիցով «կատուն ձագ բերեց» կամ «կատվի ձագը ծնվեց»:

Ինչպես հայտնի է, երևանի բարբառը և արևելահայ գրական լեզուն վերի բոլոր չեզոքների դեմ դնում է -վել (հալվել, կոտրվել, ձիթոտվել են), որով չեզոքը ըստ ձևի խառնվում է կրավորականի հետ:

Գ լ ծ ո բ դ ու թ յ ու ն

Ա ռ ա ջ ի ն տ ի պ ա ր

ստոր. ներկա	ստոր. անցյալ	կատարյալ
հազամ	հազի	հազացը՛
հազաս	հազիլ	հազացը՛լ
հազո	հազէլ	հազոց
հազանք	հազինք	հազացոնք
հազաք	հազիք	հազացը՛ք
հազան	հազին	հազացըն

հրամ.— հազո, հազացէք

դերբ.— հազող, հազօղ, հազըցոձ, հազըցիլ, կամ հազացիլ, հազալո, հազըլէք

խնդալ>խոնդօ՛ձ, խընդացը, խոնդո
խրխնջալ>խօխ՛օնջօլ, խօխօնջօց, խօխօնջօ
խրտչիլ>խօտ՛ոլ, խընդացը, խօտո
կաղալ>գաղօլ, գաղացը, գո
կարդալ>գայդ՛օլ, գայդ՛ացը, գայդ՛օ
հաւատալ>ավ՛գօլ, ավ՛գացը, ավ՛գո
հիծկլտալ>հէձ՛գօլ՛գօլ, գացը, գո
հնալ>հիվօլ, հիվացը, վո
հոգալ>հիգ՛օլ, հիգ՛ացը, գ՛ո
ճռալ «հոսիլ»>ջօռօլ, ջռացը, ջռո
հոտոտալ>հօդ՛վօդօլ, հընդ՛ընդացը, հօդ՛վօդո
ձգտալ>ծօդ՛ոդօլ, ծընդ՛ընդացը, ծօդ՛օդո
մամռալ>մօմ՛օմօլ, մընմընացը, մո
մալիլ>մալօլ, մալօց, մալո
ճնալ>մօնօլ, ճնացը, մօնո
մտրանալ>մ՛ռ՛լօլ, մընացը, մալո
յորանջիլ>գէլէ՛նջգէ՛գօլ, գացը, գո
սողալ>սուղօ՛ձ, սուղացը, սուղո
սոսկալ>սխգօլ, սխգացը, սխգո
ցամքիլ>ծօմ՛քօլ, ծընմքացը, ծօմքո
փոնդալ>փօ՛ռօնդգօլ, փընդընգգացը, փօ՛ռօնդգո

ցնծալ>ցօնծօլ բայը լինում է գարմատի կերպով՝ կատ. ցը՛նձիցո, հրմ. ցօնձո

Ե ր կ ր ո ր դ տ ի պ ա ր

ստոր. ներկա	ստոր. անցյալ	կատարյալ
գուղնամ	գուղնի	գուղցո
գուղնաս	գուղնիլ	գուղցոլ
գուղնո	գուղնէլ	գուղցօլ
գուղնանք	գուղնինք	գուղցոնք
գուղնաք	գուղնիք	գուղցո՛ք
գուղնան	գուղնին	գուղցոն

հրամ.— *գուղցէլ, գուղցէք*
դերբ.— *գուղնօլ, գուղցօձ, գուղցիլ, գուղնալո, գուղնալէք*

խոստանալ>խըստանօլ, ցո, ցէլ
ծնրանալ>ձէլանօլ, ձէլացո, ձէլացէլ
կամենալ>գամինօլ, գամիցո
կարենալ>գանըլ, գանցը
կենալ «դադար տալ, էլ չգնալ»>գինօլ, գիցո, գիցիլ
չկար>անջ՛ըլդ՛նօլ, անջ՛ըլդ՛իցո, անջ՛ըլդ՛իցէլ
կլանել>գօլնօլ, գօլցո, գը՝ցէլ
հասկանալ>հագգունօլ, ցո, ցէլ
հաստանալ>հաստնօլ, գցո, գցէլ
հեծանիլ>հէձնօլ, հէձո, ձէլ
հևռանալ>խօսխօնօլ, խօսխօցո, խը՝ռվը՝ցէլ
հիւանդանալ>հօլօնդնօլ, հը՝վը՝նդցո, հը՝վը՝նդցէլ
հպարտանալ>հիրալդնօլ, դցո, ցէլ
ճանապհիլ>ջէնջնօլ, ջէնջացը, ջացէլ
մեծանալ>մընձնօլ, ձցո, ձցէլ
մոռանալ>մառնօլ, մառցո, մառցէլ
մօտենալ>մըդանօլ, մուդցո, մուդցէլ
ուչիլ>առունօլ, ուռիցո, ուռիցէլ
ուրանալ>ուլանօլ, ուլացո, ուլացէլ
ունենալ>ունցնօլ, ունցո, ունցէլ
պարծենալ>բալձինօլ, բալձինցո, բալձինցէլ

Բարբառը լավ զանազանում է գինօլ «դադրիլ, կենալ» և գալ «կանգնիլ, տեղից վեր բարձրանալ»։

Դ *լծորդութիւն*

սաոր. ներկա	սաոր. անցյալ	կատարյալ
թուղում	*թուղի*	*թուղա*
թուղուս	*թուղիլ*	*թուղալ*
թուղու	*թուղէլ*	*թուղօվ*
թողունք	*թողինք*	*թողունք*
թուղուք	*թուղիք*	*թուղուք*
թուղան	*թուղին*	*թուղան*

հրամ.— *թուղ, թուղէք*
դերբ.— *թուղալ, թուղիլ (թուղուցիլ), թուղօձ (թուղուցօձ), թուղուլո, թուղուլէք։*

Նկատելի է կատարյալի հոդնակի ա դեմքը, որ նույն է ներկայի հոդնակի բ դեմքի հետ։

Դ լծորդության մեջ բացի սրանից կան և երեք բայ, առնուլ, դիսնուլ «առնանել», մօդնուլ «մտանել», բայց սրանք խոնարհվում են սովորական ձևով, վերջինը մօդնօլ ձևի վրա է խոնարհվում։

Երբայ և գալ բայերի խոնարհումը Հաճինի բարբառով
(Բիւր. 1898, էջ 779—780)

ներկա

կաշսում	*կագկում*
կաշսուս	*կագկուս*
կաշսու	*կագկո*
կաշսունք	*կագկունք*
կաշսէք	*կագկէք*
կաշսուն	*կագկուն*

անցյալ ապառնի

պիտի իսի	*պիգկի*
պիշսիլ իսի	*պիգկիլ*
պիշսէլ իսի	*պիգկէլ*
պիսունք իսի	*պիգկինք*
պիշսէք իսի	»
պիշսին իսի	*պիգկին*

հրամայական

դնո	*եկո*
միշսո	*միգկո*
դացցէք	*եկէք*
միշսէք	*միգկէք*

սաոր. ներկա

իշսում	*գում*
իշսուս	*գուս*
իշսու	*գո*
իշսունք	*գունք*

իշաիք	գէք
իշաին	գէն

դերբայներ

իշաու	գոլ
իշաող	իկող
գացցած	իկոց!
իշաալու	գալու

անկատար

կաշաի, կաշաի իաի	կագկի, կագկի իաի
կաշաի իաիլ	կագկիլ
կաշաէլ իաի	կագկէլ
կաշաինք իաի	կագկինք
կաշաիք իաի	կագկիք
կաշաին իաի	կագկին

կատարյալ

գացցի	իկի
գացցիլ	իկիլ
գնաց	իկլէք
գացցոնք	իկոնք
գացցիք	իկիք
գացցին	իկին

ապառնի

պիշաում	պիգկում
պիշաուս	պիգկուս
պիշաու	պիգկո
պիշաունք	պիգկոնք
պիշաէք	պիգկէք
պիշաուն	պիգկոն

ՍՎԵԴԻԱՑԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութիւնները (ել, իլ, ալ, ուլ) և նրանց երկրորդ տիպարները (անել, աճիլ, ածալ, ճուլ) Սվեդիալի բարբառում կրում են հետևյալ ձևափոխութիւնները։

Ա. լծորդութիւն

առաջին տիպար

ներկա	անկատար	կատարյալ
ամ>իմ	էի>էր է	ցի>իցա
աս>իս	էիր>էր	ացեր>իցիր
է>է	էր>իր	ացաց>ից
ամք>ինք	էաք>էր ինք	ացաք>իցոնք
էք>իք	էիք>էր իք	ացէք>իցոք
ան>ին	էին>էր ին	ացին>իցէն

երկրորդ տիպար

ներկա	անկատար	կատարյալ
անեմ>նիմ	անէի>նէր է	ի>ա
անես>նիս	անէիր>նէր	եր>իր
անէ>նէ	անէր>նիր	—>—
անեմք>նինք	անէաք>նէր ինք	աք>ունք
անէք>նիք	անէիք>նէր իք	էք>ոք
անեն>նին	անէին>նէր ին	ին>էն

Բ. լծորդութիւն

ներկա	անկատար	կատարյալ
-իմ>էմ	-էի>էր է	-եցալ>իցօ
-իս>էս	-էիր>էր	-եցար>իցուր
-ի>ա	-էր>իր	-եցաւ>իցուլ
-իմք>էնք	-էաք>էր ինք	-եցաք>իցունք
-իք>ոք	-էիք>էր իք	-եցալք>իցոք
-ին>էն	-էին>էր ին	-եցան>իցուն

Գ. լծորդութիւն

առաջին տիպար

-ամ>ում	-ալի>էր է	-ացի>ացա
-աս>ուս	-ալիր>էր	-ացեր>ացիր
-ալ>օ	-ալէր>իր	-ացաց>ացոց
-ումք>ունք	-ալաք>էր ինք	-ացաք>ացունք

-ալք>ոք	-ալիք>էր իք	-ացէք>ացոք
-ան>ուն	-ալին>էր ին	-ացին>ացէն

Երկրորդ տիպար

ներկա	անկատար	կատարյալ
-անամ>նում	-անալի>նէր է	-ացալ>ցօ
-անաս>նուս	-անալի>նէր	-ացար>ցուր
-անալ>նօ	-անալր>նիր	-ացաւ>ցուվ
-անամք>նումնք	-անալաք>նէր ինք	-ացաք>ցունք
-անալք>նոք	-անալիք>նէր իք	-ացալք>ցոք
-անան>նուն	-անալին>նէր ին	-ացան>ցուն

Դ լծորդութիւն

-ում>օմ	-ուի>էր է	-ի>ա
-ուս>օս	-ուիր>էր	-եր>իր
-ու>օ	-ոյր>իր	—>—
-ումք>օնք	-ուաք>էր ինք	-աք>ունք
-ուք>ոք	-ուիք>էր իք	-էք>ոք
-ուն>օն	-ուին>էր ին	-ին>էն

Դ լծորդութեան երկրորդ տիպարը չնչված է։

Ըստ այմ՝ Սվեդիայի բարբառը ունի չորս լծորդութեան և երեք ունպալին տիպար, որոնց խոնարհման համար օրինակ կառնենք հետևյալ բայերը.

Ա. լծ.	սիրիմ	բաքնիմ
Բ. լծ.	խուսէմ	հաքնէմ
Գ. լծ.	հագում	գ'ուղնում
Դ. լծ.	թուղում	—

Մեր կը ճյուղի բարբառներում ընդհանրապես խոնարհման մեջ բայի հիմնական ձևերն են սառբաղաասականի ներկան և անցյալ անկատարը, սահմանականի կատարյալը, հրամայականը և դերբայները, ինչպես բոլոր ժամանակները կազմվում են այս պարզ ձևերից։ Այսպես է նաև Սվեդիայի բարբառը, որ սակայն չնչել է անկատարի պարզ ձևը և վերածվել է բաղադրյալի, ինչպես պիտի տեսնենք քիչ հետո մանրամասն։

Ահա չորս լծորդութեանց պարզ ձևերի խոնարհման պատկերը (դնում եմ նաև անկատարը)։

Ա. լծորդութիւն

առաջին տիպար

սառ. ներկա	սառ. անցյալ	սահմ. կար.
սիրիմ	սիրէր է	սիրիցա
սիրիս	սիրէր	սիրիցիր
սիրէ	սիրիր	սիրից
սիրինք	սիրէր ինք	սիրիցունք
սիրիք	սիրէր իք	սիրիցոք
սիրին	սիրէր ին	սիրիցէն

հրամ.— սիրէ, սիրիցիք
դերբ.— սիրիլ, սիրուձ, սիրիր, սիրիլա, սիրիլոք

երկրորդ տիպար

սառ. ներկա	սառ. անց.	սահմ. կար.
բաքնիմ	բաքնէր է	բաքա
բաքնիս	բաքնէր	բաքիր
բաքնէ	բաքնիր	իրիւք
բաքնինք	բաքնէր ինք	բաքունք
բաքնիք	բաքնէր իք	բաքոք
բաքնին	բաքնէր ին	բաքէն

հրամ.— բիւք, բաքիք
դերբ.— բաքնիլ, բաքուձ, բաքիր, բաքնիլա, բաքնիլոք

Բ լծորդութիւն

երկրորդ տիպար

սառ. ներկա	սառ. անց.	սահմ. կար.
խուսէմ	խուսէր է	խուսիցա
խուսէս	խուսէր	խուսիցուր
խուսա	խուսիր	խուսիցուվ
խուսէնք	խուսէր ինք	խուսիցունք
խուսոք	խուսէր իք	խուսիցոք
խուսէն	խուսէր ին	խուսիցուն

հրամ.— խուսէ, խուսիցիք
դերբ.— խուսիլ, խուսուձ, խուսիր, խուսիլա, խուսիլոք

Երկրորդ տիպար

ստոր. ներկա	ստոր. անցյալ	սահմ. կատ.
հաքնէմ	հաքնէր է	հաքօ
հաքնէս	հաքնէր	հաքար
հաքնա	հաքնիր	հաքուվ
հաքնէնք	հաքնէր ինք	հաքանք
հաքնաք	հաքնէր իք	հաքաք
հաքնէն	հաքնէր ին	հաքան

հրամ.— հաքէ, հաքիք
դերբ.— հաքնիլ, հաքուձ, հաքիր, հաքնիլա, հաքնիլոք

Գ լծորդություն

առաջիր տիպար

ստոր. ներկա	ստոր. անցյալ	սահմ. կատարյալ
հոզդում	հոզդէր է	հոզդացա
հոզդուս	հոզդէր	հոզդոցիր
հոզդո	հոզդիր	հոզդաց
հոզդունք	հոզդէր ինք	հոզդոցունք
հոզդոք	հոզդէր իք	հոզդոցոք
հոզդուն	հազդէր ին	հոզդոցէն

հրամ.— հոզդո, հոզդոցիք
դերբ.— հոզդիլ, հոզդոցուձ, հոզդոցիր, հոզդիլա, հոզդիլոք

Երկրորդ տիպար

ստոր. ներկա	ստոր. անցյալ	սահմ. կատարյալ
գ'ուղնում	գ'ուղնէր է	գ'ուղցո
գ'ուղնուս	գ'ուղնէր	գ'ուղցար
գ'ուղնո	գ'ուղնիր	գ'ուղցուվ
գ'ուղնունք	գ'ուղնէր ինք	գ'ուղցանք
գ'ուղնոք	գ'ուղնէր իք	գ'ուղցոք
գ'ուղնուն	գ'ուղնէր ին	գ'ուղցան

հրամ.— գ'ուղցէ, գ'ուղցիք
դերբ.— գ'ուղնիլ, գ'ուղցուձ, գ'ուղցիր, գ'ուղնիլա, գ'ուղնիլոք

Դ լծորդություն

առաջին տիպար

ստոր. ներկա	ստոր. անցյալ	սահմ. կատարյալ
թուղում	թուղէր է	թուղա
թուղուս	թուղէր	թուղիր
թուղո	թուղիր	իթէօղ
թուղունք	թուղէր ինք	թուղանք
թուղոք	թուղէր իք	թուղոք
թուղուն	թուղէր ին	թուղէն

հրամ.— թէօղ, թուղիք
դերբ.— թուղիլ, թուղուձ, թուղիր, թուղիլա, թուղիլոք

Երկրորդ տիպար

ստոր. ներկա	ստոր. անց.	սահմ. կար.
թուքնում	թուքնէր է	թուքա
թուքնուս	թուքնէր	թուքիր
թուքնո	թուքնիր	իթէօք
թուքնունք	թուքնէր ինք	թուքանք
թուքնոք	թուքնէր իք	թուքոք
թուքնուն	թուքնէր ին	թուքին

հրամ.— թէօք, թուքիք
դերբ.— թուքնիլ, թուքնիւղ, թուքուձ, թուքիր, թուքիլա, թուքիլոք

Այս բայը դրաբարում պատկանում է Ա. լծորդության երկրորդ տիպարին, ինչպես է և Պոլսի բարբառում: Ալաշեղ բռնում է Ա. և Դ լծորդությանց միջին տեղը և ներկայացնում է նրանց խառնուրդը:

Նոնարհումը Սվեդիայի բարբառում շատ այլափոխված է, դրաբարի Ա. լծորդությունը (սիրեմ, պագանեմ) տացել է Բ լծորդության վերջավորությունը (սիրիմ, բռքնիմ), Բ լծորդությունը (իսամ, ագանիմ) տացել է ընդհակառակը Ա. լծորդության վերջավորությունը (խուսէմ, հաքնէմ): Դ լծորդությունը (հագամ, գոպանամ) տացել է Դ լծորդության վերջավորությունը (հոզդում, գ'ուղնում), իսկ Դ լծորդության վերջավորությունը (թողում) դարձել է օմ (թուղօմ), որ պատահաբար հիշեցնում է գրաբարի գոմ, գոս, գոյ բայի վերջավորությունը:

Բայց թեև վերջավորութիւնները այսպես փոփոխած են, սակայն դա միայն ձայնական օրէնքների պատճառով է, թեև ոչ գրաբարի ամբողջ առարկը նուն է և նոր վերջավորութիւններ չեն առեղծված։

Ա. լծորդութեան երկու տիպարների ներկայի մեջ (եմ, ես, է ինք, էք, են, անեմ, անես, անէ, անեմք, անէք, անեն), ուր որ ե և է գտնվում են բառամիջում, համաձայն այս բարբառի ձայնական օրէնքների, դառնում են ի, իսկ ուր որ է գտնվում է բառավերջում, մնում է է (սիրէ, բաքնէ)։ Բ լծորդութեան երկու տիպարների ներկայի մեջ չորս տեղ (եզ. ա, բ, հոգն. ա, գ) համաձայն բարբառի օրէնքների ի ձայնավորը դառնում է է, այսպես՝ -իմ, -իս, -իմք, -ին>էմ, էս, էնք, էն.— եզակի գ դեմքի վերջավորութիւնը (ի, աճի) ըստ բարբառիս ձայնական օրէնքների դառնում է ա. ըստ որում ամեն վերջաձայն ի դառնում է կանոնավոր կերպով ա.— իսկ հոգնակի բ դեմքի վերջավորութիւնը (իք, աճիք) դառնում է ապ, նապ, ըստ որում դարձեալ բարբառիս ձայնական օրէնքների համաձայն, ի ձայնավորը կ, ք բաղաձայններից առաջ դառնում է ա։

Գ լծորդութեան երկու տիպարների ներկայի մեջ չորս տեղ (եզ. ա, բ, հոգն. ա, գ) գրաբարը ունենալով ա ձայնավորը, ըստ բարբառում եղած օրէնքի, դառնում է ու.— եզ. գ դեմքը ունենալով -այ վերջավորութիւնը, համաձայն բարբառի օրէնքների, դառնում է օ (հազալ>հոգզօ, գողանալ>գ'ուղնօ).— իսկ հոգն. բ դեմքի համար պետք է դառնանք հետևյալ ձևով։ Այս դեմքի վերջավորութիւնն է այ, որ շեշտի տակ լինելու պատճառով պիտի դառնար աւ։ Բայց այս աք ադդվելով Բ լծորդութեան հոգն. բ դեմքից, դարձել է ապ, ինչպես է նաև Դ լծ. հոգն. բ դեմքը (թուղթք)։

Դ լծորդութեան ներկայի մեջ գրաբարը ներկայացնում է միշտ ու. այս ձայնավորը բառավերջում լինում է միշտ օ, որով եզ. գ դեմքը պիտի լիներ անպատճառ օ, սրիշ դեպքում ու դառնում է էօ կամ օ, թերևս եզ. գ դեմքի ազդեցութեամբ է, որ մյուս դեմքերն էլ առացել են օ, ինչպես որ հոգն. բ դեմքն էլ Գ և Դ լծորդութեանց ազդեցութեամբ առացել է -աք վերջավորութիւնը։

Ա. լծորդութեան կատարյալի մեջ ունենք վեց դեպքում ե ձայնավորը, որ ըստ բարբառիս օրէնքների դառնում է ի.— եզ. գ դեմքում ունենք եա երկրաբառը, որ դարձել այս բարբառի օրէնքների համեմատ դառնում է նուինպես ի.— եզ. ա դեմքում բառավերջի ի դառնում է միշտ ա.— հոգն. ա դեմքում վերջավանկի ա դառնում է ու,— հոգն. գ դեմքի մեջ վերջավանկի ի

ձայնավորը դառնում է է.— Իսկ հոգն. բ դեմքի է ձայնավորը մյուսների նմանողութեամբ դարձել է ա.

Ա. լծորդութեան բ տիպարի կատարյալն էլ շարժվում է նուն օրէնքներով։

Բ լծորդութեան կատարյալը բացի եց- վանկից, որ արդեն տեսանք, չորս տեղ ունի ա ձայնավորը, որ դարձել է ու, մի տեղ բառավերջում այ, որ դարձել է ըստ օրինի օ, իսկ հոգնակի բ դեմքի աք մյուսների ազդեցութեամբ է։

Բ լծ. բ տիպարի կատարյալը նուն է նախորդի հետ, պակասում է միայն եց վանկը։

Գ լծ. կատարյալը ունի հինգ տեղ միջավանկում ա, որ ըստ օրինի լինում է ա կամ ո, երկու տեղ վերջավանկում ա, որ դառնում է ու, եզ. ա դեմքում վերջաձայն ի, որ դառնում է ա, հոգն. գ դեմքում վերջավանկում ի, որ դառնում է է, եզ. բ դեմքի վերջավանկում ե, որ դառնում է ի։

Գ լծ. բ տիպարի կատարյալը նուն է Բ լծ. կատարյալի հետ։

Գ լծ. կատարյալը նուն է Ա լծ. բ տիպարի կատարյալի հետ։

Ամենից ավելի հետաքրքրականը Ա լծ. բ տիպարի և Դ լծ. կատարյալի եզ. գ դեմքն է (իբիւք, իբեօղ), որոնք դուռ շարունակութիւնն են գրաբարի (եպագ, եթող)։ Այսաեղ նշանավոր է ոչ միայն բայական նախահավելված ե (շատ հին դարերի հիշատակ), որը բառասկզբում լինելով դարձել է ի, այլև առաջին բառի մեջ ա, որ գ բաղաձայնից առաջ դանվելով դարձել է իւ (ոչ թե ու) և երկրորդ բառի մեջ ու։

Այժմ պիտի խոսենք անկատարի մասին, որի կազմութեան հպանակը բացառիկ է հայ բարբառների մեջ։

Առնենք օրինակ Ա. լծորդութեան անկատարի ձևը՝ գրաբարում.

սիրէի	*սիրէաք (=սիրէինք)*
սիրէիր	*սիրէիք*
սիրէր	*սիրէին։*

*Այս վեց ձևից երրորդը (սիրէր) ըստ ձայնական օրէնքների պիտի տար սիրիր, ինչպես որ այժմ էլ կա բարբառում։ Եզակի բ դեմքի դեմ (սիրէիր) ունենք այժմ սիրեր ձևը, որից երևում է, որ խանգարիչ պատճառը երկու ձայնավորների (է և ի) հանդիպումն էր, պետք էր սրանցից մեկը ջնջել, եթե ջնջված լիներ ի ձայնավորը, պիտի ունար *սիրեր, որ ըստ ձայնական օրէնքների պիտի տար *սիրիր, որ սակայն չունենք, մեր ունեցածն է այժմ սիրեր,*

որ կարող է առաջացած լինել միայն *սիրիր ձևից, ուրեմն երկու ձայնավորների միջից ջնջվել է ոչ թե շեշտալի ի ձայնավորը, այլ և, որով և առացվել է նախ *սիրիր, որ ապա դարձել է սիրեր արդի ձևը: Այսպիսով բացատրեցինք եզ. ր սիրեր և եզ. գ սիրիր ձևերը, որոնք միասին են իրրև պարզ ձև: Մյուսները բաղադրյալ են:

Բաղադրյալ ձևեր են

սիրէր է սիրէր իք
սիրէր ինք սիրէր ին:

Վերջին երեքը ներկայի ձևերն են (եմք, էք, են) ուստի սիրեր ներկայացնում է անցյալի դադափարը, բայց դա անցյալ դերբայի ձևը չէ, որովհետև անցյալ դերբայն է սիրիր, ուստի ստիպված ենք ընդունելու, թե դա անկատարի եզ. ր դեմքն է, որ ընդհանրացել է բոլոր դեմքերի վրա:

Գալով եզ. ա դեմքի սիրեր և ձևին, կարծում եմ, որ այստեղ և առաջացած է հին ի անկատարից, վերջածայն ի ջնջվելով և անկախ և ձայնավորը միալով և՝ իրրև վերջածայն, ըստ բարբառիս ձայնական օրենքի:

Այսպիսով անկատարի այս ձևը կազմում է միջին մի օղակ ել ճյուղի բարբառների և կր ճյուղի բարբառների անկատարի միջև: Ել ճյուղում ունենք ավելի զարգացած կամ հատնացած ձևով՝

իմ էր «էի» իս էր «էիր» էր «էր»
ինք էր «էինք» էք էր «էիք» ին էր «էին»

իսկ այստեղ, հակառակ դիրքով և միայն չորս դեմքի համար բաղադրյալ ձևով՝

էր է «էի», էր էիր», իր «էր», էր ինք «էինք»
էր իք «էիք», էր ին «էին»:

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌ

Ժամանակ բայի ներկան է՝ եմ, ես, է, ենք, եք, են, անցյալ անկ. էի, էիր, էր, էինք, էիք էին: Երկրորդական բաղադրյալ ժամանակներ կազմելու համար իրրև օժանդակ բայ Ախալցխալի և Ախալքալաքի խոսվածքները գործ են ածում ըլիմ, ըլիս, ըլի, ըլինք, ըլիք, ըլին, Լենինականը՝ եղնիմ, եղնիս, եղնի, եղնինք, եղնիք, եղնին, ինչպես նաև՝ եղա, եղար, եղավ, եղանք, եղար, եղան ձևերը:

Եղանակային ձևերից պարզ ժամանակներ ունեն ըղձականը՝ ներկայում և անցյալում, սահմանականը՝ անց. կատարյալում և հրամայականը՝ առաջին ձևում:

Ըղձականի ժամանակները իրենց կազմութեամբ և իմաստով նման են արդի հայերենի նույն ժամանակներին, այն տարբերութեամբ միայն, որ երրորդ կարգի բայերը բարբառումս պահպանում են իրենց հիմքի ի ձայնավորը, ինչպես՝ լըսէմ, խաղամ, խօսիմ:

Կատարյալի կազմութեամբ առաջին խոնարհման բայերը բաժանվում են երկու խմբի, Բալագետի մի մասը արմատի վրա ընդունում են էցի, էցիր, էց, էցինք, էցիք, էցին վերջավորութեյունները, ինչպես՝ ամընչէցի, ամընչէցիր, ամընչէց, ամընչէցինք, ամընչէցիք, ամընչէցին: Երկրորդ խմբին պատկանող բայերը արմատի վրա առանում են ի, իր, էց, ինք, իք, ին վերջավորութեյունները, ինչպես՝ վագի, վագիր, վագէց վագինք, վագիք, վագին: Հաճախ առաջին խմբի բայերը խոնարհվում են երկրորդ ձևով և ընդհակառակը՝ երկրորդ խմբի բայերը առաջին ձևով:

Ծանոթ. 1. Երկրորդ խմբին պատկանող բերել, բան. բայերը եզ. երրորդ դեմքում էց-ի փոխարեն ունեն ավ վերջավորութեյուն:

Երրորդ խոնարհման բայերը կատարյալում շատ կանոնավոր կարգով արմատի վրա ընդունում են ա, ար, ավ, ացինք, ացիք, ացին վերջավորութեյունները, ինչպես՝ հասա, հասար, հասավ, հասացինք, հասացիք, հասացին:

Երկրորդ խոնարհման բայերը կատարյալի կազմութեյամբ դարձյալ բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի բայերի կատարյալը կազմվում է առաջին խոնարհման առաջին խմբի բայերի նման, միայն է-ի փոխարեն հիմքում ունենալով ա ձայնավորը, ինչպես՝ խընդացի, խընդացիր, խընդաց, խընդացինք, խընդացիք, խընդացին: Երկրորդ խմբի բայերը հիմքում ունենում են ց և այդ ցյականն հիմքի վրա առանում են երրորդ խոնարհման բայերի վերջավորութեյունները, ինչպես՝ խաղցա, խաղցար, խաղցավ, խաղցանք, խաղցաք, խաղցան:

Հրամայականի առաջին կամ պարզ ձևը ունի միայն եզ. և հոգն. ր դեմք:

Առաջին և երկրորդ խոնարհման առաջին խմբի բայերի անորոշ դերբայի հիմքերը (ներառյալ հիմքի ձայնավորները) առանա-

լով շեշտ, ծառայում են որպես եզ. բ դեմքի հրամայականն: Հոդնակի բ դեմքի հրամայականը կազմելու համար երկրորդ խոնարհման առաջին խմբի բայերը առանում են ցէ՛ք, իսկ առաջին խոնարհման բայերը ք, ինչպես՝ գ՛ըրէլ — գ՛ըրէ — գ՛ըրէ՛ք, լըսէլ — լըսէ — լըսէ՛ք, խընդալ — խընդա — խընդացէ՛ք, հազալ — հազա — հազացէ՛ք:

Երրորդ և երկրորդ խոնարհման երկրորդ խմբի բայերի հրամայականը կազմվում է կատարյալի հիմքի վրա ավելանալով ի՝ եզակիի համար և էք՝ հոդնակիի համար, ինչպես՝ հասնիլ — հասի — հասէ՛ք, խօսիլ — խօսի — խօսէ՛ք, խաղալ — խաղցի — խաղցէ՛ք:

Ծանոթ. 1.— Մի քանի բայերի համար եզ. բ դեմքի հրամայական է հանդիսանում կատարյալի հիմքը, հոդնակի թվում այսպիսի բայերը առանում են էք, ինչպես բ՛էրէլ, բ՛է(ր)— բ՛էրէ՛ք, ուղէլ — կէ(ր), -կէրէ՛ք, լալ-լա՛ց-լացէ՛ք, լէզնիլ-լէ՛զ-լեզէ՛ք, սէսնիլ-սէ՛ս-սէսէ՛ք, առնիլ-ա՛ռ-առէ՛ք, բ՛առնալ-բ՛ա՛ց-բ՛ացէ՛ք, զարգէլ-զա՛րգ-զարգէ՛ք, լըցնէլ-լի՛ց-լըցէ՛ք:

Հրամայականի երկրորդ կամ բարդ ձևը կազմվում է ըղձական եղանակի և թող մասնիկի հարադրութիւնամբ: Երկրորդ ձևը ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ, երկու թիվ՝ եզակի և հոդնակի: Ներկա ժամանակը թէ եզակիում, թէ հոդնակիում ունի երկու դեմք՝ առաջին և երրորդ, անցյալ ժամանակը՝ դարձյալ երկու դեմք, բայց երկրորդ և երրորդ:

Թող մասնիկը կարող է լինել հառադաս, այս դեպքում հրամայականի շեշտը ընկնում է բայի վրա, օրինակ՝ խաղա՛ թող, էրթա՛ թող: Մի քանի հրամայական բայեր իրար հաջորդելիս, թող մասնիկը գործ է ածվում մեկ անգամ, ինչպես թո՛ղ գ՛ա, էրթա, կէնա:

Անհամանականի ներկան և անց. անկատարը կազմվում են ըղձականի համապատասխան ժամանակների և կը մասնիկի հարադրութիւնամբ: Կը մասնիկը կարնո բարբառում դրվում է խոնարհվող բայից հետո: Ձայնավորով սկսվող բայերը կ կամ գ են առնում նաև սկզբից, օրինակ՝ կուգէմ կը, գ՛ուղէմ կը, կէդնիմ կը, կէրթայի կը, կէնէմ կը և այլն: Տալ, գալ, լալ միավանկ բայերը սկզբից առանում են կու կամ գ՛ու (կուտամ կը, գ՛ուքամ կը, գ՛ուլայի կը) ներկայի մի քանի ձևեր իրար հաջորդելիս կը մասնիկը կարող է դրվել միայն վերջին բայից հետո, օրինակ՝ ճամբէն քանը առանի, գ՛ընգնի քընի կը:

Երբ կը-ին անմիջապես հաջորդում են օր (որ), ու շաղկապները արտահատութեան դեպքում կը մասնիկը ը-ի աղումով կարող է միանալ դրանց և առացվել կօր, կու ձևերը. օրինակ՝ ասէնի կօր, արդէն բ՛էրընքսըվար չընգած գ՛ուլա, վազէ կու մօրը չիմաց կուտա:

Ծանոթութիւն.— Առանց կը մասնիկի ներկա են կազմում գ՛իդեմ, ուզիմ, կամ, եմ բայերը, որոնց ժխտականը կազմվում է պարզ ձևով՝ դրականի վրա ավելացնելով չ ժխտականը:

2. Երրորդ խոնարհման բայերի անց. անկատարի եզ. գ դեմքը շատ դեպքերում է-ի փոխարեն լինում է ի (ունէր — ունիր, խօսէր — խօսիր):

Անհամանականի ապառնին և անց. ապառնին կազմվում են ապառնի դերբայի և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների բաղադրութիւնամբ: Բացի այս, բարբառս ունի նկարագրական ապառնի, որը կազմվում է պիդի մասնիկով և ըղձականի ժամանակներով, ինչպես՝ պիդի սիրէմ, պիդի սիրէի: Մի քանի ապառնի բայեր իրար հաջորդելիս պիդի մասնիկը կարող է դրվել միայն առաջինի վրա: Այդ մասնիկը բայից հեռանում է այն դեպքում, երբ մասնիկի և բայի միջև դրվում է բայի հետ կապակցութիւն ունեցող որևէ բառ, ինչպես՝ պիդի մեն գ՛ամ: Ապառնու գաղափար են արտահայտում նաև ըղձականի և սահմանականի ներկայի ձևերը:

Վաղակատարի և հարակատարի ներկա և անցյալ ժամանակները արդի հայերենի նման ունեն բաղադրյալ կազմութիւն, կազմվում են համապատասխան դերբայներով և օժանդակ բայի ներկայի և անց. անկատարի հարադրութիւնամբ:

Ենթադրական կամ պայմանական եղանակի ապառնու և անց. ապառնու համար բարբառս հատուկ ձևեր չունի: Այդ ժամանակների գաղափարը արտահայտելու համար գործ են ածվում սահմանական եղանակի ներկայի և անց. անկատարի ձևերը: Պայմանականութիւնը արտահայտվում է նաև թէ շաղկապով կազմված թեական նախադասութիւնների միջոցով: Այդպիսի նախադասութեան առարկայը դրվում է ըղձական եղանակով. ինչպես՝ թէ էրթամ, գ՛ըքա՛ս: Թէ թուխա տամ, գ՛ըչա կը:

Հարկադրական եղանակը կազմվում է ըղձականից՝ պիդի եղանակիչով, որը հառադաս դրվածժվելիս Ախալքալաքի և Ախալցխայի խոսվածքում հանդես է գալիս դի ձևով, օրինակ՝ պիդի վառէմ,

վառէմ դի, պիդի վառէի, վառէի դի: Ինչպես արդին նկատել ենք, նույն ձևերը կիրառվում են որպես սահմանականի ապառնի և անց. ապառնի:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

դերբայներ

անորոշ	*աշէլ «նալել»*	*կարէլ*
ապառնի	*աշէլու*	*կարէլու*
վաղակատար	*աշէր*	*կարէր*
հարակատար	*աշած*	*կարած*
ենթականական	*աշօղ*	*կարօղ*
ըղձական	*աշէ*	*կարէ*

ըղձական եղանակ
ապառնի (ներկա)

եզակի		հոգնակի	
աշամ	*կարէմ*	*աշէնք*	*կարէնք*
աշէս	*կարէս*	*աշէք*	*կարէք*
աշէ	*կարէ*	*աշէն*	*կարէն*

անց. ապառնի

եզակի		հոգնակի	
աշէի	*կարէի*	*աշէինք*	*կարէինք*
աշէիր	*կարէիր*	*աշէիք*	*կարէիք*
աշէր	*կարէր*	*աշէին*	*կարէին*

վաղակատար (ներկա)

եզակի			հոգնակի		
աշէր	*էմ*	*կարէր էմ*	*աշէր*	*էնք*	*կարէր էնք*
»	*էս*	» *էս*	»	*էք*	» *էք*
»	*է*	» *է*	»	*էն*	» *էն*

անց. վաղակատար

եզակի			հոգնակի		
աշէր	*էի*	*կարէր էի*	*աշէր*	*էինք*	*կարէր էինք*
»	*էիր*	» *էիր*	»	*էիք*	» *էիք*
»	*էր*	» *էր*	»	*էին*	» *էին*

հարակատար (ներկա)

եզակի			հոգնակի		
աշած	*եմ*	*կարած եմ*	*աշած*	*ենք*	*կարած ենք*
»	*ես*	» *ես*	»	*եք*	» *եք*
»	*է*	» *է*	»	*են*	» *են*

անց. հարակատար

եզակի			հոգնակի		
աշած	*էի*	*կարած էի*	*աշած*	*էինք*	*կարած էինք*
»	*էիր*	» *էիր*	»	*էիք*	» *էիք*

Սահմանականի անց. կատարյալ

եզակի		հոգնակի	
աշէցի	*կարի*	*աշէցինք*	*կարինք*
աշէցիր	*կարիր*	*աշէցիք*	*կարիք*
աշէց	*կարէց*	*աշէցին*	*կարին*

հրամայական եղանակ

առաջին կամ պարզ ձև

եզակի	հոգնակի
աշէ, կարէ	*աշէք, կարէք*

Ծանոթ.— 1. Այսպես են խոնարհվում՝ սիրել, պաքել, լսել, խնդրել, բ'ըռնել, համբերել, համբուրել, հանել, մաշել, վառէլ, խածել, վալլել, կանչել, ազատել, խառնել, սըրտնել, թալնել, վազել, չարչըրել, գ'ըլօրել, շաղվել, ժօղվել, կանչել, ծալել, խաշել. խանձել, հրել, ժըրել և այլն:

Ե Ր Կ Ր Օ Ր Դ Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

դերբայներ

անորոշ	*խնդալ*	*խաղալ*
ապառնի	*խընդըլու*	*խաղլու*
վաղակատար	*խընդացեր*	*խաղցեր*
հարակատար	*խընդացած*	*խաղցած*
ենթականական	*խընդացօղ*	*խաղցօղ*
ըղձական	*խընդա*	*խաղա*

Ըղձական եղանակ

ապառնի (ներկա)

եզակի		հոգնակի	
խընդամ	*խաղամ*	*խընդանք*	*խաղանք*
խընդաս	*խաղաս*	*խընդաք*	*խաղաք*
խընդա	*խաղա*	*խընդան*	*խաղան*

անց. ապառնի

եզակի		հոգնակի	
խընդայի	*խաղայի*	*խընդայինք*	*խաղայինք*
խընդայիր	*խաղայիր*	*խընդայիք*	*խաղայիք*
խընդար	*խաղար*	*խընդային*	*խաղային*

Սահմանականի անց. կատարյալ

եզակի		հոգնակի	
խընդացի	*խաղցա*	*խընդացինք*	*խաղցանք*
խընդացիր	*խաղցար*	*խընդացիք*	*խաղցաք*
խընդաց	*խաղցավ*	*խընդացին*	*խաղցան*

Հրամայական եղանակ

առաջին կամ պարզ ձև

եզակի		հոգնակի	
խընդա՛,	*խաղցի՛*	*խընդացէ՛ք,*	*խաղցէ՛ք*

Ծանոթ.— 1. Այսպես են խոնարհվում՝ հաղալ, հըննալ, սառնալ, էրէվալ, հէվալ, հավտալ, դ՛առնալ, մօռնալ, ամչընալ, դ՛իղնալ, վըլալ, պարծէննալ, յիմանալ, թուլնալ, դ՛իմանալ, բ՛առնալ, հրըրդնալ, մընալ, կարօղնալ, հասկընալ, վախէնալ, տաքնալ, ճվալ, խըղչալ, շօրօրալ, հիվընդնալ, զարմանալ, դ՛ինջանալ և այլն։

Ներգործ. խոնարհում

դերբայներ

անորոշ	*խօսիլ*
ապառնի	*խօսէլու*
վաղակատար	*խօսէր*

հարակատար	*խօսած*
ենթականական	*խօսօղ*
ըղձական	*խօսի*

Ըղձական եղանակ

ապառնի (ներկա)		անց. ապառնի	
խօսիմ	*խօսինք*	*խօսէի*	*խօսէինք*
խօսիս	*խօսիք*	*խօսէիր*	*խօսէիք*
խօսի	*խօսին*	*խօսէր*	*խօսէին*

Սահմանական անց կատարյալ

խօսա	*խօսանք*
խօսար	*խօսաք*
խօսավ	*խօսան*

Հրամայական եղանակ

առաջին ձև

խօսի՛, խօսէ՛ք

Ծանոթ. 1.— Այսպես են խոնարհվում՝ ուտնիլ, հօքնիլ, մըրսիլ, նըստիլ, հանիլիլ, կայնիլ, բ՛անիլ, ծընիլ, հաքնիլ, մէռնիլ, հասնիլ. բ՛ուսնիլ, գ՛անգըղիլ, ուշխադիլ, զարթնիլ, հանդիբիլ, բ՛էրգիլ, քրքընիլ, անցնիլ, գ՛ընդիլ, յիջնիլ, հէծնիլ, կըրնիլ, փախնիլ, թըռնիլ, սօրվիլ, մըդնիլ, առնիլ, գ՛անիլ, դ՛իրնիլ, բ՛ըլիլ, քընիլ, ուրրիլ, բ՛օրիրըսնիլ, խըռօվիլ, չօքիլ ևն։

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդությանց կրկին տևսակներն, այն է ընդամենը ութ ձևի փոխարեն՝ Նոր-Ջուղայի բարբառը ստեղծել է չորս լծորդություն։

առաջին	*լծորդությունը*	*վերջանում է*	*-ել*
երկրորդ	»	»	*-ճել*
երրորդ	»	»	*-ալ*
չորրորդ	»	»	*-անալ*

Հին հայերենի չորրորդ լծորդության -ուլ ձևը պահած է միայն առնուլ տալ «խաղի մեջ տարվել», որ չի խոնարհվում։

Խոնարհման հիմնական ձևերն են ամեն բայի համար՝ ըղձական ներկան, անկատարը, սահմանականի կատարյալը, հրամայականը և դերբայները:

Ահավասիկ չորս յոթդրութեանց նույն ձևերի պատկերը.

Ա յոթդրութեան սիրել

ըղձ. ներկա	ըղձ. անկատար	կատարյալ
սիր-եմ	սիր-ի	սիր-եցի
սիր-ես	սիր-իր	սիր-եցիր
սիր-ի	սիր-էր	սիր-էց
սիր-ենք	սիր-ինք	սիր-եցինք
սիր-եք	սիր-իք	սիր-եցիք
սիր-են	սիր-ին	սիր-եցին

հրամայական	դերբայ
սիր-իր	անորոշ.— սիր-ել
մի՛ սիր-ել	ներկա.— սիր-ում
սիր-էք	անցյալ.— սիր-էլ, սիր-ած
մի՛ք սիրել	ապառնի.— սիր-ելու

Ծանոթ. 1.— Ինչպես տեսնվում է, ներկայի եզ. գ դեմքը (սիրի) ճշտիվ նույն է անկատարի եզ. ա դեմքի հետ, գործածութեան մեջ զանազանվում են տեղից կամ նրանց հետ գործածվող դերանուններից:

2.— Կատարյալի բանը իրրև ձայնավոր ունի ամեն տեղ ե, միայն եզ. գ. դեմքը ե. այս տարբերութեանը շատ կանոնավոր է, որովհետև առաջինը ծագում է հին հայերենի ե ձայնից (սիր-եցի են), իսկ երկրորդը գալիս է ետ ձևից (սիր-եաց): Ետ երկրաբարը ըստ օրինի դառնում է միշտ ե:

3.— Ճիշտ նույնպիսի տարբերութեան կա անորոշ դերբայի և անցյալ դերբայի միջև, առաջինը -ել ձևով՝ ներկայացնում է հին հայերենի -ել վերջավորութեանը, երկրորդը -ել ձևով՝ հին հայերենի -եալ վերջավորութեանը:

Ահապես են խոնարհվում ի միջ այլոց՝

ածել>ածել, եցի, իր	աղաչել>աղաչել, եցի, իր
ականել>ականել, եցի, իր	ամաչել>ամանչել, եցի, իր
աղանձել>աղանձել, եցի, իր	այրել>լերել, եցի, իր

անիծանել>անիծել, եցի, իր	զգուել>զգվել
աշխատիլ>աշխատել, եցի, իր	զրկել>զրկել
ապականել>ապականել, եցի	թաթախել>թաթախել
ապաշխարել>ապաշխարել	թակել>թակել
ապրիլ>ապրել, եցի, իր	թաղել>թաղել
ապստամբել>ապստամբել	թմրել>դ՛մրել
արժել>աժժել	թքանել>թքել, եցի
աւերել>լավիրել	լիզուլ>լիզել
բաժանել>բ՛աժանել	լսել>լսել, լսեցի
բամբասել>բ՛ամբասել	խառնել>խառնել
բաշխել>բախշել	խրտնիլ>խոդ՛ընել, եցի
բուսանիլ>բ՛ուսանել	
բուսել>բ՛օվել, եցի, իր	խօսիլ>խօսել
բորբոքել>բ՛որբ՛ոքել	ծլիլ>ծլել
բղխիլ>բ՛խել, եցի	ծիծաղիլ>ծըծաղել
բշտիլ>բշտել	ծնանիլ>ծնել, եցի, իր
բռնել>բ՛ռնել	համբերել>համբ՛երել
բրդել>փոթիլ	հանել>խանել
գաղել>գ՛ադել	հանդիպիլ>հանդ՛իպել
գզել>գ՛զել	ճանաչել>ճանաչել
գլորիլ>գ՛լորել	մանել>մանել
գրել>գ՛րել, եցի, իր	նստիլ>նստել
գովել>գ՛օվել	շուարիլ>շվարիլ
գուգուրալ>գ՛ուրգ՛ուրել	ուշիլ>ուշել.- ուեցի
դառել>գ՛ադել	*պառակիլ>պառակել
*դեղձանիլ>գ՛ըխծ՛նել «բորբոքանել»	սառչիլ>սառել
եփել>լեփել	սառակիլ>սառակել
զարդարել>զարդ՛արել	սկանիլ>սկսել, եցի
զարթնուլ>զարթընել, նեցի, նիր	սովորիլ>սավորել
սպանանել>սրպանել	
վաստակիլ>վաստակել	
փախիլ>փթիել, եցի, իր	

Բ յոթդրութեան — խագ՛նել

ըղձ. ներկա	ըղձ. անկատար	կատարյալ
խագ՛-նեմ	խագ՛-նի	խագ՛-ա
խագ՛-նես	խագ՛-նիր	խագ՛-ար

խագ՛-նի	խագ՛-նէր	խագ՛-ավ
խագ՛-նենք	խագ՛-նինք	խագ՛-անք
խագ՛-նէք	խագ՛-նիք	խագ՛-աք
խագ՛-նեն	խագ՛-նին	խագ՛-ան

հրամայական	դերբայ
խագ՛-ի՛ր	անորոշ— խագ՛-նել
մի՛ խագ՛-նել	ներկա— խագ՛-նում
խագ՛-է՛ք	անցյալ— խագ՛-էլ, խագ՛ած
մի՛ք խագ՛-նել	ապառնի— խագ՛-նելու

Այս լծորդության հետևող բայերը հետևյալներն են.

անկանխել>ընդնել, ընդա, ընդիր
գառանիլ>գ՛դ՛նել, գ՛դ՛ա, գ՛դ՛իր
թռառնիլ>թռնել, թռա, թռ-իր
լինել>լնել, լնի, լնիր,
կորնչիլ>կորնել, կորա, րիր
հասառնիլ>հասնել, սա, սիր,
մեռառնիլ>մեռնել, սա, սիր,
մտառնել>մտնել, մտա, մտիր,
պրծառնիլ>պրծնել, ծա, ծիր,
փախչիլ>փախնել, խա, խիր.

Դ լծորդություն — խաղալ

ըղձ. ներկա	ըղձ. անկատար	կատարյալ
խաղ-ամ	խաղ-ի	խաղ-ացի
խաղ-աս	խաղ-իր	խաղ-ացիր
խաղ-ա	խաղ-էր	խաղ-աց
խաղ-անք	խաղ-ինք	խաղ-ացինք
խաղ-աք, խաղ-էք	խաղ-իք	խաղ-ացիք
խաղ-ան	խաղ-ին	խաղ-ացին

հրամայական	դերբայներ
խաղա՛	անորոշ— խաղ-ալ
մի՛ խաղալ	ներկա— խաղ-ում
խաղացէ՛ք	անցյալ— խաղ-ացել, -ացած
մի՛ք խաղալ	ապառնի— խաղ-ալու

Այս լծորդության հետևող բայերը հետևյալներն են.

ադալ>ադալ, ացի, ած
բզդալ>բզդալ, ացի, ած
գնալ>գ՛նալ, գ՛ննացի, գ՛նա
(այս բայը ամբողջ կատարյալի մեջ ունի կրկին ն. իսկ մյուս ժամանակներում մի -ն)։
գոռալ>գ՛ոռալ (ամպի), աց
գոդալ>գ՛ոդալ, ացի, ած
երևալ>արեվալ, ացի, ած
զռալ>զռալ, աց, ած
խաղալ>խաղալ
խնդալ>խնդալ
խոկալ>խոկալ, «զղվիլ»
խրխնջալ>խրխնջալ
կարդալ>կարդ՛ալ
ձգռտալ>դկռտալ
մաղկատել>մխկտալ
ՈՒալ>ՈՒալ, ՈՒացի, ՈՒած
(այս բայի կա. եզ. գ դեմքը Թեհրան ու Թաւրիզ մննաց ձևով է, բայց այստեղ՝ մնաց).
յորանջել>առշառտալ
նստալ>նվիլ «անքալ»
որթկալ>վորթկալ
սարտալ>սռտալ
սողալ>սողալ, ացի, ած
փնչալ>փնչալ, ացի, ած
փռնչել>փռշտալ, ացի

Դ լծորդություն — մոռանալ

ըղձ. ներկա	ըղձ. անկատար	կատարյալ
մոռ-անամ	մոռ-անի	մոռ-ացա
մոռ-անաս	մոռ-անիր	մոռ-ացար
մոռ-անա	մոռ-անէր	մոռ-ացավ
մոռ-անանք	մոռ-անինք	մոռ-ացանք
մոռ-անէք	մոռ-անիք	մոռ-ացաք
մոռ-անան	մոռ-անին	մոռ-ացան

հրամայական	դերբայներ
մոռ-ացիր	անորոշ— մոռ-անալ
մի՛ մոռանալ	ներկա— մոռ-անում
մոռ-ացէ՛ք	անցյալ—մոռ-ացել, մոռացած
մի՛ք մոռանալ	ապառ— մոռ-անալու

Այս լծորդության հետևող բայերն են՝

գոդանալ>գ՛ոդանալ
կարոդանալ>կարոդանալ

դիմանալ>դ'իմանալ
զարմանալ>զարմանալ
իմանալ>յիմանալ
լողանալ>լուղանալ
խոստանալ>խոստանալ
*կշտանալ>կուշտանալ
հասկանալ>խասկանալ
ուրախանալ>ուրանալ
չանալ>չ'անալ

Այս խոնարհման են հետևում նաև -ցնալ և -ենալ վերջավորութեամբ հետևեալ հինգ բայերը, որոնցից երկուսը հրամայականում շեղվում են ընդհանուր կանոնից.

բառնալ>բ'առնալ, բ'առցա, բ'առց
դառնալ>դ'առնալ, ացա, ացիր, դ'առց
ունել>ունենալ, եցա, եցիր
ուզել>ուզենալ, եցի, եցիր
պարծիլ>պարծենալ, եցա, եցիր

ԱԴՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի չորս լծորդութեանց կրկին տեսակների, այն է ութ ձևի խոնարհման փոխարէն, Ադուլիսի բարբառն ունի երեք ձևի խոնարհում.

Ա. լծորդութիւնը վերջանում է -իլ
Բ » » -ա՛ցիլ
Գ » » -ալ

Խոնարհման հիմնական ձևերն են ամեն բայի համար՝ ըղձականի ներկան, կատարյալը, հրամայականը և դերբայները:
Ահա երեք լծորդութեանց խոնարհման պատկերը.

Ա. լծորդութիւն

ըղձ. ներկա	կատարյալ	հրամայական
թակ-իմ	թակ-ամ	
թակ-իս	թակ-աս	թակ-ա
թակ-ի	—	
թակ-իք՛	թակ-աք	
թակ-իք՛	թակ-աք	թըկ-ո՛հիք՛
թակ-ին	թակ-ան	

դերբայներ՝

անորոշ— թակ-իլ

ներկա— թակ-ամ
անցյալ— թակ-ալ, թակ-ած
ապառնի— թըկ-է՛լոց:

Եթե բառը թեթև է, վերջավորութեանց մեջ գտնված ա ձայնը ամեն տեղ էլ դառնում է ո. ահա թեթև բայի խոնարհման մի օրինակ.

ըղձ. ներկա	կատարյալ	հրամայական
սպը-իմ «սիրեմ»	սպը-ոմ	
սպը-իս	սպը-ոս	սպը-ո
սպը-ի	—	
սպը-իք՛	սպը-ոք	
սպը-իք	սպը-ոք	սբըը-ոհիք՛
սպը-ին	սպը-ոն	

դերբայներ՝

անորոշ— սպը-իլ
ներկա— սպը-ոմ
անցյալ— սպը-ած, սպը-ալ
ապառնի— սբըը-է՛լոց:

Եթե բառը այնպես է, որ շեշտը ընկնում է վերջավորութեան վրա (այսինքն առաջին վանկերում կա ը ձայնավորը), այն ժամանակ վերջավորութեանց ա ձայնը դառնում է ե (անշեշտ դեպքում ևս է ո). ինչպես՝ արիլ «սրել»,

ըղձ. ներկա	կատարյալ	հրամայական
սբ-իմ	սբ-էմ	
սբ-իս	սբ-էս	սբէ
սբ-ի	—	
սբ-իք՛	սբ-էք	
սբ-իք՛	սբ-էք	սբ-ո՛հիք՛
սբ-ին	սբ-էն	

դերբայներ՝

անորոշ— սբիլ
ներկա— սբ-ոմ
անցյալ— սբ-էլ, սբ-էծ
ապառնի— սբ-է՛լոց:

Հիշյալ լծորդութիւնը ներկայացնում է գրաբարի առաջին լծորդութիւնը. թայլ նուլնին են վերածված նաև ամբողջ երկրորդ լծորդութիւնը և երրորդ ու չորրորդ լծորդութեանց հետևող մի քանի բայեր. ինչպես՝ կարդալ>կ'ա՛ռդիլ, լցուլ>լըցցի՛լ, հաւաքալ>հիվա՛ռիլ:

Խոնարհման մեջ նկատելի է, որ հոդնակի առաջին և երկրորդ դէմքերը նոյն են ամեն տեսակի բայերի և բոլոր լծորդութեանց մեջ, այս նոյնութիւնը առաջացած է համաձայն այն ձայնական օրէնքի, որով ն ջնջվում է ք բաղաձայնից առաջ:

Բոլոր այն ձևերի մեջ, ուր բայական վերջավորութիւնը երկավանկ է, շեշտը անցնելով այդ վերջավորութեան առաջին վանկի վրա, բայի արմատը մնում է անշեշտ, ուստի համաձայն ձայնական օրէնքների՝ զրկվում է իր ձայնավորից: Այս երևոյթը գտնում ենք հրամայականի հզ. ր դէմքի և ապառնի դերբայի մեջ.— բրկ-ա՛-ցիք՛, բրկ-է՛լոց, սըյր-ո՛ւիք՛, սըյր-էլոց են:

Կան բայեր, որոնք վերջավորում են -ցիլ, բայց նրանց մեջ ն արմատական լինելով՝ խոնարհվում են այս լծորդութեան համեմատ և ոչ թե երկրորդի, ինչպես՝ բառնալ>բեռնիլ, բաժանիլ>բժո՛ցիլ, բորբոսցիլ>բըրբո՛ւցիլ, բռնել>բռնցիլ: Որոշ բայեր խոնարհման մեջ ցույց են տալիս թեթև զարտուղութիւն, այսպես՝ կա՛յցիլ «կանգնիլ» բայը լինում է հրմ. կա՛յցի, թեև կա նաև կանոնաւոր կա՛յցո ձևը.— հրամա՛յիլ լինում է հրմ. հգ. հրըմմա՛յիք՛ փոխ. *հրըմըյո՛հիք՛.— ըղա՛չիլ «ադաչել» լինում է ներկ. դերբ. ըղըչէ՛լիս, անց. դերբ. ըղըչա՛ճած.— ա՛րիլ «անել» ըղմ: ներկ. ա՛րիմ կամ ի՛րիմ են.— ի՛զիլ «ուզել» դերբ. ըզո՛ւո՛ծ.— վ'ի կալիլ՝ հրամ. վի՛կօլ,—է՛լիլ «լինել», հրմ. եի՛ կամ է՛լո.—

Բ լծորդութիւն

ըղմ. ներկա	կատարյալ	հրամայական
մա-նիմ	*մա-նամ*	
մա-նիս	*մա-նաս*	*մա-նի*
մա-նի	—	
մա-նիք՛	*մա-նաք*	
մա-նիք՛	*մա-նաք*	*մանի՛ք՛, մընո՛հիք՛*
մա-նին	*մա-նան*	

դերբայներ՝

անորոշ— մանիլ

ներկա— մանամ
անցեալ— մանած, մանալ
ապառնի— մընէլոց

Նոյն լծորդութեան թեթև խոնարհումը.

ըղմ. ներկա	կատարյալ	հրամայական
բակո՛նիմ «գգենում»	*բակո՛նամ*	
բակո՛նիս	*բակո՛նաս*	*բակո՛նի*
բակո՛նի	—	
բակո՛նիք՛	*բակո՛նաք*	
բակո՛նիք՛	*բակո՛նաք*	*բակո՛նիք՛, բակնո՛հիք՛*
բակո՛նին	*բակո՛նան*	

դերբայներ՝

անորոշ— բակո՛նիլ
ներկա— բակո՛նամ
անցեալ— բակո՛նած, բակո՛նալ
ապառնի— բակընէլոց

Ծանոթ.— Այս լծորդութեան մեջ բայական վերջավորութիւնները միշտ երկվանկ լինելով, շեշտվոր ձևեր չեն կարող դոյութիւն ունենալ, ուստի և առաջին լծորդութեան երրորդ ձևի նման խոնարհում էլ չկա:

Կարեճալ>գո՛րիլ բայը, որ իրապես պատկանում է Ա լծորդութեան, խոնարհվում է համաձայն Բ լծորդութեան, բացի ըղմական, ներկա և անորոշ դերբայի ձևերից, այսպես՝ ըղմ. ներկա գորիմ, կաբ. գըրո՛ճամ, հրամ. գըրո՛ճի, գ'ըրո՛հիք՛, գ'ըրրցո՛հիք՛, դերբ. ներկ. գ'ո՛րիմ, անորոշ գ'ո՛րիլ, անց. գ'ըրոճած, գ'ըրո՛հալ, ապառնի գ'ըրէլոց:

Շնալ>շնա՛ցիլ բայը չունի հրամ. հգ. երկրորդ ձևը՝ (*շընըհո՛հիք՛), այլ միայն շնո՛հիք՛:

-Օցի՛լ վերջավորած բայերը, որոնք ընդամենը չորս հատ են (կրօ՛ցիլ «կորչիլ», սռռօ՛ցիլ «սառչիլ», բռռօ՛ցիլ «ուռչիլ», փխօ՛ցիլ «փախչիլ») և պատկանում են այս լծորդութեան, խոնարհման ժամանակ ներկայացնում են հետևյալ տարբերութիւնները,— ըղմականի, ներկա և անորոշ դերբայի մեջ օ ունում է. ինչպես՝ կրօ՛ցիլ, կրօ՛ցիմ, կրօ՛ցամ, հրամայական եզ. բ դէմքի մեջ գտնում ենք հավասարապես օ կամ ա. ինչպես՝ փխօ՛հի կամ փխա՛ցի, կրօ՛ցի

համ՝ կրա՛ճի ևն. կատարյալի, հրամայական հգ. ձևերի և անցյալ դերբայի մեջ լինում է ա. փխա՛նամ, փխա՛նիք, փխա՛ցած, փխա՛նալ, ապառնի դերբայի և հրամ. հգ. երկրորդ ձևի մեջ շեշտից առաջ գտնվելով վերածվում է ը. ինչպես՝ փխընի՛լոց փխընո՛ւմ, փխընի՛ր:

Հիշյալ լծորդությունը ներկայացնում է գրաբարի բոլոր չորս լծորդության երկրորդ տիպարները, այն է -անեմ, -անիմ, -անամ, -նում: Այսպես օրինակ՝ գաանել>գ՛իդո՛նիլ, գողանալ>գ՛ըղա՛նիլ, բարձրանալ>բրձըրո՛նիլ *(և բոլոր անվանական բայերը),* զարթնուլ>ըռթնա՛նիլ, պրծանիլ>պռծա՛նիլ, *ինչպես նաև ուրիշ լծորդության բայերից՝ ինչ.* փախչիլ>փըխո՛նիլ *(որ է* փախնուլ*),* աղալ>ըղա՛նիլ, գրաիլ>ցռաա՛նիլ *(իմա* գրաանալ*),* սառչիլ>սռո՛նիլ *(իմա* սառնուլ*),* ուռիլ>ըռո՛նիլ *(իմա* ուռնուլ*),* շնալ>շնա՛նիլ *(իմա* շնանալ*),* յաւելուլ>բվըլցո՛նիլ, կորչիլ>կրո՛նիլ, լողալ>լղա՛նիլ *(իմա* լողանալ*):—Այս կարգի* -անիլ *վերջավորության փոխարեն Ցղնայի ենթաբարբառը դնում է* -ա՛նալ, ո՛ւրիշ՝ *համապատասխան գրաբարին: ինչպես՝* մոա՛նալ, ռոո՛նալ, բղա՛նալ *«աղալ» (Սարգս. էջ 108):*

Մասանել բայը դառնալով մոխ, խոնարհվում է Ա *լծորդության երրորդ տեսակի պես. օրինակ՝ կար.* մոեմ, *հրամ.* մո՛ւ, *դերբ.* մառում, մաե՛ծ, մաե՛լ, մոելոց, *«մոնելու»:*

Գ լծորդություն

բղձ. ներկա	կատարյալ	հրամայական
խզզամ	*խզզա՛նամ*	
խզզաս	*խզզա՛նաս*	*խզզա՛նի*
խզզո	—	
խզզաք	*խզզա՛նաք*	
խզզաք	*խզզա՛նաք*	*խզզա՛նիք՛*
խզզան	*խզզա՛նան*	

դերբայներ՝

անորոշ— խզզալ
ներկա— խզզա՛նիս
անցյալ— խզզա՛նած, խզզա՛նալ
ապառնի— խզզա՛նալոց

Նույն լծորդության թեթև խոնարհումը

բղձ. ներկա	կատարյալ	հրամայական
բրվէօմ «երևամ»	*բրվո՛համ*	
բրվէօս	*բրվո՛հաս*	*բրվո՛հի*
բրվէօ	—	
բրվէօք	*բրվո՛հաք*	
բրվէօք	*բրվո՛հաք*	*բրվո՛հիք՛*
բրվէօն	*բրվո՛հան*	

դերբայներ՝

անորոշ— բրվէօլ
ներկա— բրվո՛լիս
անցյալ— բրվո՛հած, բրվո՛հալ
ապառնի— բրվէլոց

Այս լծորդությունը ներկայացնում է գրաբարի երրորդ լծորդության առաջին տեսակը, որ է -ալ: *Հետաքրքրական է նկատել, որ նույն լծորդության երկրորդ տեսակի բայերը (*-անալ*), բոլորն էլ վերածված են բարբառիս մեջ* -նիլ *ձևին, այսպես են* գողանալ>գ՛ըղա՛նիլ, հեռանալ>հռո՛նիլ, կշտանալ>կըշտանի՛լ, հասկանալ>հըսկա՛նիլ, զարմանալ>զարմա՛նիլ, իմանալ>յըմանիլ, յղանալ>յըղա՛նիլ, մոռանալ>մռանի՛լ, լուանալ>լվոնի՛լ, սառնալ>ըսռա՛նիլ, *նույնպես և բոլոր անվանական բայերը, ինչպես՝* բարձրանալ>բրձըրո՛նիլ *են: Բուն* -ալ *վերջավորած բայերից մի մասը նույնպես անցած է* -նիլ, -իլ, *ձևին, ինչ.* աղալ>ըղա՛նիլ, բանալ>բռո՛նիլ, բառնալ>բէ՛ռնիլ, դառնալ>դռ՛ռնիլ, լողա՛լ>լղանիլ, կարդալ>կ՛ռադիլ, հաւատալ>հվա՛տիլ, շնալ>շնանի՛լ: *Մի քանիսն էլ խոնարհվում են օժանդակով, այսպես՝* խաղալ>հաղ՛արիլ, որոճալ>ա՛բուճ, ա՛բիլ, կաղալ>կա՛ղի ասլ: *Մնացյալները դարձած են* -ալ *և կազմում են այս լծորդությունը: Սրանց մեջ էլ կարևոր է նկատել հետևյալ հանգամանքը.*

Որովհետև վերջավանկի շեշտալ ա *ձայնը բարբառիս մեջ տալիս է* օ, *ուստի հալբենի երրորդ լծորդության պատկանող այն բոլոր բայերը, որոնց մեջ նախաշեշտ վանկերը սուղ են, բնականաբար բարբառիս մեջ ստացել են* -օլ *վերջավորությունը, որի թեթևն է* ել, *այսպես՝*

բառաչել>բըռընչօլ	*ոդդալ>ոդդօլ*
գնացալ>գնրացօլ	*մոմոալ>մոմօլ*
գալ>գռօլ	*փաշտալ>փռըշտօլ*

թռթռալ>թըռթըռալ փրփռալ>փըրփռալ
խրխնջալ>խըրխընջալ
կոկծալ>կըսկըծալ
կրկչալ>կրկըչալ
ճռալ>ճիռալ

Բայց ունենք նաև մի քանի ուրիշ բայեր, որոնց մեջ թեև նախաշեշտ վանկերը սուղ չեն, բայց բարբառիս մեջ շեշտը ճեռով վերջավանկի վրա, վերածված են սուղի, ուստի և դարձյալ բայական վերջավորութիւնը եղած է -ալ։ Այսպես են՝

գոռալ>գ'ըռռալ հազալ>խըզալ
դողալ>դըղղալ ոռնալ>նըռնալ
դողդողալ>դըղդըղալ ործկալ>ըռծըռէալ
երևալ>ըրվէալ որոտալ>ըրըռալ
կաթիլ>կըթթալ տրտփել>տըրտփալ

Ուրախանալ բայը առանձնով կրկնակի ձև՝ եղած է ըրխա՛նիլ և ըրխո՛յ, և հետևաբար խոնարհվում է երկու ձևով։

Այս բոլորի հետևանքն այն է լինում, որ բարբառիս մեջ երրորդ յոգնութեան պատկանող բոլոր բայերը լինում են շեշտավոր և առաջին ձևի խոնարհմանքը (որ է թակ-իմ, մոռանիմ) անհայտ է։

Մի քանի բայեր, որոնք վերջանում են -իլ, փոխանակ հետևելու Ա յոգնութեան, խոնարհվում են այս Գ յոգնութեան համեմատ, առյերկվելով միայն ըղձականի և անորոշ ու ներկա դերբայների մեջ։ Այսպես են՝

խնւսիլ խնւսիմ խըսէլիս
կա՛ռիլ կա՛ռիմ կըռա՛լիս
հաջիլ հաջիմ հջէլիս
ճնանչիլ ճնանչիմ ճընըչէլիս, ճնչէլիս
ծծա՛ղիլ ծծա՛ղիմ ծըծըղէլիս
ըմանչիլ ըմանչիմ ըմըչէլիս (բայց և ըմբնչամ)
հվատիլ հվատիմ հըվըտէլիս

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ

Անցյալ կատարյալը Ղարաբաղի բարբառում համաձայն է դրաբարի կատարյալի կազմութեան. գործածված վերջավորութեունները հետևյալներն են։

Առաջին և երկրորդ յոգնութեան հետևող բայերը վերցնում են՝

1.— էցէ -էցէնք
2.— էցէր -էցէք
3.— -՛էց -էցէն

Նույն յոգնութեուններին հետևող և անել, անիլ վերջավորող բայերը վերցնում են՝

1. -՛է -՛էնք
2. -՛էր -՛էք
3. -՛ավ -՛էն

Երրորդ յոգնութեան պատկանող բայերը վերցնում են՝

1. -ացէ -ացէնք
2. -ացէր -ացէք
3. -աց -ացէն

Նույն յոգնութեան անալ վերջավորող բայերն առանում են նույն վերջավորութեունները, միայն եզակի երրորդ դեմքը՝ -ացա՛վ։

Բոլոր այն բարբառների մեջ, որտեղ գրաբարի ի ձայնը առանց է-ի վերածվելու ճնում է ի (ինչպես Գորիսի բարբառում), վերի բայական վերջավորութեուններն առնում ենք՝

Ա. յ. 1. -էցի -էցինք
2. -էցիր -էցիք
3. -՛ից -էցին
1. -՛ի -՛լինք
2. -՛իր -՛իք
3. -՛ավ -՛ին
Բ. յ. 1. -ացի -ացինք
2. -ացիր -ացիք
3. -՛աց -ացին

Հրամայականի եզակի երկրորդ դեմքը կազմելու համար արմատի վրա առաջին և երկրորդ յոգնութեան մեջ ավելացնում է է, ի (գրականէ իր ձևը), սրանց անել և անիլ ձևերի մեջ իր. երևին էլ ի, է. երրորդ յոգնութեան մեջ ա, իսկ երրորդ յոգնութեան անալ վերջավորող ձևերի մեջ ա՛ց մասնիկը (գրականեն էր, իր). օրինակ՝ չմփէ-չմփի, կախէ-կախի, ծածկէ-ծածկի, քթէր (քթի, քթէ), մոռր (մոռ, մոռ), մէռիր (մէռի, մէռէ), փսիր(փսի, փսէ). կլծռաս, գըռաս, հսկաց, կլծռաց, պարկաց, մօռաց են։

Հրամայականի հոդնակի երկրորդ դեմքը կազմելու համար էլ առաջին և երկրորդ յոթդրութիւնները պահանջում են է՛ցէք, է՛ցիք, էք, իք, աճել և աճիլ վերջավորող բայերը՝ էք, իք. երրորդ յոթդրութիւնը ա՛ցէք, ա՛ցիք, աք, *իսկ* աճալ վերջավորողները՝ ա՛ցէք, ա՛ցիք, *օրինակ՝* չփէ՛ցէք, չփէ՛ցիք, չա՛փէք, չա՛փիք, կրխէ՛ցէք, կխէ՛ցիք, կա՛խէք, կա՛խիք, մէ՛ռէք, մէ՛ռիք, քքիք, քքէք, մռէ՛ք, մռի՛ք, կյօռռա՛ցէք, կյօռռա՛ցիք, կյօ՛ռռաք, կյուղա՛ցիք, կյուղա՛ցէք, մուռա՛ցէք, մռա՛ցիք. *և այլն:*

Ղարաբաղի բարբառի դերբայներն են.

1. Ներկա.— կ՚ըթող, ասող, խնող, մռանցող են:
2. Անցյալ.— կ՚ըթած, ասած, մռանցած կամ կ՚ըթալ, ասալ, մռանցալ են
3. Ապառնի.— կ՚ըրլլական, ըսլլական, մռաբնրլլական կամ կ՚ըրլլցուք, ըսլլցուք, մռաբլլցուք են:
4. Անորոշ.— կ՚ըրիլ, ասել, մռանանալ են:

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Հին հայերենի յոթդրութիւնները ու խոնարհումը շատ պարզված են Մարաղայի բարբառում. Դ յոթդրութիւնը իր երկու տեսակներով՝ ինչպես ալլոր, նաւնպես և ալառող, բոլորովին ջնջված է, ջնջված է նաւնպես Ա յոթդրութեան երրորդ տեսակը (-անել), որով հին հայերենի ութ ձև խոնարհման փոխարէն ունում է միայն հինգ խոնարհում: Բայց այս էլ, եթե ի նկատի առնենք բայական վերջավորութիւնները, ավելի կպարզվի և կվերածվի ընդամենը երկու ձևի, հետևյալ եղանակով.

սաոր. ներկա	կատարյալ	հրամայական
-իմ,	-ամ -ըմ, -ամ	-ը, -ա
-իս,	-աս -իր, -ար	-էք
-ը,	-ա -ից, -ավ, -աց	
-ինք,	-անք -ընք, -անք	
-էք,	-աք -ըք, -աք	
-ին,	-ան -ըն, -ան	

Սաոր. ներկայի -իմ, -իս- -ը, -ինք, -էք, -ին *վերջավորութիւնները ծագում են հին հայերենի Ա յոթդրութեան ներկայի վերջավորութիւններից, իսկ* -ամ, -աս, -ա, -անք, -աք, ան *ծագում են Դ յոթդրութեան ներկայի վերջավորութիւններից: Երկուսի վրա էլ կարելի է ավելացնել և, որ ներկայացնում է հին հայերենի Ա և Դ յոթդրութեանց երրորդ տիպարը:*

Կատարյալի -ըմ, -իր, -ընք, -ըք, -ըն *վերջավորութիւնները ծագում են հին հայերենի Ա յոթդրութեան երկրորդ տիպարի կատարյալի վերջավորութիւններից, միայն եզ. գ դեմքը (-ից) ծագում է նույն յոթդրութեան առաջին տիպարից և* -աց՝ *Դ յոթդրութեան առաջին տիպարից: Բացի սրանից՝ կատարյալի ա դեմքի վրա ավելացել է մ հանգը՝ առար. ներկայի ա դեմքի ազդեցութեամբ: Կատարյալի երկրորդ ձևի վերջավորութիւնները (-ամ, -ար, -ավ, -անք, -ար, -ան) ծագում են հին հայերենի Բ յոթդրութեան երկրորդ տիպարի կատարյալից: Երկու շարքն էլ կարող են առաջնալ -ց, որ Դ յոթդրութեան կրկին տիպարներին է հատուկ՝ թէ՛ հին հայերենի, և թէ՛ Մարաղայի բարբառի մեջ:*

Հրամայականի վերջավորութիւններից ը՝ ծագում է հին հայերենի Ա յոթդրութեան առաջին տիպարի -ա>է, *հանդից, ա՝ ծագում է Դ յոթդրութեան ա հանդից, իսկ էք՝ հին հայերենի Ա յոթդրութեան երկրորդ տիպարի հրամայականի վերջավորութիւնն է, որ ալառեղ ընդհանուր է դարձել:*

Անհավասիկ հին հայերենի երեք յոթդրութեանց և նրանց երկրորդ տիպարի առացած վիճակը Մարաղայի բարբառի մեջ:

Ա. յոթդրութիւն

սաոր. ներկա	կատարյալ	հրամայական
ազատիմ	*ազատը՛մ*	*ազատը՛*
ազատիս	*ազատիր*	*ազատէք*
ազատը՛	*ազատից*	
ազատինք	*ազատը՛նք*	
ազատէք	*ազատը՛ք*	
ազատին	*ազատը՛ն*	

դերբ.— *ազատէլ, ազատիր, ազատօլու, ազատած:*

Այս խոնարհման են պատկանում Մարաղայի բարբառի բայերի մեծագույն մասը: Ձիշտ վերի ձևն ունեն այն բայերը, որոնց արմատական ձայնավորն է ա կամ ը. ինչպես՝ ածել, աղել, աշխատել, ապաշխարել, ավբիրել, առնել, թաքխել, թաղել, թավալել, .թռծել, տռնել (<թրջել), ժօղել (ժողովել), լկել, լփրել, լցել, լզել, խափրել (խարել), խանձրել, խառնել, խըլել, ծալել, ծախել, տասկել (ծածկել), ծամրել, ծծել, կազմրել, կաթել, կախել, կանչել,

կապրել, կատարել, կառել, կառկըճճել, կըքել, կծել, քըշըռել, կուխխել, կռել *(կորել)*, կռծել, կռճատել, համփըքերել, խամբրել, համփռել *(համբուրել)*, խաճել, ճմռել, մադել, մաճել, մաշել, մարսել, մկրդել, մըխսել, ախտել, իսաբկել, շաղախել, շառել, շռճել, օղօրկել, չարչըրել, պախել, պաշտել, պատմրել, պառարկել, փսակել, պառռել, ճըճջել, սաճդռել, սառքել, ըսպաճել, սրսըկել, վառել, տաճջել, տաշել, տապկել, տճգել, տրպրել, ցաճել, փակել, փառատել, փըչխել, փառել, փխսել, քակել, քաղել, քամրել, քաւրել, քռքռել, օզճել, օծել, օխճել:

Երբ բայի արմատական ձայնավորը տարբեր է, բայական վերջավորութիւնից մէջ գտնված ը ձայնն էլ կրում է զանազան ձայնական փոփոխութիւններ: Այսպես՝ եթէ արմատական ձայնավորն է ա, վերջածայն ը դառնում է ի՝. ինչպես՝ ադաչել—ադաչի՛, թափել—թափի՛, պամբասել, ոժել, պոժի՛նել, պացել, բախշել, պոռցել, տադրել, զատել, զոռկել, խոշել, խոլել, խոչել *(հաջել)*, չոփել, ճոխճխել, ճոռքել, *քոշել: Մյուս դէմքերի մէջ, ուր որ ը պաշտպանված է հաջորդ բաղաձայնով, ը մնում է, ինչպես՝ կատարյալում՝* թափըմ, թափըճք *և այլն:*

Եթէ արմատական ձայնավորն է ի, է, վերոհիշյալ ը դառնում է ի. ինչպես՝ փիրրել, փիրրի, երել—երի, *կ'իզել, կ'իրել,* եփել, զառբիրել, թիք*'*ել *(թքանել)*, տիմբիրել *(թմրել)*, լիլիկել *«օրօրել»*, խիրել *(խալթել)*, խեխտել, խիճչել, ծեփել, ծիլել, քիցել *(ձգել)*, ճերկել, շինել, ճիրճիճել *«ջուր ցանել»*, ըսահղծել, վերցել, ցիրւել, ցինել, փոքիրել, փիչել, փիրզել, քելել, քիրել, քիրրել, քինել, քիսել:

Շրթնային բաղաձայնները առանում են ը՛. ինչպես՝ կապրից են:

Դիտ.— *Բանալ բայը, որ գրական լեզվում անկանոն է, բարբառս մէջ առանալով պացել ձևը, վերածվել է կանոնավորի, կոր.* պացըմ, *հրմ.* պացի, *բայց իրրև ենացորդ հնութիւն՝ նաև* պաց, պաս: *Զարնել>*զոռկել, *լնուլ>*լըցել *բայերը մնին երկու ձև հրմ.* զարկ՛, լըց, *որոնք անկանոն են, և* զարկ՛ի՛, լըցը՛, *որոնք կանոնավոր են:— Հանել>*խաճել *բայի հրամայականն է* խա՛ճ, խաճե՛ք: *Ձգել>քիցել բայի հրամայականն է* քիցի՛, քից, *բաղաձայնի մոտ՝* քիս, *օր.* քիս ցած: *Բերել>*պերել *լինում է հրմ.* պի *կամ* պիր, պիրե՛ք. *ենացյալ ժամանակները կանոնավոր են:*

*Եթէ արմատական ձայնավորը ու է (կամ նաև օ), վերջավորութիւնց մէջ ը ձայնը ամեն դիրքով էլ կարող է դառնալ ու կամ ենալ անփոփոխ. ինչպես՝ հնձել>*ունճել:

սառ. ներկա	կատարյալ	հրամայական
ունճիմ	*ունճում, ունճըմ*	*ունճու, ունճը*
ունճիս	*ունճիր*	*ունճէք*
ունճու, ունճը՛	*ունճից*	
ունճինք	*ունճունք, ունճընք*	
ունճէք	*ունճուք, ունճրք*	
ունճին	*ունճուն, ունճրն*	

դերբ.— *ունճէլ, ունճիր, ունճօլու, ունճած.*

Այսպես նաև օղօրկո՛ւ «ուղարկիր»:

Պատահում է մինչև անգամ, որ սառ. ներկայի ի ձայնավորն էլ հետաւակի արմատական ձայնավորին և դառնա ու, ինչպես՝ ուճնում, ուսնում, ուառում:

Երբ բայի արմատական ձայնավորն է էօ, իւ, վերջավորութիւնց ը, ի ձայնները դառնում են իւ կամ ի, բայց կատարյալի ը ձայնը կարող է մնալ է կամ դառնում է ու, որով տարբերվում է սառ. ներկայից. ինչպես՝

սառ. ներկա	կատարյալ	հրամայական
չէօքիմ	*չէօքում*	*չէօքու*
չէօքիս	*չէօքուր*	*չէօքէք*
չէօքու, չէօքի	*չէօքուց, չէօքից*	
չէօքունք	*չէօքունք*	
չէօքէք	*չէօքուք*	
չէօքուն	*չէօքուն*	

դերբ.— *չէօքէլ, չէօքուր, չէօքօլու, չէօքած:*

Այս կարգին են պատկանում՝

*բովել>*պէօվէլ, պէօվըմ
գլորել>կ'իւլլէօրէլ, կ'իւլլէօրըմ
*ողորել>*էօղիւռէլ, էօղիւռըմ
*չոկել>*ճէօկէլ. ճէօկըմ
*օրօրել>*էօրէօրէլ, էօրէօրըմ.

*Ահա և ուզել>*իւզել *բայի խոնարհումը:*

սառ. ներկա	կատարյալ	հրամայական
իւզիմ	*իւզում*	*իւզու*
իւզիս, իւզիս	*իւզուր, իւզիր*	*իւզէք*

իւղիս	*իւղից, իւղից*
իւղիսնք, իւղինք	*իւղունք*
իւղէք	*իւղուք*
իւղիւն, իւղին	*իւղուն*

դերբ.— *իւղէլ, իւղիր, իւզօլու (կամ իւզօլը՛), իւզած:*

Առաջին լծորդութեան համեմատ են խոնարհվում նաև թուրքերենից փոխառյալ բայերը, որոնք մեծ թիվ են կազմում բարբառիս մեջ և իրենց բայական կազմութեամբ վերածվում են երկու տեսակի.—

ա) Նրանք, որ թուրքական արմատի վրա ուղղակի կպցնում են հայկական -ել մասնիկը և բ) նրանք, որ թրք. անցյալ դերբայից են կազմված: Այսպես՝ առաջին կարգին են պատկանում բրախել «թողնել, լքել», ճազըրել, «պատրաստել», կուչաղել «գրկել», կիբըլել «կողպել», գեօրիշել «իրար հետ տեսակցիլ» են:— Երկրորդ կարգին են պատկանում՝ բաշլամիշել «սկսիլ», կուդուրմուշել «կատաղիլ», փարչալամըշել «պատառատռել», ասիրգամիշել «ինանալ», բափշըրմըշել «պատվիր տալ, հանձնել», կըզդըրմըշել «կատաղեցնել» են: Այս բոլորը խոնարհվում են վերի ձևով, ինչպես՝

սառ. ներկա	կատարյալ	հրամայական
կուդուրմուշիմ	*կուդուրմուշըմ*	*կուդուրմուշա*
կուդուրմուշիս	*կուդուրմուշիր*	*կուդուրմուշէք*
կուդուրմուշը՛	*կուդուրմուշից*	
կուդուրմուշինք	*կուդուրմուշընք*	
կուդուրմուշէք	*կուդուրմուշըք*	
կուդուրմուշին	*կուդուրմուշըն*	

դերբ.— *կուդուրմուշէլ, կուդուրմուշիր, կուդուրմուշօլու են:*

Երկրորդ տիպար

Ա. լծորդութեան երկրորդ տիպարը ջնջված է բարբառից: Այն բայերը՝ որ հին հայերենում պատկանում են այս կարգին, իրենց ձևը փոխելով՝ անցել են ուրիշ լծորդութեանց: Այս կարգին են պատկանում պագանել, բքանել, խածանել և ը...: Առաջինը առացել է թրք. մալել ձևը, երկրորդը՝ բիք «թուք» արմատի համեմատ դարձել է բիքմել, երրորդը բոլորովին ջնջված և փոխանակված է կծել հոմանիշով: Այս բոլորը պատկանում են Ա. լծորդութեան առաջին տիպարին: Վերջապես վերջին բայը իր նեղքին

ձայնական փոփոխութեանց պատճառով մոռնում է անկանոն բայերի շարքը:

Բ լծորդութիւն

սառ. ներկա	կատարյալ	հրամայական
խարփիմ	*խարփամ*	*խարփը՛*
խարփիս	*խարփար*	*խարփէք*
խարփը՛	*խարփաւ*	
խարփինք	*խարփանք*	
խարփէք	*խարփաք*	
խարփին	*խարփան*	

դերբ.— *խարփիր, խարփած, խարփօլու:*

Այսպես են խոնարհվում:

ապրիլ>ապռէլ	*նմանիլ>լմանէլ*
թռռումիլ>թռռօմէլ	*նստաղիլ>նվաղէլ*
լսիլ>լըսէլ	*շտարիլ>շտարէլ*
խմիլ>խըմբէլ, խմամ	*ուռիլ>ուռէլ*
խրտնիլ>խռնել	*սատակիլ>սատկըէլ*
կանգնիլ>կալնէլ	*սկիլ>սըկկըէլ*
կատաղիլ>կադըղէլ	*սովորիլ>սօրվըէլ*
հաւանիլ>խաւնէլ	*քրտնիլ>էքռնէլ*
ճաքիլ>ճաքքէլ	
ճաքճքիլ>ճաքճըքէլ	
ճգնիլ>ճըլնէլ	
մրսիլ>մըսէլ	
նստիլ>նըստէլ	

Դիտ.— Այսպես են խոնարհվում հատկապես կրավորական բայերը և կրավորակերպ չէզոքները:

Ապրիլ>ապռէլ բայը կարող է հետևիլ թե՛ այս և թե՛ առաջին լծորդութեան, որով կատարյալի մեջ կլինի ապռամ, ապռար, ապռավ, ապռանք, ապռաք, ապռան կամ ապռըմ, ապռիր, ապռից, ապռընք, ապռըք, ապռըն:

Նստիլ բայը հրամ. լինում է ըստ օրինի նըստը՛, բայց հնի համեմատ նաև նը՛ստ:

Երկրորդ տիպար

ստոր. ներկա	կատարյալ	հրամայական
խաանիմ	խաասամ	խասը՛
խաանիս	խաասար	խասէ՛ք
խաանը՛	խաասավ	
խաանինք՛	խաասանք	
խաանէք՛	խաասաք	
խաանին	խաասան	

դերբ.— *խաանել, խասիր, խաանօլու, խաասած:*

Այսպես են խոնարհվում՝

գարթնուլ>գոնթնել
թռանիլ>թռնել
մեռանիլ>մըէրնել, մըէռնել
վախչիլ>փախնըէլ

Ձարթնուլ բայը փոփոխ ձայնավոր ունենալու պատճառով ստոր. ներկա գ դեմքը և հրամայական եզ. բ դեմքը լինում է գորթնի:

Գ լծորդութիւն

ստոր. ներկա	կատարյալ	հրամայական
խազդամ	խազդացըմ	խազդա՛
խազդաս	խազդացիր	խազդացէ՛ք
խազդա	խազդաց	
խազդանք	խազդացընք	
խազդաք	խազդացըք	
խազդան	խազդացըն	

դերբ.— *խազդալ, խազդացիր, խազդալու, խազդացած, խազդացօղ:*

Այսպես են խոնարհվում՝

աղալ	*խուխուխուտալ (հառաչել)*
բզդալ	*սկռտալ (ձգտալ)*
քխխալ	*մօւռալ (մլաւել*
ոռալ	*ճնալ*
չէռալ	*մօռմքալ (մորմոքիլ)*

էրտալ	*վըէրծկալ (ործկալ)*
խոզդալ	*օսօճալ*
խոխնջալ	*սօղդալ*
ծըղդալ (ծիծաղիլ)	*ցավալ*
ծպպալ (ծփալ)	*սիրալ, սիրացըմ, սիրացիր են:*
կարթալ	
ավատալ (հաւատալ)	

Նույն յօրդութիւնն պատկանող թևեթև ձայնավորով բայերը մանավանդ ա ծանր ձայնավորը դարձնում են ա. ինչպես՝ *դովիլ>կէօվալ, կէօվամ, կէօվաց, կէօվա՛, կէօվացէ՛ք, կէօվացած, կէօվալու, լսանալ>լիվալ, լիվամ, լիվա են:*

Նկատելի է հատկապես սիրել բայը, որ վերջավոր ութիւնը փոխելով՝ անցել է այս յօրդութիւնն:

Երկրորդ տիպար

ստոր. ներկա	կատարյալ	հրամայական
խաատանամ	խաատացամ	խաատացը՛
խաատանաս	խաատացար	խաատացէ՛ք
խաատանա	խաատացավ	
խաատանանք	խաատացանք	
խաատանաք	խաատացաք	
խաատանան	խաատացան	

դերբ.— *խաատանալ, խաատացիր, խաատանալու, խաատացած, խաատացօղ:*

Այսպես են խոնարհվում՝

ամաչիլ>ամչընալ, ամչըցամ
բարձրանալ>պոնցի՛ընալ
գօղանալ>կուէղնալ
դառնալ>առնալ
թուլանալ>թուխնալ
լողանալ>լօղնալ
հասկանալ>խասկնալ
մօտիլ>մը՛առնալ
ուրանալ>իւրանալ
վախիլ>վոխառնալ, վէխէնալ, վէխանալ, վոխէնալ:

Այսպես են խոնարհվում առհասարակ բոլոր անվանական բայերը. ինչպես՝ ճուչանալ «մեծանալ», փսաքկանալ «փոքրանալ», խայանալ «հալանալ», տաշկընալ «տառճկանալ», շատանալ, քիչանալ, ցածրանալ «ցածանալ» են:

ՈՒՐՄԻՈ ԲԱՐԲԱՌ[1]

ատոր. ներկա	կատարյալ		
լէմ	լամ	կ'իրիմ	«գրնգի»
լէս	լար	կ'իրիր	
լըսը՛	լաւ	կ'իրէց	
լէնք՛	լանք	կ'իրինք՛	
լէք՛	լաք	կ'իրիք՛	
լէն	լան	կ'իրին	

հրամայական	դերբայ
լըսը՛	լսէր
մի՛ լըսը	լսէլիս
լըսէք՛	
մի՛ լըսէք՛	

Բ. ՁԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Բարբառների խոնարհման մեջ ևս նկատվում են տարբերութիւններ, որոնք ընդհանուր անունով կոչվում են զարտուղութիւններ:

Այստեղ դնում ենք մի քանի կարևոր բարբառների զարտուղի բայերի խոնարհման նմուշներ:

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

Ա. լծորդութեան ա տիպարի մեջ բերել և ընել բայերը, բ տիպարի մեջ էլ առնել և զարնել բայերը կատարյալի հրամայականի և դերբայների մեջ լինում են.

կատարյալ

բէրի	ըսի	առի	զարգի
բէրիր	ըսիր	առիր	զարգիր
բէրաւ	ըսաւ	առաւ	զարգաւ
բէրինք	ըսինք	առինք	զարգինք
բէրիք	ըսիք	առիք	զարգիք
բէրին	ըսին	առին	զարգին

հրամայական

բէր	ըսէ	ա՛ռ	զարգ
բէրէք	ըսէք	առէք	զարգէք

դերբայներ

բէրած	ըսած	առած	զարգած
բէրէր	ըսէր	առէր	զարգէր
բէրօղ	ըսօղ	առնօղ	զարնօղ
բէրէլիք	ըսէլիք	առնելիք	զարնելիք
բէրէլու	ըսէլու	առնելու	զարնելու

Գ լծորդութեան մեջ բանալ, գըռնալ, էլլալ, իյնալ, իշնալ<իջանել, մռնալ, դեսնալ<տեսանել բայերը այդ ժամանակներում դառնում են.

կատարյալ

բացի	գըդա	էյա	ինգա	ինչա	մըդա	դէսա
բացիր	գըդար	էյար	ինգար	ինչար	մըդար	դէսար
բացաւ	գըդաւ	էյաւ	ինգաւ	ինչաւ	մըդաւ	դէսաւ
բացինք	գըդանք	էյանք	ինգանք	ինչանք	մըդանք	դէսանք
բացիք	գըդաք	էյաք	ինգաք	ինչաք	մըդաք	դէսաք
բացին	գըդան	էյան	ինգան	ինչան	մըդան	դէսան

հրամայական

բաց	գըդի(ր)	էլի(ր)	ինգի(ր)	ինչի(ր)	մըդի(ր)	դէսի(ր)
բացէք	գըդէք	էլէք	ինգէք	ինչէք	մըդէք	դէսէք

դերբայներ

բացօղ	գ'ըդնօղ	էլլօղ	ինգօղ	իշնօղ	մըդնօղ	դէսնօղ
բացած	գ'ըդած	էլած	ինգած	ինչած	մըդած	դէսած
բացէր	գ'ըդէր	էլէր	ինգէր	ինչէր	մըդէր	դէսէր
բանալիք	գ'ըդնալիք	էլլալիք	իյնալիք	իշնալիք	մըդնալիք	դէսնալիք
բանալու	գ'ըդնալու	էլլալու	իյնալու	իշնալու	մըդնալու	դէսնալու

Այս բոլոր բացառութիւնները բացատրվում են գրաբարի միջոցով, ինչ որ համեմատական քերականութեան գործն է:

[1] Ղարիբյան, Հայոց լեզվի պատմ. Ներած. էջ 231:

Կան զարտուղութիւններ էլ, որոնք առերեւոյթ են և կարող են բացատրվել նույնիսկ բարբառի միջոցով, օրինակ՝ ծառաւիլ> ձառվիլ, կատարյալը լինում է ձառվըցա, փոխանակ ձառվեցա (երկրորդ լծորդութեան ա տիպարը), բայց ձառվըցա բացառութիւն չէ, այլ դալիս է ձառվընալ ձևից:

Բորբոսնիլ>փօրփօսնիլ ըստ ձևի պատկանում է երկրորդ լծորդութեան բ տիպարին, բայց բարբառս անց է կացրել ա տիպարին, դրա համար էլ կատարյալը լինում է փօրփօսնեցա. -ցար -ցավ են:

Ուրիշ դեպքերում Պոլսի բարբառը վերացրել է գրաբարի բացառութիւնները խոնարհման մեջ և վերածել նրանք կանոնաւորի. օրինակ՝ գրաբարում ածեմ, բերեմ, հանեմ առաջին լծորդութեան բացառութիւններն են (կար. ածի, բերի, հանի), նստիմ՝ երկրորդ լծորդութեան բացառութիւնն է (կար. նստայ, հրամ. նիստ). բարբառիս մեջ սրանք կանոնաւորվելով եղած են կար. ածեցի, հանեցի, նստեցա, հրամ. ածէ, հանէ, նստի՛ միայն բերել ձևում է անկանոն (կար. բերի, հրամ. բեր):

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Ա. լծորդութեան ա տիպարի մեջ բերել և ասել բայերը, իսկ բ տիպարի մեջ առնել և գարնել բայերը կատարյալի, հրամայականի և դերբայների մեջ մասամբ պահած են հին գարտուղի ձևերը և մասամբ էլ առեղծել են նոր կանոնաւոր ձևեր:

կատարյալ

պէրի	ասի	առի	զարկի
պէրիր	ասիր	առիր	զարկիր
պէրաց, իպէ	ասաց	առաց	իզար
պէրինք	ասինք	առինք	զարկինք
պէրիք	ասիք	առիք	զարկիք
պէրին	ասին	առին	զարկին

կանոնաւորված ձևով՝

պէրեցի	ասեցի	առեցի	զարկեցի
պէրեցեր	ասեցեր	առեցեր	զարկեցեր
պէրեց	ասաց	առաց	զարկաց
պէրեցինք	ասեցինք	առեցինք	զարկեցինք
պէրեցիք	ասեցիք	առեցիք	զարկեցիք
պէրեցին	ասեցին	առեցին	զարկեցին

հրամայական

պէ	ասա	առ, առա	զար
պէրէք	ասէք	առէք	զարկէք

դերբայներ

պէրած	ասած	առած	զարկած
պէրեր	ասեր	առեր	զարկեր
պէրօղ	ասօղ	առնօղ	զարկօղ
պէրէլիք	ասէլիք	առնէլիք	զարկէլիք
պէրէլու	ասէլու	առնէլու	զարկէլու

բանալ>պոնալ, տեսանել>տիսնալ, դիպչել>տիպնել, անկանիլ>ինել նույն ժամանակներում առանում են հետևյալ ձևերը:

կատարյալ

պոցի	տիսա	տիպա	ինգյա
պոցիր	տիսար	տիպար	ինգյար
իպոց	տիսավ	տիպավ	ինգյավ
պոցինք	տիսանք	տիպանք	ինգյանք
պոցիք	տիսաք	տիպաք	ինգյաք
պոցին	տիսան	տիպան	ինգյան

որ և՝

պոցիցի, պոցիցիր, պոցից, պոցիցինք, պոցիցիք, պոցիցին,

հրամ.

պոց	տես, տե	տիպի	ինգյի
պոցէք	տիսէք	տիպէք	ինգյէք

դերբ.

պոցած	տիսած	տիպած	ինգյած
պոցիր	տիսիր	տիպիր	ինգյիր
պոցօղ	տիսնօղ	տիպնօղ	ինօղ
—	տիսնէլիք	տիպնէլիք	ինէլիք
պոնուլու	տիսնէլու	տիպնէլու	ինէլու
	տիսնալու		

ՀԱՄԵՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

Ա լծորդութ յան ա ուիպարիից զարտուղում են հետևյալ բայերը.

ասուշ	ասաի	հրմ. ասա, ասաէք
«ասել»	ասաիր	դերբ. ասասած
	ասասալ	
	ասասաք	
	ասասիք	
	ասասին	
պէրուշ	պէրի	հրմ. պիր, պի
«բերել»	պէրիր	պէրէք
	պէրալ (էր՛իր)	
	պէրաք	
	պէրիք	
	պէրին	

Բ լծորդութ յան

նասուշ	նասա	հրմ. նիսա
«նասել»	նասար	նասէք
	նասալ	
	նասաք	
	նասաք	
	նասաւ	

Գ լծորդութ յան

պացի	հրմ. պաց	ասացա հրմ. ասացի(ր)	
պացիր	պացէք	ասացար	ասացիք
պացալ (=էպաց)		ասացալ	
պացաք		ասացաք	
պացիք		ասացար	
պացին		ասացան	

Զարտուղութ յանց կարգը կարելի է դասել նաև այն դեպքերը, երբ մեջին ձայնավորը սղվում է խոնարհման ժամանակ. ինչպես՝ աղալ>աղուշ, կոր. ապացի>ախցի, ախծի, խաղալ>խաղուշ, կոր. խաղացի>խախծի, կարգալ>գաշաուշ, գաշալցի, հրմ. գաշալցէք են:

Ծանոթութ յուն. 1.— Ալսաեղ ավելացել է ա բաղաձայնը: Ձայնավորի հաջորդող ա-ից հետո ավելացած ա-ի օրինակ շատ ունենք բարբառներում. ինչպես՝ Սաղամաա>Սալմասա, Ալմաա>ալմասա, սուս>սուսա, ռուս>ռուսա, կալբաա>կալբասա, մատբաա>մատբասա, էսպէս>էսպէսա, նայնիսկ լսել եմ սիֆիլիս>սիֆիլիսա: Համշենի բարբառում այս մասին ուրիշ օրինակ է բասել «հևալ», որ դարձել է բասաուշ, ասասուշ: Ալսաեղ հիշում եմ հատկապես երև. թաշախուսա «անասիա, պճնանք» բառը, որ արար. tašaxxuṣ ձևն է: Այս բառը թուրաբանում մեկնվում է «անձը ճանաչվիլ»:

2. Էստ որում բ-ից հետո շեշտյալ ե դառնում է ի. ինչպես՝ վեր>վիր, կեր>գիր, մեր>միր, ձեր>ձիր, կամ երբեմն էլ, բ կորչում է, ինչպես՝ կեր>գի:

ԿԻԼԻԿԻԱՑԻ ԲԱՐԲԱՌ

Ջորս լծորդութ յանց մեջ, սովորական խոնարհման ձևից մի քիչ շեղվող բայերը հետևյալներն են.

կատարյալ

բ՛իլա	ասը՛	առը՛
բ՛իլայ	ասը՛լ	առը՛լ
բ՛իլօվ	ասօց	առօվ
բ՛իլօնք	ասօնք	առօնք
բ՛իլաք	ասըք	առըք
բ՛իլան	ասըն	առըն, առօն

հրամայական

բ՛իլ	աստ	ռա
բ՛իլէք	ասէք	առէք

դերբայներ

բ՛լօձ	ասօձ	առօձ
բ՛իլիլ	ասիլ	առիլ
բ՛իլէօվ	ասէօվ	առնէօվ
բ՛իլիլո	ասիլո	առնիլո
բ՛իլիլէք	ասիլէք	առնիլէք

Ծանոթ.—Ուրիշ բարբառներում գարնել բայն էլ մանում է այս բայերի շարքը, բայց Զեյթունի գավառականում այս

բայը շարքից դուրս է ընկել՝ փոխանակվելով կպցընիլ բառով:

Ա. լծորդութ յան բ տիպարին պատկանող գառանիլ, ելանիլ, իջանիլ, մտանիլ բայերը թեև առաջել են անորոշի մեջ գ'օդնիլ, իլլիլ, իչնիլ, մօդնուլ կամ մօդնիլ ձևերը, բայց խոնարհման մեջ կանոնավոր կերպով հետևում են Ա. լծ. բ տիպարին:

կատարյալ

գ'օդս	*իլս*	*իջ'ա*	*մօդս*
գ'օդոյ	*իլոյ*	*իջ'ոյ*	*մօդոյ*
գ'օդօվ	*իլօվ*	*իջ'օվ*	*մօդօվ*
գ'օդօնք	*իլօնք*	*իջ'ոնք*	*մօդօնք*
գ'ըդմք	*իլմք*	*իջ'մք*	*մօդմք*
գ'օդօն	*իլօն*	*իջ'ոն*	*մօդօն*

հրամայական

գ'օդ	*իլ*	*իջ'էլ*	*մօդ*
գ'ը՝դէք	*իլէք*	*իջ'էք*	*մը՝դէք*

դերբայներ

գ'ըդնէօղ	*իլլէօղ*	*իջնէօղ*	*մը,դնէօղ*
գ'օդնէօղ			*մօդնէօղ*
գ'օդօձ	*իլօձ*	*իջ'օձ*	*մօդօձ*
գ'ը՝դիլ	*իլիլ*	*իջ'իլ*	*մը՝դիլ*
գ'ըդնալո	*իլլիլօ*	*իջնալո*	*մը՝դնիլո*
գ'ըդնալէք	*իլլալէք*	*իջնիլէք*	*մը՝դնիլէք*
		իջնալէք	

Բ լծորդութ յան բ տիպարին վերաբերող անկանիլ բայը, որ Ձևլթռնում ը՝նգնը՝լ ձևն է առացած, նախաձայնը գարձնում է շարունակ ը և օ: Ահա այս բայի խոնարհումը.

կատարյալ	հրամայական	դերբայներ
օնգո		*ը՝նգնէօղ*
օնգոյ	*ը՝նգէլ*	*ը՝նգօձ*
օնգօվ		*ը՝նգիլ*
օնգօնք		*ը՝նգնիլո*
օնգոք!	*ը՝նգէք*	*ը՝նգնիլէք*
օնգօն		

Դ լծորդութ յան պատկանող բանալ>բ'աճօլ բայը խոնարհվում է հետևյալ ձևով.

կատարյալ	հրամայական	դերբայներ
բ'ացը		*բ'ացէօղ*
բ'ացըլ	*բ'օց*	*բ'ացօձ*
բ'ացօվ		*բ'ացիլ*
բ'ացօնք		*բ'անըլո*
բ'ացըք	*բ'ացէք*	*բ'անըլէք*
բ'ացըն		

Գրաբարի Դ լծորդութ յան պատկանող լնուլ բայը, որ Ձևլթռնում առացել է նօլ ձևը, խոնարհվում է շատ. անկանոն ձևով, որ հետևյալն է.

ատոր. ներկա	ատոր. անկատար	կատարյալ
նօմ	*նի*	*լը՝ցը՝*
նօս	*նիլ*	*լը՝ցը՝լ*
նո	*նէլ*	*լը՝ցօվ*
նօնք	*նինք*	*լը՝ցօնք*
նօք	*նիք*	*լըցմք*
նօն	*նին*	*լըցան*

հրամ.— *լ՝ըց, լը՝ցէք*
դերբ.— *նէօղ, նօձ, լը՝ցիլ, նալո, նալէք*

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Զարատուղի բայերն են բերել, ասել, առնուլ, գաբնել, բանալ, գառանել, ելանել, անկանել, իջանել, մտանել, տեսանել, որոնք շեղվում են միայն կատարյալի, հրամայականի և դերբայների մեջ՝ հետևյալ ձևով.

կատարյալ

բ'երա	*ացա*	*առա*	*գարգիցա*
բ'երիր	*ացիր*	*առիր*	*գարգիցիր*
երբ'եր	*ասաց*	*առավ*	*գարգից*
բ'երանք	*ացանք*	*առանք*	*գարգիցանք*
բ'երաք	*ացաք*	*առաք*	*գարգիցաք*
բ'երէն	*ացէն*	*առէն*	*գարգիցէն*

Ծանոթ. գարձել բայը հատուկ է Յոդուն Օլուգ գլուխին և վերածված է կանոնավորի, մյուսները այս բայի տեղ գործածում են գիխիլ և քիշդիլ համանիշները:

հրամայական

բ՛եր, բ՛է	*առ*	*օտ*	*զարգի*
բ՛երիք	*առիք*	*առիք*	*զարգիցիք*
			զարգիք

դերբայներ

բ՛երիլ	*ասիլ*	*առնիլ*	*զարգիլ*
բ՛երուղ	*ասիուղ*	*առնիուղ*	*զարգիուղ*
բ՛երուած	*առուած*	*առուած*	*զարգուած*
բ՛երեր	*ասիր*	*առիր*	*զարգիր*
բ՛երելա	*ասիլա*	*առնի՛լա*	*զարգիլա*
բ՛երելոք	*ասիլոք*	*առնի՛լոք*	*զարգիլոք*

կատարյալ

բ՛ացա	*ղ՛ըգօ*	*իլօ*	*ինգօ*
բ՛ացիր	*ղ՛ըգար*	*իլար*	*ինգար*
բ՛ացաւ	*իղ՛օց, ղ՛ըգաւ*	*իլաւ*	*ինգաւ*
բ՛ացանք	*ղ՛ըգանք*	*իլանք*	*ինգանք*
բ՛ացաք	*ղ՛ըգաք*	*իլաք*	*ինգաք*
բ՛ացէն	*ղ՛ըգան*	*իլան*	*ինգան*

հրամայական

բ՛ուց	*ղ՛օց*	*իլ*	*ինգէ*
բ՛ացիք	*ղ՛ըգիք*	*իլիք*	*ինգիք*

դերբայներ

բ՛ոնիլ	*ղ՛ընընիլ*	*ընընիլ*	*իլնիլ*
բ՛ացիուղ, բ՛ո- *բ՛ոնիուղ*	*ղ՛ընընիուղ*	*ընընիուղ*	*իլնիուղ*
բ՛ացուած	*ղ՛ըգուած*		
բ՛ացիր	*ղ՛ըգի՛ր*	*իլուած*	*ինգուած*
բ՛ոնիլա	*ղ՛ընընիլա*	*իլիր*	*ինգիր*
		ընընիլա	*իլնիլա*
բ՛ոնիլա	*ղ՛ընընիլոք*	*ընընիլոք*	*իլնիլոք*

կատարյալ

իջ՛օ	*մգօ*	*դիսօ*
իջ՛ար	*մգար*	*դիսար*

իջ՛աւ	*մգաւ (իմէօդ)*	*դիսաւ*
իջ՛անք	*մգանք*	*դիսանք*
իջ՛աք	*մգաք*	*դիսաք*
իջ՛ան	*մգան*	*դիսան*

հրամայական

իջ՛է	*մէօդ*	*դիս*
իջ՛իք	*մգիք*	*դիսիք*

դերբայներ

իշնիլ	*մընընիլ*	*դիսնիլ*
իշնիուղ	*մընընիուղ*	*դիսնիուղ*
իջ՛ուց	*մգուած*	*դիսուած*
իջ՛իր	*մգիր*	*դիսիր*
իշնիլա	*մընիլա*	*դիսնիլա*
իշնիլոք	*մընիլոք*	*դիսնիլոք*

Զարատպի չեն ածել>ուձիլ, հանել>հուձիլ, նատիլ>նըսդ՛իլ
կատարյալ.— հանիցա, ուձիցա, նըսդ՛օ
հրամ.— հանէ, ուձէ, նէսդ՛ (նսդ՛է)։

Գ. ԱՆԿԱՆՈՆ ԲԱՑԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հին հայերենի անկանոն բայերից շատերը ջնջված են նոր բարբառներում կամ ուղղակի իրենց գոյութիւնը ջնջվելով (ինչպես յառնեմ, ըմպեմ, որոնք աշխարհաբարի մեջ այլևս չկան), և կամ նրանց անկանոն մասերը կանոնավորի վերածվելով (ինչպես՝ լսել, ճանաչել, որոնց կատարյալը գրաբարում լինում է անկանոն կերպով լուայ, ծանեայ, աշխարհաբարում լսեցի, ճանաչեցի կամ ճանչցայ)։ Ընդհակառակը բարբառներում անկանոն բայերի կարգն են անցել մի խումբ այնպիսի բայեր, որոնք կամ հին հայերենի խոնարհումից հետքեր պահելով և կամ նոր ձևնափոխութեանց ենթարկվելով՝ խոնարհման սովորական տիպարներից չեղումներ են ցոյց տալիս այս ու այն կետում։

Մարդ տալիս ենք նման բայերի խոնարհման ցուցակը հայերենի մի քանի կարևոր բարբառներում։

ՊԱԼՍԻ ԲԱՐԲԱՌ

1. Առնել>ընէլ

Ներկ.— ընէմ, ընէս, ընէ, ընէնք, ընէք, ընէն
Անց.— ընէլի, ընէլիր, ընէր, ընէլինք, ընէլիք, ընէլին
Կար.— ըրի, ըրիր, ըրավ, ըրինք, ըրիք, ըրին
Հրամ.— ըրէ, ըրէք
Դերբ.— ընօղ, ըրած, ըրէր, ընէլիք, ընէլու։

2. Գալ>գալ

Ներկ.— գամ, գաս, գա, գանք, գաք, գան
Անց.— գալի, գալիր, գար, գալինք, գալիք, գալին
Կար. — էգա, էգար, էգավ, էգանք, էգաք, էգան
Հրամ.— էգու(ր), էգէք, (հնների մեջ կար նաև էգո՛)
Դերբ.— էգօղ, էգած, էգէր, գալիք, գալու։

3. Դնել>դնել

Ներկ.— դնեմ, դնես, դնէ, դնենք, դնէք, դնեն
Անց.— դնէլի, դնէլիր, դնէր, դնէլինք, դնէլիք, դնէլին
Կար.— դրի, դրիր, դրավ, դրինք, դրիք, դրին
Հրամ.— դիր, դրէք
Դերբ.— դնօղ, դրած, դրէր, դնէլիք, դնէլու։

4. Երթալ>էրթալ

Ներկ.— էրթամ, էրթաս, էրթա, էրթանք, էրթաք, էրթան
Անց.— էրթալի, էրթալիր, էրթար, էրթալինք, էրթալիք, էրթալին
Կար.— գացի, գացիր, գնաց, գացինք, գացիք, գացին
Հրամ.— գնա, գացէք
Դերբ.— գացօղ, գացած, գացէր, էրթալիք, էրթալու։

5. Լալ>լալ

Ներկ.— լամ, լաս, լա, լանք, լաք, լան
Անց.— լալի, լալիր, լար, լալինք, լալիք, լալին
Կար.— լացի, լացիր, լացավ, լացինք, լացիք, լացին
Հրամ.— լա՛ց, լացէք
Դերբ.— լացօղ, լացած, լացէր, լալիք, լալու։

6. Լինել>ըլլալ

Ներկ.— ըլլամ, ըլլաս, ըլլա, ըլլանք, ըլլաք, ըլլան
Անց.— ըլլալի, ըլլայիր, ըլլար, ըլլալինք, ըլլայիք, ըլլային
Կար.— էգա, էգար, էգավ, էգանք, էգաք, էգան
Հրամ.— էղի՛(ր), էղէք
Դերբ.— էգօղ, էգած, էղէր, ըլլալիք, ըլլալու։

7. Ուտել>ուդել

Ներկ.— ուդեմ, ուդես, ուդե, ուդենք, ուդեք, ուդեն
Անց.— ուդելի, ուդելիր, ուդեր, ուդելինք, ուդելիք, ուդելին
Կար.— դերա, դերար, դերավ, դերանք, դերաք, դերան
Հրամ.— դէր, դերէք
Դերբ.— ուդօղ, դերած, դերէր, ուդելիք, ուդելու։

8. Տալ>դալ

Ներկ.— դամ, դաս, դա, դանք, դաք, դան
Անց.— դալիր, դալիր, դար, դալինք, դալիք, դալին
Կար.— դուվի, դուվիր, դուվավ, դուվինք, դուվիք, դուվին
Հրամ.— դուր, դուվէք
Դերբ.— դուվօղ, դուված, դուվէր, դալիք, դալու։

9. Տանիլ>դանիլ

Ներկ.— դանիմ,դանիս, դանի, դանինք, դանիք, դանին
Անց.— դանէլի, դանէլիր, դանէր, դանէլինք, դանէլիք, դանէլին
Կար.— դարի, դարիր, դարավ, դարինք, դարիք, դարին
Հրամ.— դո՛ր, դարէք
Դերբ.— դանօղ, դարած, դարէր, դանէլիք, դանէլու։

Պահաւոյար բայեր.

1. Եմ, էմ

Ներկ.— էմ, էս, է, ենք, եք, են.
Անկ.— էլի, էլիր, էր, էլինք, էլիք, էլին.
Մնացեալը լրանում է ըլլալ բայից։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

1. Անկանիլ>իլնէլ, ըլնէլ, ինէլ

Ներկ.— իլնիմ, իլնիս, իլնի, իլնինք, իլնիք, իլնին
Անց.— իլնէլի, իլնէլիր, իլնէր, իլնէլինք, իլնէլիք, իլնէլին

կար.— ինգա, ինգար, ինգավ, ինգանք, ինգաք, ինգան
հրամ.— ինգիր, ինգիք
դերբ.— ինգած, ինգիլ, ինգօղ, ինգելիք, ինգելու:

Այս բայի անկանոնութիւնը ձայնաբանական պատճառով է առաջանում և կայանում է նրանում՝ որ հին հայերենի ՆԿ խումբը հաջորդ ձայնավորի մոտ ՅՈՒՄ է, իսկ Ն բազաձայնի մոտ դառնում է Յ:

2. Առնիլ>անել

ներկ.— անիմ, անիս, անէ, անինք, անիք, անին
անց.— անէլի, անէլիր, անէր, անէլինք, անէլիք, անէլին
կար.— արի, արիր, արաւ, արինք, արիք, արին
հրամ.— արա, արէք
դերբ.— անօղ, արած, արիլ, անելիք, անելու:

3. Առնուլ>առնել

ներկ.— առնում, առնուս, առնու, առնունք, առնուք, առնուն
անց.— առնուլի, առնուլիր, առնուր, առնուլինք, առնուլիք, առնուլին
կար.— առի, առիր, առաւ, առինք, առիք, առին
հրամ.— առ, առէք
դերբ.— առնօղ, առած, առիլ, առնելիք, առնելիք, առնելու:

Այս խոնարհումը գտնում ենք Զալթիրի շրջանի մէջ, իսկ քաղաքում՝ միայն հնների մոտ. նորերը վերածում են առաջին լծորդութեան, հատկապես ներկ. եզ. գ դեմքը և ամբողջ անցյալը (առնէ, առնէլի են):

4. Ասիլ>ասել

ներկ.— ասիմ, ասիս, ասէ, ասինք, ասիք, ասին
անց.— ասէլի, ասէլիր, ասէր, ասէլինք, ասէլիք, ասէլին
կար.— ասի, ասիր, ասաց, ասինք, ասիք, ասին
հրամ.— ասա, ասէք
դերբ.— ասօղ, ասած, ասիլ, ասելիք, ասելու:

Նկատելի է որ կատարյալի հոգնակին նման է ներկայի հետ: Եզ. գ. ասաց ձևի դեմ Ղրիմում անինք ասից (տես Նատառարդեան, հեքեաթներ, էջ 49, 50):

5. Բանալ>բանալ

ներկ.— բանամ, բանաս, բանա, բանանք, բանաք, բանան
անց.— բանալի, բանալիր, բանար, բանալինք, բանալիք, բանալին
կար.— բացի, բացիր, բացից, բացինք, բացիք, բացին
հրամ.— բաց, բացէք
դերբ.— բացօղ, բացած, բացիլ, բանալիք, բանալու:

6. Բերիլ>բերել

ներկ.—բերիմ, բերիս, բերէ, բերինք, բերիք, բերին
անց.— բերէլի, բերէլիր, բերէր, բերէլինք, բերէլիք, բերէլին
կար.— բերի, բերիր, բերից, բերինք, բերիք, բերին
հրամ.— բեր, (Զլ. պէր), բերէք
դերբ.— բերօղ, բերած, բերիլ, բերելիք, բերելու:

Նկատելի է, որ այստեղ էլ կատարյալի հոգնակին նման է սեռ. ներկայի հետ:

7. Գալ>գալ

ներկ.— գամ, գաս, գա, գանք, գաք, գան
անց.— գալի, գալիր, գար, գալինք, գալիք, գալին
կար.— էգա, էգար, էգավ, էգանք, էգաք, էգան
հրմ.— արի, արիցէք
դերբ.— էգած, էգիլ, էգօղ, գալիք, գալու:

Հրամայականի համար գլուխերն անին էգիր, էգիցէք ձևերը, քաղաքում էգիր ձևը առանձին չի գործածվում, բայց կա վա՛զ էգիր «թիմ, ձգիր» և մա՛ն էգիր «փնտռիր» ոճերի մեջ. սրանց հոգնակին լինում է սովորական ձևով վազ արիցէք, մանն արիցէք, բայց ոչ թէ վազ էգիցէք, մանն էգիցէք, որ գլուխերի գործածած ձևերն են:

8. Դնիլ>դնել

ներկ.— դնիմ, դնիս, դնէ, դնինք, դնիք, դնին
անց.— դնէլի, դնէլիր, դնէր, դնէլինք, դնէլիք, դնէլին
կար.— դրի, դրիր, դրից, դրինք, դրիք, դրին
հրամ.— դիր, դրէք
դերբ.— դնօղ, դրած, դրիլ, դնելիք, դնելու:

9. Ելանիլ>էլել

ներկ.— էլիմ, էլիս, էլէ, էլինք, էլիք, էլին
անց.— էլէլի, էլէլիր, էլէր, էլէլինք, էլէլիք, էլէլին

կար.՝ էլա, էլար, էլավ, էլանք, էլաք, էլան
հրամ.— լէ, լէլէք
դերբ.— էլած, էլիլ, էլօղ, էլէլու, էլէլիք։

Անկանոնութիւնը առաջացել է ձայնաբանական պատճառներով, եկածել բայը ավել է նախ ելնել, որ խոնարհվում է հաքնիլ բային նման, բայց կատարյալում և նմանողութիւնով արմատական համարվելով հղել է էլա, փոխանակ էլա, ինչպես ունի Պոլսի բարբառը։ Հրամայականում բառը միավանկ ձևով՝ ըստ օրինի հղել է յէ, որին հետևել է նաև հոգնակին և անկանոն կերպով ստացել է յէ նախավանկը։

10. երթալ>էրթալ, էշալ, էլթալ

ներկ.— էլթամ, էլթաս, էլթա, էլթանք, էլթաք, էլթան
անց.— էլթայի, էլթայիր, էլթար, էլթայինք, էլթայիք, էլթային
կար.— գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գնացիք, գնացին
համ.— գնա, գնացէք
դերբ.— գնացած, գնացիլ, գնացօղ, էլթալու, էլթալիք։

Ինչ անգամ գործածվում է նաև էշքած, ինչպես՝ էշքած ադէնս «գնալու ժամանակս», էրթածիս հէդս գըդացիմ «ետը երթամ՝ հետս կտանեմ»։

11. Զարկանել>գարնէլ

ներկ.— գարնիմ, գարնիս, գարնէ, գարնինք, գարնիք, գարնին
անց.— գարնէյի, գարնէյիր, գարնէր, գարնէյինք, գարնէյիք, գարնէյին
կար.— գարգի, գարգիր, գարգից, գարգինք, գարգիք, գարգին
հրամ.— գարգ, գարգէք
դերբ.— գարգած, գարգիլ, գարնօղ, գարնէլու, գարնէլիք։

12. Լալ>լալ

ներկ.— լամ, լաս, լա, լանք, լաք, լան
անց.— լայի, լայիր, լար, լայինք, լայիք, լային
կար.— լացի, լացիր, լացից, լացինք, լացիք, լացին
հրամ.— լաց, լացէք
դերբ.— լացած, լացիլ, լացօղ, լալու, լալիք։

13. Լինել>ըլլալ, լալ

ներկ.— (ը)լամ, (ը)լաս, (ը)լա, (ը)լանք, (ը)լաք, (ը)լան

անց.— (ը)լայի, (ը)լայիր, (ը)լար, (ը)լայինք, (ը)լայիք, (ը)լային
կար.— էղա, էղար, էղավ, էղանք, էղաք, էղան
հրամ.— էղիր, ղղէք
դերբ.— էղած, էղիլ, էղօղ, (ը)լալու, (ը)լալիք։

Գործածվում է նաև «կարենալ» նշանակութեամբ. գլուզացիք արդեն կրնայ բայը ջնջած են և նրա փոխարեն գործածում են ըլլալ. օրինակ՝ բան հասկըցնել գըլայի՞ր վօր «կարող էիր բան հասկացնել»։ «Ուդելու գըլա՞ս «կարող ես ուտել»։ Բաղաքում թեև «կարենալ» բայը կա (հին գարնալ, նորը գրնալ), բայց գործածականն է նաև ըլլալ ձևը։

14. Ելնալ>ուլէլ

ներկ.— ուլամ, ուլաս, ուլա, ուլանք, ուլաք, ուլան
ուլիմ, ուլիս, ուլէ, ուլինք, ուլիք, ուլին
լնիմ, լնիս, լնէ, լնինք, լնիք, լնին
ըլիմ, ըլիս, ըլէ, ըլինք, ըլիք, ըլին
անց.— ուլայի, ուլայիր, ուլար, ուլայինք, ուլայիք, ուլային
ուլէյի, ուլէյիր, ուլէր, ուլէյինք, ուլէյիք, ուլէյին
լնէյի, լնէյիր, լնէր, լնէյինք, լնէյիք, լնէյին
ըլէյի, ըլէյիր, ըլէր, ըլէյինք, ըլէյիք, ըլէյին
կար.— լցի, լցիր, լցից, լցինք, լցիք, լցին
հրամ.— լից, լցէք
դերբ.— լցած, լցիլ, լցօղ, ուլէլիք, ուլէլու։

Ներկայի և անցյալի չորս ձևերն էլ հավասարապես գործածական են քաղաքում. Ձալթը ունի ուլում... ձևը, որի եզ. գ դէմքը ըստ սովորականին ջնջված է քաղաքում. ուլիմ, ըլիմ, լնիմ և ուլէ՛յի, ըլէ՛յի, ըլնէ՛յի ձևացած են Դ լծորդութիւնը առաջինի համեմատ խոնարհելու ձգտումից, որ քաղաքում ավելի զորավոր է, քան գլուղերում։

15. Լուանալ>լվանալ

ներկ.— լվանամ, լվանաս, լվանա, լվանանք, լվանաք, լվանան
անց.— լվանայի, լվանայիր, լվանար, լվանայինք, լվանայիք, լվանային
կար.— լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին
հրամ.— լվա, լվացէք
դերբ.— լվացած, լվացիլ, լվացօղ, լվանալու, լվանալիք։

Անկանոնութիւնը կայանում է նրանում, որ բայի ներկան և անկատարը պատկանում են Դ լծորդութեան երկրորդ ախպարին,

իսկ կատարյալը և հրամայականը Գ լծորդութիւն։ Այս անկանոնութիւնը դրաբարի պատճառով է, ուր ունինք հրամ. լուա՛, փոխանակ ըստ օրինի լինելու *լուացիր, և այս անկանոնութիւնը վերացնելու համար է, որ Պոլսի բարբառը լուանալ ձևը դարձրել է լվալ>վլալ, որով ամբողջ բայը անցել է Գ լծորդութիւն։

16. Կորչիլ>գօրցըվէլ

ներկ.— գօրցըվիմ, գօրցվիս, գօրցվի, գօրցվինք, գօրցվիք, գօրցվին
անց.— գօրցըվէ՛լի, գօրցվէ՛լիր, գօրցվէր, գօրցվէ՛լինք, գօրցվէ՛լիք, գօրցըվէ՛լին
կար.— գօրա, գօրար, գօրավ, գօրանք, գօրաք, գօրան
հրամ.— գօրիր, գօրցվէ, գօրիք, գօրցըվէ՛ցէք
դերբ.— գօրած, գօրիլ, գօրցվօղ, գօրցվէ՛լու, գօրցվէ՛լիք։

Կազմված է երկու պակասավոր բայերից, առաջինն է գօրցվիլ՝ որ համապատասխանում է կորուսանիմ ձևին և երկրորդն է կորչիլ. առաջինից կազմվում են ներկան, անցյալը, ներկա և ապառնի դերբայները. երկրորդից կազմվում են կատարյալը և անցյալ դերբայները։ Հրամայականը երկու ձևով էլ կա։

17. Նստիլ>նստէլ

ներկ.— նստիմ, նստիս, նստի, նստինք, նստիք, նստին
անց.— նստէ՛լի, նստէ՛լիր, նստէր, նստէ՛լինք, նստէ՛լիք, նըստէ՛լին
կար.— նստա, նստար, նստավ, նստանք, նստաք, նստան
հրամ.— նիստ, նստէք
դերբ.— նստած, նստիլ, նստօղ, նստէ՛լու, նստէ՛լիք։

18. Ուտիլ>ուդէլ

ներկ.— ուդիմ, ուդիս, ուդէ, ուդինք, ուդիք, ուդին
անց.— ուդէ՛լի, ուդէ՛լիր, ուդէր, ուդէ՛լինք, ուդէ՛լիք, ուդէ՛լին
կար.— գէրա, գէրար, գէրավ, գէրանք, գէրաք, գէրան
հրամ.— գէր (Զ. գի՛ր), գէրէք
դերբ.— գէրած, գէրիլ, ուդօղ, ուդէ՛լու ուդէ՛լիք։

19. Տալ>դալ

ներկ.— դամ, դաս, դա, դանք, դաք, դան
անց.— դա՛լի, դա՛լիր, դար, դա՛լինք, դա՛լիք, դա՛լին
կար.— դուվի կամ դուրի, դուվիր, դուվից կամ դուրից, դուվինք, դուվիք, դուվին

հրամ.— դուր, դուվէք կամ դուրէք
դերբ.— դուված, դուվիլ կամ դուրիլ, դուվօղ, դալու, դալիք։

20. Տանիլ>դանէլ

ներկ.— դանիմ, դանիս, դանի, դանինք, դանիք, դանին
անց.— դանէ՛լի, դանէ՛լիր, դանէր, դանէ՛լինք, դանէ՛լիք, դանէ՛լին
կար.— դարի, դարիր, դարավ, դարինք, դարիք, դարին
հրամ.— դար, դարէք
դերբ.— դարած, դարիլ, դանօղ, դանէ՛լու, դանէ՛լիք։

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

1. Առնել>աՑել

ներկ.— անեմ, անես, անի, անէ՛նք, անէ՛ք, անեն
անց.— անի, անիր, անէր, անինք, անիք, անին
կար.— արի, արիր, արաց, արինք, արիք, արին, արիցի, արիցիր, արիցինք, արիցիք, արիցին
հրամ.— արա, արէ՛ք
դերբ.— անօղ, արած, արիր, անէ՛լիք, անէ՛լու։

2. Գալ>կ՚յալ

ներկ.— կ՚յամ, կ՚յաս, կ՚յա, կ՚յանք, կ՚յաք, կ՚յան
անկ.— կ՚յի, կ՚յիր, կ՚յէր, կ՚յինք, կ՚յիք, կ՚յին
կար.— էկա, էկար, էկավ, էկանք, էկաք, էկան
հրամ.— արի, իկէ՛ք
դերբ.— կ՚յացօղ, կ՚յացած, իկեր (իկն), կ՚յալիք, կ՚յալու։

3. Դնել>անՑել

ներկ.— անեմ, անես, անի, անենք, անէ՛ք, անեն
անկ.— անի, անիր, անէր, անինք, անիք, անին
կար.— արի, արիր, արաց, արինք, արիք, արին, արիցի, արիցիր, իտիր, արիցինք, արիցիք, արիցին
հրամ.— արի, արէ՛ք
դերբ.— անօղ, արած, արիր, անէ՛լիք, անէ՛լու։

4. Երթալ>էրթալ

ներկ.— էրթամ, էրթաս, էրթա, էրթանք, էրթաք, էրթան
անկ.— էրթի, էրթիր, էրթէր, էրթինք, էրթիք, էրթին
կար.— կնացի (դ. կ՚յացի), կնացիր, կ՚ընաց, կնացինք, կնացիք, կնացին

հրամ.— *կնա, կնացէք*
դերբ.— *կնացող, կնացած կամ էրթացած, էրթալիքի, երթալու։*

5. *Լալ*>լալ

ներկ.— *լամ, լաս, լա, լանք, լաք, լան*
անկ.— *լի, լիր, լէր, լինք, լիք, լին*
կար.— *լացի, լացիր, լլաց, լացինք, լացիք, լացին*
հրամ.— *լաց, լացէք*
դերբ.— *լացող, լացած, լացիր, լալու։*

6. *Լինել*>ելնել

ներկ.— *էլնեմ, էլնես, էլնի, էլնենք, էլնէք, էլնեն*
անկ.— *էլնի, էլնիր, էլնէր, էլնինք, էլնիք, էլնին*
կար.— *էլա, էլար, էլով, էլանք, էլաք, էլան*
հրամ.— *էլի, էլէք*
դերբ.— *էլնող, էլած, էլիր, էլնելու։*

7. *Ուտել*>ուտել

ներկ.— *ուտեմ, ուտես, ուտի, ուտենք, ուտէք, ուտեն*
անկ.— *ուտի, ուտիր, ուտէր, ուտինք, ուտիք, ուտին*
կար.— *կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան*
հրամ.— *կեր, կերէք*
դերբ.— *կերող (ուտող), կերած (ուտած), կերիր, ուտելիքի, ուտէլու։*

8. *Տալ*>տալ

ներկ.— *տամ, տաս, տա, տանք, տաք, տան*
անկ.— *տի, տիր, տէր, տինք, տիք, տին*
կար.— *տվի (տվիցի), տվիր (տվիցիր), տվեց = իսաւր կամ իսաւ, տվինք (տվիցինք), տվիք (տվիցիք), տվին (տվիցին)*
հրամ.— *տու (տուր), տվէք*
դերբ.— *տվող, տված, տվիր, տալիքի, տալու*

Գլուխկան ձև է իսաւմ փխ. տամ, օր. մոխիրա իսամ վոսկըրչուն։

9. *Տանիլ*>տանել

ներկ.— *տանեմ, տանես, տանի, տանենք, տանէք, տանեն*
անկ.— *տանի, տանիր, տանէր, տանինք, տանիք, տանին*

կար.— *տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան*
հրամ.— *տար, տարէք*
դերբ.— *տանող, տարած, տարիր, տանելիքի, տանելու։*

ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌ

Պահասավոր, զարտուղի և անկանոն բայեր

Առնել>*անիլ, անիմ, անէ, անին, արիլ է, կար. արի, արավ, հրամ. արա, անինք, արէք։*

Առնուլ>*առնում, առնուս, առնու, կար. առի, առավ, առին = առան, առիլ է։*

Ասել>*ասիմ, ասիս, կար. ասավ։*

Գալ>*իգ'ալ, գ'ամ, գ'աս, գ'ա, կար. էգավ, էգան; էգիլ իմ, իգ'ա, իգ'ան, հրմ. օգո (Հնգ. ագօ), օգօցէք։*

Գնալ>*Աւում է այս բայից միայն մի քանի ձև, որոնք են՝ գ'նացիլ իմ, հրմ. գ'ընա, գ'ընացէք։*

Դնել>*դ'նիլ, դ'նիմ, դ'նիս, դ'նէ, դ'րիլ է, հրմ. դ'ի՛ր, դ'իր՛ր, կրավ. գ'րաւիլ։*

Լինել>*իլալ, իլամ, իլա, ըլար (անկ.), կար. էգավ, էգան, էգիլ է։*

Լսել>*լսիլ, լսիմ, լսիս, կար. լսավ, լսիլ, ին։*

Կամ, կաս, կալ>*գամ, գաս, գա, գան։*

Տալ>*դամ, դաս, դա, դալի, դալիր, դար, կար. դվան, դավիլ է, չիմ դավի «չեմ տվել», հրամ. դ'ար, դավ'ք։*

Հրամայական հոդնակի բ դեմքի բացառիկ օրինակներ են Հնգ. եկեցէք, եղեցէք, տարեցէք, փխ. եկէք, եղէք, տարէք (-էք վերջավորութիւնը վերածված սովորական -ցէք ձևին)։

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

1. *Առնել*>ընուշ

ներկ.— *ընիմ, ընէս, ընա, ընինք, ընէք, ընին*
անկ.— *ընէլ, ընէլի, ընէր, ընալքը, ընէլքը, ընէլնը*
կար.— *արի (էրի), արիր, արավ, արաք, արիք, արին*
հրամ.— *արա (էրէ), արէք*
դերբ.— *ըղած, ընէլ, ընօղ, ընէլիք, ընէլու։*

2. *Գալ*>եգուշ

ներկ.— *կամ, կաս, կա, կանք, կաք, կան*

անկ.— կոլ, կոլդ, կոր, կո՛լքը, կոլքը, կոլնը
կար.— էգա, էգար, էգավ, էգաք, էգոք, էգոն
(Բյուր. 1899, 604, ունի էրի «եկավ» ձևը)։
հրամ.— արի (Տր. էգէ), էգէք
դերբ.— էգող, էգած, կալ, կալիք, կալու։

3. Գնալ>տնուշ

ներկ.— տնիմ, տնէս, տնու, տնինք, տնէք, տնին
անկ.— տնէլ, տնէլդ, տնէր, տնալքը, տնէլքը, տնէլնը
կար.— տրի = էտի,տրիր, տրավ = էտիր, տրաք, տրիք, տրին
հրամ.— տի (տիր), տրէք
դերբ.— տնող, տրած, տնէլ, տնէլիք, տնէլու։

4. Երթալ>էշտուշ

ներկ.— էշտիմ, էշտաս, էշտա, էշտոնք, էշտոք, էշտոն
անկ.— էշտալ, էշտալդ, էշտար, էշտալքը, էշտալքը, էշտալնը
կար.— էնացի, էնացիր, էնաց, էնացաք, էնացիք, էնացին
հրամ.— էնա, էնացէք
դերբ.— էշտող, էնացած, էշտալ, էշտալիք, էշտալու։

5. Լալ>լացուշ, լաց ընուշ (Տր.)

ներկ.— լամ, լաս, լա, լո(ն)ք, լէք, լոն
անկ.— լէլը, լէլդը, լէր, լէքը, լէլքը, լէլնը
կար.— լացի, լացիր, լացավ=էլաց, լացինք, լացիք, լացին
հրամ.— լա՛ց, լացէք
դերբ.— լացող, լացած, լալ, լալու, լալիք։

6. Լինել>ըլլուշ

ներկ.— ըլիմ, ըլիս, ըլի, ըլինք, ըլիք, ըլին
անկ.— ըլէլ, ըլէլդ, ըլիր, ըլալքը, ըլէլքը, ըլէլնը
կար.— ըդա (էդա), ըդար, ըդավ, ըդաք, ըդոք, ըդոն
հրամ.— ըդի՛, ըդէք
դերբ.— ըլող, ըդած (Տր. էդած), ըլիլ, ըլէլիք, ըլէլու։

7. Ուտել>ուդուշ

ներկ.— ուդիմ, ուդէս, ուդու, ուդինք, ուդէք, ուդին
անկ.— ուդէլ, ուդէլդ, ուդէր, ուդալքը, ուդէլքը, ուդէլնը
կար.— գէրա, գէրար, գէրավ, գէրոնք, գէրոք, գէրոն

հրամ.— գիր (գի), գէրէք
դերբ.— գէրած, ուգէլու։

8. Տալ>դվուշ

ներկ.— դամ, դաս, դա, դոնք, դոք, դոն
անկ.— դո կամ դալը, դալդ, դար, դա՛լքը, դալքը, դալնը
կար.— դվի, դվիր, դվավ=էրէդ (էրիդ Տ), դվաք, դվիք, դվին
հրամ.— դուր=դու, դվէք
դերբ.— դվող, դված, դալ, դալիք, դալու,

9. Ծանիլ>դօնուշ

ներկ.— դօնիմ, դօնիս, դօնի, դօնինք, դօնիք, դօնին
անկ.— դօնէլ, դօնէլդ, դօնիր, դօնալքը, դօնէլքը, դօնէլնը
կար.— դարի, դարիր, դարավ, դարաք, դարիք, դարին
հրամ.— դար, դարէք
դերբ.— դօնող, դարած, դօնիլ, դօնէլիք, դօնէլու։

10. Տալ «ժնժել»

Զարմանալի բալ է տալ «ժնժել», որ խոնարհվում է հետևյալ ձևով.

ներկ.— տամ, տաս, տա, տոնք, տաք, տոն
անկ.— տալ, տալդ, տար, տալքը, տալքը, տալնը
կար.— տրվի, տրվիր, տրվավ, տրվիաք, տրվիք, տրվին
հրամ.— տուր (տու), տվէք
դերբ.— տվող, տված, տվուշ, տալ, տրվէլու, տրվէլիք, տվէլու, տվէլիք։

(Այս բալի զարմանալի կետերը սրանք են. 1) Նախածայնը հակառակ օրենքի լինում է տ (և ոչ դ), 2) ավելանում է կրկնակ վ. 3) կը մասնիկը առանալու դեպքում դառնում է գուտոմ, գուտաս... 4) արդելականը կազմելու ժամանակ տ կրկնվում է և լինում է մի՛տ տար, տա՛լ մի)։

Ծանոթ.— 1. Առնել>ընուշ բալի անցյալ դերբայը պիտի լիներ տրած, ինչպես գործածական է Օրդու և այլուր, բայց ճանկիցիք ջնջել են այս ձևը և փոխանակել **ըդած** ձևով, որ լինել>ըլլուշ բալի դերբայն է և սովորական գործածության մեջ ունի արդեն բարբառում։ Այս միջոցին դիմել է բարբառը միմիայն այն նպատակով, որ չշփոթվի **տրած** «բալ» բառի հետ. ինչպես նկատել տվեց ինձ տ. Մատա էֆ-

սուլյանը (1944 թ. օգ. 21)։ Նման երեւույթ ունենք նաև Գոլտի բարբառում, ուր ընել բայը չունի կրավորական և նրա փոխարեն գործածվում է ըլլալ բայի կրավորական ձևը՝ ըլլըվիլ (աեռ Քնն. Գոլս. բարբ. § 382)։

2. Արի՛ բառի հոգնակին պիտի լիներ արէք, արեցէք կամ արիք, բայց ալս դեպքում առաջինը (արէք) կշփոթվեր «առնել» բայի հրմ. տրէք ձևի հետ, երկրորդը (արեցէք) կշփոթվեր բարբառի տրեցէք «տալրեցէք» բառի հետ, իսկ երրորդը (արիք) կշփոթվեր «առնել» բայի կար. տրիք ձևի հետ։ Ուստի փոխանակվել է եղէք ձևով, մինչդեռ Տրապիզոնի շրջանում ընդհակառակը, հնարվել է եզ. եղի՛ (նկատողութ[illegible] Արտաշես Էքսուզյանի, 1944 թ. օգ. 21)։

ԿԻՒԻԿԻՍՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Առնել>էնիլ

Ներկ.— էնիմ, էնիս, էնէ, էնինք, էնէք, էնին
անկ.— էնա, էնայ, էնէյ, էնանք, էնաք, էնան
կար.— էյս, էյայ, էյով, էյոնք, էյոք, էյան
հրամ.— էյո, էյէք
դերբ.— էօնէօղ, էյօձ, էյիյ, էնիյէք, էնիյո։

2. Գալ>իգ՛ալ

Ներկ.— իգ՛ամ, իգ՛աս, իգ՛ա, իգ՛անք, իգ՛ած, իգ՛ան
անկ.— իգ՛ի, իգ՛իյ, իգ՛էյ, իգ՛ինք, իգ՛իք, իգ՛ին
կար.— իգ՛ի, իգ՛իյ, իգ՛իք, իգ՛ոնք, իգ՛ոք, իգ՛ին
հրամ.— ալգ՛ա, իգ՛էք
դերբ.— իգ՛էօղ, իգօձ, իգիյ, իգ՛ալո, իգ՛ալէք, իւգ՛էօղ։

3. Դնել>դ՛ը՛նիլ

Ներկ.— դ՛ը՛նիմ, դ՛ը՛նիս, դ՛ը՛նի, դ՛ը՛նինք, դ՛ը՛նէք, դ՛ը՛նին
անկ.— դ՛ը՛նա, դ՛ը՛նայ, դ՛ը՛նէյ, դ՛ը՛նանք, դ՛ը՛նը՛ք, դ՛ը՛նըն
կար.— դ՛ը՛յա, դ՛ը՛յայ, դ՛օյով, դ՛օյոնք, դ՛ը՛յաք, դ՛ը՛յան
հրամ.— դ՛ը՛յ, դ՛ը՛յէք
դերբ.— դ՛օնէօղ, դ՛օյօձ, դ՛ը՛յիյ, դ՛ը՛նիյէք, դ՛ընիյո, դ՛էօնէօղ

4. Երթալ>իյթօլ

Ներկ.— իյթամ, իյթաս, իյթա, իյթանք, իյթած, իյթան
անկ.— իյթի, իյթիյ, իյթէյ, իյթինք, իյթիք, իյթին

կար.— դ՛ացը, դ՛ացիյ, դ՛օնոց, դ՛ացնք, դ՛ացըք, դ՛ացըն
հրամ.— դ՛օնո, դ՛ացէք
դերբ.— իյթէօղ, դ՛ածօձ, դ՛ացիյ, իյթալէք, իյթալո։

5. Լալ>լոլ, լօլ

Ներկ.— լօմ, լօս, լո, լօնք, լոք, լօն
անկ.— լի, լիյ, լէյ, լինք, լիք, լին
կար.— լացը, լացըյ, լացօվ, լացոնք, լացոք, լացօն
հրամ.— լոց, լացէք
դերբ.— լացէօղ, լացօձ, լացիյ, լալիյ, լալօ։

6. Լինել>ընը՛լ

Ներկ.— նը՛մ, նը՛ս, նը՛ (կամ 'նա), նը՛նք, նը՛ք, նը՛ն
անկ.— նի, նիյ, նէյ, նինք, նիք, նին
(նկատելի է, որ անկատարը բոլորովին նույն է լինում բալի հետ)։
կար.— էղո, էղոյ, էղօվ, էղոնք, էղոք, էղոն
հրամ.— ը՛լ, էղէք
դերբ.— էղէօղ, էղոձ, էղիյ, նալէք, նալո, էօղէօղ։

7. Ուտել>ուդիլ

Ներկ.— ուդիմ, ուդիս, ուդի, ուդինք, ուդէք, ուդին
անկ.— ուդա, ուդայ, ուդէյ, ուդոնք, ուդիք, ուդան
կար.— դիյո, դիյոյ, դիյօվ, դիյոնք, դիյոք, դիյօն
հրամ.— դիյ, դիյէք
դերբ.— ուդէօղ, դիյօձ, դիյիյ, ուդիյէք, ուդիյո։

8. Տալ>դօլ

Ներկ.— դօմ, դօս, դո, դօնք, դոք, դօն
անկ.— դի, դիյ, դէյ, դինք, դիք, դը՛ն (դին)
կար.— դը՛վը՛, դը՛վը՛յ, դօվօվ, դօվօնք, դը՛վը՛ք, դը՛վըն
հրամ.— դայ, դը՛վէք
դերբ.— դօվէօղ, դօվօձ, դը՛վիյ, դալէք, դալո, դէօվէօղ։

9. Տանիլ>դաճըլ

Ներկ.— դանըմ, դանըս, դանը, դանընք, դանըք, դանըն
անկ.— դանը՛, դանը՛յ, դանէյ, դանինք, դանիք, դանին

կար.— դալը՛, դալը՛լ, դալօվ, դալօնք, դալըք, դալըն
հրամ.— դո՛լ, դալէք
դերբ.— դանէօղ, դալօձ, դալիլ, դանիլէք, դանիլո։

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Առնել (անել)>ինիլ

նևրկ.— ինիմ, ինիս, ինէ, ինինք, ինիք, ինին
անկ.— ինէր է, ինէր, ինիր, ինէր ինք, իք, ին
կար.— իրա, իրիր, իրէօց, իրանք, իրաք, իրէն
հրամ.— իրէօ, իրիք
դերբ.— ինիւղ, իրուձ, իրիր, ինիլա, ինիլաք։

2. Գալ>ուգ՛իլ

նևրկ.— ուգ՛ում, ու՛գուս, ու՛գօ, ուգ՛ունք, ուգ՛ոք, ու՛գուն
անկ.— ուգ՛էր է, ուգ՛էր, ուգ՛իր, ուգ՛էր ինք...
կար.— իգա, իգիր, իգիք, իգունք, իգ՛ոք, իգէն
հրամ.— աբէ, որգիք=որիք
դերբ.— ուգ՛իւղ, իգուձ, իգիր, ուգ՛իլա, ուգ՛իլաք

3. Դնել>դ՛նիլ

նևրկ.— դ՛նէմ, դ՛նէս, դ՛նա, դ՛նէնք, դ՛նոք, դ՛նէն
անկ.— դ՛նէր է, դ՛նէր, դ՛նիր, դ՛նէր ինք...
կար.— դ՛րա, դ՛րիր, իդ՛էր, դ՛րունք, դ՛ըրոք, դ՛րէն
հրամ.— դ՛էր, դ՛րիք
դերբ.— դ՛նիւղ, դ՛րուձ, դ՛րիր, դ՛նիլա, դ՛նիլաք։

4. Երթալ>ուդ՛ի՛լ

նևրկ.— ուդ՛ում, ուդ՛ուս, ուդ՛օ, ուդ՛ունք, ուդ՛ոք, ուդ՛ուն
անկ.— ուդ՛էր է, ուդ՛էր, ուդ՛իր...
կար.— գ՛ացա, գ՛լացիր, գ՛նիւց, գ՛լացունք, գ՛լացոք, գ՛լացէն
հրամ.— գ՛նօ, գ՛լացիք
դերբ.— ուդ՛իւղ, գ՛լացիր, գ՛լացուձ, ուդ՛իլա, ուդ՛իլաք։

5. Լալ>ուլիլ

նևրկ.— ուլում, ուլուս, ուլօ, ուլունք, ուլոք, ուլուն
անկ.— ուլէր է, ուլէր, ուլիր...
կար.— լացա, լացիր, իլուց, լացունք, լացոք, լացէն

հրամ.— լուց, լացիք
դերբ.— լացիւղ=ուլիւղ, լացուձ, լացիր, ուլիլա, ուլիլաք։

6. Լինիլ>ընինիլ

նևրկ.— ընինում, ընինուս, ընինօ, ընինունք, ընինոք, ընինուն
անկ.— ընինէր է, ընինէր, ընինիր...
կար.— իղօ, իղուր, իղուվ, իղունք, իղոք, իղուն
հրամ.— իղէ, իղոք (կամ իղիք)
դերբ.— իղիւք, իղուձ, իղիր, ընինիլա, ընինիլաք։

7. Ուտել>ուդիլ

նևրկ.— ուդիմ, ուդիս, ուդէ, ուդինք, ուդիք, ուդին
անկ.— ուդէր է, ուդէր, ուդիր...
կար.— գերօ, գերուր, գերուվ, գերունք, գերոք, գերուն
հրամ.— գեր, գերիք
դերբ.— ուդիւղ, գերուձ, գերիր, ուդիլա, ուդիլաք։

8. Տալ>դվիլ

նևրկ.— ուդօմ, ուդօս, ուդօ, ուդօնք, ուդոք, ուդօն
անկ.— ուդէր է, ուդէր, ուդիր...
կար.— դվա, դվիր, էդէօր, դվունք, դվոք, դվէն
հրամ.— դէօր, դվիք
դերբ.— դվիւղ, դվաձ, դվիր, դվիլա, դվիլաք։

9. Տանիլ>դոնիլ

նևրկ.— դոնէմ, դոնէս, դանա, դոնէնք, դոնոք, դոնէն
անկ.— դոնէր է, դոնէր, դոնիր...
կար.— դարա, դորիր, իդուր, դորունք, դորոք, դարէն
հրամ.— դար, դորիք...
դերբ.— դոնիւղ, դորուձ, դորիր, դոնիլա, դոնիլաք։

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌ

Բայերի անկանոնությունը երևան է գալիս սահմանականի կատարյալում, նրա հիմքից կազմված ձևերում և հրամայականի պարզ ձևում։ Բարբառիս անկանոն բայերն են՝

1. Գ՛ալ

Դերբ.—գ՛ալ, գ՛ալու, էգէր, գ՛ալած, էգ՛օղ, (հաճ գ՛ալօղ), գ՛ա։

ներկա	անց. անկատար	անց. կատարյալ
գ'ուքամ կը	գ'ուքայի կը	էգա
գ'ուքաս կը	գ'ուքայիր կը	էգար
գ'ուքա կը	գ'ուքար կը	էգավ
գ'ուքանք կը	գ'ուքայինք կը	էգանք
գ'ուքաք կը	գ'ուքայիք կը	էգաք
գ'ուքան կը	գ'ուքային կը	էգան

հրամ.— արի՛, արէ՛ք

2. Դ'ընել

Խերք.— գ'ընել, գ'ընէլու, գ'ըրէր, գ'ըրած, գ'ընօղ, գ'ընէ

ներկա	անց. անկատար	անց. կատարյալ
գ'ընեմ կը	գ'ընէի կը	գ'ըրի
գ'ընես կը	գ'ընէիր կը	գ'ըրիր
գ'ընէ կը	գ'ընէր կը	գ'ըրէց
գ'ընենք կը	գ'ընէինք կը	գ'ըրինք
գ'ընէք կը	գ'ընէիք կը	գ'ըրիք
գ'ընեն կը	գ'ընէին կը	գ'ըրին

Հրամ.— գ'ի՛ր, գ'ըրէ՛ք:

3. Էնել

դերբ.— էնել, էնէլու, էրէր, էրած, էնօղ, էնէ
ներկա.— կ'էնեմ կը, կ'էնես կը, կ'էնէ կը, կ'էնենք կը, կ'էնէք կը, կ'էնեն կը
անց. անկ.— կ'էնէի կը, կ'էնէիր կը, կ'էնէր կը, կ'էնէինք կը, կ'էնէիք կը, կ'էնէին կը
անց, կատ.— էրի, էրիր, էրավ, էրինք, էրիք, էրին
հրամ.— էրա՛, էրէ՛ք:

4. Էրթալ

դերբ.— էրթալ, էրթալու, գ'ընացէր, էրթացած, էրթացօղ, էրթա
ներկա.— կ'էրթամ կը, կ'էրթաս կը, կ'էրթա կը, կ'էրթանք կը, կ'էրթաք կը, կ'էրթան կը
անց. անկ.— կ'էրթայի կը, կ'էրթայիր կը, կ'էրթար կը, կ'էրթայինք կը, կ'էրթայիք կը, կ'էրթային կը

անց. կատ.— գ'ընացի, գ'ընացիր, գ'ընաց, գ'ընացինք, գ'ընացիք, գ'ընացին:
հրամ.— գ'ընա՛, գընացէ՛ք:

5. Ուդէլ

դերբ.— ուդէլ, ուդէլու, կ'էրէր, կ'էրած, ուդօղ, ուդէ
ներկա.— կ'ուդեմ կը, կ'ուդես կը, կ'ուդէ կը, կ'ուդենք կը, կ'ուդէք կը, կ'ուդեն կը
անց. անկ.— կ'ուդէի կը, կ'ուդէիր կը, կ'ուդէր կը, կ'ուդէինք կը, կ'ուդէիք կը, կ'ուդէին կը
անց. կատ.— կ'էրա, կ'էրար, կ'էրավ, կ'էրանք, կ'էրաք, կ'էրան
հրամ.— կ'է(ր), կ'էրէ՛ք:

6. Տալ

դերբ.— տալ, տալու, տըվէր, տըված, տըվօղ, տա
ներկա.— կուտամ կը, կուտաս կը, կուտա կը, կուտանք կը, կուտաք կը, կուտան կը
անց. անկ.— կուտայի կը, կուտայիր կը, կուտար կը, կուտայինք կը, կուտայիք կը, կուտային կը
անց. կատ.— տըվի, տըվիր, տըվավ, տըվինք, տըվիք, տըվին
հրամ.— տո՛ւ(ր), տըվէ՛ք:

7. Տանիլ

դերբ.— տանիլ, տանէլու, տարէր, տարած, տանօղ, տանի
ներկա.— տանիմ կը, տանիս կը, տանի կը, տանինք կը, տանիք կը, տանին կը
անց. անկ.— տանէի կը, տանէիր կը, տանէր կը, տանէինք կը, տանէիք կը, տանէի կը
անց. կատ.— տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան
հրամ.— տա՛ր, տարէ՛ք:

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Առնել>անել (Հնդ. առել)

առոր. ներկա.— անեմ, անես, անի, անենք, անէք, անեն
առոր. անկ.— անի, անիր, անէր, անինք, անիք, անին
կոր.— արի, արիր, արավ, արինք, արիք, արին, արեցի, արեցիր, արէց, արեցինք, արեցիք, յին
հրամ.— արա՛, մի՛ անել, արէ՛ք, մի՛ք անել
դերբ.— արել, արած, անելու, անում:

Հնդկահայոց բպրբառով՝

սոոր. ներկա.— առևմ, առևս, առի, առևնք, առէք, առևն
սոոր. անկ.— առի, առիր, առէր, առինք, առիք, առին
կոր.— արարի, արար, արարինք,
դերբ.— արարէլ, արարած, առևլու, առում:

Ծանոթ.— Հնդկահայոց այս ձևերը գտնում ենք նաև Դիլանենցի ժամանակագրութեան մեջ, ինչպես՝ առի «տանեց», առնենք «տանենք», էջ 93, արարին 93, կառի «կանխ» 94, արարել «արարչալ» 97 եև: Այսպես նաև Զմյուռնիո Աղերսագրում՝ արար 156, արարիր, չարարինք 156:

2. *Առնուլ>առնել*

սոոր. ներկ.— առնևմ, առնևս, առնի, առնևնք, առնէք, առնևն
սոոր. անկ.— առնի, առնիր, առնէր, առնինք, առնիք, առնին
կոր.— առա, առար, առավ, առանք, առաք, առան, առեցի, առեցիր, առէց, առեցինք, առեցիք, առեցին
հրամ.— առ, մի առնել, առէք, մի՛ք առնել
դերբ.— առէլ, առած, առնէլու, առնում:

Հնդկահայոց մեջ բայս ունի առուլ ձևը և խոնարհվում է առում, առաս, առու, առունք ևն: Այսպես նաև Դիլանենցի ժամանակագրութեան մեջ՝ առուլ, 94, 87, Զմյուռնիո Աղերսագրում՝ առու 156:

3. *Ասել>ասել*

սոոր. ներկ.— ասևմ, ասևս, ասի, ասևնք, ասէք, ասևն
սոոր. անկ.— ասի, ասիր, ասէր, ասինք, ասիք, ասին
կոր.— ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին, ասեցի, ասեցիր, ասէց, ասեցինք, եցիք, եցին
հրամ.— ասա, մի՛ ասել, ասէք, մի՛ք ասել
դերբ.— ասէլ, ասած, ասելու, ասում

Զմյուռնիո Աղերսագրում ացել 157, ացինք «ասացինք» 156 (երեք անգամ), 157 (երկու անգամ):

4. *Բանալ>բ՛անալ*

սոոր. ներկա.— բ՛անամ, բ՛անաս, բ՛անա, բ՛անանք, բ՛անէք, բ՛անան
սոոր. անց.— բ՛անի, բ՛անիր, բ՛անէր, բ՛անինք, բ՛անիք, բ՛անին

կոր.— բ՛ացա, բ՛ացար, բ՛ացավ, բ՛ացանք, բ՛ացաք, բ՛ացան
հրամ.— բ՛աց, մի՛ բ՛անալ, բ՛ացէք, մի՛ք բ՛անալ
դերբ.— բ՛ացէլ, բ՛ացած, բ՛անալու, բ՛անում:

5. *Բերել>բ՛երել*

սոոր. ներկ.— բ՛երևմ, բ՛երևս, բ՛երի, բ՛երևնք, բերէք, բերևն
սոոր. անց.— բ՛երի, բ՛երիր, բ՛երէր, բ՛երինք, բ՛երիք, բ՛երին
կոր.— բ՛երի, բ՛երիր, բ՛երէց, բ՛երինք, բ՛երիք, բ՛երին, բ՛երեցի, բ՛երեցիր, բ՛երէց, բ՛երեցինք, բ՛երեցիք, բ՛երեցին
հրամ.— բ՛եր, մի՛ բ՛երել, բ՛երէք, մի՛ք բ՛երել
դերբ.— բ՛երէլ, բ՛երած, բ՛երելու, բ՛երում:

6. *Գալ>գ՛ոլ*

սոոր. ներկ.— գ՛ոմ, գ՛ոս, գ՛ո, գոնք, գ՛ոք, գ՛ոն
սոոր. անց.— գ՛ի, գ՛իր, գ՛էր, գ՛ինք, գ՛ինք, գ՛ին
կոր.— լեկա, լեկար, լեկավ, լեկանք, լեկաք, լեկան, լեկի, լեկիր, լեկավ, լեկինք, լեկիք, լեկին
հրամ.— լեկ, մի՛ գ՛օլ, եկէք, մի՛ք գ՛ոլ, արի՛ (քիչ գործածական)
դերբ.— լեկէլ, լեկած, գ՛ոլու, գ՛ոլման

Դիլանենցի ժամանակագրութեան մեջ հաճախ գտնում ենք արեկ «եկավ» ձևը. ինչպես՝ էջ 92, 93, 94, 97, 108 եև: Մի անգամ էլ Զմյուռնիո Աղերսագրում՝ էջ 156:

7. *Դնել>դ՛նել*

սոոր. ներկ.— դ՛նևմ, դ՛նևս, դ՛նի, դ՛նևնք, դ՛նէք, դ՛նևն
սոոր. անց.— դ՛նի, դ՛նիր, դ՛նէր, դ՛նինք, իք, ին
կոր.— դ՛րի, դ՛րիր, —, դ՛րինք, դ՛րիք, դ՛րին, դ՛րեցի, դ՛րեցիր, դ՛րէց, դ՛րեցինք, ցիք, ցին
հրամ.— դ՛իր, մի՛ դ՛նել, դ՛րէք, մի՛ք դ՛նել
դերբ.— դ՛րէլ, դ՛րած, դ՛նելու, դ՛նում:

8. *Թողուլ>թողնել*

սոոր. ներկ.— թողնևմ, թողնևս, թողնի, թողնևնք, թողնէք, թողնևն
սոոր. անց. — թողնի, թողնիր, թողնէր, թողնինք, թողնիք, թողնին
կոր.— թողի, թողիր,—, թողինք, թողիք, թողին, թողեցի, թողեցիր, թողէց, թողեցինք, թողեցիք, թողեցին

հրամ.— թող, մի թողնել, թողէք, մի՛ք թողնել
դերբ.— թողնում, թողէլ, թողած, թողնելու։

9. Լալ>լալ

ստոր. ներկ.— լամ, լաս, լա, լանք, լէք, լան
ստոր. անց.— լի, լիր, լէր, լինք, լիք, լին
կար.— լացա, լացար, լացավ, լացանք, լացաք, լացան
հրամ.— լաց, մի՛ լալ, լացէք, մի՛ք լալ
դերբ.— լալման, լացէլ, լացած, լալու։

10. Լնուլ>լցցնել

ստոր. ներկ.— լցցնամ, լցցնաս, լցցնի, լցցնանք, լցցնաք, լցցնան
ստոր. անց.— լցցնի, լցցնիր, լցցնէր, լցցնինք, լցցնիք, լցցնին
կար.— լցցեցի, լցցեցիր, լցցէց, լցցեցինք, լցցեցիք, ցին
լցրեցի, լցրեցիր, լցրէց, լցրեցինք, լցրեցիք, ցին
լցրի, լցրիր, լցրէց, լցրինք, լցրիք, լցրին
հրամ.— լցցիր, մի՛ լցցնել, լցցրէք, մի՛ք լցցնել, լցրուր
դերբ.— լցցնում, լցցէլ, լցցած, լցցնելու։

11. Լուանալ>լվանալ

ստոր. ներկ.— լվանամ, լվանաս, լվանա, լվանանք, էք, ան
ստոր. անց.— լվանի, լվանիր, լվանէր, լվանինք, նիք, նին
կար.— լվացա, լվացար, լվացավ, լվացանք, լվացաք, ցան,
լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, ցին
հրամ.— լվա, մի՛ լվանալ, լվացէք, մի՛ք լվանալ
դերբ.— լվանում, լվացէլ, լվացած, լվանալու։

12. Կալ>կենալ

ստոր. ներկ.— կենամ, կենաս, կենա, կենանք, կենէք, նան
ստոր. անց.— կեցի, կեցիր, կեցէր, կեցինք, կեցիք, կեցին
կար.— կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան
հրամ.— կաց, մի՛ կենալ, կացէք, մի՛ք կենալ, կացէր
դերբ.— կենում, կացէլ, կացած, կենալու։

13. Նստիլ>նստել

ստոր. ներկ.— նստամ, նստաս, նստի, նստանք, նստէք, ան

ստոր. անց.— նստի, նստիր, նստէր, նստինք, նստիք, տին
կար.— նստա, նստար, նստավ, նստանք, նստաք, նստան,
նստեցինք, նստեցիք, ցին
նստեցի, նստեցիր, նստէց, մի՛ք նստել
հրամ.— նստիր, մի՛ նստէլ, նստէ՛ք
դերբ.— նստում, նստէլ, նստած, նստելու։

14. Ունել>ունել

ստոր. ներկ.— ունեմ, ունես, ունի, ունենք, ունէք, ունեն
ստոր. անց.— ուներ, ուներ, ունէր, կերաք, ան
կար.— կերա, կերար, կերավ, կերանք, մի՛ք ուտել
հրամ.— կեր, մի՛ ուտել, կերէք, մի՛ք ուտելու
դերբ.— ուտում, կերէլ, կերած, ուտելով

15. Ի վեր առնուլ>վերցնել «առնել»

ստոր. ներկ.— վերցնեմ, վերցնես, վերցնի, վերցնենք, վերցնէք,
վերցնեն
ստոր. անց.— վերցրի, վերցրիր, վերցրէր, վերցրինք, վերցրիք,
վերցրին
կար.— վերցրեցի, վերցրեցիր, վերցրեց, վերցրեցինք, վերցրեցիք, ցին
վերցրի, վերցրիր, վերցրէց, վերցրինք, վերցրիք, վերցրին
հրամ.— վերցրու, մի՛ վերցնել, վերցրէք, մի՛ք վերցնել
դերբ.— վերցնում, վերցէլ, վերցրած, վերցնելով
(Հնդկահայոց մէջ՝ ներկ. վերցնում, վերցուս, վերցու... վերցնելու)։

16. Ի վեր ելանել>վերել «հանձնել»

ստոր. ներկ.— վերելնեմ, վերելնես, վերելնի, վերելնենք, վերելնէք,
վերելնեն
ստոր. անց.— վերելի, վերելիր, վերելաւ, վերելանք, վերելաք,
կար.— վերելա, վերելար, վերել, վերելան
հրամ.— վերել, մի՛ վերելնել, վերելէ՛ք, մի՛ք վերելնել
դերբ.— վեր լելնում, վեր լելէլ, վեր լելած, վեր լելնելու։

17. Տալ>առ

ստոր. ներկ.— առնեմ, առնես, առնի, առնենք, առնէք, առնեն
ստոր. անց.— առի, առիր, առէր, առինք, առիք, առին

կար.— ավի, ավիր,—, ավինք, ավիք, ավին, ավեցի, ավեցիր, ավէց, ավեցինք, ավեցիք, ավեցին
հրամ.— տուր, մի տալ, ավէք, մի՛ք տալ,
դերբ.— տալման, ավիլ, տված, տալու։

(Գիլանենցի ժամանակագրութեան մեջ հաճախ գտնում ենք միջին հլ. պէտ «տուեց» ձևը, այսպէս՝ էջ 92, 181 են։ Նոյնպես Զմյուռնիո Աղերսագրում՝ էջ 156 (երկիցս)։

18. Տանել>տաճել

տաոր. ներկ.— տանիմ, տանիս, տանի, տանինք, տանէք, տանին
տաոր. անց.— տանի, տանիր, տանէր, տանինք, տանիք, տանին
կար.— տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, ան, տարեցի, տարեցիր, տարէց, տարեցինք, տարեցիք, տարեցին
հրամ.— տար, մի՛ տանել, տարէք, մի՛ք տանել
դերբ.— տանում, տարէլ, տարած, տանելու։

19. Տեսանել>տեսճել

տաոր. ներկ.— տեսնիմ, տեսնիս, տեսնի, տեսնինք, տեսնէք, տեսնին
տաոր. անց.— տեսնի, տեսնիր, տեսնէր, տեսնինք, տեսնիք, տեսնին
կար.— տեսա, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան, տեսի, տեսիր,—, տեսինք, տեսիք, տեսին
հրամ.— տես, մի՛ տեսնել, տեսէք, մի՛ք տեսնել
դերբ.— տեսնում, տեսէլ, տեսած, տեսնելու։

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

1. Ալրել>իրիւ

ըղձ. ներկ.— իրիմ, իրիս, իրի, իրիք, իրին
կար.— ալրամ, ալրաս,—, ալրաք, ալրան
հրամ.— ալրա, ըլրո՛հիք
դերբ.— իրիլ, նիրամ, ո՛րալ, ալրած, ըլրէլոց։

Բայիս խոնարհումը ըստ ինքեան կանոնաւոր է և հետևում է Ա լծորդութեան թեթև տեսակին, անկանոնութիւնները զուտ ձայնարանական են, ծագած են արմատի այ, ա, ի ձայնափոխութիւններից։

2. Անկանիլ>(հ)ընգո՛նիլ

ըղձ. ներկ.— ընգո՛նիմ, ընգո՛նիս...
կար.— ընգէմ, ընգէս,—, ընգէք, ընգէն
հրամ.— ընգէ, ընգո՛հիք, ընգընո՛հիք
դերբ.— ընգո՛նիլ, ընգո՛նո՛մ, ընգէլ, ընգէծ, ընգընէլոց
Այս բոլորը կարող են անենալ նաև հ նախաձայնը։

3. Առնուլ>ուռիլ

ըղձ. ներկ.— ուռիմ, ուռիս, ուռի, ուռի, ուռիք, ուռին
կար.— ուռամ, ուռաս,—, ուռաք, ուռան
հրամ.— ուռա, օռ, ըռո՛հիք
դերբ.— ուռիլ, նուռամ, ուռալ, ուռած, ըռէլոց։

Հայերենի մեջ այս բայը անկանոն է։ Ագուլիսի բարբառը վերածել է կանոնաւորի՝ ջնջելով -ն- հոդը և անորոշը դարձնելով ա՛ռիլ։ Անկանոնութեան իբր միակ հետք մնում է հրմ. օ՛ռ ձևը, որի դեմ սակայն բարբառը հնարել է նաև կանոնաւոր ա՛ռա ձևը։

4. Բառնալ>բո՛նիլ

ըղձ. ներկ.— բո՛նիմ, բո՛նիս, բո՛նի, բո՛նիք,, բո՛նին
կար.— բո՛հո՛մ, բո՛հաս,—, բո՛հաք, բո՛հան
հրամ.— բէօց, բո՛հիք, կամ բէօց ըրո՛հիք։
դերբ.— բո՛նիլ, բո՛նամ, բո՛հալ, բո՛հած, բընէլոց։

Բայիս խոնարհումը մեծագոյն մասամբ վերածված է կանոնաւորի, իբր Բ լծորդութեան թեթևը, անկանոն են մնում միայն հրմ. բէօց, պապառ. դերբ. բընի՛լոց, ինչպես և հրամ. հդ. երկրորդ ձևի բացակայութիւնը։

5. Բերել>բի՛րիլ

ըղձ. ներկ.— բիրիմ, բիրիս, բիրի, բիրիք, բիրին
կար.— բո՛րամ, բո՛րաս,—, բո՛րաք, բո՛րան
հրամ.— բիր, բըրո՛հիք կամ բո՛րիք,
դերբ.— բիրիլ, բիրամ, բո՛րալ, բո՛րած, բրէլոց

Իսկապես անկանոն է միայն հրմ. բի՛ր, մյուսները առաջացած են ձայնաբանական փոփոխությունից (ի կամ m)։

6. Գալ>գիլ

ըղձ. ներկ.—գիլիմ, գիլիս, գիլի, գիլիք, գիլին
կար.— ակամ, ակաս,—, ակաք, ական
հրամ.— եկ (Ցղ. էկ), ըկո՛հիք
դերբ.— գիլել, գիլելիս, ակալ, ակած, գիլելոց։

Բալիս նախավոր ձևն էր *գ՛էօլ, որի հետքերն են գէօ՛լիս ըմ «գալիս եմ», գէօս ըս «գալիս ես» (Ցղնա), կէօս ըս «նուրն նշ.» (Ռամիս)՝ ըստ Սարգսյան, էջ 109։— Սարգսյան գիտե նաև ըղձ. ներկ. գիւյ «գամ, թող գալ» ձևը (Բ, էջ 33, 48), բայց ոչ վերին և ոչ Ներքին Ագուլիսում այդպիսի ձև չկա։

7. Գիտել>գիդիլ

ըղձ. ներկ.— գիդիմ, գիդիս, գիդի, գիդիք, գիդին
կար.— գիդոհամ, գիդո՛հաս,—, գիդո՛հաք, գիդո՛հան
հրամ.— գիդո՛հի, գիդո՛ցիք
դերբ.— գիդիլ, գիդոմ, գիդո՛հալ, գիդո՛հած, գիդիլելոց։

8. Գնալ>նէօլ

ըղձ. ներկ.— նէօմ, նէօս, նէօ, նէօք, նէօն
կար.— նո՛համ, նո՛հաս,—, նո՛հաք, նո՛հան
հրամ.— նէ, նէօ, նո՛հիք,
դերբ.— նէօլ, նէլիս, նո՛հալ, նո՛հած, նէլելոց։

9. Գտանել>գ՛իդո՛նիլ

ըղձ. ներկ.— գ՛իդո՛նիմ,-ո՛նիս, -ո՛նի...
կար.— գ՛իդէմ, գ՛իդէս,—, գ՛իդէք, գ՛իդէն
հրամ.— գ՛իդէ, գ՛իդընոհիք
դերբ.— գ՛իդո՛նիլ, գ՛իդո՛նամ, գ՛իդէլ, գ՛իդէծ, գ՛իդընէլոց։

Հրամայականը ըստ օրինի պիտի ունենար նաև գ՛իդո՛հիք ձևը, բայց արտհնան սրանով շփոթվում է «գիտեմ» բայի հրամայականի հետ, ուստի դերծածությունից վառրված է։

10. Դառնալ>դառնիլ

ըղձ. ներկ.— դա՛ռնիմ, դա՛ռնիս, դա՛ռնի...
կար.— դա՛ռամ, դա՛ռաս,—, դա՛ռաք, դա՛ռան
հրամ.— դա՛ռի,դա՛ռա, դառ՛հիք, դռնո՛հիք
դերբ.— դա՛ռնիլ, դա՛ռնալ, դա՛ռալ, դա՛ռած, դռնէլոց։

11. Եփել>ի՛փիլ

ըղձ. ներկ.— իփիմ, իփիս, իփի...
կար.— ի՛փամ, ի՛փաս,—, ի՛փաք, ի՛փան
հրամ.— ի՛փա, ըփո՛հիք,
դերբ.— իփիլ, նիփամ, ի՛փալ, ի՛փած, ըփէլոց։

12. Լալ>լէօլ

ըղձ. ներկ.— լէօմ, լէօս, լէօ, լէօք, լէօն
կար.— լո՛համ, լո՛հաս,—, լո՛հաք, լո՛հան
հրամ.— լէօ, լո՛հիք,
դերբ.— լէօլ, լէլիս, լո՛հալ, լո՛հած, լէլոց։

13. Կալ>կօլ

ըղձ. ներկա.— կօմ, կօս, կօ, կօք, կօն
կար.— չկա
հրամ.— կօց, կո՛հիք
դերբ.— կօլ, կալիս, կա՛հալ, կա՛հած, կալոց։

14. Մեռանիլ>մո՛ռնիլ

ըղձ. ներկ.— մո՛ռնիմ, մո՛ռնիս, մո՛ռնի, մո՛ռնիք,, մո՛ռնին
կար.— մո՛ռամ, մո՛ռաս,—, մո՛ռաք, մո՛ռան
հրամ.— մո՛ռի, մռո՛հիք, մըռընո՛հիք,
դերբ.— մո՛ռնիլ, մո՛ռնամ, մո՛ռալ, մո՛ռած, մըռնէլոց։

15. Ուտել>օ՛տիլ

ըղձ. ներկ.— օտիմ, օտիս, օտի, օտիք, օտին
կար.—կո՛րամ, կո՛րաս,—, կո՛րաք, կո՛րան
հրամ.— կիր, կո՛րիք,
դերբ.— օտիլ, նօտամ, կո՛րալ, կո՛րած, ըտէլոց։

16. Պրծանիլ>պըռծա՛նիլ

ըղձ. ներկ.— պռծանիմ, պռծանիս, պռծանի, պռծանիք, պռծանին

կոր.— պոժէմ, պոժէս,—, պոժէք, պոժէն
հրամ.— պոժէ, պոժահիք, պոժընահիք
դերբ.— պոժանիլ, պոժանամ, պոժել, պոժէծ, պոժընէլոց։

17. Տալ>Տօլ

ըղձ. ներկ.—տօմ, տօս, տօ, տօք, տօն
կոր.— տվէմ, տվէս,—, տվէք, տվէն
հրամ.— տօ, տվո՛հիք,
դերբ.— տօլ, տա՛լիս, տվէլ, տվէծ, տալաց։

18. Տանիլ>տա՛նիլ

ըղձ. ներկ.— տա՛նիմ, տա՛նիս, տա՛նի, տա՛նիք, տա՛նին
կոր.— տա՛րամ, տա՛րաս,—, տա՛րաք, տա՛րան
հրամ.— տո՛ր, տնո՛հիք,
դերբ.— տա՛նիլ, տա՛նամ, տա՛րալ, տա՛րած, տանէլոց։

19. Տեսանել>տի՛սնիլ
(որ և տի՛ննիլ, տի՛նիլ)

ըղձ. ներկ.— տի՛սնիմ, տի՛սնիս, (տի՛ննիմ, տի՛ննիս կամ տի՛նիմ, տի՛նիս...)
կոր.— տո՛համ, տո՛հաս,— տո՛հաք, տո՛հան
հրամ.— տիս, տո՛հիք,
դերբ.— տի՛սնիլ (տի՛ննիլ, տի՛նիլ), տի՛սնամ, (տի՛ննամ, տի՛նամ), տո՛հալ, տոհած, տանէլոց։

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ

Անկաւոն բայերը Ղարաբաղի բարբառում կատարելի, հրամայականի և անցեալ դերբայի մէջ ինչ ինչ խոտորումներ են ցուց տալիս, որոնք համաձայն են գրաբարի ձևերին՝ միայն ձայնական օրէնքների հպատակութեամբ. օրինակ՝ յէ՛կը՝ եկն, մըտ՝ մուտ, կա՛լ, կա՛լավ՝ կալ, կալաւ, ըրէ՝ արա, արարի, կէ՛ցէ՝ զգեցայ, տըվէ՝ եաւ, աս՝ տուր, ի՛լ՝ ել, կա՛ց կաց, կէ՛ց՝ զգեցիր են։

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

Մարաղայի բարբառում անկանոն բայերը 28 հատ են, որոնց մի մասը շարունակութիւնն է հին հայերէնի անկանոն բայերի և մյուս մասը առաջացել է նոր ձայնական փոփոխութեանց միջոցով։ Յուրաքանչիւրի մասին կխօսենք իր տեղում։

1. Ագանիլ>խայիննել

աոր. ներկ.—խայիննիմ, խայիննիս, խայիննը, խայիննիք, խայիննէք, խայիննին
կոր.— խաքամ, խաքար, խաքավ, խաքանք, խաքաք, խաքան
հրամ.— խաքը՛, խաքէք
դերբ.— խաքիր, խայիննօլու, խաքած։

Բայս պատկանում է Բ լծորդութեան երկրորդ տիպարին, վերջավորութիւնները կանոնաւոր են և միակ անկանոնութիւնը ծագում է ձայնաբանական պատճառով.— ը ձայնը բաղաձայնից առաջ դառնալով յի՝ առաջ է բերում խայիննել, խայիննիմ, խայիննօլու... ձևերը, իսկ ձայնավորից առաջ անփոփոխ մնալով՝ առաջ են գալիս խաքամ, խաքը՛, խաքիր, խաքած ձևերը։

2. Անկանիլ>ինել

աոր. ներկ.— ինիմ, ինիս, ինի, ինինք, ինիք, ինին
կոր.— ինվամ, ինվար, ինվավ, ինվանք, ինվաք, ինվան
հրամ.— ինգի, ինգէք
դերբ.— ինգիր, ինօլու, ինվածա։

Պատկանում է Բ լծորդութեան երկրորդ տեսակին, վերջավորութիւնները կանոնաւոր են, միայն աոր. ներկ. եզ. գ. դէմքը և հրամ. առանում են ի մասնիկը՝ որ արմատի թեթև ի ձայնավորի ազդեցութեամբ է։ Անկանոնութիւնը ծագում է ձայնաբանական պատճառներով; նկ խումբը ձայնավորից առաջ դառնում է նգ՛ (այսպես կոր. հրամ. անց. դերբ. ձևերը), իսկ ն բաղաձայնից առաջ ջնջվում է (այսպես աոր. ներկ. և ապ. դերբ.)։

3. Անցանել>քսնել

աոր. ներկ.— քսնիմ, քսնիս, քսնը, քսնինք, քսնէք, քսնին
կոր.— քնցամ, քնցար, քնցավ, քնցանք, քնցաք, քնցան
հրամ.— քնցը, քնցէք
դերբ.— քնցիր, քնցած, քսնօլու։

Պատկանում է Բ լծորդութեան երկրորդ տիպարին, անկանոնութիւնը առաջացած է ձայնաբանական պատճառներով,— ցց խումբը ձայնավորից առաջ մնում է (ինչ. կատար. հրամ. անց. դերբ.), իսկ բաղաձայնից առաջ դառնում ս (ինչ. աոր. ներկ. և ապ. դերբ.)։

4. Առնել>առնել

աոր. ներկ.— առնիմ, առնիս, առնի, առնինք, առնէք, առնին

կար.— տաըմ, տաիր, տաաց կամ տաից, տաընք, տաըք, տաըն
հրամ.— տա, տաէք՛
դերբ.— տաիր, տաած, տանօլու։

5. Առնուլ>առնել

աոար. նևրկ.— առնիմ, առնիս, առնը, առնինք՛, առնէք՛, առնին
կար.— առըմ, առիր, առից, առընք, առըք, առըն
հրամ.— ա՛ռ, առէք՛
դերբ.— առիր, առած, առնօլու։

6. Ասել>ասել

աոար. նևրկ.— ասիմ, ասիս, ասը, ասինք՛, ասէք՛, ասին
կար.— ասըմ, ասիր, ասաց կամ ասից, ասընք, ասըք, ասըն
հրամ.— ասա, ասէք՛
դերբ.— ասիր, ասած, ասօլու։

7. Գալ>կ՛ալ

աոար. նևրկ.—կ՛ամ, կ՛աս, կ՛ա, կ՛անք, կ՛աք՛, կ՛ան
կար.— էկամ, էկար, էկավ, էկանք, էկաք, էկան
հրամ.— լար կամ լարի, լարէք՛
դերբ.— էկիր, էկած, կ՛ալու։

8. Գտանել>գիւնել

աոար. նևրկ.— գիւնիմ, գիւնիս, գիւնի, գիւնինք՛, գիւնէք՛, գիւնին
կար.— գիւամ, գիւար, գիւավ, գիւանք, գիւաք, գիւան
հրամ.— գիւի, գիւէք՛։
դերբ.— գիւիր, գիւած, գիւնօլու։

Անկանոնութիւնը առաջացած է գլխավորապես ձայնաբանական պատճառով.— ա ձայնը երեքատնի վերածվելուց հետո՝ ալս պես էլ պիտի է հաջորդ ձայնավորի մոտ (ինչ. կատար. հրամ. անց. դերբ.), իսկ հաջորդ բնդհանրի մոտ դառնում է ն (ինչ. նևրկ. և ապառն. դերբ.)։

9. Դնել>տիւնել

աոար. նևրկ.— տիւնիմ, տիւնիս, տիւնի, տիւնինք՛, տիւնէք՛, տիւնին
կար.— տիրըմ, տիրիր, տիրից, տիրընք, տիրըք, տիրըն
հրամ.— տի, տիրէք՛
դերբ.— տիրիր, տիրած, տիւնօլու։

10. Ելանել>ըլել

աոար. նևրկ.— ըլիմ, ըլիս, ըլը, ըլինք՛, ըլէք՛, ըլլին
կար.— լէամ, լէար, լէավ, լէանք, լէաք, լէան
հրամ.— լիր, լիրէք՛
դերբ.— լէիր, լէած, ըլօլու։

11. Երթալ>եթալ

աոար. նևրկ.— էթամ, էթաս, էթա, եթանք՛, էթաք՛, էթան
կար.— կինացըմ, կինացիր, կինաց, կինացընք, կինացըք, կինացըն
հրամ.— քէլ, քէլէք՛
դերբ.— կինացիր, կինացած, էթալու։

Դիտ.— քէլ գործածվում է իրրև հրամ. եթալ բայի, իսկ քէլի՛ իրրև հրամ. քէլել «քաշլել» բայի։ 2. Ապ. դերբ. լինում է չորս ձևով. եթալու, եթալու, աթալու և աթալու։ Սովորականն է եթալու, իսկ մասնավոր մարդիկ գործածում են մյուս ձևերը։

12. Իջանել>էշնել

աոար. նևրկ.—էշնիմ, էշնիս, էշնի, էշնինք՛, էշնէք՛, էշնին
կար.—էշամ, էշար, էշավ, էշանք, էշաք, էշան
հրամ.— էշի, էշէք՛
դերբ.— էշիր, էշած, էշնօլու։

Անկանոնութիւնը առաջացել է ձայնաբանական պատճառնեբով՝ չ ձայնավորից առաջ միւում է շ (ինչպես՝ կար. հրամ. անց. դեր.), իսկ բաղաձայնից առաջ դառնում է շ (ինչպես՝ աոար. նևրկ. և ապառ. դերբ.)։

13. Թողուլ>թօղնել

աոար. նևրկ.— թօղնիմ, թօղնիս, թօղնը, թօղնինք՛, թօղնէք՛, թօղնին
կար.— թօղըմ, թօղիր թօղից, թօղընք, թօղըք, թօղըն (կամ թօղունք, թօղուք, թօղուն)
հրամ.— թօղ կամ թօ, թողէք՛,
դերբ.— թօղիր, թօղած, թօղնօլու։

Պահպանում է հին հավելնևի չորրորդ լծորդութիւնը, բայց բարբառիս մեջ վերածվելով մասամբ Ա լծորդութեան և մասամբ պահելով հին լծորդութեան ձևերը, դարձել է անկանոն։

14. Իմանալ>իմալ

սաոր. ներկ.— իմամ, իմաս, իմա, իմանք, իմաք, իման
կար.— իմացամ, իմացար, իմացավ, իմացանք, իմացաք, իմացան
հրամ.— իմացը՛, իմացէք
դերբ.— իմացիր, իմացած, իմալու։

Անկանոնութիւնը առաջացած է ձայնաբանական պատճառով. իմանալ ձևի մէջ ա ձայնավորը ընկնելով և հետո մ հաջորդ ընգականի մէջ ձուլվելով՝ առաջ է եկել իմալ, ինչպես և ներկայի և ապ. դերբայի ձևերը։ Իսկ կատարյալի, հրամայականի և անց. դերբայի կրկին ձևվերում ա չընկնելով, մյուս կողմից ն ընգականը չգտնվելով՝ այս ձայնափոխութիւնը տեղի չէ ունեցել և մ ձայնը իր դիրքը հաստատ պահել է.— Արդ խոսակցութեան ժամանակ՝ բալիս նախածայն ի ևս կորչում է, ինչպես՝ չիմ ցալի՝ չէր ցալի՝ չէյհ ցա «չէք իմանա»։ —Բացի սովորական «իմանալ» և «գիտենալ» իմաստից, նշանակում է նաև «կարողանալ», հետևողութեամբ թուրքերենի, ուր bilmek «գիտենալ» բայը կազմում է կարողական կոչված բայերը (fiil-i igtidariye)։

15. Լալ>լալ

սաոր. ներկ.— լամ, լաս, լա, լանք, լաք, լան
կար.— լացամ, լացար, լացավ, լացանք, լացաք, լացան
հրամ.— լաց կամ լա, լացէք
դերբ.— լացիր, լացած, լալու։

16. Լինել>ըլլել

սաոր. ներկ.— ըլլամ, ըլլաս, ըլլը, ըլլինք, ըլլէք, ըլլին
կար.— լէյամ, լէյար, լէյավ, լէյանք, լէյաք, լէյան
հրամ.— լիլ, լիլէք
դերբ.— լէյիր, ըլյած, ըլյոզ, ըլյալու։

Կատարյալի ձևերը և հրամայականի հոդնակին ունեն կրկին ձև՝ նախավոր յ ձայնով և առանց այդ հավելվածի։ Այս բանը առաջ է եկել հետևյալ ձևով։ Ն իբրև միավանկ՝ դարձել է յիլ, մյուս բոլոր ձևերը իբրև բազմավանկ՝ չեն առացել յ հավելվածը, բայց հետո ազդվելով հրամայականից՝ առել են մի նորամուտ յ։ Հրամայականի եզակին իլ ձևով չի գործածվում, բայց կա հգ. իլէք, մանավանդ արգելականում (մի՛ իլէք՛)։

17. Կալիլ>կմնել

սաոր. ներկ.— կմնիմ, կմնիս, կմնը, կմնինք, կըմնէք՛, կմնին
կար.— կպալամ, կպալար, կպալավ, կպալանք, կպալաք, կպալան
հրամ.— կպալը՛, կպալէք՛
դերբ.— կպալիր, կպալած, կմնալու։

Առնարհումը Բ լծորդութեան երկրորդ տիպարի համաձայն է, անկանոնութիւնը ծագում է ձայնաբանական պատճառով. ալ ձայնը ձայնավորի առաջ դարձել է կրկին պ, իսկ ն ընգականի մոտ վերածվել է շրթնային ընգական մ։ Առաջինին են պատկանում կատարյալը, հրամայականը և անց. դերբայը, երկրորդին են պատկանում սաոր. և ապ. դերբ.։

18. Հատանիլ>խաննել «սատկիլ»

սաոր. ներկ.— խաննիմ, խաննիս, խաննը՛, խաննինք, խաննէք՛, խաննին
կար.— խատամ, խատար, խատավ, խատանք, խատաք, խատան
հրամ.— խատը՛, խատէք՛
դերբ.— խատիր, խատած, խաննալու։

Առնարհումը պատկանում է Բ լծորդութեան երկրորդ տիպարին։ Անկանոնութիւնը ձայնաբանական է. ա ձայնը ձայնավորի մոտ ինում է, իսկ հաջորդական ընգականի մոտ դառնում է ն. այսպես՝ ա ենք դառնում կատարյալի, հրամայականի, անց. դերբայի մեջ, իսկ ն՝ ներկայի և ապառ. դերբայի մեջ։

19. Հեծանիլ>խեզնել

սաոր. ներկ.— խէզնիմ, խէզնիս, խէզնի, խէզնինք, խէզնէք՛, խէզնին
կար.— խէցամ, խէցար, խէցավ, խէցանք, խէցաք, խէցան
հրամ.— խէցիր, խէցած, խէզնալու։

Առնարհումը պատկանում է Բ լծորդութեան երկրորդ տիպարին։ Անկանոնութիւնը ձայնաբանական է, ծ բաղաձայնը ձայնավորից առաջ դարձել է ց (այսպես կատար. հրամ. և դերբ.), իսկ ընգականի մոտ՝ զ (այսպես ներկ. և ապ. դերբ.)։

20. Ճանաչել>ճաշնալ

սաոր. ներկ.— ճաշնամ, ճաշնաս, ճաշնա, ճաշնանք, ճաշնաք, ճաշնան

կար.— ճանչըցամ, ճանչըցար, ճանչըցավ, ճանչըցանք, ճանչըցաք, ճանչըցան
հրամ.— ճանչըցը, ճանչըցէք
դերբ.— ճանչըցիր, ճանչըցած, ճաշնալու:

Ձոնաբարումը պատկանում է Գ լծորդութեան երկրորդ տիպարին, անկանոնութիւնը ձայնաբանական պատճառով է. ճչ խումբը ձայնավորից առաջ միում է (այսպես կար. հրամ. անց. դերբ.), իսկ ընդհանրի մոտ դառնում է շ (ինչ. ներկ. և ապ. դերբ.):

21. Մտանել>մըննել

ատոր. ներկ.— միտիմ, միտիս, միտը՛, միտինք, միտէք, միտին
կար.— մտամ, մտար, մտավ, մտանք, մտաք, մտան
հրամ.— մըտը, մտէք
դերբ.— մտիր, մտած, միտօլու:

Անկանոնութիւնը առաջանում է ձայնաբանական պատճառով, և ճիշտ այնպես է, ինչպես հատանիլ>խաննիլ բայի մէջ:

22. Ուսանիլ>ուսնիլ

ատոր. ներկ.— ուսնիմ, ուսնիս, ուսնը, ուսնինք, ուսնէք, ուսնին
կար.— ուսամ, ուսար, ուսավ, ուսանք, ուսաք, ուսան
հրամ.— ուսու, ուսէք
դերբ.— ուսիր, ուսած, ուսնօլու:

Անկանոնութիւնը ձայնաբանական է. ս ձայնը կրկնված է ձայնավորից առաջ, իսկ ընդհանրի մոտ՝ որովհետև անհնար էր՝ միում է անխուսափելի: Ձայնական համաձայնութեամբ կարելի է խոնարհել նաև ուսնում, ուսնուս, ուսնու, ուսնունք, ուսնուք, ուսնուն:

23. Ուտիլ>ուտել

ատոր. ներկ.— ուտիմ, ուտիս, ուտը, ուտինք, ուտէք, ուտին
կար.— կերայ, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան
հրամ.— կիր, կիրէք
դերբ.— կերիր, կերած, ուտօլու:

Ձայնական համաձայնութեամբ կարելի է նաև խոնարհել ուտում, ուտուս, ուտու ևն:

24. Պրծանիլ>պըրծնել

ատոր. ներկ.— պրծնիմ, պրծնիս, պրծնը, պըրծնինք, պըրծնէք, պրծնին
կար.— պրծայ, պրծար, պրծավ, պրծանք, պրծաք, պրծան
հրամ.— պրծը՛, պրծէք
դերբ.— պրծիր, պրծած, պրծնօլու:

Անկանոնութիւնը ձայնաբանական է. ծ ձայնը ձայնավորի մոտ պահվում է, իսկ ընդհանրի մոտ վերածվում է ց:

25. Տանիլ>տանիլ

ատոր. ներկ.— տանիմ, տանիս, տանը՛, տանինք, տանէք, տանին
կար.— տարայ, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան
հրամ.— տար, տարէք
դերբ.— տարիր, տարած, տանօլու:

26. Տալ>տալ

ատոր. ներկ.— տամ, տաս, տա, տանք, տաք, տան
կար.— տուի՛մ, տուի՛ր, տուի՛ց, տուի՛նք, տուի՛ք, տուի՛ն կամ՝ տուռում, տուռիր, տուռից, տուռունք, տուռուք, տուռուն
հրամ.— տու, տուի՛ք կամ տուիրէք
դերբ.— տուի՛ր կամ տուռիր, տուված կամ տուռած, տալու:

Հրամ. տու գանվելով փոխուկ ձայնավորի մոտ՝ դառնում է տիւ, այսպես՝ շատ սովորական ձև է տիւ տո «տուր այստեղ», փոխանակ ասելու պարզապես տո՛:

27. Տեսանել>տեսնել

ատոր. ներկ.— տեսնիմ, տեսնիս, տեսնը, տեսնինք, տեսնէք, տեսնին
կար.— տեսայ, տեսար, տեսավ, տեսանք, տեսաք, տեսան
հրամ.— տես կամ տէ՛, տեսէք կամ տեսէք՛
դերբ.— տեսիր, տեսած, տեսնօլու:

28. Քաքնել>քո՛ւննել

ատոր. ներկ.— քո՛ւննիմ, քո՛ւննիս, քո՛ւննի՝ քո՛ւննինք՛, քո՛ւնէք՛, քո՛ւննին
կար.— քո՛քըմ, քո՛քիր, քո՛քից, քո՛քընք, քո՛քըք, քո՛քըն

հրամ.— քʻոքի, քʻոքէքʻ
դերբ.— քʻոչնէլ, քʻոքած, քʻոչնօղու։

Դ. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Ստորև տալիս ենք պակասավոր բայերի խոնարհման պատկերը մի քանի կարևոր բարբառներում։

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ>գամ

ներկ.— գամ, գաս, գա, գանք, գաք, գան
անկ.— գայի, գայիր, գար, գայինք, գայիք, գային։
Մնացյալը լրանում է ըլլալ կամ գըդնվիլ բայից։

2. Ունիմ>ուճիմ

ներկ.— ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին
անկ.— ունէյի, ունէյիր, ունէր, ունէյինք, ունէյիք, ունէյին։
Մնացյալը լրանում է ուճեճալ բայից։

3. Գիտեմ>գիդեմ

ներկ.— գիդէմ, գիդէս, գիդէ, գիդէնք, գիդէք, գիդէն
անկ.— գիդէի, գիդէյիր, գիդէր, գիդէյինք, գիդէյիք, գիդէյին
Մնացյալը լրանում է գիտճալ բայից։

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ>գամ

ներկ.— գամ, գաս, գա, գանք, գաք, գան
անկ.— գայի, գայիր, գար, գայինք, գայիք, գայինս։
Մնացյալը լրանում է ըլլալ կամ գդնվիլ բայից։

2. Ունիմ>ուճիմ

ներկ.— ունիմ, ունիս, ունի (Թուխտի ուճէ), ունինք, ունիք, ունին
անկ.— ունէյի, ունէյիր, ունէր, ունէյինք, ունէյիք, ունէյին
Մնացյալը լրանում է ուճեճալ բայից։

3. Գիտել>գիդեմ

ներկ.— գիդիմ, գիդիս, գիդէ, գիդինք, գիդիք, գիդին

անկ.— գիդէյի, գիդէյիր, գիդէր, գիդէյինք, գիդէյիք, գիդէյին։
Մնացյալը լրանում է գիդնալ բայից։

4. Ուզել>ուզիլ

ներկ.— ուզիմ, ուզիս, ուզէ, ուզինք, ուզիք, ուզին
անկ.— ուզէյի, ուզէյիր, ուզէր, ուզէյինք, ուզէյիք, ուզէյին
Մնացյալը լրանում է ուզեճալ, ուզանալ բայից։

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ>կամ

ներկ.— կամ, կաս, կա, կանք, կաք, կան
անկ.— կի, կիր, կէր, կինք, կիք, կին

2. Ունիմ>ուճեմ

ներկ.— ունեմ, ունես, ունի, ունենք, ունէք, ունեն
անկ.— ունի, ունիր, ունէր, ունինք, ունիք, ունին
Մնացյալը լրանում է ուճեճալ բայից՝

3. Գիտեմ>կիտեմ

ներկ.— կիտեմ, կիտես, կիտի, կիտենք, կիտէք, կիտեն
անկ.— կիտի, կիտիր, կիտէր, կիտինք, կիտիք, կիտին
կոր.— կիցա, կիցար, կիցավ, կիցանք, կիցաք, կիցան
հրամ.— կիցի, կիցէք
դերբ.— կիցող, կիցած, կիտնալու, կիտնալիք, կիցիր։

Պակասավոր բայերի շարքը պիտի դնենք նաև դերբ. հայիմ «տեսնեմ» բայը, որ Վանի բարբառում պահված է մի միմիայն երկու ձևով՝ խեմ «հայիմ, տեսնեմ» և խենքյ «հայինք, տեսնենք»։ Սրանք գործածված են մակբայի նման և բոլորովին կորցրել են իրենց բայական արժեքը։ Այսպես՝

պի խեմ «բեր տեսնեմ»
պէ խենքյ «բեր տեսնենք»
ասա խեմ «ասա տեսնեմ»
ասա՛ մէյ խեմ «ասա մի տեսնեմ»
մէխա պէ խեմ «մի (հատ) բեր տեսնեմ»
մէխա ասա խեմ «մի (հատ) ասա տեսնեմ»
մ՛խեմ (գյուղերում) «մի տեսնեմ, տեսնեմ մի»

Անիծական ձև է՝

վորտու իրե՞ս չխես «որդու երես չտեսնես»
Գլուղական ձև է կխի «կնայի» (որ է կճայի)։

Պակասավոր բայերից հետո կարելի էր հիշել նաև անդեմ բայերը, որոնց մեջ դեղեցիկ օրինակ է կճերի «եղանակը՝ օրը պարզում լավանում է» (գրբ. ջեր «լավ, պայծառ օր» բառից)։

ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ>գամ

Ներկ.— գամ, գաս, գա, գոնք, գ՛ոք, գոն
անկ.— գ՛ոյ, գ՛ոյդ, գ՛որ, գ՛ոյքը, գ՛ոյքը, գ՛ոնը
(Մնացյալը լրանում է ըղա կամ կղնվուշ բայով)։

2. Ունիմ>ուճիմ

Ներկ.— ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին
անկ.— ունէյ, ունէյդ, ունիր, ունայքը, ունէյքը, ունէյնը
(Մնացյալը լրանում է «ունենալ» բայով)։

3. Գիտեմ>կիդիմ

Ներկ.— կիդիմ, կիդէս, կիդո, կիդինք, կիդէք, կիդին
անկ.— կիդէյ, կիդէյդը, կիդէր, կիդայքը, կիդէյքը, կիդէյնը։
(Մնացյալը լրանում է «ունենալ» բայով)։

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ>գամ

Ներկ.— գամ, գաս, գա, գոնք, գ՛ոք, գոն
անկ.— գի, գիյ, գէյ, գինք, գիք, գին

1. Ունիմ>ուճամ

Ներկ.— ունամ, ունաս, ունա, ունանք, ունաք, ունան
անկ.— ունի, ունիյ, ունէյ, ունինք, ունիք, ունին։
(Մնացյալը կազմվում է ունենալ>ուցցնել ձևից)
կաբ.— ունցո, ունցոյ, ունցօվ, ունցոնք, ունցոք, ունցոն
Ներկ.— ունցնամ, ունցնաս, ունցնա, ունցնանք, ունցնաք, ունցնան
անց.— ունցնի, ունցնիյ, ունցնէյ, ունցնինք, ունցնիք, ունցընին

հրամ.— ունցէյ, ունցէք
դերբ.— ունցնալ, ունցնէօղ, ունցօձ, ունցիկ, ունցնիլէք, ունցնիլ։

3. Գիտեմ>գ՛իդիմ

Ներկ.— գ՛իդիմ, գ՛իդիս, գ՛իդի, գ՛իդինք, գ՛իդէք, գ՛իդին
անկ.— գ՛իգա, գ՛իդիյ, գ՛իդէյ, գ՛իգոնք, գ՛իգոք, գ՛իգան
(Մնացյալը կազմվում է գ՛իդնոյ «գիտենալ» ձևից)
կաբ.— գ՛իդցո, գ՛իդցոյ, գ՛նդցօվ, գ՛իդցոնք, գ՛իդցոք, գ՛իդցոն
կամ մի՛շն հայերեն ա ձայնավորը պահելով՝ գ՛իդացո, գ՛իդացոյ, գ՛իդացօվ, գ՛իդացոնք, գ՛իդացոք, գ՛իդացոն
հրամ.— գ՛իդցէյ, գ՛իդցէք կամ գ՛իդացէյ, գ՛իդացէք
դերբ.— գ՛իդցէօղ (գ՛իդացէօղ), գ՛իդցօձ (գ՛իդացօձ), գ՛իդցիկ (գ՛իդացիկ), գ՛իդնոլէք, գ՛իդնալ։

ՍՎԵԴԻԱՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Եմ>իմ

Ներկ.— իմ, իս, է, ինք, իք, ին
անկ.— էր է, էր, իր, էր ինք, էր իք, էր ին
Մնացյալը լրանում է լինել>ընինի բայից։

2. Կամ>գում

Ներկ.— գում, գուս, գո, գունք, գ՛ոք, գուն
անկ.— գէր է, գէր, գաա (գիր), գէր ինք, իք, ին
Մնացյալը լրանում է դ՛ընդրվիլ «գտնուիլ» բայից։

Ունիմ>գունեմ

Ներկ.— գունէմ, գունէս, գունա, գունէնք, գունոք, գունէն
անկ.— գունէր է, գունէր, գունիր, գունէր ինք...
Մնացյալը կազմվում է «ունենալ» բայից, ինչպես՝
անկ.— ունունէր է, ունունէր, ունունիր...
կաբ.— ունցո, ունցուր, ունցուվ, ունցունք, ունցոք, ունցուն
(Պիթիաս գլուղում այս բայի կատարյալը լինում է՝
ունէնցո, ունէնցուր, ունէնցուվ, ունէնցունք, ունէնցոք, ունէնցուն)
հրամ.— ունցէ, ունցիք
դերբ.— ունէնիլ, ունուցած, ունցիր, ունընիլա, ունընիլոք։

4. Գիտեմ>գ'իդիմ

ներկ.— գ'իդիմ, գ'իդիս, գ'իդէ, գ'իդինք, գ'իդիք, գ'իդին
անկ.— գ'իդէր է, գ'իդէր, գ'իդիր, գ'իդիր ինք...
Մնացյալը լրանում է «գիտենալ» բայից
կոր.— գ'իդացօ, գ'իդացուր, գ'իդացուվ, գ'իդացունք, գ'իդացուք, գ'իդացան:
հրամ.— գ'իդացէ, գ'իդացիք
դերբ.— գ'իդանիլ, գ'իդացուձ, գ'իդացիր, գ'իդանիլա, գ'իդանիլոք:

ԿԱՐՆՈ ԲԱՐԲԱՌ

1. Կամ

ներկ.— կամ, կաս, կա, կանք, կաք, կան
անց. անկ.— կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային:
Պակասող ժամանակները լրացվում են ըլիլ (Ախց., Ախք.), էղնել (Լեռն.) և գ'ըղնվել բայերով:

2. Ըլիլ

ներկ.— ըլիմ, ըլիս, ըլի, ըլինք, ըլիք, ըլին
անց. անկ.— ըլէի, ըլէիր, ըլէր, ըլէինք, ըլէիք, ըլէին.
Պակասող ժամանակները լրացվում են էղնել բայով:

3. Գ'իդեմ

ներկա.— գ'իդ'մ, գ'իդէս, գ'իդէ, գ'իդէնք, գ'իդէք, գ'իդէն
անց. անկ.— գ'իդէի, գ'իդէիր, գ'իդէր, գ'իդէինք, գ'իդէիք, գ'իդէին:
Պակասող ժամանակները լրացվում են գիդնալ բայով:

4. Ունիմ

ներկ.— ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին:
անց. անկ.— ունէի, ունէիր, ունէր, ունէինք, ունէիք, ունէին.
Պակասող ժամանակները լրացվում են ունենալ բայով:

ՆՈՐ-ՋՈՒՂԱ

1. Կամ

սահմ. ներկ.— կամ, կաս, կա, կանք, կէք, կան
անկ.— կի, կիր, կէր, կինք, կիք, կին:
Գոյծ է ածվում նաև անորոշ կալ «բնակիլ» ձևը, որից՝ կալմանք ա «բնակվում է»:
Մնացյալը լինում է լինել և կենալ բայերով:

Սրանից է կազմվում աճց կալ «առնցնել» բայը, որ իբր կրկնակ՝ յաճց կենալ ձևի մոտ գործ է ածվում.— ներկ. աճցկամ, աճցկաս, աճցկաճ, անկ. աճցկի, աճցկիճ, սահմ. աճցկկամ, աճցկկիճ, աճցիճ կալմաճ, հլվ. աճցկալու, աճցկալով և ն. մյուս ձևերը կազմվում են յաճց կենալ բայից:

2. Ունիմ

սահմ. ներկ.— ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին
անկ.— ունի՞, ունիր, ունէր, ունինք, ունիք, ունին:
Մնացյալը լրանում է ունենալ բայից:

ԱԳՈՒԼԻՍԻ ԲԱՐԲԱՌ

1. Ունիմ

սահմ. ներկ.— ծնիմ, ծնիս, ծնի, ծնինք, ծնին:
Ուրիշ ոչ մի ձև չկա. պակասները լրացվում են էլիլ «լինել» բայով, օրինակ՝ ես մի տղա ունեցա=տնձ մուչն տղօյ ա էլալ:

2. Պետք է

սահմ. ներկ.— մոտում ա կամ մոտալ ա:

3. Կամ

սահմ. ներկ.— կամ, կաս, կա, կանք, կան:

Համմ. նաև անկանոն բայերի մեջ՝ թ. 13, որ գործածական է հատկապես աճց կենալ ոճի մեջ, իսկ վերևինը նշանակում է «կամ, գոյություն ունիմ»:

ՄԱՐԱՂԱՅԻ ԲԱՐԲԱՌ

1. Կամ

սահմ. ներկ.— կամ, կաս, կա, կանք, կաք, կան
անց. անկ.— կամըէր, կաս էր, կար, կանք էր, կաք էր, կանէր:

Այս բոլորը կարելի է խոնարհել նաև օժանդակով, ինչ. ներկ. կայըմ, կայ ըս, կայ ը, կայ ընք, կայ էք, կայ ըն.— անկ. կայըմ էր, կայըս էր, կայ էր, կայ ընք էր, կայըն էր:

2. Ունիմ

սահմ. նախկ.— իւնիւմ, իւնիւս, իւնիւ, իւնիւնք, իւնիւք, իւնիւն.—

կարելի է ասել նաև իւնիմ, իւնիս, իւնինք, իւնին: Անց. անկ. ես իւ տեղում:

Մնացյալ ձևերը չկան. պակասը լրացվում է լինել>ըլել բայով, ինչպես՝ յելավ «ունեցա» ևն:

ԼԵՈՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ՊՈԼՍԻ ԲԱՐԲԱՌ

Ինչպես երևում է Պոլսի բարբառի խոնարհման համակարգից, գրաբարի լծորդությունները հաճախ փոխվում են այս բարբառում: Փոփոխությունները լինում են հետևյալ չորս ձևերով.

1) Մի լծորդության Ա. տիպարը անցնում է մի ուրիշ լծորդության Ա. տիպարին, ինչպես՝ երևիլ>երեվալ, հառաջել>հօգվըվըդալ, երերիլ>երերալ (բայց կա նաև գրբ. երերալ). յօրանջել>երեժգըդալ:

2) Մի լծորդության երկրորդ տիպարը անցնում է նույն լծորդության առաջին տիպարին, ինչպես՝ ծնանիլ>ձնիլ, ապանանել>ըսպանենել, կլանել>գըլլել (ըստ այսմ էլ կատարյալի մեջ ունենում ենք գրբ. սպանի>ըսպաննէցի, կլի>գըլլեցի), լուանալ>վալ, մուրանալ>մուրալ:

3) Մի լծորդության երկրորդ տիպարը անցնում է մի ուրիշ լծորդության երկրորդ տիպարին, ինչպես՝ անցանել>ասնիլ, հասանել>հասնիլ, մտանել>մըտնալ, գտանել>գըտնալ, ելանել>էլլալ, անկանիլ>իյնալ, իջանել>իշնալ:

4) Մի լծորդության առաջին տիպարը անցնում է մի ուրիշ լծորդության երկրորդ տիպարին, ինչպես՝ ամաչել>ամըշնալ, գիտել>գիտնալ, կալ>գենալ, կարիլ>կարննալ>կըրնալ, ճանաչել>ճանչնալ>ջաշնալ, մօտիլ>մօգենալ, պարծիլ>բարձրենալ, բարձենալ, ուրիլ>ուռենալ, ունիլ>ունենալ, պատուիլ>բաուվրնալ, քննել>քնանալ, կարօտիլ>գարօտնալ:

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌ

Ամենլորդ համարելով կրկնել Պոլսի բարբառի հատվածում լծորդության փոփոխության մասին ասածները, որ վերաբերում են Վանի, ինչպես և մեր մյուս բարբառներին, հավաքում եմ այն

դեպքերը, երբ հին հավելվելն ծանոթ մի լծորդության փոխում է իր դիրքը վանի բարբառում.

ամաչել>ամչնալ	թողուլ>թօղնել
ալրել>իրիցել	թքանել>թըքչել
անապանիլ>անկըննալ	լիզանել>լիզալ>լիզել
անկանիլ>ինել	լնուլ>լցնել
առնուլ>առնել	լինիլ>էլնել
արածել>արաջալ	լուանալ>լվալ, վլալ
բորբոսիլ>պէօբռնել	լպրծիլ>լպզարալ
բուսանիլ>պիւսել	խմել>խմել, կար. խմա
գիտել>կիտնալ	խրխնջել>խրխնջալ
գովել>կյէօվալ	ծիծաղիլ>ծծղալ
երևիլ>էրէվալ	ծնանիլ>ծնել
գնալ>գինել	կախադել>կակըղել, կար. կակըզա
զգուիլ>զըզվալ	կաղկանձել>կըռնձկըռնձալ
թանալ>թացել	կորչիլ>կաբրիսել
հանդչիլ>խանգլել	ուռնուլ, ուռչիլ>ուռել
հարցանել>խաացուցել	պագանել>պաքլել
հառաջել>խօսօռալ	պշնուլ>պշալ
ճանաչել>ճանչընալ	սարսափիլ>սրսփալ
մուրանալ>մուրալ	սպանանել>սպանել
մօրմոքիլ>մէօրմընքալ	տեսանել>տխնալ
յօրանջել>օրօշկրտալ	փախչիլ>փախնել
նուագիլ>նվագկտալ	փլանիլ>պլլել
շրջնուլ>շռնել	օծանել>օծել:
ողորմիլ>օղօրմալ	

Բայերից ոմանք տատանվում են երկու լծորդության վրա, օրինակ՝ ապրիլ>ապրել, կար. ապրիցի, ապրա (առաջինը Ա. լծ. ա տիպար, երկրորդը Բ լծ. ա տիպար):

Այս ձևափոխության պատճառն այն է, որ նույն երկու լծորդությունների ներկան, անկատարը և հրամայականը միևնույն լինելով, կատարյալն էլ նույնացել է.

ծարավիլ>ծարավել, ծարվընալ, կար. ծարավա, ծարվըցա

խոստովանիլ>խոստովանել, կար. խոստովանա, խոստովանիցի (առաջինը Բ. լծ. ա տիպար, երկրորդը Ա. լծ. ա տիպար):

քնել>քլընել, կար. քլընիցի, քլընա (առաջինը Ա լծ. ա տիպարով, երկրորդը Բ լծ. ա տիպարով, իբր թե բայը լիներ քնիլ):

կաթիլ>կաթիլ (կալլակիլ), կար. կաթիլգի, կաթա (առաջինը Ա լծ. ա տիպար, երկրորդը Բ լծ. ա տիպար)։

Կան բայեր, որոնք ամանդարար պահում են գրաբարի խոնարհման այսինչ ձևը և միևնույն ժամանակ ունեն նոր բարբառային ձևը. օրինակ՝

թողուլ>թօղնել, կար. թօղի, թօղիցի (առաջինը գրաբարի Դ լծ. ա տիպարի կատարյալն է, իսկ երկրորդը՝ նոր բարբառով Ա լծ. ա տիպարից, իբրև թողել)։

լնուլ<լցել, կար. լցի, լցիցի (առաջինը գրբ. լնուլ՝ Դ լծ. երկրորդ ձևից, երկրորդը՝ բարբառային լցել ձևից)։

բերել>պիրել, կար. եզ. գ դեմքը լինում է իպե (գրբ. երեր ձևից) և պիրեց՝ նոր ձև։

Այստեղ պետք է հիշել հատկապես գրաբարի մի կարևոր յուրացորդը, այն է միավանկ բայաձևերի ե նախահավելվածը, որ վանող բարբառում պահվում է ի ձևով՝ կատարյալի եզ. գ դեմքի մեջ։ Այսպես՝

հանել>խանել, իխան<եհան
*դարկանել>պարնել, իդար<եհար,*եդար*
բառնալ, որից երարձ>իպառց
բերել>պիրել, իպե<եբեր
բանալ>պանալ, իպաց<եբաց
թողուլ>թօղնել, իթօղ<եթող
լալ>լալ, իլաց<ելաց
լնուլ>լցնել, իլից<ելից։

Նույնիսկ գրաբարի մեջ չգործածվող մի բայից, նույն ոճով՝ թալել «գցել», իթալ, օրինակ՝ իթալ թօնէրն իրիցից «գցից թոնիրն ու ալրից»։

Այս հավելումը կլինի միայն բաղաձայնով սկսվող և միավանկ բայերի վրա։

Հին լեզվում գործածական է եղել նաև գրաբարյան եառ «առավ» ձևը, որով ծնում է մի առած.

Վոչ էառ, վոչ խաչնեցավ։

ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌ

Առտիալի բարբառում լծորդութիւնների փոփոխման այրբենական ցուցակը հետևյալն է.

աղալ>Ա չ. ախցել, Լհ. աղնալու
ամաչել>Ա չ. ամրնչնալ, Լհ. ամունչնալու
առնուլ>Ա չ. առնալ, Լհ. առնէլու
արբենալ>Ա չ. հարփել, Լհ. հարբ'էլու
արգելուլ>Ա չ. արքիլել
դանդաղիլ>Ա չ. դ'անդրդվիլ
դիտել>Ա չ. դ'իդնալ, Լհ. գիդնալու
գտանել>Ա չ. դ'ըդնալ, Լհ. դ'ըդնէլու
ելանել>Ա չ. յէլել, Լհ. էլէլու
երազել>Ա չ. էրձել, Լհ. էրձէվէլու
երդնուլ>Ա չ. էրթընալ, Լհ. էրդ'վընալու
երևիլ>Ա չ. էրէվնալ, Լհ. էրէվնալու
զարթնուլ>Ա չ. զարթընել, Լհ. զարդ'ըվէլու
թողուլ>Ա չ. թօղալ, թօղնալ, Լհ. թօղէլու
թռչիլ>Ա չ. ութփ'էնալ, Լհ. գուդ'վի ինձի
լիզալ>Ա չ. լըզել, Լհ. լըզէլու
լնուլ>Լհ ըլինքցընէլու, Ա չ. լըցընել, Լհ. լընէլու
լինել>Ա չ. ըլալ, իլալ, Լհ. իլալու
լուանալ>Ա չ. լըմընալ
լողալ>Ա չ. լեղ գալ, Լհ. լեղ գալու
կախազել>Ա չ. գաղըզգալ
կամիլ>Ա չ. գամէնալ
կլանել>Ա չ. գալ գալ
համարիլ>Ա չ. համարնել, համբրել, Լհ. համբրէլու
հատուցել>Ա չ. հադ'ըգալ
ճանաչել>Ա չ. ջանջ'նալ, ջանջ'նալու
մուրանալ>Ա չ. մուրալ
մտանել>Ա չ. մըդնալ
մտիլ, մերձենալ>Ա չ. մոդէնալ
յօրանջել>Ա չ. օրընջդալ, Լհ. գօրօնջ'գ'ըդալու
ունել>Ա չ. ունէնալ, Լհ. ունէնալու
պատճել>Ա չ. բարձէնալ
պատանանել>Ա չ. ըսբ'անել, Լհ. ըսբ'անէլու
վախել>Ա չ. վախնալ, Լհ. վախնալու
տեսանել>Ա չ. գէնալ, Լհ. գէնէլու
փլանիլ>Ա չ. փլել, Լհ. բ'ըլէլու

կաթիլ>կաթել (կալլակիլ), կար. կաթիկի, կաթա (առաջինը Ա լծ. ա տիպարի, երկրորդը Բ լծ. ա տիպարի)։

Կան բայեր, որոնք ամանդարար պահում են գրաբարի խոնարհման այսինչ ձևը և միևնույն ժամանակ ունեն նոր բարբառային ձևը. օրինակ՝

թողուլ>թօղնել, կար. թօղի, թօղիցի (առաջինը գրաբարի Դ լծ. ա տիպարի կատարյալն է, իսկ երկրորդը՝ նոր բարբառով Ա լծ. ա տիպարից, իբրև թողել)։

ընուլ<լցել, կար. լցի, լցիցի (առաջինը գրբ. լցուլ՝ Դ լծ. երկրորդ ձևից, երկրորդը՝ բարբառային լցել ձևից)։

բերել>պիրել, կար. եզ. գ դեմքը լինում է իպե (գրբ. երեր ձևից) և պիրեց՝ նոր ձև։

Այստեղ պետք է հիշել հատկապես գրաբարի մի կարևոր հնացորդը, այն է միևնանի բայաձևերի ն նախահավելվածը, որ վանի բարբառում պահվում է ի ձևով՝ կատարյալի եզ. գ դեմքի մեջ։ Այսպես՝

հանել>իանել, իհան<հան
*գարկանել>գարնել, իգար<հար,*եգար*
բառնալ, որից երարձ>իպառց
բերել>պիրել, իպե<երեր
բանալ>պանալ, իպաց<եբաց
թողուլ>թօղնել, իթօղ<եթող
լալ>լալ, իլաց<ելաց
ընուլ>լցնել, իլից<ելից։

Նույնիսկ գրաբարի մեջ չգործածվող մի բայից, նույն ոճով՝ թալել «գցել», իթալ, օրինակ՝ իթալ թօնէրն իլուցեց «գցից թոնիրն ու այրեց»։

Այս հավելումը կլինի միայն բաղաձայնով սկսվող և միավանկ բայերի վրա։

Հին լեզվում գործածական է եղել նաև գրաբարյան հատ «առաջ» ձևը, որով Աստ է մի առած.

Վոչ էառ, վոչ խանիեցավ։

ԱՌՏԻԱԼԻ ԲԱՐԲԱՌ

Առտիալի բարբառում լծորդութիւնների փոփոխման այրաբենական ցուցակը հետևյալն է.

աղալ>Ա չ. ախցել, Լհ. աղնալու
ամաչել>Ա չ. ամբընչնալ, Լհ. ամունչնալու
առնուլ>Ա չ. առնալ, Լհ. առնէլու
արբենալ>Ա չ. հարբիլ, Լհ. հարբ'էլու
արգելուլ>Ա չ. արքիլել
գանգատիլ>Ա չ. գ'անգըդվիլ
գիտել>Ա չ. գ'իդնալ, Լհ. գիդնալու
գտանել>Ա չ. գ'ըդնալ, Լհ. գ'ըդնէլու
ելանել>Ա չ. լելել, Լհ. էլէլու
երագել>Ա չ. էրձիլ, Լհ. էրձէվէլու
երդնուլ>Ա չ. էրփընալ, Լհ. էրդ'վընալու
երևիլ>Ա չ. էրէվնալ, Լհ. էրէվնալու
զարթնուլ>Ա չ. զարթընել, Լհ. զարդ'ըվէլու
թողուլ>Ա չ. թօղալ, թօղնալ, Լհ. թօղէլու
թափել>Ա չ. տիփ'էնալ, Լհ. գուդ'վի ինձի
լիզուլ>Ա չ. լըզել, Լհ. լըզէլու
լնուլ>Լհ ըլինքցընէլու, Ա չ. լըցընել, Լհ. լընէլու
լինել>Ա չ. ըլալ, իլալ, Լհ. իլալու
լրանալ>Ա չ. լըմընալ
լողալ>Ա չ. լեղ գալ, Լհ. լէղ գալու
կակազել>Ա չ. գագըդգալ
կամիլ>Ա չ. գամէնալ
կլանել>Ա չ. գուլ գալ
համարիլ>Ա չ. համարել, համբրել, Լհ. համբըրէլու
հոտոտել>Ա չ. հոդ'ֆըդալ
ճանաչել>Ա չ. ջանջ'նալ, ջանջ'նալու
մուրանալ>Ա չ. մուրալ
մտանել>Ա չ. մըդնալ
մօտիլ, մերձենալ>Ա չ. մօդէնալ
յօրանջել>Ա չ. օրընջալ, Լհ. գօրօնջ'գ'ըդալու
ունել>Ա չ. ունէնալ, Լհ. ունէնալու
պարծիլ>Ա չ. բարձէնալ
սպանանել>Ա չ. ըսբ'անել, Լհ. ըսբ'անէլու
վախիլ>Ա չ. վախնալ, Լհ. վախնալու
տեսանել>Ա չ. դէսնալ, Լհ. դէսնէլու
փլանիլ>Ա չ. փլել, Լհ. բ'ըլէլու

քնել>Մչ. քնել, քնանալ
օծանել>Մչ. օձել։

ՋԱՐՏՈՒՂԻ, ԱՆԿԱՆՈՆ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՎԵԴԻԱՑԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Թողնելով այն բայերի սովորական վերջավորութիւնները, որ արդէն տեսանք չորս յօրդորութեանց կանոնաւոր խոնարհման մէջ, ացնենք քննելու միայն կեսները։

Բերել բայի կատարյալը գրաբարի վրայից է. առաջին չորս ձևերը՝ բ՛իրա, բ՛իրիր, իր՛իր, բ՛իրունք ներկայացնում են գրբ. բերի, բերեր, երեր, բերաք ձևերը, եթե բ՛իրիր լիներ աշխարհաբարի բերիր ձևից, պիտի տար *բիրէր, որ չկա, եզ. գ դեմքի մեջ ունենք գրաբարի ե նախահավելվածը, հոդն. ա բ՛իրուեք ձևը եթե աշխարհաբար բերիք ձևից լիներ, պիտի տար բ՛իրեք, որ չկա, նա ներկայացնում է գրբ. բերաք ձևը, որի մեջ ավելացել է նոր լեզվի մուծած ոնզականը։ Այս երեւույթները միանգամ ընդմիշտ կրկնվում են մյուս գարտուղի բայերում։

Ասել բայը իր ացա, ացիր, ացուեք և այլ ձևերով ալնքան տարօրինակ է, որ պիտի կարծեինք, թե մի նորաձև *ացել բայի հետ գործ ունենք, եթե չլիներին միաժամանակ նրա շարունակութեան մեջ ասուց, ասօ են ձևերը։ Առաջին ձևը (ացա), նեկայացնում է գրբ. ասացի ձևը, նախ իբր եռավանկ՝ կրճատվել է միջին ա ձայնավորը և դարձել *ասցի, որի վերջածայն ի ձայնավորը ըստ օրինի դարձել է ա և իբրև շատ գործածական բառ՝ կորցրել է ս բաղաձայնը, որ հարակից ց-ին մօտիկ հնչում ուներ։ Նմանապես գրբ. ասացեր ավել է *ասցեր, *ասցիր, ացիր, որ ի ձայնավորը նեկայացուցիչն է գրբ. ե-ի. եթե աշխարհաբար ասացիր ձևից լիներ՝ պիտի տար ացեր։ Նմանապես ասուց գրբ. ասաց ձևից է՝ ա>ու սովորական ձայնափոխութեամբ.— ըսաւ, ասաւ ձևերը չեն մտած բարբառիս մեջ։

Առնել բայի մեջ առա, առիր շարունակութիւնն են գրբ. առի, առեր ձևերի, առի գառնում է առա, ուչ թե աշխարհաբար առայ ձևից, որ պիտի տար *առօ, այլ գրբ. առի ձևից, ըստ որում վերջածայն ի՝ անխախտ օրինքով գառնում է ա։ Սակայն եզ. գ դեմքի մեջ չէ պահված գրբ. էառ ձևը, այլ գալիս է աշխ. առաւ, որ ըստ օրինի գարձել է առուվ։— Զարմանալի է հրամ. առ>օն իր անսովոր ձայնափոխութեամբ, որ ցույց է տալիս, թե միավանկ

բառերի մեջ ա գառնում է օ՝ ո-ից առաջ։ Բայց այս տպացուցելու համար ուրիշ ոչ մի օրինակ չկա։

Բանալ բայի մեջ առաջին չորս ձևերը ուղղակի շարունակութիւնն են գրբ. բացի, բացեր, երաց, բացաք ձևերի. իր՛ուց ձևը շարունակում է գրբ. ե նախահավելվածը և ներկայացնում է ա> ու սովորական ձայնափոխութիւնը։ Այսպես նաև հրամայականը։ Մյուս բայերը (ղ՛ըղօ, իլօ, ինգօ) գրաբարի ձևերից չեն, այլ աշխարհաբար գտայ, եկայ, ընկայ ձևերից, որոնց վերջածայն այ տալիս է օ, եթե լիներ գրբ. գտի, եկի, պիտի ունենայինք *ղ՛ըդա, *իլա, որոնք չկան։ Միայն եզ. գ դեմքը (իղ՛օց) գեռ պահում է նախահավելվածը (եգիտ), բայց նրա հետ ունի նաև աշխ. ղ՛ըդուվ, որ է գտաւ։— Զարմանալի է նաև հրմ. ղ՛օց ձևը, որի օ ձայնավորը և ց բաղաձայնը ինձ համար անհեկնելի են։

Իջանել, մտանել և տեսանել բայերի ձևերը աշխարհաբարից են (իջայ, մտայ, տեսա) և ոչ թե գրաբարից (իջի, մտի, տեսի), որոնք պիտի տային *իջ՛ա, *մդա, *դիտա, այսպես և մյուս դեպքերը։ Միայն իմէօղ ձևը (<գրբ. եմուտ) գործածական է գյուղերից մեկում, մդուվ ձևի փոխարեն կամ նրա հետ։ Սրա համապատասխան *իդիս (<եհես) ձևը չկա, այլ միայն դիսուվ<տեսաւ։

Հրամայականի մեջ գրաբարից է մէօղ<մո՛ւտ, բայց աշխարհաբար է իջ՛ի՛<իջ՛ի (գրբ. էջ), իսկ դի՛ս(<տես) ուրիշ բարբառներում էլ կա։

Հրամայական ենդ՛ և ենդ՛ի ձևերից առաջինը գրաբար է (նիստ), երկրորդը աշխարհաբար (նստի, նստիր)։ Գրբ. հրամ. նո՛ւ, ա՛ծ ձևերը չեն պահված։

Անկանոն բայերից առնել>իմել, իմիմ և այլն ներկայացնում են միջ. հայերեն այմել, այմեմ ձևերը, ըստ որում բազմավանկ բառերի անշեշտ այ գառնում է ի։ Ըստ այմ կար. իրա գալիս է միջ. հայերեն այրի=ըրի ձևից, անհայտ է իրէօց ձևը՝ իբր արեց։

Շատ հետաքրքրական են գալ, լալ, տալ, որոնք միավանկից երկվանկի անցնելով՝ գարձել են ուզ՛իլ, ուլիլ, դվիլ, իսկ ներկայի մեջ երեքն էլ հավասարապես ու նախաձայնով՝ ուզ՛ում, ուլում, ուզօմ (գամ, լամ, տամ)։ Որտեղից է այս ու նախաձայնը։

Հայտնի է, որ գամ, լամ, տամ միավանկ բայերը շատ բարբառներում բացառության կազմելով կը մասնիկի տեղ առանում են կու, որ կա նաև Միջերկրի բարբառում (կուգամ, կուլամ, կուտամ)։ Ահա այս ու ձայնավորն է, որ բաժանվելով վերի ձևերից՝

կցվել է արմատին, իբր թե այդ բայերը լինեին կ'ուզամ, կ'ուլամ, կ'ուդամ):

Շատ կանոնավոր է խոնարհման ապագայ մասը.— ուզ'ում, ուզ'ուս, ուզ'ո, ուլում, ուլուս, ուլո են, որոնց մեջ ու ներկայացնում է ա, իսկ օ՝ ներկայացնում է բառավերջի այ:

Կատարյալ իզա ծագում է գրբ. եկի ձևից՝ վերջածայն ի դառնալով ա (և ոչ թե եկայ ձևից, որ պիտի տար իզօ): Հնաքերքերական է իգիք՝ եզ. գ գնմքը, փոխանակ եկն: Տաթևինակ է հրամայական ապգիք ձևը, որ անշուշտ ապիք և եկէք ձևերի խառնուրդից է ձևացած:

Դնել բայի կատարյալ դ'րա ձևը ծագում է աշխ. դրի ձևից (և ոչ թե գրբ. եդի, որ պիտի տար *ի'դա), իսկ եզ. գ իդ'եր ծագում է միջ. հայերեն եդիր ձևից:

Ջարմանալի է երթալ բայի փոխարեն ուդ'իլ, ներկա ուդ'ում և այլն. նախաձայն ու անսովոր է փոխանակ ե. ուստի կարծում եմ, որ այստեղ կա գալ>ուգ'իլ բայի ազդեցությունը: Արդարև «երթալ—գալ և կ'երթամ—կուգամ» այնքան հաճախ միասին են գործածվում, որ մեկի ազդեցությունը մյուսի վրա անսպասելի չէր:

Լալ բայի կար. իյուց ճիշտ գրբ. ելաց ձևի շարունակությունն է, իր ե նախահավելվածով միասին:

Լինիմ>ընինի բայի ներկան ընուում ոչ թե գրբ. և աշխ. լինիմ, այլ միջ. հայերեն լինամ>ընում ձևից է:

Նկատելի է, որ ուտել բայի կատարյալի մեջ չէ պահված գրբ. եկեր ձևը, այլ աշխ. կերաւ>գիրուվ:

Տալ բայի կատարյալի մեջ (դվա) պահված է աշխ. առի և ոչ թե գրբ. եառ, բայց եզ. գ գնմքն է իդեօր, որ է միջ. հայերեն եառուր (=գրբ. եառ):

Սրա նման առնիլ բայի կար. եզ. գ գնմքը բխում է ոչ թե աշխ. տարաւ ձևից, այլ միջ. հայերեն եառար:

Պահպանված բայերի մեջ կարևոր է նկատել կամ բայի անկատար եզ. գ գնմքը, որ ունի երկու ձև. գառ, գիր, առաջինը ճիշտ գրբ. կայր ձևն է, որ ըստ օրինի պիտի տար գար, բայց վերջածայնի սաստկացումով դարձել է գառ. գուտ բարբառային ձևն է գիր:

Ունիմ բայի մեջ շատ հետաքրքրական է գտնել ձևը՝ կը նախամատնիկով: Արդարև հայ լեզվի մեջ երեք բայ միայն կա, որոնք զուրկ են ձեռնել այս նախամատնիկից (գիտեմ, կարեմ, ունիմ): Սրանցից կարեմ Նոր-Նախիջևանի բարբառում դարձել է կը

կռնում, իսկ այս բարբառումն էլ ունիմ բայն է, որ առացել է այս նախամատնիկը— կառարյալ ունցօ են ձևերի մեջ ե ստված է, այնպես որ ունցօ ներկայացնում է ճիշտ աշխարհաբար ունեցայ ձևը (այ>օ):

Ըստ այսմ զարտուղի, անկանոն և պակասավոր բայերի քննությունը հայտնի կերպով ցույց է տալիս, որ Սվեդիայի բարբառը ձևացած է գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար ձևերի խառնուրդից:

13. ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Բարբառների խոնարհման մեջ ամենից ավելի ուշագրավ կետը լծորդությունների փոփոխությունն է:

Լծորդությունների փոփոխությունը, ինչպես վերը տեսանք, նույնիսկ մեսրոպյան շրջանից էր սկսվել: Օրինակ՝ նմանիլ բայը կա նաև նմանել ձևով, այսինքն խոնարհվում է թե Ա և թե Բ լծորդությամբ. ինչպես՝

Մտթ.	է.	24	նմանեսցէ	առն	իմաստնոյ.
»	»	26	»	»	յիմարի.
»	ԺԹ	24	նմանեցաւ	արքայութիւն երկնից	
»	ԻԸ	23	»	»	»
»	Իե	1	նմանեսցի	»	»

Միջին հայերենը, ինչպես և բարբառները ավելի առաջ տարին այս գործը: Մենք դիտենք հատկապես Ա լծ. Բ տիպարի վերածումը ա տիպարին, ջնջելով ան միջամատնիկը. ինչպես՝

ապանանել—ապանել
անիծանել—անիծել
ոտոգանել—ոտոգել:

Լավ տեսնելու համար լծորդությունների փոփոխության պատկերը բարբառներում, օրինակ առնենք Պոլսի բարբառը, ուր ինչպես վերը տեսանք, լծորդությունների փոփոխությունները լինում են 4 ձևերով:

Վերը հիշված բոլոր փոփոխությունները միացնելով՝ կտեսնենք, որ փոփոխությունները լինում են լծորդությունից լծորդություն, տիպարից տիպար և լծորդությունից տիպար, ըստ այսմ էլ գրաբար խոնարհման այս ինչ ձևը անցնում է մի ուրիշ ձև խո-

նաբեման: Օրինակ՝ ամաչել, կաթ. ամաչեցի, դառնում է բարբառում ամըշնալ (*ամաչենալ), կաթ. ամըծծա (*ամըչցա<*ամաչեցա): Այսպիսի դեպքերում ձայնափոխությունները որոնել անհիշա կլինի (օրինակ՝ ասել թե ամաչեցի>ամըծծա բառի մեջ վերջաձայն ի դարձել է ա):

Փոփոխությունների մեծագույն մասը դեպի երրորդ լծորդությունն է, և այն էլ երրորդ լծորդության երկրորդ տիպարը: (Այսպես, վերևում մեջ բերված 28 օրինակներից 23 հատը դարձած է երրորդ լծորդության): Սրա պատճառն այն է, որ

1. Սովորական բայաձևերը վերածվում են անվանական բայի, այսպես՝ պառաւիլ>բառըվնալ, կարօտիլ>կարօտնալ, նույնիսկ քնել>քնանալ (որ քուն «քնած, ի քուն, քնի մեջ» ածականաձևից է կազմված), կանաչիլ>կանաչնալ են:

2. Թե երկրորդ լծորդության ա տիպարի և թե երրորդ լծորդության բ տիպարի կատարյալը վերջանում է ցա, ցար, ցավ... հետևաբար երկուսի էլ անորոշը կարող է նույնանալ: Այսպես ուռիլ բայի կատարյալը լինում է ուռեցա (ինչպես խօսիլ – խօսեցա), և որովհետև կատարյալ մօռցա գալիս է անորոշ մօռ-նալ ձևից, ուստի ուռեցա ևս կարող է ենթադրել ուռե-նալ անորոշը: Այսպես նաև սօրվիլ բայի կատարյալը՝ սօրվեցա, ենթադրել է տվել սօրվենալ ձևը: Այսպես և մյուսները:

Լծորդության փոփոխությունների ամենամեծ արդյունքն այն եղավ, որ Դ լծորդությունը իր երկու տիպարներով միասին անհետացավ լեզվից, ինչ որ անցավ նաև աշխարհաբարին:

Ծանոթ.— Թեև չորրորդ լծորդությունը ջնջված է, բայց Երևանի բարբառում կա ասնուլ տալ «խաղի մեջ տարվել» ձևը, թեև ասնիլ ունում է իր սովորական ձևով:

Բայց բարբառները ավելի առաջ տարին իրենց աշխատանքը: Ծայրահեղ բարբառներից մեկը՝ Ադուլիսի բարբառը՝ գրաբարի ութ տիպար խոնարհումը վերածեց երեք ձևի խոնարհման: Ավելի ծայրահեղ մի բարբառ՝ Մարաղայի բարբառը՝ խոնարհումը վերածել է երկու ձևի: Վերջապես մեր ամենից ծայրահեղ բարբառը՝ Սվիդիայի բարբառը բոլոր չորս լծորդությունները վերածել է մեկի: Այսպես՝

կարդալ>կարդիլ	լողալ>լօղիլ
մտրալ>մտրիլ	խաղալ>խաղիլ
ցրտանալ>ցրտանիլ	ծնիլ>ծնանիլ (անասնոց)

մեռնիլ>մռնիլ	հազալ>հազդիլ
գնալ>գընիլ	մռանալ>մառնիլ
տալ>դիլ	
դալ>ուդ'իլ	
լալ>լալիլ	

Բարբառների ազդեցությամբ այս փոփոխությունների մի մասը մտել է կամ մտնում է նաև գրական լեզվի մեջ: Օրինակի համար, վիպասան Սիրասի «Զրված օրինք» աշխատության մեջ գտնում եմ հետևյալ ձևերը.

ազել—ազենալ,	կար. ազեց—ազեցաւ (Սիրաս, Զր. օր. 454 ազեցավ կշտամբել Նրան)	
որոխել—որոխալ,	դեր. որոխող—որոխացող (Սիրաս, Զր. օր. 129)	
դեղնել—դեղինալ	»	դեղնող—դեղնացող » » 275
ոստոստալ—ոստոստալ	դր. ոստոստալով անցնում էին (անդ 530)	
երևալ—երևնալ	սեռ. երևնալու համար (անդ 530):	

Լծորդության փոփոխությունը երբեմն էլ երկդիմության առաջքը առնելու կամ էվֆեմիզմի համար է. օրինակ՝

բանալ բայը Երևանի բարբառում դարձել է բաց անել, որովհետև ներկայի մեջ բանում եմ, անկ. բանում էի, պիտի շփոթվեր բանել «աշխատել» բայի հետ:

Կլանել (Գլ. կլլել) դարձել է Երևանի բարբառում կուլ տալ, որովհետև հրամայականը առեղծում է անպատշաճ մի ձև: Գոլսի բարբառում հրմ. կլլի՛ չունի այդ անհարմարությունը, ուստի ինում է, նույնիսկ Երևանի մոտիկ մի գյուղում (Ախուռա) գործ է ածվում ղ'լնի (փխ. կուլ տալ), որի հրմ. լինում է ղ'լի,

Բ լծորդությունից Ա լծորդության, այն էլ բ տիպարից ա տիպար անցնելու մի օրինակ գտնում եմ Դեմիրճյանի Վարդանանք վեպի մեջ (Երևան 1947 հա. Ա 216), ճանապարհը հատնից, փխ. հատաւ:

Միայն հայերենի լծորդությունները չեն, որ այսպես փոփոխության են ենթարկված, նույն ճակատագիրն ունին նաև ֆրանսերենի լծորդությունները, որոնք հայերենի նման նույնպես չորս են: Ըստ Ակադեմիայի քերականության (Gram. de l'acad. fr. 1932, էջ 100) առաջին լծորդությունը (er) ամենահարուստն է և այսօր

ֆրանսերենի միակ կենդանի լծորդությունը, լեզվի ծագման առաջին օրից նա շարունակ աճել է և աճում է: Ամեն նոր բայ նրա վրա է շինվում: Երկրորդը (ir) վաղուց է, որ դադարել է նոր աճումներ առանալուց, երկու դար է, որ այդ լծորդության հետևող բայերի թիվը կանգնած է: Դ և Դ լծորդության բայերը դրեթե բոլորը լատինական ծագում ունեն. շարունակ աղքատանում են և նրանց հետևող բայերի մի մասն անցել է Բ լծորդության, մի մասն էլ դարձել է պակասավոր:

Որովհետև նոր լեզվի մեջ խոնարհման հիմքը կազմում է սոորադասականը, որ դրաբարի սահմանականն է, մենք էլ սկսում ենք մեր քննութիւնը այստեղից:

Դրաբարի սահմ. ներկան ամենից ավելի հավատարիմ կերպով պահված է Նոր-Ջուղայի բարբառում. այսպես՝ Ա լծ. ա տիպարում:

Դրաբ.	սիրեմ	Նոր-Ջղ.	սիրեմ
	սիրես		սիրես
	սիրէ		սիրի
	սիրեմք		սիրենք
	սիրէք		սիրէք
	սիրեն		սիրեն:

Փոխված է միայն հգ. ա դեմքի մեջ մք>նք, որ արդեն հայտնի է մեզ և եզ. գ դեմքի վերջավորութիւնը բաց ձայնավոր է>ի: Մնում է անփոփոխ ե և է ձայնավորների դանագանութիւնը ենացյալ հինգ դեմքի մեջ:

Նոր-Ջուղայի հետ համարյա նույն է վանի բարբառը, ուր ավելանում է միմիայն ք բաղաձայնի փոփոխությունը՝ հգ. ա և բ դեմքերում: Ահա այս երկուսի համեմատական պատկերը.

Նոր-Ջղ.	սիրեմ	Վն.	սիրեմ
	սիրես		սիրես
	սիրի		սիրի
	սիրենք		սիրենք
	սիրէք		սիրէք
	սիրեն		սիրեն:

Իսկ եթե նկատի չառնենք ե ձայնավորի հնչումը իբր է, բոլոր բարբառներից ավելի հավատարիմ են և դրաբարի ճիշտ պատկերն են ներկայացնում Կարնո, Սեբաստիայի և Գոլոս բարբառները, հետևյալ ձևով.

Դրբ.	սիրեմ	Կր. Գլ. Սեբ.	սիրէմ
	սիրես		սիրէս
	սիրէ		սիրէ
	սիրեմք		սիրէնք
	սիրէք		սիրէք
	սիրեն		սիրէն:

Սրանց մեջ անաղարտ պահված է նախնիկ եզ. գ դեմքի վերջավորութիւնը, որ Նոր-Ջուղայի և վանի բարբառներում դարձել է ի:

Դրեթե նույն պատկերն է ներկայացնում Երևանի բարբառը, որ ունի միայն ե և է ձայնավորների զանազանութիւնը չի պահում, այլև եզ. գ դեմքում Նոր-Ջուղայի և վանի բարբառների նման դարձնում է ի. ինչպես՝

Դրբ.	սիրեմ	Երև.	սիրէմ
	սիրես		սիրէս
	սիրէ		սիրի
	սիրեմք		սիրէնք
	սիրէք		սիրէք
	սիրեն		սիրէն:

Մնացյալ բարբառները ձգտում են հետզհետե վերջավորութեանց ե ձայնավորը դարձնել ի: Առաջին քայլը առնում է Շամախիի բարբառը, որ այն բոլոր դեպքերում, ուր դրաբարի ե ձայնավորը դնելում է ռնգականից առաջ (մ կամ ն), դարձնում է ու: Մյուս բաղաձայնների մոտ (ս, ք) ե մնում է է. իսկ բաց վանկում է դառնում է դարձյալ ի. այսպես՝

Դրբ.	սիրեմ	Շմ.	սիրում
	սիրես		սիրէս
	սիրէ		սիրի
	սիրեմք		սիրունք
	սիրէք		սիրէք
	սիրեն		սիրուն:

Երկրորդ քայլը առնում է Եվդոկիայի բարբառը, ուր ե դառնում է արդեն ի՝ միմիայն եզ. և հգ. ա դեմքերում, որոնց մեջ ե

ձայնավորը գտնվում է ընդականից առաջ։ Սակայն դեռ հգ. գ դեմքը, թեև նույնպես ունի ընգականի մոտ ե, բայց ազատ է մնում։ Այսպես նաև Մարքերդի բարբառը՝ որի տարբերությունը եվդոկիայի բարբառից այն է, որ փոփոխություն է ք ձայնը և եզ. գ դեմքի է ձայնավորը վերածում է ա։ Հգ. գ դեմքի մնջ է-ի փոփոխությունը կատարում են Ջկնի և Ռոտոսթոյի բարբառները և այսպիսով և ձայնավորը ամեն տեղ, ուր հանդիպում է ընգականի մոտ, դառնում է ի. այսպես՝

Գրբ.	սիրեմ	Եւդ.	սիրիմ	Մրբ.	սիրիմ	Ռ., Ջկն.	սիրիմ
	սիրես		սիրէս		սիրէս		սիրէս
	սիրէ		սիրէ		սիրա		սիրէ
	սիրեմք		սիրինք		սիրինք,		սիրինք
	սիրէք		սիրէք		սիրէք,		սիրէք
	սիրէն		սիրէն		սիրէն		սիրին։

Այս վերջին հանգրվանի վրա է գտնվում Ասլանբեգի բարբառը, որի տարբերությունը Ռոտոսթոյի և Ջկնի բարբառներից այն է, որ ոչ-ընգական բազաձայնների մոտ գտնված է ձայնավորը դարձնում է ի՝

Ասլ.	սիրիմ	սիրինք
	սիրէ՝ս	սիրէ՝ք
	սիրէ՝	սիրին։

Երրորդ քայլը առնում է Տիգրանակերտի բարբառը, որ եզ. բ դեմքի մնջ էլ ե ձայնավորը դարձնում է ի։ Այսպես նաև Արդվինը, իսկ Մարաղայի բարբառը, որ սակայն ճանաչելով ձայնավորների ներդաշնակության օրենքը, եզ. գ դեմքի բաց ձայնավորն էլ դարձնում է ի, ի՝ կամ ը։ Այսպես՝

Տիգ.	սիրիմ		Արգ. Մրգ.	էրիմ
	սիրիս	խօսիս		էրիս
	սիրէ			էրի
	սիրինք			սիրինք,
	սիրէք			սիրէք,
	սիրին	անցնին		սիրին

Եվդոկիայի և Տիգրանակերտի միջին աստիճանի վրա է կանգնած Մալաթիայի բարբառը, որ եզ. բ դեմքում ունի իս, բայց հգ. գ դեմքը դեռ ունի էն. ինչպես՝

Մլթ.	սիրիմ	սիրինք
	սիրիս	սիրէք
	սիրէ	սիրէն։

Տիգրանակերտի հետ նույն է Համշենի բարբառը, որ տարբերվում է նրանից միմիայն նրանով, որ ը-ից առաջ ընգական չի ընդունում, այսպիսով հգ. ա դեմքի ինք վերջավորությունը դառնում է իք, որով մի պատճառ ևս ավելանում է հգ. բ դեմքի էք վերջավորությունը անփոփոխ պահելու, այսպես՝

Համշ.	սիրիմ	սիրիք
	սիրիս	սիրէք
	սիրէ	սիրին։

Այս քայլը առնում են Տրապիզոնի, Թրեբիսոնի, Ղրիմի, Նոր-Նախիջևանի և Սուչավայի բարբառները, որոնք հգ. բ դեմքի էք վերջավորությունն էլ դարձնում են իք և միայն եզ. գ դեմքի բաց վանկի ձայնավորը (է), որ դեռ պահում է գրաբարի երանգը։ Այսպես՝

սիրիմ	սիրինք
սիրիս	սիրիք
սիրէ	սիրին։

Բայց այս վերջին ձայնավորն էլ փոխում են մեր ծայրահեղ բարբառներից Ոզմի, Ղարաբաղ, Ագուլիս և Մեղրի, որով ներկայի բոլոր ձայնավորները դառնում են վերջապես ի։ Այսպես՝

Գրաբ.	Ղրբ.	Ագլ.	Ոզմ.
սիրեմ	սիրիմ	թակիմ	ուզիմ
սիրես	սիրիս	թակիս	ուզիս
սիրէ	սիրի	թակի	ուզի
սիրեմք	սիրինք՛	թակինք՛	ուզինք
սիրէք	սիրիք՛	թակիք՛	ուզիք
սիրեն	սիրին	թակին	ուզին։

Նկատելի է որ 1) Ղարաբաղի բարբառը հգ. ա և բ դեմքերի մնջ ը վերածել է ք, որ դառնում ենք նաև Ագուլիսի բարբառում. 2) Ագուլիսի բարբառը Համշենի բարբառի նման հգ. ա և բ դեմքերը հավասարապես վերածել է ք։

Այսպիսով արեմն դրաբարի առաջին լծորդության ա տիպարի ներկան, որի ձայնական նշանն է ի, վերջապես վերածվում է երկրորդ լծորդության: Բայց այդ վերածումը կատարված է ոչ թե երկու լծորդությանց միացման հատուկ նպատակով (ինչ որ եղավ Բ լծորդությունից Ա լծորդության անցման համար), այլ սկսելով անգալին բաղաձայնների ձայնական առնչությամբ և վերջացնելով նմանողության օրենքով:

Առաջին լծորդության երկրորդ տիպարի ներկան բոլոր բարբառների մեջ էլ նույն ձևն ունի՝ ինչ որ առաջին տիպարը, որից տարբերվում է միայն ն կամ ան միջամատնիկով, ինչպես՝ Պլ. սիրեմ—բաքեմ: Ուստի ավելորդ ենք համարում կրկնել այն բոլորը, ինչ որ ասել ենք ա տիպարի համար:

Երկրորդ լծորդության ա և բ տիպարների ներկան կը ճյուղի բարբառներում նույն է դրաբարի հետ, ինչպես՝ Պլ. խօսիմ, հաքնիմ, Նախ. հարփիմ, հաքնիմ ևն: Մոկաց բարբառում ի դառնում է է. ինչպես՝ խօսէմ<խօսիմ, առնէմ<առնիմ ևն: Իսկ Ալմ ճյուղի բարբառներում Բ լծորդությունը քանդված և իր երկու տիպարներով անցած է Ա լծորդության: Հետևաբար, ուր որ Ա լծորդության ներկան պահում է դրաբարի և ձայնավորն անփոփոխ, Բ լծորդությունն էլ առնում է ե. ինչպես՝ Զղ. խազ'ենմ<դրբ. ազանիմ, երև. խօսեմ<դրբ. խօսիմ: Իսկ ուր որ Ա լծորդության ներկայի է ձայնավորը դառնում է ի, Բ լծորդության ի ձայնավորն էլ անփոփոխ մնում է ի. ինչպես՝ Մրդ. խարփիմ «հարբևամ», Ագլ. մոնիմ «մեռանիմ»:

Երրորդ լծորդության ա և բ տիպարների ներկան բոլոր բարբառների մեջ էլ դրաբարի ա ձայնավորը պահում է: Հգ. բ դեմքի մեջ այդ դառնում է բնականաբար ա. իսկ Զեյթուղի բարբառում լինում է թէ ա և թէ է. ինչպես՝ խազաք կամ խազէք «հազաք», մոռանէք «մոռանաք»: Իսկ այն բարբառների մեջ, ուր ա դառնում է օ, այստեղ էլ դառնում ենք օ կամ ևօ, ինչպես՝ Մրշ. գարթօմ «կարդամ», Չհ. գաշդ'օմ «կերթամ», գազ'գ'օմ «կդամ», Զթ. գուդօս «կտաս» ևն: Նաև Ագլ. խզգօմ «հագամ», ըրվէօմ «երևամ» ևն:

Անկատարը բարբառների մեջ ունի հետաքրքիր նորութիւններ: Այստեղ կարևոր կետը այն է, որ է և ի ձայնավորները միմյանց հանդիպելով՝ առեղծում են հորանջ, ինչ որ սովորելի չէ շատ բարբառների համար: Այն բարբառները, որոնք հորանջ կարողանում են ընդունել, դրաբարի անկատարի ձևն էլ անփոփոխ պահում են:

Այս կողմից բոլոր բարբառներից գերազանցում է Մալաթիայի բարբառը, որ արհամարհելով նույնիսկ ձայնավորների նմանողության օրենքը, ամբողջովին պահում է դրաբարի անկատարի խոնարհումը: Այսպես բերեմ բայի առոր. անկատարը լինում է՝

փերէի	փերէաք
փերէիր	փերէիք
փերէր	փերէին:

Սրանից մի քայլ ավելի առաջ են անցնում Այնթի, Սեբաստիայի, Եվդոկիայի, Ասլանբեգի և Ռոտոսթոյի բարբառները, որոնք հգ. ա դեմքի մեջ ավելացնում են նաև ն անգականը: Այս անգականը ըստ իս կարելի է բացատրել միայն կամ 1) ներկայի հգ. ա դեմքի և կամ 2) մենք դերանվան նմանողությամբ: Ներկա հգ. ա դեմքը լինում էր սիրենք, ուստի անկատարն էլ սիրեաք ասելու տեղ դարձավ սիրեանք: Նույնպես մենք դերանունը, որ բնականաբար պիտի կցվեր շարունակ անկ. հգ. ա դեմքին, պիտի ազդեր իր ընդգանով:

Ահա հիշյալ բարբառների ստոր. անկատարի խոնարհման ամբողջական պատկերը.

սիրէի	սիրէանք
սիրէիր	սիրէիք
սիրէր	սիրէին:

Այնուհետև գալիս է ձայնավորների միակերպության օրենքը, որով սիրեանք դառնում է սիրեինք: Անկատարի խոնարհումը լինում է վերջապես՝

սիրէի	սիրէինք
սիրէիր	սիրէիք
սիրէր	սիրէին:

Եթե չլիներ մեր ձեռքին նախորդ ատաճանը (Սեբաստիա խոնարհման ձևը), մենք իրավունք պիտի ունենայինք կարծելու, թե հգ. ա դեմքի մեջ ն անգականը ավելացվել է միակերպության օրենքով առաջացած շփոթմունքից խուսափելու համար, ըստ որում հգ. ա սիրէաք>սիրեիք և հգ. բ սիրեիք իրար հետ նույն պիտի դուրս գային: Այսպես են ընդունում բոլոր քերականները, որոնց գլուխն է կանգնած Այտն. 78: Սակայն Սեբ. սիրեանք ձևը չնջում է այս կարծիքը և հաստատում է, որ անգականի հավելումը

Ներկայի հզ. ա դեմքի կամ մենք դերանվան նմանողությամբ է առաջացած:

Ռոնարմանն այս վերջին ձևն ունեն Գոլսի, Զրխմի, Նոր-Նախիջևանի, Շապին-Գարահիսարի, Կարնո, Թրիլիսիի բարբառները են:

Կարնո և Տրապիզոնի բարբառները շեղվում են սրանցից միմիայն հզ. գ դեմքում: Այստեղ Կարնո բարբառը երբեմն ի ձայնավորը դարձնում է ի, ինչպես՝ ուներ «ուներ», ըլներ «ընկներ»: Այս երևույթը կրավորականի մեջ միշտ է տեղի ունենում:

Տրապիզոնի բարբառը նույնպես հզ. գ դեմքում ի դարձնում է ի. ինչպես՝ ուղիր «ուզեր», նալիր «նալեր»:

Հորանջին հակակիր բարբառները այնտեղ, ուր անկատարի ի ձայնավորը հանդիպում է ի ձայնավորին, ջնջում են: Այսպես են առաջին հերթին Երևանի և Նոր-Ջուղայի բարբառները, որոնց մեջ եռար. անկատարը խոնարհվում է հետևյալ ձևով.

սիրի	*սիրինք*
սիրիր	*սիրիք*
սիրէր	*սիրին:*

Այսպես է նաև վանի բարբառը, որ սակայն ը բաղաձայնն էլ երկու տեղ քամձացնում է հետևյալ ձևով.

Վն.	*ուղի «ուզեի»*	*ուղինք*
	ուղիր	*ուղիք*
	ուղէր	*ուղին:*

Ղարաբաղի բարբառն էլ հետևում է նույն դրության, բայց ոչ միայն քամձացնում է կրկին ը-երը, այլև փոխում է ա ձայնավորի աստիճանը. ինչպես՝

Ղրբ.	*սիրի*	*սիրինք*
	սիրիր	*սիրիք*
	սիրար	*սիրին:*

Այսպես է նաև Շամախիի բարբառը:

Ոզմիի բարբառը հետևում է տարբեր ուղղության և հորանջը ջնջելու համար ջնջում է ոչ թե ի, այլ ի ձայնավորը, այնպես որ այս բարբառում եռար. անցյալը առնում է հետևյալ ձևը.

օղէ	*օղէնք*
օղէր	*օղէք*
օղէր	*օղէն:*

Այստեղ անպատեհությունն այն է, որ եզակի ր և զ դեմքերը վերածվում են նույն ձևին:

Տիգրանակերտի բարբառն էլ նման ոզմիին, ջնջում է անկատարի ի ձայնավորը, բայց կարող է նաև պահել անփոփոխ. ինչպես՝ ուզենք «ուզեցինք»:

*Մշո բարբառի մեջ էլ անկատարի ի ձայնավորը, տեղ տեղ էլ ի ձայնավորը ընկնում է, օրինակ՝ ուզի «ուզեի», գ'ինք<*գ'էինք «գալինք» են: Բայց սրովհետև այս պատճառով նեղկայի եզ. գ դեմքը և անկատարի եզ. ա դեմքը նույն ձևին են հանգում, ուստի իրար հետ չշփոթելու համար անկատարի եզ. ա դեմքի փոխարեն հաղնակին է գործածվում. օրինակ՝ յես կուզենք «ես կուզեի», մըենք կուզենք «մենք կուզեինք»: Մյուսների մեջ այն պարզ զանազանությունը կա, որ նեղկայի ձայնավորն է ի, անկատարինը՝ է. ինչպես՝ ինք «ենք», էնք «էինք», ձէձին «ձէձէին», ձէձէն «ձէձէին», ջ'արդ'ին «ջարդեին» են:*

Հորանջի և ձայնավորների կրկնության մեջ տատանվում է Ասպրախանի բարբառը, որ ընդունում է երկու ձևն էլ: Բացի սրանից՝ անկատարի եզ. ա դեմքի ծայրին դնում է մ բաղաձայնը, որ կատարյալի ծայրին կա և բնականաբար առաջացած է նեղկայի ա դեմքի նմանությամբ: Օրինակ՝

էիմ որ և իմ	
էիր	*իր*
էր	*էր*
էինք	*ինք*
էիք	*իք*
էին	*ին:*

Այսպես նաև ինգնիիմ «ընկնեի», ինգնիինք «ընկնեինք», խաղայիմ «խաղայի», երթայիմ «երթայի», պերեիմ «բերեի» են:

Հետաքրքիր է նաև Սուչավայի բարբառը, որ անկատարի եզ. բ դեմքի ծայրին ավելացնում է ա: Այս բաղաձայնը իհարկե նեղկայի եզ. բ դեմքի նմանությամբ է, ինչպես որ Ասպրախանի անկատարի եզ. ա դեմքի հավելված մ ձայնն էլ նեղկայի առաջին դեմքի նմանությամբ է:

Ահա Սուչավայի անկատարի խոնարհման պատկերը.

Սչ.	*սիրէի*	*սիրէինք*
	սիրէիս	*սիրէիք*
	սիրէր	*սիրէին:*

Բոլորովին տարօրինակ ձևեր են ներկայացնում Համշենի և Հաճինի բարբառները: Համշենում անկատարի եզակին թեև գրաբարի հետ նույն է, բայց եզ. բ դեմքի ծայրին կարելի է դնել նաև դը մասնիկը, իսկ հոգնակի բոլոր դեմքերի ծայրին էլ ը: Օրինակ՝ Համշ.

բ'էրէլի	ուդէլի
բ'էրէլիր	ուդէլիր
բ'էրէլդը	ուդէլդը
բ'էրէր	ուդէր
բ'էրա՛քը	ուդա՛քը
բ'էրէ՛քը	ուդէ՛քը
բ'էրէ՛նը	ուդէ՛նը:

Որտեղից է առաջացել այս ը հավելումը հոգնակիի մեջ: Իմ բացատրությունը հետևյալն է.

Ներկալի հոգնակի բ դեմքի վերջավորությունն է համաձայն գրաբարի -էք, անկատարի հոգնակի բ դեմքի վերջավորությունը թեև գրաբարի մեջ էիք ձևն ունի, բայց հորանջի պատճառով ի ձայնավորը սղվելով՝ վերածվում է էք, որով ներկա և անկատար հոգնակի բ դեմքերը նույն ձևն են ստանում: Շփոթությունից խուսափելու համար անկատարի հոգնակի բ դեմքի ծայրին ավելացրել են ը, որ հետո նմանողության օրենքով անցել է նաև հոգնակիի մյուս դեմքերին: Կարծում եմ, որ այս ը ձայնավորն է, որ անցել է նաև եզակի բ դեմքի ծայրին:

Հաճինի բարբառում անկատարը երկու ձև ունի. առաջինը՝ պարզ ձև, որ առաջանում է գրաբարի անկատարից, երկրորդը՝ բարդ ձև, որ կազմվում է նույնի վրա ավելացնելով իդի մասնիկը: Ահա իբրև օրինակ երթամ և գամ բայերի կրկին անկատարները:

առաջին ձև

Հճ.	գաշդի	գագ'դի
	գաշդիլ	գագ'դիլ
	գաշդէլ	գագ'դէլ
	գաշդինք	գագ'դինք
	գաշդիք	գագ'դիք
	գաշդին	գագ'դին

երկրորդ ձև

գաշդի	իդի	գագ'դի	իդի

գաշդիլ իդի	գագ'դիլ իդի
գաշդէլ իդի	գագ'դէլ իդի
գաշդինք իդի	գագ'դինք իդի
գաշդիք իդի	գագ'դիք իդի
գաշդին իդի	գագ'դին իդի:

Այս իդի մասնիկը տաճկերեն անկատարի սովորական մասնիկն է: Տաճկերենում այս մասնիկը ունի երկու ձև՝ idi և ədə. առաջինը կցվում է թեթև ձայնավոր ունեցող բայերի վրա, երկրորդը ծանր ձայնավոր ունեցող բայերի վրա: Այնուհետև նույն մասնիկի վրա կցվում են դեմք ցույց տվող վերջավորությունները՝ հետևյալ ձևով: Օրինակ՝ git-mek «երթալ» և al-maq «առնել» բայերից առնենք՝

gider-idi-m	alər-ədə-m
gider-idi-n	alər-ədə-n
gider-idi	alər-ədə
gider-idi-k	alər ədə-q
gider-idi-niz	alər-ədə-nəz
gider-idi-ler	alər-ədə-lar

Եզ. երրորդ դեմքում վերջավորություն չկա և մասնիկը ներկայանում է իր մաքուր ձևով. Հաճինի բարբառը ընտրել է թեթև բայերի idi ձևը, որովհետև հայերենի անկատարն էլ ունի ի կամ է ձայնավորը, որոնց երկուսն էլ թեթև են տաճկերեն լեզվի ներդաշնակության օրենքի համաձայն:

Լեզվից լեզու մասնիկներ փոխ չեն առնվում. դա հայտնի ճշմարտություն է, բայց թրք. idi մասնիկը, իր անկախ ու ազատ դիրքով՝ մասնիկից ավելի բառիկի ձև ունի: Ուստի հնարավոր է եղել փոխառությունը: Այս մասին ավելի մանրամասն տես Ներածություն, էջ 387 և շար.:

Հաճինի բարբառում իդի մասնիկի ծագումը այսպես որոշելուց հետո, կարելի կլինի մեզ որոշել նաև Համշենի բարբառի մեջ անկատարի եզակի բ դեմքի դը վերջավորությունը, որ ուրիշ բան չպիտի լինի, եթե ոչ տաճկերենի նույն անկատարի մասնիկի ծանր ձևը (ədə, որի կրճատն է də):

Երկրորդ յոթդրության բայերի անկատարը բոլոր բարբառների մեջ էլ առաջինին նման լինելով՝ պետք չունի բացատրության, իսկ երրորդ յոթդրության անկատարը, որ ա և ի ձայնավորների հանդիպելումով ներկայացնում է դարձյալ հորանջի դժվարություն-

նները, ենթարկվում է նույն հակաառգրին, ինչ որ առաջին լծորդության անկատարը: Հորանջ ընդունող բարբառները պահում են ա և ի ձայնավորները, իսկ հորանջ չընդունող բարբառները ջնջում են ա ձայնավորը և պահում ի. Այսպես՝ Մալաթիայի, Կարնո, Ախնի, Սեբաստիայի, Պոլսի, Ղրիմի, Նոր-Նախիջևանի են բարբառները խոնարհում են հետևյալ ձևով.

Մլթ.	Պլ. Ննխ.	Անկ.
էրթալի	մօռնալի	մօռնալի
էրթալիր	մօռնալիր	մօռնալիր
էրթար	մօռնար	մօռնար
էրթալաք	մօռնալինք	մօռնալանք
էրթալիք	մօռնալիք	մօռնալիք
էրթալին	մօռնալին	մօռնալին:

Հորանջ չընդունող բարբառների մեջ ջնջվելով ա ձայնավորը, երրորդ լծորդության անկատարը ստանում է ճիշտ Ա և Բ լծորդության ձևը: Այսպես՝ Նոր-Ջուղայի բարբառով՝ խազալ «հազալ» և մոռանալ բայերից.

խազ-ի	մոռ-անի
խազ-իր	մոռ-անիր
խազ-էր	մոռ-անէր
խազ-ինք	մոռ-անինք
խազ-իք	մոռ-անիք
խազ-ին	մոռ -անին:

Վերջավորությունները նույն են, ինչ որ սիրեմ և ճագնիմ բայերի անկատարի մեջ:

Կեսարիո Զոմախլու գյուղի բարբառը թեև Ա և Բ լծորդությունների անկատարը անփոփոխ պահել է (սիրէի, խօսէի), բայց Գ լծորդության -ալ վերջավորությունը զարմանալի կերպով դարձնում է -էրի, այսպես՝ գողնալ դառնում է գողնէրի, երթալ դառնում է արթէրի, գալ դառնում է գէրի (տես Ալպոյաճեան, Պատմ. Հալ. Կես. Բ 1664):

Կատարյալը ամենից լավ պահպանված ձևն է բարբառներում: Մինչդեռ դրաբարի ապառնին և ստորադասականը բոլորովին ջընջված, սահմանականի ներկան և անկատարը ստորադասականի տեղն անցած և նրանց փոխարեն նորանոր ձևեր են հնարված, կատարյալը իր պաշտոնով և գործածությամբ անփոփոխ, ձևով էլ շատ քիչ

փոփոխված՝ շարունակում է իր գոյությունը թե բարբառների և թե մանավանդ երկու դրական լեզուների մեջ: Այս կողմից իր մրցակիցն է միայն հրամայականը:

Ա լծորդության ա ախպարի վերջավորություններն էին դրաբարի մեջ՝ եցի, եցեր, եաց, եցաք, եցէք, եցին: Արդեն դրաբարի շրջանից հգ. բ դեմքը առացել էր սակայն -եցիք ձևը: Այնպես որ հզ. ա եցի, հգ. բ եցիք և հգ. գ եցին հավասարապես ներկայացնում էին ի ձայնավորը: Միջին դարում սրանց հետևից նաև հզ. բ դեմքը եցեր>եցիր, որով ի ձայնավորի դիրակշռությունը ակընհայտ դարձավ:

Մնում էին միայն հզ. գ եաց, որ եա>ե ամփոփման օրենքով դարձել էր արդեն միջին հայերենում եց, և հգ. ա. եցաք, որ միջին հայերենումն էլ շարունակում էր իր գոյությունը:

Բարբառները պետք գրավեին միմիայն այս երկուսի փոփոխությամբ, հասնելու համար վերջնական կանոնավորության, այն է ձայնավորների միակերպության:

Նախ վերցնենք հգ. ա դեմքը:

Այս կետում ամենից ավելի հավատարիմն են դարձել Մալաթիայի և Համշենի բարբառները, որոնք ինչպես անկատարի մեջ, նույնպես և ապառնի շարունակում են եցաք վերջավորությունը: Օրինակ՝ Համշ. էլաք, գ'ացաք, ծնց'ոք, փախաք, կպուցաք, էկաք գելանք, գնացինք, անցանք ևն:

Երկրորդ աստիճանի վրա են գտնվում Ախնի, Սեբաստիայի, Ամասիոյի և Ռոտոսթոյի բարբառները, որոնք նման անկատարի՝ ապավելով ներկայի հգ. ա դեմքի և կամ մենք բառի ենթականից, նմանողությամբ եցաք վերջավորությունը դարձրին եցանք: Մնում էր կատարել երրորդ քայլը՝ հասնելու համար ձայնավորների միակերպության: Այդ քայլը կատարեցին Երևանի, Պոլսի, Ղրիմի, Նոր-Նախիջևանի և այլ բարբառները, որոնք -եցանք ձևն էլ դարձրին -եցինք:

Կատարյալի հգ. գ դեմքը եց բոնեց զարգացման ուրիշ ուղի: Նախ ասենք, որ Նոր-Ջուղայի բարբառում, միջին հայերենից բոլորովին անկախ կերպով, գրաբարի -եաց դարձավ -եց, համաձայն եա>է ձայնափոխության օրենքին, որ այս բարբառում շատ հաստատուն է: Վանի բարբառն էլ, որ գիտե զանազանել ե, է ձայնավորների երանգը, ունի եց վերջավորությունը, իսկ Երևանի, Պոլսի, Սեբաստիայի, Կարնո և այլ բազմաթիվ բարբառների մեծամասնությունը, որոնց համար ե և է ձայնավորների խտության չկա

պահեցին միջին հայերենի եց ձևը, որով ձայնավորների միակերպութիւան օրենքը ևս ևս հաստատուն: Իսկ ուրիշ բարբառներ ալս եց ձևը դարձրին ից, ինչպես են Թբիլիսիի, Ղրիմի, Նոր-Նախիջևանի, Արդվինի բարբառները: Ահա ալս ասոիճանների համեմատական ցուցակը.

Ջղ.	Մլթ.	Ալն.	Երև. Պլ.
սիրեցի	սիրէցի	սիրեցի	սիրէցի
սիրեցիր	սիրէցիր	սիրեցիր	սիրէցիր
սիրեց	սիրից	սիրեց	սիրեց
սիրեցինք	սիրեցաք	սիրեցանք	սիրեցինք
սիրեցիք	սիրէցիք	սիրեցիք	սիրեցիք
սիրեցին	սիրէցին	սիրեցին	սիրեցին

Տփ. Ննխ.	Ասլ.
սիրէցի	սիրեցի
սիրէցիր	սիրեցիր
սիրից	սիրե՛ց
սիրէցինք	սիրեցանք
սիրէցիք	սիրեցիք
սիրէցին	սիրեցին:

Եգ. գ դեմքի ալս ից ձևը բավական տարածված է բարբառներում: Ալսպես՝ բացի վերոհիշյալ բարբառներից, ունենք՝

Հմշ. ավլից, աշից, թափից, բ'էրից...

Առտ. աշից, փնտռից...

Սակայն ալս ձայնափոխութիւնը (եաց>եց>ից) ոչ թե քերականական, այլ զուտ ձայնաբանական է: Սրան իրը ապացույց կարելի է հիշել հետևյալ երևույթները.—

Վանի բարբառը կատարյալի նույնիսկ միջին ձայնավորը դարձնում է ի. Մոկաց բարբառը՝ որ բառավերջի ի ձայնավորը դարձնում է շեշտյալ ը՛ (օր. տարի>տարը՛, սեռ. վարդի>վարդը՛), նույնպես է վարվում նաև կատարյալի համար.— իսկ Ոզմիի բարբառը, որ ի ձայնը դարձնում է էյ, կատարյալի վերջավորութիւնները էլ դարձնում է էյ: Ահա ալս երեք բարբառների պատկերը.—

Վն.	Մկ. բռնըցը	Ոզմի օւզէցէլ
ուզեցի		օւզէցէլը
ուզիցիր		օւզից
ուզեց		օւզէցէլնք
ուզիցինքլ		

ուզիցիքլ		օւզէցէյք
ուզիցին	բռնըցըն	օւզէցէյն:

Ղարաբաղի բարբառն էլ, որ վերջավանկի ի ձայնավորը դարձնում է ե (ինչպես՝ քիր>քէթ), կատարյալի վերջավորութիւններն էլ վերածում է ե, ինչպես՝

Ղբբ.	սիրէցե	սիրէցենք
	սիրէցեր	սիրէցէք
	սիրից	սիրէցեն

Ալսաեղ եգ. ր և հոգ. ր դեմքը ունեն ե ձայնավորը, որ ալնպես նման է գրաբարի -եցեր, -եցեք վերջավորութիւնց ե, ե ձայնավորի հետ: Բայց ալս նմանութիւնը պատահական է և երկրորդը առաջինի շարունակութիւնը չէ: Գրաբարի վերջավորութիւնները Ղարաբաղի բարբառումն էլ դարձել են նախ եցի, եցիր, եց, եցինք, եցիք, եցին, ինչպես բարբառների մեծամասնութիւն մեջ, հետո Ղարաբաղի բարբառի ձայնական օրենքներով ի դարձել է ե, որով նախկին հնչումը ձևապես վերանորոգվել է:

Առաջին լծորդութիւն ա ելիպարի զարդացման պատկերը իմանալուց հետո, շատ հեշտ է ըմբռնել նաև Բ լծորդութիւն և Գ լծորդութիւն երկու տիպարների զարդացման պատկերը, որ զրաբարից համարյա ոչնչով չի տարբերվում: Ահա մի քանի օրինակ.

Պլ. Ննխ.	Պլ. Ննխ. Ջղ.	Ն. Ջղ.
նալէցա	հաքա	խագ՛ա
նալէցար	հաքար	խագ՛ար
նալէցավ	հաքավ	խագ՛ավ
նալէցանք	հաքանք	խագ՛անք
նալէցաք	հաքաք	խագ՛աք
նալէցան	հաքան	խագ՛ան

Ջղ. Պլ. Ննխ.	Ջղ. Պլ. Ննխ.
խաղացի	զարմացա
խաղացիր	զարմացար
խաղաց	զարմացավ
խաղացինք	զարմացանք
խաղացիք	զարմացաք
խաղացին	զարմացան

երևանի բարբառը Բ յոթրդութ֊յան չի ճանաչում և վերածել է Ա. յոթրդութ֊յան։

Ուրիշ մի քանի բարբառներ և հատկապես Ուրմիա, Խոյ, Թավրիզ և Մարաղա պահում են վերջին ձևերը, միայն եզակի ա դեմքի ծայրին ավելացնում են մ բաղաձայնը, որ նեղկալի առաջին դեմքի նմանութ֊յամբ է առաջացած։ Այսպես՝ Մարաղայի բարբառով ունենք՝

խասամ	խաղացըմ	խաստացամ
խասար	խաղացիր	խաստացար
խասավ	խաղաց	խաստացավ
խասանք	խաղացընք	խաստացանք
խասաք	խաղացըք	խաստացաք
խասան	խաղացըն	խաստացան։

Այս կարգի օրինակներ են նաև Թավրիզի բարբառով՝ ասամ «ասացի», պացամ «բացի», տըվամ «տվի», տեսամ «տեսա», կնացիմ «գնացի», Աստապատի բարբառով՝ տեսամ «տեսա», գնացիմ, «գնացի», յեկամ «եկա», Աստրախանի բարբառով՝ ասամ կամ ասացիմ «ասացի», եկամ «եկա», ավամ «տվի», քցամ «գցա», կնացիմ «գնացի», պէրամ «բերի», կանչամ «կանչեցի», սիրեցիմ «սիրեցի», բօղամ «թողեցի», հանամ «հանեցի», տիրամ «դրի», առամ «առի»։

Մենք տեսանք, որ Աստրախանի բարբառը անկատարի եզ. ա դեմքի վերջումն էլ ավելացնում է նույն մ վերջավորութ֊յանը։ Որովհետև մյուս բարբառները միայն կատարյալի վրա են դնում այդ հավելվածը և անկատարի վրա չեն դնում, իսկ Աստրախանի բարբառը դնում է երկու դեպքումն էլ, ուստի հետևում է, որ հավելվածը նախ եղել է կատարյալի վրա, որից անցել է անկատարին։

Բայց Մարաղայի բարբառը մի ուրիշ նշանավոր երևույթ էլ ունի, որ հակառակ է մյուս բարբառների մեջ սկսած, տարածված և գրական լեզվի մեջ անդամ ընդունված գրութ֊յան։ Այն է՝ փոխանակ ընդարձակելու Ա. յոթրդութ֊յան առաջին տիպարի խոնարհման ձևը, ընդհակառակը, տարածել է Ա. և Բ յոթրդութ֊յանց Բ տիպարի ձևը (պադանեմ — պադի, ուսանիմ—ուսալ, ապանիմ—ապալ, նստիմ—նստալ), ի վնաս Ա.—Բ յոթրդութ֊յանց առաջին տիպարի։ Այսպես՝ փոխանակ խոնարհելու ազատեմ—ազատեցի, հարրիմ—հարրեցայ, Մարաղայի բարբառը խոնարհում է՝

ազատըմ	խարթիամ
ազատիր	խարթիար
ազատից	խարթիավ
ազատընք	խարթիանք
ազատըք	խարթիաք
ազատըն	խարթիան։

Նույն երևույթը տեղի է ունեցել նաև Ագուլիսի բարբառում և ավելի զարգացած ձևով։ Այստեղ առաջին դեմքը մ հավելվածը առանալուց հետո, նրան է հետևել նաև երկրորդ դեմքը և առացել է ս հավելվածը։ Միևնույն ժամանակ կատարյալի ց ձայնը զարմանալի կերպով դարձել է ն (ինչպես է նաև հրամայականի մեջ), այնպես որ կատարյալի համար առացվել են հետևյալ բոլորովին անճանաչելի ձևերը։

թնկամ	մռնհամ	խզգնհամ
թնկաս	մռնհաս	խզգնհաս
—	—	—
թնկաք	մռնհաք	խզգնհաք
թնկաք	մռնհաք	խզգնհաք
թնկան	մռնհան	խզգնհան։

Եզակի գ դեմքը պակասում է և փոխանակվում է բաղադրյալ կատարյալով, որ կտեսնենք հետո։ Հոգնակի ա և բ դեմքերը նույնացած են, որովհետև Ագուլիսի բարբառը ևր ձայնախումբը չի սիրում։

Այսպիսով առացվում է խոնարհման մի ձև, որ միայն ներքին ձայնավորով է զանազանվում, այսպես՝ համմ.

Սառ. ներկ.	կատարյալ
թնկիմ	թնկամ
թնկիս	թնկաս
թնկիք	թնկաք
թնկին	թնկան։

Ինչպես հայտնի է, եվրոպական նոր լեզուներից շատերը բայական ժամանակների միջից կատարյալը ջնջելու վրա են։ Օրինակի համար ֆրանսերեն կատարյալի j'aimai, tu aimas, il aima, nous aimâmes, vous aimâtes, ils aimèrent ձևերը միայն հին գրական լեզվի մեջ գոյութ֊յուն ունեն և քերականութ֊յան մեջ են

սովորում, իսկ ժողովուրդը չի ճանաչում գրանք և նրանց փոխարեն գործածում է հարակատարը. ինչպես՝ j'ai aimé, tu as aimé *ևն: Այսպիսով, ուրեմն, հարակատարը իր բուն նշանակութիւնը կորցրած և անցած է կատարյալի տեղը:*

Այս միևնույն երևոյթը տեղի է ունեցել նաև Սուչավալի բարբառի մեջ, անշուշտ ազդեցութիւնամբ գերմաներենի: Այս բարբառը կատարյալի ժամանակը (սիրեցի ևն) գործածութիւնից դցել և նրա տեղ դրել է հարակատարը՝ նույն իմաստով. ինչպես՝ սիրիլ իմ, սիրիլ իս *ևն:*

Սուչավալի բարբառի ներկայացրած այս հետաքրքիր նորութիւնը գոյութիւն ունի նաև Ագուլիսի և Մեղրու բարբառներում, ուր հարակատարի կրկնակ ձևերից մեկը հատկացված է կատարյալին, իսկ մյուս ձևը պահված է հարակատարի համար: Այսպես՝

Մդր.	անց. կատ.	հրկտր.
տըվալ իմ	*տըվալ ըք*	*տըված իմ*
տըվալ ըս	*տըվալ ըք*	*տըված ըս*
տըվալ ա	*տըվալ ըն*	*տըված ա ևն:*

Որևէ կապ Սուչավալի բարբառի և Ագուլիսի ու Մեղրու բարբառների միջև անհնարին է երևակայել: Ավելորդ է մտածել նաև շրջակա որևէ լեզվի ազդեցութիւնն մասին, որովհետև թե՛ թուրքերենի և թե պարսկերենի մեջ կատարյալը այնպես կանոնավոր, պարզ ու մաքուր ձև ունի, որ կարիք չի զգացվել հարակատարի օգնութիւնն: Ուստի երևոյթը բացատրում եմ այն դժվարութիւնամբ, որի մեջ ընկել են Ագուլիսի և Մեղրու բարբառները, ինքնան՝ որ կարիք են զգացել ջնջելու կատարյալի եղակի գ դեմքը և նրա տեղ դրել են բազադրյալ ձևը:

Հրամայականի այն բազմաթիվ ձևերից, որ ներկայացնում էր գրաբարը դանադան լծորդութիւնց մեջ, բարբառները ընդհանրացման օրենքով ընդունեցին և տարածեցին միայն մի քանիսը: Եզակի հրամայականի մեջ.

1. բայարմատը, ինչպես՝ պահ, թնւք, թող (այս ձևը շատ տարածված չէ), առաջանում է գրաբարի Ա լծորդութիւնն բ տիպարի կամ Դ լծորդութիւնն ա տիպարի նմանութիւնամբ (հան, թող):

2. -է՛, որ առաջանում է գրաբարի Ա լծ. ա տիպարի -եա՛ վերջավորութիւնից՝ եա>է ամփոփման համաձայն: Սրանն է հետևում նաև Բ լծորդութիւնն հրամայականը (խօսեա՛ց՝ նախ գրաձած խօսեա՛, որից խօսէ՛):

3. -ա, որ առաջանում է գրաբարի Դ լծորդութիւնն ա տիպարի հրամայականի -ա ձևից (ադա՛, իմա՛ ևն):

4. -ի՛ր, ունի երկու ծագում. կը ճյուղի բարբառներում առաջանում է Բ լծորդութիւնն բ տիպարի հրամայականի -ի՛ր ձևից (ագիր>հագիր), իսկ Ում ճյուղի բարբառներում նաև Բ լծորդութիւնն ա տիպարի արդելականի -ի՛ր վերջավորութիւնից (մի խօսիր): Այնուհետև բ վերջածանը ընկնելով՝ ի՛ր դարձել է ի՛:

5. -ացի՛ր, -ցի՛ր, որոնք առաջանում են գրաբարի Գ լծորդութիւնն բ տիպարի -ացի՛ր և Դ լծորդութիւնն բ տիպարի -ցի՛ր վերջավորութիւնից: Նախորդի նման այստեղ էլ բ վերջածանը ընկնելով՝ առաջացան -ացի, -ցի՛ ձևերը:

Հոգնակի հրամայականի մեջ՝

1. -եցէք՝ առաջանում է գրաբարի Ա լծ. ա տիպարի հրամայականի վերջավորութիւնից (սիր-եցէ՛ք):

2. -ացէք՝ առաջանում է գրաբարի Գ լծ. ա տիպարի հրամայականի -ացիք վերջավորութիւնից (ադնցէ՛ք):

3. -ցէք՝ առաջանում է վերջին ձևից, ոդելով ա ձայնավորը (ինչպես՝ մոռացէ՛ք—մոռցէ՛ք):

4. -էք՝ առաջանում է Ա լծ. բ տիպարի և Դ լծ. ա տիպարի հրամայականի -էք վերջավորութիւնից (հասէ՛ք, թողէ՛ք), բայց այստեղ կարող է ազդած լինել Ա լծ. ա տիպարի արդելականը (մի՛ սիրէք), որ վերածվել է հաստատականի:

5. -իք, ցիք առաջանում են -էք, ցէք ձևերից՝ նմանութիւնամբ կամ ազդվելով եղակի հրամայականի -ի՛ր, ցի՛ր ձևերից. այսպես՝ հաքիր—հաքիք, մոռցի՛ր—մոռցիք:

Դերբայների մասին խոսելու ենք առանձին:

ՅԱՆԿԵՐ

ԼԵԶՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազերեն — *110—111, 231, 233, 235, 236, 240—243, 246, 249—251*
Ագնի — *98*
Ագուլերեն — *47—48*
Ադանդե *կամ* Նիամ-նիամ — *94*
Ալար — *256*
Ալթաներեն — *25, 265, 270, 370*
Ալգոնկիներեն — *35*
Ախուաներեն — *25, 168*
Ալթայական լեզուներ — *238, 254, 397*
Ակրա — *160*
Ակրո — *243—244*
Անդզա — *219*
Անդրիմ — *97*
Ամերիկյան (հնդկացիական) լեզուներ — *16, 52—53, 156—159, 227—230*
Անյու — *26, 125—126*
Անգլերեն — *10, 14, 32, 37, 61, 106—108, 135, 239, 244, 275, 284, 288, 290—291, 294—295, 297, 368, 397, 438*
Անամաբերեն — *6—7, 14, 20*
Անոի *կամ* Կամպա — *145—146*
Աշանտե — *94*
Ասոռերեն — *18, 22—23, 35, 65*
Ավաբակալ — *41—42, 237*
Ավարերեն — *19, 49—50, 231, 251*
Ավեստայի լեզու — *279, 358*
Ավստրալիական լեզուներ — *135—136*
Ատոիկյան բարբառ *Հին Հունաբենի* — *—122, 266, 277, 367*
Ացտեքերեն — *3—4, 15, 18, 22, 65—66, 92—93, 110—111, 212, 231, 237, 241, 261—262, 391—392, 397*
Ավավակերեն — *78, 150—151*
Արևելյան հնդեվրոպական լեզուներ — *—276—279*
Արևմտյան հնդեվրոպական լեզուներ — *276—279*
Արիական լեզուներ — *31, 80—81, 117—120, 268—273, 276, 358*
Արշի — *70*
Աուլուա — *97*
Աուկա (Աուկուա) — *156—158*
Ափար — *93, 212—213*
Աֆղաներեն — *75—76, 103, 281, 289*
Աֆրիկյան լեզուներ — *15, 69, 92, 143*
Բալթիական լեզուներ — *120, 282*
Բալթիկ-սլավոնական լեզուներ — *117, 119—120, 349*
Բակի — *97*
Բանդա — *174*
Բանտու լեզուներ — *159, 164—165, 239*
Բասա — *45—46, 101*
Բասկերեն — *16, 19, 26*
Բաուա — *5*
Բաբիա — *90*
Բաի — *38—39, 104*
Բացքերեն — *70*
Բեդաուե — *246*
Բելուջերեն — *85, 103, 281, 391*
Բենգա — *37, 83*
Բեռոյա *կամ* Տուկանո — *90, 141—143*
Բերբերական լեզուներ — *16, 86, 190—192*
Բիրմաներեն — *87—88, 193, 238*
Բո *կամ* Բանկոն — *45, 235, 246*
Բոնգու — *25, 97, 236—237*
Բոնտակ-իգոռոտ — *83, 144, 249*
Բրաուի — *42, 88, 97*
Բռնաներեն — *106, 272, 285, 293—294, 367*
Բուդումա — *196*
Բուլդաներեն — *23*

Բուշմաններեն — 6
Բուրյաթերեն (=Բուրյաթ-մոնղոլերեն) — 99, 109, 165—166, 235
Պարանների լեզու տե՛ս Ավխասայի լեզու
Պալլա — 88, 231
Պանդ — 94
Պարվալի — 90, 237
Պերմանական լեզուներ — 31, 116—118, 273, 359, 368
Պերմաներեն — 16, 48, 52, 76—77, 93, 103, 106—108, 111, 116—117, 119, 122, 242, 244, 264, 275, 284, 368, 390, 397, 438
Պիլակերեն — 262
Պիզիխի շինա — 20, 93
Պենչուերեն — 22, 221—222
Պոախիրա — 127—128
Պոլներեն — 21, 30, 79, 113, 116—117, 120, 122, 265—270 274—275, 296, 354, 365, 367
Պուշարաթի — 85
Պագամբա — 188—190, 242, 244
Պագուր — 234, 244, 256
Պակուա — 202
Պայակ — 132—133
Պանիերեն — 105—106, 275, 286
Պարզվա — 19, 170—171, 249
Պիերի — 26
Պինկա — 5, 99, 174—175
Պարիական բարբառ Հին Հունաբանի — 122, 266—267, 277, 354
Պրավիդյան լեզուներ — 19, 91—92, 109—110, 262—263, 283, 287
Պրայնցերեն — 9, 18, 22, 26, 35, 64—65, 391
Պզիպսացերեն — 85, 197, 201—202, 260—261
Պրովպացերեն — 43—44
Պվրոպական լեզուներ — 106—107, 575
Պապոտակ — 78, 211—212
Պենդերեն — 21, 29, 80, 115—117, 120—121, 266—269, 272—273, 281
Պիյեներեն — 4, 169
Պոմ — 146—147
Պոլու (սերեն) — 23, 78—79, 232—233, 237—239, 242—243, 245, 251—253
Ենգպանո — 86
Էսկիմոսերեն — 9, 26—27, 53, 227
Էսոններեն — 166—167, 296
Էվի — 97, 129, 242, 244
Էվեներեն — 28, 68
Էրոմանգա (էրմանգա) — 97, 244
Թաթարական լեզուներ տե՛ս Թուրքական լեզուներ
Թաթարերեն — 238, 254—255
Թալմուդական տե՛ս Եբրայերեն
Թամիլերեն (թամուլերեն) — 19, 137—138, 262—263
Թոխարերեն — 80, 116, 119—121, 267, 272, 358, 363
Թոնգա-Ջենգա — 198—200
Թուկո-փոյուգիական լեզուներ — 276
Թուրքերեն — 4, 15, 33, 36, 64, 170, 203, 224—227, 236, 238—240, 255—256, 283, 293, 397, 407, 569
Իրո — 84—85, 100, 179
Ինգուշերեն — 50, 67
Իլանդերեն — 119—120, 341
Իլանդերեն — 116, 118, 371
Իապաներեն — 31—32, 61—62, 156, 285
Իռլանական լեզուներ — 118
Իտալերեն — 36, 48—49, 104, 106—108
Իռոնսա — 20
Իրանական լեզուներ — 29, 31, 75—76
Լազերեն — 106, 391—392
Լակերեն — 53, 70
Լաննդա — 174—175
Լամուտերեն տե՛ս Էվեներեն
Լատիներեն — 16, 29—31, 52, 59—60, 74, 79—80, 105, 111—123, 222—224, 265—270, 272, 274—277, 280, 282, 284, 298—299, 345, 349—352, 354, 357—358, 363, 365—368, 371—372, 396
Լատիշերեն — 105, 118, 170—171, 297
Լեներեն — 56
Լեզգիերեն — 136—137
Լեպերեն տե՛ս Լափշերեն
Լենապ — 204
Լեխա տե՛ս ռոնգ

Լիբվաներեն տե՛ս լիտվաներեն
Լիմբու — 218
Լիտվաներեն — 21, 79, 113—123, 170—171, 266—270, 277, 282, 347, 349—350, 352, 354, 361—362
Լիֆու — 182
Լուզոնգա (լուգանդու) — 88, 232
Լունյորա (լունյորո) — 36, 83
Լալդերեն — 77—78
Լասի — 84
Լասու — 232, 239, 244
Լիվարո — 125
Լյուրիաներեն — 70
Մախուր — 70
Մարարդիներեն — 47, 103, 231, 233, 239, 249—250, 258—259
Մարիներեն — 94, 160—161
Մազարա — 137
Մագուրու — 83, 159
Մաինա — 82, 204—205
Մամիլարոյ — 37—38
Մամիսներեն — 35, 80, 114—115, 120—121, 265—272, 263,
Մամշադալ տե՛ս չուխչի
Մանիրի — 392
Մասայան լեզուներ — 69—70
Մասալաներեն — 296
Մասի — 175—177
Մարաիրերեն — 83, 147—150
Մարանգա — 96—97, 241, 244
Մարիի — 104
Մարոլինյան — 97, 131
Մարդիներ — 14, 94, 111, 231—234, 236—237, 241—244, 246, 249
Մաֆա — 5, 12—13
Մելոական լեզուներ — 47, 117—118
Մենյան — 100
Մինչուա տե՛ս ռուանա
Միկամի — 97, 392
Միկուլու — 84
Միենգա — 89, 213—215
Միրզիզերեն — 203—204, 240
Միրիի — 77, 219—221
Մոել — 86, 194—195
Մոմի-պերմերեն — 133—134, 231
Մովկասյան լեզուներ — 16, 69, 74—75
Մորանա — 86, 167—168
Մորներեն — 26, 125
Մորյակերեն — 45
Պալլի — 44—45
Կվամերա — 182
Կրի — 153, 158—159, 235, 247, 345, 391
Կուլիվիու — 97
Կումիսներեն տե՛ս կամիսներեն
Կումուխներեն — 238, 397
Կուռա — 297
Կուռամա — 98, 245
Կուսասի — 100
Կուռուխ — 98
Հաբերեն — 267, 358
Հավահ — 135
Հարավային սեմական լեզուներ — 243
Հարար — 181
Հաուսա — 138—139, 254, 263
Հին անգլերեն — 115, 291
Հին բարձր գերմաներեն — 30, 115, 118, 121, 266, 273, 296—297
Հինդուստանի — 18, 103—105, 231, 233, 237—238, 241, 244, 249, 286, 368, 387, 392
Հին իտալերեն — 21, 80, 118, 122, 266, 278, 289
Հին իտալերեն — 116—117, 268
Հին լատիներեն տե՛ս լատիներեն
Հին լիտվաներեն տե՛ս լիտվաներեն
Հին Հյուսիսային տե՛ս հին իսլանդերեն
Հին պարսկերեն — 277, 279, 281
Հին պրուսերեն — 113, 120, 268
Հին ռուսերեն — 266—267
Հին սլավոներեն — 21, 30, 115, 117—122, 265—268, 270, 273—274, 347, 349, 352, 357, 366—367, 371
Հին ֆրանսերեն տե՛ս ֆրանսերեն
Հյուսիսային կովկասյան լեզուներ — 19
Հնդեվրոպական նախալեզու — 11, 14, 16—17, 20—22, 28—32, 46—47, 54—55, 79—80, 113—123, 230—231, 264—284, 320, 335, 345—367, 369—372, 397,
Հնդեվրոպական լեզուներ — 10—11, 16—17, 21, 28—32, 59, 76, 104—112,

264—294, 345, 358, 369
Հոլանդերեն — 106—108, 368
Հոմերյան հուներեն — 30, 115, 122, 266, 268—269, 271, 279—280, 364, 366, 372
Հունարեն — 11, 16—17, 21, 28—31, 47—48, 54—55, 59, 64, 74, 79—81, 113—123, 264—284, 292, 299, 345—347, 349—352, 354—359, 361—372
Հունգարերեն — 4, 123, 170—171, 259—260
Հուպա — 8—9, 52—53, 96, 215—216, 227
Վազախերեն — 207
Վլախերեն — 101—102, 196—198
Ճապոներեն — 67—68, 82, 125, 231, 233, 236, 238, 240, 245—246
Մալայալամ — 287
Մալայերեն — 88, 178—179, 324
Մալգաշերեն — 87, 169
Մակուշի — 97
Մամբիլա — 99, 132
Մայա — 161—162, 298
Մանդինգ — 5
Մանջուներեն — 24, 27, 235, 248, 253
Մաչոնա կամ չիսվինա — 37, 83
Մասաչուզեթի լեզու — 217—218
Մարաթի — 27—28, 90, 101, 236—238, 246
Մարշալ — 100
Մարոկյան արաբերեն — 391
Մարքիզյան կղզիների լեզու — 195
Մելանեզյան լեզուներ — 99, 182, 237
Մենդե — 42—43
Մինիանկա — 95, 136
Միխա — 146
Մոնղոլերեն — 85, 165—166, 236
Մոսկիտո — 162—163
Մաոա — 8, 169
Մորդվիներեն — 183—184
Մունդարի — 40—41, 46
Յաբեմ — 185—187, 295
Յակուտերեն — 247—248
Յաղնոբի — 279
Յաո — 38, 83, 94
Յաունդե — 37
Յորուբա — 95, 143—144
Յուկագիրերեն — 32—33, 45, 68, 98
Յուկատեկան — 126—127
Յուկի — 209*
Յուրակարե — 144—145
Յուրոկ — 208—209
Նաբալոյ — 200—201
Նագա — 128
Նահուատլ — 138
Նամա — 14, 253—254
Նավահո — 53, 71—72, 92
Նաուրիների — 78
Նենեցերեն — 25, 46, 259
Նագուգու — 97
Նոտալատին լեզուներ — 31—32, 60, 105
Նոր Զելանդիայի բնիկների լեզու — 128
Նոր Գինեայի լեզուներ — 31, 75—76, 280
Նոր հուներեն տե՛ս հուներեն
Նոր պարսկերեն տե՛ս պարսկերեն
Նոր պոմերանյան լեզու — 85, 137
Նորվեգերեն — 135
Նոբերեն — 21
Նուբիերեն — 39—40, 245, 296
Շամբալա — 44, 97
Շասու — 97
Շիլլուկ — 89, 181—182, 244
Շոնա — 43, 96
Շոա — 238
Շվեդերեն — 105, 108, 111, 275, 286—287
Չամբալա տե՛ս Շամբալա
Չեխերեն — 32, 55—56, 106, 273, 297—298
Չեչեներեն — 20, 70, 89
Չերեմիսերեն — 129—130
Չիապանկ — 126
Չիբչա — 36, 155—156
Չիլիի բնիկների լեզու — 89, 297
Չիլուբա — 96, 163—164, 234—235
Չիկիտա — 151—152
Չինարեն — 3, 6, 14, 20, 81—82, 124—125
Չինուկ — 36

Չիշևա — 234
Չիսվինա տե՛ս մաշոնա
Չուվաշերեն — 90, 170, 236, 238
Չուրչի — 298
Պաամա — 97
Պալի — 279—280, 287, 363
Պանելավերեն — 279
Պայուտ — 195—196
Պարսկերեն — 104, 279, 281, 288—289, 291, 293, 296, 298, 345, 368, 407
Պլե-տեմեր — 139
Պոլինեզյան լեզուներ — 219
Պոմո — 209—210
Պոբատուզալերեն — 31, 277, 279—280, 284, 363
Պռովանսալ — 284—285, 297
Ջագգա — 172—173
Ջայպուրի — 387
Ջավայերեն — 14, 20, 26, 67, 90—91
Ջաուսարի — 19
Ջիգգի — 78, 239
Ռաջասթանի — 392
Ռետոռոմաներեն — 88—89, 296
Ռոճլ — 109
Ռոնգ — 98
Ռոնգա — 164—165
Ռովիանա — 99
Ռումիներեն — 32, 106, 108
Ռուենա սիմի կամ կեչուա — 217
Ռուսերեն — 10, 14—15, 20, 36, 48, 56—57, 62, 121, 108—109, 110, 202, 273, 284, 286, 291, 397
Ռուտիներեն — 70
Սաճո — 88, 183
Սամարերեն — 65
Սամոա — 134
Սամոյեդերեն տե՛ս նենեցերեն
Սանսկրիտ — 16, 21, 26, 29—31, 54—55, 79—80, 113—123, 264—284, 292, 348—349, 352—358, 362, 364—367 369—371
Սաոա — 97—98, 177—178
Սելկուպ — 25, 46, 248
Սեմական լեզուներ — 64—66, 92, 212
Սեմական հնախալեզու — 21
Սենա — 83, 140
Սենգա — 171—172
Սեչվանա — 84
Սեսուտո — 233, 239
Սերբերեն — 58—59, 111, 273, 371
Սերեր — 170
Սիամերեն — 101, 109, 131—132
Սինդհի — 85, 89, 184—185, 297
Սինհալ — 97
Սինհալի — 31, 85, 280—281
Սիուան — 262
Սիուալավան — 20
Սլավական տե՛ս սլավոնական
Սլավոնական լեզուներ — 31, 55—59, 119, 266, 273—275, 291, 349—350, 357, 359—360, 371, 438
Սլովակերեն — 55—56, 298
Սլովեներեն — 21, 291
Սյուակ — 392
Սոգդերեն — 281
Սոմալի — 287—288
Սվահիլի — 233, 260, 263
Սվաներեն — 232
Սուրթիաբա — 139—140, 397
Սուկումա — 44, 89, 232, 239
Սումերերեն — 9, 79
Վայա — 205
Վապո — 69, 87, 133
Վապոզարո — 100, 180—181
Վառաուանգա — 10
Վեսախի — 15
Վեդայական հնդկերեն — 17, 29—31, 80, 114—115, 117, 119—120, 230, 266—268, 271, 276—277, 279, 284, 358
Վեպսերեն — 24—25
Վիսա — 84
Վոգուլերեն — 260
Վոլոֆ — 234, 237, 293—240, 244, 246
Վոտյակերեն — 5—6
Վրացերեն — 16, 27, 70—71, 75, 102—103
Տաբասարան — 70
Տագալոգ — 98, 167

Տաճիքի — 95, 153—154
Տամաշեկ — 94—95, 161
Տանգռա — 100, 205—206
Տասիկո — 97
Տասիրիկի — 97
Տաւասակ — 141
Տելուգու — 98, 168
Տենա — 82, 110, 140—141, 232, 234, 238, 240, 242—244, 246, 248
Տեպկան — 210
Տիբեթերեն — 100—101, 187—188
Տիճգիա — 227
Տոբռա — 239
Տոնգա — 97, 154—155
Տուուկ — 78, 128—129
Տուարեգ — 298
Տուկաճո տե՛ս բնռոյա
Տուկուդ — 228—230
Տունգուսերեն — 82—83, 246, 257—258
Տուպի — 7—8, 235, 237, 240
Ցվա — 36—37, 96
Ուբիխերեն — 102, 206—207
Ուգրո-ֆիննական լեզուներ — 4, 67, 94, 111, 259—260
Ուգմուռտերեն — 44, 67
Ուզբեկերեն — 62, 236, 241—242, 255
Ուկրաիներեն — 57—58
Ումբրերեն — 121, 266, 269, 272
Ույղուրերեն — 256
Ուաիերեն — 258
Ուռուպռուա — 182
Ուրեա — 90
Ուրիպիվ — 97
Փոել (փույլ, ֆուլլահ) — 92, 183
Փռյուգերեն — 122, 272
Քամբռ — 218—219
Քամյան լեզուներ — 212
Քամոի — 95
Քաշմիրի — 43, 84, 90, 184—185
Քիշի — 192—193
Քոդերեն — 105, 284—285
Օբյիճերեռ — 222, 232
Օթոմի — 130
Օնո-շկիկեամ — 125
Օշինդոնգա — 232
Օսկերեն — 269
Օսայակերեն — 136
Օռաճա — 392
Ֆիններեն — 4, 170—171, 259—260
Ֆռանսերեն — 14, 16, 22—24, 32, 36, 48, 50, 52—54, 61, 63—64, 74, 79, 93, 106—111, 202—203, 242, 284—285, 297, 301, 368 394, 438, 559—560, 575—576

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիսի բարբառ — 484—490, 532—536, 549, 558, 563—564, 575—576
Ախնա բարբառ — 562, 570—572
Առափյալի բարբառ — 437—441, 519, 552—554, 572
Ալաշքերդի բարբառ — 562, 565, 571—572
Աստապատի խոսվածք — 574
Աստրախանի բարբառ — 567, 574
Արդվինի բարբառ — 562, 572
Գորիսի խոսվածք — 491
Եվդոկիայի բարբառ — 561—562
Երևանի բարբառ — 407, 427, 558—561, 564, 566, 571—572, 574
Զեյթունի բարբառ տե՛ս Կիլիկիայի բարբառ
Թավրիզի խոսվածք Երևանի բարբառի — 572
Թրիլիսիի բարբառ — 408, 563, 566, 571—572
Թոփոխի խոսվածք Ն. Նախիջևանի բարբառի — 421
Ախճաճայ խոսվածք Առափյալի բարբառի — 437—441, 553
Լոռիի խոսվածք Երևանի բարբառի — 408
Խարբերդ-Երզնկայի բարբառ — 562
Կոյի խոսվածք — 574
Կարնո բարբառ — 472—479, 525—527, 548, 561, 566, 570—572
Կեսարիայի բարբառ — 397, 570
Կիլիկիայի բարբառ — 451—463, 505—507, 522—524, 546—547
Հաճընի խոսվածք Կիլիկիայի բարբառի — 463—464, 564, 568—569
Համշենի բարբառ — 441—450
Ղարաբաղի բարբառ — 490—492, 536, 563, 566, 573
Ղրիմի բարբառ — 512, 563, 566, 570—571
Ճանիկի խոսվածք Համշենի բարբառի — 442—445, 521
Մալաթիայի խոսվածք — 562—563, 565, 570, 572
Մալայի խոսվածք Համշենի բարբառի — 412, 444—445
Մարաղայի բարբառ — 394, 492—500, 536—544, 549—550, 558, 562, 564, 574—575
Մարաշի բարբառ — 564
Մեղրու բարբառ — 563, 576
Մշո բարբառ — 567
Մոկսի խոսվածք Վանի բարբառի — 564, 572—573
Նոր-Նախիջևանի բարբառ — 416—424, 511—517, 544—545, 556—557, 563, 566, 570—573
Նոր-Ջուղայի բարբառ — 279, 407—408, 479—484, 527—532, 548—549, 560—561, 564, 566, 570, 573
Նամախիի բարբառ — 561, 566
Նապին Պարահիսարի բարբառ — 566
Ոզմիի խոսվածք Վանի բարբառի — 563, 566—567, 572—573
Չալբրի խոսվածք Նոր-Նախիջևանի բարբառի — 422, 515

Պոլսո բարբառ — *63, 143, 395, 408—416, 427, 432, 459, 469, 500—502, 510—511, 516, 522, 544, 550, 557—561, 564, 566, 570—573*
Ռոտոսթոյի բարբառ — *562, 565, 571*
Սեբաստիայի բարբառ — *561, 565—566, 570—572*
Սվեդիայի բարբառ — *464, 472, 507—509, 524—525, 547—548, 554—559*
Սուշավայի բարբառ (=*Առտիալի բարբառ*) — *437—441, 553—554, 563, 567, 576*
Վանի բարբառ — *424—437, 502—504, 517—519, 545—546, 550—552, 560—561, 566, 571—573*
Տիգրանակերտի բարբառ — *562—563, 567*
Տրապիզոնի բարբառ — *446—447, 459, 563, 566*
Ցղնայի խոսվածք Ագուլիսի բարբառի — *488*
Ուրմիայի բարբառ — *500, 574*
Օրդուի բարբառ — *521*



ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա. ՀԵՋՈՒՆԵՐ

(Բառասկզբում՝ ի=ինչ, մ=միջին, ե=նոր)

Աբխազ.— աբխազերեն
այր(ան).— այրաներեն
այթայ.— այթայերեն, այթայական
անկագ. տե՛ս աքսադ.
անգլ.— անգլերեն
անգսք.— անգլոսաքսոներեն
աշխ.— աշխարհաբար
ասո(ր).— ասորերեն
ավար.— ավարերեն
արաբ.— արաբերեն
արամ.— արամերեն
աքքադ.— աքքադերեն
ափղ(ան).— ափղաններեն
բարել.— բարելացկերեն
բասկ.— բասկերեն
բելուջ.— բելուջերեն
բոշ(ա).— բոշայերեն
բուլղար.— բուլղարերեն
բուրյաթ.— բուրյաթերեն
բրետոն., բրբտն — բրետոներեն
գահլ.— գահլյան
գալլ.— գալլերեն
գերմ.— գերմաներեն
գոթ.— գոթերեն
դան.— դանդիերեն
դրավիդ.— դրավիդյան
եբր.— եբրայեցերեն
եգիպտ.— եգիպտացերեն
եթովպ.— եթովպացերեն
եվր.— եվրոպական
ղիբ(լեն).— ղիբլենեներեն
զնդ.— զենդերեն
էստ(ոն).— էստոներեն
էտրուսկ.— էտրուսկերեն
թաքաս. տե՛ս տաքաս.
թաթ.— թաթերեն
թալիշ.— թալիշերեն
թթր.— թաթարերեն, թաթարական
թխր., թոխար.— թոխարերեն
թրք.— թուրքերեն
ինդուշ.— ինդուշերեն
իռլ.— իռլանդերեն
իսլ.— իսլանդերեն
իտալ.— իտալերեն
իրան.— իրանական
լազ.— լազերեն
լակ.— լակերեն
լամուտ.— լամուտերեն
լատ., լտ.— լատիներեն
լեզգ.— լեզգիերեն
լեթթ.— լեթթերեն
լեհ.— լեհերեն
լիվ.— լիվերեն
լիթ., լիտ(վան)} լիտվաներեն
լտ. տե՛ս լատ.
կամխ.— կամխերեն
կելտ.— կելտերեն, կելտական
կիմր.— կիմրերեն
կիրգիզ.— կիրգիզերեն
կումուխ.— կումուխերեն
հաթ.— հաթերեն

հբգ — հին բարձր գերմաներեն
հիեր.— հիերեներեն
հինդուստ.— հինդուստանի
հիոլ.— հին իռլանդերեն
հիռլ.— հին իռլանդերեն
հհյուս.— հին հյուսիսային
հյ.— հայերեն
հն.— հունարեն
հնգ.— հնդկերեն
հոլ.— հոլանդերեն
հոմեր.— հոմերյան հունարեն
հունգ(ար).— հունգարիերեն
ճապոն.— ճապոներեն
մալայ.— մալայերեն
մալգաշ.— մալգաշերեն
մանջ(ուր).— մանջուրերեն
մբգ.— միջին բարձր գերմաներեն
մինգր(ել).— մինգրելերեն
միջ. հյ. } միջին հայերեն
միհյ. }
մոնղոլ.— մոնղոլերեն
նոգայ.— նոգայերեն
նորմ.— նորմանդերեն
նոր(վեգ).— նորվեգերեն
շվ(եդ.) — շվեդերեն
չաղաթայ.— չաղաթայերեն
չեխ.— չեխերեն
չերքեզ.— չերքեզերեն
չին.— չիներեն
չուվաշ.—չուվաշերեն
պահլ.— պահլավերեն
պեռմ.— պերմերեն
պհլ. տե՛ս պահլ.
պորտ.— պորտուգալերեն
պրովանսալ
պրուս.— պրուսերեն
պարսկ.— պարսկերեն
չավայ.— ջավայերեն
ռ.— ռուսերեն
ռումանե.— ռումանական
ռումին.— ռումիներեն
ռուս.—ռուսերեն
սանս., սնս.— սանսկրիտ
սաքս.— սաքսոներեն
սեմ.— սեմական
սերբ.— սերբերեն
սլ.— սլավոներեն, սլավոնական
սլովին.— սլովիներեն
սլովակ.— սլովակերեն
սլովինց.— սլովինցերեն
սկանդ.— սկանդինավյան
սնս. տե՛ս սանս.
սոթաք.— սոթարերեն
սվան.— սվաներեն
սումեր.— սումերերեն
վիզ.— վիզայական
վերշ.— տե՛ս գալլ.
վոդուլ.— վոդուլերեն
վոտյակ.— վոտյակերեն
վր., վրաց.— վրացերեն
տաբաս.— տաբասարան
տճկ.— տաճկերեն
տունգուս.— տունգուսերեն
ուզբեկ.— ուզբեկերեն
ուկր.— ուկրաիներեն
ումբր.— ումբրերեն
ուղուր.— ույղուրերեն
բրդ.— բրդերեն
օսկ.— օսկերեն
օսմ(ան.).— օսմաներեն
օս(ս).— օսսերեն, օսերերեն
օսայակ.— օսայակերեն
ֆիննե.— ֆիններեն
ֆր.— ֆրանսերեն
ֆրիզ.— ֆրիզերեն

Բ. ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐԲԱՌՆԵՐ, ԵՆԹԱԲԱՐԲԱՌՆԵՐ, ԽՈՍՎԱԾՔՆԵՐ

Ագլ.— Ագուլիս
Առա.— Առտիալ
Ասլ.— Ասլանբեկ
Ասոր.— Ասորեստան
Աբգ.— Աբգվին
Եվդ.— Եվդոկիա
Եր(և.).— Երևան
Զբ.— Զեյթուն

Թավր.— Թավրիզ
Թիֆլ., Թլս.— Թբիլիսի
Լհ., լհհ.— լհհահայ
Խրբ.— Խարբերդ
Կես., Կս.— Կեսարիա
Կիլ.— Կիլիկիա
Կր.— Կարին
Հճ.— Հաճին
Հմշ.— Համշեն
Հնգ.— Հունգարահայ
Հնդ.— Հնդկահայ
Ղր.— Ղրիմ
Ղրբ.— Ղարաբաղ
Ճ.— Ճանիկ
Մլթ.— Մալաթիա
Մ.— Մալա
Մկ.— Մոքս
Մղ., Մղր.— Մեղրի
Մշ.— Մուշ
Մրզ.— Մարաղա
Մրշ.— Մարաշ
Ննխ.— Նոր-Նախիջևան
ՆՋ.— Նոր-Ջուղա
Շմ.— Շամախի
Շշ.— Շուշի
Ոզմ.— Ոզմի
Չլ.— Չալթր
Պլ.— Պոլիս
Ռ.— Ռոտոսթո
Սեբ.— Սեբաստիա
Սյ.— Սուչավա
Սվեդ.— Սվեդիա
Վն.— Վան
Տիգ.— Տիգրանակերտ
Տր.— Տրապիզոն
Ցղ.— Ցղնա

ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

էջ

«Վիակատար քերականության» չորրորդ հատորի Ա գիրքը . . . V
Գլուխ Ա. Բայի տարբերացումը գոյականից . . . . . 3—11
Գլուխ Բ. Բայական կարգերը . . . . . 12—112
1. Բայական կարգերի մասին ընդհանրապես 12
2. Բայի դեմքը 14
3. Բայի դեմքի սեռը 17
4. Բայի թիվը 20
5. Բայի եղանակները 21
6. Բայի ժամանակները 33
7. Գոյականի ժամանակները 51
8. Բայական երեւույթները 53
9. Բայական սեռը 72
Գլուխ Գ. Բայական բուն . . . . . 113—123
1. Բայական բնի մասին ընդհանրապես 113
2. Բայական բների կազմությունը 114
Գլուխ Դ. Խոնարհում . . . . . 124—264
1. Խոնարհումը ընդհանրապես և բայական ձևերի թվումը . 124
2. Բայի տեսակները գանազան լեզուների մեջ . . . 231
3. Բայական վերջավորությունների ծագումն ու զարգացումը 253
Գլուխ Ե. Բայը ճնդեվրոպական լեզուներում . . . . 265—295
1. Բայական վերջավորությունները հնդեվրոպականում . 265
2. Ձայնդարձը հնդեվրոպական խոնարհման մեջ . . . 273
3. Տանը հնդեվրոպական խոնարհման մեջ 276
4. Նախահավելված e 276
5. Հնդեվրոպական խոնարհման հետագա զարգացումը . . 279
Գլուխ Զ. Բայը հայերենում . . . . . 295—577
1. Խոնարհումը հին հայերենում 295
2. Զարտուղություններ խոնարհման մեջ 311
3. Անվանական բայեր 324
4. Պակասավոր բայեր 336
5. Անգեմ բայեր կամ միագեմ բայեր 339
6. Հայերենի բայական բների քննությունն ու ծագումը . 345
7. Հայերենի խոնարհման քննությունն ու ծագումը . . 359

8. Անկանոն բայերի բացատրությունը 367
9. Բայական վերջավորությունների ծագումը 371
10. Խոնարհումը միջին հայերենում 373
11. Միջին հայերենի խոնարհման քննությունն ու ծագումը 383
12. Խոնարհումը բարբառներում 408
13. Բարբառների խոնարհման քննությունը 557

ՑԱՆԿԵՐ

1. Լեզուների ցանկ 581
2. Հայերեն բարբառների ցանկ 587
3. Համառոտագրությունների ցանկ 589
4. Նյութերի ցանկ 592